203.1
9--95

I shtre 1802.

ii elw - 1774 p-

[illegible]

[illegible]

3.

12004

Այս Նօթերն հաւաքեաց
Միքայէլ Թամամշեան Տէր Յարութիւնեանց
Տէր Միքայէլեանցին։

891.99
Գ--89



Այս ձեռքէս հայերէնած
Միքայէլեան Փանոսեան պէկ
հայրապետեան պէկ Միքայէլեանցեանց

1495 111-ԱԷ
200
235-Գր
203.1
Գ-97

# ՆԱՐԵԿ

## ԳԻՐՔ ԱՂՕԹԻՑ

Սբյն Գրիգորի Նարեկացւոյ Հոգեկիր Հաւտորի։

Բաշխեալ յիննսուն և հինգ՝ բանս՝ հոգեսուն Մաղթանաց։

Նորոգեալ սրբագրելով՝ համեմատութբ հնագոյն և ընտիր ընտիր ձեռագիր օրինակաց։

Ի հայրապետութե Սբյ Գահին Էջմիածնի, Տն Դանիէլի Երից երջանիկ Սրբազան Կաթուղիկոսին ամ Հայոց։

Եւ ի Պատրիարգութե Սբյ Երմի, Տեառն Թէոդորոսի Արհի եպիսկոպոսին։

Իսկ և ի Պատրիարգութե Արքայանիստ Մայրաքաղաքիս Կոստանդնուպոլսոյ, Տեառն Գրիգորի Երանաշնորհ և Աստուածաբան Արհի Եպիսկոպոսին։

Յամի Տն 1802. Իսկ ի Թուիս՝ ՌՄԾԱ. Յունվարի Ը

Ի Կոստանդնուպօլիս Քաղաքի։

Ի Տպարանի [illegible] Պօղոսի։

1251
8
Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7 (XI) 1928

243

00

235-գ

[illegible]

[illegible]

[illegible]

# ԳՐՈՒԹԻՒՆՔ

## ՅՈԳՆԱԹԱԽԱՆՁ ԲԱՆԻՑ ՕԳՏԱԿԱՐԱՑ, ԱՊԱՇԱՒԱՆԱՑ, ՀՈԳԵՇԱՀ ԽՐԱՏՈՒՑ։

Անձին սրդտանաց · զղջականաց կանոնաց կենաց, կամաւորութեան յանձնառութեանց · աներեւութից յայտնութեանց, մեղանաց խոստովանութեանց, ցուցմունք գաղտնեաց, տարածմունք ծածկեցելոց, յանդիմանութիւնք թագուցելոց։

Ապեղանիք զօրաւորք՝ վիրաց անբժշկականաց · դեղք ազդողականք՝ ցաւոց անտեսականաց · հնարաւորութիւնք՝ բազմամասնեայ երկանց վտանգից։

Ի դիմաց կարեաց՝ ամենից բնութեանց, աւիթք արտասուաց, պատճառք աղօթից · Ի խնդրոյ հոյցմանց՝ հարց միանձանց և բազմաց անապատականաց՝ ասացեալ մատեան ողբերգութեան

ԳՐԻԳՈՐԻ

Նարեկայ վանից վանականի


Զաշակերտսն վարժէ:
Զդիւահարսն բժշկէ:

+Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ
ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ.

*Բան. Ա.

# ՁԱՅՆ ՀԱՌԱՉ
ԱՆԱՑ՝ ՀԵԾՈՒԹԵԱՆ
սրտի՝ ողբոց աղաղակի՝ քեզ վերըն-
ծայեմ տեսողդ գաղտնեաց. և մատու-
ցեալ եդեալ 'ի հուր թախծութեան անձին տոչորման՝
զպտուղ ըղձից ձենձերոյ՝ սասանեալ մտացս՝ բուրվա-
ռաւ կամացս առաքել առ քեզ. Այլ հոտոտեսցիս
հայեսցիս՝ գթած, քան 'ի պատարագն բոլորապտուղ
մատուցեալ ծխոյն բարդութեան. Ընկալ զսակաւ

մտանեայ բանիցս յօդուած՝ քեզ ՚ի հաճութի, և մի՛
՚ի բարկութի. եւլցէ ՚ի խորոց սաստի զգայութեց խոր
հրդակիր սեննկիս՝ վաղվաղակի ժամանել առ քեզ՝
կամաւորական նուէր բանական զոհիս, ող ջակիզել
զօրութբ ճարպոյ՝ որ յիսն է պարարտուն։ Եւ ՚ի
դնելս իմ ընդ քեզ դասս՝ խառնեալ աղերսիւ հզօր,
մի՛ իբրև զհամբարձումն ձեռաց ամբարշտեալն յա_
կոբու, ըստ բողոքելոյն եսայեայ, և զանիրաւութին
բաբելոնի, տաղտկալի քեզ երևեսցի, զոր առաւ եօ_
թնասներորդի երկրորդի սաղմոսին ազդէ. այլ իբր
զբուրեալ խունկն հաճոյական ՚ի խորանին սելովայ,
զոր դաւիթն կանգնել նորոգեաց տապանակին հան
գրստեան ՚ի գերութենէն դարձելոյ, որ ՚ի վերստին
գիւտ կորուսեալս հոգւոյ տառկի՝ ընդունելի կա_
մաց քոց լիցի։

2 Բայց քանզի ձայնդ ահաւոր դատաստանիդ հա_
տուցման՝ ուժգինս ծնչեցեալ ՚ի ձորն վրէժխնդրու_
թեան՝ կրկինս ինձ երկնէ մարտից յարուցմունս.
այժմէն գուշակեալ շարժմունս յուզմանց ներհակա
կանաց, որ յիմում անձին ցուցանի, խառնլութիւնս
ամբոխից. հարեալք ընդ միմեանս զէն առ սուսեր՝
խորհրդոցն հոյլք, շարեացն՝ է բարխն, և գերեալ
զէս ՚ի մահ, ըստ հին դիպուածոյն՝ որ նախքան ըզ_
չնորհին ժամանել առխս. զոր ընտրեալն առաքելս
կանացն դասուց պօղոս՝ առօրինակեալ զմովսէս,
զքէ փրկութին յաղթող ցուցանէ։ Սասն զի թէ
մերձ է օր տեառն, ոհ գիր ասէ, ՚ի հովիտն անձուկ
ապարխսին յովսափաթու և հեղեղատին կեդրոնի,
փոքր հանդիսարանացն իրաւանց ժամադրութեց,



որ

որ կենցաղականաւ այսր յաւիտենիւ՝ զհանդերձե-
լոցն ինձ կերպարանեն, այս և յաւէտ մերձեցաւ
՚ի վ͞ր իմ արքայութե͞ն ա͞յ՝ մարմին եղելոյ, մեծ ապէս
գտեալ զիս առիթ վնասուց՝ բազմաց տոկոսեաց՝ զա-
նազան մասանց յանդիմանողաց ճշմարտապատմից,
քան զձեռին նորին վերակացումն անդ ուրեմն եր-
բեմն ՚ի հարուածս եդումայեցւոց և փղշտացւոց, և
այլոց բարբարոս ազգաց։ Քանզի այն ընտրութիւն՝
ամօք չափեցաւ, իսկ պատուհաս խմուն պարտուց՝
տասնից աւարտման ունի զպահման։ Ո՛հ դուք՝ և
որոգայթ անձնողորմելի, ըստ մարգարէին և առաւե-
լին, տագնապաւ մեծաւ առ դուրս ինձ հասեալ՝ զա-
մօթն մշտնջենաւոր ատեն դատարել։ Ո՛ որ միայն
քո է հրաշագործել պատուղս դեղոց՝ ՚ի ձեռս կենաց՝
ամենավարան տարակուսանաց հոգւոց վտանգից,
քաւիչ ա͞մ՝ գովեալ ՚ի փառս անձառս անսահմա-
նելի բարձրութե͞ն, յաւիտեանս յաւիտենից։

† Ս. Հրաշէն յաւերժացեալ նշխին հեծութեն՝ նորին հոգւոյն, առ-
նոյն ողբերգ նողբանոյ բանի. ՚Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Ա͞յ.

*Բան. Բ.

I Եւ արդ՝ քանզի առ բարձրեալն ա͞ծ յօդաւորա-
կան շրթամբք կարդաս, որ գործովք միայն
գրաւի, և ոչ ստեղծաբանութ͞ք կաշառի,
որ յեգիպտոս միշտ ունիս զարտիդ զդարձն, զի՛նչ
օրինակ առ այս քեզ նմանագոյն և յարմարական աս-
տանօր եղից՝ ա՛նձն իմ պարտաւոր։ Պատժակիցս՝
կործանեցելոյն սոդոմայ. ըմբերանեալ դատախազս՝
նին

նինուէի․ անարի բարբարոսս՝ քան զախիլլէսն հարաւ-
ային․ վատթարագոյնս՝ քան զքանան․ յամառեցեալս՝
քան զամաղէկ․ անբժշկականս քաղաք՝ դրօշելոց, նշմար
մնացեալ՝ ապստամբութեան հինն իսրայէլի , յիշատա-
կարան պահեալ՝ ուխտազանցութեան յուդայ․ Աշտամ-
բեալս՝ դեր քան զծուր․ տարամերժեալս՝ քան զղ-
ծայդան․ խորթաբարոյս՝ քան զգալիլեա․ անններելիս՝
քան զանհաւանն կափառնայում․ պարսաւեցեալս՝
իբր զքորազին․ բամբասեցեալս՝ ընդ բեթսայիթայ․
անպարկեշտ ծաղկեցեալ ալիքս՝ եփրեմի․ Ագու ա-
ղաւնիս միշտ յիմարութեամբ՝ այլ ոչ հանդարտու-
թեամբ․ ՚ի կորեանց առիւծուց՝ անձնական օձս ե-
ղեռնային․ կերպս ձուոց քարբից՝ լցեալ ժանտու-
թեամբ․ պատկերս վերջին հարուածոցն երուսաղէ-
մի , ըստ բանին տէրունի՝ և տեսանողացն ձայնի․
Տաղաւարս մերժեալ՝ հասեալ ՚ի կործանումն․ խոր
տակեալ դրացս վտտահարան, և կրկին ծրդեալ շին-
ուածս խօսուն․ Թողեալ ժառանգութիւնս յարմա
բական, մոռացեալ տունս աստուածակերտ, ըստ բանից նա-
խագրեցելոցն՝ մովսէսի դաւթայ և երեմիայի․
Յարկս բանական՝ ունօղս բորոտութեան, հարուածեալ
խլատու քերմանն՝ օրինի՛ կաղդուրեալ, օծեալ կա-
ւոյն՝ ողոքական հեզութեամբն․ անճարակ գտեալ
յելս ճնարից , քակտեալ վերստին ձեռամբ շինողին․
արտաքս ընկեցեալ՝ իրաւացի հատուցմամբ՝ հրամա-
նաւ հզօրին՝ ՚ի տեղի անսուրբ․ հերքեալ տարադ-
րեալ խորոցաւ մեծաւ՝ ամենայնի՛ առանց խնայե-
լոյ․ Ծածկեալ դրամն յերկրի չարեօք , ըստ աւան-
դակորոյս ժխտողին՝ որ յաւետարանին ցուցանի․



Սմ

2 Այլ դու Ա՟ծ՝ Ա՟ծդ հոգւոց և ա՟մ մարմնոց, ըստ
դաւանելոյ ա՟ծաշնորհին, երկայնամիտ և բազումո-
ղորմ, ըստ մեծին յուշմանս ձայնին, շնորհեա՛ կատա-
րել ՚ի քոյդ հաճութի՟ օրհնեալդ կամաց՝ զսկզբնաւո-
րեալ մատեան մաղթանաց՝ այսր ողբերգութեան։
Եւ ընդ լալոյ սերմանել բանիս՝ ՚ի նախընծայց չուս
աստիճանաց՝ օթեւանացս պատրաստութե՟, ՚ի կատա-
րածն ժամանելոյ հաւաքման ջնջոցն, դարձայց բերկ-
րեցեալ լրութք քաւութե՟՝ պտղոյն երանութեան՝
որայիցն բարութե՟։ Դո՛ւ տացես ինձ արգանդ սրտի
անորդի՝ իբր իսրայէլի, և ստինս աչաց ցամաքեալս՝
ո՛վ ամենագութ։ Լո՛ւր բանական մաղթողիս՝ հզօր
և ողորմած, նախ քան երկնի՝ և երկրին երկրի, և նա
ցորենոյ և գինւոյ և ձիթոյ, և նոքա իսրայէլի։
Եւ երկնաւորացն աղերս՝ որ առ քեզ հոգւոյս՝ աղ-
դեսցէ, քան թէ տարերաց ապականացուաց։
Դու ստեղծիչ՝ և ես կաւ, բայց տարակուսելոյս ՚ի
մատս մաղթանաց այսր հեծութե՟՝ կամս քաղցրութե՟՝
զօրանալ աստէն · զի մի՛ ՚ի բանալ վերնայինն երկնի՝
անընտիր գտեալ կրթութեան վայելման լուսոյ,
իբր զնիւթ մոմոյ՝ սպառեցայց, ջնջեալ ՚ի միջոյ։
Ո՛գի զրկելոյս, ըստ մաղթանաց գոչման ասողին, և
ո՛յժ թալկացելոյս, և կեա՛նք մաշելոյս՝ մտացս խըղ-
ճի՛, այլ ո՛չ տաժանմամբ կրից՝ աշխատութբ զքեզ
խնդրելոյ, ա՛ռ զաւանդ մաղթանացս, և տո՛ւր զողոր-
մութի՟ քո շնորհացդ · ընկա՛լ զփոքրս՝ ՚ի տկարէս, և
շնորհեա՛ զմեծդ՝ առ ՚ի հզօրէդ · զօրացո՛ զբանս զըղջ-
ման, առաքեալ ՚ի մեզ հոգի ՚ի բարձանց՝ ա՟ծաշունչ
պատգամօքս՝ ՚ի սմա եղելոցս։ Պարգեւեա՛ բարերար՝

զուարկն եսայեայ, լուսաւորեալ առ ճշմարտութիւն,
մատուցանելով մահու արժանոյս, ընդ պղնձոյս գոյի
անարգս ձայնի՝ զոսկի քո շնորհի. ընդ անպարգուե
երկաթոյս՝ սեւոյն գունոյս՝ պղինձ պճնելի, ցոյցք
առաքինութե, հրաշէկ լիբանանու: Ընդէ՞ր կարծ
րացուցանես զոխրս եղկելոյս՝ չերկնչել 'ի քէն, ան
ճառ եւ ահաւոր: Մի՛ եղէց անպտուղ 'ի փոքր վա
տակոյս՝ իբր ապաժան սերմանօղ անբերրի երկրի:
Մի՛ լեցի ինձ երկնել, եւ ոչ ծնանել. ողբալ, եւ ո՛չ
արտասուել. խորհել, եւ ո՛չ հառաչել. ամպել, եւ ո՛չ
անձրեւել. ընթանալ, եւ ո՛չ հասանել. ինձ ձայնել, եւ
քեզ ո՛չ լսել. պաղատիլ, եւ անտես մնալ. կողկողել, եւ
ո՛չ ողորմել. աղաչել, եւ ոչ ինչ օգտել. զոհել, եւ ո՛չ
ճենճերել. զքեզ տեսանել, եւ դատարկ ելանել:
Լո՛ւր ինձ նախքան զկարդալս իմ առ քեզ միայնդ
հզօր. մի՛ զանվճար տանջանացն տոյժս՝ ընդ թուով ա
ւուրց մեղօք կեցելոյս չարագործիս ինձ՝ հատուցա
ներ: Կեցո՛ զիս գթած. լո՛ւր ինձ ողորմած. մարդա
սիրեա՛ ներօղ. խնայեա՛ երկայնամիտ. պաշտպանեա՛
ապաւէն. բարերարեա՛ հզօր. ազատեա՛ ամենակալ.
կենագործեա՛ նորոգօղ. վերականգնեա՛ ահաւոր.
լուսաւորեա՛ երկնային. բժշկեա՛ հնարաւոր. քաւեա՛
անքննելի. պարգեւատրեա՛ առատ. շնորհազարդեա՛ ան
նախանձ. հաշտեա՛ աննախատելի. ընկա՛լ անոխակալ.
սրբեա՛ 'ի պարտուց օրհնեալ: Եթէ յաւեցից զաչս
իմ՝ նայեցեալ 'ի հայեցուածս երկուց վարանդից՝ յա
ւուր թշուառութե, զքոյդ տեսից փրկութի՛ յոյս եւ
խնամակալ. եթէ նկատեալ դիտեցից 'ի վեր յամենա
գրաւ ուղին սոսկալի, հրեշտակ քո խաղաղութեան՝



քաղց

քաղցրութ͞ք ինձ պատահեսցէ։ Ցո՛յց ինձ տէր 'ի յելիցն աւուր՝ շնչոյս արձակման, մաքրութ͞ն ոգի ուսով ամբարձեալ 'ի յերկնաւորացն երջանկաց՝ պարգեւօք սիրոյ քոյ եկեալ հասեալ։ 'Ի յարդարոցն կատարելոց՝ կարեաց ինձ կցորդ ժամանեցուսցես. զանձանկեալս բարի՝ չարիս 'ի յուսահատութեանն աւուր շնորհեսցես։ Բա՛ւ լիցի քեզ բարեբանեալ՝ որ փրրկութ͞իդ ես ամ͞ի, եթէ ախտացեալս քո ոչխարի՝ գազան դժնդակ տացես ուղեկից. մեղօք մեռելոյս՝ անախտ կեանք. կործանելոյս պարտեօք՝ փրկութ͞ի։

3 Ա՞րդեօք մոռասցիս զբարերարելդ՝ ա՛նկկալուի. անտեսեսցես զգթասիրելդ՝ խրնամօղ. պղպղեսցես զմարդասիրելդ՝ ա՛նփոփոխ. նհանջեսցես զկենագործելդ՝ ա՛նվախճան. թողուցո՞ւս զողորմութիւդ՝ երջանիկ պտուղ։ Ա՞ղաւաղեսցես զքաղցրութ͞եդ բարեշնորհ ծաղկիդ. անպտուղեսցես զնիւթ պանձանաց՝ քում ճոխութ͞ե. յեղանակեսցես զփառս հերաց՝ քում բարձրութեան. ո՞չ պահեսցես զվայելչական զարդ պայծառութ͞ե՝ քում պսակի։ Եթէ ողորմածացն է երանութ͞ի, իսկ դու բնաւ իսկ արքայութ͞ի՝ լցեալ փափաքմամբ, ո՞չ զբոլորն պարգեւեսցես փրրկութ͞ի. ո՞չ մատուցանիցես դեղ վիրացս. ո՞չ սպեղանիս խոցոտածոյս. ո՞չ դարման տկարութ͞ես. ո՞չ ծագեսցես լոյս 'ի խաւարի յուսացելոյս 'ի քո զօրութ͞իդ՝ կենաց պարգեւդ տիեզերց։ Որ միայնդ ունիս փառս ինքնութ͞ք էակութ͞ք եւ յարակայ մշտնջենաւորութ͞ք. վկայեալ 'ի բնաւից. օրհնեալ եւ փառաւորեալ յերկս յաւիտեանս. եւ անդր քան զպայման սահմանի իմանալեացն յաւիտենից. ամէն.

†Ս Ջերմին յաւելուած կրկին հեծութեան Նորին հոգւոյ, առ նոյն աղերս մաղթանաց բանի. 'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Աստուծոյ.

## ※ Բան. Գ.

1 Տէր իմ տէր, տուիչ պարգևաց • բնութեամբ
բարի • ամենից տիրող հաւասարապէս • միայն
արարիչ զբնաւս՝ յոչէից • փառաւորեալ • անքըն
նին • անհեղ • անհարկու • սոսկալի • հզօր • սաստիկ • անտա
նելի • անմերձենալի • անըմբռնելի • անխմանալի • ան
ճառելի • անտեսանելի • անզննելի • անշօշափելի • անո
րոնելի • անսկիզբն • անժամանակ։ Անշամանդաղ գի
տութիւն • աներկևան տեսութիւն • ճշմարիտ էականութիւն •
բարձր՝ և խոնարհ օրհնաբանեալ գոյութիւն • անստուեր
ծագումն • ամենափայլ ճառագայթ • խոստովանեալ
լոյս • անտարակոյս վստահութիւն • անտարտամ հանդիստ •
անյեղլի կնիք • անսահմանելի տեսիլ • վկայեալ անուն •
ճաշակ քաղցրութեան • բաժակ բերկրութեան • հաստիչ
հոգւոց հաց • օտար մթութեց սէր • աներկբայ խոս
տումն • ծածկոյթ ցանկալի • զգեստ անկապուտ • օթոց
բաղձալի • զարդ փառաց • ձեռնկալու մեծ • ապաւէն
գովեալ • աննուաղելի շնորհ • անսպառելի գանձ • ա
նապական անձրև • արփիացնցուղ ցօղ • ամենատեղաց
դեղ • ձրի բժշկութիւն • կրկնաձիր առողջութիւն • վեհա
գոյն խրախոյս • անպատիր կոչումն • համօրէն աւե
տիս • սարկամեծար թագաւոր • աղքատասէր պաշտ
պան • մշտահարուստ տուիչ • անխափան դիմեցումն •
աննահանջելի հրաման • անհամառօտ յոյս • երկար տե
սողութիւն • անզղջական տուր • ամենաբաշխ աջ • արդարա
կշիռ ձեռն • անաչառատես ակն։ Մխիթարութեան ձայն •



սփո

սփոփանաց լուր • բերկրութեն բերումն • անուն կեն-
դանի • նախախնամօղ մատն • անդայթագղելի ելք •
անխարդախ ընթացք • կենդանարար կամք • աննեն-
գելի խրատ • աննախանձ պատիւ • լայնական ճնարք •
անձկական պայման • անգտանելի հետք • աներևոյթ
շաւիղ • անչափագիր պատկեր • ողքանուէ անսահման •
աննմանական տիպ • անզուգական գութ • ողորմութե
բազմազեղ • խոնարհութե տօնելի • համբոյր փրկական։
Եւ ևս քան զայս՝ ազգամունք վայելչականք՝ ածու-
թեանդ նուիրելեք, օրհնեալ • գովեալ • բարեբանեալ •
քարոզեալ • աւետարանեալ • հռչակեալ • հնչեցեալ • պատ-
մեալ • անխափելի կամօք աղաչեալ • և որ ինչ առ մեզ
բերին առ՚ի քէն՝ հոսմունք քաղցրութե, զոր համ-
դերձելոցն ձառից լուսաբանեն կերպաւորութիք •
որով զուարթ ցուցանիս ՚ի փրկութին իմ՝ երանութե,
իբր ՚ի պարարտութե իմքէ՝ ախորժ տենչանօք լցեալ •
զի ոչ իմով ինչ մնոտիապատուաստ փառատրիս եր-
գով, այլ զի պատճառ իմն առցես զփոքրս աղերս՝
մեծիդ փրկանաց։

2 Եւ քանզի առ ամ հասակ տնկեցել յերկրի ազգ-
բանականաց՝ այս պատուէր նկարագրական նորոգ-
մատենի ողբոց նուագի՛, որ զամենեցունց ունի ըղ-
կրից պատահմանց՝ նշաւակեալ յիւրում պատկերի,
իբր կցորդ մեծգիտականան կարեաց համայնից, առ
բոլոր գումարս՝ բազմահոլով տիեզերակոյս քրիստո-
նէից։ Ի նախնի ժամն ժամանողաց, և առ երկրորդ
կոչեցեալ չափու արբունն, առ որ ՚ի կատարած աւ-
ուրն կալեալ՝ սակաւաձեռն ծերութեն։ Ի պար-
տաւորս, և արդարս • առ ինքնարգոյ բարձրայօնն, և
սխա

սխալեալ անձնադատ գտեալն․ առ բարիսն, և եղեռ
նագործս․ առ նկունս, և առ արիս․ առ սորուկս և
ներքոյանկեալս, առ սնապուհս և գերաշխարհիկս․
Միջակայնոց՝ և պայազատաց․ շինականաց՝ և տոհմա
կանաց․ արուաց՝ և իգաց․ հրամայողաց՝ և հնազան
դելոց․ գերելոց՝ և նուաստից․ վեհից՝ և փոքունց․
պատուականաց՝ և ռամկաց․ ձիավարժից՝ և ոտակա
կանաց․ քաղաքականաց՝ և գեղջկաց․ արքայից գոռո
զութեանց՝ 'ի սանձս ահաւորին ըմբռնեցելոց․
Միայնացելոց՝ վերնականացն խօսակցաց․ մաքրակա
նաց՝ տիրանուէր զգաստութեանց․ քահանայական՝ եր
ջանկակրօն ընտրութեանց․ այցելութեանց՝ բարեզգես
տից դիտողութեանց․ աթոռակալութեանց նախագահից՝
սրբանուէր տեսողութեանց․ որոց ոմանց աղերս աղա
չանաց, և ոմանց խրատ բարեաց, առ դէմս աղօթից՝
այսու մատենիւ մատակարարեցի, ձեռնարկեալ հո
գևոյդ զօրութեան՝ կարդել ինձ մաղթանս բազմադէ
մի, և ամենեցուն սոցին խնդրուածս՝ գթութեան մեծիդ
յանդիման լինել սոսա հանապազ․

4 Նաև արասցես զայն ընթերցողացն 'ի սիրտ յըս
տակս՝ բժշկութիւն հոգւոց, և մաքրութիւն յանցա
նաց․ թողութիւն պարտուց, և արձակութիւն մեղաց կա
պանաց․ Յղեսցի՝ բղխումն արտասուաց՝ սոսա վար
ժելոցն, և պարգևեալ տացի 'ի ձեռն սորին ապա
շաւ ըղձից․ Շնորհեսցի՝ տէր և ինձ ընդ նոսին՝
առ 'ի քէն՝ զզջումն կամաց․ և նոցա խմոր ձայնիւ
շունչս բարեհամբոյրս․ նուիրեսցի վերն իմ այսու մա
տենիւ՝ պաղատանք նոցին, և բանիւս այսու հե
ծութիւնք նոցին՝ ընդ իմ խնկեսցին․ Ընդ համբոյր



ձա

ճաշակման այսր ողբերգութեան , շնորհ լուսոյ քոյ
մնալ բնակեսցէ . եթէ ելցեն ինձ բարեպաշտք
ընծայիւ սովաւ , ընկալ կենդանարարն մ̃ր քոյ դրօթած՝
և ըստ է̃ նոյին . եթէ ախտս ինչ սրբանուէրս կաթ_
ուածոց աչաց՝ սովինդ բերիցի , եղիցի՛ 'ի քէն խընա
մոկալ՝ և յիս անձրևեալ . եթէ գրեսցի և 'ի փրկու
թիւն կարդեսցի՝ հաղորդելոցն յայս կերս կենաց ,
արասցես կամաւ քո օրհնեալ՝ և ինձ համարել . եթէ
հեծութիս ա̃ծահաճոյս 'ի ձեռն այսր բանի՝ 'ի գաղտ
նեաց ուրուք յառաջ եկեսցէ , օգտեսցայց քև բարձ
րեալ՝ և ես ընդ նմին . եթէ ձեռն մաքուր՝ խնկով
հանդերձեալ՝ առ քեզ համբարձցի , հասցէ՛ մատցի՛
է̃ իմս ձայնի և աղաչողացն աղերս՝ յառաջ մատուցը .
Եթէ պաշտամունս բազմադիմիս ընդ իմս երկնեսցի ,
լիցի՛ և ինձ քև՝ և վասն սորին կրկին նուիրեալ .
Եթէ յարդեսցի այս անձին բանի պատարագ՝ քեզ
'ի հաճութի , նախայլոցն՝ ընդ իս քև ընծայեսցի ։
Եթէ 'ի տխրանաց ինչ ձանձրուէ՝ ոք նուաղեսցի ,
կանգնեսցի՛ վերստին հաստատանաւ այս հառաչա
նաց՝ 'ի քեզ յուսացեալ . եթէ համբարտակն վստա
հութե՝ մեղօք յատակի՛ , այսու արձանօք պատկանե
ցելովք աջով քո պաշտպան՝ դարձեալ կառուսցի .
Եթէ յուսոյն ձգարան՝ տուսերբն յանցանաց հա_
տեալ կորեսցի , կցեսցի՛ դարձեալ միւսանգամ կա_
մօք ամենակալիդ՝ բարուօք պատուաստեալ ։ եթէ վը
տանգ մահու՝ անձնական ցաւոյ՝ զոք պաշարեսցէ ,
գտցէ՛ փրկութի սովաւ առ 'ի յոյս կենաց՝ յաղօթելն
առ քեզ կեցուցիչ . եթէ տագնապաւ ոք տարակու
սի՝ 'ի սիրտ խոցեսցի , քաղցրութ̃ քո սովաւ ապրեալ


ող

ողջացի։ Եթէ անքաւելի կորուսեալն պարտեաց՝ յանդունդս որք խորոց իցէ ընդլուզեալ, եկեսցէ՛ 'ի լոյս՝ կարթիւ այս ձեռին՝ քո պատսպարեալ. Եթէ թմբրութբ խաբէից՝ խաւարին գործոց՝ իցէ որք մեռեալ, զօրասցի՛ անդրէն վասն քոյ միայն ապաւէնի՝ 'ի քեզ ապաստան եղեալ։ Եթէ պաշտպանակն վստահութե զանձն ուրուք լքցէ, ընկալցի՛ այսու միջնորդիւ ձեռն քո զնա՝ ամփոփեալ 'ի նոյն հաստատութե. Եթէ ամայի 'ի զգուշութե պահողացն որք դեգերեսցի, սպասեսցէ՛ սովին՝ առ 'ի նոյն դարձ նորոգողիդ։ Եթէ սարսուռ դիւային ջերման՝ դողութբ ինչ զոք խռովեսցէ, սթափեսցի՛ 'ի սոյն յայս նշան՝ խոստովանեալ և երկրպագեալ խաչիդ խորհրդոյ. Եթէ անօրէնութե մրրիկ՝ խորտակիչ հողմոյ՝ յանկարծ բախեսցէ զհաստատուած մարմնոյ՝ շինուածոյ մարդոյ՝ յերկրային ծովուս, հանդարտեսցի՛ անդրէն՝ ղեկաւ այս թեւոց 'ի քեզ պատկանեալ։

4 Եւ արասցես լինել դեղ կենաց՝ առ ձեռս ցաււոց հոգւոց և մարմնոց՝ քոց ստեղծուածոց, զայս կարգեալ սահման ողբոց մատենի սկզբնեցելոյ յանուն քո՝ բարձրեալ։ Ո՛վ սկսեալս իմ՝ դու կատարեա. եղիցի՛ հոգի քո խառնեալ 'ի սա. շունչ զօրութե մեծիդ միասցի՛ 'ի քո ինձ շնորհեալ ստեղծաբանութիւնս. զի դու տաս զօրութիւ վհատեալ սրտից, և ընդունիս փառս յամենեցունց.

ամէն։

+Ա Երրորդին յաւելուած ներքին հեծութեան՝ նորին հայցողի, ա-
նոյն աղերս մաղթանաց բանի. ՚ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ.

## *Բան. Գ.

1 Եւ քանզի սկիզբն կալայ խօսել ընդ քեզ՝
որ ՚ի ձեռին ունիս զշունչ կենդանութեան
հողեղէս բազմամեղի, յիրաւի սարսեալ
դողացեալ տագնապաւ մեծաւ՝ յաւէտ երկնչիմ.
վասն զի ահաւոր և անտանելի, և ՚ի սահմանէ բանի
փախչելի, յիշատակ անձողոպրելի անաչառ քո ա-
տենի՝ ՚ի կշռամբութիւն իմ պարտաւորի՝ որպէս երկնի
և երկրի. Նաև չի՛ք իսկ բժշկութի բազմավէր
տանջ սաստկութեան վիրացս անողջանալի, խայթմանց
խածուածոց մահաբերին բերանոյ ժանեաց՝ որսո
ղին զանձն իմ ՚ի կորուստ. Մանաւանդ զի՝ ո՛չ գոյ
պատասխանի, ըստ առակողին, յաւուր պատերազմի.
և ո՛չ բանիւ խրատանալի, և ո՛չ վերարկուաւ պատրս
պարելի, և ո՛չ դիմակօք կեղծաւորելի. ո՛չ առ երեսս
բանիւք մատչելի, և ո՛չ կերպարանօք երբէք խաբե-
լի. ո՛չ յօդուածովք բանից ստելի. ո՛չ արագամամբ
ոտից փախչելի. ո՛չ թիկանց դարձուցանելի. ո՛չ դի-
մաց ընդ երկիր մածուցանելի. ո՛չ բերանով ընդ հող
հասանելի. ո՛չ ՚ի խորս երկրի ղօղելի. Քանզի մերկ
են քեզ ծածկեալքն, և հրապարակեալ են աներև-
ոյթքն. արդարութիւն իմ նուաղեալ՝ և իսպառ ու-
նայնացեալ. մեղանքն յայտնեցեալ՝ և յաւէտ առաւե-
լեալ. չարիքն իմ մնացական՝ և ես կորստական. իրա-
ւանցն կշիռ պակասեալ՝ և անիրաւութիւն իսկոյն զօ-
րացեալ. բարեացն բերք հալեալ՝ և սխալմանքն ար
ձա

ձանացեալ. աւանդն կորուսեալ՝ և դատաւորքն այժ-
մէն դատեալ. մաՀուն մուրՀակ գծեալ՝ և աւետարանն
կնիք եղծեալ. Բարերարն անարգեցեալ՝ և բանսար-
կուն ուրախացեալ. Հրեշտակաց դասն թախծեալ՝
և սատանայ խնծղիւք պարեալ. վերնական զօրքն ող-
բացեալ՝ և սատանայինքն բերկրեցեալ. սպանողին մը-
թերք լցեալ՝ և պաՀողին գանձն կապտեալ. օտարին
կողմն կանգնեալ՝ և տոՀացողին պարգև մատնեալ.
Հատողին ձիր մոռացեալ՝ և կորուսչին Հաղէքն պա-
Հեալ. երախտիք փրկչին Հենդնել՝ և բեկեալ զուար-
թացեալ. կենացն աղբեւր փակեալ՝ և դառնողին
ժանգ՝ ժանդխս ժամանեալ.

2 Իսկ արդ՝ ո՛չ տպաքէն ըղձալի էր, ըստ դրոյն կամ-
խուէ նախաձայնելոյ, ո՛չ սաՀղծանելն երբէք յար-
գանդի՛ և ո՛չ նկարելն ՚ի յորովայնի. ո՛չ ՚ի ծնունդ յա-
ռաջադայել՝ և ո՛չ ՚ի լոյս կենաց Հասանել. ո՛չ ՚ի թիւս
մարդկան գրել՝ և ո՛չ ՚ի Հասակ աճման ամբառնալ.
ո՛չ ՚ի պատկեր գեղոյ զարդարել՝ և ո՛չ բանիւ Հանդեր-
ձաւորել, քան ընդ այսպիսեաց սատակադունից և սար-
սափելեաց ըմբռնել պարտուց, զոր և ո՛չ վիմաց կարծ-
րուե բերել, թո՛ղ թէ մարմնոց լուծականութ.

3 Իսկ արդ՝ տո՛ւր բարերարութի՛ աղաչեմ զքեզ՝ տո՛ւր
ինձ ողորմութի՛, որ զայսոսիկ դու ինքնին քե-
զէն քոյովդ բանիւ մեզ սաՀմանեցեր՝ ասելով, թէ
տո՛ւք զայդ նուէր՝ յանուն փրկութե ձերոյ՝ ո՛յ, և
ամբողջ եղերուք. զի զողորմութի կամիմ, և ո՛չ զպա-
տարագ. Նա բարձրացի՛ր վերասին ինկեալ այսր
մեղստակա, որ ունիս զա՛մ, և ՚ի քէն է ա՛մ, և քեզ
փառք յաւիտենից. ամէն.



Իսկ

† Ս ջերմին ցաւելուած նշկին հեծութե՝ նորին հոլովելի, ա-
նոյն ազէրս նոսոլնանոց բանի։ 'Ի խորոց սրտից խօսս՝ ընդ ՃԺ։

## * Բան . Լ .

1 Եւ արդ՝ ես երկրածինս մարդ՝ կենդանա-
կանաւ անկայուն գոյիւ զբաղեալ, և յե-
մարութե պատրողականաւ դիմնեալս՝ յիմա-
րեալ, որ անձնայնիւ սանեմ, և ոչ միով ինիք ճշմար-
տեմ։ Քանզի որովք դիմօք վերադարձեցելովք՝ նը-
շանակօք աղաղակեցելովք՝ յանդգնեցայց լինել յան-
դիման քում դատաստանիդ, ով Իրաւադատ աշա-
ւոր անձանց՝ անպատում հզօր ամ բոլորից։ Քանզի
դասեալ աստանին 'ի սոյն՝ զապերախտութե մեղու-
ցեալ անձինս՝ առ քումդ երախտիս, ցուցից զերա-
ւունս քո միշտ զօրացեալ, և զանիրաւութիս իմ յա-
ւէտ պարտաւորեալ։ Որ արարեր զիս 'ի քո պատ-
կեր պանծալի՝ 'ի ձեռն վեհիդ տպաւորութեանդ
տկարս օժանդակելով։
2 Զարդարեցեր բանիւ։ փայլեցուցեր փշմամբ։
միտք ճոխացուցեր։ իմաստիւք աճեցուցեր։ հանձա-
րով հաստատեցեր։ 'ի շնչականացն որոշեցեր։ հոգւով
իմանալեաւ խառնեցեր։ իշխանականին գոյիւ պըճ-
նեցեր։ Ծնար հայրաբար։ սնուցեր դայեկապէս։
տածեր ստացօղաբ։ Տնկեցեր զամբարիշտս 'ի քումդ
դաւթի։ Ջրովն կենաց ոռոգեցեր։ աւազանին ցօ-
ղով մաքրեցեր։ կենացն վտակաւ արմատացուցեր։
հացին երկնայնով ջամբեցեր։ ամային արեամբդ
արբուցեր։ անհպիցն և անհասանելեացն ընտանե-
ցուցեր։ զանձս երկրեղէն՝ 'ի քեզ համարձակեցեր։

լուսոյն փառաց վերածածկեցեր․ զհողանիւթ մա
տունս՝ անմաքուր ձեռացս՝ ՚ի քեզ մատուցեր․ զմի
խիլս անարգ մահացու՝ իբր զնշոյլ լուսոյ յարդա
ցեր․ զհայր քո հզօր ահաւոր օրհնեալ՝ մարդասիրա
պէս և անարժանիս իմոյ անձին կնքեցեր․ Ո՛չ կի
զեր զբերանս լցեալ նանրութե՛՝ ՚ի ժառանգակիցն
կարդալ զքեզ․ ո՛չ կշտամբեցեր զյանդգնեալս՝ ՚ի
քո կցորդութի․ ո՛չ ստուերացուցեր զտեսիլ աչացս՝
՚ի քումդ ախտարկութի․ ո՛չ արգելանաւ կապանաց՝
ընդ մահապարտացն տարադրեցեր․ ո՛չ խորտակեցեր
զդաստակ բազկիս, որ անմաքրապէս առ քեզ համ
բառնայր․ ո՛չ մանրեցեր զոստս իմոց մատանցս՝ ՚ի շօ
շափելն զբանդ կենաց․ ո՛չ պատեցին զինև մառա
խուղք՝ ՚ի ձօնելն զքեզ՝ ա՛հաւոր․ ո՛չ փշրեցեր զպարս
ատամանցս՝ յըմբոշխնելն զքեզ՝ ա՛նսահմանելի․ ո՛չ
գնացեր բարկութեամբ խոտորնակ՝ խոտորնակի ընդ
քեզ հետևօղս, իբր ընդ վրիպեալ տունն խոյսէլի․
Ո՛չ խայտառակեցեր ՚ի հարսնարանիդ՝ զանարժանս
քումդ պարերգուե․ ո՛չ ՚ի գձուձ հանդերձին տեսիլ՝
զանօրինեալս յանդիմանեցեր․ ո՛չ կապանօք ձեռացս
և ոտից՝ յարտաքին խաւարն հալածեցեր․

3 Ո՜ այս տմ մատունս բարեաց՝ և զներելոյդ եր
կայնմտութե ընկալեալ ՚ի քէն՝ բա՛րերար օրհնեալդ
և յամի միշտ երկայնամիտ, փոխադրեցի վնասակարս
պարտեաց՝ անթիւս և բազմօրինակ անօրէնութիւս,
մարմնականաց և անձնականաց՝ ամենակիր բազմածուփ
խորհրդոց յուզմանց երկրադարձութեց․ Ո՜ այսո
սիկ քեզ՝ տ՛մ իմ և տր, ընդ այսքանեաց բարեաց փո
խարէնեցի․ զայս քեզ՝ ինձէն հատուցի չարիս, ըստ

Ս․



մոլ

մոլախնեան յանդիմանութեանն առակի, մոռացեալ
զխմաստութի՛ և սիրոյս յիմարութն ։ Զայսց բա
րեաց երախտեաց կաճառս՝ ընդունայնութն գնա
ցիւք՝ չարաչար ունայնացուցի. զայս լուսաւորութի
շնորհաց անճառից՝ 'ի բարձրելոյդ խնամոց բարդե
ցեալ՝ մրրկաւն խելագարութն ցնդեցի. Նաւ թէպ
բաղումանդամ ծանուցար՝ կարկառմամբ ձեռինքո
այցելութեան ձգել զիս առ քեզ, ո՛չ հաւանեցայ,
ըստ մարգարէին՝ որ զիսրայէլէ ամբաստանութն. և
թէպէտ խոստացայ դաշնաւորեցի քեզ հաճոյանալ,
և ո՛չ ընդ այսմ սահմանաւ ուխտին փակեցայ, այլ
դարձեալ զնոյն նիւթեցի չարիս, անդստին յոճն
առաջին մատեայ, փշոյն մեղաց հերկեցի զանդաս
տան սրտիս՝ յորոմանն արդիւնաւորութիւն ։ Ըստ իս
ելանէն առածք՝ ա͞ծարեալ ս͞բ մարգարէիցն, քանզի
մնացեր յինէն խաղողոյ, և ես ընդ այնորիկ փուշ
շառաւիղեցի. դարձայ յանախորժ դառնութի՛ պտղոյ
այգիս օտարացեալ. բուռն հարի զանհաստատ հող
մոյ, որովք մշտ տատանեալ՝ այսր անդր տարաբե
րիմ. ըստ ձայնի երանելոյն յոբայ՝ ընդ ճանապարհ իմն
անդարձ գնացի. 'ի վե͞ր աւազոյ՝ շինուածս յիմարու
թն կառուցի։ Լայնատարր հեռովք խաբեցայ՝ կե
նացն անձկալեաց հասանել, փակեցի ինձէն զելիցն
ուղղորութի, բացի կամաւ զկորստեան խորխորատն։
Խցի զպատուհան լսելեացս իմոց՝ առ բանիդ կե
նաց ընդունելութի. կափուցի զաչաց հոգւոյս հայեց
ուածս՝ առ 'ի զկենացն դեղ նկատել. Ո՛չ ընդոստեայ
'ի թմբրութեց լքմանէ մտացս՝ 'ի պատգամ փողոյդ
ահաւորութեան. [illegible] գուժի՝

Ի հրա

19104
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

հրափորձական աւուրն ընտրութեն․ ոչ երբէք զար-
թեայ 'ի ներհմանէ քնոյն մահացուէի, որ 'ի կորուստն
կարապետէ․ Մ՛չ ետու հանդիստ քոյ հոգւոյդ՝ 'ի
մարմնեղէնս տաղաւարի․ ոչ ընդ բնութիւն շնչոյս
խառնեցի՝ զմասն շնորհաց քումդ պարգեւի․ խմոյս
ձեռօք կոչեցի կորուստ, ըստ առակողին, զհոգիս
կենդանի մահացուցանել։

4 Եւ զինչ է ինձ սակաւս եւ նուաղագոյնս յօդել
սահմանս կսկծելիս չափաբերականս, մինչ ան-
ցեալ է ըստ քանակութի եւ վրիպեալ ըստ բժշկութի․
Արդ՝ քո՞ է ընձեռել կեանս՝ հոգւով մեռելոյս, եւ
անոխակալութե մատչել առ այցելութի դատապար
տելոյս՝ որդի այ կենդանւոյ․ քեզ փառք յաւէ․
ամէն։

---

† Այս չորրորդին յաւելուած իցէին հեծութեն՝ նորին հոգւոյն, առ-
նոյն աղէրս համբանայ բանի․ Ի խորոյ սրտից խօսք՝ ընդ այ․

## * Բան․ Ե․

1 Իսկ արդ՝ զինչ բարւոք գոյ առ այս, կամ ո՞ր
օգուտ ինձ առ սոյն սահման ընթացից ձայ-
նիս հեծութեն լքանել, եւ ոչ զամբարեալ
շարաւ մահացու վէրիս՝ խարանաւ բանիս արտաքս
հերքել․ եւ կամ զծանրութի սրտիս՝ մթերեալ ցա-
ւոյս՝ հոգեկան խիթոյս, իբր տաղտկացուցանողական
ճառաւորութե, մատնամուխ զզուանօք փսխել․

2 Եւ քանզի ոչ գտայ արժանի պարծելոյ 'ի փառս՝
ընդ սրբցն դաս, որոց լի են բերանք նց ծաղու՝
եւ շրթունք իւրեանց ցնծութե, ըստ առակողին եւ



սաղ

սաղմոսողին, 'ի կարգն երկրորդ դիմեցից՝ ընծանիւն իմ յիշատակել համայն աստանօր. Թէպէտ առ իմում թերութեան բարուց անբարեաց՝ և նոքա յաղթականք իցեն, իբր ապաշաւենն՝ քան զանապաշխարն։ Տօնելի եղև մանաւանդ, առ իմոց պարտուցս առաւելութի. պատուեցաւ և փարխնեցին, առ դժնէիս ամբարշտութե. գովեցաւ անառակ որդին, առ անդարձիս ուխտազանցութե. յիշատակեցաւ կեղծաւորութե որդւոյն ամասեայ, առ անշնորհութե ապախտաւորիս. օրինաբանեալ եղև աւազակն, որ դատախազն է անհաւատից. պատուեցաւ և կինն պոռնիկ՝ սկզբնամայրն ապաշաւողաց։ Ո՛չ պակաս քան զփարաւոն՝ զստեղծուած սրտիս իմ խստացուցի. ըստ օրինակի խռովութե մրրկաց ծովու ծփեցայ, ո՛չ այնքան սարսեցի և պատկառեցի 'ի սաստկութէ քումդ հրամանի, որքան ալիք ծովուն՝ յեզերացն։ Ընդ թիւս չափուց կշռութե առ իմս գործոց՝ և աւազոյն կայտ սահմանեցաւ. պակասեաց անբաւիցն շեղջք, առ համբարս իմոցս անօրէնութեց։

3 Զի թէպէտ և յոյժ բազում են մանունքն՝ 'ի յափունս ջրոյն համհաւաքեալք, այլ՝ ուրոյնք և առանձնականք 'ի ծննդոց անձելութէ. իսկ մեղանք իմոյս յանցանաց՝ անթիւք, զորս անճնար է առնուլ 'ի միտ.

Ոմն՝ և ծնունդք էին . ոմն՝ և շառաւիղք էին .
ոմն՝ և բիծք էին . ոմն՝ և արկածք էին .
ոմն՝ և փուշք էին . ոմն՝ և արմատք էին .
ոմն՝ և հաստուածք էին . ոմն՝ և պտուղք էին .
ոմն՝ և նշխարք էին . ոմն՝ և ճուղք էին .
ոմն՝ և ոստք էին . ոմն՝ և արմկունք էին .

ոմն՝ և ձիրանք իւր · ոմն՝ և մատունք իւր ·
ոմն՝ և խլրտմունք իւր · ոմն՝ և զօրութիւնք իւր ·
ոմն՝ և ազդմունք իւր · ոմն՝ և նշմարանք իւր ·
ոմն՝ և տիպք իւր · ոմն՝ և մնացուածք իւր ·
ոմն՝ և ստուերք իւր · ոմն՝ և մթութիք իւր ·
ոմն՝ և յարձակմունք իւր · ոմն՝ և ծնողք իւր ·
ոմն՝ և պատերք իւր · ոմն՝ և դիտմունք իւր ·
ոմն՝ և դիմեցմունք իւր · ոմն՝ և չափք իւր ·
ոմն՝ և խորք իւր · ոմն՝ և գարշութիք իւր ·
ոմն՝ և կայծակունք իւր · ոմն՝ և կերք իւր ·
ոմն՝ և մթերք իւր · ոմն՝ և գանձք իւր ·
ոմն՝ և ցնցուղք իւր · ոմն՝ և տղերք իւր ·
ոմն՝ և գիւտք իւր · ոմն՝ և շանթք իւր ·
ոմն՝ և հրդեհմունք իւր · ոմն՝ և պատկառանք իւր ·
ոմն՝ և վէհք իւր · ոմն՝ և անդունդք իւր ·
ոմն՝ և բորբոքմունք իւր · ոմն՝ և աղջութիւնք իւր ·
ոմն՝ և ամպրոպք իւր · ոմն՝ և կայլակք իւր ·
ոմն՝ և հոսմունք իւր · ոմն՝ և հեղեղք իւր ·
ոմն՝ և սառնամանիք իւր · ոմն՝ և դրունք իւր ·

ոմն՝ և շաւիղք իւր · Հնոցն՝ և տապ իւր · Հրատն՝ և գոլորշիք իւր · Հալոցն ձարպին՝ և ձենձերմունք իւր · օշինդրն՝ և դառնութի իւր · կործանիչն՝ և ծնաղան դեալք իւր · բռնաւորն՝ և յելուզակք իւր · գոռոզն և սպառնալիքնք իւր · աւազակապետն՝ և գումարտակք իւր · գազանն՝ և կորիւնք իւր · խածանողն՝ և ծակոտուածք իւր · ապականագործն՝ և նմանիք իւր ·

4 Որդ՝ այսոքիկ պէտք են գլխաւորութեց՝ ապականողաց ոդւոց համայնից, դասեալք ընդ ինքեամբք նուաճութիւնք մասանց իւրաքանչիւրոց՝ ի



սո

սոցանէ՝ բիւրք բիւրոց՝ և հազարք հազարաց. իսկ զհամայնիցս թիւ՝ նա միայն զօրէ իմանալ, որ զատ՚ի մէնջ չէութին գրեալ՝ իբր զէութի գործոց ան- սանէ. Նա արդ՝ եթէ ոք զանձն ոչ խաբեսցէ, և առ երեսս ոչ կերպարանեսցի, և կեղծաւորաբար ոչ անհաւատեսցէ, և մարդ զինքն ծանիցէ, և հաստա- տակաց բնութե վարեսցի, և երկրածին զանձն դի- տեսցէ, և՚ի չափու իւրում կանոնին կացցէ, իմասցի՛ ծանիցէ՛ զնախաթիւ մասունս արկածիցդ վերագը- րելոց, թէ ոչ ընդունայն ինչ գրեցի, և կամ զընա- խութին սահմանեցի, որ՚ի մերս բնութե պատուակի՛ ազգի ազգի փոփոխականութիւն. այլ՚ի բիւրուցն ար- դասեաց չարեաց՝ չափ մի երևեցուցի, զի նոքօք և զայլոն իմաստասիրեսջիք, թէպէտ և ոչ բաւան- դակապէս.

---

† Սերովբէն ցուցեալ չքչին հեծուբէ՝ նորին հոմօրէ, առ- նոյն ազէրս մոզբեանց բանի. ՚Ի խորոց ուրեք խօսք՝ ընդ ոգ.

## * Բան. Լ.

1 Եւ զի մի՛ զփրկութեն վստահութի խապա- կորեցից, և ապաղէն եղեալ՝ մատնեցայց այսքանեաց աներևութից ընդդիմամար- տից, որք ոչ այլ ինչ են, քան թէ ընտանիք թշնամիք՝ ինքնածին բուսեալք, զոր վերագրեալքդ սահմանե- ցին՝ զորքանութի պատկերին ձևոյ եդեալ, ահար կուս ցուցից առ սմին բազմաբոյլ բնութե մարտ- կացդ՝ զօրեղ ախոյեանս ա̃ծականս՝ ամենայաղթօղս և անպարտելիս, թէ և կսկծելիս կիրս՝ և դժուա

բակութ պտուղս ծառոց անհասանելեաց, և անկոխ
ճանապարհաց երկք և տաժանմունք։ Քանզի զայն
ամենայն գունդս չարութեան բանսարկուին զօրաց, սա
կաւ մի արտօսր կաթուածոց աչաց՝ իբր զճճիս զե
ռունս բազմոտանիս խխայթից երկրի տկար խլրտ
մանց՝ անկեալ ՚ի վերայ ծորումն ձիթոյ, կամ դոյզն
դեղ ինչ սատակչական, ցամաքեցուցանէ. և դոյզն մի
հառաչումն սրտի հեծութեան՝ ելեալ ՚ի յոգւոյ, իբր
շնչումն հարաւային ջերմութեան՝ խառնեալ յարևու,
զսառնամանեաց սաստկութիւն հալէ. քանզի ըստ
միումն նմանութեան՝ հեշտածինք են. և ըստ միւսումն
դիմադրութեան՝ դիւրամեռք։

2 Այլ ես ոչ երբէք կասեցից դատել զդատապար
տեալս՝ բանից կսկծմամբ. պարսել զպարտաւո
րեալս՝ իբր զվնասակար անփրկանաւոր անհամոզելի.
Վասն զի զոմանս սատակեալ ՚ի յիմոց նեղչացն, ոմանց
զօրութիւն տամ կենդանանալ՝ առ հոգւոյս կորուստ։
Յունկս դառնոստեան, որ զգարշութիւն անառակ վա
րուց ծաղկեցի. բարունակս ապականաբեր և մահ-
ողկուզեան, որ զկորստեան գինին երկնեցի. քանա
նու զաւակս՝ և ոչ յուդայի, ըստ ասից մեծին դա
նիէլի. որդիս գեհենին, և ոչ արքայութեան. ժառանգս
դժոխոց, և ոչ փառացն փափագելեաց. նիւթս տան
ջանացն, և ոչ հանգստեան։ Ապերախտս՝ առ երախ
տաւորդ. ապաշնորհս՝ առ բազմապարգևդ. միշտ մե
ղուցեալս՝ առ երկայնամիտդ. դառնացուցիչս՝ քաղց
րութեան բարերարիդ։ Ծառայս չար և վատ, ըստ
տէրունեան յանդիմանութեան. իմաստունս՝ ի չարիս
գործել, ըստ եսայեայ նախատասցութեան. ժիրս՝ առ


ժան

ժանդագործութիս զաղտութեան․ Փոյթս՝ առ ՚ի
բարկացուցանել զՏէրն․ Մշտաշարժս՝ առ դիւտս սա-
տանայականս․ Հանապազորդեան միշտս՝ ստացողին․
Թոյլս՝ առ բարեացն Թուիչս․ Ծոյլս՝ առ երանութին
ընտրութե․ դանդաղս՝ առ դիմումնս խոստացելոցն․
անարիս՝ առ կարիս պիտանեացն և օգտակարացն․
պաշտօնեայս՝ տիրադրուժ երախտամոռաց․
3 Վա՜յ անձինս մեղաւորի, զի զարարիչն իմ բար-
կացուցի․ վա՜յ որդւոյս կորստեան, որ զկենդանութեն
ձիր մոռացայ․ Վա՜յ պարտապանիս անհամար բիւ-
րուց քանքարաց, որ ոչ դոյ հատուցանել․ Վա՜յ բեռ-
նակրիս ծանրութե մեղաց դժնէից, որ չունիմ դառ-
նալ առ հանգստարարն․ վա՜յ վնասակարիս տրուներեան
պարտուցն, որ չի՛ք ճար յանդիման լինել Հզօրին․
Վա՜յ եղէգնախուրձիս կիզանողականս նիւթոյ, որ տա-
չօրելոց եմ ՚ի գեհեննին․ վա՜յ ինձ առ այս յիշատակ,
զի նետք բարկութեն Տ՜յ՝ պլրեցելովք են գործեալ․
վա՜յ յիմարութեանս, որ ոչ մտաւեցի զծածկեցելոցն
յայտնութե հանդէս․ Վա՜յ ամբարշտիս, զի միշտ
անդադար ստտայնս չարեաց կկեցի․ վա՜յ զմարմինս
պարարողի՝ կերակուր որդանցն անմահից, կտտողացն
Թունաւորաց զիա՞րդ համբերեցից․ վա՜յ ինձ առ ար-
բումն՝ մահուն բաժակի, որպէս զյաւիտենականն
տուժեցայց․ վա՜յ ինձ առ ելս անարժան հոգւոյս՝
յեղկելի մարմնոյս, երբ դատաւորին Ճշմարտի յան-
դիմանեցայց․ վա՜յ ինձ առ նուաղութի՝ իւղոյն լապ-
տերաց, զի անարծարծելի է աղօտանալն․ վա՜յ ինձ
առ ձեպ տագնապի՝ ահին պակուցման, յորժամ ա-
ռագաստին մուտն փակեսցի․ վա՜յ ինձ առ ձայնին
ահա

ահաւորուն՝ դողացուցչաց և սարսափելեացն բա-
նից՝ երկնաւոր Թագաւորին վՃռաւ կնքելոյն, Թէ
ոչ գիտեմ զքեզ։

---

† Մ էրտին ցաւելուած ձրձին հեծութէ՝ նորին հանդէ, ա-
նոյն ողէրս ժողբանաց բանի. 'ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ։

## * Բան. Բ։

I Ու արդ՝ զինչ գործեսցես անձն իմ կո-
րուսեալ, կամ ո՞ր Թաքիցես, կամ զիա՞րդ
ապրեսցիս, կամ ո՞րպէս ելցես 'ի մեղաց
բանդէ։ Բանդք բազում են պարտիքդ, և անթիւ
հատուցմունքն. սաստիկ կշտամբանքն, և անվախճան
նախատինքն. անողորմ են հրեշտակքն, և անկաշառ
դատաւորն. հզօր ատեանն, և անաչառ բեմն. քըստ-
մնելի սպառնալիքն, և անողորմ հատուցմունքն. ա-
հարկու հրամանն, և մերկապարանոց յանդիմանու-
թիւնքն. հրեղէն են գետքն, և անանցանելի են վը-
տակքն. Թանձրամած խաւարն, և արտաքոյ այցելու-
Թե՝ մառախուղն. ապականուն է գուբն, և մշտըն-
ջենաւոր է տագնապն. ամենագրաւ տարտարոսն, և
անզերծ սառնամանիկքն։ Ու արդ՝ արդարև քեզ են
գանձեալ դառինքս այսոքիկ գժնդակք, և տարժա-
նելի օթևանք, անըմբերելեացդ պատուհասից, ո՜վ
անարժան անձն իմ մեղաւոր՝ չարագործ՝ պոռնիկ
բազմաքիծ, և սահման անդատաստանի՝ բնաւին ան-
մաքրուԷ։ Ո՜հ՝ զարդիւնս գործոց ձեռաց քոց
ժառանգեսցես՝ Թիւրեալդ 'ի յուղղութէ, և զա-
ռածեալդ 'ի մաքրութէ. տարագրեալդ յարդարութէ,
և

և 'ի կարգաց պարկեշտութեանց․ ունայնդ 'ի լիութեանց՝ հո-
գեպարգև հարստութեանց․ նախանձարկու բարերա-
րին, և ամենակալ թագաւորին․

2 Իսկ քանզի կառուցեր քեզ անել արդելան՝ և
անփախչելի որոգայթ, խոստովանեամբ քեզէն
զանբժշկականդ քո վէր, և զանօրինակդ հարուած,
վկայելով զանձինդ զպարտականդ մահու՝ զանբու-
ժելիդ բեկումն․ ով չարդ 'ի բարեաց․ ով դառնութիդ
'ի քաղցրութեանց․ ով խաւարդ 'ի լուսազարմից․ ով
կապտեալդ 'ի պճնելոց․ ով դալուկեալդ 'ի գովելոց․
ով անբարիշտդ 'ի բարեպաշտից․ ով չնչականդ 'ի
բանականաց․ ով անմիտդ 'ի մտաւորաց․ ով անհան-
ճարդ յիմաստնոց․ ով անմաքուրդ յընտրելոց․ ով
մահացուդ 'ի կենդանեաց․ ով խոհերականդ 'ի սբց․
ով արբշիռդ 'ի պարկեշտից․ ով կեղծաւորդ յարդա-
րոց․ ով անպիտանդ 'ի պիտանեաց․ ով անարգդ 'ի
փառաւորաց․ ով նուազդ յառաւելութեանց․ ով գե-
րիդ 'ի գերադունից․ ով նուաստագոյնդ 'ի վեհից․
ով աղքատդ յընչեղաց․ ով անարժանդ 'ի փրկութեանց․
ով տնանկդ 'ի բարձրութեանց, և 'ի հոգևոր հարստութեանց․
և հատուածեալդ յօրհնելոց․

---

† Ա ճերմին ցուեղուած կրկին հեծութէ՝ նորին հոգւոյն, ա-
նոյն աղէրս ծաղկանոյ բանի․ 'Ի խորոյ սրտէց խօսի՝ ընդ ած․

* Բան․ Թ․

1 Եւ արդ՝ զինչ արժանաւոր ըստ քեզ բան-
բասանս շարադրեցից 'ի կտակ մաղթանաց
մատենիս այսր ողբերգութեան, ով անձն իմ



ԹըՀ

Թշուառ անձնապատկառ, և առ պատասխանիս բա-
նից անբարբառ, անպիտան ա̃յ և ս̃բցն մասնակցու-
թեան։ Զի եթէ զլիճ մի ծովուց՝ 'ի յորակութի
դեղոյ յեղեղեցից, և զդաշտս ապարխօք բազմօք
սահմանեալ՝ 'ի տարածումն լայնութե քարտենի չա-
փեցից, և զպուրակս յոքունց անտառաց՝ շամբից և
ղեգանց՝ 'ի հասուածս գոյութե գրչաց կազմեցից,
և ոչ զթիւ մի 'ի բարդելոցն անօրէնութեց՝ զօրեցից
ընդ գրով սահմանի գրաւել։ Նա զի՝ թէ զմայրս
լիբանանու՝ 'ի մի լուծ կշռոց զօդեցից, և կամ ըզ
լեառն արարատեան՝ 'ի կէտ ամբարձման նժարի միոյ
արդարութեան՝ միջնորդ կացուցից, ոչ հաւասարէ
այնր հարթութէ համազուգակցել։

2 Զաւուս ամբարձուղէն՝ սուտարասուեղն՝ տերևա-
լից՝ ունայն 'ի պտղոց, նմանակից յաւէտ հարա-
զատ այնր թզենւոյ՝ զոր տէրն գօսացոյց. քանզի սա-
ղարթօք վարսից. այս է՝ արտաքին դիմօք բարեշուք
կերպից՝ իբր պսակաւ խմիք պաճուճեալ, բացակա-
նացն գոս բաղձալի. իսկ եթէ մերձեսցի տնկօղն՝
խուզել զխնդրելին, գտցէ զքեզ ունայն 'ի բարեց,
և գարշելի 'ի գեղեցկութեանց. ծաղր տեսողաց, և
նշաւակութիք նախատողաց։ Զի եթէ ապաժաման՝
յանզգոյշ ժամուն՝ հերապանծ տունկն պտղաբերոյս
անկենդան, որ դոյզն պատկերն է անպատրաստից,
եկն ընդ անիծիւք. և կամ երկիր ուռուցեալ ցօղով,
և ոչ բազմապատիկ՝ զաւանդս արդասեաց երկրագոր-
ծութե՝ տածողացն մատուցանէ, լքեալ մնանի.
իսկ դու՝ մ̃լ անձն խմեղկելի, սահման բանաւոր և
տունկ կենդանի՝ և ոչ 'ի ժամու իւրում պտղաւոր,



իբր

Եբր ոչ զնոյն կրեսցես պատիժ նախնում առակիդ։
Մ̃ զի զհամայնն ընկալար 'ի քեզ՝ անպակաս յառա-
ւելութեանց, սկզբնաւորեալ 'ի մարդն առաջին՝ և
մինչև 'ի սպառումն ծննդոց նորին՝ զբերս գործոց
նանրութ̃ց, և զդիւտս նորոգս՝ ատելիս և անախոր-
ժելիս հաստողին զքեզ ա̃յ։

3 Նաև վա՜յ զի եդի զքեզ նպատակ հանդէպ երե-
սաց տեսութեան մտացս՝ անձն իմ անպիտան,
վիմօք ձգելոց արձանաց բանից՝ իբր զանընդել զա-
զան վայրենի, անողորմաբար զքեզ քարկոծել։ Որ
թէպէտ և ոչ պատահիմ անուանիլ արդար, սակայն
յառաջնումն պատասխանւոջ՝ իբր ընդ ոսոխի ու-
մեմն՝ ընդ անձին՝ յօժարամիտ կամօք ոգորիմ, ըստ
իմաստութեանն բանի. և զայս մնաց խորհրդոցս
գաղտնեաց՝ իբր զգլխաւորեալ յանգաւորութ̃ չա-
րութ̃ գործոց խոստովանեալ, քեզ տարածեցից՝
ա̃ծ իմ և տէր. Զի որով չափով չափեցից զան-
ձինս ստգտանք, 'ի քոցդ անհնարալ գթութ̃ց՝ այս-
րէն չափեցայց, ընկալեալ զշնորհդ յաճախագոյնս՝ ընդ
մեծագունիցդ պարտեաց։ Նաև որքան վերացն հար-
ուածք՝ անբժշկականք և անհնարաւորք ճարակեցին,
այնքանեօք չափովք կրկին առ սմին՝ և իմաստք ար-
ուեստից բարձրեալ բժշկիդ՝ բարեհռչակեալ լու-
սաւորեսցին. և 'ի պարտուցն առաւելութ̃, նոյնքան
փոխատուիդ առատատրութիւն՝ բարեբանեալ միշտ
պսակեսցի, ըստ խնկաւորդ քում առակի։ Զի քո է
փրկութ̃. և 'ի քէն է քաւութ̃. և աջով քո՝ նորո-
գութ̃. և մատամբ քո՝ զօրեղութ̃. և 'ի հրամանաց
քոց՝ արդարութ̃. և յողորմութ̃ց քոց՝ ազատութ̃.
և

և յերեսաց քոց՝ լուսաւորութիւն. և ՚ի դիմաց քոց՝
զուարճութի. և հոգւոյդ քո՝ բարութի. և օծման
խնդրոյ քոյ՝ սփոփութի. և ցօղոյ շնորհի քոյ՝ զուար
թութի. և դու տաս մխիթարութի, և մոռացուցա
նես զվհատութիւն. և բառնաս զխաւար վշտաց, և
զհեծութի ողբոց՝ ՚ի ծաղր փոխես։ Դու քեզ վայելէ
օրհնութի գովութք հանդերձ՝ յերկինս, և յազգս
հարցն՝ և ՚ի ծնունդս նոցա, և յաւիտենից յաւի-
տենանս. ամէն.

---

† Ս. Էրոտին յաւելուած կրկին հեծութի՝ նորին հոգւոյն, առ
նոյն աղէրս խոստովանութեան բանի։ ՚Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ։

## *Բան. ԺԱ։

1 Եւ արդ՝ քանզի միապէս մատնեալ կորստեան՝
և զղջումն ուժգնապէս, և մեղանչելն
մոլեգնաբար. զի թէև օտարացեալ իմն են
՚ի միմեանց այլայլութիք նմանութեցն, սակայն ըղ
կերպարանս երկաքանչիւրոցն առ միմեանս եդեալ
զմի և զնոյն վհատութեան ծնունդս արտադրեն։
Զի մինն՝ զհզօրին ձեռն՝ իբր ապիկար՝ թերահա
ւատէ, իսկ միւսն՝ ըստ նմանութեան քառոտանեաց
պաճարեղինաց՝ յանզգայս եղեալ, զգայուսոյն առասան
խզէ. վասն որոյ ընդ առաջնումն միշտ փաղաքշեալ՝
հանապազ խնդայ սատանայ. իսկ երկրորդաւն՝ ըստ
նմանութե լափլիզօղ դժոխորովայն գազանի, իբր
կերակրով՝ արբեալ պարարի։

2 Եւ արդ՝ իբր զգանեալ բազմահարուածեան հե-
ծանաւ, և յափն մահու ժամանեալ՝ դոյզն ինչ

դարձուածն շնչոյ ընկալեալ, և յոգի կենդանի եկեր
կազդուրեցայց պատսպարեցայց կանգնեցայց յար-
եայց յանկենդանականս կորստենէ. օժանդակեալ
քո ձեռամբն՝ որ գթածն է յամի՝ 'ի բարեբարյերկ-
նաւոր Հօրէն՝ փրկութե և բժշկութե պտուղ ըն-
ձեռեալ ինձ մեղուցելոյս՝ ախտացելոյս՝ և մահացե-
լոյս։ Նաև սկզբնաւոր ողբերգութե այսր աղերսա-
նաց, զհաւատոցն շինուած կառուցից. քանզի և ոմն
'ի նախնեացն՝ սուքիմէք զինեն, փոխեցաւ իսկոյն յան
մահականն վիճակ վերին. զապաշխարութեանն դեղ
ընկալեալ, ապաշաւանաց թոշակաւն՝ զգրաւականն
անեղծութեան ատէն ժառանգեաց։ Ի վեր քան
զորոց՝ առաքեալ՝ ընդ նմին ցուցանէ, որք զհանդէսն
մրցանակին յերկրի կատարեալ, ապագայիցն և երկ
նաւորացն յուսոյ հաւատացին, և անտեսիցն ճոխու-
թե փարթամացան։ Իսկ զխրախոյս տրունի պաշտե-
լի բանին՝ յիշեալ առ ամին, զի ամ ինչ հնարաւոր է
այնմ՝ որ հաւատայն։ Ո՛չ զի՝ և զչափն ընտրակա-
նացն բարեմասնութե այ հաճելեացն՝ զննեալ առ
տանօր, զայս պատկեր բանի ընկալայք նախնի դահ-
էրէց, առ 'ի սրբութեցն մուտ՝ ստվիմբ հանդերձել.
առանց որոյ և ոչ տրն փառաց՝ զխուրան առ մեզ հը
րաշագործեաց զօրութիւնս, եթէ ոչ նախ՝ ըծակից
խնդրեաց բարերարութենն իւրոյ զհաւատսն մեր.
ուստի և կեանս ընձեռել զօրէ ինքնիշխան բաւա-
կանութե՝ առընթեր գոլով այ. քանզի հաւատք քո
կեցուցին զքեզ, օրհնաբանեալն այ բերան վկայեաց։
Քանզի արդարև սեռն տեսութե, և կատարեալ
իմաստութե, և առ այծ ընտանութե, և բարձրելոյն
ծա

ծանօթութիւն հաւատոց մասն՝ երջանիկ և ընտրեալ անուն՝ որ յարաձգեալ մնայ անվթար և անփակելի, պատուական գոլով սիրոյ և յուսոյ։ Ո՜վ եթէ փոքու սերմանի գոյի՝ հատի մանանխոյ չափոյ նուաստի հաւատք՝ զլերանց մեծութիւն փոխէ զօրեղապէս ՚ի սիրտս ծովու, ապա յիրաւի ընկալցիք զայն սկզբնաշաւիղ առաջնորդ կենաց՝ աներկմիտ պաշտօն առ Աստուած, որ զապաւինիսն և զծածկեալսն՝ առանց երկբայութեան ՚ի հոգւոյն աչս տեսանէ, երրորդութեան փառատրելի անուանմբն պատուեալս հաւատք՝ ընդ սիրոյն դասել և յուսոյ։ Ո՜վ եթէ՝ և զերկին հաւուածս առանձնաւորականս՝ ՚ի մի և՛ ՚ի նոյն խորհուրդ դիտեսցես, յաւէտ մեծասցիս նոքօք ՚ի յԱստուած. քանզի՝ թէ հաւատաս ՚ի նա, և սիրես. որով և յուսաս աներևութից պարգևաց նորին. Նմա փառք յաւիտեանս. ամէն։

---

† Մ՛երադէն ցաւելուած ներքին հեծութեան նորին հոգւոյն, առ նոյն աղերս [illegible] բանի. ՚ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ։

## *Բան. ԺԱ.

1 Եւ արդ՝ ես յետինս դաւանողաց՝ ունայն ՚ի բարեաց, նայեցեալ խորհրդով մտացս ՚ի սկզբնաւորին իմ եղելութիւն՝ ՚ի ձեռն ձեռին ստացողին իմոյ յանէից, յուսով հաւատամ յիս քո՛ առնել զոր կամիս։ Քանզի հաւատացի, մինչ և խօսեցայ խրատեալ պօղոսիւ, ուսեալ ՚ի դաւթայ, թէև արդ կենդանի մաղթանք նոցա այց ինձ արտացէ. ուստի հաւատովք ճանաչել զնա, և զզօրութիւն



յա

յարութեան նր̃, ըստ առաքելոյ, և զհաղորդութի̃
չարչարանաց նորա, և որ զկնի բերին ասացեալքն։
Կցո՛րդ է սմին և յոյժ նմանատիպ՝ հաւատալն խա֊
կապէս և ՚ի նորոգս այս փոխադրու̃ն, որ ՚ի մեղացն
՚ի քաւութի̃, և ՚ի չարագործութէ̃ յարդարու̃ն, և
յանմաքրութէ̃ ՚ի սրբու̃ն, և յանքաւելեացս պար֊
տեաց մահու յանցանաց՝ յանդատապարտն երանու֊
թիւն, և ՚ի ծառայական կապանացս՝ յերկնաւորն ա֊
զատութի̃։ Քանզի զիա՞րդ ոչ արդեօք չքնաղ քան
զբան՝ և ՚ի մթութէ̃ երկևանու̃ն խաւարի զտեալ՝
և աստուծով օժանդակեալ և օգնեալ սիրտ մեղա֊
ւորի, որ ընդ մարմնապէս ծիծաղելն՝ առ նմին հե֊
ծէ հոգեպէս։ Որ թէպէտ և յամբարձմանէ բարձ֊
րութե̃ գերագունիցն կայից, ստորասուզեալ ծան֊
րութե̃՝ յանդնդային վհին խորխորատ գբոյն կոր֊
ծանման, նորագիւտ մեղքն անջրելեօք, ունի և նըշ
խար նշուլեց՝ փրկութե̃ կենաց հպաւոր, իբր կայ֊
ծակն լուսոյ պահեցեալ ՚ի միտս և յոգի․ որպէս ըզ
հուրն նշանաւոր և զարմանաւոր թանձրամած՝ հր
րաշիւք մակարդեալ վեհին հրամանի՝ ՚ի յատակս ներ
քին նիրհեալ՝ ջրհորոյն։ Աստի և մեղուցելոյն խա֊
պառ թաղծելոյ, և ակնկալու̃ն բարւոյն բարձելոյ,
և համարձակութի̃ շնորհին լքելոյ, յուսալ վերըս֊
տին անդրէն միւսանգամ նախապարգևիցն փառա֊
զարդուեց դարձեալ հասանել․ քանզի և յա̃ծուստ
անդուստ հանդերձի և այս՝ ներգործիլ առ սոյնս․
վ̃ն զի սա՛ զտու̂ողին զօրութի̃ ամենաշնար աւետա֊
րանէ։ Յո՛ր խունկ հաճու̃է մեծապէս հոտոտի ա̃ծ,
քան յա̃մ բուրումն անուշից, և քան ՚ի խառնեալն
եր

երբեմն աղացմամբ՝ 'ի սպաս խորանին, որ է կերպա րան անձանց խոնարհից զիջեալ բեկութեամբ՝ առ 'ի միութիւն նոյն նմանութեան․ Ըստ որում հարցեալ փրկչին ամենից՝ ցոմանս ախտացեալս տեսանելեօք, հաւատովք ասելով՝ առ այդ, թէ կարող եմ առնել ձեզ զայդ, ո՛չ պարգևեաց աչաց նոցա լոյս, եթէ ոչ նախ զհաւատոյն գրաւ ընկալաւ․ Քանզի զինչ քան զմեռելութիւն քառօրեայն դիոյ՝ առ կենդանու թիւն մեզ անյուսագոյն, առ որ կանանցն ժամանելոց 'ի յոտս արարչին՝ հաւատոյն հանդերձանօք, անյա պաղաբար զփառացն Տեառն տեսին զհանդէս՝ և 'ի յեղ բօրն կենդանութիւն։

2 Իսկ աստատուին անկապուտ շնորհին մնացելոյ զկնի մեղանացն՝ հզօրագոյն են վկայք․ Նախ՝ ենովք․ զկնի ահարոն․ յետ նորա դաւիթ․ դարձեալ և պետ րոս․ ընդորս և փոքրն եղիազար, որ 'ի մեծէն Տեառնէ ողորմեալ՝ մեծագունից վկայեցաւ։ Աւելորդ է առ այս և բանն առակի անառակ որդւոյն․ Թողում զպոռնիկն՝ որ 'ի Տեառնէ գովեցաւ․ և զմաքսաւորն՝ որ 'ի բարեգործէն յիշատակեցաւ․ և զաւազակն երջա նիկ՝ որ յարձակումն վերջին շնչոյն՝ հաւատովքն պա սակեցաւ․ և զոր անքաւելին են պարտիք՝ զհաղոր դեալքն սպանման մահու արարչին․ առ որս և դըլ խաւորն ընտրելոց պօղոս՝ որ երբեմն նախնին էր ա նօրինաց։ Յորոց ոմանք ծանօթութեամբ օրինին դըլ րեալք, անդրէն կանգնեցան բիւրապատկեան գե րազանցութեամբ՝ քան զնախակրօնիցն առաւելութիւն․ Իսկ որ նախքան զօրինակին սուչութիւն զաւանդն պահէր հայրենին, մերձաւորագոյն գոլ պատուիրանի

սկզբնահօրն դաւանութ, որ և զնախնւոյն պարտսն՝ ինքեան վարկուցեալ, զնորայն՝ խռովքն տուժեաց կրից տաժանմանց, ոչ քաւեցաւ միայն ծածկեալ 'ի յերկրի, այլ չարչարելեաւն մարմնով, բանականաց բնութե կենաց կարապետ՝ յաղթօղ զօրապէս բըռնութեան մահու՝ փոխեցաւ. Իսկ ոմանք 'ի բուսոյ տհաս հասակին չարութեն յերկարաձգեալ, 'ի կատարեալ տիս ժամանակին, ոչ 'ի բարձրութենն կայից հասեցան, քան թէ 'ի ստորնականաց թշուառութեց դժնէից կենացս՝ 'ի կամարն երկնից համբարձան. Եւ թէ այն ժամանեաց կանխաւ՝ զօրացեալ 'ի չարեացն դարձ, որ մինչև յոսկեղէն նիւթ յեղանակեալ հողոյս գոյութե, և պատկերն արքունի՝ 'ի պատին կերպիս մերոյ՝ նկարեալ արքունականն քանդակուածով, անկորուստ և անփոխադիր և յաղթօղ դաւաճանութե զմերս ենթադրեալ բնութի, ապա առաւել յուսալի է այժմ մերկապարանոց լուսաւորութի անքօղ և անվերարկու՝ ներամբ քրի ուխտեալ. որով և միշտ հաստատեալ պահի 'ի մեզ բանն տրուն, ըստ մարգարէին ձայնի, ուխտ խաղաղութ և կնիք հաստատութեան՝ առ հաշտարարն միջնորդ՝ երկնային անմահ կենդանի և մշտնջենաւոր բարեխօս. Ապա ուրեմն ըստ այսու կանոնի ճշմարտագունի, և անփոխադրելի սահմանի, և արարչաւանդ պայմանի, համբուրեմ հաւատոց շրթամբք՝ զպատկեր բանիս, և ակն ունիմ փառացն շնորհի. քանզի արդարև յարդարացուցանելն զմեզ այ՝ ոչ ոք զօրէ դատապարտ առնել, ըստ առաքելական բանին սահմանի.

3 Ա.յլ յայս անստուերագիր վստահութե ապաս-
տան, կամ կործանեալս՝ կանգուն. թշուառա-
ցեալս՝ յաղթօղ. վրիպեալս՝ 'ի դարձն կենդանական.
ամենաթշուառ չարագործս՝ 'ի յոյսն. մահու մատ-
նեցեալս՝ 'ի կեանսն. ընդ ապականութե վաճառեալս՝
'ի ձիրն. դժոխային գործովք գրաւեալս՝ 'ի լոյսն.
սատանասէր անասնակենցաղս՝ յերկինս. կրկին գայ-
թակղեալս՝ 'ի վերստին փրկութիւնն. մեղօք կապե-
ցեալս՝ 'ի հանգստեանն խոստումն. անբժշկական վի-
րօք վարանեալս՝ 'ի դեղն անմահացուցիչ. ստամբա-
կեալս վայրագութե՝ 'ի սանձսն հանդարտութե. մոլո-
ցեալս վարատականս՝ 'ի կոչումն. ապառումն դժըն-
դակս՝ 'ի հեզութիւն. ընդդիմաբան լուտացօղս՝ 'ի
ներումն։ 'Ի Ք̅ս Յ̅ս, և 'ի հայր նորին հզօր և ա-
հաւոր, յանուն և 'ի կամս բարերարութե հոգւոյն
ճշմարտի. օրհնաբանեալ խնկութե՝ և մի ա̅ծութե՝
զօրութիւն և արքայութիւն, մեծութի և փառք՝
յաւիտեանս. ամէն։

---

† Ս Երգոյն յաւելուած կրկին հեծութե՝ նորին հոգւոյ, ա-
նոյն աղերս համաբանաց բանի. 'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա̅յ։

## ※ Բան. ԻԲ.

1 Եւ արդ՝ քանզի յաւէտ յառաջնում զղջ-
մանն՝ յուսահատութեն բանիւ լքայ, և
տարակուսանաց հեծանաւն՝ 'ի մահ ձաղկե-
ցայ, աստանօր 'ի յուսոյն կերպարան փոխեալ՝ յոր-
դահոսել համարձակեցայց, վերըորդութեն՝ որ կար-
դալով յօդնականութիւն ինձ մեղաւորի. Որ և
ան-

անդստին խոկ յօրհնաբանելն և 'ի դաւանելն զկեն-
դանարարն ընաւից ա՟ծ, խոկոյն և կոչումն ընտանի
ձայնի աՀաւորութեան անուան շնորՀաձիրն բարե
րարի, մաՀացելոյս է կենդանութի՟, ըստ մարգարէին
նախաձայնութե՟, թէ որ կարդայ զտ՟ր, նա՟ կեցցէ։
Իսկ ես ոչ միայն կարդամ, այլ նաև Հաւատամ մե-
ծութե՟ նորին. ոչ եթէ վ՟ն պարգևաց նր՟ մատու-
ցեալ՝ յողջս դեգերիմ, այլ իբր զկենդանութի խա-
կապէս, և զշնչոյ տուրևառութիւն Հաւատի, ա-
ռանց որոյ ոչ է շարժողութի կամ ընթացութի. զի
ոչ այնքան յուսոյն Հանգուցիւ, որքան սիրոյն կա-
պանօք բերիմ։ Ոչ 'ի տուրսն, այլ 'ի տուողն յաւէտ
կարօտիմ. ոչ փառքն են ինձ անձկալի, այլ փառաւո-
րեալն է Համբուրելի. ոչ կենացն փափագանօք, այլ
կենարարին յիշատակաւն միշտ ձենձերիմ. ոչ վայե-
լեցն տարփանօք Հեծեմ, այլ Հանդերձողին տենչա-
նօք՝ յերիկամանց աստի կախանիմ. ոչ զՀանգիստն
խնդրեմ, այլ զՀանգուցչին զերեսս աղաչեմ. ոչ
Հարսնարանին խնձոյիւք, այլ փեսային անձկութե՟
մաշիմ։ Ի ձեռն որոյ զօրութե՟՝ վստաՀապէս ակնկա-
լութե՟՝ վերագրեցեալդ յանցանօք բեռանց՝ աներկ
միտ յուսով Հաւատամ 'ի կարողին ձեռն ապաստա-
նեալ, ոչ քաւութե՟ միայն Հասանել, այլ զնոյն ինքն
տեսանել՝ յողորմութի և 'ի գթութի և յերկնիցն ժա-
ռանգութի, թէպէտ և յոյժ եմ տարագրելի։

2 Եւ արդ՝ բազում պատկառանօք ամաչեցելոց դի-
մաց կորացեալ, զմիջնորդ աղդման կափուցմանց
երկակի շրթանցս՝ արժանափակ աղխիւ կարկելոց՝
առ անՀամարձակ լեզուիս շարժութի, նորոգեցից
'ի

'ի յերգ հռուաչման պաղատանաց յեղանակութեանց՝ աղխողորմ հեծեծանաց՝ 'ի բարձունս աղաղակելոյ։

### Ս. աղէքս. շօրաւորք՝ արհաւրաց ճէշէրայնոյ.

3 Ընկալ քաղցրութե՛ տէ՛ր ած հզօր, զդառնա
ցողես զաղաչանս. մատո՛ր գթութեամբ՝ առ
պատկառեալս դիմօք. փարատեա՛ ամենայ
պարգև, զամօթալից տխրութիւնս .
բարձ յինէն՝ ողորմած, զանբերելի ծանրութիւնս.
անջրպետեա՛ ջնջարար, զմահացու կրթութիւնս .
աւարեա՛ մի՛շտ յաղթօղ, զխաբողին հաճութիւնս .
բացադրեա՛ վերնային, զմոլելոյն մառախուղ .
կնքեա՛ կեցուցիչ, զկորուսչին ընթացմունս .
ցրուեա՛ ծածկատես, զըմբռնողին չար գտմունս .
խորտակեա՛ անքննին, զմարտողին դիմեցմունս .
Տնագրեա՛ քո անուամբդ՝ զլուսանցոյց երդ յարկիս.
պարփակեա՛ քո ձեռամբդ՝ զառաստաղ տաճարիս .
գծագրեա՛ քո արեամբդ՝ զմուտ սեմոց սենեկիս .
կերպացո՛ զքո նշանդ՝ 'ի հետս ելից մաղթողիս .
ամրացո՛ քո աջովդ՝ զհանգստեանս խշտի .
մաքրեսցես 'ի հաղբից՝ զծածկարան անկողնոյս .
պահեսցես քո կամօքդ՝ զտառապեալ անձն ոգւոյս.
անխարդախ արասցես՝ զքո շնորհել շունչ մարմնոյս.
կացուսցես շրջափակ՝ զպար զօրուդ երկնայնոյ .
կարգեսցես 'ի դիմի՝ ընդդէմ դիւացն դասու :
Տո՛ւր հանգիստ բերկրութե մահահանդոյնս նիրհ
ման 'ի խորութե գիշերիս, բարեխօսութե՛ հայց
ուածոց սրբոյ ածածնիդ՝ և ամենայն ընտրելոց։



Լ.Մ

Ամփոփեալ պարուրեալ զպատուհան տեսութեանց՝ զդայարանացս իմաստից՝ անզարհուրելի զետեղմամբ՝ 'ի ծփական խռովութեց, կենցաղական զբաղմանց, անըջական երազոց, խօլականաց ցնորից, յիշատակաւ քո յուսոյդ՝ անխափանելի պաշտպանեալ։ Եւ ընթացեալ վերստին 'ի նինջմանէ ծանրութեան՝ ամենազգաստ արթնութբ, հոգենորոգ զուարթութբ 'ի քեզ արձանացեալ, զայս ձայն մաղթանաց՝ բուրմամբ հաւատոց քեզ՝ ամենօրհնեալ Թագաւոր փառաց անճառից, փառաբանողաց երկնադումար խմբից երգակցեալ՝ յերկրինս առաքել։ Զի դու փառաւորեալ ես յամենայն արարածոց յաւիտեանս յաւիտենից. ամէն։

---

† Սէրտին ցաւէլուած կրկին հեծութբ՝ նորին հոգւոյ, տանոյն աղէրս հաղորդանաց բանի։ 'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ։

## Բան. ԼԳ.

1 Ա բարերար հզօր ահաւոր, հայրդ բարի ողորմութեդ շնորհի, որոյ անունդ իսկ մեծիդ՝ զգթունի և զընտանունի աւետարանէ քաղցր՝ դժնէից և անգոհացողաց։ Ընդ քեզ և որդիդ քո՝ իբրև զքեզ, զօրաւոր ձեռն՝ իբրև զքոյդ, անժամանակ տէրութեամբ ահեղ՝ ընդ արարչութեդ քում բարձրացեալ։ Եւ հոգիդ սբ ճշմարտութե, բղխեալ առ 'ի քէն անսպառութբ, կատարեալ խնկութի գոյի, էութի մշտնջենաւոր, հաւասար քո ամենայնիւ, փառակից որդւոյ քոյ տրութբ։ Երրեակ անձնաւորութբ՝ համայն անքննին, տրոհեալ

'ի դժխմաց՝ ուրոյն զատուցմամբ. իսկ միաւորեալ հա_
մազուգաւք՝ նոյնագոյ բնութ. տիրապէս՝ անշփոթ
և անանջրպետ՝ միով կամօք և կցորդութ. ոչ երի_
ցութի ումեմն 'ի յումեմն, և ոչ քեթթեղ միական
առ նուաղութ միոյն ժամանեալ, քան թէ պատ_
ճառ սիրոյ երկնայնոյ անսասանէր լուսոյ՝ որ առ
մերն է ծանօթութ, միով պսակաւ սրբասացութ
անսկզբնաբար ածաբանեալ: Քանզի արդարև մե
րաձայնեալս այս խոստովանութ՝ երեքփառաարեանդ
դաւանութ՝ զվէմն հաւատոյ պետրոս երանեաց.
իսկ զդատապարտելոյս անձն մեղօք՝ բարեհրաման
քո ակնարկութ, ով խնդրօղդ գերելոյս՝ հրաշա_
նորոգ արդարացուսցէ: Քանզի թէպէտ և քո ի_
ցեն պարգևք՝ և քո ողորմութք, այլ ոչ 'ի պար_
գևսն ես այնքան հռչակեալ, որքան յողորմութեն.
զի երկրորդն՝ զքոյդ յաճախէ զփառս, իսկ առա_
ջինն՝ զճգնաւորացն յայտնէ զգործս. զի պարգևք՝
վաստակոցն են փոխատրութք, իսկ ողորմութք՝ մե_
ղուցելոյս բարերարութք.

2 Նաւ արդ՝ մի՛ զօրացին մարդկայինս գործք ա_
ռաջի քոյոյդ շնորհաց՝ ա՛ծ գթութեց, թէ և
անդր իսկ իցեն քան զօրէնս հասարակաց՝ բնաւորա
կանս հոսմանց, այլ յաղթօղ եղեալ քոյդ երկայն_
մտութ, նուազ եղիցի առ քումդ մասին ընթացք
երկրածնաց. Քանզի և որ մաքրութն պերճա_
նային օրինականացն վաստահութք, 'ի լուսաւորել
քոյդ արդարութ գուշակ ներկայիս, ամենանուազ
անձկութ լքեալ հրէութին՝ յետնեալ, և յաւէտ
ընդ տարադրական ողորմելոյն, առաւել նոքա գտան


կա

կարօտեալ մարդասիրութեան։ Եւ քանզի ամենայն ինչ
ծնաւուր է քեզ՝ բարերար, լո՛ւր պաղատանաց գոչ-
ման հեծութեան՝ որ կարդամս առ քեզ. ողորմեա՛,
կեցո՛, և մարդասիրեա՛։ Զի քո է երկայնմտութի՛ւն,
քաղցրութի՛ւն, փրկութի՛ւն, քաւութի՛ւն, և փառք յամենեցունց՝
յաւիտենից ազգաց. ամէն։

---

† Ա Երրորդին յաւելուած նշխին հեծութեան՝ նորին հոգւոյ, առ-
նոյն աղէտս մաղթանաց բանի. 'ի խորոց սրտից խօսի՝ ընդ Այ։

## * Բան . ԺԳ .

1 Աղաղակիմ առ քեզ լուսոյ ճառագայթ՝ ար-
քայ երկնաւոր՝ գովեալ անպատում՝ ո՛րդի
անճառ մեծիդ Այ, խոնարհեցո՛ զունկն քո՛
բարձրեալ բարեգութ՝ կենաց ապաւէն, նորոգ-
մերձեցեալ կրկին ատանօր 'ի հառաչումն նուաղս
ձայնի վիրաւորելոյս։
2 Ո՛չ ցուցեալ է երբէք, եթէ աղաչեաց զքեզ 'ի
ձեռն աւազակացն սրոյ խողխողեալն, քանզի
կարկամեալ էր. ո՛չ ձայն պաղատանաց զկնի արձա-
կեաց, քանզի անկենինչ էր՝ ո՛չ մատամբքն տատանե-
լով՝ զաղէտ վտանգին յայտնեաց տեսողին, քանզի
խորտակեալ էր. ո՛չ աչս կողկողագինս արտասուօք
ողբոց՝ բարերարին յանդիման կացոյց, քանզի ծա-
ծապարտ էր. ո՛չ 'ի պատգամ բանից միջնորդի՝ զողոր-
մածին կամս հաճեցոյց, զի անայցելու էր. ո՛չ հայ-
թայթմամբ խորտակել մարմնոյն արիւներանգ ներկ-
ուածով ձորձոց՝ զգթածին զսիրտ շարժեցոյց, վ՝ զի
անյոյս էր. նա և ո՛չ ծնգովքն հաստատութե՛ իբր


դար

գարշապարաւ ոտին՝ վարեցաւ, այն զի անյարիր էր. քանզի կիսամեռն աւել կենդանւոյն՝ սակաւ ինչ նուաղ է 'ի մեռելոյն. Սնուանդ զի 'ի քոյոց խրատեալ բանից, և բարերարեալ քոյդ ողորմութք, և փառօք քո լուսազարդեալ, ոչ միայն զի ոչ վերաջացաւ 'ի հակառակն քո ընթացից, այլ սատահակեալ ապստամբութք՝ յետ թշնամեացն թիւ յաւելաւ.

ընդ նոսին գաշնաւորեցաւ, միաբանեաց
ատելեացն քոց.

3 Իսկ դու՝ բազմապարգև, բարերար, անոխակալ, ամենակեցոյց, ոչ միայն զի ոչ պահեցեր զչարագործին մեղաց յիշատակ, այլ և ոչ բանիւ յանդիմանեցեր. ոչ ոտն հարեր անկելոյն, այլ կարեկցաբար մատուցեալ զծայրագոյն ցուցեր զխնամս. Ոչ քահանայապէս ըստ ահարոնեան տկար օրինին՝ զօրաւոր առ մահուն պաշտօն՝ դատապարտիչն անիծիւք և բռնալիր քարանցն ձգմամբ՝ 'ի խորտակումն խոցելոյն արագեալ մատեար. և ոչ ըստ ղևտականն կարգպետային անկատարագործ՝ 'ի յերկուցն միջի բաժանեալ խորոց՝ ճնոյն լռումն՝ և նորոյս սկիզբն, ունայն 'ի հոգւոյ յապաշխարանն հանդիպացեալ՝ զմիբաւորելոյն տեսեր զխոանդ, զի մի՛ սատակիչն օրէնակութ տապարաւն արմատակտրաւ՝ զմահուն պաշտօն 'ի քեզ նկատեալ, յառաջ քան զփորձ առակայից սատակեսցի. այլ հեթանոսացն պահպան անուն ասորեստանեայցն, որք 'ի հրէից ընկալեալ զօրէնս՝ ամբողջ պահեցին, զոր նոքա մոռացան, նոցին կցորդեալ մարմնոյդ վերարկուաւ՝ մերակերպարան խառնութք, զազատարարին գծագրեցեր զաւետիս՝ առ-



օտար-

օտարազգիսն ․ և ա̄ծաբարըդ ներգործուե̄ անա-
պականու՝ ձեռն կարկառեալ, յարուցեր զմարդն
նախնի՝ մեղուցեալ 'ի մահ՝ իւրովքն ծննդովք․
Զ տրտմեցելոյն սիրտ բերկրեցուցեր, և զվհատեալս
հաստատեցեր, և զթշուառացեալն միանգամ՝ կրկին
զուարթացուցեր․ Նուազանելին կենարար օծմամբն,
և բաժակաւն լուսոյ լցեր․ հացիւդ երկնայնով ու-
րարչականդ քոյին մարմնով՝ նոր յեղանակեցեր․
Վերակացութ̄ երջանկացն ազանց ընտրելոց՝ յան-
ձանձեցեր, գրգեցեր, և խնամարկեցեր․ Հանդարտ-
ընթաց գրաստուն տածողութե̄՝ անզզուելի պա-
հեցեր, մինչև յարկն լուսոյ ածեր․ 'Ի ձեռն եր-
կպքանչիւրոց միջնորդաց՝ նախնեաց և երկրորդաց
տուչուե̄ կտակաց կենդանականաց, մարդասիրապէս
դարմանատրեցեր․ Իսկ որպ̄ երբեմն ընդ մովսէսի՝
թևս տարածեալ արծուոյն օրինակաւ՝ ընկալար ըզ-
նա, և 'ի հանգիստ հանդարտուե̄՝ երկրին բարուե̄
առաջնորդեցեր ․ և զբանին կերակուր՝ ջամբել
հրամանատրեցեր վարդապետուե̄ց․

4 Իսկ արդ՝ որ զընաւն ծայրագունին բարուե̄
լուսոյ՝ յա̄մի բովանդակապէս հրաշագործեցեր,
զօգտողին զգանձ քեզ սեպհականեալ՝ դքո ստաց-
ուածն առ քեզ դարձուցեր, կեցո և զիս մոլորեալ
'ի մեղաց պարտեաց, որ ձրի պարգևես և անպատ-
րաստից ․ ընդ որոց և ինձ տացես քաւութ̄ և բժըշ-
կութի՝ բարերութ, զօրեղ, անքննելին, անեղծ,
անհասւոր, օրհնեալ միշտ յաւիտենից
յաւիտեանս ․
ամէն․

† Ա Քերովբէն ցանկալւոյն հեծութեան նորին հոգւոյ · առ-
նոյն աղերս մաղթանաց բանի · 'ի խորոց սրտից խօսս՝ ընդ Այ ։

## ※ Բան · ԺԱ ·

1 Իսկ դարձեալ առակս վերստին առ նոյն հե-
ծութի սրտիս վտանկի ինձէն մատուցեալ,
տողին նուագաւ 'ի նոյն ոճ բանի՝ զամենա-
պարգեւդ արգահատեցից, տագնապեալ ոգւոյս վը-
տանգիւ իսպառ · եթէ մեռեալ՝ կենդանւոյ անմահ-
հիդ մաղթեմ այ, խոստովանեալ ընդ փառացդ քո՝
զիմս անարգութիւն, և առ չարեօքս իմովք՝ զքոյդ
բարութի · որովք յաղթեալ գտայ՝ քան թէ բժշկեալ,
և ամաչեցեալ՝ քան թէ համարձակեալ, ուխտակորոյս
աւանդամոռաց ։

2 Իսկ կրկին առակն որ առ իս՝ որ ոչխարին մո-
րուպն տարացուցի, որ յետին անզգայութեն ·
և մատնեցեալ մոլորեալ, և 'ի լերինն՝ ուր ոչ է այցե-
լութի, ընդ գազանականացն դիմաց՝ և կուոյն վայ-
րենութե թափառեալ, ոչ մերձաւոր գոլ սակաւ մի
հօտին · ոչ բան ունէի, որով և զցաւոցն աղէտ պատ-
մէի · ոչ ձեռն ձգողական, որ համերոյն է ազդողա-
կան · Իսկ դու միայն գովեալդ յսկզբանցն յաւի-
տենից՝ և յարդի ծնելոցս, գտեալ՝ ըստ մաղթանաց
գոչման երգողին, զիս զմեղուցեալս՝ յաննշոյլն մոլո-
րութե, խնամողօրէն տեսչութբ կամաց՝ հովին կո-
չեցար · և ոչ միայն հոգացար, այլև խնդրեցեր · և ոչ
գտեր միայն՝ հրաշագործ, այլ անճառելիդ բարերա-
րութբ սիրոյ՝ 'ի կենդանարարդ քո յուս բարձեր,
և ընդ երկնային զօրուն դասեցեր՝ 'ի հայրենիդ քո



ժա

ժառանգութիւն։ Նոյն արդ՝ դու Հզօր՝ կենարար՝ օրՀնեալ՝ այցելու՝ գթածդ յողորմութեն՝ եթէ զնս ընկալար զապաքանեալսն աղերսանաց, որ մինն՝ 'ի միջոց մահու սահմանի էր չարչարեցեալ, իսկ միւսն՝ ըստ անբանիցն անզգայութեն՝ վտարանդի բացամերժութեամբ յանբնական վայրի վարանեալ, 'ի բառաչ ձայնի բարբառոյ, որ անկերպաւոր աննշանական, ածային բարեխնամութբդ անտեսեցեր զտիեզերահրաշն խնամողութի՝ առ կորուսելոյն մեծ թշուառութի, յայտնեցաց վերստին և արդ գթութեցդ խորք և բարերարութեցդ Հոսանք՝ առ անօրինեալս առաւելութբ՝ վերագրեցելոյդ օրինակութբ․

Նա բազմօրինակ մահու պարտականս․ առ որ 'ի բարութեց խառնից քաղցրութեց՝ յատուկ Համս չար․ առ անդամս մարմնոյ՝ արժանաւորս Հատման․ առ Համաձարակ ամենաբոլոր ախտացեալ Հոգիս վիրաւոր․ առ Հաւասարեալս անզգայութեանց անասնոց․ առ օտարացեալս յընտանութէ իմաստնոց․ առ աննմանս Հանդուրնակից բանաւորութեց։ Որ եթէ տարացոյց գոյր, ես ասէի․ թէ նմանակից գոյր իմ, պատմէի․ թէ Հանդուրնակից գոյր, ես ճառէի․ թէ Հաւասար գոյր, ես գրէի․ թէ զուգագործ գոյր, ցուցանէի․ թէ օրինակ գոյր, ես ազդէի․ թէ յանցեալսն, Հայթայթէի․ թէ 'ի ներկայումս աստ, ես յուսայի։ Բայց քանզի անցեալ է ըստ օրինակ, և Հրաժարեալ ըստ նմանութի, զոր միայն քո է քաւել բժշկել և կենագործել՝ կենդանարար Համայն մեռելոց՝

Նորոգութդ տիեզերաց։

3. Զի եթէ սրբոյն սրտի՝ տեսութբ երջանկին

դաւ

դաւթայ , անօրէնութիւն չարեաց բարձրացեալ առ քան զգլուխ , և ըստ ծանրութեց բեռանց դժուարակրելոց՝ յանցմունք մեղաց . իսկ որ առ իս կրէին որ խալմունք , գերազանցէ՛ քան զհեղեղին ջրակուտակ տիեզերասույզ ամենապատ ծովուն յորդութիւն , և գլխոց լերանց վերադրէ : Ով շնչեցէ՛ օդ քո քաղցրութե՝ իբր առ նոյին , և որ զլերինս հալէ զօրութե , ցամաքեցուցանել զշիղջս ջրակոյտս բազմակոհակս՝ և երկրակործան խմբս պարտեաց, և լեռնակարկառ բարձրութե մեղացս ամբարձելոց : Եւ համառօտեալ զբան քո հզօր՝ ամենակար ճնարաւորութե , հակիրճ համառօտմամբ , արասցես ահա եւս քաւութե , ըստ մարգարէին , առ երկարամիտս անօրէնութե . և ներելով խմս յամառութե , ով երկայնամիտ ողորմած օրհնեալ՝ թողցես միանգամայն , բարեգործեսցես խնկապս , հատցես բոլորովին զանվճարելի պարտուցս՝ զարժանահատոյց տոկոսեացս տոյժս տարժանակիրս : Նա զի՝ և չէ՛ք իսկ առ քեզ ցասումն սրտի , և կամ բորբոքումն բարկութե , ով ոչ կրին նենգութք , և կամ նշմարանք մթութե . քանզի կեանք են 'ի կամաց քոց՝ և լոյս , և ոչ արարեր զմահ , և ոչ խնդաս ընդ կորուստ մարդոյ , ըստ դաւթի և սողոմոնի .

4 Եթէ մարդկան կարգեցեր զայս կէտ սահմանի մեծի պայմանի՝ 'ի բարեվճակդ քո կանոնաց՝ ոչ փոխատրել անդրէն չարի չար , այլ եօթանասնիցս եօթն թողուլ անդուստ 'ի յաւուր զեւրաքանչիւր մեղանաց զպարտս . և այդ բան առ մեզ , որ միշտ 'ի բնութե ունիմք բնաւորաբար ուղերձեալ զբիծս

չարեաց՝ անհամար բիւրուց նորոգ յայտնելոց, որք օրինաւորին երեւին յանդատան սահմանի՝ ամենաբոյս փշածին բնութեամ, ըստ անսուտ քո վկայութեան, որ թէ՝ մինչ մարդոյ 'ի խնամս չարի են արձանացեալ 'ի մանկութենէ։ Ո՛վ որ զկատարեալ մաքրութիւնն ունէր՝ աւետարանիչն կենացդ բանի՝ յովհաննէս, եւ զինքն ընդ համարակաց բնութեան լծակցեալ, հաստատեաց զճշմարտութի քո՝ առ իմն սուտ յոյժ արդարացեալ. թէ ասեմք ասէ, մեղս ինչ մեք չունել, սուտ առնեմք զնա։ Եւ արդ՝ կատարեալ է բան քո խնկեալ, եւ 'ի դլուխ ելեալ անպակաս 'ի սուտգունն՝ առ իմն մոլորութի եւ դժնդակ անխրատութի։ Վասն որոյ խնայեա՛ յիս ողորմութբ՝ քաղցրութեան ճաշակաց աղբիւր, միայն օրհնեալդ յամենայն յաւիտենից. ամէն։

---

†Ս էրոտին յաւելուած կրկին հեծութե՝ նորին հոգւոյն, անոյն աղերս մաղթանաց բանի. 'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ.

### *Բան. ԺԸ.

I Եւ արդ՝ դու միայն ած երկնաւոր՝ բարձրեալ՝ բարեգործ՝ քո՛ է զօրութի, քո՛ ներողութի, քո՛ բժշկութի, քո՛ առատութի, քո՛ են պարգեւք, քո՛ միայնոյ են ձիրք ձրի, քո՛ քաւութի, քո՛ պաշտպանութի, քո՛ հնարք անիմանալիք, քո՛ արուեստք անդատանելիք, քո՛ չափք անչափելիք. դու սկիզբն եւ դու կատարած։ Քանզի ոչ երբէք ստուերացուցանէ զլոյս ողորմութեան քո՝ խաւար սրտմտութեան. վասնզի ոչ ես դրաւեալ ընդ մասամբք

ախ

ախտից՝ 'ի վերդ քան զբան։ Պատկեր անպարագիր՝ անդր քան զըղքանուն կշռուն․ անչափ լոյնուն փառաց․ անտարրափակ ընդարձակութիւն՝ հաստազօրուն․ անամփոփելի առաւելուն բացարձակութեան․ անտկարանալի բարերարուն գթուն։

Դու դարձուցանես՝ ըստ մարգարէին, յայգ՝ զըստուերս մահու․ որ իջեր կամաւ 'ի տարտարոսն ներքին արգելականացն բանտի, յորում և մաղթանացն դուռն էր աղխեալ, և դերեալ անտի զմթերիցն կապուտ՝ վտարանդելոցն հոգւոց, սուսերբ հրամանի յաղթական բանիդ՝ զկապ սատակման մահուն խզեցեր, և զմեղացն կարծիս ցրուեցեր։ Դա՛րձ առ իս՝ որ զընդամ զընդանաւ վհիս՝ տղմասիդ գբոյս՝ յերկաթս մեղաց, վիրաւորեալ խոցմամբ սլաքաց՝ բանսարկուին նետից։

2 Այլ դու յամի որդ բարերար, լոյսդ 'ի մէջ խաւարի, օրհնութեդ գանձ, ողորմած, գթած, մարդասէր, կարող, զօրաւոր, անպատում, անքննին, անճառ․ բաւական՝ ըստ ամենայն յակոբայ․ անհնարինդ ամենից՝ դիւրապատրաստ հնարաւորութիւն, հուր ծախիչ զխռիւս մեղաց, ճաճանչ կիզանող՝ ընդհանրական թափանցանցութեն խորհրդոյ մեծի, յիշեա՛ զիս յողորմութեան քո՝ օրհնեալ, և մի՛ յիրաւունս քո. 'ի ներողութեան քո, և մի՛ 'ի հատուցման․ յերկայնմտութեան, քան 'ի հաւասարութե․ Եթէ կշռեսցես զմեղանաց իմոց ծանրութի՛, ընդ քաղցրութե քո՝ և մի՛ ընդ արդարութե․ զի առ սակ նախմումն՝ յոյժ է նուաղեալ, իսկ 'ի ներհակ վերջնոյս՝ յաւէտ ծանրակիր։



Արդ

3 Արդ՝ մատիր առ իս՝ բարութիւն, որպէս յունկանն
բժշկութիւն՝ հակառակ քո համբարձելոյն. բարձ
'ի մեղուցելոյս զհոտ մահու խռովութեանս, զի հան_
դիցէ յիս ամենակալ հոգիդ խաղաղութեան։ Եւ քեզ
փառք յամենայնի, յաւիտեանս յաւիտենից.
ամէն։

---

† Սկզբան ցաւագնած ձրիին հեծութեան՝ նորին հոգւոյն, սո_
նոյն ողբոյ մատենագրութեանց բանի. 'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Ած.

## * Բան. ԺԷ.

1 Արդ՝ աղաչեմ զխնամակալդ վտանգաւորաց
տաժանելեաց կրից թաղծութեանց հոգւոց
վշտացելոց։ Ո՛չ յաւելուր հեծութեան
ցաւ. մի խոցեր զվիրաւորեալս. մի դատա
պարտեր զպատժեալս. մի տանջեր զչարչարեալս. մի
գաներ զհարուածեալս. մի գլորեր զանկեալս. մի
կործաներ զգայթագղեալս. մի մերժեր զհեռացեալս.
մի տարագրեր զհալածեալս. մի ամաչեցուցաներ ըզ
պատկառեալս. մի կշտամբեր զհարթուցեալս. մի խոր
տակեր զբեկեալս. մի խռովեցուցաներ զամբոխեալս.
մի ալեկոծեր զըքացեալս. մի սասանեցուցաներ ըզ
դղրդեալս. մի շփոթեր զմրրկեալս. մի կեղեքեր ըզ
դիշատեալս. մի ջաղջախեր զբեկեալս. մի գօշեր ըզ
մորմոքեալս. մի կուրացուցաներ զխաւարեալս. մի
զարհուրեցուցաներ զապշեալս. մի խորովեր զխար_
շատեալս. մի մահացուցաներ զհիւանդս. մի բեռանց
ծանրութեան մատներ զտկարս։ Ո՛չ անուր յաւելուր
կարկամեալ թիկանցս. մի կրկնակի ողբումն՝ դառն



հե

հեծութենս . մի՛ ուժգնապէս վարեսցիս առ հողս . մի՛ սաստկապէս՝ առ մոխիրս . մի՛ անաչառապէս՝ առ ստեղծուածս . մի՛ ահարկութեամբ՝ առ փոշիս։ Այլ ընդ հարկանիր խստութե՝ մեծդ՝ ընդ փոքուս . լոյսդ՝ ընդ ստորնականիս . բնութե՟ բարիդ՝ ընդ 'ի բնէ չարիս . ողկոյզդ օրհնութե՟՝ ընդ պտղոյս անիծից . քաղցրութիւդ խնկապէս՝ ընդ համայն դառնութեանս . փառաւորեալդ անփոփոխ՝ ընդ ամենեւին անարգիս . կենացդ նշխար՝ ընդ կաւոյս զանգուածոյ . տէրդ տերանց՝ ընդ տղմիս երկրայնոյ . աննուաղ լուսութիւնդ՝ ընդ չքաւոր սորկիս . անկապուտ Ճոխութիւնդ՝ ընդ անպատսպար տառապելոյս . անկարօտ բարութիւնդ՝ ընդ ամենաթշուառ աղքատիս։ Քանզի մինչդ հասեալ յառաւօտ, և 'ի ծագման լուսոյն խիթայ մըթանալ . և կամ ընթերակաց կենաց, մահանալ . կամ ազատութե՟, և պարտաւորիլ . կամ շնորհաց, և դատապարտիլ . կամ փրկութե՟, և մատնիլ . կամ նորոգման, և եղծանիլ . կամ օրհնութեան, և տարագրիլ . կամ բժշկութեան, և վիրաւորիլ . կամ լուսութեան, և նուաղիլ . կամ յաճախութե՟ հացի, և քաղցնուլ . կամ գետոց հոսանաց, և պապքիլ . կամ մայրենի դըթոց, և նեղդիլ . կամ խնամոց աստուածեան աջոյդ, և զրկիլ։

2 Եւ արդ՝ ընդ ախտացելոյն սաստկապէս՝ մարմնոյն բորոտութե՟, հոգւոյս վտանգաւ և ես պաղատիմ, տէ՛ր՝ եթէ կամիս, կարող ես զիս սրբել։ Ընդ աչացաւացն նեղելոց՝ մշտագիշերին խարխափնոք՝ մեծակական ձայնիւ՟ հառաչեմ . ո՛չ որդի առանեմ դաւթի, այլ ծնունդ էիդ ոյ դաւանեմ .

ոչ միայն ռաբբի կոչեմ, որ վարդապետացն է պա_
տիւ՝ կարծողական զխակն գխոնելոյ, այլ տէր երկնի
և երկրի հաւատամ։ Ո՛չ ձեռնինդ միայն ձգմամբ
հպաւորութե̃ն, ո՛վ բարեգութ ա̃ծ մերձաւոր, այլ
'ի բացեայ գոլով միջոցաւ մեծաւ՝ ակնունիմ զօրել
քո բանիդ՝ առ իմ բժշկութի̃։ Ո՛չ թէ ինչ խորոց
կասկածանաց միջոցի բանի, որ երկմտութե̃ն կար_
ծի նշանակ՝ 'ի մէջ արկանեմ կամելոյն և ողորմու_
թեանն, այլ կամիս որպ̃ բարեգութ, և կարես ո̃պ
զօրաւոր․ ասա̃ բանի̃դ, և բժշկեցայց։ Ընդ հա_
րիւրապետին հաւատոց՝ և ես լծակցեմ․ ո՛չ մինչ
անձուկ միայն բացակայութ̃ հեռի լինելով խորան
'ի խորանէ, հաւատամ ազդել քոյ կարողութեդ առ
յարութի̃ և բժշկութի̃, այլ 'ի վերինն երկնի բազմե_
լով, և 'ի ստորինս երկրի բովանդակ առ հրաշիցն
սքանչելութի̃՝ ոչ ունիմ հատուցանել։

3 Շնորհեա ինձ, ո̃պ դաստակնիք բանին քո վճռեց
առ պոռնկին ընդունելութիւն՝ ծնդից հա_
րիւրոց դենարաց պարտուց շնորհաբաշխութի̃՝ ա̃ծ
բարութե̃ց և տ̃ր երանութե̃ց․ որ յաճախին ընծե_
ռել՝ բազումս փառաւորիս․ և 'ի շատն մատուցանել՝
նովին չափ սիրիս․ և յառաւելն ողորմել՝ կրկին բար_
գաւածիս․ և յայսքան բարիս՝ խրաւամբք գովիս․
և ա̃մի տէր գոլով՝ հաւասարորդ ճանաչիս․ և որ
զբոլորն ունիս՝ ընդ մերումս կշռիս․ և անճառե_
լեաւդ ձրիւ՝ մերայնովքս վճարիս․ և ընդ երկրա_
ւորիս՝ զանվախճանն պարտ վարկանիս․ և մեծագը_
րեալ քո զմերն՝ վեհս գոհաբանիս․ և 'ի սակաւուն
տուչութի՝ դոյզն փառաւորիլ ոչ ամբարտաւանիս։

Արա և ինձ զնոյն գթութին՝ ունողիս զգործս ան-
համար պարտուց. զի և՛ ի ձառս երախտեաց քումդ
պարգևաց՝ նորին իսկ սակով սիրելին կարգեսցի. և
քեզ փառք յաւիտ. ամէն.

---

† Առաջին ցուցեալ կրկին հեծութե՛՝ նորին հանճարի. տա-
նոյն աղէրս մաղթանաց բանի. Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ։

## ✻ Բան. ԺԲ.



I Արդ՝ ես ծնունդս մեղաց, որդիս մահացու
երկանց, արդարև անսահման բիւրուց
քանքարաց տուժից գոլ հատուցա-
նող՝ ի միում աւուր. Այլ ոչ թէ առ փոքրկութ
մարդկային մտաց հայցեմ ներութ[իւն], այլ առ աննը-
ման լուութեն փրկչիդ մերոյ պաղատիմ մարդասի-
րութեն. որ չէի երբեմն, և ստեղծեր. չմաղթեցի, և
դու արարեր. չև ևս եկեալ ՚ի լոյս, և տեսեր. ոչ
յայտնեցեալ իմ, և գթացար. ոչ կարդացեալ, և խը-
նամարկեցեր. ոչ համբարձեալ ձեռն, և նայեցար.
ոչ պաղատեալ, և ողորմեցար. ոչ կերպացեալ ձայնիս,
և լուար. ոչ հեծեծեալ, և ունկնդրեցեր. գիտե-
լով զարդեան դիպուածս, և չանտեսեցեր. Նա-
խահայեացդ աչօք նկատեալ զպատժապարտիս չա-
րագործութիւն, և յօրինեցեր. Եւ արդ՝ զքո ա-
րարեալս, և զքև փրկեալս, և զայսքանեաց խնամոց
յանձանձեալս՝ մի՛ խապառ կորուսցէ մեղացն հար-
ուած գիւտք բանսարկուին. մի՛ յաղթեսցէ յամա-
ռութեն իմոյ մառախուղ՝ ներողութեն քո լուսոյ.
մի՛ սրտիս կարծրութիւն՝ երկայնամիտ բարութեդ.



մի՛

մի՛ մահացու մեղիս՝ ամենակատարդ լրութն · մի՛
տկարութիս նիւթոյ՝ անպարտելիդ բարձրութն.

2 Ահա կարկառեմ զկարկամեալ բազուկս հոգւոյս
յանուն քո՝ Հզօր, արասցես ողջ իբրև զառա-
ջինն, մինչ 'ի դրախտին փափկութե՝ զպտուղն կե-
նաց կթէր. Կաշկանդեալ գօսացեալ 'ի կոր կործան-
մամբ ընդ կնոջն տագնապելոյ՝ կայ անուղղելի հո-
գւոյս թշուառութի, ընդ երկիր պշուցեալ մեղացն
կքմամբ՝ սատանայական բուռն կապանօք, զի մի՛ զերկ-
նայնոյդ ընկալցի զողջոյն, խոնարհեա՛ց առ իս՝ միայն
ողորմած, զի բարձրացուսցես զփայտս խոնարհ բա-
նաւոր անկեալ, և զչորացեալս ծաղկեցուսցես 'ի
բարի կրօնս վայելչութե, ըստ ածաբանութե սբ-
մարգարէին. Ոպ զ'ի ծնէ կոյրն անլուսաւոր՝ չու-
նիմ տեսարան, որով զստեղծչիդ նկատեալ զկերպ
մաղթեցից՝ Հզօր բարեգութ, միայն դու պաշտ-
պան ակնարկեալ խնամովք անճառ քոյ սիրոյ՝ 'ի շըն-
չական խօսուն քո անօթս, յանէից գոյաւորութի
լուսոյ հաստեսցես. Ընդ երկոտասանամեայ չարեօք
չարչարել վշտագին կնոջն տանջեցելոյ՝ գետովք մե-
ղանաց արեան հեղեղիմ, հայեա՛ց 'ի բարձանց ան-
մատոյց լուսովդ պարածածկեալ, ուր ո՛չ է քղանցք
ձեռաստեղծական վերարկուի ձորձոյ, այլ տարա-
ծումն հրաշից՝ ամ ուրեք զօրացեալ. Ո՛չ օծութե
իւղով պատժապարտս ընդ մեղաւորին մատուցեալ
առ կենդանաձիր ոտից գարշապարդ՝ զկաթիլս աչացս՝
վարսիւք հերացս ընծայեցուցանեմ, այլ զամէնիծ հա-
ւատս՝ ամբարձմամբ բազկացս՝ ստոյգ դաւանմամբ հո-
գւոյ ողջունիւ՝ շրթանց կափուցմամբ զերկիր համ-



բու

բուրեմ, խառնեալ հեծութիւն աղբերցս արտա-
սուաց՝ բժշկութիւն հոգւոյս աղերսեմ. Սատնեալ
մեղանօք հոգւոյս գոյութիւն լուծեալ մեղկութեամբ,
և յերկուց կայից միայնակողմամբ անհաստատ հե-
տովք, զընթացից գործին՝ նահանջմամբ չարին՝ ըզ-
հետեւականն բարձողուն չինուածոյ մարմնոյս՝ առ-
ելս ծառոյն կենսատուութ պտղոյն խափանեցելոյ, պա-
տըսպարեսցես անդրէն վերստին՝ միայն հնարաւորդ-
առ ՚ի փրկութիւն. Ո՜ փառաբանարան հաստուածոյ
կերպիս ՚ի քէն եղելոյ՝ ամրափակ խզմամբ համրա-
ցոյց արգել հողմ բանսարկուին, հոգիդ քո ազդել
մեծդ ողորմութեամբ, ըստ յաւետարանին բժշկեցելոյ,
հրաշափառապէս բարեգործեսցես բանդ կենդանի՝
ինձ խոստովութիւն անսայթաքելի. Ընկեալ կամ չա-
րեօք ՚ի մահիճս ախտից ընկողնոց մեղաց՝ դի կեն-
դանի և խօսուն մեռեալ, կարեկցեալ խնամս թըշ-
ուառուն՝ ողբականօք քրքուանաց ձայնից, ո՛վ բա-
րերար որդի այ, օրհնաբանեալ աչացդ ցօղովդ վերա-
կանգնեսցես ՚ի կենդանութիւն, իբր զսիրելին ՚ի
յանշնչական մեռելութեան. Սոյդ դառնացօղս ՚ի
գբի մեղաց կամ տարակուսեալ, ձեռն մատուցեալ՝
որ և անսասանէր որդի բարձրելոյ, հանցես զիս ՚ի լոյս
քումդ նշուլից. Ընդ աղխողորմ թշուառութեան
կականման ձայնի՝ այրւոյն ՚ի նային՝ մօր միամօրին,
տատանմամբ մատանցն, կոծմամբ կրծիցն, հոսմամբ
արտասուացն, տուայտանօք տխրութեան դիմացն՝ և
ես պաղատիմ վերջին հեծութեամբս, տուր յուսահա-
տելոյս զքաջալերութիւն մխիթարութեան գթած քո
բանիդ, ասելով և ինձ գովեալդ բարի՝ ստեղծիչ


աշ

աշխարհի, թէ մի՛ լոր գերի՝ բազմաց ողբալի. որով ընդ պատանւոյն կենդանացելոյ՝ 'ի վշտացելոյ ծընողին սփոփանս՝ զամենապարտ ոգիս ընկալայց 'ի քէն ընդ նմին կրկին նորոգել։ Ընդ այսակիր անզգայալոյն՝ դիւալլուկ և քարակոծկոծ հեղձամղձուկ եղկելի անձանցն, քստմնելի գիսախուիւ հերացն, վայրենեբես բանդագուշելոյն՝ 'ի քէն ողորմեալ փրկիչ բոլորից, ևբրև զնոսին առ քեզ դիմեցից. հեղքեալ մերժեսցես զգունդս չարացն ապականողաց՝ 'ի քո խորանէս, զի ժամանեալ հոգիդ քո բարի՝ այսրէն հանդիցէ, լցեալ զմարմինս մաքրութեամբ շնչոյս՝ զգեցմամբ անդամոցս՝ զդասս արասցես զխելագարեալս ամենաթշուառ։ Ընդ գերեցեալ դժոխաբընակաց վտարանդելոյն հոգւոց՝ արգելեալ կամ 'ի վտանգի, զճառագայթ ողորմութեան փառաց քոց ծագեալ՝ լոյսդ իմ անձկութե՛ 'ի կապանաց օգտողին զերծեալ զիս ապրեցուսցես։ Գաղտնորդայթ աներևութերակ վրիպակ արահետ գարշութե մեղացս ջրդողեցեալ ոգւոյս կերպարան՝ կայ 'ի տագնապի, զծածկեցեալն 'ի տեսողութեց՝ զչարագործին նիւթիցն այսուցմունս, քո ինքնաւորդ զօրեղութե՝ որդի այ, գթածաբար առողջացուսցես։ Օ՜ բազմազան տարազս ցեղիցն զանազանից ախտաւորութեց մահացուցանողաց՝ խուրականզք կորստեան բերիւք՝ դժնդակարմատն շառաւեղօք հաստատեցելովք՝ 'ի յանդաստանի անօրէն մարմնոյս, տարակորզեսցես 'ի ձեռն ձեռինդ ամենակալի. որ արօրադրեալ միշտ՝

և մշակես զսահմանս հոգւոց առ բանիդ կենաց
արդիւնաւորութի.

3 Այլ քանզի անցաւ ըստ նմանութիւն օրինակութեանց
յանցուածոցս մեր, ըստ ճարակօղն քաղցկեղի,
առ ընաւ անդամս մասնաւորեալ զախտին տարա-
ծումն, չէ՛ք սպեղանի իւր խարայելի՝ առ անչափու-
թիւն խարանացն մատուցանել. ՚ի խարախաց բարձիցս՝
մինչև ցափն կատուցման լրութեան անդամոցս՝ չէ
առողջութիւն, այլ ամենևին անբժշկութիւն։ Նաև դու՝
ողորմած բարերար օրհնեալ, և երկայնամիտ թագա-
ւոր անմահ, լո՛ւր պաղատանացս արդաշատութեան
սրտիս վտանգի, որ կարդամս առ քեզ տէր ՚ի
նեղութեան։

---

† Մ՝ Էրտօին յաւէլուած չքնին Հեծութէ՛ Նորին Հոլոզէ, առ-
նոյն աղէրս Խաղբանաց բանէ. ՚ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ։

## * Բան. ԺԹ.

1 Հայեա՛ց՝ ամենահայեաց տեսութիւն կենաց
բարութեան յուսոյ, ՚ի մեծաբարբառ աղա-
ղակ ցաւագնեալ անձինս հեծեծանաց։
Անհաս մեծութիւն. անուն ահաւոր. բարբառ կեն-
դանի. լո՛ւր ցանկալի. ճաշակ ախորժելի. կոչումն
պաշտելի. բարութիւն խոստովանելի. ազդումն խըն-
կելի. խնկութիւն դաւանելի. էութիւն փառաւորելի.
գոյութիւն օրհնաբանելի, տէ՛ր յս՝ ընդ հօր քում դա-
ւեալ և երկրպագեալ, և ընդ հոգւոյդ սբյ բարձ-
րացեալ և վերաձայնեալ։ Որ միայն մարմնացար վա-
սն մեր՝ ըստ մեզ, զի արասցես զմեզ վն քոյ՝ ըստ քեզ.
լոյս ամի, յամի ողորմած՝ հզօր՝ երկնային։ Այլ
այժմ զլուծեալ և զխորտակեալ հողանիւթ անօթս՝

ա̃ծօրէն հրաշակերտութք, աղաչեմ գթած, նո-
րոգ հաստատեա։ Օ՛ քոյին պատկերս մեղօք հնա-
ցեալս՝ 'ի քրայս հալոցաց՝ կայծակամբ բանիդ, պա-
ղատիմ առ քեզ, վերստին ձուլեա։ Օ՛ խախտեալ
շինուածս քում հանդստեան խորանի մարմնոյս՝
պահպանաւ հոգւոյս, մաղթեմ բարերար, 'ի բնա-
կութիւն քեզ մաքրագործեա։ Մ՛ի հատուցաներ
չարեացն իմ գործոց՝ զնոյն փոխատրութի. Ա՛ր-
բեալ եմ, ըստ մարգարէին բանի, և ոչ 'ի գինւոյ.
Թափեա զմիուրս անօրէնութե թմբրութե մա-
հու բաժակիս՝ ազատարար հրամանաւդ՝ ամենակե-
ցոյց, զի մի՛ զքոյդ քամեցից 'ի վերջին աւուր յետ-
նում հատուցմանն։

2 Արդար ես յիրաւունս քո, և յաղթօղ 'ի դատաս-
տանի. եթէ մահու մատնես, ճշմարիտ են գործք
քո. եթէ դատապարտես՝ աստուստ սկսեալ զտան-
ջողականն կշտամբութի, ստոյգ են հատուցմունք քո.
եթէ յանդունդս խորոց սուզեսցես, թէ զկենդա-
նութի շարժմանս բարձցես, թէ զբանիս զօրութի
ունայնացուսցես, թէ զաչացս պատուհանս ստուե-
րացուսցես, թէ զկենացն ճաշակ՝ 'ի քեզ ինքն ամ-
փոփեսցես, թէ զհասարակաց կերակրոյս դարմանս
բարձցես, թէ զաւուրցս հարստութի համառօտե-
ցես, թէ ընդ իջման քաղցրութեան ցօղոյ՝ և հուր
տեղասցես, թէ 'ի լրութէ բանի քոյ սովեցուսցես,
թէ զականջացս դրունս խցցես, թէ զշնորհիդ ձիր
կորեսցես, թէ զգեստին յատակի ոտից սասանե-
ցուսցես, թէ յանձկալի երեսաց լուսոյդ քոյ հան-
ցես, թէ 'ի համօրէն աշխարհէ աստի հերքեսցես,
թէ

թէ փոյլատակմամբք հօրդ պակուցես, թէ անբժըշ-
կական ցաւօք դատեսցես, թէ դիմաց չարաց մատ-
նեսցես, թէ գազանաց ժանեօք մանրեսցես, թէ
հողմով ցամաքին հոսեսցես, և թէ այլ ինչ նորոգ-
արարած տանջանարանաց կազմեսցես՝ չար.քան զտար-
տարոսն, և սաստիկ քան զգեհեննն, թունաւորագոյն
քան զօրդունսն, տարակուսելի քան զխաւարն, եր-
կիւղագին քան զխորխորատն, ողորմելի քան զմեր-
կութիւն, վկայեմ անձամբ անձին՝ յոյժ պարտական
գոլ սոցա.

3 Եւ քանզի յաւէտ տպաւորագոյն են նմանութիւնք
փոխատրութեանց՝ առ ազդակցութիւն մեղանացս՝
իբր պատկերակիցք միատեսակք զուգաշաւիղք՝ որ
շամանկինք այսր խորհրդոյ, արդ կարևոր է խոստո-
վանել և յանդիմանել զերեսացն ծածկոյթս՝ առ
ծանօթութիւն խնդրողին. Ով՝ զի ոչ ջերմն սիրով
առ ընկերին կարիս մատուցայ, յիրաւի ՚ի նախնումն
վտանգին տառապեալ սառնում. Եւ զի ոչ զցան-
կականն խրոխտականութիւն սանձեցի, յարժանի կըրեմ
եղկելիս՝ զանզովանալի զկիզումն. Եւ քանզի ոչ
սիրեցի զլուսոյդ աւետիս, արդար հատուցմամբ՝ ՚ի
մթութիւն ըմբռնողական միգին կորստեան՝ վըրի-
պեալ դանդաչեմ. Եւ զի ոչ խորեցի զմանունս
փշքունցն յանցանաց, իբր անփիաստակարք վարկա-
նելով, պատկանապէս ՚ի խածանողականացն զաղերն
զեռնոց՝ խթեալ խոցոտիմ. Եւ զի ոչ ձեռն կար-
կառի՝ առ կիրս վտանգաւորին՝ այց առնել նմին, ՚ի
դէպ իսկ՝ ըստ գծագրութեան այսր օրինակի, ապա-
կանութեան դըրոյ նուիրեալ մատնիմ.



Եւ

4 Եւ արդ՝ ոչ յածուստ ամենաբարի գանձուցդ՝ չարիս, և ոչ 'ի լուսոյդ նշուլից՝ խաւար, և ոչ յապաւինութենէդ՝ գայթագղութի, այլ ես ինձէն կորստեան որդիս գտի զայսոսիկ. Մեղանք անօրէնութե իմոյ գանձեցին նիւթեցին զայսքանեաց բարկութե մթերս հոգւոյ. իշխանին մոլորութե հընազանդեալ, թողի զտեղի քո՝ Տր, ըստ դրոյն խրատու յանդիմանութե. Եւ քանզի յայտնեցաւ յետուստ՝ գաղտնեաց առականաց մարմնոյս անդամոց, և արկաւ զերեսօք կերպիւ՝ անվայելուչ ստուեր ամօթոյս, ըստ մարգարէին առակի, տգեղս ցուցեալ զիս ամենեւին՝ իբր մերկացեալ խայտառակեցելոյ պոռնկի, ծագեա՛ յիս զլոյս քաւութե՝ ողբայ երկնաւոր, զի թօթափեալ զմեղաց փոշիս, ըստ աւետեաց ձայնին դարձելոցն 'ի բաբելոնէ, նստայց վերստին կանգնեալ 'ի հողոյ, և 'ի հաստատութի յուսոյդ հիմնացեալ անսասանելի, ըստ եսայեան բանին, զգեցեալ զզօրութիւն բազկի կարութե նախնում մաքրութեանն, վն մեծութե փառաց քաղցրութե՝ ամենապարգև քոյ Ածութեդ. օրհնեալ յաւիտեանս.
ամէն.

† Մէրոտին յաւելուած չբերին հեծութե՝ նորին հոգւոյ. առ նոյն ողբերս հաղբանոյց բանի. 'ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ.

### * Բան. Ժ.

1 Տէր տէր՝ անոխակալ և երկայնամիտ. Ներօղ, բարեգութ, հզօր, ողորմած. ահա՛ ճշմարտութիւնք են գործք քո, և խոստովանեալ



դա

դատաստանք քո · վկայեալ են ընտրութիւնք քո՝ տե
սողդ ծածկութից · Ընդ երից երջանկաց մանկանցն,
որք կիզանողական բոցովն փորձեցան և ոչ վնասե
ցան 'ի բաբելոնի, զնոցա թախծութեան զերգն հա
ռաչեմ, մեղայ, անօրինեցայ, յանցեայ, ապստամբե
ցայ, և պատուիրանաց քոց ոչ անսացի ։ Եւ քանզի
մաքուր գոլով 'ի վնասուց նոցա, և զայս խոստովա
նութի գոչէին, իսկ ես ընդ նոցայն՝ նովին աղեր
սիւ ձայնակցեալ սմին ողբոց երգութեան, և այլ յա
ւելից՝ ամենապարտս մահու ։ Ընդ դանիէլի երա
նեալ և ընդ մեծ մարգարէի, որ 'ի քում հարազատու
թեան ազգականութե տանն յուդայի՝ շառաւիղ
ընտրեալ, զնորայն առեալ ընդունական և նուիրա
կան բանից պաղատանս, իմոյս պատժականութեան
գոչմամբ հեծութեամ՝ և այլ կրկնեցից · 'ի մէջ գի
տութեամ՝ անպատշաճականս դնացի, զարտուղի սը
խալեալ դժնդակապէս · այս է՝ ամի ամ իրաք մեղան
չէին ։ Ըստ սահման կշռութե կամաց քոց արտաքս
վազեցի · որ է հաւատի կերպարան՝ բաժիր անօրէ
նութեան ։ Ընդ խոփցն չափոց՝ չարութե գործոց՝
լրումն յաճախութե նիւթեցի · որ է անդրիտ պա
կեր յանցաւորութե ։ Սպառնացար, և ոչ զարհու
րեցայ · արդահատեցեր, և ոչ երբէք լռեցայ · որ է ա
պստամբութե յայտնի նշանակ ։ Քեզ արդարութի
հանդերձեցեր՝ բարերար, և ինձ ամօթ և պատկա
ռանս պատրաստեցեր · քեզ փառս վայելչականս, և
ինձ նախատինս յարմարաւորս · քեզ քաղցրութեան
յիշատակ, և ինձ մաղձ քացախեալ 'ի կատարածի ·
քեզ բարեբանութի անլռելի, և ինձ ձայնս ողբոց



աղա

աղաղակի · քեզ օրհնութիւս երգոց խնկելի , և ինձ
մերժումն տարագրութե անյուսալի · քեզ իրաւունս
բազմարժանիս , և ինձ պատասխանատուութիւս ամե
նավրանս · քեզ բարձրութիւս անճառ գովեստից ,
և ինձ զաճիւն լիզելոյ՝ պատիժ ձաղանաց։
2 Եւ արդ՝ ընկալեր դու բարեաց ընտրութեանց
անկշիռ սահման՝ զքոյոց ախորժականաց կնդրը
կաց պտղոց վերառեալ ըստ քեզ , և ես զխմոյս ա-
տէն առ սմին պարսաւանս յոդունս՝ կրկնակի բար
դեալ ինձ ըստ իս ։ Իսկ եթէ անարատիցն մաղթա
նաց՝ այս էր յանձնառութի , իսկ ինձ զո՞րս հիւ-
սեցից շարս և տողս բանից դսրովականաց , որ քան
զամ դժնեայս՝ յաւէտ վրիպեցայ։ Մոլորեցայ ա-
նառակ ընթացիւք՝ 'ի միտս վայրենիս · յանդգնեցայ
շրթամբք խօսից՝ 'ի բանս երկրաւորս · զակատեցայ
անկասելի՝ 'ի պատկառելեացն գործոց · Փքացայ ,
վերացայ , որ յետ սակաւ մի ժամանակի՝ 'ի հող մա-
հու եմ իջանելոց · գոռոզացայ , բարձրացայ , որ և
ո՛չ զգրաւական հոգւոյս՝ տուր և առութե̃ շնչոյս՝
ունիմ 'ի ձեռին ։ Մեծարտաւանեցայ՝ փոշիս շնչա
ւոր · ամպարհաւաճեցայ՝ կաւս ձայնաւոր · հպար
տացայ՝ հողս անարգութե · 'ի վեր ամբարձայ՝ մոխիրս
մերժելի · բազուկ կառուցի՝ բաժակս մանրելի։
Տարածեցայ առաւել իբր վէհ , և դարձեալ իբր
զհերքեալ՝ առ իս ինքն ամփոփեցայ։ Բարկութեն
բոցով ցոլացայ՝ տիղմս բանաւոր · իբր զանմեռ ոք՝
մեծամտեցի , որ ընդ քառատանեաց մահու եմ փա-
կեալ։ Գիրկս արկի կենցաղոյս սիրոյ , և 'ի քեզ թի-
կունս՝ փոխանակ դիմաց դարձուցի · 'ի թուիչս մտաց՝
ընդ

ընդ խաւար խորհրդոց սլացայ · զանարատ հոգիս
մարմնոյս փափկութեամբ յաւէտ վատեցի · զզօրութիւն
աջական կողմանս՝ տկար արարի, ահեկանացս կայից
ուժգնութիւն տալով՝ յաղթեցի։ Ո՜ քեզ իսկ տեսի
հոգացեալ մարմնի իմ, զոր չէ աստ գրելի, և ոչ պատկա
ռեցի · իբրև զհաւ վայրենի սրացայ, ըստ ովսէեան
բանին առ Եփրեմ, 'ի նախնին իմ տոհմութիւն։ Յաղօ
թարանն վայրի՝ ընդ պատաղմունս այսր կենցաղոյս
շրջանակեցայ · ոչ կացուցի յոտին զերիվար մտացս՝
երասանաւ բանին։ Ընդ հին չարութեանցն՝ նորոգ
ինքնաստեղծութիւնս գտի · անուրս, ըստ յոբայ, ծա
նունս և անտանելիս՝ ինձէն ինձ ստացուցի ·
առիգած անկարկատելի, ըստ երեմիայի, զանձն իմ
արարի · իբր զվիժած անդրելի կոչման, ըստ առակ
արկուծին, 'ի մարդկանէ համարոյ եղծայ · իբր զհան
դերձս ինչ ապահարից, ըստ եսայեան բանին, զաղ
ռացայ · որպէս զթրծեալ աման խեցեղէն՝ փշրեցայ ա
նարծարծելի · ըստ բամբասանացն եդոմայ 'ի մարգա
րէէն, զհրրորդ չափն անօրէնութեան սատակման՝
ինձ պատրաստեցի։ Եւ զի՞նչ ստութիւն առ այս՝ և
զայս յաւելուլ ընդ այս, քանզի զվրանն իսկ դի
ւանուէր մողոքայ՝ առի ինձ այսրէն՝ առ դժոխոցն
ժառանգութիւն, լքեալ զերկնայինն՝ յեղանակաւ
իմն օրինակի նմանակիր ձևակերպութեան, որպէս առակ
պատկերի աստեղն ռեփանայ բաբելականի՝ յիւրայէ
լէ պատուեցեալ ցուցաւ 'ի սինայ։

3 Իսկ արդ՝ զի 'ի նախնի շնորհին համարձակութենէ
դարձեալ՝ փոխեցայ, զրկեցայ, ելայ, հեռացայ, բա
ժանեցայ, և անպատուասատելի կորեցայ, արդ ընկալ



զիս

զիս տէր՝ վերստին կերպարանել 'ի պատկեր հոգւոյ,
զանարժանս կենաց՝ իբր զմահապարտ․ իբր զչարա
գործ․ իբր զպատկառեալ․ իբր զկոխան եղեալ բան
սարկուին․ ոպ̃ զանբժշկելի մանրեցեալ․ ոպ̃ զհասեալ
յատակս մահու․ ոպ̃ զդարչեցեալ․ ոպ̃ զխոտան դատե՛լ
քո կշռմանդ․ ոպ̃ միանգամայն 'ի կորուստ վարեալ․
ոպ̃ դեգերեալ․ ոպ̃ վանեցեալ․ ոպ̃ տարակուսեալ․
ոպ̃ թշուառացեալ․ ոպ̃ վհատեալ․ ոպ̃ կործանեալ․
ոպ̃ խորտակեալ․ որպէս բեկեալ․ ոպ̃ զթախծեալ․
ոպ̃ յոգի արտմեցեալ․ ոպ̃ թշնամանեալ։ Իսկ դար
ձեալ ակնարկելով քո՝ գթած, մարդասէր, հզօր,
'ի յաղերս բանիս՝ որպ̃ զղջացեալ․ որպ̃ խոստովա-
նեալ․ ոպ̃ 'ի յոյս քո դիմեցեալ․ ոպ̃ զապաշխարեալ։
Որ կշռես՝ գրես՝ և մեծ համարիս զհաւաչ հո-
գւոյ, և զաղդումն շնչոյ հեծութ̃ե․ զկսկիծ շըր-
թանց, զպապքել լեզուի, և զտխրականութ̃ի երեսաց․
զկամս խորհրդոց, և զյօժարութ̃ի խորու̃ն սրտից։
Որ փրկութ̃իդ ես անձանց, և տեսող՝ ոչ գործեցե
լոց․ և ստեղծիչ բոլորից, և բժիշկ վիրաց աներևու
թից․ պաշտպան յուսացելոց, և բարեխնամօղ տր̃ ա-
մենեցուն։ Եւ քեզ փառք յա̃մի, յաւիտեանս․
ամէն։



† Ս Ճերոսին ցուցեալ յերկին հեծոսբէ՝ նորին հանդէ, առ-
նոյն ողէրս մաղթանաց բանի. 'ի խորոց սրտից խօսս՝ ընդ ած.

## ✳ Բան. ԻԱ.

1 Ու քանզի ես ինձէն անձամբ իմով ինքնա-
գրութ 'ի մահ՝ ոչ կացի երբէք 'ի յոստ
մարդոյ, և ոչ սիրտ բանականի ստացայ, ըստ
գրոյն. Ու քանզի ոչ փոփոխեցայ 'ի նախակարգե-
լոցդ, և ոչ ընդ բարուք ուղին ընթացայ, ընդէր ոչ
զխոտորնական հետոցն խաւարայնոց զդէմս ցուցից՝
'ի սահման կարգի այսր ընթերցուածոյ. Ու որս
ածեալ յարմարեալ առ սոյն՝ զկերպարան տեսակի
բանիդ երեսաց, ըստ վերադոյնդ նշանակելոյ՝ ան-
փոխադրելի պահելով, խոստովանեցայց վերստին
դարձեալ աստանօր՝ զմնացեալ չարութեցն զբիծս,
զոր յաջորդաւդ է իմանալի.

2 Ոտար ժանտագործս արժանապատիժս՝ աճեցուն-
ցարի դնացիւք անսաստութե՝ զգունդն բե-
լիարայ. Նպաստս կայթից՝ և ցոյցս վազից՝ խաղա-
կացն դիւաց դարշելեաց ճարտար խաբողաց՝ ծու-
լութեամբս իմով շնորհեցի. Գանս գաւազանիս՝ և խոց-
ուածս անյայտս՝ 'ի կործանեցելոցն դահճաց ընկա-
լայ. Մ'չ հերքեցի զվնասակարն խաչիւն քո, քանզի
անդրէն առաւել կրկին իսկ զօրացուցի. Սան
իմոյ հեքոյս անօրէնութեան՝ անուանդ յի հայհոյի
'ի մէջ այսականաց, ով վո խորոյելի՝ 'ի մէջ հեթա-
նոսաց. Հարուածս հարուածոց՝ զմասակարս այա-
կանութեանց ժանդոյ և թրթրոյ՝ և այլոց կերչոց
վտանողաց, զծաղիկ հոգւոյս, ըստ որբյն յոլելեալ



հրա

հրաշական ողբոցն , որ 'ի ցոյցս երկրի վ՞ իսրայէլի՝ յառաջս հինից և չորից հոգւոց , յիս ինքն անկեցի . սահմանել զնն պատրաստեցայ , քան թէ սատակել . Բիւրս կուտեալ հաւաքեցի անձին իմում մարտիկս մահաղէնս . կշտամբիչս ինձ գոյացուցի՝ անիրաւս և անպատկառելիս . ներհակս ինձ զօրացուցի՝ ապառումս և անկառնելիս . դառինս ինձ առի մասունս՝ ընդ քաղցրաւենեացն ճաշակաց . առ ստացօղն՝ միշտ նենգաւորս , և առ բանսարկուն՝ յաւէտ հաւատարիմս : Աւա՜ղ աղէտիս , վի՛շտ վտանգիս , խաւա՛ր ամօթոյս , մա՛հ պատկառանացս , զիա՛րդ և առ բանիս յանդիմանութեան համարձակեցայց . մեծ է ձայնս գուժի , և անբերելի բողոքս աղաղակի . Քանզի թէ զհոգիս էր զիմ տեսանել , տգեղս՝ և նուաղս՝ և ամենևին ներգևեալս , ցաւովք հեծութեան՝ 'ի վերջինս վարեալ վարանումն , և մղձոտեալ աղտեղեալ գունով զազրութեան՝ իբր զպաշտօնատար մեհենի . վ՞ զի նոյն է սպաս ստանել ձուլեալ պատկերի՝ և մեղաց ախտի . Արդ՝ ես գնացի ընդ այս ճանապարհ կորստեան հետոց խաւարի . ետու զբաժինն քո ցանկալի՝ յանապատ անկոխ , ըստ մարգարէին՝ որ առ քահանայսն խորշելի ամբաստանութեան :

3 Եւ զիա՛րդ ասացից անձին իմում մարդ՝ գրեալս ընդ անմարդիս . և իբր անուանեցայց բանական՝ անբանիցն յիմարութեն կցորդեալ . և որպէս կոչեցայց տեսանողական՝ մթացուցեալ զլոյս որ յիս . և ընդէ՞ր համբաւեցայց զգայական՝ զիմաստիցս դըռունս փակեալ . կամ որպէ՞ս ցուցայց տպաւորուն



նկա

նկարագրութեան անեղծին շնորհի՝ անձամբ ինձէն յոգի մահացեալ. նաև ո՛չ շարժողական, և կամ շնչական ունիմ անուանել, թո՛ղ թէ հոգեկան, կամ մտաց ընդունական. անպիտանս՝ 'ի թի՛ւս անօթոց. անարգս՝ 'ի քարինս որմոց. արհամարհեալս՝ 'ի կարգս կոչեցելոց. վատթարս՝ 'ի յաղգս հրաւիրելոց. արհաւրգք մահու պակուցեալս, անխրախուսելի 'ի բոլորեցուն՝ ցաւովք և տանջանօքն երուսաղէմի, ըստ երեմիայի բանին խրատեցեալ. պակասեալ աւուրցս՝ 'ի հեծութէ, և ընթացք ամացս՝ 'ի հառաչմանէ, ըստ նո՛ւագարանաց երգողին։ Իբր ասո՛ւի 'ի ցեցոյ՝ և փայտ 'ի յորդանէ, ըստ իմաստնոյն բանի, 'ի խիթմանէ սրտիս հալեցայ. իբր զոստայն սարդից մաշեցայ, ըստ սաղմոսողին, և խոտան գտայ. իբր զամպ առաւօտեայ՝ և զցօղ վաղորդայնի, ըստ մարգարէութեանն ձայնի, ապառեցայ։ Այլ ո՛չ 'ի մարդ ոք ունիմ զյոյս, եթէ անիծեալ 'ի տեսանողէն՝ անյուսադրելի վհատիմ, այլ 'ի քեզ՝ տէ՛ր իմ ոգեսէր. որ ընկղմեալ 'ի քոյդ գթութեանց բարեաց անբաւից, և 'ի բևեռեալոյն ժամու 'ի խաչին՝ մաղթեցեր մեծողորմուն առ հայր քո բարձրեալ՝ քո չարչարողացն։ Արդ՝ շնորհեա ինձ յոյս քաւութեան՝ կեա՛նք և ապաւէն. և 'ի տուր շնչոյս թշուառի, առից զոգիդ քո բարի։ Եւ քեզ ընդ հօր՝ հոգւովդ սրբով՝ զօրութիւն, յաղթութիւն, մեծութիւն և փառք յաւիտեանս. ամէն։

† Վերստին յաւելուած ներքին հեծութեան՝ նորին հոգւոյ, առա-
նոյն աղերս մաղթանաց բանի. ՚ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ.

## Բան. ԻԲ.

1 Դարձեալ ողորմանեցից՝ ՚ի նոյն շարունակ
բարդեալ զկշտամբանաց եղանակ՝ դար-
ձեալ անձինս, ածեալ մատուցեալ՝ կրկին
կացուցեալ նովին պատկերաւ ՚ի նոյն պայմանի. Թե-
րեւս գրեսցէ ինձ ամենագէտն՝ զայս յանդիմանու-
թեան դատակնիք՝ կնքեցուցանողական բանի՝ ճըշ-
մարիտ խոստովանութեն համօրէնից գործոց՝ զաղտ-
նութեանց չարեաց.

2 Այլ ոմն ձիս խօսնակին՝ կարծրերախս սանձակոտոր
արձակերասան. յոլանակս անհամբոյր՝ վայրենական
եւ անկրթական. երինջս աւողական՝ անուղղական եւ
անվարժական. Որդս մոլեգնական՝ տարագրական
եւ կորստական. մանուկս մեղանչական՝ անխրատական
եւ վարատական. տնտեսս մահապարտական՝ տարտա-
մական եւ անգործական. բանականս անասնական՝ դա-
զանական եւ անմաքրական. Ձիթենիս ամայական՝
անպտղական եւ կործանական. մարմինս հոգւոյս իմ
թախծողական՝ դատողական եւ տանջողական. խո-
ցեալս անբժշկական՝ անխնամական եւ անկանգնա-
կան. Ոսկի շարս կայսերական՝ արդ վատնական եւ ան-
գտական. ծառայս սխալական՝ փախստական եւ
թշուառական.

3 Ահա ես ինքն ինձէն կամաւորակս անձնամատն
եւ մարմնակործան, հոգեկորոյս եւ միշտ մոլախաբ,
կամակոր իսկ՝ եւ սրտաբեկ. ուշամոռաց եւ հանձա-

բաղըրաւ. զդայաղէրկ և իմաստասպան. յայլատատես և եղեռնալուր. Ես աստուստ և անդուստ բընա_ւիւք բորբոքմամբք մահաբեր երկամբք ճնշեալ, ոչ փոքր իւիք տեսութե 'ի գործ ընտրութեն քեզ պիտանացու՛ տէրդ բոլորից, ողբամ զորովայնն, որ երկնեացն զիս. աշխարեմ զստինսն, որ դիեցուցին. ընդէ՞ր ոչ մաղձ մակարդեալ ընդ կաթինն ծծեցի, և զիա՞րդ ոչ դառնութիւն ինձ ընդ քաղցրութեն ջամբեալ մատուցաւ. Ո՜ւ եթէ ես ինձէն անձին իմում դժնեայ դատախազ համբարձայ այպանեօք բանիւք, և ունիմ տակաւին զսուր բարկութեանս անխոնարհելի, ո՞չ որ 'ի յերկրածնաց ասա՛ զիս ը_ղքեսցէ. զո՞մ խայտառակեցից. զբնաւ էութիւնս դատեալ տուժեցից. զհամօրէն զնիւսակարացն ըղ_ձանդ՝ զանեցից. զխոցողացն զինու. որութեց դա_տախազեցից. զզայականացն դլխաւորութիւս կշտամ_բեցից. Մեղայ տէր յամի, ողորմեա՛ գթած. ոչ նոր ինչ գտեր յիս զյանցանացս պարտեաց մառա_խուղ, այլ նոյն եմ յաւէտ նովին պատահմամբ պար_տաւորութեան՝ անկցելի ձորձով սխալեալ առաջի քո անփոփոխելի. և դու միայն իսկապէս գթած օրհնեալ մարդասէր, ընդ աջմէ իմոյս փրկութե կան_խեալ ներութե անայլայլելի.

4 Արդ՝ մատո՛ խնամակալ, հզօր, երկնաւոր, բարի, ամենից հաստիչ յոչնչից՝ զբանիդ զօրութեան իմաստից կայծակն՝ 'ի գործի ազդման լեզուիս շարժութե, առիթ մաքրութե յամենուստ զգայականաց գոյութեց յիս մասնաւորելոց՝ քո ձեռս կերտելոց. ողջոյն առ'ի քէն եղելովք և բժշկելովք,



կըր

կրկին հանդերձանօք, անպակաս ձայնիւ, անհատ
բարբառով, քեզ վերընծայել գոհաբանութիւն ՚ի
փառս մեծութեան հօրդ քո՝ այժմ մերոյ, յաւիտեանս.
ամէն.

† Ա՛ Երրորդին շարադրած ներհուն հեծութիւն՝ նորին հոգւոյ, առ
նոյն աղերս ծաղկանոց բանի. ՚ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ.

## *Բան. ԻԳ.

1 Տ ած ամի, զօրաւոր յամի. անպարագիր և
անփայլափակ տեղի ամենեցուն. բոլոր իս
կութեամբ հուպ յամենեսին. անուրեք
վայրից, և չիք սահման առանց քո. Ո՛չ երևեալ
երբէք, և ո՛չ տեսականութիւն առանց քո ծագման՝
լուսաւոր։ Փառք ահաւորութեան. անուն անհասու
թեան. կոչումն մեծութեան. ձայն անբաւութեան.
իսկութիւն անքննութեան։ Անմատչելի հեռաւոր, և
անընդմիջելի մերձաւոր։ Տեսող հեծութեան. նկա
տիչ թշուառութեան. մօտակաց թախծութեան. ամենա
բուժ ճար անճարութեան. հայր գթութեանց. ծագօղ
ողորմութեան. ած մխիթարութեան։
2 Հայեաց տէր ողորմութեամբ՝ ՚ի պատկեր վշտաց
դառնութեան՝ բազմավտանգ կրիցս կարեաց, զոր
հանդէպ քո տարածանեմ. կցորդակից լեր բժշկա
պես, և մի՛ ՚ի խոյզ ընտրութեան կոչեր դատաւորաբար։
Արդարև մեծ է վտանգ տարակուսանաց ցաւոց՝
այսր վարանման, յորժամ իցէ մարմինն՝ մեղօք դրո
ւեալ. և անձն՝ ՚ի գործոց չարեաց ոչ մեկուսացեալ.
գործնականացն գործի՝ սովորութեն կարեաց կապեալ.


զանգ

զանգուածն հինգերձանաց՝ միհացու կրկիք շաղախել·
զուարթութիւն սրտին իմաստից՝ խեթիւք խոցոտեալ·
ակնկալութիւն բարեացն՝ բնաւին բարձեալ ·
և 'ի բանականութեանն՝ ընդ անասունս դասակարգեալ·
և զաղէր գարշութի՝ ընդ գոյութեն շարամանեալ·
և անասնականացն ողջերով՝ իմանալիքն վիրաւորեալ·
Եւ 'ի սատանայէ յանցանացն յշտիկի՝ յաւէտ յուսահատել·
և տագնապաւ նախագործելոցն՝ միշտ տարակուսեալ·
և յստակութիւն աղերսին՝ իսպառ պղտորեալ ·
և խղճիւ մտացն յուզմանց՝ կրկին ձենձերեալ ·
Եւ ձեռն 'ի մաճի գործոյն՝ զյետնոցն հետազօտել·
և կերպ 'ի յառաջ դիմեալ՝ ոտք 'ի վերջ կոյս յետահարել·
Եւ գիտութեամբ էիցն՝ 'ի չէիցն միշտ խաբեցեալ·
և 'ի մտացն մարտ՝ 'ի փոքունցն յաղթահարեալ ·
Եւ 'ի թառանչ սրտին՝ հագագին դուռն հրդեհել·
և խոնաւ զօրութիւն քմացն՝ ամուրէք տոչորեալ·
և անարև միգով՝ յամենայն մասանց պարփակեալ ·
Եւ լոյսնունի ակնկալութեն՝ ամենևին իսպառ ամփոփել·
և աներևելեացն տոյժ՝ 'ի զգալիսն տպաւորեալ ·
և եղկութիւն կորստեանն՝ 'ի յուշ անդ եկեալ ·
և դատակնիք հատուցմանն՝ 'ի դիւանի մտացն գրեալ·
Եւ բարերարին ակն՝ 'ի ցասումն իմն երևեցեալ ·
և լոյսն բնութե՝ զանկուածոյ հողոյս զայրացեալ·
և ահաւորութի էին՝ ը փոքրկութի բնութես ընդ հարել·
և միշտ որոտմամբ բանից՝ բանաւոր մոխրոյս բարկացել·
և իրաւանցն վիմգք՝ զարժանիս մահու կոչկոճեալ ·
Եւ որ իմն է տաղանդ՝ յանառակս՝ ասատէն կորուսել·
և պատուական իրին ստացուած՝ իբրև անարգ՝ յերկ
րի թաղեալ · և տաժանմանցն արգասիք՝ ծուլութեն



մթով

մթով ծածկեալ , և իբրև զ՚ի բաց բարձեալ նշմա
րան ծրագիր՝ չերևեալ։ Նաև պատասխանատրան լեզ
ուիս՝ յիրաւանցն օտար՝ կարկեցեալ . և անհամբոյր
շրթանցս դրունք՝ օրինաւոր գատմամբ պապանձեալ։
Նաև յուզմունք մտացս՝ ՚ի զանազան մասունս ցրն
դեալ . և զկեալն ՚ի վ՟ր օգտին՝ ոչ ինչ դիտայեալ .
և՚ի կշռութի բարւոյն ընտրութե՟՝ յիմար երևեալ .
և ընթացք ելիցն՝ նհանջմամբ չարին խափանեալ .
և վառարան իւղոյն՝ ածխինովն ծնցի լցեալ։ Նաև ան
ուանս գիր՝ ՚ի կենաց մատենէն եղծեալ , և կշտամ
բանք ընդ երանութե՟՝ անդ արձանացեալ։

3 Եթէ զինուոր տեսանեմ, մահու ակն ունիմ .
եթէ պատգամաւոր, խստութե՟ . եթէ մատենա
դէտ, մուրհակի կորստեան . եթէ օրինաւոր, անի
ծից . եթէ աւետարանական, փոշւոյ ոտիցն թօթափ
ման . եթէ բարեկրօն, յանդիմանութե՟ . եթէ ապո
ռում, կսկծման . Եթէ ջրովն ընտրութե՟ փորձիմ,
խորտակիմ . եթէ դեղ ինչ դատման ձգեմ, սասա
կիմ . Եթէ բերս նկատեմ բարութե՟ , ՚ի կարծեաց
չարեացս փախնում . եթէ ձեռն համբարձեալ , կը
րանամ . եթէ փոքր ինչ խրտուիլ , սարսեմ . եթէ
սակաւ մի թնդիւն, ընդոստիմ . Եթէ ՚ի խրախճանս
ըմպելեաց հրաւիրիմ, դողամ . եթէ մեծիդ յանդի
ման լինիմ, սարսափեմ . եթէ ՚ի հարցումն բանի կո
չիմ, կարկիմ . եթէ իրաւամբք քննիմ, համրանամ .
Որդ՝ ոյպքան ամենաթշուառ և ողորմագին տարա
կուսանացս՝ ՚ի վ՟ր մեղանց բարդելոց , որք զատոր
զդայականաց սրտիս գոյութեան՝ ՚ի ներքուստ ան
տուստ աներժշկական ցաւօք՝ աներևակի նետիւք խո

ցուեալ , անարտաքսերելի մշտակիր յարամնաց համա-
պաղամուխ բնաւեալ աստուստ ընդ հոգւոյս , ըն-
ցեալ շարաւով՝ կրկին հարուածով , վտանգ սաստիկ
ման մահու գուշակեն։ Թշուառս մթերից՝ պատեալ
զերկաթով գաղտնեացս ծածուկք՝ ազդեն ինձ տագ-
նապս՝ վէրս պահեալս անխնամարկելիս՝ ընդ նոս շրջ-
ջոյս տուր և առութե . յորոց նեղութեց՝ չարաչար
Ճնշեալ աղաղակ ձայնիս՝ խառնեալ արտասուօք ,
կողկողագին թախծանօք հոգւոյ , բարեգործիդ հ-
նարաւորութեան , յերկրաստեղծիցս նահատակաց՝
ընդ իմ մաղթողաց , վերջին հեծութեբս և ես ընդ
նոսին՝ արտասուօք ողբոց ամենաքումբք նուիրողք՝
զաղերսանս ընձիցս՝ ՚ի տորնոյնոցս ատոր՝ յերկինս
առաքեմ։ Շնորհեա տէր անդորրութիւն կենաց
հանդստեան՝ ողորմելի վաստակեցելոյս՝ ՚ի յընդու-
նոյն երկրագործութիս . համայնդ յամենայնում .
Ամէն . ստացեալ քեզ փառս ։

---

† Ս . Էրամին յաւելուած կրկին հեծութե՝ նորին հանգոյն , առ-
նոյն աղերս մաղթանաց բանի ։ ՚Ի խորոց սրտից խօսս՝ ընդ Այ ։

## ※ Բան · Խ՛Գ ·

1 Եւ արդ՝ որո՞ց խնդրոց արժանաւոր վարկա-
նելով զիս՝ մատչիմ աղերսել , արքայու-
թեանն՝ յորմէ վրիպեցայ , եթէ փառացդ
վայելչութեան՝ յորմէ զրկեցայ , թէ կե-
նացդ անմահականաց՝ յորմէ հերքեցայ . թէ ընդ
հրեշտակըն պարակցութեան՝ յորմէ տոտհեցայ ,
թէ ընդ արդարոցն մասնակցութեն՝ յորոց ճեղքեցայ .



թէ

Թէ ուռ որթոյն կենդանւոյ՝ յորմէ քանցեցայ ,
Թէ ոստ տնկոյն բերկրութեան՝ յորմէ գօսացայ ,
Թէ ծաղիկ փառացն շնորհի՝ յորմէ թափեցայ .
Թէ պանծանացն ժառանգաւոր՝ յորմէ կորացայ ,
Թէ հայրենի ծոցոյն հարազատ՝ յորմէ ընկեցայ ,
եթէ զգեստուն լուսոյ պարծիմ՝ յորմէ մերկացայ ,
եթէ 'ի ստացօղ դիրծին յուսացայց՝ յորմէ խորթացայ .
եթէ 'ի լուսոյն խղձմ դիմեցից՝ յորմէ մեկնեցայ ,
եթէ յիրուսի յանկերան յօդիմ՝ յորմէ մերժեցայ ,
եթէ 'ի թեւս նորա մերձիմ՝ յորմէ օտարացայ .
եթէ յապաւէնն ապաստանեցայց՝ յորմէ խեթացայ ,
եթէ 'ի փրկութենն նորոգութի՝ յորմէ մահացայ ,
եթէ 'ի զգաստութենն զուարթութի՝ յորմէ ես լքայ .
եթէ 'ի կանոնն կենացն ուխտի՝ յորմէ փոխեցայ ,
եթէ 'ի սահմանն հաստադրականն՝ յորմէ սահեցայ ,
եթէ յանշարժ վիմին պնդութի՝ յորմէ սասանեցայ ,
եթէ 'ի շարս դամարտակին՝ յորմէ հոսեցայ ,
եթէ 'ի քաղաքն անդրանկաց շինիմ՝ յորմէ գերեցայ .
եթէ համապազորդեան հացին աղօթեմ՝ զոր ոչ վաստակեցայ , եթէ փոխադրութի երկանցն խնդրեմ՝ յոր ոչ քրտնեցայ , թէ պարգեւօքն պսակեցայց՝ յոր չհանդիսացայ . թէ արձան խնձ կենաց գրեցից՝ յորմէ ջնջեցայ , թէ զերախտեացդ ձիր յիշեցից՝ զոր միշտ մոռացայ ։

2 Ո՛հ հատաւ եւ կամ խզեցաւ լար կենաց յուսոյն . տիրեցայ 'ի բարութեանցն գարշութենէ , համոյն ախտացեալ՝ անմիտ սպառեալ մարմինս՝ ապականութեն շրջապատեալ՝ մեռոյց զս. Բոյղն պալար՝ փոյլունակ տգեղ լինացեալ , Մնացուած ինչ

պա

պաշտեալ նախանձաւ երկդիմի կերպին, որ զկրկին
անմաքրութիւն նշանակէ, պարծանացն նշոյլ՝ ամե-
նեւին ինձ շիջաւ. փրկութիւնն մոռանեցաւ. բարին
ատաւերացաւ. ելք կենացն՝ բնաւին փակեցաւ. մի-
խիթարութին բարձաւ. դատաստանին ատեան մերձե-
ցաւ. թոյնք մահուն ինձ արծարծեցաւ. ապանեալն՝
կրկին ինձ կենդանացաւ. լաստին դադարք՝ վիմօք
խցաւ. շաւիղն յուսոյն՝ կուրացաւ. շնորհին ծած-
կոյթ՝ յինէն մերկացաւ. փառացն վայելչութի՝ բառ-
ն՛երացաւ. հանձարն առաջնորդական՝ խափանե-
ցաւ. կշտամբանացն փուշ՝ բազմացաւ. անօրէնութեն
ուղէշ՝ ծաղկեցաւ. բոյս գեհեննին՝ ինձ բորբոքե-
ցաւ. ծառայութեն լուծ՝ սաստկացաւ. ստրկութեն
կապ՝ զօրացաւ. ունօղն յարկին կառուցման՝ ահա
անկաւ. բարձրութեն վստահարան՝ կործանեցաւ.
ընտանութեն միաւորութի՝ անջրպետեցաւ. որբու-
թեանն սիրող հոգին իմ՝ տրտմեցաւ։

3 Ով քանզի զվերջինն համբուրեցի դառնութի,
տանջանս՝ խէթս՝ տխրութիս, վէշտս հոգեկանս,
ցաւս անխնամարկելիս, տարակոյս անյուսադրելիս,
ամօթանս անպարուրելիս, խայտառականս անվերար-
կելիս, պատկառանս անհամարձակելիս, փախուստս
անդառնալիս, հալածանս անմարդասիրելիս, երկոյն
ուղեւորութե՝ ապաձեռն անթօշակութիւնս, իսկ
դու փրկութի զօրութի եւ օգնութի, արքայութի
լուսաւորութի քաւութի եւ անմահութի՝ տէր յ͞ս
ք͞ս, որդի ա͞յ կենդանւոյ, արարիչ երկնի եւ երկրի.
որ ընձեռես ջուր պապքելոցն՝ 'ի ծարաւուտ վայրս
անապատի, օրհնեալ բարեգութ, հզօր, մարդասէր,


եր

երկայնամիտ, խնամակալ, ճոխարար, այցելու. պաշտ-
պան աննախանձ, պահապան յաղթօղ, կեանք անկո-
րուստ, միջնորդ երկնային, լոյս անմուտ,
երանութիւ տօնելի, ձեռն ձգեալ սիրոյ՝ ողորմու-
թեան քոյ աջոյ՝ ընկալ և մատո քաւեալ և սրբեալ
զիս զամենապարտս՝ բանդ կենդանի՝ առ հաւատս
բարպատմն քո հոգի, զի քև վերստին հաշտեալ յիս
դարձցի. Նու 'ի ձեռն քո՝ իւրում կամօք մաքուր
նուիրեալ՝ զօրեղն ինքնութե՛ զիս հօր ընծայեալ,
անդէն առ նմին՝ նովիմբ միշտ 'ի քեզ՝ չնչոյս ող-
ջունիւ կապեալ ընդ շնորհիդ՝ 'ի քեզ միանալ ան-
բաժանելի. Մ՝ո քեզ՝ ընդ հօր քում՝ հոգւովդ
սրբով՝ երրեակ անձնաւորութեդ՝ 'ի միում բնութե
և՛ 'ի մի աստուածութեան՝ փառք, և՛ 'ի սահմանակնաց էից՝
գոհաբանութիւն, յաւիտեանս յաւիտենից.
ամէն:

---

† Մ Էրրորդին ցուցեալ նշէին հեծծութէ՝ նորին հոգւոյն, առ
նոյն ասէր համաբանաց բանի. 'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ:

# ✻ Բան. ԻԱ.

1 Այց քանզի 'ի վեր այսքանեաց գերութեանց
ամենաթշուառ վտանգաւորիս՝ մի զմիով
եղ և ելս առնելոյ, զոր զկերպարանս ան-
ցիցն՝ 'ի մասնէ վերաձառեալքդ նախագրեցին, ուս-
տի և փոխեալ զեղանակ բանիս՝ այլ ոչ զեղկու-
թիւն աղէտիս.

2 Ին զի ծովէ ինձ ծփանաց կենցաղոյս բերմունք՝
յոյժ նմանագոյն. յորում կոհակօք բազմօք անթիւ-
դի

դիմեցմանց՝ տատանեալ հոգիս 'ի յոյսմ աշխարհի մարմնոյս շինուածով իբր 'ի նաւակի։ Ո՛վ որ ես սոյնա մարգարէ՝ զյանկարծադէպ կատարածն, որ 'ի պարսկային հինից՝ երուսաղէմի և սամարիոյ կործանմանն, նմանութիւ այսր օրինակի կերպաւորեցոյց. որ և առ իմս հոգևորական խորտակումն զուգածոյնել՝ ոչ է սխալական. Քանզի մինչդեռ չր ւէի ես յանհոգութե՝ անտարակոյսն վստահութ, դոյզն կասկած արկածից 'ի միտ բերելով՝ առ խորոց փոքր միջոցին, որ 'ի մէջ հանգստեանն և աշխատութեան, իբր այն թէ հասեալ իցէ ձմեռն՝ յամարայնի, բքաբեր հողմով ժամանեալ՝ երեքալեանն դիմակըցութեամբ, ամփոփեաց զհանդարտութիւն։ Աւսարնաւն՝ 'ի բախմանէ վայրենի ալեացն՝ խորտակեցաւ։ Թիւոցն ձեռնարկութիւ՝ քայքայեցաւ. կայմն ամբարձման՝ 'ի կոյից իւրոց խլեցաւ. առագաստին թըռչարան՝ յանկարկատելի ծուէնս պատառեցաւ. շինուածոյն շուք՝ անզարդեցաւ. առասանք ձգողականացն՝ խզեցաւ. տեսարան գլխոյն դիտակի՝ խանարհեցաւ. ապաւանդակին պարան՝ կորեցաւ. ապաւինութի խարսխին՝ լուծաւ. լուծք ստուարք ամոլեցն կցորդութե բաժանեցան. սամիք ուղղչացն հեռաց՝ գալարեցան. յատ հիմնին հատտարանի՝ ընկղմեցաւ. ղեկացն կառուցմունք՝ անդրէն սուզան. չրուոցն յարմարուի՝ պակասեցան. ողնափայտին պատպարան՝ խնկոյն բեկաւ. կապարանք զլստին հաստուածոյ՝ յօշատեցաւ. զօգք ամփոփման ծոցոյն կազմածոյ՝ անարգեցան. խելք շրթանցն եզերաց՝ խախտեալ ոստեաւ. պաղպաջունք բաղմականացն՝ անկեալ



բար

բարձու․ վանդակապատին վայելչութիւն՝ յառաջե-
ցու․ գահաւորակին հանգստարանն՝ շփոթեցաւ․
մածմունք տախտակաշարք՝ 'ի միաբանութեանց միմեանց
անջատեցան․ հեղոյսք ընդման բեւեռացն՝ քարշե-
ցան։ Որդասիք իւրն՝ յիշատակարան ողբոց ինձ որ
մնացին․ Նաւուղին՝ հանդէպ նաւին դեգե-
րեալ ողբոյ, ձեռն 'ի ծնօտս եդեալ՝ արտասուաց
գետս հեղուցանէ։ Նշմարք սակաւ մնացուածոցն՝
'ի ծայրից ծփմանց ապրելոյ ծովուն, իբր խողխո-
ղեալ բանաւոր՝ ողորմագին թախծանօք հեծէ․
Մինչ զի թէ զբարի նաւապետն՝ երկնաւորօքն զօ-
րօք՝ յաշխարհիս ծովու առ 'ի զխորտակեալս իմաս-
տան իմանալի գոյութեանս՝ տացէ աշխարհել բանիս
յարմարութիւն, ոչինչ վրիպեսցէ 'ի սուղութէ։
Քանզի արդարև ելաց բարեգութն տէր՝ յառակ
մարդկութեան՝ զթաղեալ ազգակիցն․ ելաց առ նմին
և զերուսաղէմ մոլեալ, և զյուդաս մոլեգնեալ․ յո-
րոց երկուցն՝ կորեաւ վստահութիւն՝ յօրինակ նմա-
նութեան աղարտեալ նաւի․ իսկ միւսն՝ հասեալ յա-
տակս անդնդոց, առասան յուսոյն՝ ձեռամբ ունո-
ղին՝ յանքոյթն արտաքերեաց խաղաղութիւն․
3 Արդ՝ իցէ՞ թէ յուելից հոյել զբազմախորտակե-
լի տապանակ մարմնոյս իմոյ՝ նորոգեալ։ Իցէ՞
արդեօք տեսանել զփշրեալս նաւ ողբալի հոգւոյս՝
ողջացեալ։ Իցէ՞ արդեօք տեսանել զբաժանեցեալս
միջոցս մեծաւ՝ վերստին կցեալ։ Իցէ՞ արդեօք
տեսանել զքնաթախիծ սիրտ վշտացելոյս՝ բերկրե-
ցեալ։ Արդ՝ իցէ՞ ակնունել նոյել զյուէտ խա-
թարէլ կերպարան բնութեանս՝ կրկին հանդերձեալ։

Իցէ՞

Իցէ՞ արդեօք թէ տեսից զքակտեալ տաղաւար թըշ
ուառացելումս՝ միւսանգամ կանգնեցեալ։ Իցէ՞
արդեօք յուսալի նայել զտարամերժեալ գերիս՝ ա
զատեալ։ Ապաքէն դուցէ՞ ակնունել՝ զանկեալս 'ի
շնորհէդ լուսոյ՝ դարձեալ կազդուրեալ։ Արդեօք
տեսից զվայելչութի՜ ընտանիդ քո պայծառութե՜
յողորմութի ինձ երեւեցեալ։ Եւ թէ տեսից երբէք
զամենատխուր կերպարան հոգւոյս իմոյ՝ ժպտեցեալ։
Արդեօք լուա՞ց ընդ ձայնի դուժիս՝ աւետեաց համ
բաւ՝ ինձ առաքեցեալ։ Արդեօք տեսից զխուրո՜
կործանն վնասեցեալս անօթ՝ կազմեցեալ։ Իցէ՞ թէ
տեսցեն պատուհասք աչացս իմաստից՝ զմուրհակ պար
տուցս իմոց՝ պատառեալ։ Եւ թէ յայտնեսցի՞ օրն
իմ անձկութեան՝ շնորհին քաւութե՜ բարւոք ինձ
ծագեալ։ Արդեօք մտից 'ի խրախճանութի խո
րանին լուսոյ՝ քեւ առաջնորդեալ։ Իցէ՞ թէ կեն
դանի լինիցին ոսկերքս, ըստ եզեկիէլի, ցամաքեալքս
'ի կենդանութենէ՝ եկաւորութէ ազդողական շնչոյս՝
զօրացեալ։ Իցէ՞ թէ յաւելից հայել 'ի տաճար սր
քո, աղաղակաւն մարգարէին 'ի պորտոյ կիտին, հեր
քեալս 'ի լուսոյ՝ որ կամ առաջի ք. ամաչեցեալ։
Եւ թէ լինիցի՞ խաւարամոլնդս մթացելոյ՝ ծագ
ման առաւօտ։ Եւ թէ հասցէ՞ տեսանել զտագնա
պեալս մշտասառոյց՝ յեղանակս գարնանն մօտ։ Եւ թէ
տեսից զցօղ անձրեւոյն՝ կանաչացուցանօղն հոգւոյս՝
ինձ արօտ։ Եւ թէ իցէ՞ արդեօք նկատել զդաղանա
բեկ հերքելի ոչխարս՝ վերստին կամաց գթութե քո
հօտ։

4 Եւ քանզի ըստ բանին յոբայ, շուրջ պատեալ են

չարեացն ճնալք՝ ընդ որ ոչ կարացից անցանել, իսկ
եթէ լոյս ողորմութեան բարերար կամաց քոց՝ ցուցցի.
գթութեան քոյ դուռն՝ բացցի. ճառագայթ փառաց
քոյ՝ ծաւալեսցի. խնամք ձեռին քոյ՝ յայտնեսցի.
արեգականդ կենաց օր՝ տարածեսցի. առաւօտին
ըղձալի տեսիլ՝ մերկասցի. առատութի քաղցրութեան քոյ՝
աղբերասցի. վտակ արարչին կողից՝ հոսեսցի. ծո-
րումն անապակ սիրոյ քոյ՝ հեղցի. ծագումն աւե-
տեաց շնորհի քոյ՝ երեւեսցի. պարգեւիդ քո ծառ՝
ծաղկեսցի. մասունք օրհնեալ մարմնոյդ՝ բաշխեսցի.
համառօտեալն ակնկալութի՝ հանդիպեսցի. հաս-
ուածեալ ձայն ողջունի քոյ տէր՝ լուիցի. հեռա-
ցեալ խաղաղութի՝ մերձեսցի. Յայսոսիկ յաւէտ
սովին սահմանաւ երանականաւ՝ հաւատ ընկալեալ
յուսոյ հաստատնոյ, ապաւինեալ 'ի հոգիդ քո Տէր,
որ ընդ հօր քում պաշտի ձայնիւ քաղցրութեան՝ ընդ
քեզ փառաւորեալ 'ի լոյս անմատոյց, որով կեանք և
երանութիւն քաւութեան հանդերձ՝ ընծայեալ ինձ
մեղապարտիս. Յաւանդ անկորուստ ընդ իս պա-
հելով՝ առհաւատչեայ ճշմարիտ յիշատակի. 'ի ձիր
անեղծութեան՝ անուամբդ անճառելեաւ ահաւորու-
թեան՝ հզօրի Տէր փայլնոյ և անքննելի տէրութեան
երրեակ անձնաւորութեամբ. որ եսդ յինքութե յէութե
և յարակայութի բարձրութե՝ քաղցրութե ողորմութե և
մարդասիրութե՝ պսակեալ հանդերձեալ և թագաւո-
րեալ: Նոյն՝ առ ամենեսին, ամին՝ ամի կարող ես՝
գթած. և քեզ վայելէ փառք յայսմ յաւիտենի, և
'ի հանդերձեալ մշտնջենաւորութե յաւիտենն
աւուրն մեծի, յաւիտեանս. ամէն:



Նու

† Մ էրոտէն յաւելուած կրկին հեծութեան նորին հոգւոյ ․ առ նոյն ալէրս նաղբանաց բանից ․ ՚ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ․

# ※ Բան ․ ԻԹ ․

1 Եւ արդ՝ ստուգապէս եւ իրաւաբար, ընդ որս
որք ըստ ձայնից կողկողանացն՝ եւ զբանիցն
յարմարութիւն հանդերձեն, ՚ի նոյն գիր
բերեալ զաւարտմունս տանջանացն, որովք առաւել սաս
տիկ մորմոքեալ ճմլեցուցինեն զաղէտս կարեացն սըր
տին ըղձից՝ առ արտասուաց բղխմունս ․ ուստի եւ
բազմեալ իմ ՚ի գլուխս պարու՝ ակմբից դասու՝ այնր
երախանաց, որք զլալեացն յեղանակեն բանաստեղ
ծութի, եւ ես ընդ նոսին՝ նոցին հեծութեք՝ աւա
ղական ձայնարկուեք՝ զանձինս տարածանեմ զվշտ
տակութիւն ․ Որ ոչ բնաւին մեռեալ աշխարհի,
եւ ոչ իսկապէս կենդանի Այ ․ ոչ ջերմ սոսկ, եւ ոչ
ցուրտ յատուկ, ըստ առակի աւետարանչին՝ գրեալ
՚ի յայտնութեանն ․ երեից ասելի՝ երրեակ տէրութեան,
եւ ամենատես արարչութեան ․ Նաեւ այս են պատկանել
թախծականացն կերպագրութեք, կրկին ողորմելի
այսու երեւեցեալ, որ ՚ի մի գիծ սահմանեալ կա
ցուցանեն զթշուառութեցն զօրինակ, այսպիսի
2 կցորդութեք շաղկապեալ․
Պարտուցն ժխտել տղնդեցն ձեպով մեծաւ ՚ի տուժի․
Ես ապիկար մատնեալ՝ անարժան գործովքս յիրաւի․
Վատնիչ որբոցն գանձուց՝ կրկնապատ եւ անթափելի․
պատասխանատու մեծին՝ ըմբռնեալ անհրաժարելի․
Բիւր քանքարոց խնդիր՝ ուես չունիմ կշիռ մի ունկի․
Անբարեխօս կապեալ ՚ի պահեստ՝ դատոյ արգելանի,



հե

հեծութեամբ և վաստակ ցաւոց ճաշակեմ՝ յաննշոյլ բանտի,
անապաւէն տանջեալ անթոշակ՝ կամ ողորմելի.
այլ յեղանակ ինձ ողբականաց՝ աստուստ կնքեցի,
փոխատրեցի աշխէն բարբառով՝ կոծ կսկծելի,
կարգադրեցի շրջաբերութեամբ՝ 'ի նոյն պայմանի,
անհատական թիւ խորհրդական՝ երկեակ տասնեկի.
Աղքատութեանն ճնոց՝ յամենուստ մասանց մրրկի.
անպատսպար թշուառ՝ վտանգեալ սրտիւ 'ի գրաւի.
տարակուսեալ հոգւով՝ ապաշնորհ ոյր 'ի վրիպակի.
անխնամելի հոյցմամբ՝ դատաստանն յինէն պահանջի.
Մեղաց և մահու զինուք՝ զգայարին գաղտնեցս խոցի.
անփրկելի մատնեալ բռնութեան՝ չարեացս գերի ,
սուր սուսերաւ սաստից՝ գոյուի բնուեա յօշատի.
Յիշատակաւ բեմին՝ աստուածին 'ի դատաստանի ,
անծագելի մռայլ՝ չարատեւ աչացս երեւի .
անձեռնկալ կապեալ՝ եղկելիս 'ի տարակուսի ,
ահարկուի դիմաց՝ պատկերի վերնոյն տեսանի .
Յոյժ անարեւ՝ և անվերադարձու 'ի տարտարոսի .
անապաւէն մոլար՝ մորմոքեալ 'ի հուր գեհենի .
անյայտնելի կորուստ՝ կործանել 'ի մեղաց վհի .
Ահա զոր ունիմ արծաթ անպիտան՝ ոչ երբէք յարգի,
և ոչ ընդունի և կամ համբարի՝ 'ի գանձ տրոնի ,
հոյցուած պղտոր և ձեռն անմաքուր՝ աննուիրելի .
Այլ ընկեալ սրտիւ մատանց տատանմամբ՝ յոյս առնել
դարձի, զդէմս 'ի յերկիր եդեալ պաղատիմ՝ մօրդ քո .
բարեխօսեա՛ մաղթեա՛ քաւութ՝ ինձ մեղաւորի .
դու զօրաւոր փրկանակ կենաց՝ խնկուհի երկնի .
քեզ օրհնութիւք ձայնից և բուրմունք՝ խնկոց 'ի յերկրի,
և անուշից ծաղկոց մատուցու՝ մըն յամենայ նի.



Արդ

3 Որդ՝ յառաջեալ ողբոցս հիւսուածոյ՝ այլ մասն յա-
ւելլի, բարերարին շնորհաց արտասուաց պտու-
ղատուցի․ զկորստեան խորս չափելով՝ զոլորտսն եր-
բեք ոչ գտի․ մասնաւորօք բանիւք ՚ի հանդէս նո-
րին ջանացի․ զմտացս արագեալ զթեւս՝ յերեւոյթ
իրին ոչ հասի․ զուշին պարտուցի յանվթարելեացն՝
բաժակ բարկութեն ՚ի ձեռն իմ առի․ զտարտամուի
տարակուսանացս՝ իբր ճաշակումն մահու արբի․
Եւ այժմ զյանցիցն յաճախութի՝ ողորմելի ձայնիւ
յերդ արկի․ աներեւոյթ կրակարան տապոյ՝ բորբոք-
մամբ մեծաւ անզովանալի․ անտեսական իմն քրոյս
հալոցաց՝ սաստիկ եռացմամբ անշիջանելի․ սլաքս նե-
տից պատկանեալ դեղովք՝ ՚ի շտեմարան խորութե
սրտի․ խիթք ցաւոց խոցոտման մահու՝ ՚ի գնացս ե-
րակաց գոյութեան լերդի․ կիրք երկանց անճարակ
ճեպոյ՝ ՚ի պատուած աղեացս անելանելի․ անզօրելի
դեղոց ջերմութի՝ ՚ի յերիկամանց մասունս երկակի․
անճարաւոր դառնութիւն մաղձի՝ ՚ի նախադուռն
իմոյս կոկորդի․ Լաղս ձայնից լքուցանողաց՝ ՚ի
փողս շնչոյս խոշորս ծնչի․ բազմահատուած էութի
բնութեանս՝ ներհակք միմեանց ՚ի պատերազմի․ երկ-
չոտութե կարծեաց վարանեալ՝ ամենայնիւ կայ ՚ի
վտանգի․ հարազատաց դաւաճանութի՝ անհաշտելի
՚ի կոտորուածի․ ոչ մեռեալ եւ ոչ կենդանի՝ թա-
ղեալ ՚ի մեղաց գարշութեան տղմի․ կասկածաւոր
պատժապարտութեամբ՝ վերակնարկելով քեզ բարե-
րարի, յանակնկալս կենաց վհէ՝ արտաբերել ՚ի լոյս
անձկալի․

4 Նոյն ինքն որ զայս՝ բան տպաւորեաց, ընդ եր-



ջան

ջանքա՛ ցըն պըսակեսցի • ակնարկելով քո ողորմութեն, անարատ՛ ցըն հաղորդեսցի • վասն զենման այ բանիդ, բարեգործեալ՝ քեւ կենդանասցի • օրհնութի՛ գովեալ քո շրթանց՝ 'ի գլուխ բաշխողի՝ սոյսր մատենի • հաստատեսցի ըղձականութիւն՝ սողոմոնեան բանիս առակի • Նկարագրեալ հոգւով քո՝ բարձրեալ 'ի նորոգումն անեղծանելի • Զի դու միայն ես երկայնամիտ, ներող՝ քեզ փառք յաւիտ • ամէն •

---

† Ա ծերունին ցուցեալ նշէին հեծուրէ՝ նորին հանգչի, առնոյն աշէրը ձողբանոյ բանի • 'ի խորոց սրտից խօսի՝ ընդ այ •

### * Բան • ԻԸ •

1 Եւ քանզի ընդ ողբաձայնիցն բանաստեղծութեց վերընծայելոց գրութե թուոցս յարմարեցի կական եւ հեծութի, հառաչանք կողկողագինք, դառնութե լալումն եւ արտասուաց երգ, դարձեալ սկսայց զձայն պաղատանացս՝ խոստովանօրէն զղջականաբար, զգաղտնածածուկն յայտնաբարբառ • զի անդրադարձութ սկզբնամբն եւ վերջաւորօքն բառիւք, զնոյն համաձեւութ 'ի մի թախանձ նմին մաղթանաց՝ հոգեկեցոյցն խոնարհութեան՝ աստանօր եդից •

2 Մեղայ մեծիդ բարերարութե, անարգս մեղայ • մեղայ ծագմանդ ճառագայթից, խաւարս մեղայ • մեղայ շնորհացդ անբաւ երախտեց, արդարեւ մեղայ • մեղայ սիրոյդ վերնում գթութե, յայտնապէս մեղայ • մեղայ ստացողիդ յոչէութէ, ստուգապէս մեղայ •

մեղայ գերունի դոգոյդ գրկանաց, անքաւս մեղայ.
մեղայ աննուաստ լուսոյդ վայելման, նենգօղս մեղայ.
մեղայ ճաշակման անճառ կենաց, բազում մեղայ.
մեղայ անհաս պարգեւացդ ձրից, հանապազ մեղայ.
մեղայ գովելալ մարմնոյդ տ̃յ, մահու չափ մեղայ.
մեղայ պաշտելի արեան արարչիդ, խոկապէս մեղայ.
Ահա արդարեւ օրհնեալ է հաստուած բանի՝ յու_
սադրական սրտի՝ այսր մեղայի. այն սա՝ պատուելի
աւանդ. անմոռաց պատուէր. հայրենեացն աւուր.
նախահարցն օրէն. համոյնից թօշակ. անհերքելի
բան. զօրաւոր պատասխանի. կենդանութե կամուրջ.
անխորտելի վերնոյն. սիրելի որբոց. անխզելի կապ.
հրաշալի բարբառ. անշրջելի պատճառ. բաղձալի ա_
ղերս. փափաքելի սեղան. սրտաբեկ ճնշումն. անճա
րեց ճարակ. կարծրութե վանիչ. ա̃ծապաշտից սահ_
ման. հեթանոսաց գիրք. վաղնջուց կանոն. քրիս_
տոնէից հարազատ. արարչութեն յաղթօղ. անջրպետ
հզօր. խորոց ահաւոր. արուեստ բարձրութե. խո_
րութի անչափ. հիացման սեսիլ. խորհուրդ կըն_
քեալընդ որ չէ՛ք ումէք անցանել, եթէ ոչ անըմբռ_
նելի մնաց արարման՝ զաս ծանիցէ. Զայն բարե
պաշտ հրաշաւորական, որ ոչ կրկշտակեցաւ՛ի վեր
ջին դատաստանիք դասուն լքելոյ. գուցէ առ նմին խը_
ղեալ համառօտ զվերծակն իրաւանց մահուն հա_
սելոյ, յորմէ ընտրութին ապագործ եղեալ, զահ_
մանն յաւիտենական քակտեսցէ: Որդ փառաց
ծնութե, որով նոյն ինքն ա̃ծութիւնն պատկեալ
բարգաւաճի. Քանզի ո՞չ որք դիմեալ կալան զեղ
ջերաց սեղանոյ այսր սրբութեան, և ոչ առժամայն



պըր

պրծեալ 'ի պատժոց՝ անարատ գտաւ։ Իսկ եթէ ա-
քար զարմեան, և սաւուղ կիսեան, և յուդա սիմո-
նեան՝ ասելով զայն ոչ արդարացան, և ես վկայեմ՝
իրաւամբք խոստովանեալ զայս պայման բանի, զի
ակամայից բռնադատելոց՝ ոչ է կատարեալ սէր,
ուստի և ոչ բովանդակապէս փրկութիւն։ Իսկ ես
կամաւ համբուրեմ դարձեալ կրկնելով զերջանիկ
բանիդ զմկրտութե֊ հարազատս։

3 Մեղայ երախտեացդ մոռացութե֊, վերստին մե-
ղայ. մեղայ մարմնոյ ձեռն՝ հոգի հարեալ, յի-
մարս մեղայ. մեղայ առ կեանսդ դժրողութեան,
իսկ և իսկ մեղայ. մեղայ բանիդ ապախտ առնելոյ,
չարաչար մեղայ. մեղայ 'ի յօր սատակման՝ ինձէն ըն-
տրպեալ, վատթարս մեղայ. մեղայ պարտականս ան-
կենդան մահուն, ձաղելիս մեղայ. մեղայ անպատ-
կառս քո բարձրութ֊, տաղտկալիս մեղայ։ Վերջին
ինձ կրկին աշխար հոգևոր, զի 'ի կորուստ և 'ի կոր-
ծանումն ինձ երևեցայ. զի անդարձ վարատեցայ.
զի որդիս՝ թշնամի գրեցայ. զի 'ի բարձանցն երկնից
ընկեցայ. զի փուշս վարուց դիզի։ Ու ես առ ամեն
ողբք աղաղակի, զի անձամբ զանձն անարգեցի. զի
բադին կորուսչին գտայ. Ո՜վ իմն կսկիծ դժըն-
դակ սրտի, զի զիս ունիլն՝ առ որ չեմ, զարտաքնա-
յարդար բաժակս անմաքուր, զքռեալ որմս դար-
շունակ, զսին պարծանօք պաճուճեալս, զայս՝ 'ի
մոայլ շրջեալ, զգերանակիր ակնս՝ թշուառացեալ,
զջահս փառաց՝ շիջեալ, զամբիծս յամենայն իրօք վնա-
սակարս, առ անօրինականսն տրունականս. առ յայտ-
նութիւն ամօթոյինս. առ երևմունսն արարչադիրս.



առ

առ խոնարհութիւն սարսափելիս. առ այն՝ զոր տեսի աչօք իմ իմովք. Ո՜ւ որ մեծ է պատասխանատուութիւնս, քան առ համօրէն աւետարանին՝ զարմանս, հիացմունս. հոգս հալողականս. անդաձմունս անճարաւորս. Թուականութիս՝ մտաց անբարդելիս. երմունս անկատարս. իջմունս անհաստատս. յուսահատութիս յարմարականս. յանդիմանութիս պատշաճականս. ձաղանս պատեհագոյնս. նզովս իրաւացիս. անէծս արժանահատոյցս։ Արդ՝ այսոքիկ են մեղաւորիս իմ կշտամբութիւնք, և ինքնահարուած տանջանաւորութի։

4 Արդ քանզի կարօղ ես զայս ամ զպարտս Թողուլ, և զխայթոտածս մահու բժշկել՝ տէր ողորմութեանց, ամ բոլորից, քն Թագաւոր՝ բարձրեալ հօր որդի, ստեղծիչ գթած՝ բարերար, օրհնեալ՝ առատ հարուստ, ահաւոր՝ հզօր՝ ողորմած, տեսուչ ձեռն կալ՝ հաստիչ, ապրեցուցիչ՝ դարմանիչ՝ կեցուցիչ, երկայնամիտ՝ անոխակալ՝ ապաւէն, բժիշկ՝ գովեալ՝ երկնաւոր, անճառ՝ լոյս՝ կեանք, յարութի՝ նորոգութի՝ քաւութի, եթէ հայեսցես մարդասիրութ, ըստ որում քոյդ են սովորութիւք, նայեցեալ 'ի քեզ կոչեցեալ և ես։ Եթէ լուիցես, հառաչեմ. եթէ ունկն մատուցանիցես, պաղատիմ. եթէ անսայցես, աղերսեմ. եթէ ներեսցես, աղաչեմ. եթէ առիս դառնայցես, գոչեմ. Ապա եթէ անտես առնիցես, կործանիմ. իսկ եթէ առ ոտն հարկանիցես, լամ. եթէ զոգեպահն ոչ ընծայեսցես, մեռանիմ. ապա եթէ ահարկու դէմս ցուցանիցես, սատակիմ. իսկ եթէ սաստեսցես, դողամ. եթէ խեթիւ տեսանես,



առս

տոկամ. ապա եթէ սաստկանաս, սարսափեմ. եթէ
հալածես, հեծեմ. իսկ եթէ ընդվայր հարկանի-
ցես, հեծծիմ. եթէ զբոց վհատութեան ոչ առցես,
տագնապիմ. եթէ խոստանաս, փախնում. ապա եթէ
սպառնաս, ընկճիմ։ Իսկ եթէ քննես, քարկոծիմ.
ապա եթէ ուժգինս ակնարկես, սուզանիմ. եթէ
ոչ անխնայեսցես, մերժիմ. եթէ կոչեսցես, խիթամ.
իսկ եթէ աչս յառեսցես, ամաչեմ. եթէ ձայն տա-
ցես, երկնչիմ, զբարեացն պարգև մատնեալ. զերա-
նութիւն թողեալ. զշնորհն լքեալ. զուխտն ցրեալ.
զաւանդն կենաց՝ մոռացեալ. զհամարձակութեանն
վստահութի՝ կորուսեալ. զստեղծիչդ էիցս՝ բարկա-
ցուցեալ. զանձառուն շնորհին՝ ընդոստնեալ. ըղ-
պատուոյն պատկեր՝ այլայլեալ։ Իսկ եթէ առ այս
խեղդ մահու հեծուն ցաւոյ մարդասիրեալ՝ առ իս
ժամանեսցուսցես՝ տէր յո՛ քո՛՝ զաղդեալն գիր ըլ-
նանիլ ՚ի յիս, եթէ բժշկութիւն դադարեցուցանէ
զմեղս մեծամեծս, որով ամենառատ քաղցրութեամբ
պատուհասեալ ՚ի քեղ, զքոյդ կերպարան լուսոյ նը-
կարեալ յոգի՝ վերստին գտեալ պնդեցայց քաւել,
և ստեղծեալ կրկին ՚ի փրկութի անմահից կենացն
անախտականաց. և քեզ ընդ Հօր Հոգւովդ սրբով
փառք յաւիտեանս. ամէն.

† Ս. Երրորդին ցուցեալ չքնին հեծութեն՝ նորին հանգոյն, առ-
Նոյն աղերս խոստովանաց բանի. Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ.

## ※ Բան. ԻԲ.

1 Եւ արդ՝ զո՞րս յայտնեցից, և յաղագս ո՞յց
նշանակեցից, և վ՟ն ո՞րպիսեաց ճառեցից,
և զո՞րքան ծածկեալս մերկացուցից, և կամ
վ՟ն որո՞ց խոստովանեցայց. Զներկայի՞ցս՝ զոր ար-
դէն ունիմ, թէ զանցելոցն՝ զոր մթերեցի. զապա-
գայի՞ցն՝ յորոց կասկածեմ, թէ զբազմասահ շարժու-
թեանցն՝ յորոց գլորեցայ. զփո՞քրն ինձ համարեալ՝
որ է այն մեծ գրեցեալ, թէ զանկերպագրելին չը-
յիշատակելի. զնո՞ւազն՝ որ է առաւել, թէ զթեթևա-
գոյնսն՝ որ են ծանունք. Զհոգեկանա՞ցն կրից կո-
րուսչաց, թէ զմարմնականաց ախտից սպանողաց.
զառ դրունս հեշտականա՞ցն, թէ զծայրակատար վը-
նասակարութեանցն. զաներևութի՞ցն, թէ զտեսակա-
նացն. զառ ձեռն հպաւորութե՞ն, թէ զառ նոյն ինքն
շունչ հեռաւորութիւն. Զլայնականն դիւրին
խածմունս, թէ զերկարաւորն նեղաձգութի. զխո-
րութեանն զանչափութի, թէ զամենածաւալն յոյ-
նատեսիլ. զյղքնագլո՞ւխն պոռնկութի, թէ զառող-
ջութենն անբժշկութի. զպարարումն չարին մարմ-
նոյս, թէ զսովին բարւոյն հոգւոյս. զխնամո՞ցն
հանդիսանալ՝ յոչ ախորժելիսն այ, թէ զբռնադա-
տութեանն տռամբ ձգելո՝ ի նոյն մոլեգնութի.
զառ ի մա՞նն մեղաց, թէ զընդունայնութեանն
կարծեաց.

2 Արդարև ոչ կամաւ խելագար զերծել ի ձորձոյ,

զաւակնացս տեսիլ յանդիմանեցի, զընդդէմն դոր-
ծեալ իմաստնոյն, որ՝ թէ հանճարեղքն վերարկես-
ցեն զամօթս իւրեանց, օտարացեալս ՚ի կրօնից. հե-
ռացեալս ՚ի կարգաց. ՚ի սրբութե̅ անսուրբ. ՚ի կու-
սութեան անմաքուր. յարդարութե̅ ամբարիշտ. ՚ի
բարեպաշտութե̅ մեղսապարտ. բերանովս մերձ առ
ստացողն, և հեռի երիկամամբք. շրթամբքս պատ-
ուամատոյց, ըստ մարգարէին, այլ ոչ եթէ սրտիւս.
Եւ եթէ պարտ է զքստմնելեան ասել աստանօր,
չար քան զտանջանսն յանդգնութի̅, իբր զուր իմն
պաշտօնատարս տ̅ր, ՚ի միտս անկայունս երկեակ ճա-
նապարհաւ մահու վարանեալս՝ ջանամ, և ոչ ինչ
օգտիմ. պնդիմ, և ոչ հասանեմ. փութամ, և ոչ ժա-
մանեմ. անձկամ, և ոչ տեսանեմ. փափաքեմ, և ոչ
հանդիպիմ. կարօտիմ, և ոչ պատահիմ. ունիմ զ̅մ
երկրի, և եմ պատգամաւոր աղօթանուէր ա̅մ աշ-
խարհի. Այլ թող զբազումս զայսոսիկ՝ բարբերար,
և մի՛ ունիցիս. դիւրինք են քեզ զսոսին եղծանել,
քան ինձ տաժանաւորս աջով նկարել. վ̅ն այնորիկ
գրեցի առանց խնայելոյ, զի դու առատապէս ջըն-
ջեսցես՝ օրհնեալ. Որ վասն մեր մեղաւորացս եր-
կայնամիտ անուանեցար, ըստ մաղթանաց բանի՝ հե-
ծութե̅ սրտի՝ եզրի երջանկի. յոյժ նեղեալ անձն
և ձանձրացեալ ոգի՝ բանին յիշատակաւ, որ զայն
պատմէ. յո̅մ կրից մահացուցանողաց վտանգեալ,
անկեալ ՚ի վե̅հ գարշութեան մեղաց՝ անդնդականաց
ապականութե̅ց. քանզի չհաւատամ, թէ լսես իսկ ինձ,
ըստ յոբայ ձայնին. Որդ՝ ես ինձէն ինքնադատաւոր
անձնադատ գերի՝ կամաւորապէս մատն եղեալ



բնու

ընունես, արգելի փակեցի կնքեցի առ յինէն՝ յամ մասանց՝ զկենացն ծնար, զի 'ի փրկութ՟ մեղաց կայցե լոյս՝ կրկին մեծասցիս գովեալ.

3 Ու քանզի 'ի մարգարէէն բարուք խրատել փորձ գտցուք, մաղթել ընդ նմին հոգւով քո երգեալ՝ յուսով հաստատնով 'ի քեզ ապաստանեալ, առէք ընդ ձեզ բանս, ասէ ոմնէ, և դարձարուք առ տ՟ր ա՟ծ ձեր, և ասացէք ցնա, կարող ես թողուլ զմեղս. զի ընդունիցիք զբարիս, և փոխելեսցեն 'ի բարութ՟ անձինք ձեր. Ո՛հ ա՟ծ խօսեցաւ, և ո՛չ է որ ոչ լուիցէ. նոյն ինքն վկայեաց, և ո՛չ է որ ոչ հաւատասցէ. Որդ՝ սրտքին վճիռ պաշտելի. նուիրեալ պայման. սահման նոյնագոյ. կենաց աւետիս. կէտ տէրունի. դուռն բարութ՟. սփոփանաց հրաւէր. ճշգրիտ պատկեր. անստգիւտ գանձ. անմոռաց յիշատակ. Ի յոռ առ սոյն և ես հաւատ ընկալեալ, աստուածավկայեմ ամէն՝ ընդ մարգարէին, կարող ես յամի թողուլ զմեղանս բազմաբեղունս. և ևս զօրասցի՛ս կրկին բարձրացեալ՝ առ ամենակեթըղուստ կործանեալ հոգիս. Զամի իշխես. ամի բաւես. ամ ուրեք հասանես. ամենից բանուեց յաղթես. զամ կարծրութ՟ փշրես. զամ ընդդիմահարկանես. զամ խստութիւն կակղես. զամ սրացեալ ընդոմնես. զամ դառնին անուշես. զամ դժնդարամիջեկլիս քաղցրացուցանես. զամ զպարտս շնորհես. զամ յանցանս թողուս. Կարող ես՝ զօրաւոր հզօր ծնարաւոր ամենաբուեստ՝ զամենեցուն զմեղս ընկլուզել՝ և չքացուցանել բառնալ 'ի միջոյ, եթէ ըղձանձանչ փոքու կայծակին՝ սահմանեալ 'ի չափ ոչէից

անկեալ ընկլուզեալ կորուսեալ՝ ՚ի տիեզերատարածն ծովու.

4 Որ՝ բանիւ մաղթանաց վերծանողացն այսմ մա-տենի, ողորմեա՛ վասն խաչի և չարչարանաց մահու որդւոյ քո՝ հայր գթութե. Ակնկալն առաքողի՝ որ բերդութե ձայնի՝ այսմ արտօսրածին նուագի, որ զոյս դեղ փրկութեան կենաց՝ մեզ յարմարեցոյց, եղիցի՝ բժշկեալ յանուն քո հզօր. Որ հետս ելից խոստովանութե մեզ նկատեցոյց՝ այսու պայմանաւ պատշաճականաւ, լիցի՝ անարատ յիւրոցն պարտեաց. Որ շնորհատուէն թևս՝ հարթել մեզ վարդապե-տեաց՝ ՚ի այն կանոնի կենաց պատգամի, եղիցի՝ զեր-ծեալ ՚ի չար կապանաց մահու արկածից սկզբնակա-նաց՝ վերջնոց՝ և միջնոց, երրորդութէդ բարեգոր-ծեալ, ի նորոգումն լուսաւորութե. ընդ որում և մեք գրեսցուք երջանիկ գտեալ ընդ սմին.

[illegible]

5 Որ՝ այսքանեացս անբաւից հրաշից հանդերձից հայր ամենատեղծ՝ անունդ ահաւոր. ձայն սարսափելի. կոչումն ընտանի. բան համբուրելի. ազդումն սքանչելի. հրաման սոսկալի. էութիւն ան-քննելի. գոյութիւն անձառելի. խոկութիւն անբաւելի. զօրութիւն անըննելի. կամք ամենաբարի. տէրութիւն անսահմանելի. մեծութիւն անչափելի. բարձրութիւն անբովանդակելի. ողորմութիւն անկշռելի. առաւե-լութի անհասանելի. պատճառ որդւոյ հայրութէ, այլ ոչ նախադրութէ. քեւ՝ և ՚ի ձեռն քոյդ անպա

 րա

րագիր զօրութեդ՝ սաստեա տագնապօղ և դիւա_
կան տենդիս ջերմութեան, որ սպրդեալ մուծա_
ընդ մեղաց՝ զի փախիցէ 'ի մարդոյս, զարհուրեալ
'ի սխրալի և յանբաւելի արեան վտակի՝ դառնինդ
երկնաւորի. որով սրսկեալ յանդամ 'ի մշտնջենա_
ւորս՝ համայն մաքրեցաք.

6 Եւ արդ՝ յոյս պատկառելի խոնարհութենէ ա_
բարշակերտս խորհրդոյ, ամաչեցէ սատանայ 'ի
գործս չարեաց իւրոցն հրեշտակաց. տանջեցի՛ և
հալածեցի՛, հեռացեալ և արտաքս առաքեալ 'ի շինէ_
ուածոյ խորանէ քումդ բնակութեան՝ յարտաքին
խաւարն։ Եւ ջնջեալ մաքրեա զարտասուս ողբոցս
'ի դիմաց մերոց, և զհառաչումն ձայնիս հեծութե
'ի սրտից մերոց. Եւ յիշատակաւ հարման հեղու_
սիցն՝ քստմնափուշ տաժանատեսիլ ոդեպահանջից,
որով պնդեցաւ միածինդ քո յաշտարակ խաչին, ցա_
ւեացի՛ չարին. Եւ 'ի կողահերձ սայրասուր սլաքէ
ուժգին բախմանէ, որով զվէրն մեծ ընկալաւ, խո_
պնոտ սատակեացի ակզբնարար մահուն. Եւ զի խո_
նարհեցոյց զգովեալն գլուխ՝ յաւանդել զոգին 'ի
ձոց քո՝ բարձրեալ, ապստամբութ անբարի բարուցն
բելիարայ՝ 'ի կոր կործանեցի, ամիւ հերքեալ 'ի կը_
րուստ. Եւ զի զօղեալ ծածկեցաւ անմահն խոկու_
թիւն՝ յորովայնի երկրի, այսու ամբարձեալն հպար_
տութի՛ կործեալ դառոզին՝ 'ի յատակս մահու դը_
ժոխոց՝ մթին սանդերին՝ յառեալ դիւանեցէ. և յի_
շեացէ՛ զառաջին հարուածն անբժշկական, որով մա_
հացաւ դիմամարտութի թիւնից վիշապին՝ կենա_
բարն կրիւք ամենազօրին։ Նման զի 'ի փառս քո՝



հոյր

հայր ողորմութեն , եւր 'ի գովեստ որդւոյ քոյ՝ հո-
գւովդ սրբով վայս խոստովանիմ · քանզի ոչ պի-
տակ ինչ առնել զօրութեանն ունի զմիւսմէն՝ առ մի-
խորհրդականն խորութեան , այլ զանսկզբըն բանդ-
անձնաւոր՝ ընդ անժամանակդ հօր փառաւորեմք ։
Եւ քեզ միայնոյ որ երրորդութեդ , հաւասարա-
պատիւ տէրութեդ , համարուն՝ անբաժին ինքնու-
թեանդ՝ օրհնաբանութի , գոհութի , զօրեղութի , եւ ան-
ճառ վայելչութի մեծութե , բարեվայելչական հարթութե ,
զուգակշիռ հաւասարութե յաւիտեանս ·
ամէն ։

---

† Մ ձերատէն յաւելուած կրկին հեծութե՝ նորին հանգոյն , առ-
նոյն ապէրս մաղթանաց բանի ։ 'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ ։

## ※ Բան · ԻԹ ·

1 Եւ արդ՝ դու միայն ակնկալըն բարեաց՝ գը-
թութի անճառ՝ որդի բարձրեալ միոյդ այ ,
որ զողջոյն զօրն՝ թողութե ցուցեր փըր-
կարան , եւ ոչ կորստեան դատապարտարան , յեղանա-
կեալ ինձ զաւուրն չար՝ առ մեծ աւետիս ակնկա-
լութեան ։ Ընծիւղ՝ ախտացելոյս · հովիւ՝ մոլորեալ
ոչխարիս · տէր՝ ապաւինեալ ծառայիս · գինի անա-
պակ՝ մեծ տրտմեցելոյս · ապեղանեաց դեղ՝ վիրա-
ւորեցելոյս · ազատութի՝ մեղօք գերաւելոյս · օրհ-
նութի բարեաց՝ մերժելոյս · կնիք շնորհաց՝ խոտե-
լոյս · ծնունմն կոչման՝ կապտելոյս · կանգնումն վե-
րըստին՝ կործանեցելոյս · պատսպարան հզօր՝ գերե-
ցելոյս · օժանդակ վեհ՝ գայթակղեցելոյս · դուռն
բարձ

բարձրութե՛ տարակուսելոյս · սնդուխք երանու-
թեան՝ եղկելոյս · ճանապարհ շաւղաց՝ մոլորելոյս ·
Թագաւոր ներող՝ պարտելոյս · քաղցր յուսադրութի՛
լքելոյս · ձեռնկալ կենաց՝ հեղձելոյս · Ա՛ծդ միայն՝
և ամենառատ, որ զլիութի՛ բարեաց սահմանեալ,
հեղուս անչափ յաճախութե՛՝ քան զոր խնդրեմք և
իմանամք, ըստ պօղոսի գոհաբանութեն · Քանզի
իննուց յիսնից՝ և թուոց երից՝ և չորեակ տասանց՝
՚ի վաղորդայնէ տուընջեանն՝ առ մուտս արևուն,
անդուստ առ նմին յաւէտ կարկառմամբ՝ իսկ և իսկ
՚ի սոյն՝ անարգել սրտիւ, ՚ի վեր է քան զաղերսանաց
ակնկալութի՛ մարդկան բարեգործել միմեանց շնոր
հատրութի · իսկ առ իմս թշուառութե և անար-
գութե՝ զքոյդ եդեալ փառս՝ ամենակարող զօրու-
թիւն ահեղ՝ բոլորից ա̄ծ՝ օրհնեալ տ̄ր ք̄ս, որմք
սահմանեցի կշռութե՛ չափոյ՝ հաստողիդ ընդ հա-
ղոյս հաւասարութի՛ կցորդեալ. Քանզի մեծ յոյ-
սոյն անբաւ և անհետազօտելի, ամենեւին բարի՝
անմասն բարկութե խաւարի · ուստի յոյժ նուազ են
քում մեծութե՝ աստեղացն թիւք, զորս գոյացու-
ցեալ յոչէից, յորջորջմամբ անուանց կնքեցեր · և
կամ հիւթ երկրի ՚ի յօդս հեղեալ, զոր ՚ի չգոյից
հաստեալ, տարածումն յատակի կառուցեր, քան ինձ
նախագրեալ համարդ սակաւութեան, որովք քեզ
նմանիլ վարդապետեցեր.

։ Ա. Հա՛ ծածկեցաւ և ընկղմեցաւ ՚ի քոյդ լոյս կա-
մաց երկայնմտութե՛ հանուրց չարութի, իբր
դոյզն մայլ՝ ՚ի տապ արևու · և ոչ աստուստ իսկ
կիրք բնութեանց զհասարակաց բարուց ցուցանէ.

Բանզի ո՞վ ոք 'ի մարդկանէ մեղաւ, և ոչ զղջա-
ցաւ. ո՞վ ոք զայրացաւ, և ոչ ամաչեաց. ո՞վ ոք դար-
շեցաւ, և ոչ պատկառեաց. ո՞վ ոք սխալեաց, և ոչ ու-
պաշաւեաց. ո՞վ ոք կործանեցաւ, և ոչ հեծեծեաց.
ո՞վ ոք գայթակղեցաւ, և ոչ սարսեցաւ. ո՞վ ոք պար-
տեցաւ, և ոչ ինքեամբ ըմբերանեցաւ. ո՞վ ոք պատ-
րեցաւ, և ոչ յոգւոց ելաւ. ո՞վ ոք ճաշակեաց լեղի,
և ոչ դառնացաւ. Ո՞վ ոք անկաւ 'ի բարձրութէ,
և ոչ ընդոստեաւ. ո՞վ ոք կորոյս մեծութի, և ոչ աշ-
խարեաց. ո՞վ ոք զրկեցաւ յերանութէ, և ոչ ելաց.
ո՞վ ոք կապտեցաւ 'ի շնորհէ փառաց, և ոչ ողբաց.
ո՞վ ոք գտաւ ինքեան վնասակար, և ոչ սոգւաւ.
ո՞վ ոք մերժեցաւ յերեսացն այ, և ոչ հառաչեաց.
ո՞վ ոք լուաւ զայ սպառնալիսն, և ոչ սոսկացաւ.
Ո՞վ ոք ընդ մի չարեացն՝ հազարս չուաղեաց. ո՞վ
ոք մերկացեալ յաւուրս ձմերայնոյ, և ոչ զոփացաւ.
ո՞վ ոք անօրինեցաւ, և ոչ քրամբք զմիտսն կոծեաց.
ո՞վ ոք ետես զտրուկն յիւրում մեծութե, և ոչ զկծե-
ցաւ. ո՞վ ոք կատարեաց չարիս, և ոչ զինքն իսկ նզո-
վեաց. ո՞վ ոք ախտացաւ, և ոչ զանձն դարմեաց.
ո՞վ ոք յանօթալեացն գործեաց, և ոչ զիւրն մարմին
ձաղեաց. ո՞վ ոք 'ի պատկառելիսն հպեցաւ, և ոչ
զօրն իւր անիծեաց։ Ո՞վ ոք զգործեցեալսն յի-
շեաց, և ոչ տապացաւ. ո՞վ ոք զգաղտնիսն մտաբե-
րեաց, և ոչ խորովեցաւ. ո՞վ ոք զծածուկսն նըկա-
տեաց, և ոչ մահ կորստեան խնդրեաց. ո՞վ ոք զան-
երևոյթսն կերպաւորեաց, և ոչ կրկին յերկիր կը-
րացաւ. ո՞վ ոք ընդ մեղացն հեշտութե՝ բոց անշէջ
ծնոցն ոչ խառնեաց, ո՞վ ոք զվնասակարսն բնութեն,
և

և ոչ պապակեցաւ. ո՛վ որ զկամս Ներգործեալին,
և ոչ սաստկման ինքեան աղօթեաց. ո՛վ որ զանձն
ածելին, և ոչ խռովեցաւ. ո՛վ որ զանկրելին էու-
թեանն, և ոչ թախծեցաւ. ո՛վ որ զմեծամեծսն, և
ոչ մաշեցաւ. ո՛վ որ զանբծութեն ապականարարսն,
և ոչ տոչորեցաւ. ո՛վ որ զտարագրութէն պատճառ-
յանցմունս, և ոչ տագնապեցաւ. ո՛վ որ զերեսացն
աղտեղի տեսիլ, և ոչ բարկութեան վերնոյն զանձն
պարտ վարկաւ. ո՛վ որ զմի 'ի կրեւորացն մեղաց յաչս
կերպացոյց, և ոչ զինուք մահու խոցեցաւ. ո՛վ որ
զխոյտառականացն, և ոչ վայրս վհատութեան ընդ-
հեծութիս ձայնին հիւսեաց. Ո՛վ որ յաղքոյական
գահոյից անանկացաւ, և ոչ կարկամեալ 'ի վայր գը-
լորեցաւ. ո՛վ որ ընդ պսակին պերճութեան՝ հող 'ի
գլուխ եղեալ, և ոչ կրկին չարչարեալ յոգի մա-
հացաւ. ո՛վ որ ընդ պայծառ պատմուճանին՝ քրձա-
զգած եղեալ, և ոչ տխրեցաւ. Ո՛վ որ զկեանս իւր
կորոյս, և ոչ արեան արտասուս երկնեաց. ո՛վ որ
ընդ արկանելեաց լուսոյ՝ խաւար զգեցաւ, և ոչ նը-
հաղեցաւ. ո՛վ որ 'ի վ̄ր ազգոյ սիրելւոյ ոչ թառա-
մեցաւ. Նա՛ այս կերպարանք ձեռագրագոյնք՝ պար-
տաւորիս յանդիմանութե, տխուր դէմ. քաղեալ
ճաճանչ. ցամքեալ խնդութիւն. երկծացեալ
շուրթն. անշքեալ տիպ. տրտմեցեալ ոգի. այլայլեալ
ձայն. կրկնեալ պարանոց. Նա՝ զի թէ որ զնկու-
թիւնն իսկ նշանակեացէ, ոչ անօրինէ անամբարտա-
ւան մտօ՝ անհպարտ սիրտ. Նախնդրող պարգևի՝
թշուառ. անաղերսալի պապքեալ. ինքնակշտամբելի
դեգերեալ. իրաւամբք սովեալ. արդարալուկ



քաղ

քաղցեալ · պատշաճադատ հարուածեալ · ինքնավկայ
մահապարտեալ · արժանապէս հանեալ · անձնանէծ
եղկելի ։ Այլ զայս թարգմանեալ ցուցանէ արդա-
րագործ փարիսեցին կշտամբեալ, և մեղապարտ մաք-
սաւորն բարեհամբաւեալ ։

3 Այլ արդ՝ եթէ զչարիսն ճշմարտութիւն բան-
սարկուին՝ դատողին զմեզ դայթակղեալս, զհուրսն
՚ի մեզ սերմանիչս առ օրն համարեսցի, զկորդ ոչ ըղ-
բարիսն անկեալս ՚ի մեզ հոգւոյ արուեստ՝ ՚ի խնա-
մակալութենէ կամաց կեցուցչիդ՝ ընդ որս գրեսցես՝
տէր բարեգութ, հզօր և յաղթող · քաւիչ մեղու-
ցելոց · կարող յամէ՝ առ ամ փրկութի ։ Եթէ զան-
դունդս առ երկինս փոխես, և կամ զխաւար մթու-
թեան ՚ի լոյս հաստատեսցես, եթէ զդառնութի լեղւոյ՝
՚ի մանանայի քաղցրութիւն կազմես, և կամ զկործ-
սասանկութեան վհատաց՝ ՚ի պարս դասու բերկրութեան հար-
սանեաց կարգես, դիւրինք և ճշմարտութք են քեզ
այսոքիկ ։ Այլ ևս քան զսոսին բաւես առ նոսին՝
տիրեալ համայնից ահաւորապէս · և քեզ փառք յա-
ւիտենից յաւիտեանս · ամէն ։

---

† Առաջին յաւելուած երկին հեծութեան՝ նորին հոգւոյ, առ-
նոյն ասէ գա ծաղկանաց բանի ։ ՚Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ ։

## ✻ Բան · Լ ։

1 Եւ արդ՝ ճշմարտեսցի բան քո՝ ողորմած՝
բոլորից Աստուած՝ ներող և օրհնեալ, ՚ի բազմա-
դրժելին դարձաւորութի աւուրն պատ-
կերի զղջման մեղաւորին, թէ և առ յետին խակ
շունչն

շունչն իցէ ընտրութի , և կամ 'ի մէջ չորրուեն փո-
խառնրութե ։ Մանաւանդ զի՝ դժնեայ կցորդս այս
անձնիշխանական՝ միշտ մարտիկ . խաբօղ շողքորթ ,
յարեալ 'ի սուտ , ըստ առակողին , արածօղ հողմոց
դժուարունելի . հաստողին փախչօղ . գերեալ որսո-
ղին . մոլեկան մարմնոյս՝ ներհակ տնկակից , յոգնա
պատճառեան ամենավարան . զոր քո՛ է գիտել զբա-
նեացն յաճախութե . Այս զկնի մեղանացն , ողորմա
գինս իմ ողբարկութիս վհատական՝ տաժանակոծս՝
բազմաւաղելիս , քո՛ առաջի տր գթարկութիս՝ դը
րեալս արտասուօք , թառանչս թշուառութեց կար-
գելոց՝ անբաւս չար վտանգից մեղսատագնապ պատ
կառեցելոյն .

2 Այս զի մի՛ կրկնաբանութիս 'ի շատխօսութե կըր-
թեսցի , առաւել քան զայն՝ այսու ողբալի .
քանզի ո՛չ երբէք համարձակի խնդրել իւր 'զար-
քայութի , այլ զտանջանացն թեթևութի . ո՛չ ընդ
կենդանեացն 'ի լոյս , քան թէ ընդ գերեզմանակա-
նացն՝ զդայական շնչովն 'ի խաւար . ո՛չ ընդ ամբար
ձեալսն , այլ ընդ բեկեալսն և ընդ խորտակեալսն ։
'Ի հանդստեան իւրում վաստակեա . 'ի խրախուե
ինքեան տրտմեցեալ . դիմօք ժպտել և մտօք խոցեալ .
կերպ 'ի ծաղր և անք 'ի յողբումն . երեսք զափոփանս
ձևացուցանէ և արտասուքն զդառնութիւն սրտին
ճշմարտէ . Բամպանակք երկու՝ յերկոսին ձեռսն ,
մինն արեամբ և միւսն կաթամբ ։ Երկու բուրս
նոցք կայծակնաւորք , մինն խնկով և միւսն ձենձե-
րին . Սկաւառակք կրկին կրաւորականք համօց ,
մինն քաղցու և միւսն դառնութե . Բաժակք զոյգ՝

Ս.



առ

ու երկուս բերմունս, մինն արտօսր և միւսն ծը-
ծումն: Տաշտք կրեցեալք 'ի ծոյրս մատանց, մինն
գինի և միւսն լեղի: Պարունք տեսանելեաց ներ-
հակաց, մինն 'ի լոյս և միւսն 'ի վերկրումն: Խմանութք
հաղորդականաց հակառակուէց, մինն արծարծէ և
միւսն շիջուցանէ: Հայեցուածք դիմաց երկուց,
մինն դոյզն ողորմանօք և միւսն անանխայելի բար-
կուէ: Համբարձումն երկակի բազկաց, ումն 'ի հար-
ուածս և ումն 'ի մերժումն: Պէմք կրկնակի կեր-
պից, մինն տխրեալ և միւսն ցասուցեալ: Աշամ-
բանք՝ ընդ միոյ երկու, մինն ասեացս և միւսն ա-
պառնեացն: Սպաւինութք կարծողականք, մինն
գոնէ և միւսն թերևս: 'Ի մի բերան երկակի բար-
բառ, մինն եղկուէ և միւսն խռովուէ: Երկուս
ազդմունս 'ի միում սրտի, մինն կեղակարծ յուսոյ և
միւսն ճշգրիտ կորստեան: Սոյն լրթացոյն ահազ-
նատեսիլ՝ կրկին տեղացմանց, մինն նետս և միւսն
քարինս: Ատոռումն ահեղ՝ երկոցունց բերմանց,
մինն կարկուտ և միւսն հրացան: Ցոյգ ցուագին՝
երկուց փոանդից, մինն լոյս և միւսն մէհու: Սա-
ւառ սգոյ՝ երկուց բողոքմանց, մինն սաստից և միւսն
սպառնալեաց: Արեգակունք երկու՝ 'ի յերկուց
ծայրից, մինն խաւարի և միւսն կիզման:

3 Եթէ հարուածոց աջ կառուցանէ, ինքեան վար-
կանի. և եթէ ձեռն պարգևաձիր, ոչ իւր ակն-
ունի: 'Ի պարծանս ուրուք՝ կորանոյ. յամբարձումն
գլխոյ՝ ընկճի. 'ի չարեաց յիշատակ՝ հեծէ. 'ի ճառս
մաքրոյ՝ պատկառէ. 'ի պատմութիս հանդերձելոցն՝
երերի: Եթէ օրհնի յումեքէ յայտնի, 'ի ծածուկ

զանձն անխծանէ. եթէ գովեստ յումեքէ լուէ, պար
սաւանօք զինքն կշտամբէ. Եթէ գովեսցի սաստ
կապէս, ինքեամբ ինքեն վկայէ. Եթէ հալեսցի ուժ
գին, սակայ հատուցումն՝ առաւել պարտուցն գը
րեսցէ. եթէ ըղձումն մահու ինքեան լինիցի, այո՛
ասէ, և դարձեալ կրկնէ. Եթէ որոգայթ մահու
ճայթեսցէ յերկնէ, հազիւ զդէմսն համբառնայցէ.
Զիւրոց իրաւանցն մատեան՝ խփեալ. զպատաս
խանութեանն յոյս՝ լքուցեալ. զհամարձակութեն
ընթացս՝ փակեալ. Եւ եթէ ոչ էր անփրկանաւոր
կորուստ գրելոյն, զիւրովին երկթալ ոչ ինչ դան
դաղէր. Արդարև վա՜յ մեղաւորին՝ որ տարակու
սեալ կայցէ ՚ի վե՛ր երկուց ճանապարհաց, ըստ հո
գելից բանի իմաստնոյն։

4 Եւ արդ՝ զիա՞րդ ոչ ողորմեսցիս՝ բարեգութ,
այսքանեացս ծանօթութեց՝ կողկողագինս հե
ծեծանաց, որ անուամբս այսու մեծացար, եթէ ողոր
մած եմես տէր. Ահա՛ առ չարութ̅ին գերելոյս,
բարութ̅ին քո. առ մահապարտիս դատմուն̅, քաղց
րութիւն քո. առ կորուսելոյս յուսմուն̅, ճառա
գայթ քո. առ յանդգնելոյս մոլուն̅, ողորմութ̅ի
քո. առ խաւարին մասնակցիս, հեղուն̅ քո. առ
կործանելոյս այցելութիւն, աջ քո. առ ընկղմելոյս
վերբերուն̅, ձեռն քո. առ բժշկութ̅ին անողջանալի
խոցուածոյս, մատն քո. առ պակուցելոյս պաշտպա
նութ̅ին, ոգի քո. առ ապախտաւորիս իմ վստահուն̅,
երկայնմտութիւն քո. առ օծումն ամենադժնէիս,
զօրութ̅ին քո. առ մեղաւորիս քաւութ̅ին, հրաման քո.
առ փախուցելոյս ապաւինութ̅ին, ոտք քո. առ սրացելոյս



ապա

պատսպարութեան, բազուկ քո․ առ վրիպելոյս առաջ-
նորդութեան, լոյս քո․ առ տարակուսելոյս հնարաւո-
րութեան, հանճար քո․ առ անխիծելոյս կրկին ստացումն,
օրհնութեան քո․ առ վհատելոյս քաջալերութեան, խրախոյս
քո․ առ վտանգելոյս մխիթարութիւն, բաժակ քո․
առ նեղելոյս ընդարձակութեան, կամք քո․ առ ատե-
ցելոյս կոչումն, սէր քո․ առ հաստատումն սասանեցե-
լոյս, բան քո․ առ հոգւով վիրաւորելոյս, կաթուած-
արեան քո․ առ աներևոյթ մթերս ցաւոցս, ակնար-
կութեան քո․ առ յուսահատելոյս անդրէն ընտրութեան,
իշխանութիւն քո․ առ պատուաստումն կտրեցելոյս,
կցորդութեան քո․ առ խաւարեալ մահու ծածկելոյս,
նշոյլ կենաց քոց․ առ խռովեցելոյս իմ հանդարտու-
թիւն, խաղաղութեան քո․ առ վայրագութեն օտարա-
ցելոյս, ողջոյն քո․ առ մոլորելոյս դարձաւորութեան,
ձայն քո։ Ո՜վ դու տէրն ամենայն գթութեան, և չէ՛ք
'ի քեզ մասն ինչ խաւարի․ և ոչ է բարութիւն ա-
ռանց քո․ և քեզ վայելէ փառք յաւիտեանս․
ամէն։

---

† Այս չէրաէն յաւելուած նչին հեծութեն՝ Նորին հոլովէ, առ-
նոյն ազէր խաղբանոյ բանի․ 'ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ։

## *Բան․ ԼԸ։

1 Եւ արդ՝ քանզի բազմացուցի պայմանաւ բա-
նիս՝ զաղէտ տագնապի հեծութեն ձայնիս
մեծ հառաչանացս՝ անսփոփելի իմոյս վշ-
տանգի, զի դու՝ ողորմած սկզբնահայրդ խոստովա-
նութեն անյայտ ծածկութեց՝ որդի Այ կենդանւոյ
որ

տէ̃ր յո̃ քո̃, քաղցրութ՛ նոյնեւցիս քաւել։ Արդարև
կարող ես․ Ճշմարտապէս բաւական ես․ եթէ կամիս,
հնարաւոր ես․ կամիս առաւելապէս, որչափ և կարես։
Զուարճանաս մեծապէս ընդ տալն, քան եթէ ընդ
առնուլն․ բազմանան քեզ գանձք ի ցրուելն, քան
ի ժողովելն․ յաճախեն ստացուածք քո ի սփռելն,
քան ի ձգելն․ կուտին քեզ համբարք ի տարածա-
նելն, քան ի շտեմարանելն։ Հաւատամ այսմ ա̃մ՝
տէր, գտանել քև ելք փրկութեան․ հաւատամ զա-
նարգս՝ ընդ պատուականին․ յուսամ ընդ աբրահա-
մու, և ընդ Աննայի․ զի միայն բանիւ քո հաւատաց,
և միայն քահանայապետին բարբառոյ անսաց։ Ա̃ծ
և ոմն՝ ի խորին ծերութ՝ անհամար որդւոց հայր
հաստատեցաւ, զառանցեալն և զամուլն արգանդ սա-
ռայի՝ անպտուղ պտղածին արգեան օրհնութեան՝
բազում ժողովրդոց՝ մարգարէից ե̃րց՝ և թագաւո-
րաց ընտրելոց՝ հայր յուսացաւ։ Իսկ միւսն՝ զան-
հանդերձելի երկիր՝ որովայնին սենեկի, եօթնեակ
զաւակօք բարդաւաճեցոյց․ որ է թի̃ւ մի անբաւու-
թեան, զընաւն նշանակելոյ զէութ՝ ա̃ծութեն յա-
րակայութ՝ սահման անհետազօտելի, և աւազանին
նորածին որդւոց՝ անհատ յորդութ։ Այս թի̃ւ
պանծալի՝ որում ոչ է կէտ կցորդի, և ոչ սպառուածոյ
վախճանի․ այլ կոյս ոմն է՝ ուրոյն ընտրութ նու-
րեալ՝ յաւէտ անձառ վերծանու հանգոյն յաւիտե-
նից, դժուարաթարգմանելի մերոց իմաստից։

2 Արդ՝ համարեա յորդորութ անյուսալի փրկու-
թեան հոգւոյս՝ զամենավարան ձայն կողկողա-
նաց պատիս հեծութ, ընդ նախադրելոցն երջանկաց

եղեալ և դասեալ զայս դաւանութիւն փոքր հաւա-
տոյ՝ խնդրոյս խնդրուածոց․ զի կեցից և ես առ նոքօք՝
բերկրեալ ընդ նոսին, բուռն հարեալ քան զիմոց
գործոց՝ դէպ շնորհաց․ Մանաւանդ զի՝ կրկին
բարձունք են և փառաւորք՝ և քան զչափ կշռոյն
բանի գերադոյնք՝ խնամն խռովուն հաշտարանք,
և հզօրապէս քաւարանք, և կարծեաց թերութեան
մնաց սրացեալք․ Ընդ արեան քո ահաւորի՝ և ըստ
մարմնոյ ծնողդ քո խնկելի․ Պարք առաքելոցն․ դասք
մարգարէիցն․ գունդք մարտիրոսացն՝ ձիաւորեալքն
հետևակք՝ սպառազէն արիութեամբ՝ մերկամարտիկն
մրցութեան․ գումարք միանձանց․ բոյլք բանականաց
ընտրելոց․ ժողովք բարեկրօնից․ հոյլք հոգեղինաց՝
յերկրէ երկնաւորաց․ զինուորութիւնք վերնականաց՝
ընդ մեզ կցորդելոց․ Աւանդք երախայրեաց․ մա-
տուցմունք զուարակաց․ լուցմունք ղամբարաց․ բուր-
մունք խնկոց՝ իւղոց հանդերձանքք․ յաղթանակք
փրկական նշանաց․ կառուցմունք խորանաց ա՟ծաբը-
նակաց․ Ձեռք քահանայից՝ շնորհիւ կատարելոց՝
առ շարժումն անձին յիշատակ ա՟յ․ առ փոփոխումն
գարշապարի․ առ կարկառումն աջոյ, և ամբարձումն
բազկի․ առ բարիս՝ գոհութիւն, և առ գթել՝ աղաչանք․
Առ բանս ընտանիս․ առ խօսս հասարակաց․ առ ձայնս
բնաւորականս․ առ գործոյ յաջողուածս․ առ առա-
քինութեան ջերմութիւնս, որ 'ի տուընջեան և 'ի գի-
շերի՝ ընթացմունս օգտակարաց հոգևորաց՝ քեւ ա-
ռաջնորդեալք․ 'ի ննջել և 'ի զարթնուլ․ 'ի պատե-
րազմի ազգաց․ 'ի մարտս դիւաց․ 'ի հակառակութիւն
հերձուածողաց․ առ փոքունս, առ մեծամեծս․ առ

ձգումն ըմպելեաց և ճաշակումն կերակրոց. և որ ինչ միանգամ 'ի կիրս մեր կերպանան, եթէ հեշտականն եթէ տառապանելին. վա՜ ոմանց աղօթս՝ ձայն 'ի նոսին, և յաղագս ոմանց՝ զի զերծ արասցես սքանչելապէս հնարիւք անճառիւք. հաւատացեալ յամենեցունց, թէ բաւական ես ամե. կաթնաբոյծ հասակաց, տղոց պատանեաց, մտաց վայրենեաց, ստամբակաց գոռոզաց, մինչ զի առ թատերս տեսարանաց, և առ կոյս խառնիճաղանճ բազմութեց, և կամ առ կուրաւս հոյթից անախորժականաց կամաց հզօրիդ՝

ոչ ես մոռացեալ.

3 Որդ՝ դու ստացար զամենեսեան, և քո են ամենեքեան, և ողորմեսցիս ամենեցուն՝ միայն բարեգութ. զի թէ և մեղիցեն, քո են, վա՜ զի 'ի քում համարի են, քանզի գիտեն զզօրութի քո, ըստ առակողին մաղթանաց. Որում և ես կցորդիմ թշւառս բանիւ՝ վկայեալ սրբին յանցաւորապէս. յանդգնիմ ասել, թէ որ կարդայ զքեզ գովեստիւ, ծանուցեալ զքեզ թէ իցես, թէ և եօթեամբք իցէ փարակեալ՝ կրկնապատիկ պատժաւորութե, առ այս օրինակ կիրթ ձեռնարկութե, զիարդ ոչ քո իցէ. Զորս է տեսանել 'ի մէջ արջնատես ագռաւուց՝ ըսպիտականիչ երամս աղաւնեաց. 'ի մէջ խորխտականաց ձիոց անմպքրից՝ ոլոռջս հանդարտաբարս. 'ի թխեշանց գազանականաց՝ գառինս նուխրեկիւ. Հեզութիւն 'ի խստութե. կատարելութի 'ի թերութե. խոնարհութի յամպարհաւաճութե. Ճշմարտութիւն 'ի ստութե. միամտութի 'ի մնկութե. անբծութի յոյլամտութե. բարօրութի 'ի չարութե. պարկեշ-



տու

սութիւն 'ի լկտութեն. ողորմութի յանդգնութեն. ապաշխարանք յանյուսութեն. քաղցրութի 'ի բարկութեն. հաշտութի 'ի թշնամութեն. անոխութի 'ի խածանո ղութեն. բաջալերութի 'ի լլկութեն. օրհնութի 'ի նեղաձգութեն. Զոր ոչ բաւականացայ երբեք 'ի դա տել ճշգրտապէս, թէ ո՞վ յերկրածնաց առաւել կան խեսցէ ժառանգել զքեզ, որ միայն անաչառաբար կշռամբես իրաւամբք զարդարութի առ ամբարիշտ մարդոյն, և առ պոռնիկ զղջացելոյն. առ ամենեսին բարեգործ՝ միայն թագաւոր օրհնեալ 'ի բարձունս, և յամ յաւիտեանս. ամէն.

---

† Աղօթքին յաւելուած յիշման հեծութեան՝ նորին հանգոյն, առ նոյն աղերս մաղթանաց բանի. 'ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ.

## Բան. ԼԳ.

1 Եւ արդ՝ ես յետնեալս 'ի նախադրութեց արժանաւորաց՝ գրեալ ինձէն ընդ պար տաւորսն պատժոց, հայցեմ զողորմութի ընդ ամենայն մաղթանաց. Ընդ նկունս և անհամար ձակս. ընդ տկարսն և փոքրկունս. ընդ ընկեցիկսն և արհամարհեալս. ընդ տարագրեալսն և առ քեզ դարձեալս. ընդ երկուացեալսն և ճշմարտեալս. ընդ կործանեալսն և յարուցեալս. ընդ ընկճեալսն և հաստատեալս. ընդ գլորեալսն և կանգնեցեալս. ընդ մերժեալսն և ընկալեալս. ընդ ատեցեալսն և կոչե ցեալս. ընդ ապշեալսն և զգաստացեալս. ընդ անա ռակեալսն և զսպեալս. ընդ հեռացեալսն և մեր ձեցեալս. ընդ հերքեալսն և սիրեցեալս. ընդ պատ



կա

կառեալսն և զօճարթացեալս․ ընդ ամաչեցելոցն և
խնդամոլեալս․ Այլ ես պատմեմ աստանօր դար-
ձեալ՝ ոչ զմեղսն երուսաղէմի, ըստ մարգարէին հը-
րամանառութեանն, որ առ ժողովուրդն նախկի, և
կամ տանն յակոբու զանօրէնութիւնս նր̄, այլ խմբոյս
ժամանեցից յայտնութե̄․ քանզի ուստ ընդ աղէտս
մահու յարելով, ըստ մարգարէին, յանդիմանեցից
զիս ինքն՝ ինձէն իմովս ձայնիւ, ըստ սաղմոսողին․
ով զի յանձնառական յայսմ համայնապատում խոս-
տովանուէ՝ ոչ կարօտացեալ կրկնակին, միանգամայն
իսպառ սրբեցայց՝ օրհնեալ հրամանաւ էիդ․
2 Նու արդ՝ կրկնելով ծունր բարերարիդ քաղցրու-
թեան, տարածեալ զանձն իմ առաջի, զ'ի մահ
գլորմանն ցուցից կերպարան․ որ 'ի հող խոնարհեալ
մածոյ ընդ երկրի, և ընդ անցաւորս այս կենցաղ
կորստեան՝ անասնական գետնաքարշութեան սողնոյ
սահեցմամբ՝ կամօք բեւեռեցայ․ Այլ 'ի քեզ տէր
յեցեալ՝ իբր 'ի հաստարան կենաց գաւազան՝ 'ի յար
մատոյն դաւթի ընձիւղեալ մարմնով անճառ շաղ
կապմամբ յանեղ ա̄ծութիդ, կանգնեցայց անդրէն
կիսայր՝ պատկառեալ 'ի քոցդ երախտեաց՝ 'ի վայր
կորացեալ դիմօք, աչք 'ի բարձունս յառեալ ողոր-
մածին տեսութե̄ 'ի քեզ՝ մերձ 'ի հեծութի, բնա-
ւին ողորմութի̄, բոլորովին քաղցրութի̄, զլիձ լու-
սոյս արտասուօք լցեալ՝ պաղատանս յուսոյ առաջի
մեծիդ վերընծայեցից․ Լուր ամենասատ անձն
ճաշ երկայնմտութեամբ՝ քո դառնացուցչիս, միայն
դու 'ի յամի սահման փրկութե̄, ա̄ծ բոլորից․ ան-
ճառ մեծութի̄․ անբովանդակելի բնութի̄․ անքննելի



իս

խոկութի · հզօր զօրութի · կարող բարերարութի ·
անպական լուսութի · անձառ ժառանգութի · վայել
չական վիճակ · առատ պատրաստութիւն · անստուեր
իմաստութի · անհնչալի տուրք · անձկալի ձիր · բաղ
ձալի երկրութի · անտխուր հանգիստ · անտարակոյս
գիւտ · անկապուտ կեանք · անծախելի ստացուած ·
անփոխանորդելի բարձրութի · ամենարուեստ բժիշկ ·
անսասանելի հաստատութի · Դարձուցիչ մոլորելոց ·
գտիչ կորուսելոց · յոյս ապաւինելոց · լոյս խաւա
րելոց · քաւիչ մեղուցելոց · ծածկարանդ փախուցե
լոց · անդորրիչ խռովեցելոց · փրկութիդ մահացելոց ·
արձակիչդ կապելոց · ազատիչդ մատնելոց · պատու
պարանդ սահեցելոց · վերակիցդ գայթագղելոց · եր
կայնմտութի տարակուսելոց · Լուսոյ տեսակ · ցըն
ծութե ցոյցք · օրհնութե անձրև · հոգի երեսաց ·
զօրութի դիմաց · հովանի գլխոյ · շարժարան շըր
թանց · ազդուամն բանի · կառավար անձին · բարձուամն
բաղկի · ձգուամն ձեռին · երասանակալդ սրտի · Ըն
տանի անուն · մերձաւոր ձայն · կցորդութի հարա
զատ · խնամածութիւն հայրենի · խոստովանեալ ա
նուն · պաշտեցեալ պատկեր · անպարագիր տիպ · եր
կրպագեալ տէրութիւն · բարեբանեալ յիշատակ ·
խնդուն մուտք · անվրէպ շաւիղ · փառաց դուռն ·
Ճշմարտութե Ճանապարհ · երկնաձեմ սանդուղք ·
Այս ոչ բազմութիւն բանից գովեստից անհամար
կարգաց՝ և տանց անբաւից, զոր ոչ բերէ բերան
երկրածին, և ոչ տանի գործի մարմնեղէն, և ոչ
կշռեն իղձք հոգեղէնք։

3 Մաքեղ հայի առ ակն տեսողի Ա՛ծդ ամենայնի ·
նոյ

նուէմ 'ի պաղատանս հառաչման ձայնի քոյոց ծա_
ռայից, և թէ յաղախնեաց ոք աղաչեսցէ։ Նաև ըն_
կալ զցօղ ողբերգութեան լալոյ արտասուաց աչացս
ցանկալւորի՝ յանարատ սոս մաքրութեն քոյ՝ քս,
և օրհնակաւ խորհրդոյ հերաց կնոջն յանցաւորի՝
զառ քեզ դարձն և զդաւանութի. և համբուրիւ_
շրթանցս առ ձուշակ փրկութե կենացդ հաղորդութե՝
համաշնչապէս զանքակ միութի. և զնոյն գթութի
նորին ողորմութեամբ ընկալեալ 'ի քէն՝ բարերար,
դրաւականեսցես զմեծդ պարգև՝ ընդ փոքու հա_
ւատոցս. և 'ի ձեռն գթութե սիրոյ քոյ առ քո անձ_
կալի անուանդ խոստովանեալ ծառայիս, դարձցին
ձմերունք հողմոյն խաւութե՝ 'ի յօդ հանդարտու_
թեան. և մրրկին սաստկութի՝ 'ի սիկ անդորրութե.
և կարծրք երկիւղին՝ 'ի մեծ վստահութի. և պա_
տուհաս պատժոյն՝ յերանութեան պատահումն. և
վտանգք թախծանացն՝ 'ի հոգևոր խնախձանութի.
և ալէկոծութիւն ծփանացն՝ 'ի խոր խաղաղութի.
և ոլեկացն թևարկմունք՝ յանքոյթ նաւահանգիստն.
և բերք բեռանցս մեղաց՝ փոխարկեսցի 'ի թոշակ շը_
նորհաց. Նաև յոյզքանեացս ամենից բնութեց բա_
րութեցս 'ի քէն եղելոց՝ մեծասցի անուն հզօրիդ
խնկեալ և խոստովանեալ. ամաչեսցէ՝ բանսարկուն
չարեաց՝ հերքեալ և հալածեալ. ունայնասցի'ն մու_
հակք մեղացս. խզեսցի'ն խաղեքն. որոշեսցի'ն որո_
գայթքն. կապտեսցի'ն կապանքն. վանեսցի՝ վէշն.
վերասցի'ն վնասքն. պարսեսցի'ն պատրանքն. ջրես_
ցի'ն մեղքն. պատառեսցի'ն պարտիքն. խորտակեսցի՝
լուծն. քակտեսցի'ն քերզքն. Նաև ընդ մուայլ մթութե



չա

չարեացն յանցանաց, և դիմացն բանակաց պաշարո-
ղաց՝ արև փառաց քոց ժամանեսցէ՝ կեցուցանել
փրկել և լուսաւորել, յաջմէ և յահեկէ, 'ի դիմաց
և 'ի թիկանց. և երեւեսցի՛ նշոյլ առաւօտու հոգւոյ գալ
նոյնոյ ընդ անկելութե՛ն ապաստողացն քումդ երև-
ման։ Ո՛վ դու ես բարերար առ ամենեսին, և հ-
նարաւոր են քեզ ամենայնք. և ամենեցուն զկեալն
կամիս, և զփրկութի՛ն բաղձաս։

4 Ո՜վ ամենապարգև ձեռն յի՟ քի՟, և առ ի՛ս դարձ-
ցիս կարկառմամբ շնորհի աջոյդ քո մէջ բնա-
կեալ միացեալ, և ոչ հեռացեալ յանձկութէ սրտէ
սիրոյ սենեկիս. և անեղծական քո նկարագիր՝ նըշ-
խար պանծալի լուսոյ քրիստոնէական փրկաւէտ կոչ-
ման՝ ընդ ի՛ս պահեսցի, միջնորդեալ ընդ քեզ 'ի
մատեան յաւիտեան՝ կտակաւդ կենաց՝ հոգւոյդ ա-
ւետեաց՝ երկնից յօրինողիդ. Նա քեզ միայնոյ պատ-
ճառիդ, և միոյդ 'ի միոյ պատճառէ, և ունողիդ ըզ-
պատճառ միոյ, երրեակ անձնաւորութեանդ և միոյ
էութեանդ վայելչն փառք յերկնաւորացն վեհից,
'ի սրբոցն դասուց, յաւիտեանս յաւիտենից.
ամէն.

---

† Ս էրաւէն յաւելուած կրկին հեծաւրէ՝ նորին հայրիցէ, առ-
նոյն ողբերգ մաղթանաց բանի. 'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ.

## ※ Բան. ԼԳ.

1 Սրտ՝ զյարմարութի՛ն պաշտաման բանից՝ 'ի
խոյլնեց հոգւոյս քեզ նուիրելոյ՝ օրհնել
բարեգութ, կցորդելով ընդ խնկա-



զգեա

զպեստիցն զուգամամանապէս՝ խառնեսցես 'ի յանու-
շութի կազմութեան խուղոյն մարխամու՝ կնոջ բարե-
պաշտի։ Յոր հաւասարեալ նոյնութեամբ ընդ երջանիկ
պոռնկացն՝ 'ի քէն ընկալելոցն՝ յաւետահրաշ յար-
գանօք, պարարեսցիս մեծապէս խնկս բանից ներ-
հատից, ընկալեալ յանհաս և 'ի բարեբանեալդ գե-
րուխ բարձրեալդ․ անկշտամբելի 'ի բամբասանաց
սաղմոսին, մի՛ օծցէ զտերև սստոց գագաթան՝ իւղ
մեղաւորին։ Այլ արասցես զօրանալ կրկին յաճա-
խութեամբ՝ բուրման խոստովանութեան այսր մատենի՝
'ի բազում ազդեալ, համասփիւ ամենատարած և
աշխարհալիր տանն տեսակաւ, ըստ օրինակի համե-
մատութեան նոցոյն յիշատակի․ քանզի դու նոյն տր
զդաստացուցիչ նախնի չարախորհից կանանց մեղա-
ւորաց։ Որոց առաքեալ զմարգարէին կերպարան՝
քումդ ճշմարտատիպ պատկերի յեղանակեցեր, ան-
տուստ առ սոսին անձաւ ներգործուք՝ 'ի յիս վե-
րաբերեալ զծայրագոյն շնորհին կատարումն․ Ընդ
անասնական գարւոյն կերակրոյ, զբազմահամբար պը-
տուղ ցորենոյդ՝ կենացդ հացի․ ընդ ապականացու-
արծաթոյն, զարքունականդ պատկեր․ ընդ յիմարա-
բար թմբրուն գինւոյն, զբաժակդ արեան արար-
չիդ․ ընդ իւղոյն առելոյ՝ 'ի յոյրատ կնոջէն ձիոյ ժո-
ղովրդեանն, զօծումն շնորհին առ իս դարձելոյ․
ընդ զերծման գլխաշուք կտաւոյն, զանապականուե
վերարկուն․ ապարանջանին պճնուք, զթուիչս բա-
րեմասնութեան, օրինիքն և աւետարանաւն՝ հան-
դերձ գործնական առաքինութիւն․ ընդ ունկանն
գնդի՝ վայելչականն զարդու, զանստուեր յիշատակ

որունակման ձայնի . ընդ քայլս՝ պերճութեն լռե-
ջայն, զորքնաձայնութք աւանդս ուղղութեն՝ քայլնա
կրօն լծոյդ քաղցրութեն.
2 Բայց զի՞ է յոյսսիկ ինձ պարծել, և ոչ վերբեր-
ալն 'ի սոյն պատկառել. Իսկ յայլ օրինակ փո-
խել զմտաւեան մաղթանաց այսր ողբերգութեն, որ
ինչ ինձ է յարմարաւոր, ամէն հատուցից զպատիժ
պարտուցս իմոց մեղանաց, 'ի մարգարէից տաւից
բերել համառօտ՝ 'ի սոյն յարկ մուծից սաստիկ ըղ-
տախտ. ընդ ողբոց նոցին լծակցեալ, քան թէ ընդ
բերկրութն նց պարել. յորս հառաչանս, ձայնս հե-
ծութն, բողոքս բարկութն, նախատինս խորտակման,
լալումն կարեւոր. Իսկ մեծիդ այդ գթութի ամե-
նաժամն՝ կանուխ աղերսցա յիմ յուսատրութի.
աւ որս՝ զղջմունս, խոստովանութիս, աւետիս, պար-
գեւս. լուսոյ երեւմունս, խրախոյս անձոյնս, փա-
ռաց ժառանգութիս, հրաշից յայտնութիս, զքան-
չելեաց անսութիս. Զորոց ոմանք յայս ընձեռեն,
և ոմանք վճառութիս բազումս մատուցանեն. յորս
ես կամա կործանեալ՝ կորստեանն վիճակեցայ.
Զի եթէ զգեստ այդ զվարդարուբին պատրաճակ,
սոսաց եղեկինէ, յորում արար ժողովուրդն կուռս
կարկատունս՝ որով պառնկել ասէ՝ 'ի նա. իսկ ըղքան
պատիժ անմաքրութեան եղիցի՝ զանձ զգեցողիս ներ-
քոյ և արտաքոյ. Զարմանամ, թէ զինչո՞րդ ոչ կե-
զում. հիանամ, թէ ինչը ոչ այրիմ. ափչիմ, թէ ընդէ
չյափշտակիմ՝ սանջեալ, լքեալ, չարչարեալ, ջա-
խեալ, մանրեալ, խորտակեալ, կորեալ, բաժանեալ
'ի յօրինակէ ժանեաց կորուսչին, ըստ գրոյն:



Իսկ

Մ.յլ այս միայն է պահեցեալ ինձ նշոյլ յիշատակի՝ փրկութեն յուսոյ, զի քանեան աւետարանին՝ կեանս է ամենեցին, ՚ի կերպարանաց պատկերի բանին ծանուցեալ ։ Որով առ մեղանսն՝ դարձն ․ առ պարտիսն՝ շնորհն ․ առ եղծումն՝ նորոգութիւն ․ առ անօրէնութիւնն՝ քաւութիւն ․ առ վէրսն՝ բժշկութիւն ․ առ վըտանգն՝ անդորրութիւն ․ առ պատիժն՝ ներումն ․ առ պատերազմն՝ հանդարտանալն ․ առ հուրն՝ անձրեւն ․ առ պատուհասն՝ պարգեւն ․ առ ակնկալութիւն սատակմանն՝ ձիրն ․ առ գործարան մահուն՝ կենացն ազատութիւն ․

3 Եւ զինչ է ինձ զայսքանեաց յիշմանց ՚ի թիւ արկանել, եւ ո՛չ զանձառելիսն աստանօր դասել ։ Յիշատակս հօրն բարձրելոյ՝ յորդեն կցորդուի ․ յանուն միածնին՝ առ հոյլն ընտանութիւն ․ սոցին ակնարկութե՝ ընդ հոգւոյն հաղորդուի ․ Խաչին փրկանք ․ բանին ախոփուն ․ բարւոք վարձ կամացս՝ առ կշռութիւն գթողին ․ աւազանն կենդանարար՝ հաշտութեան միջնորդուի ։ Եւ այլք ամենայնք անթիւք բարիք՝ ՚ի բարերարէն բարդեցեալք, ազատք ՚ի հարկէ, արձակք ՚ի լծոյ ․ իշխանականք՝ եւ ո՛չ իշխեցեալք ։ Մ.յոդքիկ են՝ որ ինձ ՚ի մէջ դառնութեան մահու՝ կեանս անտարակոյս աւետարանեն ․ քանզի եթէ ո՛չ զայսոսիկ ունէի, կանխաւ արդեօք կորուսեալ էի իսկ եւ իսկ, ըստ բանի երգողին ։ Ո՛չ փոքրկութե որդւոյ՝ զհայր փառաւորեմ, ո՛չ նուաստութեամբ հոգւոյ՝ զորդի նախատեսեմ, համափառ ունիմ զերեսեան՝ եւ նոյն արարչութե ։ Քանզի եւ ՚ի դէմս հոգւոյն ո՛եւ՝ այս են աղաչանք նախընծայ



սիրդ

սկզբան պատարագին՝ յորում գաւանդ երկնաւոր զե
նանի, զայս աղօթեսցի ·

### Աղօթք, որ նախ քան զպատարագն խոստովանէ ·

4 Ամենակալ բարերար մարդասէր Ա՟ծ բոլորից,
յօրինող երևութից և աներևութից, փրկող
և հաստատող, խնամօղ և խաղաղարար, Հօր Հզ
զօր Հօրդի, հայցեմք բազկատարած մաղթանաց գոչ
մամբ հեծութե՝ յանդիման եղեալ քեզ ահաւորիդ ·
Մատչիմք մեծաւ դողութ՝ սաստիկ երկիւղիւ՝ մատու
ցանել նախ զբանականս զայս պատարագ՝ քում անզննին
զօրութեդ, հեր աթոռակցի փառակցի և արարչակցի՝
Հայրենի անկապուտ պատուոյդ, և քննողի ծած
կութե խորոց խորհրդոց ամենակատար կամաց Հօրդ
եմմանուէլի՝ զքեզ առաքչի, փրկչի և կենդանա
տուի և արարչի ա՟մի · Ի ձեռն քոյ ծանուցաւ մեզ
երրեակ անձնաւորութիւն միաբանական Ա՟ծութեդ,
յորոց մի և դու ճանաչիս անհաս ։ Քեւ, և 'ի ձեռն
քոյ առաջինքն նահապետական տոհմին շառաւիղք՝
տեսանողք անճառանակոչեալք, զանցեալսն և զգա
լոցսն, զեղեալսն և զոչ գոյացեալսն, անսուտերաբար
բարբառով բանի վերապատմեցին · Ոգի Ա՟յ քարո
զեալ զքեզ Մովսէսի, որ 'ի գնալն քոյ 'ի վր՟ ջրոցն՝
անպարագիր զօրութի, ահեղ շրջարկութե տածո
ղականաւ՝ թևապարփակ պաշտպանողօրէն՝ գթասի
րեալ 'ի ծնունդս նորոգս՝ զաւազանին խորհուրդ
ծանուցեր ։ Յոր կերպարան օրինակու՝ նախքան
զկատուցանել զլոյծդ մածուցեալ վերջնում փարա
գուրիդ՝ յօրինեցեր կարող տիրապէս զբովանդակ
ընու

բնութիւն ամենից բնաւից բոլորից գոյից ամ էից՝
յանէից ։ Եւ ստեղծածին ՚ի նորոգութիւն յարութեան
ամ եղեալքս առ ՚ի քէն՝ յայնմ ժամանակի, որ է օր
վերջին՝ այսմ կենցաղի, և օր առաջին՝ երկրին կեն
դանեաց ։ Քեզ հնազանդեցաւ միութիւ կամացն՝
ոդ հօրն խորում, ազգակիցն քո՝ էակիցն հօր՝ անդ_
րանիկն որդի ․ մերովս կերպիւ զքեզ աւետարա
նեաց ճշմարիտ ած՝ հաւասար և համագոյ հօր իւր
հզօրի, և զառ ՚ի քեզ հոյհոյութիւն անքաւելի քա_
րոզեաց, և իբր զած ամբարշտիցն զքո հեստելոցն՝ չա_
րաբանական բերանս կարկեաց, և զխուռն շնորհեաց՝
արդարն և անարատն՝ զոհն ամի ․ որ վասն մեղաց
մերոց մատնեցաւ, և յարեաւ վն զմեզ արդարա
ցուցանելոյ ։ Նմա փառք ՚ի ձեռն քո, և քեզ բա_
րեբանութիւն ընդ հօր ամենակալի, յաւիտեանս
յաւիտենից ․ ամէն ։

Կատարեալ կրկնեսցի ՚ի նոյն կարգ բանի, մինչև փառաւորութեանն ըստ այս հրաւիրեսցի յայտնեսցի աղօթել ․ աւետարանել զերրորդ շնորհն խաղաղութի ։

Տ Աղաչեմք և աղերսեմք արտասուալից հառաչմամբ յամ անձնէ՝ զփառաւորեալ արարչութիդ՝ անեղծ և անստեղծ՝ անժամանակ հոգւոյդ գթածի, որ բարեխօսդ ես վն մեր յանմռունչ հեծութիւ՝ առ ողորմածդ հայր ․ որ զսրբոն պահես, և զմեղուցեալսն մաքրես՝ և տաճարս կազմես կենդանւոյ և կեցուցիչ կամաց բարձրելոյդ հօր ։ Արդ՝ ազատեա ըզ մեզ յամ անմաքուր գործոց, որ ոչ է հաճոյ քումդ բնակութե ․ և մի շիջցին առ ՚ի մէնջ լուսոյդ շնորհաց

փայլմունք՝ 'ի տեսականացս աչաց իմաստից. վ՟ն զի
զքեզ ուսաք միանալ 'ի մեզ 'ի ձեռն աղօթից, և ըն
տիր վարուց խնկելոց. Դու քանզի մինդ յերրորդու
թենէդ պատարագի, և միւսդ ընդունի՛ հաճեալ
ընդ մեզ հաշտարար արեամբ անդրանկի իւրոյ. իսկ
դու ընկալցիս զմեր պաղատանս, և յարդարեսցես
զմեզ օթևանս պատուականս ա՟մ պատրաստութե՟մբ՝
'ի վայելումն Ճաշակման երկնաւոր գառինդ, առանց
պատժոց դատապարտութե՟՝ ընդունել զայս անմա
հացուցիչ մանանայս կենաց նորոյ փրկութե՟. Դու
հալեցի՛ 'ի հրոյս յոյժմանէ դայթագղութիւս մեր,
որ՟պ մարգարէին կենդանախարոյկ կայծակամբն՝ 'ի
ձեռն ունելեացն մատուցման. զի յա՟մ քոյդ քարո
զեսցի գթութի՟, ո՟պ որդւոյդ ա՟յ հօր քաղցրութի՟.
որ զանառակ որդին մերձեցոյց 'ի հայրենի ժառան
գութիւնն, և զպոռնիկն յառաջեցոյց յերկնային
արքայութե՟ն՝ արդարոցն երանութե՟. Այո՛ այո՛
և ես մի եմ 'ի նոցանէ. և զիս ընկալ ընդ նոսին իբր
մարդասիրութե՟ կարօտեալ մեծի, շնորհօք քո աղ
բեալ, զարեամբ քո՟ սրբացեալս: Զի յայսմ ա՟մ՝
յա՟մ ծանիցի քո ա՟ծութի՟դ՝ ընդ հօր փառաւորեալ
համապատուական 'ի մի կամս, և 'ի մի իշխանութիւն
գոյութեան. զի քո է գթութի՟, և կարողութի՟, և
մարդասիրութիւն, զօրութի՟ և փառք յաւիտեանս
յաւիտենից. ամէն:

† Ս Երրորդին յաւելուած ներքին հեծութեան՝ նորին հաճոյի, ա-
նոյն աղերս մաղթանաց բանի. 'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Ա̃յ.

## *Բան. ԼԳ.

1 Արդ՝ առ այսոքիկ թշուառացեալ շնչոյս իմոյ
խղճիք, եւ առ քեզ դաւանութիւնք յարմա-
րականք, որ բովանդակես բանիւ զա̃մ՝
ա̃ծ, զոր 'ի նախնին ձայնեալ՝ եւ յերկրորդումն ցուցից.
Իսկ յանդիմանութիւնս դրաբանականս՝ 'ի կոյտս բազ-
մութ̃ ազգաց, եւ թարգմանութիւնս՝ ժողովրդոց, զայս ար-
դահատութիւնս մաղթողականս նուէրեցի, զոր ներքնա-
շարեալքդ սահմանադրէն գոհաբանութիւնք.

'Ի հանդիսարանս խօսից ասէնի՝ բանս մաղթանաց, որով հոգին
Ա̃յ հաշտեալ՝ հաստէ յօգնականութեան.

2 Աղաչեմ զանփոփոխելի տէրութիւն ամենազօր
հօրդ քոյդ հզօրի, առաքեա զցօղ քաղցրութե̃ն
քոյ, եւ բարեգործեա 'ի յանձին՝ եւ յիշխանական
ազդման զգայութե̃՝ զամենալից շնորհս բազմապար-
գեւ քո ողորմութե̃ն. Այլ հերկեա զբանական ան-
դաստան՝ մարմնեղէն կարծրացեալ սրտիս, յընդու-
նակութի արգասեաց հոգեւոր սերմանդ. *Որով
ամենիմաստ էութեդ խոստովանիմք զա̃մ պարգեւս
'ի մեզ ծաղկեալ եւ աճեցեալ. որ ձեռնադրես ա-
ռաքեալս. լցուցանես մարգարէս. ուսուցանես վար-
դապետս. բարբառեցուցանես համերս, եւ բանաս
զփակեալ ականջս խլից. ո՜վ ազգակիցն քո՝ էակիցն
հօր՝ անդրանիկն որդի, քոյին գործակցութեամբ
ներգործելով զայս ա̃մ՝ քարոզեաց զքեզ՝ Ա̃ծ հա-



ւա

ասարակից խոկութեանդ հօր։ Շնորհեա եւ ինձ
մեղաւորիս խօսել համարձակութեամբ զկենդանաբար
խորհուրդ աւետեաց աւետարանիդ. հետեւել արա-
գաթռիչ ընթացիւք մտաց՝ ընդ անհուն ասպարէզս
քովինաշունչ կտակարանաց։ Եւ ՚ի մատչել իմ ՚ի դը-
լուխ հանդիսի՝ մեկնութեան բանի, նախաժամանեսցէ՛
առ իս գթութիւն քո, խօսելով յիս զարժանն եւ ըզ-
պիտանիսն եւ զհաճոյսն քո՝ ՚ի ժամանակի, ՚ի փառս
եւ ՚ի գովեստ ա̃ծութեանդ քո, եւ ՚ի լրութիւն շինութեան
կաթուղիկէ եկեղեցւոյ. Եւ կարկառեա ՚ի վերայ իմ
զամենամերձ աջ քո. եւ զօրացո զիս շնորհօք գթու-
թեանդ քո։ Փարատեա ՚ի մտաց իմոց զմէգ մթութեան
մոռացութեան, ապաքինեալ ընդ նմին զխաւար մեղաց,
ամբառնալ ուշիւ իմաստից՝ ՚ի կենցաղոյս երկրէ ՚ի
բարձունս։ Ուսուսցես ՚ի յիս վերստին՝ զծա-
գումն անստուեր հրաշից գիտութեան ա̃ծութեան քոյ՝
հըզօր, արժանի լինել՝ առնել եւ ուսուցանել՝ յօրինակ
բարեաց ա̃ծասէր լսողաց. Եւ քեզ ա̃մ փառք՝ յա̃մ,
ընդ հօր ամենակալի, եւ ընդ որդւոյդ միածնի եւ բա-
րերարի, այժմ եւ յանվախճան յաւիտեանս. ամէն։
Իսկ զհաւատոյ սահման բանի՝ ընտրութեան շնորհի՝
կենաց կանոնի՝ առ համագոյ ա̃մ երրորդութեան՝ զայս
վարդապետեցի, զոր շաւիղ կարգիդ վերանկարէ։

[illegible]
[illegible] ՚ի Նիկիայն [illegible]։

3 Խոստովանիմք եւ դաւանեմք, պաշտեմք եւ եր-
կրպագեմք զզուգափառ միութիւն ամենասուրբ
երրորդութեան, Միութիւն անճառ. մի՛շտ


բա

բարի . նոյնագոյ, հաւասարապատիւ . անհաս խմաս
տից Թևոց սլացման, 'ի վեր քան զօրինակ և անդր
քան զնմանութի, գերազանց գոլով սահմանի՝ ան-
պարագիր բացորձակութեամբ, յառաջ քան զհիմն
յաւիտենից անտարրափակ էութեց, ստեղծակա
նացս կարգաց, օրհնաբանութ̃ անթարգմանելեաւ՝
ամենահարուստ մեծութեամբ՝ յաւէտ պսակեալ .
հաստից ժամանակաց՝ և որ 'ի ժամանակի են կեր-
պաւորեալք . ինքն պատճառ հանդերձից՝ և յար-
մարապէս յօրինիչ տեսականաց և աներևութից .
Ո՛չ անուամբ չափեալ, և ո՛չ յորջորջմամբ նշանա
կեալ . ո՛չ որակութ̃ նմանեալ, և ո՛չ քանակու
թեամբ կշռեցեալ . ո՛չ օրինակաւ ձևացեալ, և ո՛չ
որպիսութ̃ ծանուցեալ . ո՛չ 'ի Թերութենէ տա-
րածեալ, և ո՛չ 'ի լրմանէ ամփոփեալ . ո՛չ ուրեք
երբէքի գրաւեալ, և ո՛չ 'ի տեղւոջ վայրի
երևեալ ։

4 Հայր գթութեց՝ ունօղ ա̃մ, և ա̃ծ հանուրց՝
որ յերկնի և որ յերկրի, բաց 'ի բանէն միայնոյ՝
որով զա̃մ ինչ ունի ։ Ստեղծիչ և տուիչ շնչոց ա-
մենից, բաց 'ի հոգւոյն իսկակցէ՝ որով զհամայնն
կազմեաց ։

5 Մ՛ինն յերջանկափառ համազօր ահաւորութենէ
երից անձնաւորութեց, խոնարհեալ 'ի վերուստ՝
աստուստ 'ի ստորինս . որ էրն իսկ 'ի բնէ անբաժ 'ի
ներքնոցս՝ անկապուտ մնալով փառացն աթոռոյ, և
անկարօտ գրկացն ծնողին իւրոյ . Մ՛տեալ 'ի սե-
նեակ կուսին արգանդի պարզաբար, և եղեալ անափ
յօդաւորաբար մարմին էապէս՝ անորոշելի . անԹերի



մարդ-

մարդկութեն, և անպակաս ած՟ութեն. Մ՛ի որդի
հօրն միայնոյ, և միածին անդրանիկ՝ ածամօր ու-
րածին կուսին, արարիչն՝ յեղականութեան մարդ եղեալ
Ճշմարիտ սկզբնածին. ահա ո՛չ զկնի եղելոց երկրա
ստեղծից նմանութե, այլ նոր և չքնաղ, թագաւո
րաց վեհափառ, որ ո՛չ ցուցաւ 'ի դարս, և ո՛չ գոյ-
ցաւ 'ի ժամանակս, անդրանիկ՝ ըստ սաղմոսողին,
քան զա՟մ թագաւորս երկրի. անապական խառնու
թե՝ կերպացեալ զմերս 'ի մարմնի, ըստ օրինի հո-
գւոյ ընդ մարմնոյ, և ոսկւոյ ընդ հրոյ, և կամ յայ-
նպէս իսկ ասել՝ լուսոյ ընդ օդոյ. ո՛չ փոփոխեալ
և ո՛չ անջատեալ. Նոյն ինքն եկեալ կամաւորութե
'ի խաչն մահու, իբր զգառն անարատ՝ 'ի սպանդ վա
րեցաւ, և հանդերձեաց զօրեղ ինքնիշխանութե՝
զարարածոց իւրոց փրկութի. չարչարեալ իսկութե
կենդանեօք՝ եդաւ 'ի շիրիմի անորոշելի յած՟ուէն.
եռօրեայ թաղմամբն՝ 'ի դժոխս սանդարամետակա
նացն վհատելոցն բանտարգելեացն՝ քարոզեալ ցու-
ցաւ նորոգումն և լոյս. Իսկ աւարեալ զհնօրի-
նականացն զփրկանաւորն զտնտեսութի, ածապէս
մերակենցաղեաց. և կառավարեալ 'ի թևս հողմոց՝
ելեալ 'ի քրովբէս՝ ամպով անքննութե ծածկեցաւ.
համբարձեալ դէր 'ի վերոյ ա՟մ երկնի, նստաւ Ճո-
խութե յաթոռն իւրական սկզբնաժառանգ հօրն
հաւասարութե, յորմէ և ընաւ իսկ ո՛չ մեկուսա
ցաւ, անկորուստ առեցելոյն, և աննուազ սեպհա
կանօքն. Որով և եկեսցէ 'ի դատաստան հատուց-
ման, քննել զծածկեալսն կշռութե չափոյ՝ արդար
իրաւանց. որում սպասեմք, և յոր աղօթեմք, հա-

ւատացեալք յամի՝ տմի̃ ամենակալ տէրութե̃ նորա.
որ արդարև մինն է միոյն ՛ի միայնոյն՝ ՛ի միոյն փա-
ռակցութի̃ յաւիտեան երկրպագեալ.

6 Բարեբանեմք միշտ և օրհնեմք ընդ որդւոյ և ընդ
Հօր, և զՀոգի էութե̃ նոյին՝ ամենազօր. ճշմա-
րիտ, կատարեալ, և մք. որ յանէից գոյացոյց զբոլոր
եղեալքս տ̃մ. ինքնագործ հոմիշխան երկուցն եւ
ընդ Նմին՝ անեղծ և անսասան թագաւորութեան.
որ ինչ պատճառն առաջին, և բանին ահաւոր Նորին
ինքնութե̃, նոյն ինքն և Հոգին բարձրացեալ. Բարի՝
ինքնակալ, ամենից բաշխիչ զհօրն պարգևս՝ ՛ի գո-
վեստ անուան փառաց միածնին. որ ազդեաց յօ-
րէնսն, շնչեաց ՛ի մարգարէսն. փչմամբ աղաւնակցին՝
տպաւորեցաւ յառաքեալսն. կերպիւ աղաւնւոյ ցու-
ցաւ ՛ի յորդանան՝ ՛ի մեծութիւն փառաց եկելոյն.
փայլեաց ՛ի գիրս աւանդականաց. արար հանճարեղս.
զօրացոյց իմաստունս. լցոյց վարդապետս. օծ ար-
քայութիւս. օժանդակեաց թագաւորս. ետ վերա-
կացուս. հրամանատրեաց փրկութիւնս. շնորհեաց
ձիրս. հանդերձաւորեաց քաւութի̃ս. զմկրտեալս
՛ի մահն քի̃՝ ՛ի բնակութիւն իւր մաքրազարդեաց.
զոր հայր և որդի, զնոյն և Հոգին ներգործեաց. և
ինքն է ա̃ծ խնկեալ տիրապէս՝ տ̃մ յա̃մի.

7 Քանզի ոչ նախաթուելովն յերրորդութենն որ
մեծ ինչ քան զմիւսն. և կամ զկնի անուանելն՝
նուաստագոյն առ նմանն. և կամ ՛ի միջին ասելով՝
խառնակութ̃ գոլ դիմացն. և կամ յերկոցն տրոհումն՝
ուրոյնութի̃ եւ կամացն: Քանզի անմեծար Հայր՝
տմի̃, եթէ ոչ զբանն ունիցի ինքեան զօրութի̃.



ոչ

ով ոչ գոլով ընդ նմա հոգւոյն՝ անհագադ ումն և անկենդանի՝ և առ ամ հրաման նուաղել։ Իսկ բանն՝ եթէ ոչ անուանի հօրն ծանիցի, որք ումն՝ և կամ լքեալ, և կամ ՚ի մահացուք ումեմնէ ոչէր։ Ով և հոգին՝ եթէ ոչ ՚ի պատճառէն նշանակեսցի, ապա շունչ ումն թափառեալ՝ իբր զշունչ ինչ անդասելի ։ Այլ եթէ ոք հակառակին բանիւ՝ յաւելինի կապ տեղ զհոյր ՚ի յլուրձ բանէն, որ թէ էր երբեմն, յորժամ և չէր, և անբանութեն բամբասանօք պատուել վարկանի զմեհին մեծութի, և կամ սորկուսի տացէ բղխողին՝ ոչ բնաւորաբար գոլով հոգւոր, որով ոյլ իմն գոյութիւն օտար՝ մուծանել, և կամ ամբոխումն ինչ ոյլոյլական՝ յանարատ պատիւ միութը երրորդութեն, զայնպիսին՝ քարամբք պարսից՝ հաւատոյ բանից, իբր զդժնդակ դևս դիմամարտիկս գազանական՝ հերքեալ ՚ի միջոյ՝ ՚ի բաց հալածեսցէ․ եղեալ ՚ի նզովս զնոյնս ընդ նոսին, փակեալք ը դէմ նոցին զլենացն մուտ եկեղեցականս գաւթի։ Աստի զմբ երրորդութիւն փառաւորելով ՚ի նոյն տէրութի միակցորդ հաւասարութեան, զուգաձայն սրբաբանութբ, հանգունատիպ հարթութբ, օրհնեալ և փառաւորեալ յերկնի և յերկրի, ՚ի ժողովս անդրանկացն, և յազգս երկրածնացս բանականաց, յաւիտեանս յաւիտենից․ ամէն ։

8 Արդ՝ զայս գոչումն ծածուկ խորհրդոց կերպաւորելոյ յայսմ մատենի, ամենալուր ականջաց մեծիդ այ ընծայեցուցի․ սոյնմբ սպառազինեալ, և ապա մտի ՚ի հանդէսն ։ Այլ ոչ եթէ կարօտեալ իմոյս ինչ ձայնի այսու մեծանաս, որ մինչև առեղծեալ

ծնեալ էր քո զամ՝ նախքան զլինելն երկնի , փա_
ռաբանչօքն անմահից՝ և երկրաստեղծս բանաւո_
րօք , դու քեզէն ՚ի քումդ լռութեան փառաւորեալ
խակ էիր , այլ զի զմերժեալս զիս յարդեսցես՝ ան_
ճառ քաղցրութի , ճաշակել զքեզ բանիս հաղոր_
դութե . Իսկ զինչ պարտ իցէ ըստ արքունական
հրամանիդ՝ կենաց կանոնիդ՝ առնել ադոնայի տէր ,
և զհրամայեալ պատուէրդ ոչ առնել . որ ինձէն իսկ
զիս զոսկեղէն տախտակս խօսուն՝ նուիրեալ քումդ
պատգամի , զգրեալս մատամբդ այ՝ եղծի , որ և խոր
տակէլն է իրաւացի . և ես տխրատեսակ միով՝ զերկ
րորդն նմանութի առեալ հայթայթեմ . Այլ արդ՝
քանզի բազմօք պաղատեցայ դրոշակօք խանդաղա_
տակնօք , որ ոչ է գրեալ ՚ի յայս կարգ ձայնի , լուր
բարեգութ , ըստ ամին բանի՝ այնմ այի . Ողջիցի և
այս աղերս բարբառոյ հայցման աղօթից՝ յօդեալ
ընդ նոսին . Թերևս ՚ի մաքրոց և ՚ի կամարարից այս
նուէր հացի՝ պանից բաղարջոց՝ խուզով զանդելոց՝
՚ի սեղան փառացդ քոց մատիցէ .

Գ Այլ դու բարերար և յամի մարդասէր , քաղ մի՝
այ միոյ . հզօր և ամենակալ . որ յաղթես զթու_
թեամբ խնամոց քաղցրութեան քո , ոչ հասարակականաց
միայն մարդկութեան՝ խմոց զոյակցաց , առ որս յայ_
տնէ է ամբոխութի և բիւրամասնեայ հակառակու_
թիւն , այլ և հրեշտակացն անախտականութեան . նաև՝
և ես քան զայս՝ սրբասնելոյն անարատութե , յորոց
մի էր և հեղինա . որոյ ցոյց խաստութեան՝ ՚ի քորբէ
լերինն նշանակեցաւ յերկիս օրինակս . ՚ի շարժումն
մեծ , ՚ի հողմն ուժգին , ՚ի հուրն կիզանողական . իսկ



քոյդ

քոյդ հեզութի երկայնմտութե՛ 'ի համբերութի
մեղմութե օգոյն քաղցրութե․ քանզի կամաց ողոր
մութեց՝ դու միայն ես, ըստ գրեցելումս․ Աս՟ զի
թէ և հաճոյք գտան մերասերքս՝ առաքինութե՟ն
յեղանակեալ յոյլ նմանութիւն վերնոյին, սակայն
երկրածինք են և նոքա, ընտրեալք 'ի մարդկանէ․
իսկ դու ոչ ունիս չարանալ՝ խակութեամբ բարիդ․
յամի օրհնեալդ․ ամենեւին փրկութիդ․ ամի հան-
դիստդ․ համայնից անդորրութիդ․ համօրէն ախ-
տացելոց՝ դեղ առողջութե․ աղբիւր ջրոյ կենդա-
նւոյ, ըստ Երեմիայ․ Դարձ առ իս և ողորմեա ինձ․
որ այնքան ծարաւես պապքիս անկարօտդ ա՟ծ՝ ի-
մում փրկութե, մինչ զի զուարթնոցն երկնից ան-
մահից օրհնաբանողաց՝ բան իմն ընծայեցեր մարդ-
կօրէն փրկական քահանայապէս և քաւչապետաբար՝
անեղծական յարակայութե՝ մշտնջենաւոր պաշ-
տամս օրհնեալդ քո գթութե՝ 'ի մերոց դիմաց կեն-
ցաղականաց՝ վ՟ս իմ լքելոյս հաշտութե մաղթել,
ողորմեա եղկելւոյս․ որ է լուսաւոր խորհուրդ յոյց ե-
րանելոյ մեծիդ յայտնութեան, առ հրեշտակականն
թախուր տեղի սորանկելոց, 'ի ձեռն մարդկան՝ քո
կցորդութե՝ աւետարանեալ առակաւ այսր օրինա

կականս եղկելի․

10 Արդարև լուսոյ՝ բարերդութ․ անսացեր թագա-
ւոր․ ունկնդրեցեր կեանք և յոյս․ 'ի միտ ու-
ներ երկնաւոր․ յարգեցեր հզօր․ նկատեցեր ծած-
կադէտ․ տեսեր խնամական․ կարեկցեցեր անպա-
տում․ խոնարհեցար՝ մինչ բարձրեալ․ նուաստացար
անհաւոր․ յայտնեցիր անձառ․ ամփոփեցիր անսահման․



քա

քանակեցար ա՛նքննին · մածար ձնաւորայթ · մարդա-
ցար ա՛նմարմին · շօշափեցար ա՛նքանակ · կերպաւորեցար
ա՛նորակելցեր խոկմա՛մբ զաղաչողացն բաղձանս · Պարու-
խակ եղեր թշուառացելոյս ինձ՝ ձայնիւ զուարթ-
նոցն՝ բարի բարեխօս · միջնորդ կենդանի · պատա-
րագ անմահ · սպանդ անվախճան · նուէր մաքրուն ·
ողջակէզ անծախ · բաժակ անսպառ · Ո՛հա ողոր-
մած, մարդասէր, օրհնեալ, միշտ կատարեսցես առ-
մեղուցելոյս զբարերարութի կամաց քոց կենդա-
նատուաց, գովեալ երկայնամիտ · և քեզ վայելէ
փառք յաւիտեանս · ամէն ·

---

† Սքրաբէն յաւելուած նրջէն հեծութեան՝ նորին հանգոյն, առ-
նոյն աղէրս ողբանաց բանէ։ ՚Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ։

## *Բան · ԼԵ ·

Եւ արդ՝ տէր զօրութեանց, մեծութեան ահեղ, անտարակոյս տեսաւորութի, կամք ամենընդարձակ, առատութի անպակաս, ո՛վ որ զօրեսցէ տանել հանդիսիւ պարտերգութե՝ ՚ի միոյ կաթուածոյ ցօղոյ քումդ բարութե, որ ցանկ դեգերիս պատրաստել պատճառս հնարից՝ խմուլ փըրկութեան։ Նա զոր մեծնէ գրեցից՝ պատմել յապառնիսն · քանզի ոչ անուանեցար հրեշտակասէր, և որ զպետութիւնս նոցունց հաստատեցեր, այլ և զերկինս զամբարոքս նոցին՝ զմատանց քոց գործ, ոչ գրեցեր երբէք սիրել զնոսա · այլ առեր ՚ի պատիւ մեծաց գովեստից առաջին դասեալ զմարդասիրութիւնն։ Մարդոյ կրկին մեծացուցեր քեզ անուն



ան

անճառ 'ի խորհուրդս սոսկալիս. զերկնայինս լու_
սակերպիցն կոչեցեր զնոսին սպասաւորս և գլխա_
ւորս յատուկ մատակարարութեանց. իսկ զստորնային
ծննդս մարմնականացուցեալ՝ տիրական և ա̃ծական պատ
ւելի անուանեալ պերճացուցեր. Մնացեալ վերստին
ըստ սահման կշռուն չափոյ, լցուցեր քեզ կտակս
գրոց՝ ձայնից անբաւից՝ զանապակ ծորմանն ծայ_
րագունին վերնում բարութեան. Նոյն և 'ի մարդա_
նաւրդ քո մերձ յէութեան, ոմանց ըստ ինքեանց, և կի
սոց ըստ այլոց՝ զեղեր առատութե զտուրս կենաց.
արուեստս բազմօրինակս. զքանչելիս ա̃ծագործս.
նշանս ճշմարտատեսիլս. Ո՞չ զի թե անդամալուծին
պակասելոյն 'ի հաւատոցն, հոգաբարձացն առաջար_
կութեամբ զցոյցս յուսոյն՝ գթացեալ ողորմեցար,
և որչափ զօրեսցէ առաւել բանքս ամենակար՝ ա_
ախտալից մարմնոյս մաքրութի աղաղակողիս հառաչ
ման. քանզի արդարև մեծ են չափք հրաշից՝ քան
զանմաքրեալս հոգի՝ ո̃բ հասանել, զլուացեալս պատ
կեր՝ անտիրելի աղտոյ ներգործել. նա զի և երկ_
րորդս առաւելութե յաւազանին շնորհ յաճախեալ՝
զփառսն հայրենի բարձրացուցանէ.

2 Դու ես տէր, որ սրբես զմեզ, ո̃չ ընտրեցելոյն
քոյ նախատպաւորեցեր մովսէսի. դու ես, որ
'ի մեղս և յանօրէնութիւն՝ վերակացու եղեր տոհմին
յակոբայ, մինչ յեգիպտացւոցն երկրի՝ ընդ խա_
ւարն հեթանոսաց ընտանենային. Դու ես, որ օ_
րէնսդէտ առնես զմեղաւորսն 'ի ճանապարհի, ըստ
բանի երգողին դաւթայ. դու ես, որ փոխարկես
զքարեղէն սրտից կարծրութի՝ 'ի լոյծ կակղութե՝
մարմ

մարմնոյ գոյութեան՝ բանի ընդունելութեան։ Դու ես,
որ բաւես ընձեռել սիրտ այլ, և ճանաչեր՝ մի՛ երկն-
չել 'ի քէն՝ զբովանդակ կենացն սահման. դու ես,
որ տաս զերկիւղ քո 'ի միտս խստութեն՝ առ քեզ ուշ
ունել հաւատովք, ըստ մարգարէիցն ձայնի։

3. Օրհնեալ քո շնորհացդ՝ զաշխարհաստեղծ բե-
րանոյդ՝ զամենեղէն անձրեւացդ զկեցուցանօղ-
կաթուած, մատո՛ լսելեացս դրանց բացորան, որով
զօձին խորամանկութի՝ բանսարկուին թիւնից՝ բարձ-
ցես և բժշկեսցես։ Մենակալդ ձեռօք՝ զխօսնա-
կանացս շարժողական գործի ըմբռնեալ՝ ազդեա զօ-
րութի ձայնի. որ տաս բնաւից ընտրութի բանի,
զի դաստիարակեալ զպատշաճականն՝ մի՛ յանդգնա-
բար խօսելով իբր զնախնին՝ լքայց 'ի յուսոյդ, և
անբանութե մատնեցայց վանեալ յորսողէն։ Ուսա-
ւորեա վերստին զխաւարեցեալ հոգւոյս աչս՝ կեն-
դանաբաշխ աջոյդ կարկառմամբ, զի մի՛ համարձա-
կութեն շիջեալ լապտեր՝ շնչմամբ վիշապին՝ 'ի ներ-
քոյ դրուանին ստորածածկեցայց. Բարձ զանօրէ-
նութիւնս իմ տէր, և ընկեա 'ի խորս ծովու. որ է
փոքր առաւել մեծութե քումդ անբաւութե, ըստ
մարգարէին, զիմս ընկղմել չարութի. Կանգնեա
կործանեալս անձին՝ նշան վստահութե, զի մի՛ յու-
սահատութեն կոթող կառուցեալ՝ զծածկեցելոցն
բողոքեսցէ. Բայց հերձօր և գթած, զբժշկարանիդ
կենաց վարդապետարան, զի զառ 'ի ներքոյն մրրա-
կութեան կորուսչին սերմանց՝ մանկաղաւ կամացդ՝
հուպ առ արմատ խուզեալ հնձեսցես։ Դէմեղեալ
հեռուեալ առ քեզ բոլորիցդ ամ, պետրոսեան օրի-

նակութեան, 'ի կենցաղիս ծովու մեղանաց ալեաց՝ ընկլուզոյ, մատո՛ ժամանեա՛ զաջդ կեցուցիչ յօգ-նականութիւն ինձ սասանեցելոյս։ Ընդ քանանուհւոյն ձայնի՝ 'ի խորոց սրտիս պաղատիմ, սովեցելոյս՝ ա-պականասպաս կաղկանձողական ամենաթշուառ վտան-գաւորիս, ապրուստ կերակրոյ փշրանաց հացի՝ 'ի բազմազեղդ քո սեղանոյ մասնաւորեսցես։ Ա՛ռ փրկութիւն նիւթոյ խորանիս՝ որդւոյս դառնութեան, որ եկիր խնդրել և կեցուցանել զիս զկորուսեալս։ Զի քո է մեծութիւն, յաղթութիւն և զօրութիւն. և դու ես քաւութիւն և բժշկութիւն, նորոգութիւն և երանութիւն. և քեզ վայելէ փառք և երկրպագութիւն յաւիտեանս. ամէն.

---

† Ս. Երրորդին յաւելուած կրկին հեծութեան՝ Նորին հոգւոյ, ա-նոյն ողբոյ մաղթանաց բանի։ 'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Աստուծոյ։

## * Բան. ԼԶ.

I Եւ քանզի անթիւք են յաճախեցեալ, և դե-րազանցութիւն միշտ առաւելեալ, փրկանա-ւորդ արգասիք շնորհաց՝ առ պարտուցս իմոց առաւելութիւն, չարչարանացդ հանդէս և յանձնառութիւն։ Զարդ ամփոփիչ ամենից հոգւոց գոյից արարիչ՝ 'ի գործարանի մահուն՝ նշանի խա-չին հեղուսեր, զի զձեռնարկութիւն իմ ընդդիմութե-կամաց քոց՝ լքցես։ Զընթացողական ծակցուն՝ երկոցունց ոտիցդ կեցուցանողաց՝ յանարգելութեան պատճառ՝ 'ի պատժարանի փայտին մածուցեր, զի



ըղ

զփախուցեալս վայրագութի թշուառացելոյս դրու-
ւականեսցես գթածաբար։

2 Ո՛վ զօսանալ ձեռաց կափողացն հրամայեցեր՝ օրհ-
նեալ գագաթանդ, որ զթզենւոյն տունկ՝ ատ-
ժամոյն չորացուցեր, զի և զառ խս ներելոյդ օրհ-
նակ՝ կանխաւ աւետարանեսցես։ Ո՛վ գանողացն ա-
պիրատութե զխոստովանեալդ ած՝ սպառնացար, որ
զարուսեակն մթացուցեր, զի մահացելոյս անձին՝
բարութիւն՝ հանգստեամբ հանդերձ գործեսցես։
Ո՛վ զհոյհոյչացն հնարաւոր չարաբանութի կապտե-
ցեր, որ զլուսնին պատկեր՝ երանգաւ արեան գու-
նեցեր, զի զանհամարձակ լեզուս՝ 'ի գովեստքեզ
զօրացուսցես։ Ո՛վ նախատողացն մոլեգնութե սաս-
տեցեր, որ զտարերս սասանեցեր, զի զթշուառացելս
գլուխ՝ գթութեդ օծմամբ իւղեսցես։ Ո՛վ 'ի մոլո-
րեցուցիչն կարդալ զքեզ ածասպանիցն զօդուած-
ծնօտիցն բաժանեցեր՝ քակտեալ 'ի միմեանց, որ ըղ-
կարծրութի վիմացն հերձեր, զի զանուանակս բա-
րեաց հոգիս՝ 'ի բերմանէ ընդունայնութե՝ ողոր-
մութեամբ հանդարտեցուսցես։ Ո՛վ զպահապանացն
սուրս՝ ընդերաց իւրեանց մատուցեր, որ զորովայն
օձին սահեցման հողոյ մատնեցեր, զի զտառապեալս
մարմնոյ ոսկերս՝ եթէ 'ի գանձարանի պահեալ, կե-
նաց յարութեան արժանացուսցես։ Ո՛վ 'ի կնքելն
դշխոմին փականս՝ կենդանակիր քո գերեզմանին՝
անդրէն յորսայնելս զնոսին՝ յանդունդս երկրի սու-
զեցեր, զի 'ի տապանակի անձինս՝ զնշխար լուսոյդ
հանգուսցես։ Ո՛վ 'ի համբառնելն զքեզ կորուսեալ,
և եթէ զերկրաւոր մարմին գողացեալ, համայնաջինջ



և

և ամենասպառ՝ զսերմն ծննդոցն կրծատեցեր , զի
զիս զանարժանս յիշատակի ընտրութեան բարեաց՝
անկորուստ և անմնացելի՝ ընդ փրկեցելոցն հաղոր-
դեսցես։ Ա՛չ յարծաթոյն կրկնակապէն կաշառանձր
գութիւն , որ 'ի գանձարանէ հօր քում նուիրաց՝
քեզ գրաւ մատնութե և անարգութե մատնաւո-
րեցին՝ զուրացողացն մոլեգնելոց , ըստ հին հարուա-
ծոց հանուոյն մակաբու , 'ի յարձան քարի յեղանա-
կեցեր , զի զիս զվրիպեալս 'ի հաստատութեանց՝ և
ընդ իշխանութե մահու վաճառեալս՝ արեամբ քո
փրկեալ՝ 'ի հաստատութի վիմիդ կառուսցես։ Օրհ
նեալ կրկին , օրհնեալ վերստին , յամի միշտ օրհնա-
բանեալ՝ յաւիտեանս յաւիտենից . ամէն։

---

† Ս քրոփին ցուցանած նշխին հեծութեբէ՝ նորին հոգւոյն , տա-
նոյն աղէրա խաղշխանաց բանի ։ 'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ ։

## ※ Բան . ԼԱ .

I Արդ՝ այդ գումարտակ վերադասեցեալ բա-
րեշնորհութե քոյդ պարգևաց առ իմս
երախտիս , ո՛վ ամենագութ բարերար
գովեալ և ամենազօր , թէ և սակաւք շարադրեցան
տառանօր եղեալ , այլ արքայագունք են , և իշխանա-
կանք ինքնակալութեց . որդիք զօրութեց , ծնունդք
վեհից . մեծափառք , լուսանորոգք , և հրաշապատիւք ։
Յաղթողական վերամբարձութե՝ դրօշիւք հռչա-
կեալք , ըստ գլխոց գլխոց պատկապաճոյն գեղազար-
դելոց , բերեալ ընդ ինքեանս անթիւ պետութիս
օրհնաբանողաց , համբոյրս հեզս՝ երջանիկս և խա-

 գա

զաղականս՝ ա͞ծայնին հարազատութեց՝ այնոցիկ նա‿
հանգաց, զորոց մարգարէն մաղթեաց ասելով, զոր
թօ՛ տէր զզօրութիւնս քո, և եկ կեցուցանել զմեզ.
ոյք այժմ զօրեն հալածել զմեզս, և զանյուսութեան
կարկուտ՝ հալել և փախուցանել, քանթէ նախա‿
մարտիկն զինուորութի երկնային պարուն՝ զգիշե‿
րավարն խաւարասէր սկզբնաներհակ՝ բարույն ա͞յ.
Քանզի և զենաւն այսքանեաց ձրից՝ որ 'ի բարձ‿
րելոյն ինձ անձրևեցաւ, տկարիս՝ թշնամւոյս՝ և ա‿
պախտաւոր ծառայիս, անճառ է ասել. իսկ եթէ
համարձակեսցի ոք՝ զօրել խօսել, զահկուս 'ի բազ
մացն՝ քանթէ զխկութիւն համանգամայնիցն. առ
այսոսիկ՝ զառաջին նիւթն յիշելով՝ յորմէ հատա‿
ցաւն, իբր զոհար ոք նկուն՝ 'ի զօրութենէ մեծէ
հեղքեալ պարտեսցի:

2 Այլ թէպէտ և այսպէս գրեցի, և դարձեալ ըղ‿
նոյն վկայեմ առ թերի խակութիւն հողւոյս՝ և
կատարելութի հաստողին, և առ բարիսն իմ չար‿
ժանութի, սակայն ամենալոյս աննախանձ և բազ
մազեղուն գովեալ արարչութեդ զօրեղութե՝ վա‿
նեալ են կործութիք արտաքերութե սրտի բան‿
սարկուին. որ քարին առակաւ՝ յուսահատն վհատու
թե, սպառմամբ խոպանացման աղբերացս երկուց,
որ 'ի զգայականս եղեմայ բղխել պատրաստեաց ար‿
կօղն, զի ոռոգեալ ծաղկեսցի նովաւ՝ որ 'ի յիս բա‿
րեգործուե կենսատունկն դրախտ, աշա մի՛ ցա‿
մաքութէ արտասուացս՝ աղանդաձնար պատրանօք՝
չարաչար խորամանկեսցէ վերստին հանել 'ի փափկու
թէ նախնում վիճակին: Իսկ յորժամ կացցէ ա͞ծ՝

Ա



համ

համբարձեալ հրաշիւք արուեստից՝ ՚ի մէջ աստուա_
ծոց հաշտարանացն խաղաղութե՟, բարձեալ ընդ ին_
քեան զշնորհացն կտակ, առ որ ա՟մ վնասակարութիւք
խարդախութեց՝ և կարծմամբ սրտնեղութեց, իբր
ընդ վիմեղէն լերին պնդութե բաղխեցեալ ցնդին՝
ջրոյ օրինակս սակաւու հեղեալ, և կամ հողոյ՝
խորտակմամբ փշրեալ։
3 Արդ՝ չէ իմ կշտամբանքս՝ ըստ ձայնին յոբայ՝ ՚ի
մարդկանէ իցեն, այլ յամենատես աչաց վերին
հրամանիդ՝ մտեալ ընդ խղճիս տագնապ երկիւղիս,
տոկմամբ սասանեալ յա՟մ կարծեաց, ապաւինիմ և
արդ՝ անձամբ բեկելով ՚ի յոյսդ հաստատուն կեն_
դանի անեղծ. զի ողորմութե՟ նոյնեցեալ ՚ի յիս՝ իբր
՚ի պարտաւոր կորստեան պատժոց, առաջի բարերա
րութե երկնայնոյդ յանդիման եղեալ՝ ապաձեռն
անթոշակութե՟, զքոյդ երախտիս անպատում փա_
ռաց բերելով ընդ իս՝ յուշ քեզ արկանեմ. որ ո՛չ
մոռացմամբ զբաղեալ նիրհես, և ո՛չ թարթափմամբ
աչաց ընդմիջեալ՝ զհեծութիւն կրից անտեսես.
Հեռացո՛ յինէն աղաչեմ զքեզ, խաչիւդ լուսոյ՝ ըզ
խեղդ վտանգիս. հոգարկութե՟ տրտմութեդ՝ զտա_
րակուսելի տխրութիս. փշանիւթ պսակաւն՝ զբող
բոջ մեղացս. զարկուածով դանիւն՝ զհարուած մա_
հուս. ապտակիւն յիշմամբ՝ զկարիս ամօթոյս. թշնա
մանօք թքոյն՝ զանդոսնելի դարշութիւնս. լեղւոյն
ճաշակմամբ՝ զհոգւոյս դառնութի. Ահա քո են
այս ա՟մ բարութիք անբովանդակելիք՝ ա՟յ միոյ միա_
ծին որդի. առ որովք զչարութիս իմ յիշատակեալ՝
զամենօրհնեալ անունդ քո կարդամ բարձր աղաղակաւ՝

իմանալեացս պաղատանօք . Տէ՛ր ՚ի խոստովանութե՛ն
զղջման պարտուե՛ անմաչեցելոյս , և տո՛ւր ողորմու-
թիւն որդւոյս սատակման մահուն անմահի . զի ՚ի
բազմութե՛ իմոց մեղաց՝ վերստին կրկնեալ նովին
անձեցմամբ առաւելութե՛՝ քո ողորմութիւդ աւետա-
րանեացի , հաշակեալ ճնշմամբ ահաւորութե՛ յերկնի
և յերկրի : Եւ քեզ ընդ հօր հոգւովդ սրբով
փառք՝ յաւիտեանս . ամէն :

---

†Ա՛յ էջքին յաւելուած նշխին հեծութե՝ նորին հոգւոյ , ա-
նոյն ազէրս ժողովանոց բանի : ՚Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ :

## ※Բան . ԼԲ :

1 Բայց արդ՝ որպ̃ երբեմն յոյլ ընթերցուա-
ծի՝ որ ՚ի սկզբնաւորականացն կարգի՝ ըզ
մեղանացն զխաւարային ծնունդս գլխա-
ւորացն՝ օրինացն՝ մարմնականացն անդամոց՝ դրեցի ,
յորոց ախրեցայ ժառանգս մահու , նոյնպէս և յայսմ
սահման ընտրութե՛ բանի՝ զլուացմունսն զազա-
տարարն օրէնս հոգւոյն կենաց՝ որ ՚ի Տր Յս՝ յիշա-
տակեցից նուագս յոքունս , իբր յանբաւ բազմութեց
ծովու՝ կաթիլ մի առեալ :
2 Բանալի են արդարև կայսերականք սմանք ՚ի բարձ-
րութենն դահի բազմեալք , թոշակաւն շնորհաց
լցեալք և հարստացեալք : Թագաւորն՝ և սիրե-
ցեալք իւր . աղքատն՝ և պատուաւորք իւր . պատկերն՝
և իշխանականք իւր . բարեհաճակեալն՝ և ճնշմունք
իւր . յաղթողականն՝ և փառք իւր . զօրաւորն՝ և մար-
տիկք իւր . գովեցեալն՝ և փառք իւր . փեսայն՝ և



պա

պարարտութք իւր · դշխոյն՝ և օրհնութք իւր · փեսա-
ւէրն՝ և հանդերձանք իւր · ազատութին՝ և շնորհք
իւր · այցելութիւնն՝ և ձեռն իւր · խոստումն՝ և
քաւութի իւր · պահպանութին՝ և աջ իւր · պար-
գեւն՝ և զարդ իւր · նշանն կենաց՝ և ամրութի իւր ·
կնիքն՝ և նկարագիր իւր · ամպն՝ և հովանի իւր ·
արուեստն՝ և հրաշք իւր · հոգին՝ և անեղծութի
իւր · բանն՝ և կատարած իւր · ուխտադրութին՝ և
լրումն իւր · զօրութին՝ և հրամանք իւր · լուսայա
րանն՝ և սքանչելիք իւր · մանանայն՝ և անապակա
նութի իւր · վէմն կենդանի՝ և վտակք իւր · սիւնն
հրոյ՝ և ճառագայթ իւր · որոտումն՝ և ազդմունք
իւր · յայտն վերին՝ և փրկութի իւր · ծառն օրհնու-
թեն՝ և պտուղք իւր · բարունակն՝ և բարութք իւր ։
Նու զի մի զընթացն ասելով՝ յամենայնեն վրիպե-
ցայց, իւր յարեգակնէ այլայլեալ աչաց տկարութի,
'ի շատն ասել լռեցից՝ և 'ի սակաւն ժամանեցից, բա
ւականացեալ ամենապիկար կարիւ ։
3 Բայց ուսոյ յաւէտ ասասնօր՝ թշուառացելում
եղկելի անձինս · քանզի կարգ բանիս բերէ ինձ
խառնել է ձայն աւետեաց՝ բողոք գուժիս · վա զի
ընդ այսուիկ առ ընթեր սորին գոյ, արդարութին՝
և կշիռքն · վճիռն՝ և հատուցմունքն · քննութին՝
և լոյսն · յանդիմանութին՝ և զամբարքն · մերկութին՝
և պատկառանքն · յայտնութին՝ և ամօթն · ամբիծն՝
և վտատակքն · Թիւրեալն՝ և պատիժքն ։
4 Դարձեալ վերստին աշխար՝ կրկին եղկելոյս · քանզի
գոյ հասանէ առ հասկ հասակիս՝ անճնարին բար
կութէ, մանգաղն՝ առ հունձն · ջայտաւորն՝ առ

ատեանն . հզօրն՝ առ բեմն . սպառնացեալն՝ առ կո-
րուստն . բաղուկն՝ առ դատաստանն . դաւաղան խը-
րատուն՝ առ հարուածն . սպառազինութին՝ առ նա-
խանձն . հովիւն՝ առ ընտրութին : Քանզի բանն՝
զոր խօսեցար ընդ իս , նա դատի զդատապարտեալս
'ի վերջնումն աւուր հատուցմանն . Այլ կանխեա՝
բարեգութ , նախընծայ քաղցրութե՝ առ նուաղ
հեծութիւն վարանական երկիւղիս . և զօրութի
ընձեռեա ձեռամբդ օրհնութե՝ 'ի յետին տագնա
պիս՝ առաջինդ քո օգնութե մխիթարել բժշկել ,
քաւել և կենդանագործել : Եւ քեզ փառք յամի՝ յաւ-
իտեանս յաւիտենից . ամէն :

---

† Մ էրուրին յաւելուած նշխն հեծութե՝ նորին հոլովէ , առ-
նոյն աղէրս նաղընաւոյ բանի : 'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ :

## *Բան . Լթ .

1 Եւ քանզի զկերպարանն առաջին լքի 'ի
ճոսսակարին թելադրութե՝ խմոր ծու-
լութե կորուսեալ խապառ , ցուցից արդ-
այժմուս զնոյն յիս տեսակ . ողորմելի հեծութեամբ
թախծեալ 'ի հոգի , անաչառ խոյատառականօք հրա-
պարակաւ 'ի յեկեղեցիս բազմութե ազգաց՝ վերա
պատմեցից բարձր ձայնիւ՝ բարբառով մեծաւ ա-
ղաղակելով .

2 Մատեանս շնչական՝ բարդեալ 'ի յինքեան ներ-
քոյ և արտաքոյ ողբս՝ և վայս՝ և ձայնս , ըստ
տումարի տեսլեանն եզեկիելի . քաղուածս անպատ-
ուար և անմեհարձին . յարկս ունոյն՝ 'ի դունաճակաց


ամ

ամբունից. այս տեսակաւ, այլ ոչ համեղութբ,
ջուրս աղտաղտին՝ անախորժելի ծարաւեաց արբ-
ման. գետին՝ անօգուտ հերկագործութն. սահ-
մանս լքեալ՝ հեղեղավայրս կնիւնոյ. խոպանացեալ
և տատասկաբեր անդաստանս. ծծախնամ երկիրս
անձնաւոր, որ բանսարկուին պատրանաց մշակեցոյ.
եւղընծիւղ փոյթս պտղակորոյս. հատանելի ծառս
ունայնաբոյս. կրկնամեռ՝ խօսուն տունկս անյոյս.
ամենաշէջ ճրագարանս անլոյս: Արդ՝ վերստին առ-
սոյն բերելով զայս նմանութի աւազականաց, բազ-
մօք կրկնեցից. որ ամօթոյն դառն պատուհաս՝ պա-
հեալ կայ հէքոյս. կրճումն ատամանց, և անկէտ լա-
լումն աչաց եղկելոյս. հայրական ցասումն անսպու-
ժելի՝ դառնութե որդւոյս. ապականութին աննո-
րոգելի՝ մեղուցեալ մարմնոյս: Ո՜ր կշտամբութի
գտողէս չարեաց՝ ախտացեալ հոգւոյս. տարտամ տագ-
նապի տարակուսանաց՝ ելից գերելոյս. զոր երկնային
զօրքըն մատուցանեն՝ թշուառացելոյս. 'ի խրձունս
որոմանցըն վկայելով՝ վառանկեցելոյս. 'ի ձայն ահար-
կու՝ զանբժշկութին աղդեալ լքելոյս:

3 Ահա արդարև երգս կատակերգութեան ջնա-
րահար պռնկի. յածեալ և կոծեալ քաջ հըն-
չեցուցեալ, ողբս ողորմելիս և զկծեցուցիչս, ըստ
առակաւոր բանին եսայեայ՝ որ 'ի պատգամին տխ-
րախ: Զի թէ նա զխլրտածն փոքր անցից ա-
պառնեացն՝ 'ի մօտոյ իմն տպաւորեալ, բողքէր դի-
մակս դիմակս՝ կերպից կերպից աւազականաց, ըստ
կոծողացն կաքաւելոյ, իսկ առ իս ո՛րչափս և ո՛րպի-
սիս ձայնս մրմնջեցից վհատեցուցիչս. որ գալստեանն

տն սպասել առանց վրիպանաց, մնացի անպատրաստ
և անհանդերձելի։ Ո՛րդ՝ եթէ զդատաստանացն ա-
հաւորութի կրկնեցից, բազմացուցից ինձ աշխար.
տայ եթէ զփորձն խկութե ցուցից, յաճախէ ինձ
երկիւղ. իսկ եթէ զկերպարանացն տեսիլ դրեցից,
առաւելուն ինձ հառաչմունք, զի կանխաւ նկա-
տել զայնս՝ և ոչ անարգան ապաշաւեցի։ Ո՛վ
խնայեամ յիս՝ գթած, մարդասէր, հզօր, բարե-
րար, ամենապարգև քս թագաւոր, օրհնեալ յա-
ւիտեանս. ամէն։

---

† Ս Երգոյն յաւելուած չըյին հեծութեան՝ Նորին հանգոյն, առ-
նոյն աղերս ողբական բանի։ 'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ։

## ※ Բան. Խա։

1 Ա'մենակալ ած բարերար ստեղծիչ բոլորից՝
լուր հառաչանաց ձայնիս վտանկի, և յեր
կիւղէ տագնապի ապականչացն կար-
ծեաց՝ փրկեա կարող զօրութե զերծեալ 'ի պար-
տեաց. քանզի բաւական ես յամի՝ առ ամ հնարս զօ
րանալ անբաւ մեծութեամբ և իմաստութե ան-
սահմանելեաւ։

2 Այլ քանզի ուշին մնացի՝ տեսեալ 'ի հեռուստ
զհանդերձելոցն հանդէս ահաւորափայլ՝ նկա-
տեմ ինձէն աստանօր կանխաւ զունին լուսոյ՝ որցն
յուսոյ, զորն խաւարի՝ պատժապարտիս պատուհա-
սի. ուստի ոչ զօրէ ոք յէիցս՝ առ պատսպարան փա-
խստեան։ Ոչ անդունդք խորոց. ոչ վէհք վիհից.
ոչ բարձրութիք լերանց. ոչ անձաւք քարանց. ոչ


կարծ

կարծրութիւնք արձանաց. ո՛չ ծերպք ծաղկաց. ո՛չ փո-
պալք փոսից. ո՛չ սողք հեղեղաց. ո՛չ բաւիղք խոր-
շից. ո՛չ շանթմարանք յարկաց. ո՛չ ծածկութիւնք սե-
նեկաց. ո՛չ եմակք հովտաց. ո՛չ ծործորք դժուարաց.
ո՛չ վերադրութիւնք բլրոց. ո՛չ արձակմունք շնչոց.
ո՛չ անբաւութիւնք ծովուց. ո՛չ սահանք յորձանաց.
ո՛չ հեռաւորութիւնք եզերաց. ո՛չ ողբմունք ձայնից.
ո՛չ հեղեղք արտասուաց. ո՛չ տատանմունք մատանց.
ո՛չ համբարձմունք ձեռաց. ո՛չ պաղատանք շրթանց.

3 Նայեցիկ սատակութեանց մասանց անձողորմե-
լեաց՝ դու ես՝ տէ՛ր ք՜ս, ծնարք և դադարք դիւ-
րութեան և անդորրութեան փրկութեան ամենամեղս հո-
գւոյ. արդ՝ հայեա՛ 'ի յանզերծ վտանգիցս շրջադրու-
թիւն՝ միայնդ քաղցր առ ամենեսեան. Խզեա՛ սու-
սերաւ յաղթական կենարարն խաչիդ՝ զցանցս վար-
մից, որ յամ կողմից պաշարեն 'ի մահ զհոգիս. և հա՛ն
'ի յանդորր՝ զոտս սասանեալ Թիւր ընթացողիս.
Ջախջախեա՛ զհրատապ ջերմնական տոչորումն՝ մղձկեալ
սրտիս. մերժեա՛ զդիւային չարաճճարութեանս շշուկ՝
քո պարտաւորիս. հալածեա՛ զյուսահատ անձկուն
հոգւոյս մթութի՛ չարի կենակցիս. ցրուեա՛ զծխա-
մած թանձրութիւն՝ բռնութե՛ մեղացս երևոյթ՝
մտելոյս 'ի յիս. կորո՛ զզազիր Թխատիպ կնիքս՝ ապա-
կանութեանս կարիս. Նորոգեա՛ զպատկեր լուսոյ՝
պաշտեցեալ փառաց մեծութե՛ անուանդ հզօրիդ՝ յի-
դիս. զօրացո՛ զշնորհիդ փայլումն՝ 'ի դէմ դիմացս.
և 'ի կերպարան տեսութե՛ մտացս հողեղինիս, յար-
մար յերիւրման կացո՛ յարդարեալ՝ որ զքոյդ բերէ
նկատումն՝ նշուլաւորդ մաքրութե՛ զտեալ զմնայս

մեղաւորիս, Աստուծոյն կենդանի անեղծ երկնաւոր լուսովդ քո ծածկեալ՝ յօրինակ երկիս։ Զի դու միայն ես օրհնեալ ընդ Հօր՝ 'ի գովեստ Հոգւոյդ Սրբոյ՝ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

† Ս. Էրաշին ցուցեալ հրէին հեծութեան՝ նորին հոյոյի, առնոյն աղէրս մաղթանաց բանի։ 'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Աստուծոյ։

## *Բան. ԽԳ։

1 Որդի Աստուծոյ կենդանւոյ օրհնեալ յամենայնի, Հօրդ ահաւորի անքննին ծնունդ. որ ակն բանից առ'ի քէն և ոչ ինչ։ Որ 'ի ծագել անստուեր նշուլից՝ ողորմութեան քո փառաց, հալին մեղք. հալածին դևք. ջնջին յանցանք. խզին կապանք. խորտակին շղթայք. կենդանանան մահացեալք. բժշկին հարուածք. ողջանան վէրք. բառնին ապականութիւնք. տեղի տան ախտութիւնք. նահանջին հեծութիւնք. փախնու խաւարն. մեկնի մէգն. մերժի մառախուղն. փարատի մռայլն. սպառի աղջամուղջն. վերանայ մութն. գնայ գիշերն. տարագրի տագնապն. չքանան չարիքն. հալածին յուսահատութիւնքն. Եւ թագաւորէ ձեռն քո ամենակար, քաւիչդ Աստուած։

2 Որ ոչ եկիր կորուսանել զմարդկան ոգիս, այլ կեցուցանել, թող ինձ զանթիւ չարիսն իմ՝ բազում ողորմութեամբդ. զի դու միայն ես յերկինս անճառ, և յերկրի անզննին. 'ի տարր դոյի, և յեզրս ծագաց աշխարհի. սկիզբն Աստուած, և յԱստուած. ամենալրմամբ օրհնեալ 'ի բարձունս. և քեզ ընդ Հօր և Հոգւոյդ Սրբոյ փառք՝ յաւիտեանս. ամէն։

† Ս. Եկեղեցին յաւելուած ներքին հեծութեան՝ նորին հաւաքելի, առ նոյն ողէրս նաշխանաց բանի. ՚ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ։

## ❋ Բան. ԽԲ.

1 Ա̃ծ գթութեան փրկութեան և ողորմութեան, քաւութեան և նորոգութեան, բժշկութեան և առողջութեան, լուսաւորութեան և կենդանութեան, յարութեան և անմահութեան, յիշեա զիս յորժամ գայցես արքայութեամբ քո՝ ահաւոր հզօր բարերար՝ և ամենաստեղծ կենդանի գոլեալ ամենակատար, մերձ ՚ի հեծութիւն համոյն եղելոց։ Ընդ խաչեցելոյն ընդ քեզ՝ պաղատիմ, որ ոչ ըմբռնեալ վասն քո՝ և ոչ կապեցեալ, ոչ կախեալ՝ և ոչ բեւեռեալ, ոչ կոփեալ յանուն մեծիդ՝ և ոչ անարգեալ, ոչ լլկեալ՝ և ոչ նշկահեալ, ոչ խորտակեալ՝ և ոչ մահացեալ, և արքայութեանն արդարոց՝ մասին անձկալեաց լուսոյ՝ արժանի ցուցեալ, իբրաւ մեզ ուխտի երդմնականաւ ամենիւն ազդեալ զանփոփոխութիւն բարեացն տուելոցն, փառաւորեցեր առ յոյս փրկութեան իսպառ լքելոյս։

2 Օրհնեալ՝ օրհնեալ, և դարձեալ օրհնեալ, և զիս ընկալեալ նովին հաւատովք, կանգնեա ՚ի կործանմանէս՝ բարերար. բժշկեա ՚ի հիւանդութենէս ախտից՝ ողորմած. յեղերաց մահուս դարձո զիս ՚ի կեանս՝ կենդանութիւն. քո եմ և ես, կեցո ընդ նմին՝ ապաւինութիւն. անձամբ մեռելոյս՝ կենդանական շնչով ընծայեցո՝ յարութիւն կեանք անմահութիւն. անպակաս բարութիւն, անսպառ շնորհ, անփոփոխ ներողութիւն. ո՛վ ամենազօր, ձեռն ամենիշխան, միան

ամե

ամենամերձ։ Կամեցա՛ր տէր՝ և փրկեցոյց ակնար-
կեաւ միայն գթութե՛՝ և արդարացոյց. սաստ բանիւ՝
և վաղվաղակի անարատ գտոյց. մաքրեցեր զթիւս չա-
րեացն՝ և անդստին համբարձակեցոյց. առատաձեռ-
նեալ՝ և արդէն 'ի քեզ խակ պատուաստեցոյց. փա-
ռաւորեալ յամի յաւիտեանս. ամէն։

---

† Ա Էրոպէն յաւելուած չրչին հեծութեան նորին հայցողի, առ-
նոյն աղէրս ժողովանոց բանի։ 'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ։

## ※ Բան. ԽԹ.

1 Բժշկական կրթականութիւն ամենափորձ հը-
նարաւորութե՛՝ պատճառ կենաց անախ-
տականաց, թագաւոր զօրաւոր երկնաւոր՝
տէր յի՛ քս՛. ած՛ ամենեցուն, իմանալեաց և տեսա-
կանաց. ահա՛ դու 'ի յիս, ըստ մարգարէին՝ որ ընդ-
աներոյն նոր կցորդութե՛, առ որ բարեզարդ դա-
շամբ այս բանի՝ ընդ քեզ միութե՛, լուսաւորեցոյց
կրկին ողջացեալ շնչով և մարմնով, ած՛ կարող և
անվանելի։

2 Որ ոչ կարօտանաս սպեղանեաց, առ պատրաստու-
թիւն պատանաց՝ հոգեկան վիրաց. ոչ ժամա-
նակի. ոչ միջնորդի. ոչ աւուրց երկարաձգութե՛.
ոչ փոփոխս մատուցանելոյ. ոչ հատման. ոչ խար-
ման. ոչ սրագործութե՛, ըստ երկրաւորս դեղատը-
ւութե՛, առ որս միշտ է վրիպումն և ամենախայտա-
ռակութի։ Այլ քեզ արարչիդ հոգւոց և մարմ-
նոց, ամ՛ ինչ լուսաւորեա՛լ է. ամ՛ ինչ առաջի՛ է.
ամ՛ ինչ գրեա՛լ է. ամ՛ ինչ դիւրինէ. համայնն՝



ձեա

հնարաւոր է . իմաստն՝ գլխաւորեալ է . խոստումն՝ լցեալ է . կամքն՝ կատարեալ է . քո կտակն՝ աւետարանն է . քո վճիռն՝ արդարութիւն է . քո մատեանն՝ շնորհ է : Ոչ փակեալ ես ընդ օրինօք . ոչ պարունակեալ ես ընդ կանոնաւ . ոչ արգելեալ ընդ նուագութե . ոչ խոնարհեալ ընդ հնազանդութե . ոչ պարագրեալ ընդ փոքրկութեամբ . ոչ չափեալ ես ընդ սահմանաւ . ոչ վրիպեալ 'ի բարկութե . ոչ այլայլեալ ինչ 'ի ցասմանէ . ոչ սխալեալ 'ի խստութե . ոչ ամբոխեալ 'ի խռովութե . ոչ դղրդեալ յանդիմանութե . ոչ փոփոխեալ յողորմութե . ոչ պակասեալ 'ի բարձրութե . ոչ լքեալ յայցելութե . ոչ տկարացեալ 'ի փրկութենէ : Դու սկիզբն՝ և լրումն ամի . և 'ի քեն է ամենայն . և քեզ փառք և երկրպագութի

յաւիտեանս . ամէն :

---

+ Մերժեալն ցուցանած հրէին հեծութե՝ նորին հոգւոյն , տանոյն աղէրս մաղթանաց բանի : 'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ :

## * Բան . ԿԹ .

I **Ա**նսահման , ծնունդ Այ հարազատ անթարգմանելի . արարիչ բնութեն եղելոց , քո Թագաւոր . լոյս 'ի խաւարի սրտից մթացելոց . ընդ մեզ լռմամբ , և ընդ առաքչիդ խոնկութեամբ . մերայնովս գքայլիւսդ ծանուցանող հրաշապէս : Հայրքո օրհնեալ երկնաւոր անձառ՝ որ առաքեացդ զքեզ 'ի վերուստ , ում փառակիցդ ես արարչութե , այնքան հոգացաւ փրկութեան իմոյ տարադրեալ դերւոյ , մինչև զքեզ իսկ մատնեաց մարդ-

մարդկան: Իսկ դու կարող գոլով ՚ի վեր քան ըզ-
վիշտս՝ զանտեսանելն աւարտեալ խորհուրդ, հա-
ձեցար ընդ պարտեցելումն՝ զմահուն ճաշակել բա-
ժակ՝ անմեղի մարդկութեամբ, և անպակաս ածութեամբ:
Ու հոգիդ մեր կենդանարար՝ որպէս քոյ, և հօր քոյ
խնակից, և համապատիւ էութեամբ ծնողիդ՝ և ծնե-
ցելոյդ: Ո՚ի երրորդութեան կատարեալ ՚ի դիմաց երից
անորոշելի հաստատածոց. անսկզբըն և անժամանակ.
բնաւորին բարերար. համոյն կենդանարար. բոլորից
խաղաղարար. ստեղծիչ գոյից, և յօրինիչ ամենից.
անքակութեամբ՝ և միով բնութեամբ փառաւորեալ:
2 Իսկ եթէ հոյլն գթած երկնաւոր հզօր՝ մին յէու-
թենէն՝ վասն մահապարտիս յանցանաց մատոյց ըզ-
միածին ծնունդդ յանքննելին ծոցոյն՝ ոչ անխոյեալ
յորդիդ ՚ի համապատւիդ և ՚ի սփռելոյդ, այլ կամա-
նուիրեաց մահու՝ չարչարողացն զենու, ըստ մարգա-
րէութեն զաքարիայ. վասն զի զարթնուլ սրոյն ՚ի վերա
հովուին, և հարկանել նոյն ինքն հօտապետին, և
ցրուել ոչխարացն հօտին, որպէս օրինակն նուրբ նա-
խադրին՝ և ուխտադրութեան խորանին՝ և նուիրումն
արեան սպանդին՝ և առակ խորհրդոյ աբրահամեան
պատարագին, զերկութեան թշուառացելոյս՝ ՚ի կամաց
կեցուցչիդ յառաջագոյն նկարագրէր. և արդ հիմ
արտմիս՝ անձն իմ կործանեալ, ոչ յածուստ ճնարա-
ւորութեց, այլ ՚ի քումդ ինքնագործ հակամիտութեց.
կամ ընդէր զիս խռովես՝ յուսահատութեամբ սատա-
նայականաւ զմիտս հարեալ. յուսա յած, խոստովան-
լեր նմա, և նա հոգոյ վասն քոյ, ըստ դաւթեան
սաղմոսին, և այլ մարգարէի կենսախրախոյսն բանի:
Թ



Իսկ

3 Իսկ յեղանակ խնամարկելոյ հաստողին՝ ՚ի վեր է
քան զսահման կշռութեան մտաց հրեշտակաց և
երկրականաց. և եթէ բնաւ կրկնեսցի, ոչ լինի չա-
փել. քանզի անբովանդակելոյն՝ և բարերարին է
անճառելի։ Զայս զի ամն օրհնեալ՝ զամն օրհնաբանեալ՝
յերրորդական համագոյութեն առաքեաց. իսկ նա
՚ի համառութիւն կամաց առաքչին մեռաւ. և միայն
ահաւոր՝ ՚ի յերկուցն հաւանութի՝ մեծաջան բաղ-
ձանօք մաղթէ։ Իսկ համաբարբառ միակամութեանն
ցուցանել՝ առ ՚ի զնոյն բարի ներգործել, որպ հոգին
կենդանարար, և բանն բանականին, պայծառութի
փառացն, և կերպարան էութեն։ Նա կեանսն փոյթ.
առ ողորմութին ողջամփ. առ ձեռնկալութին պատրաստ.
առ փրկութին կոչողն. առ առատութին յորդ. առ յաձա
խութին զեղուն. առ անբաւութին լի. առ աննուա
զութին փարթամ. առ երկայնմտութին ձոխ. առ
անհասութին բարձրեալ. մի երրորդութի կատարեալ
՚ի յանձանց երից. օրհնեալ յաւիտեանս.
ամէն։

---

† Աւրտէն յաւելուած կրկին հեծութեն՝ նորին հանդէ, առ նոյն աշէրը մաղթանաց բանի. ՚ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ.

## ※ Բան. ԽԱ.

1 Եւ արդ՝ յոյս բարեաց անկեալ ՚ի սրտի՝ մնձն
իմ կործանեալ. և գտեալ հաւատոց
պնդեալ զերիկամանցդ երկակի մասունս՝
զկրկնապատոր խորհրդոցդ զցանկականիդ գործա-
րան, խոստովան լեր բարերարին այ։ Օ մտացդ



իբ

իբրեւ զգործոց. զխորհրդոցդ՝ իբրեւ զլրութեանց.
զանուանեալսն՝ իբրեւ զյայտնեցելոց. զարտիդ ծածկու-
թիւց՝ իբրեւ զբարբառումն ձայնից. զակնարկուեցն՝
իբրեւ զարդիւնաւորաց մեղանաց. զազդել շրթանցդ՝
իբրեւ 'ի գլուխ ելելոց չարեաց. զոտիցդ հետոց՝ իբրեւ
զպատուիրանաւն քո փաղողաց. զձեռացդ ձգումն
առ ցասումն՝ իբրեւ 'ի հեղումն արեան գործողի.
զծիծաղելն ընաւին՝ իբրեւ զկամաւորական լքումն
շնորհի. զերդմնականն, որ թէ 'ի հանդէպս՝ թէ 'ի
սարադէպս՝ իբր զգործակցութի խաբողին։ Ո՛վ ան-
բաւականութիւն՝ իբր զհին կործանիչ նախաստեղ-
ծին բարձրութե. զարտին նեղութի՝ իբրեւ զթե-
րութի հաւատոց. զմեղկութիւն՝ իբրեւ զպարտու-
զօրաւորին պնդութեան. զարտաունջն առ փափկա-
կրիցն՝ իբր զուրացութի ուխտին, որ առ տէրն. զա-
պարսանութիւնն՝ իբր զթուան իմն անդթութեն.
զամբարհաւանութիւն՝ իբր ոչէիւք առ վեհսն գո-
ռոզութի. զհպարտութիւն՝ իբր զկամաւոր հարու-
զատ գտողին չարեաց. Ո՛վ ակամայիցն՝ ընդ կամա-
ւորացն. զըռնացելոցն՝ ընդ հաւանականացն. զե-
կամուտիցն՝ ընդ բնաւորականացն. զանօրէնութիւն՝
ընդ ապստամբութեն. զխորշումն՝ ընդ սատակադու-
նիցն. զնուաղումն՝ ընդ յուլիցն։ Ո՛վ անձնաւիցն
խմոց՝ իբր զձաւելեաց գիտողին. զանդրբելոց վնաս-
ուցն՝ իբր զնկարելոց տեսողին՝ 'ի յարձան մատ-
նեստիս վիմի. զթեթեւադունիցն առ խոտիր մնաց՝
իբր զատոմար ծանրութի բեռանց. զխնդիր չափոյ
ծածկելոցն՝ իբր զճշդով պահանջումն սատերս սակլի՝
'ի բերանոյ կկոտին կորիւնի՝ չորեքդրամեան կշռուէն.



զան

զանդնդականացն գործոց՝ իբր 'ի յականջս ո՜յ արագ-
ժամանելոց ։ Օ՜ սոսկալի յաճախեմ կուտեմ կրկին
յանձնառութ, վերստին պատմել աստանօր մեծա-
հեծութ , զչէոցն՝ իբրև ղեղելոց ․ ընծայեալ ո՜յ
զպարտուն վաճեցեալ անձինդ , զի ընկալցիս 'ի փո-
խատուէն զշնորհօք Թողուն պարտուց մեղաւորին,
զոր որն արդարացոյց, և հրաշափառապէս հռչակեաց,
ամենապատիկ ներբողիւ կրկնել զդուլեստ զղջմանն՝
քան զպարտուանս մեղացն։

Բ Արդ եւ դիզեա անձինդ մեղապարտի բազ-
բասանս յուքունս , զբոյսն խոհերս բազմամա-
նեայս՝ անձն իմ կշտամբեալ յուքնախաթանդ բանիւ ։
Օ՜ չարութին , զանօրէնութին , զվրիպութին , զոր
'ի մարմին համդիպէ փախուստ ․ զպարտութիւնն ,
զմոլեղնութին , զամբարշտութին , զապշութին, ըղ-
թմբրութին , զքունն արթնական , զոր 'ի յընթացմն՝
զնիրհումն , զխորհուրդն օտարոտի , զբանիցն նան-
րութի , զզագրութեն հաճուն , զյամենայն 'ի նմին,
զխախտանելն՝ ո՜յ առելեացն , զաներկիւղութին , զան-
սաստութին , զանհարթութին , զթերութին , զթիւրութին,
զլուծութին , զձշդութին , զանկապ արձակումն ։
Օ՜ ծիծաղականն , զվրնջողականն , զկատակերգա-
կանն , զդայթագղականն , զպատրողականն , զան-
դէպ քաջութիւնն , զանյարմար մարտն , զառանց
օրինի արիութիւն , զևեղդմունս հոգւոյն , զատատեա-
ղականն զերկչոտուիս , զբազմատեղնեան ծիւղն
զրահեստականս , զանպատկառ փարթամունն , զդըժ-
տութիւն , զգժգմնութիւն , զանդատ առելութին ,
զմարմանջմունն դիւրըմբռնողականս , զփոքունցն

զան

զանկշռութիս, զխոստմանցն դժրողութիս, զուխ-
տիցն մոռացութիս, զնմաններացն ոյլակերպութիւն,
զկեղծեացն քողարկութի, զփառամոլութեն մոլը-
սութի, զյօնիցն յաւակնութի, զապիրատութիսն,
զընկքնամիրութիսն, զնախադահիցն տենչութի, ըղ-
հատուցանելն եղեռնականացն, զնոցինն՝ զանշահ
աղձատանսն, զվայրապար բերմունսն, զընթացակցու-
թիւնսն խորամանկութե բանսարկուին. Զբանին
սերմնակաթուի, զվաճառուածն կենացն ընդ գնոց
սատակմանն, զկորուստ աւանդիցն, զհոյրեններացն
ծախս, զկապարանն ձգողական՝ զփոկով լծոյ երնջոց
անխզելի ըմբռնմամբ՝ զանօրէնութիս, զյարաթա-
թաւ տղմաբնակութիս, զլքուածն լաւացն, զընթա-
դրութիւնս անկարծիցն, զկնի դարձին՝ առ նոյն
դարձ դաժանական: Զնորոգ մնացն, զօտար խոր-
հրդոցն, զանկոյուն կամացն, զհաչման հագագին,
զէութիւն շնչոյն, զեան քան զահման կանոնացն
դրութե՝ զնշխանականին զամենասփիւռ բացարձա-
կութի. և զոր չէ ձառելի, և կամ գրելի, և կամ
պատմելի, և կամ յերեսս դիմաց բերելի:

3 Եւ արդ՝ զիարդ բժշկեսցիս՝ անձն իմ եղկելի,
'ի յոյլքանեաց տիգաց խոցոտեալ, բարձեալ
թողեալ այր մի տարադիր անողջանալի, ըստ մարգա
րէին. քանզի մի 'ի վերադրելոցդ՝ բաւականայս զօրէ
սատակման, թող թէ այսքան դասք սպանողաց՝ դըժ-
նէից դահձաց՝ շուրջ պաշարողաց: Մանաւանդ զի
ո՛չ այսու և եթ նմանադրութեամբ կշռի տարացոյց
տարժանեցելոյս. այլ զոր օրինակ անթիւ բազմու-
թի կոյտառաց կարձաց խայթողականաց՝ 'ի սորին

Ս.  մա

մասունս ծայրից տանոյն զօրհասական թոյնս բերե
լոց, և յաման մաշկեղէն արկեալ՝ ամփոփէ զելեցն
շաւիղ՝ կապարանին շրջափակութք, ցուցանի ար-
տաքուստ բարեոք, իսկ 'ի ներքուստ համբարք չարի,
և պահեստ կորստեան, և կայտ կսկծման, և գործօ-
նեայք սատակման, և մշակք մահու։ Որդ՝ այսո-
քիկ են ամբարեալքն քո անօրէնութն տաժանեաց
թշուառաքերտն թօշակք՝ անձն պարտական կրկին
սատակման. որ կամաւորաբար ընկալար 'ի քեզ, զոր
թշնամին սերմանեաց 'ի վերայ ցորենոյն՝ յագարակի
աշխարհիս. ո՛վ այր անմաքուր՝ ամբարիշտ և ծոյլ,
բնաւին ստեցեալ, սիրօղդ՝ մտաց ախորժմամբ ըղ
լցեալսն ա՛մ անառակութք. և զոր առաքեալ ցու-
ցանէ զթլի՛ս բանիցն՝ սարսափելեացն կշտամբողաց,
ստուստ սկսել մինչև 'ի կատար կանոնի այնր պայ-
մանի, և որ հասեալ են առէ, յա՛յ իրաւանցն վերայ.
եթէ որք զայսպիսին գործեն, և կամ կամակից են,
արժանի են մահու։ Որդ՝ ես ինձէն զիս ինքն
պարտ վարկայ, կրկին հատուցման՝ կորստեան սա-
տակման՝ 'ի մահ դատապարտութեան. այլ անխայեմ
յիս ողորմութք՝ բարեգութ, կենդանի, հզօր,
կամարար, կարօղ, ձանարաւոր, օրհնեալ յաւի-
տեանս. ամէն։

† Սրբոյն յաւելուած կրկին հեծութէ՝ նորին հոլովոյ , առ նոյն աշխարհ նողորմանաց բանի. ՚ի խորոց սրտից խօսք՝ ընդ Ծ.

## *Բան . ԽԹ .

1 Արդ՝ վերջացեալս ես յաւէտ ամենապատիժ , միշտ դժնեայ վայրենաբարոյ՝ անձամբ անձին մահու կշտամբիչ . արածօղս զեր_ բանակս զազիրս՝ վայրագասունս խողից արօտակ_ նաց՝ գարշութե մեղաց , նախատ վարձկանութեց. ծովին սածողական զհօրանս ուլուցն ամոլաբնա կաց՝ ՚ի վրանս հովուացն , ըստ երգոյն երգոց առա_ ռակին . որ ոչ իսկ ծանեայ զիս երբէք գիտել , թէ յոմէ և յումէ պատկեր , և վսն իմ գոյացայ։

2 Ահա ՚ի յաստ սահմանականս կրողաց երկուց՝ միա_ կցորդ խորհրդականաց , ըստ ձեւոյ հրեշտակի կառուցար , իբր ՚ի Թուիցս Թւոց կրկնաբարձ բաղ կաց վերատանողաց՝ յաշխարհն հոյրենական հոյել , ով յիմար , զերմբրդ քեզէն կորացար յերկիր , զաս_ տեացս միշտ հոգացեալ դիպուածս , ընդ ցիռս ա_ նապատականս համարեցար։ Իբր զձիրադ բազմաբե_ րանեան՝ ՚ի յաշտանակի մարմնոյդ հաստեցաւ գլխոյդ բոլորութի , զի և այսու ՚ի յօրինակէն շնորհէ մի՛ օտարասցիս զածն սեսանել , և զմտացականացն իմաս տասիրել։ Բանականութեն յարդանօք՝ կրկին ձո_ խացար , զի զյաղթանակ բարեմասնութեն՝ որ առ քեզ եղեն , անարգել լեզուով խօսեսցիս։ Ջեռինդ համամամբ՝ յարմարատեան մատանցդ շաւաւեղօք՝ զգործնականացն անօրինել զանուսուաւ , իբր կցորդ համացեղութե ամենաբաշխ աջոյն տյ՝ ած կոչեցար։



Երից

Սրբոց հարիւրոց՝ և տասանց մեծաց յօդիւք շաղկա-
պեցար, յարեալ 'ի քեզ ընդ նոսին 'ի նոյն՝ և պատ-
շաճական մասունս չափոց ազդողականաց՝ հինգ ըզ-
գայութեց, զի մի՛ և երևելիդ նիւթականութիւն
քումդ տեսութե մնացդ գիտման անդատ եղիցի·
զի մանք ստու՛յք են և զօրաւորք· և այլք փոքունք՝
են և պիտանիք· կէսք կարծրակերպք՝ և ազդողակնք·
են և գողտրականք՝ և պատուականագոյնք· դարձել
կարևորք՝ և պատկառելիք· Իսկ թարգմանութիք
սոցին տեսութե՝ 'ի քեզ են նկարեալ իբր յարձանի
անջնջականի՝ անձն իմ եղկելի, ո՛վ զի և տարր ժա-
մանակաց՝ և շարունակ հեռևման աւուրցն առ պը-
սակ ամին, իբր կանոնաւ իւիք սահմանեալ մա-
սամբքդ՝ անսխալ և անայլայլելի պահեսցի:

3 Դարձեալ այլ օրինակ հոգևորական, որ զանոյն
յօդուած շաղկապէ 'ի մի առ եկեղեցի, քև խոր-
հրդածի· իբր զի առանց բնաւից զուգամասնու-
թեան՝ կապակցել ընդ հաւանականաւ զմեծն ըն-
փրքուն, վասնեալ է հաստատածոյն անարատութի՝
յանուն քի ժողովելոցն· ով 'ի հաստումն և 'ի նուա-
զուի մոյ յանդամացս անարգացս պատուաստելոցս
'ի մարմնի, կրձատեալ իմն է յօրինուած կազմութե
մարմնոյ քում սենեկի զգայականի, և շրջեալ է ըն-
տանու պատկերին յանարգ փոփոխու· Ու արդ-
ոյապխեօք, և ես բազմօք անզուգական հրաշակեր-
տութե եղական պատկեր ոյ՝ կշտամբեալ խայտա-
ռդի իմ գերի, և թէպէտ յառաջին նմանութն կողոպ-
տեալ գտայ պատուիրանին յանցաւորութ՝ 'ի դրախ-
տին կենաց, այլ աւազանին լուսազարդ շնորհին



ըղ

զհօդւոյն փչումն առեալ, և նմանութիւն ես կերպա-
րանին . և արդ ընդէ՞ր կորուսեր զփառսն երկնա-
ւորս, իբր նախաստեղծն երբեմն զվիճակն երկրա-
ւոր՝ յադէն դարաստանի . ընդէ՞ր փակեցեր քեզէն
քեզ զերկին, և զվերելեցն դուռն աղխեցեր . ընդէ՞ր
խառնեցեր ընդ ջրոյն մաքրութեան՝ զախտ աղտաս-
ուացդ տարժանութեան . ընդէ՞ր զլուացեալ զձորձ
վերարկուին՝ դարշելի գործովք զաղտացուցեր . հի՞մ
զեդեալ հանդերձին մեղաց պատմուճան՝ անառա-
կութե՛ վարուք քեզ արկեր . ընդէ՞ր զտանողացդ ու-
տից սրբութի՝ ճանապարհաւն ժանդից աղտեղեր .
ընդէ՞ր կրկնեցեր իրաւադատին՝ զուխտադանցութի
հին պատուիրանին։ Ընդէ՞ր մերժեցար ՚ի պտղոյն
շնորհաց, իբր զադամ ՚ի ծառոյն կենաց . ընդէ՞ր
նենգեցեր քեզէն կամաւ՝ զանստուեր յուսոյն
յարակայութի . ընդէ՞ր պատկառանք անհամարձա-
կելեք՝ քոյին դիմացդ նպաստեցեր . ընդէ՞ր զինեցար
ընդդէմ քո ներհակ, ո՜վ ընդունարան խելագարու-
թեան . ընդէ՞ր որսացար ՚ի ծուղակ մահու՝ թողեալ
զարահետն վստահութեան . ընդէ՞ր կարթիւ պատ-
րանաց ածար՝ հաղորդդ մարմնոյ կենդանարարին։
Այլ վերստին յուսացեալ ՚ի նա՝ կարդամ նմա, ա-
պաւէն և լոյս, քաւիչ, նորոգիչ, փրկիչ, կեցուցիչ
և կենդանարար . ողորմած, խնամօղ, մարդասէր, և
անոխակալ բազմագութ, օրհնեալ յաւիտեանս .

ամէն։

† Մ՛էրատեն յաւելուած հրէին հեծութե՝ Նորին հոխողէ, առ-
նոյն աղերս մաղթանաց բանէ։ 'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Տը։

## * Բան. ԽԱ.

1 Եւ արդ՝ զի՞նչ գոյ ասել ամաչեցելոյս յե-
րեսաց մեծիդ ահաւորութէ, բայց եթէ
համրանալ, և հող 'ի բերան եղեալ լռել
'ի սրտի, ըստ մարգարէութեն խրատու ահա 'ի բա-
րւոյն կարկառեալ 'ի յոյս։ Իսկ եթէ զփականս շար-
ժողութե չրթանցս բացից բռնադատեցից՝ խօսել
կամեցեալ, դարձեալ զնոյն ձայն կրկնական ե-
ղերերգութեան լալեաց բազմութե՝ խէթ մտացս
յառաջադրէ։
2 Նաւ արդ՝ ողբակից մեծ մեղաւորին անօրինելոյ
կամաւ առ 'ի մահ՝ զնորին գոչումն երկրորդե-
ցից և ես ընդ նմին. մեղա՛յ տէր՝ մեղա՛յ, և անօրէ-
նութեանց իմոց ինձէն վկայեմ։ Հիւսեալ ընդ նմին
զբանս յիններորդի սաղմոսին, անթիւս գրեմ ըզ
պարտուցս սակ՝ անձինս մեղանաց՝ քան զհիւղ երկրի
հողմահոս փոշւոյ՝ ընդ օդս ամ տարածեցելոյ։
3 Մեղայ յերկինս և առաջի քո, ընդ անառակ որ-
դւոյն պատկառեցելոյ՝ հայրենի գթոյդ վերըս-
տին դարձեալ՝ թախանձ արկանեմ. զողորմելին ձայն
աղերսանաց՝ արտօսրածին ողբովք գոչման՝ 'ի սր-
խուր դէմս մատուցեալ առաջի քո տարածանեմ՝
հայր գթութեանց ամ բոլորից, չեմ արժանի կոչիլ,
և ո՛չ բնաւին առ այս անուանիլ, ո՛չ միայն որդի,
այլ և անպիտան ապաբան վարձկան. Ընկա՛լ զսո-
վեալս տարադրական, պարտական մշասուց. և զցաւ-

քաղցրոյ՝ ըմպանաց նեղոյս նուաղեցելոյս՝ կենաց քո
հացիւդ բժշկեսցես ։ Լեր ընդ առաջ քո ողորմու-
թեամբդ՝ 'ի սկզբնաւորս ապաւինութեան . զգեցո՛
գը՛թած և անոխակալ՝ անօրինեալս մեղապարտի՝ ըղ-
նախակարուստ հանդերձին ծածկոյթ . աւանդակ-
րոյս ձեռացս աղտեղեալ մեղօք՝ զկնիք մատանւոյն
համարձակութե՛՝ ամենառատ կամօք մատուսցես .
զպարշապարացս թշուառութիւն մերկութե՛ ոտիցս՝
պատսպարութե՛ աւետարանական ամրամերարկու ո-
տիցս կօշկաց՝ 'ի յօձին թիւնից միշտ ամրացուսցես ։
Ո՛վ զուարակդ պարարակի երկնիդ երկնայնոյ, որ է
միածին որդիդ քո օրհնեալ, խնկապէս մարդասիրու-
թե՛՝ կարօտելոյս բարեաց՝ նուիրեա՛ . որ մատուցեալ
միշտ՝ և անպակաս մնոյ 'ի լրումն, յարակայ զենեալ
'ի սպանդարանի անթիւ սեղանոց անսպառութե՛ ,
բոլոր յամենեսին՝ և ընաւ յամուլ , էութե՛ յեր-
կինս՝ և խնկութե՛ 'ի սորինս, աննուա՛ղ մարդկութե՛՝
և անթերի ածութե՛, փշրեալ՝ և բաշխի 'ի մասունս
անհատս, զի զհամօյնն հաւաքեսցէ առ 'ի նոյն մար-
մին խորումն գլխոյ . քեզ փառք ընդ նմին՝ հա՛յր
ողորմութե՛ յաւիտեանս . ամէն ։

+ Սէրաւին ցաւելուած կրկին հեծութե՛՝ նորին հոգւոյն, առ-
նոյն աղերս մաղթանաց բանին ։ 'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ ։

## * Բան . ԽԸ ։

I Բարձրեալ , հզօր , անսկիզբն , անեղ , ան-
բովանդակելի , անքննելի ակնդ նկատող ,
ծնող անքննին փառաց միածնիդ , խոս-

ճացուցես զինս ողորմութ՟ի՝ հեղձեցելոյս ընդու-
նելութ՟ե՝ առ երկնայինս և առ երկրաւորս ։ Տօնեմ
զկեալս կորուսելոյս՝ վերնականացն պարերգութ՟ե ·
աւետարանեմ բանիւդ օրհնութ՟ե՝ զկենդանութ՟ի
իմ մահացելոյս · զբարեբաստութ՟ի կամացդ յայտնեմ
գովեալ՝ բոլորից գոյից եղելոց · ստացիր անուն քեզ՝
ամենայն, և ինձ թշուառիս՝ նորոգ փրկութ՟ի · կո-
րուսցես զդեւր մարդհակի՝ մեղուցելոյս ամբաստա-
նութ՟ե · զմահս հոգւոյս մահու՝ ջնջեցես կայլա-
կօք արեան՝ որդւոյդ սիրելւոյ · վստահութ՟ի փըր-
կութ՟ե բարեաց՝ արեամբ քո նկարեցես · ցոյց
զգանձելիս քո բարերարութեդ՝ ՚ի ձայն հարսանեաց
քում հարազատի ։ Մի՛ փակեսցես դիմելոյս առ
քեզ՝ զառագաստ սրահի՝ կենացդ յարկի · մի՛ տըր-
հեսցես ՚ի բազմականացդ, և ՚ի բարեացդ քո զրկես-
ցես · մի՛ պահեսցես ՚ի գանձարանիդ՝ զնիւթեալ իմ
պարտուցս անօրէնութ՟ի · մի՛ կնքեսցես ՚ի քսակ բա-
րեացդ՝ զպարտութ՟եց իմոց գարշութ՟ի · մի՛ երկարս
ինձ զվէր մեղացս՝ ՚ի յախտալից մարմնիս ծածկես-
ցես · մի՛ զխոտութ՟ի նախուն ցաւոցս՝ ինձ անկակից
մահու մնացուսցես, այլ բժշկ բանիւ քոյդ ողոր-
մութ՟ե՝ զժանտութ՟ին ապականարար, որ՟պ զի զա-
տեալ ՚ի հիւծմանց ախտից՝ առողջութ՟են պատրաս-
տեցայց · նուաստորեմ գըթութ՟եցդ հայր, մեծ խոց-
ոտածոյս՝ զօրեղ սպեղանիս, կարեւոր կործանմանս՝
բարի այցելութիւնս ։ Ո՛ ի քո եմ՝ տէր ողեսէր,
թէ և առ մի նուագ բիւրս մեղիցեմ, բայց ո՛չ գը-
րեցայց հաւանոյն մեղուցեալ՝ տուիչ կենաց իմոց բա-
րերար՝ ՚ի շնորհ պարգեւաց կենաց քոց ապաւինեալ ·

զի ճանաչելդ զքեզ՝ բովանդակ արդարութիւն է, և գիտել զզօրութիւնդ քո՝ արմատ անմահութեան, որպէս և կանխաւ խօսք գրեաց իմաստութեանն. և դարձեալ՝ տիրելդ քո ասէ՝ ամենեցուն, խնայել տայ քեզ յամ. և դարձեալ՝ մօտ է քեզ յորժամ և կամիս, կարող գտանել։

Այս սողմանն յուսոյ աղերսանք՝ խմբյս առեալ տիպ. քանզի ոչ այլ ՚ք բազմամեղ՝ որ քան զնա՝ ինձ զուգաշաւիղ։ Երբեմն որդի, ապա ատելի. երբեմն միջնորդ խաղաղութեան՝ այլ ժողովրդեանն, և յետոյ խարոց որոշման՝ բազում խռովութեան. երբեմն օրէնք կենաց կացեալ, և յետոյ մուրհակ մահու հաստատեալ, զերկնաւորին պաշտօն ընդունեալ, և զօտարին անուն ծանուցեալ։ Անպատճառ օգտող. անկարօտ զրկող. անսովելի գող. գրգեալ տրտնջող. փափկացեալ փախստական. սեղանանենգ սարտուցեալ. անպատասխանի մեղսապարտ. քաղցրանայց հոյհոյիչ. զաւակ հայրատեաց. կտակարանացն մատնիչ. մոլեկսի չարախօս. մոռացող երախտեացն. իմաստուն սխալական. ամենագէտ յանցաւոր. ամօթապարտ զղջացեալ. տարակուսեալ աշխատող. աղաչաւոր կռապաշտեալ. յամրոյն դարձաւոր. կաղակարծ ընկալեալ. կասկածաւոր հաշտութիւն. յաղույս յիշատակ. յերկբայս փրկութիւն. չաւատալի գիւտ. ՚ի մահնէ մնացուած. խարդաւանեալ գերի. կիսակտուր պրծեալ. կամաւոր անձնամատն. տմարդի յղփացեալ. բազմավրէպ համարեղ։ Ի յընթացս բանից երկեակ որոշմանց՝ համարուրեք բանս արկեալ ոլոց և ձաղանաց, մեծ պարսաւ՝ և փոքր գովեստ.



իբր

իբր 'ի մէջ ինքնագրու կորստականի երգիծանութ-
խառնեալ ընդ աշխարհ․ բան Նո՛ր թելադիր բարգա-
ւաճութեան ամ հասակի, և խոստովանին Նորին՝ 'ի
շրթունս բնաւից՝ թռանց թախծութե ողորմելիս
իմն աղդեալ։

3. Զարմանամ՝ վհատիմ՝ տարակուսեալ ապշումն,
զի թէ նա այնքան գթեաց, ինձ զի՞նչ պատ-
հեցէ․ զիա՞րդ անկաւ ամբարձեալն․ զիա՞րդ սասա-
նեցաւ հաստատեալն․ զիա՞րդ կործանեցաւ կառու-
ցեալն․ ի՞բր օտարացաւ ծանուցեալն․ զիա՞րդ զակա-
տեցաւ զուարին ընտրութե․ զիա՞րդ սրացաւ մեր-
ձաւորն․ զիա՞րդ աղօտացաւ փայլեցեալն․ զիա՞րդ պա-
տանդեցաւ ազատեալն․ զիա՞րդ անօրինեցաւ ուսու-
ցիչն․ զիա՞րդ նուաղեցաւ հռչակեալն․ զիա՞րդ ա-
նարգեցաւ փառաւորն․ զիա՞րդ փոքրկացաւ մեծա-
տունն․ զիա՞րդ ամբարշտեցաւ բարեպաշտն․ զիա՞րդ
ամբարհաւաճեցաւ ընտրօղն․ զիա՞րդ ունայնացաւ
պատարունն․ զիա՞րդ կորեաց զուխտն՝ որ ընդ բարձ-
րելոյն․ Պատկառեմ ասել, թէ՝ և ընդ սանդարա-
մետականին կապեցաւ․ զի՞ կայր Նո՛ր և կռոց․ ուստի՞
ևէրն ընդ պատկերաց․ մա՞ էր կամքն ընդ խորանաց։
Զիա՞րդ ոչ յիշեցաւ յանդիմանութիւն սամուէլի՝
առ սաւուղ եղեալ․ հմայք ասէ՝ մեղք են, և ցաւս
և աշխատութի ածէ թերափ 'ի մէջ․ Զիա՞րդ ոչ
հօյրենի յանդիմանութիւն, կուռք ասէ՝ հեթանո-
սաց՝ դևք և անշունչք են, և նման նո՛ց լիցին պաշ-
տօնեայք նոցա։ Տէր միայն ածէր զնո, մինչև նա-
խադրեալ յառաջաձայն ձաղանօք՝ սաստիկս իմն ամ-
բաստանէ, ո՞չ էր ընդ նոսա ասէ՝ ածս օտարոտիս,


Որ

զոր ոչ ճանաչէին հարք նոցա։ Ո՛ւր է մահամատոյց
այլազնեայ արձանն փառովրոյ. ո՛ւր ատեանն և ան-
պանծալին սիգոնացւոց՝ իգականն ամենանազովն ձու-
լածոյն. ո՛ւր կանացի կերպին անդրիէլին խոյատա-
կութի զազիր տեսակին, որով՝ ամօթոյ մարգարէքն
զանտանօրէն դիմեցուին անխտրաբար, յանուն չա-
րութե անժուժկալ դիւին՝ անամօթաբար ձօնեալ
մոլէին. Տարաւ զէութիւն բարեբաստութեն, որ
զնախնին որսաց ՚ի կորուստ. յաղթեաց մեծութին՝
իմաստիցն առաւելութե. գերեաց գոռոզութին.
յիմարեցոյց փափկութիւնն. վանեաց արծաթն ծա-
ռայեցուցիչ. յոդի դատեցաւ զայրն տօնելի՝ հին
զէնն կործանողին. ՚ի դրկացն ա՞յ հանեալ՝ ՚ի յոտս
ստամբակին զթեցոյց. մեռոյց մեղկութին. թմբրե-
ցոյց ծուլութին. արբեցոյց շռայլութին։ Ո՛վ դիւ-
րապատիր մարմին երկրածին, որո՞վք ձայնարկութք
զքեզ աւաղեցից. քանզի ոչ տիրապէս առ նա հան-
դիպի ընդդիմաբանութիս, այլ ամենից սխալողաց՝
կամաւ վրիպելոց. վա զի նովաւ է իմանալ, թէ ան-
իրաւ է պարծել յիմաստս մարմնոյ, եթէ ոչ աստու-
ծով դատեալ ընտրեսցի. որ զի թէ առ այս պայ-
մանի յիմար ոք իցէ, և ՚ի հաստչին կամս յուսասցի,
ոչ ևս ՚ի նորայոց անտի ինչ կրեսցէ.

4 Այլ քանզի սաստիկս և քստմնելիս ունի ստող-
մօն զդարձին իւրոյ յիշատակարան՝ ինքնապար-
սաւն կշտամբութբ, իբր մեռեալ իսկապէս հա-
մայն աշխարհիս անձնասիրութե, զոր եթէ զիւրն
ոք նկատեսցէ, ունայնութբն է իմանալի. այլ և ՚ի
մատեանս քահանայիցն՝ և ՚ի դիրս աքիոյ սիրմացւոյ,


յո

յորում զմիայթն իւրում ընթացիցն՝ արտասուելիս իմն յեղանակէ ։ Ո՛վ ուր ջան · անօգուտ վաստակ · անմիտ հետեւումն · անշահ արշաւանք · անկայուն երկք · օտարին խնամք · ոչնչից հոգք · բամբասելի բերք · անպարման վարկածք · մնոտի սերմանիք · աւազափուլ շինուածք · ապականացու ստացուածք · քամահանաց տածանմունք · ինքնամարտ կռիւ · ընդ օդոյ իւրում դատ · ընդունայնաթող քիրտն · վնասակար փափաք · կորստական շաւիղ · վրիպակ ճանապարհ · կործանական կրթութիւն · մոլորապատիր վարժութիւն · հանապազախոյզ տեսութիւն · ակնայայրատ պչրութիւն · պաճուճակերպ կերպարան · ախտաբորբոք նիւթ · դժնետեսիլ գոյն · յոքնատխուր դեղ · յոլովամեղծ ծուխ · շողի ցնդելի · վաղճան մերձ ՚ի յաւէ · տաղաւար քակտելի · ընդվայր աղաղակ · անպատճառաւոր ծաղր · արհամարհելի ապարէզ · անձնավաճառ գիր · սատակչական երք · անհամ մտածմունք · ստայօդ ճառ · զուարճացուցանող զրոյցք · եպերանաց խծբիծ · խելագարութեան խնդիր · ամօթանաց ցոյցք , խայտառականաց յայտնութիւնք · առակ ապառնեացն · ապաշաւանաց գործ · ըմպահկանաց պատմութիւն · հեղգացելոց օրինակ · խորխորատ ծածուկ · որս խաւարային · մահադուշակ վէհ · անյատակելի անդունդք · ուղեկցութիւն ապանողաց , յիմարութեան բարբանջմունք · դարանակալաց վայր · խարխուլ յարկ · շինուած սասանեալ · կամուրջ խախտեցեալ · երեւոյթ փախչելի · խաբօղ շողոքորթ · անօգուտ մտանիչ · ընդդէմ բարձրելոյն հակառակութի ։ Ո՛վ այս ոմ մատունս բանից խոստովանական կանոնադրութիւն , ՚ի սկզբաս ընաւից

նա

նախասերմանեաց ժողովոցս՝ կանոնադիր դարձելոց զղջման. ո՜վ զի մի՛ պարծեսցի ոք 'ի մարդկանէ բաւ_ բասաւորզք զինու՛որեալ նետիւք՝ զանձն և զընկերն խոցոտելով. քանզի կռապարիշտ է քողով ծածկեալն, որ զկերպարանան միայն ունի, և զոչ ախորժելիս ստեղծչին կատարէ.

5 Նաւարդ նա՝ որ ո՛չ այնքան մեղաւ, որքան զըղ_ ջացաւ, մի՛ խաղաւ պախարակեսցի. այլ յիշեսցի այրն այն 'ի բարի, իբրև զհիմն յուսադրութե՛ 'ի տրոնի ոտան դիմելոց, յորժամ հոգւոյն էջ յայցե_ լութի ա՛ծութե՛ն անբաժանելեաւ՝ կենագործել զանդ խոստովանեալսն. զոր մեռեալքն՝ ահա կեն_ դանեացս անտարակոյս բերին աւետիս. Ընդ որում մաղթեալ իմ պարտաւորի՝ իմաստութե՛ն ո՛չ ժամա_ նելոյ, 'ի մեղանացն մասն կարգեալ, բարեբանեալ մեծիդ պաղատիմ. լի՛ց զնու՛ագդ իմ բանադրութի՝ 'ի յերջանկին հանճարեղութի. նիւթեսցի՛ն ներ_ կայիս հայցմունք՝ 'ի բարգաւաճին յարգաւորութի 'ի գերաշխարան արքային աղերս. այցելութի խընդ_ րոցս դիցի՛ քո ընտրեցեալ վեհ արքայորդւոյն, զոր միածնիդ օրինակեցեր. Յարեանն կցորդութենէ՝ զքո փառակիցդ ճաշակեցաք. տո՛ւր փրկութի քոյոյ ծառային՝ ա՛մենահնար զօրեղ ահաւոր, 'ի ստեղծո_ զիդ փառս աճեցուցեալ՝ զանքաւելի մեղացն ջըն_ ջումն: Յիշատակաւ խորհրդոց բարեաց՝ ընդ ողոր_ մեա՛լսն նորոգեսցես. որ ամենահամ ախորժաճաշակ բազմապաճոյճ առակադրութե՛՝ զա՛ծունիդ քո քա_ րոզեալ՝ 'ի մատեան լուսազարդ կտակի եկեղեցւոյ, ընծայեաց հետս բարութե՛՝ խոստովանութե՛ մատչել

առ քեզ՝ Հայր ։ Քանզի ո՛չ հեռի յողորմութենէ առ
ոյս ցոյց բանի է իմանալի, թէ անյուսութեանն կաթ-
ուած չէր անկեալ 'ի յեռանդն սրտին ըղձից, որ
զձեպ զղջմանն՝ փոքր ինչ կասեաց ։

6 Արդ՝ 'ի յուշ բերեալ զոր 'ի քեզ անձառելի բա-
րեմասնութիւնք՝ զգթութիւն քո ողջունեսցես ։
որով զկոշկոճեալն 'ի բազում դարուց՝ բամբասանաց
քարաձգութեամբ, երանութեան վերարժանացո․ որ յոք-
նահոսան արտասուաց ելիւք՝ զմէջ յատակի յար-
կին հեղեղեալ՝ ապարանիցն իւր խրախճանութեան՝
սատակակակին ապաշաւանօք, հօրն կրիցն գերա-
զանցեաց՝ ողորմելի ոգւոյն հեծութեամբ ։ զոր 'ի յաչաց
բանիդ քո արտօսր՝ առ որ մերոյս 'ի յիւրն ախտա-
կրեաց, երկոյնամիտդ ներողութեամբ՝ միացուցեալ
խառնեսցես՝ գթութեամբ ։ և զանյարմարն առ նա կար-
ծեցեալ զաղմուկն բարեբանութիւն, 'ի փառս էակցի
որդւոյդ՝ կնքելով նովաւ՝ կեցուսցես զնա քաղց-
րութեամբ՝ ընդ աղքատս ժողովրդոց ։ Զոյս պաւե-
տիկոս ամն բարեշնորհ՝ արդահատէր ընդ սողոմնի,
ամին փարձս փորկուցեալ համակցորդ զուգաձայ-
նութեամբ՝ իբր կենդանեօք նովաւ՝ ընդ նմին վ՛ս
նորին աղերսել առ քեզ, զոր յաւելուած կարգիդ
տնտեսէ ։ Քանզի և օստացւոյն 'ի նմանէ սանդ-
ծեալն՝ բազմահրաշաւորն՝ մարգարէաձառն պատմա-
գրութիւն՝ ամենայն արդարացուցիչ՝ զսողոմոն ողոր-
մեալ կարգէ, որ զի անպարսաւ է աղօթելն, քան
չարաբանելն վասն նորին ։

7 Զոր և ես մաղթեմ մեծ վստահութեամբ՝ նմանա
կից ոյսր հեծութեան՝ և զիմն ընդ նմին ընծայել

գ

գոչումն . զի թէ կորուսցես զմեզ դատեալ ըստ գոր
ծոց, ոչ պակասին փառք քո, զի խրատամբք քո ճանա
չիս . իսկ եթէ գթասցես, ո՛րքան բարձրանաս, որքան
մեծութեամբ քում փայլես . քանզի յաւէտ օրհնաբա
նելի ես դու երկրորդաւս՝ ողորմածութեամբ, քան նախա
հրաման սաստկութեան . Դարձի՛ր տէ՛ր՝ դարձի՛ր քաղց
րութեամբ 'ի խնամս գթութեան՝ ձրի և ամենառատ
պարգևօք սիրոյ՝ մխիթարել յաւէտ զտրտմեալքս
համաշաւիղ տագնապաւ տարոյ տանջանաց անբժշ
կականի . Ձեռն եդեալ փրկութեան՝ նորոգեսցես զե
րըստին, քաւեալ և պատսպարեալ 'ի մեղսակործանս
խորտակմանէ . Եւ քեզ միայնոյ սկզբանդ և ան
սկզբանդ, ընդ սկզբանդ, և սկզբնաւորիդ սկզբանց՝
որ երրորդութեամբ և միում աստուածութեանդ փառք և
իշխանութիւն՝ յաւիտեանս յաւիտենից . ամէն :

---

† Մ Էրամին յաւէլուած նրբին հեծութեան՝ նորին հոգւոյն, առ նոյն աղերս նախընթացից բանի : 'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Ած :

*Բան . ԽԸ .*

I Տէր՝ մի՛ տիրեսցեն անօրէնութիւնք քում
պատկերիս կայսերականի արքայութեանդ
վերնում՝ Ա՛ծ բոլորից լուսոյ . մի՛ կապ
տեսցէ գողոյն ապստամբ՝ զզարդ փչմանդ շնորհի՛
'ի քո սահղծեալս կերպէ . մի՛ թագաւորեսցէ մեղքն
խափանեալ՝ մարմնոյս մահացուի՛ առ 'ի գործել զխս
'ի նոյն . Զի՛ք իմ թագաւոր առ իշխել շնչոյս՝ բաց
'ի քէն Ք՛ս, որ անբռնադատ հնազանդեցուցանես
լծոյն քաղցրութեան . որ բառնաս զկարիս մեղաց ամե



նա

նախատարդ բանին . որ արեամբդ քո ստացար, և մարմ-
նով կերակրեցեր . որ կարգեալ սահմանեցեր ուխտ
կենաց անփոփոխադրելի . որ յոգի քո կնքեալ կցորդ-
քեզ գրելով՝ հօր քում մատուցեր ժառանգակցա-
պէս . որ յանուն զենման միշտ յիշատակաւ քո չարչա-
րանաց՝ առ նոյն բարերար աղօթել համարձակեցեր,
ստեղծիչ ամենից և կեանք ։ Ո՞վ ես ա՛ծ ա՛մ հոգ-
ւոց, որ մեծացուցեր զայս տուրս շնորհաց՝ քան զա՛մ
գործոց քո հրաշս . ո՞չ զերկինս իւրովք զարդուք
և հրեշտակացն պայծառութիւք . ո՞չ զերկիրս և ըզ-
մարդկութիւս , և որ առ սոսա են զարմանուիք . ո՞չ
զանսահման լայնութե ծովու , և որ ՚ի նմա են եղելու-
թիւնք . ո՞չ զանդունդս աղբիւրքն հանդերձ, և որ ՚ի
նմա են անբաւութիւք . ո՞չ բարձրացար յօրինմամբ
այսքանեօք մեծ հիւք , որչափ առ իմս կարեկցութի՝
յաւելն քո սբ մարգարէին՝ քաղցրութեանց յուսոյ
բարութի , ո՞վ է ա՛ծ իբրև զքեզ կարօղ, թողուլ միշտ
զմեղս և ջնջել զանօրէնութիս ։ Ահա արդ խնկեալ
են բանք քո՝ ողորմած , և խոստովանեալ բարերա
րութիք . փառաւորեալ խորք խորհրդոց, և երկրպա

գեալ զեղմունք շնորհաց ։

2 Արդարև ո՞չ ոք բաւէ յելից թարգմանել խօսիւք
նիւթական լեզուի ՚ի մասանց այսի քումդ գթու-
թեանց՝ զոր առ իս ցուցեր՝ յօրինիչ . քանզի և մեծ
իսկ է զօրութի՝ զձայնեալն անդրէն նորոգել՝ ըստ
առաջնումն պայծառութե , քան յանգոյից ըստեղծա
գործել ։ Եւ զի ո՞չ է քո տկարութիւն, որ զօրու-
թիւնդ ես ա՛մի , առ որ բան քո միայն ազդեալ՝ գլխու-
թիւն գործոցն գլխաւորէ , ահա յարեցես փառաւոր
լի

նել՝ բարեգործ, 'ի ստացուածս այս կրկին անյուսալի
փրկութեան. զի իրաւամբք ուխտի բարձրացի, հաւա-
տատուն եղեալ մեծապէս՝ օրհնաբան աւետեաց քո
ձայն՝ 'ի քաւելոյդ շնորհ ծանուցեալ, ողորմութե
լուսոյդ ուղերձեալ, քան 'ի ճանապարհ ստեղծանե-
լոյն: Զի առ մինն՝ արարիչ միայն ճանաչիս. իսկ առ
միւսն՝ առաջնով կոչմամբն՝ և երախտաւոր. ընդ
կերպացուցանելոյն՝ և քաւիչ. ընդ նորոգելոյն՝ և
բարերար. ընդ հաստելոյն՝ և ողորմած. ընդ կազմելոյն՝
և հնարաւոր. ընդ յօրինելոյն՝ և հեզ. ընդ նկարե-
լոյն՝ ամենազօր. ընդ առաջնորդելոյն՝ և լոյս. ընդ տա-
ծելոյն՝ հովիւ. ընդ դարմանելոյն՝ խնամիչ. ընդ ողջ-
պահելոյն՝ բժիշկ. ընդ ձեռնկալութեան՝ զօրավար.
ընդ անպարտութեան՝ թագաւոր. ընդ արարչութեան՝
քաղցր. ընդ ամենատուր պարգևացն՝ առատ. ընդ
միշտ անսալոյն՝ ներող. ընդ ոչ բարկանալոյն՝ անոխա-
կալ. ընդ կրեացս վճարելոյ՝ ծածկագէտ. ընդ յան-
ձանձելոյ գթոյն՝ ապաւէն. ընդ գերունակ գորո-
վոյն՝ ա̃ծ. ընդ անսպառ բարութեանն՝ օրհնեալ
յաւէժ:

3 Արդ՝ ո՜վ ստեղծեր մինչ ոչն իսկ էի, և ծնուցար
ինձ գոյացուցիչ, և այժմ զհոգի մեղթողիս մար-
մնոյս տաղաւարաւ՝ յարդարեալ անդրէն վերստին
յանարատութի մաքուր սրբութե նախնի լինելու-
թեանն. զի բազմացի առաւել աճեցուն եղեալ՝
յաճախ տուչութի անսահմանելի քոյդ սքանչելեաց՝
նորոգ ներկայիս, քան զանցելոց հնոյն ստուերակա-
նաց: Նաև ընդ ճառելոյս զթիւս մեղացս՝ որքան
մատոյց թևս ընթանոյ զանբերելիսն յիշատակել, ար-

դարացոյց յանուն քո հզօր . և 'ի պատմելս լինձէն
զանձին իմոյ բնձ, և դու թողցես զամբարշտութի
բազում մեղանաց խոստովանելոյս՝ հզօր ծածկատես
ամենափրկիչ, զի մի՛ ծայրագոյն լրութե ատեատեացս,
դարձեալ նախնումն կարօտացոյց՝ երանելով սաղմո
սին՝ զշնորհօք փրկեալսն մկրտութեն. և փշովք մե-
ղաց յոդի խոցոտեալ, ձեռն քո մխեսցի յիս առաւելա
պէս այժմէն վերստին, ծանրս առնելով զբեռն պար-
տեացս՝ քան զքաղցրունի պարգևացդ. այլ ազատեա՛
զիս օրհնաբանեալ հոգւովդ սրբով, աղաչեմ զքեզ՝
տէր այ, յօրինաց մեղացն և մահու ։ Քա՛ւ լիցի,
թէ անկցի ընդ տկարութե սահմանաւ ճշմարտութեդ
ծագումն՝ իբրև զգրոյն օրինակ. քանզի ուր քաւու
թիւն է թագաւորեալ, վտարեալ են մեղք. և 'ի խորա-
խոյս կենդանի բանիդ, ոչ է յուսահատութի. և ամբար
ձեալ քոյոցդ շնորհաց, հալածեալ են պարտիքն. և
մերձ գոլով ձեռինդ այ՝ ոչ գոյ անճարութի, այլ
ամենեքին լուսաւորութի, բովանդակապէս զօրութի,
անպարտելի կարողութիւն. Քո՛ է փրկութիւն.
կենդանութի. նորոգութի. ողորմութի, միանգա-
մայն և քաղցրութի. արքայութի. անեղծութիւն, և
փառք յաւիտեանս. ամէն.

† Ա Երրորդին ցուցեալ ներքին հեծութեանն նորին հոգւոյ, առ նոյն աղերս համբերանաց բանի. ՚ի խորոց սրտից խօսք ընդ ա՟յ.

## * Բան . ԾԱ.

1 Արդ՝ քանզի որ՟պ ո՛չ է առանց քո ա՟յ ոգւոց փրկու՟ի, և ո՛չ առանց տեսման աչաց՝ առ լոյս զուարճութի՟, և կամ առանց արուսեկին նշուլից՝ արեւու երբեք քաղցրութի՟, այսպէս և ո՛չ առանց խոստովանութե՟ ծածկութից՝ և սրտատանջ անձին՝ քաւութիւն. Զի զի՞նչ օգուտ քեզ է մաքրութիւնդ, եթէ ընդ փարիսեցւոյն գոռոզացիս. և կամ զի՞նչ վնասեսցեն զքս պարտիքս, եթէ ընդ մաքսաւորին գովեսցիս. և կամ ո՞ւր առի պարսաւեալ՝ մարգարէն յովէլ, երիցս կրկնելով զանձինն եղկութի՟. և կամ զի՞ գուցէ մեծն դատաստան՝ առ ՚ի յիշատակ աւուրն մեծի. և կամ ի՞բր արդեօք անմաքուր իմասցի շրթամբք եսայի՝ հեռուն ՚ի գործոց տանն խորոյելի. և զիա՞րդ ա՟ծ՝ պարտաւոր պաշտօն ադամեան մարմնովն՝ իմոյս կարէ կցեալ յանցաւորապէս առ հայր աղօթել. և կամ յո՞յս թարգմանի առած առակին, թէ սիրտ իմաստնոյն՝ ՚ի տան սգոյ, և սիրտ անմտին՝ ՚ի տան ուրախութեան. Զի որ զխաղէն ադամայ՝ անձին իւրում ո՛չ գրեաց, և զմեղս ամենից՝ ինքեան ո՛չ համարեաց, ի՞բր երջանիկն տրքոյից զհարցն, կորոյս զիւրն արդարութի՟ ո՟պ անախտակիր գոլ ընտանեա. և ո՛չ բեկելի սիրտ՝ առ զուարթութի՟ երեսաց աւետեօք յուսոյն, ըստ ասացելոյն, եթէ ո՛չ յառաջելոյն քո՟ ուսեալ՝ ամե՟ն ահա ըստ ա՟յ տրտմեսցի.



Արդ

2 Արդ՝ ըղձալի է ինձ յաւէտ աստանօր խրամն հին՝
նորոգ ընկալեալ՝ հոգևոր հանճարեղին, զոր
տէրն իսկ երկրորդեաց, երթալ նստել, ոչ յառաջին
բարձին հպարտից ընդ ամբարշտացն նանրախորհուրդ-
ժողովելոց. ուստի դաւիթ և երեմիա՝ ուխտին կա-
նոնի սահմանն հաստատեալ հրաժարեցուցին, այլ
ընդ ողջացեալսն սրտին՝ պատկառեալսն մեղօք՝ և 'ի
դատաստանաց մեծին պակուցեալ ահին հատուց
մանն, յետնոցն հաւասարեալ աստէն 'ի յերկրի կա-
մաւ խոնարհութե, ուստի բարձրեալն ած պարս
րեալ բերկրի. որով ընդ նախադասեալսն 'ի բազմա
կանսն երանութե համարձակեցայց, թէ եւ՝ և թէ
նա՝ հեռացեալ սովլիմբ: Աւ որ զերծեալ 'ի բամբա
սանաց բանի մարգարէին, որ 'ի վէսս ոմանս ակնար
կէ, մի՛ յիս ասէ՝ մերձենար՝ մաքուր եմ, և ո՛վ զիս
տեսանիցէ. Այլ զանկշիռն խոնարհութի երջան
կին դաւթի՝ ինձ նպաստ առեալ ասել ընդ նմին,
ես երբեւ զանաստուն համարեցայ, հերքեալ 'ի զգայու
թէ. և հասին չարիք ինձ շուրջանակի. և նեխեցան
և փտեցան վէրք իմ 'ի յանզգամիս անբժշկութիւն.
Աւ զայլոց ոմանց ընտրելոց 'ի յասորեստանի՝ զկա-
մաւորն կշտամբութիւն մեղապարտութե՝ անձանցն
անարատից. ընդ որս և զերգրի մեծի քահանայի զա-
սելն՝ ես ինձէն առեալ բարբառիմ, թէ և ոչ զե-
րեսս բաւական իցեմ համբառնալ 'ի վեր առ քեզ՝
աստուած.

3 Արդ՝ ես ճշգրիտ պատկեր ամ երկրի՝ զիմն խառ-
նեալ ընդ նոցին պարտիս՝ և 'ի նոցայոցն զառ իս
դառնութի կրկին առաւելեալ, նոքօք հեծեծեցից.


թէպ

թէպէտ և չէ՛ ինչ պիտոյ դարշութե՛ դունոյ՝ դար
ձեալ ադեղութի։ Ահա՛ արդ մեղա՛յ՝ զի անմտութե՛
գործեցի զոչ հաճոյսն քո՛ բազմօք սխալեալ յանցա
ւորութե՛ք. նոյնեւ յիս գրե՛թած, որ՛ երբեմն յուրա
ցութենն ըմբռնեալ պետրոս՝ զի յոյժ ունայնացոյ.
Լուսաւորեա՛ ինձ զողորմութեդ քո ճառագայթ՝
ամենայնին բարերարութի, զի ընկալեալ զօրհնութի
քո՛ տէր, արդարացոյց կեցից և մաքուր եղէց յան
ստեղծիցն քո՛ խնոց ըկողաց։ Զունիմ համարձա
կութի զմեղապարտ ձեռինս համբարձեալ՝ առ քեզ
տարածանել, մինչև մատուսցես զօրհնելդ քո զա՛ջ
՚ի նորոգութիւն դատապարտելոյս։ Արդ՝ յաղթեա՛
վերստին խնումն յամառութե՝ քոյին հեզութեամբդ
առ իս ժամանեալ մարդասիրապէս. և զնմն յամե՛
նոյնի ամին քո կարողութե՛դ, զառաջին չարիսն՝ միջ
նուքն և վերջնականօքն թող ինձ՝ հրնարաւոր ան֊
հասից՝ քո՛ թագաւոր լուսոյն արդարոց։

4 Չեմ արժանի յիշել զանուն քո օրհնեալ, զի վը֊
նասակար եմ բարեգործիդ՝ մահու հարուածոց։
Առ կնիքն. առ շնորհն. առ փչումն. առ պարգևն.
առ աւանդն. առ ձիրն. առ անունն. առ որդեգրու֊
թիւնն. առ պատիւն արքայական. առ պատկերն. առ
դրոշմն. առ օծումն. առ ձոխութիւնն. առ համարձա
կութիւն. առ ընտանութիւն. առ կեանսն. առ լոյսն.
առ երանութիւն. առ յոյսն. առ փառսն. առ անխո֊
նարհելի բարձրութիւն. առ պսակն անկապտելի. առ
խոստմունսն ծածկեցելոյն, որ քև՛ տէր քո, բազ
մօք աւետարանեցաւ ինձ յամառելոյս՝ իժիս և քար
բլա՛ ունկնախից և լսելափակ անլուր ականջացս.



որ

որ միշտ յառաւելութն քումդ բարութն՝ յոքնա-
պատիկ յաւէտ քան զոյն չարիքն իմ յաճախեալ՝ ես
պառ կործանեցին, մերժեալ 'ի կենաց՝ ընդ մահ կա-
պեցին՝ ծառայ կարգեալ ապականութն: Այլ արդ՝
դու միայն իրաւակշիռ և ճշմարտադատ բարերար՝
օրհնեալդ 'ի գթութեան, մեղայ քեզ՝ անօրինեցայ՝
անիրաւեցայ, վա՜ որոյ և եղծոյ, զեղծոյ՝ յանցեայ՝
ամբարշտեցայ՝ և ոչ լուայ խոստովանեալ և երկրպա-
պագեալ գովեալ քո բանիդ. որ դու իսկ երևեցար
անճառելեաւ քո սիրովդ, զոր գրելն իսկ մեծ է, և
նշանակելն սարսափելի. Քեզ արդարութի և փառս
և մշտնջենաւոր գովութի, և ինձ պատկառեցելոյս
'ի քէն՝ խնամակալ, քաւութիւն և ողորմութի և
բժշկութի. օգնութիւն և պահպանութիւն սրտի
և ոգւոյ. բարեբանեալդ յամենայնի յաւիտեանս.

ամէն.

---

+Ա Յորժամ յաւելուած իցեն հեծութեն՝ նորին հոգւոյ, տա-
նոյն աղէրս մաղթանաց բանի: 'ի խորոց սրտից խօսք՝ ընդ այս.

## *Բան. ԾԱ.

1 Եւ արդ՝ առ երկրածին ոք պաղատեցայց այլրա
մահացու ամենապատիր էթէ, ընդունայն
է աղաղակելն. առ մահկանացու բանական
էթէ, սուտ իցէ փրկութին առ յուսոյն վստահու-
թիւն. առ մարդ ոք եղծական էթէ, ընդ ակարուն
բանին՝ նանի՛ր է զօրութիւնն. առ իշխանս երկրա-
ւոր գահից էթէ, անցաւոր է ընդ ինքեանս և իւ-
րեանցն բարութիւն. առ եղբայր ոք հարազատ էթէ,

կարօտ է կամելոյն առ անձինն անդորրութիւն. առ
հայրն իմ երկրաւոր եթէ, պակասեալ են խնամա-
կանքն ընդ աւուրց նուաղութեն. առ մայրն իմ որ
երկնեաց եթէ, կասեցան դթութիւնքն ընդ նահան-
ջել կենդանութեն. առ թագաւորութիս աշխարհի
մրդեօք, որք զմահացուցանելն միշտ արուեստաւո-
րեն, քան զկենդանագործելն. այլ առ քեզ՝ բարերար
տէր օրհնեալ 'ի բարձունս, որ կենդանի ես՝ և զկեն-
դանութիւն տաս տէր. որ և յետ փոխմանն զօրես
անեղծապէս նորոգել։

2 Որ եթէ փախնումք 'ի քէն, դու զկնի ընթա-
նաս. եթէ տկարանամք, զօրացուցանես. եթէ
վրիպիմք, շաւիղ դիւրութե ուղղես. եթէ պատ-
կառեմք, քաջալերես. եթէ ախտանամք յանձն և 'ի
մարմին, բժշկես. եթէ գարշանամք մեղօք, մաքրես.
եթէ սատեմք, քո ճշմարտութեդ արդարացուցանես.
եթէ յանդունդս ներքինս սուզեալ գլորիցիմք,
յերկինս ցուցանես. եթէ 'ի կամաց մերոց ոչ դառ-
նամք, դու դարձուցանես. եթէ մեղանչեմք, ողբաս.
եթէ արդարանամք, ժպտիս. եթէ օտարանամք, սը-
դաս. եթէ մերձենամք, տօնես. եթէ տամք, ընդու-
նիս. եթէ յամրանամք, երկայնամտես. եթէ մեք ժըլ-
տեմք, դու առատապէս շնորհեալ ընձեռես. եթէ
լքանիմք, տրտմիս. եթէ արիանամք, խնդաս։

3 Որպէս հարիւրորդ երկրորդ սաղմոսն օրհնաբան
հրաշաւորական՝ զվհատելոյս զսիրտ սփոփէ, և
մեծ յոյս կենաց աւետարանէ առ փրկութենն հան-
դէս, որ յաղթականն է դիւաց, և տարակոյս բան-
սարկուին. որ իբր զխաչին տէրունի նշան բարեբաղ-



պան

պանծալի սքանչելափառ՝ անխոնարհելի բարձրութ՟
լուսոյ և անպարտելի վերնոյն զօրութ՟՝ կանգնել է
ախոյեան անվանական և անշարժական՝ ամ՟ յաւի֊
տենական՝ ընդդէմ անբարի բարուց բռնութեանն
բելիարայ. որ ունի յինքեան պանծս հոգևոր օգ֊
տից գիտողաց մտաց՝ ընծայեալս զպարտուածն մահու
և զլուծումն մեղաց, և յոյս կրկին՝ յերկուս յա֊
ւիտեանս, և զնորոգումն խոստման անեղծութե՟ ար֊
դարոցն, կանոնս բարեհրաւէրս և կենդանատուրս՝
գրեալս հոգւոյն այ՟. ոչ՟ ամ՟ իսկ երգ սաղմոսացն՝
մաքուր սրտից է տեսանելի կտակ կենաց մարդկան
նկարեալ.

4. Ոչ ի թէ ՚ի նախնումն տկար կերպարանն՝ զայս
աւետիս և վստահութիւն ընդգոգեալ ունէր՝
կործանման մահու նախաժամանն մեծ աւետագիր՝
և կեանս երկնակրօնս վերնակենցաղս՝ միշտ անճա֊
ռելիս. և այն ջնջական գիրն, և յեղանակաւոր օ֊
րինակն, և պաշտօնն դատապարտիչ վհատութե՟ յան֊
ցաւորացն, և խափանելի կտակն երկրային, և տկար
հաշտարարութի՟ միջնորդացն, և թերութի՟ բանից
մաղթողացն. Այլ զի թէ մանաւանդ փրկութի՟ն խոս֊
տովանելի է, անստուստ վկայեալ յետ այնքանեաց մե֊
ղանաց անբժշկականաց. որ արեամբն արդարոց՝ ելից
զնուիրեալն մեծի թագաւորին հրաշանուն քաղաք֊
հոյրենի, ըստ մարգարէագիր անսուտ պատմութե՟.
որ և զմեծն իսկ տեսանողաց՝ բազմերախտիս ձեռն֊
կալութե՟՝ խնամողօրէնն պաշտպանութեան՝ նախ֊
նակերտ յարկին տեսչութե՟, մանկավարժ ինքեան
և նախնի, մեքենայից մահու սղոցեաց, ՚ի յերկուս
մա

մասունս խղճեալ՝ դժնդակ տանջանօք մաշեաց, իբր
խորհրդով ապստամբութե՛ զլուսոյն փրկանակ կրա
րեալ։ Նա որով զէր յաւելուածն մոլեգնական՝ ըն
քրէական վերնամարտութին 'ի բարձրեալն յանդգ-
նութի․ քանզի ոչ պատկառեաց երբէք զստեղծո
ղին պատիւ և զանուն՝ յիւրաբնակ խորանէն մեր-
ժել․ հալածեալ զնա հոգին, բելիարոյ զանձն դա-
ւանեաց։ Քանզի զնոյն տաճար տիրական՝ խնկար
կութեան հաստողին սահման՝ հռչակաւորն երկրի
տեսարան՝ զսարսափելին ազանց որբարան, ուր ան-
սիւք հրեշտակականք և ածայինն հրամանք յաղթո-
ղականք՝ լուսաւորապէս յայտնութեամբ ազդեալ
երևէին, զայն վայր երկնանման ահաւոր սքանչե-
լատես, քեանոյ ումեմն քաւադիմակի՝ նախանձոր
կու պատկերի՝ աւերածոյն անապատի, պաշտօնէատեղ
գարշելի և դիւաձենձեր զոհարան պատրաստեալ
կազմեաց։ Օրկեալ զօրքոյն երկնաւոր՝ 'ի յար-
քոյական կոյից․ զամենահարուստն՝ ունոյն 'ի ըն-
ծայուածոց իւրոց․ զտանուտէրն՝ անհանգիստ և
թափառական տատանեալ։ Բէհեղզեբուղոյ ձեղուն
նկարեալ, և զանունն ահեղ՝ վտարանդի արարեալ.
դերի տարեալ զաւանդ գոմերոյն, ողբալի զողոր
մածին մասն նուազեցուցեալ․ աղուեսուն փոքու
ապարանք՝ զարաջն լուսոյ կարգեալ, և բնաւից ու-
նողին՝ և ոչ գլխոյն տաղաւար յիւրոյնոցն եդեալ.
հատեալ զցանկ հզօրին, բախտից հմայից՝ զսեղանն
մեծախորհուրդ արեանն սրսկման՝ երևեցուցեալ.
Լուծեալ հեռս բազում՝ ընթացելոց 'ի գայթակ-
ղութի․ հովիւ կորստեան՝ հօտին սատակման․ մոլո-



րու

րութն բուռն վարդապետ. և այն՝ գիտութբ կրօ-
նիցն օրինաց, հայր ունելով զմեծն եզեկիա՝ զնմա-
նակիցն դաւթի.

5 Այնքան ստացեալ զամենս չարեաց, որև զայս
պատիւն՝ որ զարքայութեն փառս ընծայեաց
նմա՝ հայհոյեալ և թշնամանեալ. և զաղօթկերացն
բազմութի՝ սուսերաւ մահու խողխողեալ. Ընտանի
դաւաճան. մերձաւոր վտանիչ. հարազատ սատակիչ.
կցորդակից սպանօղ. Առ ա̃ծ ոչ գոյր դառնալ, զի
ուրացեալ էր զնա. զաբրահամ ոչ էր յիշել, զի խոր
թացեալ էր ի նմանէ. իսահակա ոչ էր աղօթել,
զի նզովեալ էր ի նմանէ. իսրայէլին ոչ էր պարծել,
զի տարագիր էր անուան կոչմանն մեծախորհուրդն
շնորհի. զդաւթեան երգ ոչ էր նուագել, զի կր-
տամբէր էր նորին. ի քաւարանն ոչ էր մերձենալ,
զի պղծեալ էր զնա. ի տապանակին ա̃ծագիծ ոչ էր
ապաւինել, զի ընդ գարշութեան ձուլածոյին էր
փոխանակեալ. առ մովսէս ոչ էր կարդալ, զի անքա-
ւելի էր պարտիքն՝ որ առ նա. առ ահարոն ոչ գոյր
աղաչել, զի վնասապարտ էր առ նա. առ մերձաւոր
մարգարէիցն գունդ ոչ էր դիմել, զի սպանօղ էր
նոցա. Այս նր̃ քաւութի մեղաց, և արքայութի թա-
գաւորութն վերստին պարգևեալ տուաւ. զի քեզ՝
բարերար, բազմացուսցես կարգեսցես գովեստ ան-
ճառս և անլռելիս՝ ի յազգս տոհմից և ի դարս ժա-
մանակաց. և զդուռն յուսոյն մերոց անփակելի պա-
հեսցես՝ ի փառս քոյդ բարձրութն և ի փրկութի
դատապարտելոյս. անմահութեանց պարգևաց տուիչ
քս̃, գովեալ յաւիտեանս. ամէն.

Որհ

† Ա ջրատին յաւերժահամ հրչին հեծութե՝ նորին հոգւոյ, տա-
նոյն աղէրս նուղերոնաց բանի. ՚Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ.

## * Բան. ԽԲ.

I Որ ծնեալ տիրաբար ՚ի քումդ էութէ, անսահմանելի եւ անփոփոխադրելի, խնկամպէս բարի. պաշտօն խնկելի, եւ երջանկութի խոստովանելի ամ երկրի. երկոյն յուսոյ ամենապատրաստ տեսութի. գթած ողորմած, որ ոչ պահես ոխս բազմութեան ամաց մեղանաց՝ քթթել մի ական. որ հրաշաւորս զարմանալիս՝ գերքան զամ ազինս նախնեացն՝ անսահման առաւելութբ՝ կրկին ընդ միոյ հանձեցար հեղուլ զողորմութեան վերնահոս վտակս ամենախնկաւորս ՚ի շնորհաբաշխութեանս նորում. Եւ զանտաւոտ զմուտս լուսարանի պատուհանին անձկութե նշուլից աղօտականաց, չափով գիտութեցն ըստ սողոմոնի, եւ խեւր խիկ նմին, եւ ինձ ընդ նորին՝ բացեր ընդարձակեցեր թշուառացելումս զառագաստն անջրպետարան ելիցն ողորմութեան՝ ձրի պարգեւացն ածականաց. զոր ընդ մէջ իմն մասնաւորգք աւետաւոր յիշատակաց, եւ ՚ի ձեռամն զույր տպաւորութիւն օրինակաւ նկարագրեր՝ զդարձարուքն առ իս, եւ ես դառնամ առ ձեզ. եւ յորժամ դարձցիս եւ հառաչեսցես, յայնժամ կեցցես. Նա զի եւ զողջամկջին սեւութիւն գունոյն՝ փոխարկել ՚ի ձեան պայծառութի. եւ զարանցն արեամբ ներկելոցն՝ յեղանակել ՚ի պատահումն գեղման, ըստ եսայեայ եւ զաքարեայ. եւ ՚ի մէջ բարկութեանն՝ դարձեալ զոյգ զողորմութի. քանզի անապատանալ քաղաքացն իներ,



եւ

և դարձեալ բնակիլ. և Ճանապարհացն ամոյն լինել
'ի չգոյէ մարդկան, և անդրէն հեռանիլ. և լքանիլ
'ի սովոյն ոգւով, և դարձեալ զօրանալ ձեռամբ. և
գնալ ա̄յ 'ի տեղի իւր զայրացմամբ, և դառնալ ողոր
մութբ. ըստ ներողութե զելսն, և 'ի մէջ սաստիցն
սպառնալեացն՝ կրկին պաշտպանութիւն, և 'ի սրտին
խռովութե յուղումն խնամոց գթութե. Այս մար
գարէիցն ձայն խնկելի, որ զօրհնեալդ քո գալստեան
զազատաբարոդ հրաման կանխաւ ազդէին.

2 Եւ զոր չէ բանիւ նիւթեղէն լեզուի ընդ թիւ
արկանել վն անբաւութեան. փոքունք են և
նուաղունք օրինակք և նմանութիք, հինք, և ժա
մանակաւորք՝ առ աւետեացդ քո յայտնութի, և խա
չիդ փրկագործութիւն. Որ յամ փայլի կառուցեր
զնորանն վկայութե արեան քո ուխտի, որք մեծա
բորբառ միշտ աղաղակեն՝ քան զդատակնիք մահուն
հաբելի՝ զյաղթանակ բարեաց քումդ հանդիսի,
կեանս կրկինս և անմահականս՝ շնորհաց, մկրտութե,
յարութեան, նորոգութե, առ քեզ ընտանութե,
ընդ հոգւոյդ միոյ միութե. քաւութե. ազատութե,
լուսաւորութե. մշտնջենաւոր մաքրութե. խնկապէս
երանութե. ընդ վերնոյնոցն կցորդութե՝ անկա
պուտ փառաց. 'ի շրթունս մեր ձայնիւ՝ բարձրելոյն
հաշտեցուցիչ բանից աղաչանք. Եւ զոր ահաւորն է
ասել, կարդեմ սատանօր՝ յիշատակ եղեալ մեծիդ
երախտեաց՝ Ած իսկ լինել ընտրութբ շնորհին, և
ընդ հաստոզիդ միանալ՝ տէրունի մարմնոյդ Ճաշակ
մամբ, և ընդ լուսոյդ կենաց խառնութբ. զոր կա
տարումն երջանիկ խոստմանն, ըստ պօղոսի բանին,



ոչ

ձչունէր օրհնեն. Այլ դու փրկութիւն եկեր հայրե-
նիդ քո հարստութեամբ արարեր, և կատարեցեր զլու-
սոյն յերկարաձգութիւն, որ առ քեզ պաշտեալ անհա-
մառօտեալ՝ քանիբ ամի. Եւ քեզ փառք ընդ հօր
քում՝ ՚ի գովեստ բարեբանութեան հոգւոյդ քո սրբոյ
յաւիտեանս յաւիտենից. ամէն.

---

† Ս Հրամէն շաւէղածոծ նշէն հեծութիւն՝ նորէն հոգւոյէ, առ
նոյն ողջէր նազրեանոյ բանէ. ՚ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ.

✻ Բան. ԾԸ.

1 Տէր զօրութեանց՝ բոլորից գոյից թագաւոր,
օրհնաբանեալ ողորմութիւն ած ամենեցուն.
Որ յաղթես սահմանի լայնատարած է ար
ձակութեան. ամենաբաւութեանց գոլ ես ողջանութիւն.
մինչ զի կարծրն քեզ հասանուտ է, և լոյծն քեզ
պնդակայունն չէ. քո իր անձնարաւորական՝ յաղթող
զօրութիւն ահեղ. հուրն՝ ցօղ լինի է զովական, և
անձրևն՝ բոց կիզանողական. Ո՛վ քարն բաւես ցու-
ցանել կերպարան ազդման, և ջեռնականն դնես ան-
խօս և անշունչ արձան. Ո՛վ պարտաւորն ողոքեալ՝
պատուական առնես, և զկարծեցեալն մաքուր՝ իրա-
ւամբք քննեալ դատես. Ո՛վ մատուցեալն ՚ի մահ՝
բերկրութեամբ բարեաց արձակես, և զամաչեցեալն՝
զուարթ տեսութեամբ օծեալ դարձուցանես. Կանգ-
նես զմատնեալն հալածից գլորման, և զաստանեալն՝
՚ի վստահութիւն վիմիդ հաստատես. Ո՛վ ախտացեալն
բազմահառաչ երիցանիկ կարգես, և զյառաջատեալն՝
դարձեալ անդրէն ՚ի յետս նահանջես. Եւ յորժամ

սպառին առ՚ի մէնջ բարիքն, զառաւել զարմանալին
յայնժամ ներգործես․ քանզի վ՟ն քո գիտես Թո֊
ղուլ զմեղս՝ և ջնջել զանօրէնութիւն, և քաւիչ լինել
անիրաւութեանց՝ և զմեղս մեր ոչ յիշատակել, ըստ
եսայեայ և երեմեայ․

2 Այլ առ շնորհս նորոգ փրկութեան՝ բազմօք գոհա֊
բանութբ հետեւեալ, ՚ի յաճախութիւն անբա֊
ւիցն՝ լռել առ սմին խնդրոյն կարկեցայ․ քանզի կրկ֊
նեալ զլուսոյ անսպառ բարիսդ, որ ՚ի քէն առ իմ
յամառս Թշուառութի, քոյին աղերսիւ առ քեզ
մաղթեցից, յարմարեալ դարձեալ ՚ի նիւթս բանիս
զսառ ողբերգութե այսր մատենի, լցից Թախծու֊
թեամբք և հեծեծանօք․ Այլ առեալ խառնեցից
՚ի տօնողիդ հաճութի, ընդ ցաւոցն՝ զդեղն․ ընդ
վհատութեն՝ զխրախոյսն․ ընդ յուսահատութեն՝
զյիշատակդ անուան հաստողիդ․ ընդ տխրութեանն՝
զփոփանսդ․ ընդ խմուման դառնութե՝ զքաղցրութի
կենարարիդ․ ընդ պատիժ օրինին՝ զշնորհն․ ընդ պար
տըս անիծիցն՝ զազատարար օրհնութիդ․ ընդ մարմնոյ
մահուն՝ զամիւ նորոգութիդ․

3 Հաւատամ հզօրիդ բանի, ուստի վկայեմ․ լուր
լռութե սրտիս՝ տէր յս, որ հնչումն է առ քեզ
մեծութեան ձայնի երկար գոչելոյ․ Որ մարմնակից
և պատկերակից մեր եղեալ, և քահանայապետապէս
անօրինակդ՝ զօրինակին խորտակել զլուծ, ընդ զեն֊
ման մահու անասնոցն՝ բարեբանեալ մարմնոյդ նը
ուիրմամբ, անմահապէս միշտ մատուցանիս, և անոր
նաղաբար քաւութիւն շնորհես․ ոչ սակաւամեղիցն
միայն, այլ և որոց հատեալ է ակնկալութի առ ես
կե

կենաց ։ Ո՜ի որքան զօրէ մարմնոց անդամոց առ մեղս կենդանութիւն, թէ և բիւրուց ամաց ունիցի յերկարաձգութիւն, յորժամ անձն բոլորեցուն վասն սորին՝ կամաւ և յօժարութեամբ զենումն ընկալեալ, մահու համբերես բաշխեալ 'ի քաւութիւն ։ Ո՜ի ոչ եթէ մաքրութեանդ աղբիւր՝ պաշտօնական գոյ մահու յօրինաւորէ կատարին, այլ կամօք քովք՝ հոգևոյդ գործակցութեամբ, 'ի հաճութիւն հօր՝ և 'ի մեր հաշտութեան ցանկ մատուցանես ։ Իսկ եթէ ամենիցդ անձանքննելն՝ խմոյս վասն իմ առ իմ փրկութիւն, 'ի դէմս իմ, իբր թէ ընդ քոյդ էութեան ես իցեմ մարմնով՝ պարունակողիդ կցորդ միացեալ ։ և դու բարերար, յաղագս իմ 'ի յիմս կերպի փոխանակեալ, ընդ իմում պարտեաց և մահ ընկալեալ անպարտդ՝ զմեհապարտիս վճասուց պատուհաս, և 'ի յիմ անուն յանցաւորապէս, ո՜վ թէ կամաւ ընդ քեզ ես կրիցեմ, բաղումն մեռեալ՝ և մնաս կենդանի ։ ոչ ուրացողացն ձեռօք, այլ դաւանողացն հաւատովք անձամբս նուիրեալ, և 'ի մասունս անհատս բաշխեալ ։

4 Նուէր ամենողջաքաւոր՝ չարատալեցն պաշտօնատար.

Մեծ ինձ և անկշռելի առ սմին դատէր՝ անյարմարագիր անձին յուսադիր, հաւատամ զփառս և զերջանկութիւն, քան թէ մարտիրոսութեամբ իսկ՝ թող թէ ուղղութեամբ իմս թշուառութեան յանցաւոր մարմինս վախճան ընդունել ։ Իսկ զանձառութիւն խորհրդոյս՝ այսու գիտեցի ։ դաւանէր իսկոյն, որ զի և մաքրոյն անձինք առանց նուիրման այսր յիշատակի՝ չև են իսկապէս կատարեալք իսպառ, եթէ ոչ ընդ այս հրաշակերտութեան մեծութեան հոգւով խառնեսցին ։



Ապա

Այս թէ մեղաւորիս մասին, կրկին մատուցար բա-
ժին առնելով՝ յուսոյր, իբրեւ այն՝ թէ ես ինքն եղեր Ճշմարտին, դրաւեալ զինս դաժանութի ընդ քում համեղութեն, պատարագեալ քոյինանիւթ զանդուա-
ծոյ նշխարաւդ կենաց լուսոյ։ Այսու ամի ՚ի վեր նատանն նախանձունէր բարեշնորհութեն՝ անհընարաւոր ախտից Ճարակ՝ զմարմին և զարիւն իւր բաշխեաց ՚ի քաւութիւն, ՚ի վեր կարծեցուցանէր քան զնահատակի վկայեցելոյ արեամբ կատարմամբ. յուսոյս օրինակ յարդաւորութե գրել զիս ՚ի փառս, այսմ փրկանօք հաւատալի երեւեցուցանէր, քան թէ քաւելոյ և ողորմելոյ և շնորհելոյ, որչափ ածականիդ առ մարդ զօրութիւն. և տէրական ածախառն մարմնոյն կամաւորական նուիրումն՝ առ անասնական սպանդին մատուցումն. և անմահն՝ առ մահկանացուս. լոյսն ահաւոր՝ առ ստուերոյինս. յաւիտենականն՝ քան զանցաւորս. բարձրեալն՝ քան զերկրաւորս. անստեղծն՝ քան զեղականս. բարին խնկութէ՝ քան զթխւրեալս բնութեամբ. մանաւանդ զի իւր է կամելն, և իւր կենագործելն. օրհնութեն առիթ՝ քան
զանիծիցս պատճառ.

5 Որդ՝ տէր խոցելոյս ՚ի սիրտ և յոգի՝ աղաչեմ գըթած, զառ ՚ի յերկնուստ ընծայեալ զդեղդ կենաց. մատիր քաղցրութե՝ առ ախտացեալս մեղօք. քաւեա՛ ՚ի պարտեաց՝ ամենակատար բաւականութի. Իսկ առ ՚ի յինէն՝ այս է ճշմարիտ և անխաբելի կերպարան բանի, որ զի հաստիչդ ամենից՝ ՚ի մերս բնակեա. և ըստ տարազու սերմանն՝ և ծնանելն է իրաւացի, ըստ ճշմարիտ բանին պօղոսի. և աչացաւացն ՚ի

տապ

տապ արեւու՝ ոչ է զօրութիւն. Այլ դու բարերար հաստիչ յոչէից՝ յարդես յաւէտ խնկապէս համայն, և զդաւանելն զքեզ՝ բաւական առ կենդանութիւն. և ոչ ես ընդ սահմանաւ փակեալ օրինի, այլ յաղթես՝ մանաւանդ թէ խզես զկապ կանոնի, և դու միայն մնաս պայման աւետեաց՝ համօրէն յանցաւորաց տարակուսելոց. Եւ քեզ ընդ Հօր՝ Հոգւովդ սրբով

փառք և իշխանութիւն յաւիտեանս. ամէն:

---

† Աջրաբէն յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հոգւոյ, անոյն ողբոց մատենից բանի: Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Աստուծոյ:

### * Բան. ԾԳ.

1 Եւ արդ յամի՝ առ ամ ակնկալութիւն քո է ողորմութիւն, սկզբնաւորեալ աչաց տեսանելեաց և սրտի իմաստից՝ յԱստուծոյ. քո է բարերարութիւն, կեանք և անմահութիւն. Պարգ առիս գթութեան, և հանդերձեցես դառնալ ինձ առ քեզ կրկին բերկրութեան. զի առանց քոց կամաց՝ ոչ ունիմ լինել նորոգ փոփոխեալ. և եթէ ոչ կամք քո գթացին, ոչ զօրեմ փրկել մահու պարտականս. և եթէ ոչ կառավարդ յարդարեսցես պատրաստել ինձ հետս ճանապարհի՝ որ առ քեզ բերէ, վի՛հ է ինձ

խորոց յաջմէ և յահեկէ.

2 Ահա ոչ պարծիմ՝ ամ իրօք նախատեալս. ոչ պանծամ դարովլեալս. ոչ խորախտանամ լքեալս. ոչ մեծաբանեմ պապանձեալս. ոչ ըմբոստանամ ձաղեալս. ոչ երջանկանամ եղկելիս. ոչ արդարանամ ամբարիշտս: Ո՜վ ի ոչ երբէք հարթ ընթանայ երիվար՝

առանց սանձակալի. և ոչ նաւ համբառնայ հանդէպ՝ առանց ուղղչի. և ոչ արօր կշիռ ինչ գործէ՝ առանց մաճակալի. և ոչ երկուորեակք լծոցն 'ի ճահ ճեմեսցին՝ առանց եզողի. ոչ ամպ վերաչուէ՝ առանց հողմոյ. ոչ աստեղք ցնդին և կամ գումարին՝ առանց ժամանակին. ոչ արեգակն փոխաբերեալ իւր շրջանակի՝ առանց տարրական օդոյ. և ոչ ես նոքօք հանդերձ՝ առանց բարեգործիդ Հրամանաց ակնարկութե. Ոչ ի դու միայն ես տուիչ կենաց բանականաց, և խնամիչ կարգաց հոլովման արարածոց, և 'ի քէն է ինձ փրկութիւն, ըստ սաղմոսողին, և դու ձայնես բարբառ խնդալից աւետեաց ծնչման՝ յականջս լսելութե ամ հասակի, եկա՛յք 'ի հանդիստ իմ բնաւին աշխատեալք՝ և ես մաքրեցից զձեզ 'ի պարտեաց. Իսկ զինչ օգուտ 'ի լուացմանէն, եթէ կրկնակի զաղրացոյց. և կամ ո՞ր օգուտ 'ի ճաշակմանէն, եթէ գեհենին մատնեցոյց. Եւ կամ զի՞արդ յԱբրահամ պարծեցոյց՝ խորթացեալս 'ի գործոց նորին. որդիս գարշութե հօր ամովրհացւոյ, և մօր քետացւոյ, կամ քանանացւոյ, ըստ մարգարէին որ առ իս՝ յանկաւոր ձայնի. Ժառանգս մերժելի եթովպացի՝ և ոչ սեննեկին սառայի, ըստ տեսանողին առ իս առածի. եղբայրս շամրնի՝ և կամ գոմորայ. համբակս անլուաց և անաղելի՝ խակակութ պորտոյն խակութե ռողոյ և ողողիբոյ, ըստ եզեկիէլի կրկնանախատն կշտամբութե.

3 Եւ քանզի 'ի ծուփս բազմավտանգս ալէտանջ հողմոյ սասանկապէս զգուեալ՝ ուժգին ըկանօք իսպառ տագնապմամբ 'ի ծովին՝ փոխեալ ընկեցեալ

'ի վտակն վայրենական ողողէհ · առ որս՝ զմատուցս
ձեռացս այսր անդր տարաբերեալ, եթէ 'ի հոսանաց
բնութեանց գարնանային գետոց, արտաձգեալ
յախտից ընթացս ողորմագին զլորման՝ ջրակուլ ո-
դեսպառ պղտորարբութե՞՝ դաժանահատ սկախառն
մամռարմատ խառնախուխ՝ մահաբեր երկամբք վա-
նեալ, ըստ որոց յուղեցն հեղեղեցին՝ հեղձուցեալ ·
Այսու առակաւ և ես եղկելիս՝ խօսիմ, և ոչ խնա-
նամ · գոչեմ, և ոչ լինիմ լսեալ · բարբառիմ, և ոչ զարթ-
նանամ · ճչեմ, և ոչ փոխադրիմ · փողեմ, և ոչ դա-
մարիմ · վերաւորիմ, և ոչ ես զգամ, կուոցն գարշուն-
նմանեալ՝ Թափուր յազդմանէ բարեաց խմաստից :
Արդարև չար առաւել յաւէտ իսկապէս քան զօ-
րինակդ՝ ճշմարտութիւնս, ատելի և մեղադրելի, և
ատենին քո արժանապէս մատնելի ·

4 Եւ քանզի անդառնալի ուղւոյն յիշատակ՝ աս-
տեացս պարտեաց՝ զայս կտակ թողի՝ որոց ըն-
թեռնուն, իմովս բանիւ առ ա՞ծ կարդալ հանապա-
զորդութե՞, այս կացցէ սահման յանձնառական խոս-
տովանութե՞ մշտնջենաւոր ձայնարկու առաջի քո՝
ամենակալ · զոր գիրդ ընդ մարմնոյս, և բանդ ընդ
հոգւոյս՝ զանսահմանելիդ մի՛շտ թախանձեսցէ, եթէ
յանեղծական մաղթողէ ընկալեալ աղերս 'ի յիմոյս
ձայնէ՝ բարեգութ մարդասէր, օրհնեալ յաւի-
տեանս · ամէն ·

† Այ երկրին յաւելուած կրկին հեծութե՝ նորին հոգւոյ, առ-
նոյն աղերս խաղաղական բանի: 'ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ:

## ✻ Բան. ԾԱ.

1 Եւ մի՞ զի սլացեալ ոգւոյս թեւօք 'ի թիւս ան-
բաւից ծննդոց մարդկան՝ եդի 'ի կրկէս
իմանալեացս մտաց, ո՞չ գտի զոք համեմատ
ինձ պարտաւոր, և առ այս զդաւթեան սաղմոսին
զբանն 'ի յերգ ինձ առի՝ դառն կշտամբութեան
գաւազանաւոր գործավար. ո՞վ յարիցէ ընդ իս 'ի
չարիս՝ հաւասարել յանօրէնութիւն. Եւ քանզի այս
ըստ սմին մասին՝ կնքեցաւ և ճշմարտեցաւ առ այլս
մահու, և ես վկայեմ կրկին հաստատեալ. առ այսր
խրատուն գրեմ՝ ինձ միայնոյ զեղծանիլ իսպառ,
քան իմաստս բանից բազմաց տարագրիլ. թերևս սո-
վիմէ առ այսու արդեօք՝ և ինձ շնորհեսցես, շնոր-
հողիս զպարտիս իմոցն:

2 Եւ արդ՝ զի՞նչ քեզ աղերս հաճոյական 'ի յայսմ
և 'ի սոյն, և 'ի ծուխ անուշից ընդունելի խըն-
կոց մատուցից՝ գոհեալ թագաւոր երկնաւոր քս՛,
եթէ ո՞չ զառ 'ի յինէն անիծելսն՝ օրհնել մաղթեմ.
զկապեալսն արձակել. ազատել զդատապարտեալսն.
բարեգործել զնզովեալսն. պսակել զթշնամանեալսն.
սփոփել զտրտմեցեալսն. դարմանել զխոցոտեալսն.
խնամել զտարտուցեալսն. պատսպարել զնենգեալսն.
զվիրաւորեալսն 'ի մարմին՝ յոգի բժշկել. Եթէ օրհ-
նութեան բանից առ որս մատուցից, լուիցես. իսկ
եթէ անիծից, մի՛ հայեսցիս ընդունել գըթած.
Ես տառապեալս ամենաթշուառ՝ 'ի վերջին սպառ-

ւորութեան մաղթանաց սյսր մատենի, 'ի բովանդակ
մտաց շնորհեցի խմոցն՝ փակեալ առ 'ի քէն զանիծիցն
դժնդակ ըղձիցն չարաշուք ձայն. և դժնէից նեն-
գողացն խմոց՝ ընդ բարիսն 'ի բոլոր սրտէ հաշտուե͞
որդահատեցի. վ՟ որոց և ծունր պաղատանաց կրկ-
նեցի. Ո՜րչափ դու ինձ ահա յոյց եղեալ առաւել
ողորմեցիս ըստ քոյդ մեծութեան՝ գոլեալ խնամա-
կալ, կեանքդ՝ մահացուիս. հզօրդ՝ տկարիս. ամենա-
կարդ՝ վարանելոյս. իմաստունդ աղբիւր՝ յիմարիս
և թմբրեցելոյս. ՚Քանզի յաւէտ սխալեալ անկայ
իբրև զողողակ մթայինն ոչ ընդելական՝ 'ի հաղբս մա-
հու անզգայապէս, չիմացայ զկորուստն. չգիտացի
զորոգայթն. չտեսի զմբռնօղ որսայն ծածուկ մեքե-
նայս. չկարծեցի զկապուածն կերպարանաց կեղծա-
ւոր վարմին. չնկատեցի զդայթագղուին շուրջանա-
կի. չզօշափեցի զպատանդին զցանցարկ կարթին. ժա-
մանեցին ինձ չարիքն, և ես ոչ կարացի ճանաչել, ըստ
սաղմոսողին:

3 ՚Քանզի և ով իմաստակի ումեմն արտաքնոյ բար-
ւոք թուեցաւ չար ասել զմահ՝ առ չիմանալոյն
պատճառի, և ես վկայեմ իմովս բանիւ. քանզի իբր
զանզգայ պատճառս անասնոց մեռանիմք, և ոչ զար-
հուրիմք. կորնչիմք, և ոչ հիանամք. թաղեցեալ լի-
նիմք, և ոչ խոնարհիմք. տարադրիմք, և ոչ տագնա-
պիմք. եղծանիմք, և ոչ զղջանամք. մաշիմք, և ոչ մը-
տաւեմք. պակասիմք, և ոչ պատրաստիմք. գնամք,
և ոչ զգուշանամք. գերիմք, և ոչ ևս զգամք. Իսկ
հանդիստ ասել երջանկին յոբայ զվախճան մարդոյ,
և ես խոստովանիմ զայն ընդ նմին, եթէ ոչ ունէի

զբեռն աշխատութեան մահացու գործոց ըստանձնել,
Մանաւանդ զի՞ որոգայթն դաւոնի, և ճնարադիրն
աներևակի · տարր ժամանակիս յանէից, անցեալն ան
յայտ, և ապառնին կործողական · ես անհամբեր,
և բնութիւն թերահաւատ · ոտք անհաստատք, և միտք
ցնդեալք · կիրք հարկաւորք, և բարք անժուժկալք ·
մարմին մեղսամակարդ, և յօժարութիւն երկրասէր ·
գիմամարտութիւն անկակից, և խառնութիւն ներհա‿
կական · բնակութիւն կաւեղէն, և անձրևք ուժգնա‿
կիք · կարիք անթուելիք, և պատահարք ամենադը
րաւք · միտք չարախնամք, և տենչմունք բարխաոյցք ·
կեանք առօրեայք, և զմբաղք սակաւաւորք · խաբէ‿
մունք յիմարութեան, և խաղալիք տղայականք · աշխա‿
տութիք ընդունայնք, և վայելմունք երազականք ·
համբարք ոչնչից, և պահեստք հողմոց · նմանութիք
ստուերաց, և կերպարանք ծիծաղելիք · Քանզի իբ‿
րև եկն եհաս պատուիրանն, ըստ պօղոսեան բա‿
նին, անպատրաստ գտեալ զիս ինքեան, մեղքն կեն‿
դանացան յանդիմանել յարդարութեցն, և ես մա‿
հացայ կենացն, և կենդանացայ կորստեանն։
4 Գողացան օտարք չարին գումարք՝ զստացուածս
սրտիս իմաստից, ըստ գրոյն կանխաբանութեան ·
որով եկն եհաս խոկոյն աստանօր իմաստութեան ինձ
նուաղանալ, ըստ առակողին, և առաւելուլ ոչ բա‿
րույ ցանկութի · Ո՛չ յառեցի զակն ոգւոյս 'ի դը
լուխն իմ կենաց քո՞, որով ընդ ուղիղն հետևեցայց ·
Քանզի կամելով ուժգնին ընթանալ, ընկլայ սաստ
կապէս · յանչափն ձգտիլ, իմոյն ոչ հասի · 'ի մեծա‿
գոյնն ամբառնալ, սաստուստ գլորեցայ · յերկնայն

ուղղոյն՝ անդնդոց մատնեցայ ․ 'ի զգուշանայն առա
ւել, յաւէտ վնասեցայ ․ յանարատն պահել, մանր
խորտակեցայ ․ կարծելով ընդ աՀեակն միցիլ, յաջն
գթեցի ․ 'ի վերկրորդն խուզել, զնախնին կորուսի ․
'ի խնդիր սակաւուն, 'ի կարեւորացն զրկեցայ ․ 'ի յուխ
տին պաՀել, դաշինն դժրեցի ․ առ սովորութեանն
կարիս՝ կորուսիչս գտի ․ 'ի փոքունցն փախուցեալ՝ մե
ծամեծացն մատնեցայ ․ զոր ես ինքն ինձէն ստեղ
ծեալ՝ չարաչար դատախազ անձին կարգեցի ։ Յո
րոց փրկել զմատնեալ գերիս դու միայն զօրեսցես,
կենաց մատուցեալ՝ ընծայեալս մաՀու՝ զՀոգիս ․
զի դու միայն՝ տէր յոյս, ճանաչիս բարերար, անսաՀման
փառօք՝ ընդ Հօր և Հոգւոյդ սրբոյ օրՀնեալ յաւիտեանս
յաւիտենից ․ ամէն ։

† Աղօթքն յաւելուած ներքին ՀեծութԷ՝ նորին Հանդէ, առ
նոյն աղէրս Հաղորդմանց բանի ։ 'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ ։

## ※ Բան ․ ԾԹ ։

1 Իսկ զաւխթան՝ մաՀու դիպուածս՝ դժոխար
մատ ծառայս դաւանութեան պտուղք, ըն
տանիք Թշնամիք, Հարազատք Հակառակք, և
որդիք դաւաճանօղք, ստորադրեցելովք մատամբքդ
նշանակեցից՝ գրեալ յանուանէ, որ են այսոքիկ ։
2 Սիրտս նենգախորՀուրդ ․ բերանս չարախօս ․ աչքս
յոյլրատատես ․ ականջս վշխալուր ․ ձեռնս մաՀա
ձիգ ․ երիկամունքս անխորՀ ․ ոտքս մոլորաշաւիղ ․ ըն
թացքս աներկիւղ ․ Հետք խոտորնակ ․ շունչք ծըխա



խա

խառն · գընացք խաւարային · գոյութի լերդի վիմա-
կան · խորհուրդ ծորեալ · կամք անկայուն · չար ան-
փափոխ · բարեմասնութիւն սասանեալ · անձն տարա-
գիր · աւանդ վաճառեալ ։ Գաղան վիրաւոր · թըռ-
չուն նեհատար · փախստական քարավէժ · ըմբռնե-
ցեալ ձկնապարտ · աւազակ ծովային ։ Զինուոր
նենգաւոր · մարտիկ անպատրաստ · սպառազէն ան-
ժուժկալ · մշակ հեղգացեալ ։ Աղօթական անխրա-
խոյս · բեմական ստորնաքարշ · քահանայ անկնդրուկ ·
օրինական աննուէր ։ Կուպիր կշտամբեալ · իմաստակ
խելագար · ճարտասան անճոռնի ։ Երգ անպատ-
կառ · դէմք անամօթ · երեսք լպրշեալ · գոյն ան-
համբոյր · տիպ տմարդի · գեղ ծանակեալ ։ Խորտիկ
խանգարեալ · ճաշակ գարշեցեալ · այգի գաղձնաւոր ·
որթ որդնահար · պարտէզ փշաբեր · հասկ ունա-
հայ · մեղր 'ի մկանց ճարակեալ · անպատուպր անկեալ ։
Անապարծ յուսահատ · անհամոզելի նզով · անհաշ-
տական բաժանեալ · ունայնաբան շաղակրատ · պաճա-
րանիտ գոռոզ · անաշնօրէն ապիրատ · դժոխային ա-
գահ · աներասան յանդուգն ։ Մոլեգնութի անուծ ·
ձեռնածութի սպանող · տատանկացան երկրագործ ·
երջանկութիւն եղկելի · մեծութի վատթարեալ ·
վայելչութիւն անշքեալ · կարողութի տկարացեալ ·
բարձրութի խոնարհեալ · փառաւորութի ընդոտնեալ ·
պատուէրանազանցութի յարակայ · սխալանք ինքնակամ ։
Մտահարար կամակոր · խորհրդակից նենգաւոր ·
բարեկամ հատուածեալ · հազարապետ գողամիտ ·
մերձաւոր կծծի · բաշխող ժլատ · վերատեսուչ կար-
կամ · ոդի անախտակիր · ինձք անսէր · բաղք սանցող ·


աղիք

ողիք անդթականք · դնացք անխոհեմ · աներևոյթք
ձևասեալք · ծածուկք անխծեալք · դիպուածք թըշ-
նամանեալք ։ Սատանական վտանգ · շահարար շը-
ւայտեալ · պաշտօնեայ արբեցող · գանձուց սատ-
կան երկմիտ · պատգամաւոր բանսարկու · դռնապան
քնեած ։ Աղքատ հպարտ · մեծատուն ժխտող ։
Իշխանապետ անօրէն · պահապան մատնիչ · բնակա-
կից չարախօս · սուրհանդակ անժաման · թղթաբեր
պրտաւոր · տառապեալ խռովարար · միջնորդ անիմաստ ։
Ազգոյ արատաւոր · թագաւոր թարմատար · կայսր ո-
գեկործան · իշխան տիրադաւ · զօրաւար · զրկող · դա-
տաւոր ակնառու · ռամիկ ինքնագործ ։ Նախատողի
ծաղր · սիրելոյ աշխար · բանադրի դարով · յանդի-
մանչի դատախազութ ։ Քանզի և՚ի վեհագունիցդ
կոչմանց՝ էր ուրեք արդեօք՝ զի էի · իսկ ՚ի վաթա-
րականագոյն մասանց՝ եկն երբեմն եհաս՝ զի եղէ ։
Արդ՝ այսքան վնասակարութիւնք խարդախութեց
յաճախագունից, յորոց յոմանց խաբեցայ իբրև ըզ-
յիմար , և յոմանց տիրեցայ իբրև զտկար՝ կամա-
մատնեալ զիս ինքն մահու ։

3 Արդ՝ զո՞րս ՚ի վերադրելոցդ մասանց՝ քեզ առե-
լեաց, և իմ կորուսչաց՝ ՚ի տպաս պաշտաման քեզ
ընծայեցից · զո՞րպիսիս տպականութե պարադրելոյ՝
ամենօրհնեդ քո մեծութեան հանդէպ կացուցից · և
կամ ո՞րքանեօք երկայնմտութե՟ք համբերեսցես այս-
քանեաց պարտուց · ո՞րքան ներես · ո՞րպէս լուեսցես ·
զի՞արդ իսկ անսայցես · եթէ ոչ մատնեսցես հարուա-
ծոց գանից զարժանիս ստակման մահու ։ Արդ՝
այսոցիկ անհնչայլ մթութեց՝ հոգւոց խաւարի ոլոր-
մու

մութեամբ. լուսոյ քոյ պատահեսցեմ՝ բժշկել, քաւել, և կենագործել՝ զօրեղութեամբ անյաղթարելի. և քեզ փառք յաւիտեանս. ամէն.

† Այս երգոյն յաւելուածն չէին հեծութեան՝ նորին հօլովէ, առ նոյն ալէքս նոյնքանոյ բանից. ՚ի նորոյ որոց նոյն՝ ըստ այս.

# * Բան. ՂԱ.

1 Տէր, անուն ահաւոր. մեծութեան տեսակ. անքննելի բարձրութեան պատկեր. անսահման զօրութեան կերպարան. փրկութեան լուսոյ. պաշտպան կենաց. դուռն արքայութեան՝ վերնում հանգստեանն. ճանապարհ հանգարտութեան. ապաւինութիւն նորոգ և անախտական երանութեան. ամենակալ իշխանութեան՝ բոլոր էականութեան. օրհնութեան կոչումն. ուետեաց ձայն. բերկրութեան բարբառ. անմահութեան դեղ. որդի անճառ հօր միոյ. Որ ինձ անճարին է, քեզ դիւրին է. որ ինձ անհասանի է, քեզ սահմանեալ է. որ ինձ անանցն է, քեզ հպաւոր է. որ եղկելոյս ինձ ծածկեցեալն է, քումդ երանութեան մերձաւոր է. որ ինձ անկարելին է, քեզ կատարեալ է. որ ինձ անկշռելին է, քումդ անճառութեան չափեալ է. որ ինձ յուսահատութեանն է, քեզ ափոփանաց է. որ ինձ անբժշկականն է, քեզ անվտանգելի է. որ ինձ հեծութեանն է, քեզ խնդութեան է. որ ինձ ծանունք են, քեզ թեթևադոյնք են. որ ինձ եղծեալն է, քումդ զօրեղութեան գրեցեալ է. որ ինձ կորուսեալն է, քեզ ըմբռնեալ է. որ ինձ անճառն է, քեզ համարեալ է.



որ

որ ինձ մռայլն է, քեզ ճառագայթ է․ որ ինձ ան‿
թիւն է, օրհնեալդ քում ձեռին բովանդակեալ է․
որ ինձ սոսկալին է, քեզ հեշտալի է․ որ ինձ փախ‿
չելին է, քեզ վանելի է․ որ ինձ անմատոյցն է, քեզ
դիւրահերքելի է․ որ ինձ մահաբերն է, քումդ հա‿
կանուն զօրութե՝ ընդ ոչ գոյսն համարեալ է։

2 Այլ դու ողորմած տր բոլորից տր յս քս, և
այսմ զօրես առնելից հնար՝ եթէ գթասցիս․
վն անուան փառաց մեծութե հօր քո օրհնելոյ,
վն կամաց գթութե որդւոյ քո տր, տես 'ի տա‿
ժանաւորս կրից յանդիմանական յայտնութի, և 'ի
խորոց սրտի ինքնամատոյց դատախազութի․ նայեա
'ի բնութենս ամենապատաղ խակութի, և պարգևեա
բժշկութի վիրացս, և հնարաւորութի կորստեանս․
զերծումն բազմամասնեայ մահուս, և շաւիղ կենաց
ապականելոյս․ նորոգութի եղծմանս, և մուտք յու‿
սոյ ամբարշտելոյս։ Եթէ ես զմննմանն ինձ կամս
ցուցի, որչափ առաւել դու զբնաւորականդ քո
զընտանի բարերարութիւնդ․ եթէ 'ի փշոց պտուղ
ընծայեցաւ քաղցրութե, որչափ առաւել 'ի ծառոյդ
կենաց՝ ճաշակ անմահութե․ եթէ ես ինց ատելեաց
ողորմութե մաղթեցի, դու քոյոյս զեմորդ ոչ կրկին
մատուսցես հրճոր՝ յանմնացագդ առատութէ։

3 Արդ՝ տես 'ի քոյդ մեծութի՝ բարձրեալ, նայե‿
ցեալ 'ի յիմս փոքրկութի․ ընկալ զսակաւ խոս
տովանութիս անհամար մեղացս, որ զբնաւն համոյն
տեսանես․ և որպէս զիմին գթել՝ ոչ գրեցեր, և
զաւազոյս փոքու սասանել՝ մի համարեսցիս․ և իբ‿
րև զդաւթին՝ ընդ մեղսն առել խնդոյն անցուցեր

զպատիժ պարտուցն, և առ իմ ձայնիս հեծութիւն՝
զնոյն գործեսցես երկայնմտութի ․ որ տաս ամենե֊
ցուն առատապէս անաչառութե՝ ով յաղթօղ բարի
բազմիմաստ ․ և ոչ նախատես զյետմնեալ ստրուկս՝ ով
ողորմած և ամենաստեղծ ․ տացի՛ր վերստին, և մի՛
կորուսաներ զբուժեալս արեամբ քո, և զգնուծեալս
սեռամբ քո՝ գթած ։ Զի քո է փրկութիւն, և ՚ի
քէն է քաւութի, և քեզ վայելէ փառք յամենայնի
յաւիտեանս ․ ամէն ։

---

† Ս. Էրաոին յաւելուած իրէին հեծուրէն՝ նորին հոգւոչի, առ֊
նոյն աղէրս հողբանից բանի ։ ՚ի խորոց որոց երօր՝ ընդ ...

*Բան․ ՃԲ․

1 Օրհնեալ Տր յմ ընդ Հօր, ՚ի կամս հաճոյն
հոգւոյդ քո Տէր ․ և օրհնեալք Տմ՝ առ
՚ի յօրհնելոյդ օրհնեցան ․ օրհնեալ միայն՝
որդի օրհնելոյ ․ չէ՛ք իմ թագաւոր իշխեցօղ շնչոյս
բաց ՚ի քէն՝ ք՛տ ։ Ա՛յս է օրհնութի յակոբայ՝ ամէ֊
նայնի, յորժամ բարձից զձեռս նր ։
2 Արդ ողորմեա՛ց ինձ Տէր բարեգութ՝ ըստ նախ֊
նիոդ քո սովորութեան, և օրհնեա՛ զանօթս քո
բանաւորս, ըստ ձայնին գութի՝ և ըստ մոլեչի ․ զի
բանիւ քո փրկութե ժամանեալ, հասից քաւութե՝
օրհնեալ առ ՚ի քէն ։ Որպէս ինձ հրաշագործեա՛
ողորմած արքայ երկնաւոր, ոչ անկելոցն ՚ի բազմա
ժամանակեայ մահձացն խշտեա, ժողովելոցն ՚ի սրա֊
հին բեթհեզդայ ։ Յորոց մի էր և կրկին թերահա
ւատն՝ երից տասանց և ութի մեոյ ամաց ախտացեալ



յօ

յօդիցն լուծմամբ, որում ո՛չ անխնայեցեր զբժշկու-
թեանն ձեռնտուութի, իբր գիտելով զամենայն չա-
րութին՝ որ նիւթեացն քեզ յաւուր մատնութեան
դաւն գիշերին տիրամատնութն՝ երախտաւորիդ,
մեծիդ և բարերարիդ։ Որ թէպէտ և կանխաւ իմն
զգուշացուցեր, թէ մի՛ մեղանչէր՝ զի մի՛ կրկնեսցին
կրկին քեզ չարիք, ոչ ինչ վերջացաւ լինել ձեռնե-
րէց սկզբնաւոր անհամբուրելի՝ դատողացն զքեզ
՚ի խաչին։ Եւ դու այնպիսւոյ անյարիր ջատուկ մա-
հու ծնդեցեալ չարաչուք առն ողորմեցար, անձնա-
բարութի. սիրալի՛ մարդասիրութի. սարսափելի՛ նե-
րողութի. սոսկալի՛ երկայնմտութի. անբաւելի՛ քաղց-
րութի. փառաւորելի՛ հեզութի։ Որ միշտ յաղթիս
՚ի գթութէ, և ո՛չ թշնամանիս. պարտիս յողորմութէ,
և ո՛չ պարսաւիս. բռնադատիս ՚ի մարդասիրութէ,
և ո՛չ անդոսնիս. հարկիս ՚ի բարութէ, և ո՛չ հոյհոյիս.
ստիպիս ՚ի սիրոյ, և ո՛չ բամբասիս. Պաղատիս դար-
ձին իմ առ քեզ, և ո՛չ ձանձրանաս. աղօթես զկնի
ապերասանիս, և ո՛չ լքանիս. ձայնես չլսողիս, և ո՛չ
սրտմտիս. փութաս մեղկելոյս, և ո՛չ խափանիս։

Առ չարս՝ ես բարի. առ ամենապարտս՝ ես ներող.
առ մեղաւորս՝ ես քաւիչ. առ խաւարեալս՝ ես լոյս.
առ մահացեալս՝ ես կեանք.

3 Այս են գիրք՝ առ հոգեշունչ օգտակարութն,
որ յաճախս ծնանին երկնաւոր պտուղս՝ ան-
ճառս և զարմանալիս։ Այս և ինձ թշուառացե-
լումս՝ օրհնեալ ամենապարգև, արի՛ առ զմահիճս
խշտացդ մեղաց ՚ի վայր կործանմանդ, և հետևեալ
ժամանեմ յանդորր հանդիստ անաշխատ կենաց.

Խոցեցես ամենակարող սուսերաւ բանիդ հրամանի՝ զերիզապնդեալ մահազգեստ պարփակութի՝ դժո-խագնեայ կապանացս. և լոյծ ինձ զհանդոյցս խեղ-դողականս ոգեպահանջ սաստկութես, առաքելով զարժանաւորս մահու՝ յազատութին վերին անանց բերկրութեն, կենսաբեր և ածային քո բանիդ։ Մի՛ տակաւ տակաւ ազդեսցես, և մի՛ օր ՚ի յօր յեր-կարաձգեսցես, զի մի՛ ստուար ծանրութի բեռանցս մեղաց՝ տիրեսցէ թիկանցս ազդերաց, և կործանեալ զիս կորացուսցէ՝ հայել ՚ի դժոխս, և ուժգնակի դո-ռոզ բռնութե՝ անպարապ հոգևորական զինուն ա-րարեալ, մահու ծառայեցուսցէ։ Այլ օգնեա ինձ՝ բարի վճռակից՝ հեծուն կարեացս մահու երկանց, առեալ յինէն զփոյթ սատակմանն, ոչ երբեմն յու-սոյ պահակին. որով կառուսցես զվայելչականն յաղ-թանակի արի զօրութեանն, պնդապէս հաւատով յուսոյն կարծրութե՝ ընդ քեզ բևեռել անսայթա-քելի։ Եւ քեզ ընդ հօր՝ հոգւովդ սրբով՝ փառք և իշխանութի յաւիտեանս. ամէն։

---

† Ս. Երանւոյն յաւելուած նշխէն հեծութե՝ նորին շնորհալւոյ, ա-նոյն աղերս համբանաց բանի. ՚Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ։

## ❋ Բան. ԾԹ.

1 Հաւատամ և վկայեմ մտաց գիտութե՝ ՚ի քէն ազդեցել ոգւոյս իմաստի ուշիմս տեսման. զի ըղձալի են քեզ՝ բարերար, աղաչանք մե-ղաւորաց, քան զխնդրուածս արդարոց։ Զի մինն՝ զպարտուն անձինն յայտնեալ՝ շնորհիդ քո սպասէ.

առ

առ որ ծանուցեալ զբնութեանս չափ, և մեծ կշտամ-
բէր աստէն համբարձեալ՝ ինքնագոր մարտակից նմին
խակ ինքեան, և դառն դարովիչ և ծածկատես դա-
տախազ։ Իսկ միւսն՝ յարդիւնս բարեաց իւրոց նոյն
լով, յանձին հարեալ ձեռն վստահութեան, մռանոյ
զաստուածն բնութեան, և պարգևաց՝ քան ողորմութեան
դիտեալ ակն ունի։ Միոյ առ միմն՝ անէթի են
ստեղծուածք ձաւից, որ զողորմութեանցդ քո՝ փողով
բարբառոյ աղդէ. իսկ առ միւսն՝ լռեալ են քոյդ՝
ամենքնին ահաւոր և ամենախնամ. ամաչեմ ասել,
թէ և երկրաւորիս գործոց պատմութի՝ զքոյդ յա-
ռաջեալ։ Արդ՝ արի՛ տէր, և մի՛ զօրասցի քան ըզ-
քոյդ՝ աջ հողեղինի. մի՛ կշռեսցին ողորմութիւնք քո՝
ընդ ջանից մարդկան։

2 Այլ արդ՝ առողջքն անդամօք՝ անկարօտք են ըզ-
ժըշկութեան. և տեսանողականքն աչօք՝ չունին
պէտս առաջնորդի. և փարթամքն ընչիւք՝ ոչ դե-
գերին առ դուրս լիոցն. և լիքն յղփացեալքն՝ ոչ
սպասեն փշրանաց սեղանոյ հացի. և ոյքն վարուք՝
ապէնիւոյ են ողորմութեան. Այլ արդ՝ ինձ գթասցիս
ողորմեա՛ բարձրեալ երկնաւոր հայր, ամենատուր
վարանեցելոյս։ Զանզի թէ էի իբրև զյօբ, ասէի
զանձն իմ իբրև զնա արդար և անարատ. թէ իբրև
զմովսէս, ասէի վստահութեամբ զնորայն, ծանիցէ տէր
զայնոսիկ՝ որ իւրն են. եթէ իբրև զդաւիթ, ասէի՝
արարի զիրաւունս և զարդարութիւն. և դարձեալ՝
զմեծն քան զբնութիւն մարմնոյ, զմեղս թէ տեսա-
նէի 'ի սրտի իմում՝ մի՛ լուիցէ ինձ տէր։ Թէ էի
իբրև զեզիա, ասէի զանձն իմ ոչ եմ. թէ էի իբրև

զերեսս, զբոյդ ճշմարտութիւն յանձն օրինակէի.
Թէ էի իբրեւ զեզեկիա, պարծէի զբարուոքն եւ զկրա
ւորին՝ գնացի առաջի քո արդարութե. Թէ եւ իբրեւ
զպօղոս, ասէի զիս բնակարան ազդարան եւ ընդու-
նարան այ բանին. Այլ ես անօրէնս ի մէջ գիտու-
թեան օրինացն, ոչ միայն չունիմ զանձն իմ քեզ ըն-
ծայել յարգանօք բանից իբրեւ զնոսա, եւ զընաւին
չարս՝ ոչ զբարիսն զայնոսիկ առաջի քո յիշատակել
այ եւ ոչ զամենասուրբ գոյից զբարեհռչակել անուանդ
հզօր՝ ամբարշտեալս լեզուաւ գովել. Իսկ դու առ
ամ ճնարս զօրաւոր՝ մատո ինձ ոգի փրկութեան. աջ
պաշտպանութեան. ձեռն այցելութեան. հրաման բարու-
թեան. լոյս ողորմութեան. բան նորոգութեան. պատճառ
քաւութեան. գաւազան կենաց օգնութեան. Ո՜վ իմ
դու ես յոյս ապաւինութեան՝ տէր յս քս. օրհնեալ
ընդ հօր հոգւովդ սրբով՝ յաւիտեանս յաւիտենից.
ամէն.

---

† Ս. Հօրայն ցուցեալ կրկին հեծութեան՝ Ներքին հանդերձ, առ-
նոյն աղէրս մաղթանաց բանի. ’Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ.

## * Բան. Կ.

1 Եւ արդ՝ ոչ զի ոչ վայելէ օրհնաբանութիւն
’ի բերան մեղաւորի՝ ’ի ճշմարիտն առակէ
կանխաւ իսկ ուսայ, զիարդ յաւելից կրկ-
նել զնոյն գոլութիւն՝ աղաչաւորս բազմապատկաւ,
որ հանապազ ընդունիմ անէծս ’ի սաղմոսին բարե-
բանութեան. Ո՜վ իմ իմ երգեցից ինձ վտանգս, եւ
արձանացուցից նախատինս. եւ ’ի մերկութեան գրկի՝
փու

փուշս ընդ շուշանաց ժողովեցի : Օ՜ խո՟րդ ընդ դաւթի համարձակեցայց ասել, թէ զատամունս մեղաւորաց փշրեսցես : Օ՜ խո՟րդ դարձեալ, թէ մի՛ անօրէնք բնակեսցեն առաջի աչաց քոց . Օ՜ խո՟րդ, թէ դատ արա ինձ տէր ըստ արդարութե՟ն քո, ըստ անբծութե՟ն իմոյ որ յիս : Օ՜ խո՟րդ, թէ կատարեսցի՛ն չարիք 'ի վ՟ր մեղաւորաց . Օ՜ խո՟րդ, թէ խորտակեսցին բազումք մեղաւորի և չարի . և զայլն որ զկնի . Օ՜ խո՟րդ, թէ տեղասցէ 'ի վ՟ր մեղաւորաց որոգայթ հուր և ծծումբ : Օ՜ խո՟րդ, թէ սատակէ տ՟ր զշրթունս նենգաւորս՝ և զլեզուս մեծաբանս : Օ՜ խո՟րդ, թէ փորձեցեր զսիրտ իմ և ոչ գտեր անիրաւութի՟ւ : Օ՜ խո՟րդ զյաջորդն սմին, թէ ես պահեցի զճանապարհս խիստս : Օ՜ խո՟րդ զևսն, թէ ես արդարութ՟բ երևեցայց երեսաց քոց . Օ՜ խո՟րդ, թէ և ես եղէց անբիծ ը՟ նմա : Օ՜ խո՟րդ զմիւսն, թէ հատուսցէ ինձ տ՟ր ըստ արդարութե՟ իմում, և ըստ սրբութե՟ ձեռաց իմոց . Օ՜ խո՟րդ անձամբ ինձէն զատութիւն իմ ծանակեցից՝ ասել ընդ ո՟յն, թէ լուացայց սրբու՟թ զձեռս իմ : Օ՜ խո՟րդ 'ի մէջ նանրութեան, զամբարշտացն աթոռս բամբասեցից : Օ՜ խո՟րդ զերջանկին պարծանս՝ թշուառացելումս կերպաւորեցից, թէ դատ արա ինձ տ՟ր՝ զի ես յանբծութե՟ իմում գնացի . Օ՜ խո՟րդ օտարս 'ի բարեաց՝ գիտողիդ գաղտնեաց արդահատեցից, թէ մի՛ համարիր ընդ ամբարշտս զանձն իմ : Օ՜ խո՟րդ ես ինքն գոլով՝ զայս անիծեցից, թէ տուր նոցա տէր զգործս նոցա . և 'ի կարգ բանիցն համարձակեցայց .

2. Բանզի թէ զյետինս բանիցն՝ առաջնովքն ա-
տանօր եդից, կրկին ծանրանան ինձ ցաւք, և
յաճախեսցեն դառնութիւնք․ Բայց 'ի շեղջեցելոցն
արտասուաց՝ դոյզն մի չափեալ, բաւականացոյց հա-
նապազորդեան յանդիմանութեան սաղմոսարանին ըն-
տանի ձայնիւն, որ զպարտաւորեալս միշտ կշտամբէ․
առ որս՝ և սպառուած քառասներորդի իններորդի
հատուածի բանի յանդիմանողին՝ զիս դարշեցուցանել,
հանապազ խոյտառակէ․ խցեալ զբերանս 'ի փառա-
բանութենէ, եղկելի զանձն իմ ցուցանէ․ աստուածոյին
ձայնիւն դատապարտեալ, յակնկալութենէ կենաց լքա-
նէ․ միանգամայն և վիրգս մահու ինձ՝ իբր 'ի պատ-
ներշէ առաքէ․ ³Բանզի թէ չար է անէծս առնուլ
յօտարէ, ապա անձամբ զանձն անիծանել՝ կրկին չա-
րաչար․ իսկ եթէ չառնուլ նախատինք 'ի մերձաւո-
րաց՝ օրէնք են, ապա 'ի տեսողէն հայել զայսոսիկ,
կրից արեան տաժանմունք՝ վիշտք աղէտից և խէթք
մտաց․ Բայց թէ առ խոնարհութենէ անձին իւրում
մատնեսցի, ջնեալ և կշտամբեալ անիծիւք 'ի լեզուէ
իւրմէ, 'ի խոստովանեալ և յամէնիշխան շրթանց բե-
րանոյ վերնոյն՝ օրհնեսցի․ զի ճշգրտեալ թարգմա-
նեաց զդարձն իւր առ նա՝ զհետս կենաց ոչ լքա-
նելով․ սահմանաւն սիրոյ՝ զպարտեացն արմատ կր-
ճատեաց, ոչ տիրել 'ի խարդաւանաց չարաբանողաց․
ոչխար հօտին քո գտաւ բժշկեալ՝ դիմելով 'ի յաղն
բուժիչ աղեացն արկածից․ Բայց և անբանական
բարոյից է ասուն կենդանեաց՝ 'ի մէջ դալարոց ծաղ-
կածին վայրից՝ կենաձիր բանից՝ թմբրութեան մտաց
'ի յարօտս մահու ճարակել․

3 Եւ արդ՝ քանզի ի մէջ տաճիս վերջին կշտամբո_
ղական, և առ իս տէնարկէ զդիպուածոյն չար
պատահմունս. որ ինձէն անձին նիւթեցի միշտ զեղ_
մունս կիզանողական հրոյ տանջման, հանել ՚ի յերկ_
նուստ զդուռն գագաթանս իմաստնարանի բազմա_
կիս. Քանզի զխ͞րդ ՚ի յարդիւնս ինձ օգտից սող_
ման եկեսցէ, յորժամ անպտուղ ՚ի բազմերգութեն
լինիցիմ, ոչ նուաղել հոգւով, բաց թելադրելոյն
պօղոսի. Օ խ͞րդ ընդ մարգարէին եւս զորունին
խառնեցից՝ մեծ մեղաւորաց՝ նկունս պիտանեաց՝
տալ ընդ ո՞յն, թէ ՚ի բաց կացէք յինէն ա՟մ՟ք՝ որ
գործէք զանօրէնութի. Օ խ͞րդ ոչ ունելով ՚ի
բազմացն պատուիրանաց կատարեալ՝ շնորհին և օ_
րհնին՝ բարբառեցայց զերջանիկին, որ նախ ինքն ա_
րար՝ զոր մեզ կանոնեաց, թէ քանզի ծառայս քո պա_
հեցի զայս. և որ զհետն գան ասացէ՞լքն. Օ խ͞րդ
թափուրս ՚ի լրութէ իմաստից կենաց՝ ընդ երկիւ_
ղածս ա՟ծ օրհնեցից. Օ խ͞րդ ընդ մեծին մաղթա_
նաց զինմ յօդեցից, թէ զմին խնդրեցի ՚ի ա՟նէ՝ ըղ_
տեսիլ վայելչութե՟ն նր, և զհրամանատարութի տա_
ճարի նր. Օ խ͞րդ ՚ի հրաժարելէն ինձ ձեռնամբ_
խնցից, յորժամ լսեմ, թէ ուղղոց վայելէ օրհնութի.
Օ խ͞րդ շրթամբք իմովք զանձն իմ անիծից՝ ա_
սելով զինի յոլովից առեալն, թէ երեսք ա՟ն ՚ի վ՟ր
չարագործաց՝ սատակել զյիշատակս նոցա յերկրէ.
զխ͞րդ զմիւսն դարձեալ, թէ չարք վաղվաղակի սա_
տակեսցին. Օ խ͞րդ զկերպարանացն իմ նմանու_
թիւն, թէ բաղուկք անբարշտաց խորտակեսցին.
Օ խ͞րդ սատակման ինձ պաղատեցայց, թէ ահա

 մե

մեղաւորք կորիցեն ։ Ո՜ խորհուրդ զբազմայածեան լեզուս 'ի յօրհնեալն բան մխեցից, թէ ասացի պահել զճանապարհս իմ, զի մի՛ մեղայց լեզուաւ իմով ։ Ո՜ խորհուրդ փշովք մեղաց հեղձեալս՝ զանարատին պարծեցայց, թէ այլ զիս յանբծութեան իմում ընկալայ ։ Ո՜ խորհուրդ ես մեղաւոր և կրկին պատժաւոր՝ զհանդունակիցսն դարմեցից ապրել 'ի նոցունց, թէ 'ի մարդոյ մեղաւորէ նենգաւորէ փրկեա՛ զիս՝ աստուած ։

4 Ո՜ խորհուրդ իբր ոչ կուսապաշտեալ անպատկառապէս պերճացայց ունայն պանծանօք ասել ընդ դաւթի, միթէ մոռացեալ իցէ մեր զանուն ա͞յ, կամ ձգեալ զձեռս 'ի մաղթանս օտար աստուածոց ։ քանզի որ 'ի մեղս դարշութեան խոնարհեցայ, առաջի՛ կայ նորին կառուցեալ առէ՞լ 'ի պաշտօն յաւնականացն ախտածածիցն պոռնկապատիր պատկերացն կերպարան՝ աստարտոյ և քամովսայ և մեղքոմայ արուարձանի, և թարահատայ թարմատարի, ընդ զազրատեացն կանացեաց՝ իշանդամեացն պատկառանք՝ անմերարկու ծանակութք ։ Իբր ոչ պատկառեցից սովիմբ ասել ընդ նահատակին, որ զոյս դիմադրաւութի առ բարին ունէր միշտ, թէ վ͞ն քոյ մեռանիմք զօրհանապազ ։ և որ 'ի կարգին է սորին՝ սաղմոս ։ Իբր յիմարս յարս և վաթթարս՝ ասել ժպրհիմ, թէ բերան իմ պատմեսցէ զիմաստութի, և սիրտ զհանճար ։ Իբր մարդէլոյլ կերպարանաւոր՝ զմարդահաճոյիցն ոսկերս ցրուել մաղթեցից ։ Իբր զկրկին երկրորդելոյն մեծանունն բարութիւնս, թէ հաճոյ եղէց առաջի տ͞ն յերկրին կենդանեաց ։ Ո՜ խորհուրդ ունօղս անբաւէից


մե

մեղաց՝ զարդարոյն աւետալ կարդացից, թէ ոչ մեղք իմ և ոչ յանցանք՝ առանց մեղաց ընթացայ, և ուղիղ եղէ. Ո՜ խորհուրդ զիս ինքն մատնեցից կորստեան՝ յասելն զայս բան, թէ մի՛ ողորմիր գործողացն զանօրէնութի. Ո՜ խորհուրդ, թէ որպ հալի մոմ առաջի հրոյ, այնպէս և մեղաւորք յերեսաց այ. Ո՜ խորհուրդ դրդեալս ապականացու փափկութե՝ սահմանեցից զանմանն ինձ բան, թէ խոնարհեցուցի պահօք զանձն իմ. և զազգակիցս նորին ընդ նմին, թէ ես ՚ի նեղել նց՝ քուրձ զգենուի. և իբրև զսգաւոր և ըզտրտում՝ խոնարհ առնէի. Որպէս հանդարտեցից զնմանեացն իմ պատիժ միշտ յիշատակել, թէ սակայն մրուր բարկութեն այ ոչ սպառեցի, և արբցեն ՚ի նմանէ ամ մեղաւորք երկրի. իբրև զեսն առ սմին, թէ զամ եղջիւրս մեղաւորաց փշրեցից. Ո՜ խորհուրդ զապերախտութին յակոբայ ՚ի ձեռն առեալ հեծեծեցից, որ ընդ սուրբերին զճշմարտութին ընկալեալ, մոռացայ ընդ նոսին՝ նոցին թերութե զերախտիսքն՝ ած այնոքն արուեստիւք խաչին փրկանօք, քան նոքա զզօրաւորութին մովսէսի՝ ցպոյն զքանչելեօք, որ զօրինակն նկարագրէր տրունական տնտեսութեն. Ո՜ խորհուրդ զայրուցելոցն ՚ի վր՝ դիմաց զաղէտս ցուցից, իբր նոքա զոտարացեղից խուժադուժ ազգացն՝ ասելով, թէ արկլին զդխակունս բարեացն որ ՚ի մեզ՝ կուր վասակրացն թշնոց, այս է՝ այսոցն օդոյնոց. որպէս զանկեալ զսերմն բանին ՚ի ճանապարհին. և զմխաբանեալ զկամն ընդ չարին՝ մբ անուանեցից, իբրև զնմանակիցն առ ՚ի նոյն շաւիղ չարին պատերազմի՝ գուպար գաղտնամարտ մնացս օցտելոց, զոր



ես

ես զօրացուցի՛ գործակցեալ շնորհից բանսարկուին։ Եւ ոչ ունիմ ասելոյ, թէ մի՛ լուեր և մի՛ դադարեր՝ ա՛ծ. և խորհեցան ՚ի վր՟ ան՟եց քոց և ասացին, զոր ՚ի կարգէ սաղմոսին է աղօթել. Քանզի յոյժ պատեհագոյն է առնուլ զայսոսիկ ՚ի վր՟ բանութե՟ մոլեկան դիւաց միշտ ճակատելոց՝ առ ներկոյս խըռովուն, և ընդ նոսին՝ նոցին մշակաց։

Յորոց դու տէր ք՟ս՝ որդի բարձրեալ մեծիդ ա՟յ՝ պահեսցես և ամրացուսցես, երկնային զօրուդ շրջափակութ՟՝ յամ՟ ընթացից խաբողին հողմոց՝ խաչիւդ լուսոյ զմեզ պաշտպանեալ. որ զի՛ թէ և դըցին յիս անօրէնութիւք բազմօրինակք, այլ ոչ հայհոյութիւք. Որ ոչ հանդեար ՚ի կորուստ նմանեացն իմոց ամբարշտելոց, այլ ամենագորով թախանձմամբ ընդ եղծման ջրողողն զաղտագործաց՝ կրկին վշտացար, տաղտկալի զմահու նշ՟ն դիպուածն քեզ դրեցեր, ասելով զզարմանալիան լսողաց բան, ածեալ ըղ մտաւ ոչ եւս յաւելից անիծանել զերկիր վ՟ գործոց մարդկան։ Եւ մխիթարիս մեծ իմն պարարեալ, զի կեանս՝ անմաքրից և պարտաւորաց սատակման. որ երբեմն առակաւ դդմենւոյն՝ զանխայելն ՚ի կործանելեան ցուցեր՝ ողորմած. և առ այլ ումեմն՝ նեղեցար սաստիկ վտանգեալ, ընդ յամրանալ անձրևին առ ուրացողացն դարման։ Նմանեալս ցուցեր բարութե՟ տեսակս յիշատակաց տօնելիս՝ ՚ի վերջին աւուրս. քև ՚ի ձեռն առաքելոցն քոց, ողջոյնս հասարակաց անհամբուրիցն հեռաւորաց քաղցրաճաշակս հըրմայեցեր. Հա և յիս ցօղեա կենդանի զհոյրենի գթութեանցդ զսէր, զի և ես փրկեցայց քաւեալ՝

ամենատուր քո այցելութեդ։ Եւ քեզ ընդ Հօր՝ Հոգւովդ սրբով փառք՝ յաւիտեանս. ամէն։

---

† Ս Երգածին յաւելուած չէրին հեծութեան նորին հայրիկ, առնոյն աղերս հաղորդութեան բանի։ ՚Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ։

### ※ Բան. ԿԸ։

1 Եւ ընդէ՞ր է ինձ բնաւն որ ՚ի սմին իսկ պիտակեաց բանիցն ՚ի կիր արկանել. որ ՚ի նախատինս միանգամայն և ՚ի նզովս ինձ յարակային, հանապազ երգել իմոյս տաղօք։ ՙՔանզի՚ զինչ արդեօք զգուշ երջանկին ինձ դատապարտելոյս նմանեցուցից՝ ասելով ընդ նմին, թէ ոչ մերձեցաւ առ իս թլուրեալն որտին։ Ո՛ զիարդ զկարգաւորութիւնս տանցն ՚ի յայսմանէ զկնի թուելոցն զարհուրեցուցչաց՝ ընդ այլոց կոչեց կանոնաց օրինաւորին՝ զկնոյ որին և թագաւորին, և մարմնական հրամանատուին, որք և երկնայնոցն են համբաւրելիք՝ ասելով, ոչ յուսահատ եղէց ՚ի կենաց պատմօղս աւետեացս և նորոյս աշակերտ՝ անմամն յամենուստ բարեկարգութեանց։ Ո՛ զիարդ լատ իրաւախորհ արդարոյն, ընդդէմ մեղաւորացն՝ մահու զինեցայց առակաւ առաւօտին ՚ի սկիզբն արթնութեանն միշտ պատրաստական լինելոյ, որ և ոչ զանդամ մարմնոյս գանեալ խրատեցի. զիարդ մասնակցեալ մեծին արութեն՝ սատակեցից ՚ի քաղաքէ Տն զանօրինեալսն, որ և ոչ զբռնաեալ բիծս հոգւոյս իմոյ մեռուցի։ Ո՛ զիարդ ստեցից գրողին չև յայտնելոցն, թէ ըղմնխիր որպէս հաց կերոյ. զիարդ, որ ոչ միացուցի



յի

յիմոցս կրից կամիլ մի պղտոր՝ ընդ յստակ արտօսր
աղբերց երգողին՝ սակս ընդ նմին, թէ զոմպելիս իմ
արտասուօք խառնեցի . և արտասուօք իմովք զան_
կողինս իմ թացի . Ո՛վ որս ինձ գրեցից մեղօք մա_
հացեալս, յորժամ սիրողն այ 'ի բոլոր սրտէ՝ զայնց
մունս նախնեացն իւր վարկանիցի, թէ մեղաք մեք
ընդ հարս մեր՝ անօրինեցաք և յանցեաք . և որ 'ի
վախճանին յանդի սաղմոս՝ իրաւամբք ուխս, քան ու_
խորայէլ . Որովք յարդեցայց դասիլ ընդ բարիսն ,
յորժամ մարդկային հնարից այս դեղ պատուեցաւ՝
որ ոչ յիս գտաւ, 'ի դարշութենէ կերակրոց 'ի մահ
սովեցեալքս՝ և յանձախութէ ձգանց 'ի հոգւոց նը_
ւաղեալք, ըստ խորութեն ինքնօրէն կրօնից՝ հրէից
և հեթանոսաց . Ո՛վ խորդ՝ արդարութ իմ մնայ յա_
ւխտեանս, զոր ոչ բնաւ իսկ կատարեցի .

2 Եւ զի մի՛ տաղտկացայց յամեալ 'ի բանիս, 'ի հա_
մառօտել զայն փութացայց . Ո՛վ ինչ ունիմ
ասել 'ի տեղի բանիցն՝ զոր ածաշունչ ձայնն նուա_
գեաց օրհներգույն դաւթի, թէ բոլորով սրտիւ իմով
խնդրեցի զքեզ . զխորդ ընդ սմին զմեծն քան զայս,
թէ յամ ձանապարհէ չարեց արգելի զոտս իմ . ի՞բր
ընդ եղեալս և զայն մատուցից, թէ 'ի սրտի իմում
թագուցի զբանս քո՝ որպէս զի մի՛ մեղայց քեզ : Որպէս
զունայնութենցս իբր զլուսեց ձառեցից ընդ պարս
մաքրոց, թէ 'ի պատուիրանաց քոց իմացեալ, ատեցի
զամ ձանապարհս չարաց . Ո՛վ խորդ զհեզայն ձշմար_
տութիւն՝ իմում ստութենս մշտնջենական երդմամբ
հարութի կարգեցից՝ ուխտեալ ընդ հաստատելին,
երդուայ զոր հաստատեցի պահել զդատաստանս ար_



դա

դարութեն քոյ։ Ո՛վ խորհուրդ ինձ հրեշտակ մահագոյժ անհրաժեշտ վճռի՝ զանձինս պատգամ կրկնեցից, թէ հեռի է 'ի մեղաւորաց փրկութիւն։ Ո՛վ խորհուրդ չարս խոկալէս՝ զաւարեացն գրեցից՝ որք 'ի մէնջ առնուն զնոյն հատուցումն՝ զոյս տուն յեղյեղել, թէ բարի առնէ տէր ուղղոց սրտից։ Ո՛վ խորհուրդ զհամառօտն փոխատրութի ամաչառուն՝ վերկպեցելոյս ինձ սահմանեցից, թէ զթիւրեալն յափշտակութե՝ տանի ընդ այնոսիկ, որ գործեն զանօրէնութիւ։ Ո՛վ խորհուրդ զմեծազգեստին պանծանս՝ ամաչեցելոյս ինձ պատուաստեցից՝ ասել զնորայն, թէ տէր ո՛չ բարձրացաւ սիրտ իմ, և ո՛չ զբօսան աչք իմ։ և որ յետ սորին պատմին ասացեալքն։ Ո՛վ խորհուրդ զանճառն քան զմարմին բան՝ 'ի ցոյց առից քաջալերութե վհատելոց, ես զանձ գեհենին՝ ասել ընդ օծեալն այ հոգւոյն, թէ յառաջագոյն տեսեր, զի ո՛չ գոյ նենգութի 'ի լեզուի իմում։ 'ի սկզբնաւորն նախաձայնեալ սաղմոսին՝ մինչև 'ի լրումն աւարտման բանին։ Ո՛վ խորհուրդ դատակցուե դժնէից մարդոց համբան՝ այրս մահու և որդիս սատակման՝ բարբառիմ զբարեշնորհին, ո՛չ ահա զատելիս քո՝ տէր ատեցի։ և ըզմնացո՛ւածն սորին կարդի։ Ո՛վ խորհուրդ մեծաւն վըստահութե տօնելի վեհին՝ անձն իմ և դու աշխար աշխարհի՝ զանդատ քո ոգի յառաջ ընծայեալ՝ մեծացուցանես ընդ պսակելոյն, թէ փորձեա զիս՝ տէր և տես, թէ իցէն անօրէնութիւք 'ի ձեռս իմ։ և ըզյաւելո՛ւածն որ զհետ սորին։ Ո՛վ խորհուրդ ես գոլով և յոյլոց աղօթեմ ապրել՝ յուսացելոցն յածձոյնակցեալ, պահեա զիս՝ տ՛ր 'ի ձեռաց մեղաւորի,

և ՚ի մարդոյ չարէ ։ Ո՛վ խորհուրդ համբարձայց ընդ փա-
ռաւորեալն մաղթել Այ, թէ դու ես յոյս և բաժին
իմ յերկրին կենդանեաց։ Ո՛վ խորհուրդ իբր հանդիսա-
ցեալ ընդ ճգնաւորին՝ զմրցանակն յաղթանակի թա-
գաւորին մատուցանելով՝ զառաւելեալն քան զօրի-
նակ աւերս աղօթից, թէ ինձ սպասեսցեն արդարք
քո մինչև հատուսցես ինձ։

3 Բարեբանեալ է և այս իմաստ հոգևոր՝ և տէրունի
գործոյն նմանի, որ զխորհրդին պատկառեցոյց,
յորժամ զՏէր արհամարհիցէ՝ և զսկզբնապատճառն
եղելոց միայն ընտրիցէ՝ ասելով, թէ երանի ժողո-
վրդեան, որոյ Տէր Աստուած է նոցա։ Սոյն է և այս բարձ-
րութիւն շնորհի՝ և զգուշական համարձակութեան ըն-
ցեալ երանութեան, թէ որք քո օրհնեսցեն զքեզ։
Բղխեալ է և այս ընտանութեան մերձաւորական հոգևոր
հաղորդութեան՝ յոյժ յուսալ և ՚ի նոյն արձանանալ՝
բանիւ սաղմոսին բերկրեալ, թէ զկամս երկիւղա-
ծաց իւրոց առնէ Տէր. և զկարգ բանին կատարէ,
մինչև զողբալին և զզուարճալին ազդեսցէ, թէ պա-
հէ Տէր զամենեսեան որ սիրեն զնա. և զամ մեղա-
ւորս սատակէ Տէր. ՚ի գլուխս լրման գրոց նուագա-
րանաց սաղմոսին՝ իբր թէ զօրինակն իսկ եցոյց վեր-
ջին հատուցման՝ արդարոց և մեղաւորաց. Ո՛վ ու-
դակցորդք են միմեանց և զկնի երգեցելոյս. զի թէ
ընդունի զհեզս Տէր՝ և խոնարհ առնէ զամբարտա-
ւանս մինչև յերկիր, ապա ինձ որքան եղկութիւնք
կան առաջի. իսկ եթէ հաճի տէր ընդ ժողովուրդ
իւր, և բարձր առնէ զհեզս ՚ի փրկութիւն, ապա հեր-
քեալս ՚ի բարեմասնութեանց եմ՝ ուր հաստատեցայց.



իսկ

իսկ եթէ օրհնելի է ած ՚ի մերս նր տիրապէս , ապա
օտարս ես ՚ի մաքրութենէ՝ ընդդիմս դասեցայց . իսկ
եթէ ՚ի կանխերգիցն մերձ այսր եդից յիշատակարան
ինձ կշտամբութենէ,թէ սիրեցէք զտր սբք նորա , զի
ստուգութի խնդրէ տր՝ և կրկին հատուցանէ ամ_
բարտաւանիցն , ապա յորո՞մ գնդի ես գտայց՝ դե_
րեալս ՚ի գաղտնեաց գառղին չարեաց. Քանզի զոր_
օրինակ տատանին տագնապանաւ տերեւք ծնկոց է_
ղեւին ծառոյ՝ շարժեալք ՚ի հողմոց ուժգին բախե_
լոյ՝ հոսեալք ՚ի խոնարհ , այնպէս ջանացաւ ջարդել
զընթացից իմոց վերարձակութե .քաջաբեր ուղեշս՝
զյարմարեալս ձեռամբ անեղ մշակին . Ո որ հաս_
տատեսցես արմատացուցեալ վերստին դարձեալ՝ նոր
պտղաւորութե՜ անապականաւ , յանդաստան կենաց
խնամոց քոց կամացդ՝ ամենապարգեւ թագաւոր քս,
օրհնեալ յաւիտեանս . ամէն :

---

† Մ ՚երկրորդ յաւելուած նրէին հեծութե՝ նորին հոգւոյ , սա_
նոյն աղէրս հաղորդեալ բանի . ՚ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ :

## * Բան . ԿԲ .

I Այլ արդ՝ ընդէ՞ր ոչ ՚ի վերադարձեցայն սաղ
մոս նախաձայնական՝ և յոյլ մարգարէիցն
մասն ինչ յօդեցից : Քանզի զինչ
վայելուչն իցէ կերակրոյն , եթէ անզգուշէլ ցաւոցք
ուտիցեմ . և կամ զի՞ր շահ սաղմոսն ունիցի , եթէ
ոչ ՚ի միտ առնուցում : Քանզի նզովեմ զիս ինքն ՚ի
նոսին , և ոչ իմանամ . լուացեալ լինիմ , և ոչ պայ_
ծառանամ . արեւու ծագէլ , և ոչ լուսաւորիմ . մեղր

 Ձա

ձաշակեմ, և ոչ քաղցրանամ. ուտեմն լնանիմ, և ոչ
բժշկիմ. միշտ կանխեմ 'ի նոյն, և դատարկ երևիմ.
հանապազ ձաղիմ, և ոչ երբէք խրատիմ. ողբքիմ
դարձեալ, և ոչ զղջանամ.

2 Արդարև՝ մեղք և անօրէնութիւնք իմ յիս, և ես
մաշիմ 'ի նոսին, ըստ մարգարէին՝ որ 'ի դիմաց
պարտաւորացն բանի. և որոտնական առակին՝ հին
ակոցն և նոր դինւոյն. Ո՞ւ զի թէ սատակին անօ
րէնք և մեղաւորք 'ի միասին, ըստ եսայեայ ձայնին,
ապա և ինձ դժնէիս նոյն բաժին հանդերձել պահի.
Քանզի ասեմ զսաղմոսն, թէ հատուցանէ այնոցիկ՝
որ առաւել առնեն զամբարտաւանութիւն. և կցոր
դեմ սմին զընթերցուածն, թէ օր տն 'ի վր հպար
տից և ամբարտաւանից. ասեմ, թէ օտար եղեն մե
ղաւորք 'ի մօրէ, և որ ինչ կարգ սորին ցուցանէ,
յարեմ առ սմին, թէ կործանեսցին անօրէնք երկ
րի, և ամբարիշտն բարձցին յերկրէ, և անիրաւք մեր
ժեսցին 'ի նմանէ. Ուրք ի.ձ կարդասցէք առ ձայնն,
թէ զօրօրինակ վառի եղէգն 'ի կայծականց հրոյ,
այնպէս այրեսցին մեղաւորք 'ի բորբոքեալ բոցոյն.
լացէ'ք առ սաղմոսն, թէ արկցես 'ի վր նոցա կայ
ծակունս հրոյ. աշխարհս պատմեցէք 'ի բանս տծեան
վձռին մարգարէին ազդեցեալ, թէ ոչ կամիցիք
լսել ինձ, սուր կերիցէ զձեզ. կծեցարուք առ սաղ
մոսն, թէ մահ հովուեսցէ զնս. ապա արտասուս՝ ը
ղորմ հառաչմամբ ընդ հեծութիւս իմ յարմարեցէ'ք,
յորժամ բարձրեալն ընդ ինէն և ինձ ասասցէ բա
նիւ սաղմոսին, թէ ժողովուրդ իմ ոչ լուաւ ձայնի
իմում. աւաղ կարդացէ'ք թշուառացելոյս, յորժամ


ոյլ

այլ մարգարէ զնոյն դիցէ, վա՛յ նոցա՝ զի վաղեցին
զինէն. Բարբա՛ռ փողեցէք 'ի սիրտ մղձկեալ նոր ա-
ղաղակի, յորժամ տեսանօղն աստուծոյ ամաչեցու-
ցեալ զիս կշտամբեսցէ՝ ընդ ապարասան տանն յա-
կոբայ, տեսէք արհամարհօղք՝ զարմացարո՛ւք և
եղծարո՛ւք.

3 Այլ դարձուսցես և ամփոփեսցես զբարձրացեալ
զսուր բարկութեան ահաւորիդ սպառնալեաց՝
'ի սարսուցելոյս յերեսաց մեծիդ. և խնամովք աջոյդ
բարեբաշխութե առ ի ժամանեալ, օծումն կենաց
պարգևատրեսցես քո աղաչողիս. Եւ քեզ փա՛ռք՝
յերկինս 'ի բարձունս, և 'ի մահացուաց յերկիր 'ի խո-
նարհ, 'ի սահմանս բոլոր ազանց, և յամենայն յա-
ւիտեանս. ամէն.

---

†Մ Էրտէն յաւելուած կրկին հեծութե՝ նորին հոգւոյ, առ-
նոյն աղէրս ժողովանոյ բանի. 'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ.

## *Բան. ԿԳ.

1 Բարերա՛ր և բազմագութ, մարդասէ՛ր և եր-
կայնամիտ՝ միա՛յն Թագաւոր, ընդ հօր քում
պատուեալ և օրհնաբանեալ ընդ ամենայնի,
որդի՛ այ կենդանւոյ. Անպատճառդ միշտ խնամ
կորստեան. որ ամենեւին անփո՛յթ ես 'ի չարեաց. որ
ո՛չ կամիս զմահ մեղաւորի. որ փրկութի են 'ի քոց
կամաց ընծայեցեալ. որ դարձուցանես զմոլորիկ մե-
ղաց՝ 'ի յօդ քաւութե. որ զհուր բարկութե՝ յանձ-
րև փոխարկես. Որ զյետնեալ զկինն 'ի բարեաց՝
կրկնակի գոյիւ նահանջեր՝ երկեակ բնութի 'ի նոյն

արժանի, ոչ խնկապէս ընդ անպարտսն, և ոչ համոյն ընդ պատժաւորսն։ Որ զլուծութի ծովուն սահանաց, իբր զկարկառս քարանց կառուցեալ՝ յեղանակեցեր։ Որ զկարծրանիւթ վէմն անապատին, 'ի վէժակս վտակաց հոսեալ՝ բղխեցեր։ Որ զյորդանանու ջրոյն սրաշարժ վայրէկութի, հրաշաւոր անդրադարձութբ՝ 'ի յետնորդս հեթանոսաց լնացումն ուածանին՝ 'ի թիկունս առաքեցեր։ Որ զպատուատեալ պարիսպն երիքովի, յօրինակ կործանման բռնութեն սատանայի՝ իբր զթեթևութի յարդի ցընդեցեր։ Որ զվնասակար ջուր նորին, 'ի յառակ այլայլութեան՝ առ 'ի բարին փոխարկութբ՝ քանանացւոցն փրկութբ՝ խորհրդական աղիւն համեմեալ անուշեցեր։ Որ զմեռոյին դառնութի, իբր զմտաց անհաւանութի, կենացն փայտիւ 'ի քեզ յարմարեալ՝ պիտանի արարեր։ Որ զառեալն 'ի գետոյն, 'ի գըծագրութիւն անսահմանդ քո հրամանի անորակիդգունակութբ՝ 'ի նոր երանգ բոսորային՝ մածեր արեան 'ի ցամաքի։ Որ զանկենդան ցուպ գաւազանին, 'ի կերպ սուութի՝ առ 'ի զքոյդ մերովս նկարագրիլ, այլ և յօտարազնեցն ընտրութի՝ 'ի տիպն ապաթոյն կերպիւ վիշապի՝ նմանեալ ցուցեր։ Որ զերջանիկ ձեռն աջոյն մովսիսի, 'ի ցոյց տեսութե ապագայից հրաշից մարդեղութեդ քո՝ բարձրեալ, և քե՝ ախտաւոր մարմնոյս մաքուր լինելոյ անփոփոխ փոխատրութբ՝ կրկին գուշակեցեր։ Որ յայքանեացս շրջադրութի, բարեխնամապէս արուեստիւորդ՝ զանակնկալն գիւտ մեղաւորաց կորստականաց նշանակեցեր։

2 Օրհնեա՛լ ամենագութ, որ բուսուցանես յերկրէ դալարի, զմեռեալն յանշնչականէն. որ զանշարժն՝ իբր զընթացող կառավարես. որ յանարգ արգանդէ՝ կոչես քեզ պատկերակիցս. որ տաս պատանեկաց՝ աղորիս ըմբոշխնելիս. որ ՚յոյս մաքուրս՝ հերս ընծայես. որ զատաղութ սեւութեն վարսից, ՚ի ձեռն կերպարան զարմանագործես, ցուցեալ՝ թէ առ ա՟մ սահման հեռաւորական, յաղթող ես հզօր. որ փոփոխես զշրթունս բնաւորական, ըստ բանին յոբոյ, ՚ի կամս հաւատարիմս: Որ սասանես զերկիր, և զխիղճս նորին ՚ի հիմանց, նշանակեալ հաստատծին գոյին՝ թէ դու միայն մնաս անկորնչելի. որ հոլովես զտարերս՝ իբրև զանցաւորս, և դարձեալ ՚ի նոյն կայես՝ իբրև զյարակայս, յայտ արարեալ՝ թէ և առ մեղաց բազմութիւն՝ դիւրապէս ունել կամ թողուլ՝ նոյնպէս զօրաւոր իցես: Որ զարուսեկին անզգայ էութիւն՝ իբր երասանաւ իմն դաստիարակես, երևեցուցեալ այնր իրի կերպին՝ թէ զընթունս չար դիմեցումն՝ յորժամ և կամիս՝ հանգարտ առնիցես: Որ զանբարբառ բոլորակ լուսնին՝ կարգես ունոյնս և պատարունս, լուսաւորել զ ատձառն առաւետիս տեսողաց՝ թէ ՚ի նուազութէ բարեաց ըղղարտաւորս մարմին՝ դու ածես ՚ի լրումն առաջնատեղծ հարստութեանն: Որ զպատկերս անխօս աստեղաց, իբր զդասակս դոյզն հօտից՝ արոհես և ժողովես, յոյս ՚ի մն կենաց առ այս խորհրդաբերեալ՝ քաղցրահոյեաց տեսութի, թէ՝ և անապաշաւորաց լեզուաց՝ կարողապէս բաւես ողորմել: Որ ՚ի մէջ մահու և կենաց՝ շաւիղ վստահութեան ուղղես ՚ի



ծո

ծովու, վկայութի՛ւն եղեալ հաւատոյ, թէ՝ և յան-
կասկածաւորն վայրի՝ քև պաշտպանիմք անդայթագ-
ղելի. որ իբր զջուր կաթուայեց 'ի հրոյ եռացեալ,
որպէս զմեղաց մրրիկ պղտորեալ՝ բանիւ կամաց քոց
խափուցանես։ Որ հոյլս յերկիր և տատանես զսա,
զի անբաւի՛ն՝ զմտաւորս զգաստացուցանես. որ իբր
զակատ մի անձուկ նաւի՝ 'ի վ՟տ շարժութե՟ ալեաց՝
զանբաւ թանձրութի դեռնոյս դղրդես, որով ծա-
նուցեալ լինիս ամենից հաստուածոց՝ թէ իցես ան-
երկբայելի, որ 'ի բան քո զօրեղ՝ հիմնացեալ ունիս
զամ։ Որ սերմանես զարտաշնչացեալ մարմինս յերկ-
րի, և զնոյն անկորուստ պահեալ՝ կրկին կենդանա-
ծընես. որ ապականացուս աւանդեալ՝ անեղծս ըս-
տանաս. որ ընդ մահացու նիւթոյս՝ զնշխարդ կե-
նաց խառնես, որ հրամանաւ ակնարկութե՟՝ 'ի խուն
վայրկենի կազմեցեր պատրաստ կացուցեր զանզար-
դութիւն ամենից եղանակաց։ Քո՛ է զօրութի և
կարողութի, որ շրջանակես զժամանակս ամաց հո-
լովման աւուրց՝ յայլ նմանութի բարեպատեհ տեսա-
զութ։ Որ կարդաս զանմռունչսն, իբրև զկենդա-
նիս. որ ազդես միայն, և նոքա ընթանան. որ միայն
հեծնուս անկանես անձառ արուեստիւ ճնարագի-
տութեան՝ մէջ և առաւօտ։ Որ յետ նախակարգ-
յօրինուածոյն առաջնաստեղծ լինելութեն, արարեր
զփառաւորեալն մեծամեծս հրաշակերտից հան-
դիսից, ըստ դրոյն երջանկութե կանխահիացն զար-
մացման, այլ իմն դոյացուի տօնելի տեսակի՝ անեղծ
աշխարհագործութե ես քան զայն՝ 'ի մարդանալդ
քո, որոց ո՛չ գոյ թիւ։


Որ

3 Որ ահա զձայն մեր՝ քեզ դրեցեր. որ զարդա
րութ՟ին քո՝ մեզ շնորհեցեր. որ ընդ քեզ կրե
ցեր զհաշտութ՟ին մերում փրկանակ. որ ոչ երբեք
լքանիս յողորմութենէ, դարձո զամբարշտեալս ՚ի
պաշտօն բարւոյ երկիւղի, զթմբրեալս ՚ի զգաստու
թ՟ի արթնութ՟ե սրտի. զանմաքուրս ՚ի սրբութ՟ի պայծա
ռութեան կերպարանի. զբազմաբիծս՝ յանբծութ՟ի
հանդարտական ն՟ռ պատկերի. զբեկեալս՝ յողջութ՟ի,
որ ՚ի դիպմանց ոչ խորտակի. զցրուեալս՝ ՚ի խնդութ՟ի
զուարթութ՟ե անխախտելի. զյուսահատեալս՝ ՚ի սէր
միաւորիչ անքակտելի. զամաչեցեալս՝ ՚ի վստահութ՟ի
հաստատութ՟ե անշարժելի. զխաւարեալս՝ ՚ի լոյս ե
րանութ՟ե անմեկնելի. զմահու դերեալս՝ ՚ի կեանս,
որ ընդ եղծմամբ ոչ անկանի. Զի փառաւորեսցի
անուն քո՝ յիսուս, խոստովանեալ յամի, ընդ հօր
և ը՟ հոգւոյդ ս՟բյ՝ ՚ի բարձունս երկնի և ՚ի ստորեւս
երկրի՝ և ՚ի բնակիչս ն՟ց, յաւիտեանս յաւիտենից.
ամէն.

---

† Սքրաբին յաւելուած կցկէն հեծութեան՝ նորին հանգոյն, առ նոյն աղերս հաշտութեան բանի. ՚Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ.

## ✳ Բան. ԿԴ.

1 Եւ արդ առ ո՞ւմ բան՝ յամի ուղիղ ես՝ ա՟ծ.
խրատամբք դատիս. արդարութ՟բ կշռես.
ճշմարտութ՟բ չափես. օրինութ՟բ հետեւես.
բարւոք ընթանաս. ստուգութ՟ի սիրես. յստակութ՟ի
կամիս. լուսաւորութ՟ի համբուրես. փորձիւ յանդի
մանես. երկայնմտութ՟բ քննես։ Աչ ունիս նենգութ՟ի

և ոչ դառնութի՛, այլ ամենևին հեզութի՛, հանդար
տութի՛ և ողորմութի՛ ։

2 Արդարացար վերին իմաստութիւն անայլայլական
հօրդ հանճարոյ՝ կրկին վկայեալ անզեղջ դոմես
տին յորդեգրեցելոցն շնորհօք, ըստ բանին սրբու
թեան՝ որ աւետարանաւն կենաց 'ի քէն ընկալաք ․
որ ոչ 'ի կոծելն ողբացի, և ոչ 'ի փողելն կաքաւեցի ․
Ասացեր անօրինիս, թէ մի՛ անօրինիր, և ես 'ի նոյն
չարիս պնդեցայ ․ մեղաւորիս, թէ մի՛ ամբառնար եղ
ջիւր 'ի բարձունս, և ես զընդդէմն քեզ գործե
ցի, և ոչ զգացի երբէք զառածեալս, թէ 'ի ձեռին
քո են եղջիւրք արքայութեան՝ հպարտից ամբարձե
լոց, խոնարհեցուցանել և բարձրացուցանել, ըստ ամ
բակումայ, դաւթի և զաքարիայ ․ Օրհնութի ինձ
կամեցար՝ ողորմած, և ես անիծեալս՝ մեծ տարա
դրութե խոտորեցայ յարժանին ինձ մասն ․ սիրեցի
բարկութի, և ոչ բարութի ․ շօշափեցի ըստ գրոյն՝ ըզ
խաւար, և ոչ զլոյս ․ կենդանի ձայնիդ քո՝ գրեթած,
ապառումս պատասխանեցի ։ Զորդնն անմահ ա
սացեր՝ բանիւ եսայեայ, և զհուրն՝ անշէջ, և զկրը
տամբութիւն՝ անվախճան, և զտեղին՝ յաւիտենից,
և զօրինակ նմին՝ սոսկալի, և ես ոչ իմացայ, ըստ սաղ
մոսողին, և ոչ մտաւեցի ․ այլ 'ի մռայլ մտաւորական
կուրութեան գնացի ։ Ցուցեր մարգարէիւն, թէ
զօրհնութի տեսցէ՝ որ զօրէնս դնէ, և ես համառօ
տել զնոյն փութացայ ։ Արձան հոգևոր վիմի գը
րեալ մատամբ քո՝ տէր յս̄ քս̄, զդաւիթ իւրովքն
բանիւք կանգնեցեր, սաելոյն ինքեան ընտրութեն
առ սոյն, թէ պահեցի զօրէնս քո յամենայն ժամ,

յաւիտեան ․ անդրադարձութբ բանին միջնորդեալ
զկրկին հաստատութին , թէ և յաւիտեանս յաւի
տենից․ ընդ որս՝ և զսորին նմանիս պարծանաց՝ առ
խմն խորախոյս , և ոչ զկծեցոյ ․ Ձեպեցոյ 'ի տունս բա
հաղու , և ոչ ոյ ․ 'ի յերկուս հետս երկմտութեան՝
կրկին կաղացի կասեալ 'ի բարեաց , ըստ երդիծանե
լոյն հեղինու ․ Ունիմ զմոլեքս խուռնէն օրինակօք՝
եկեալ 'ի մեռելոց , և զտաւս մարդարէիցն՝ գրեալ
'ի յոդի , և զմատեանս առաքելոցն՝ ընդ մասցս մատն
յեռեալ , և զորդ հասարակաց՝ կտակաւն աւետեաց՝
յարուցեալ 'ի թաղմանէ անթիւ ննջեցելովքս , և ան
հաւատադոյն քան զննդեսին եղբայրակցութիս այնր
մեծատան , որ է առակ խմն յարմարական , նմանեալ
զդայականացն մասանց՝ անողորմիցն յղփացելոց , մի
նացի խբրև զաւղ դարբնաց անոստ՝ յամառեալ քա
րացեալ սրտիւ , որպէս օրինակն է բելխարոյ , և ոչ
ապաշխարեցի ․

3 Աղ աղդեմ վերստին առ սոյն կերպարան լքեալ՝
կրկին ողորմութի՝ բարի , ահաւոր , մարդասէր ,
խնամակալ , կենդանի , անբռնելուսաւոր և անլռխնձան
թագաւոր , զօրութք պանծալի խաչիդ խորհրդոյ ,
'ի կարծրացեալս մեղօք անբեր անդաստան՝ երկիւ
մանցս յիմարութե՝ և անպտուղ սրտիս լքութե ․ զի
առեալ նպաստ օժանդակութե 'ի գթութէ կամաց
ամենակալիդ , որով տացէ բղխեսցէ հողիս , ընծայել
աջայ վճռադնեցելոյս վաստս արդասմանց արբուցա
նողաց՝ խնձ 'ի փրկութի և 'ի մաքրութի , և քեզ 'ի
հաճութի ընդունելութե՝ ամենապարգև տրդ բո
լորից , փառաւորեալդ յաւիտենից ․ ամէն ․

+ԿԱ Երաւէն յաւելուած ներքին հեծութեան՝ նորին հոգւոյն, առ-
նոյն աղերս համբերութեան բանի. ՚Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ.

## ✻Բան. ԿԱ.

1 Եւ արդ՝ ես նախնիս ամբարշտաց. գլուխս
մեղաւորաց. պետս անիրաւաց. առաջինս
պարտաւորաց. պատկերս յանցաւորաց. առ-
աւելեցիս ըստ վատթարութե, այլ ոչ ըստ բարեպաշ-
տութե, ահա զանճառելին խմոր ճառեցի. զպատկա-
ռելին խայտառակեցի. զդաղտնին հրապարակեցի.
զծածուկն յայտնեցի. զթաքուցեալն ցուցի. զամ-
փոփեալն տարածեցի. զդառնութես մաղձ՝ ժայթ-
քեցի. զգործակցութիւն չարին՝ մատնեցի. զամբա-
րեալ թարախ վիրիս՝ քամեցի. զխորս պարտեաց իմոց՝
ծանուցի. զպատրուակն կեղծեաց՝ առի. զքօղ որ
դեղուեն՝ վերացուցի. զամօթալեացն զգեստ՝ մեր-
կացուցի. զգարշելին՝ յանդիմանեցի. զմրուրն մա-
հու՝ փսխեցի. զպալարս հոգւոյս խածուածոց՝ քա-
հանայապետիդ քո բացի. Յանձինս վտանգ՝ ոչ ան-
խայեցի. մարմնոյս սիրոյ՝ ոչ աչառեցի. զարմատն հր-
նութե՝ տեսիլ արարի. բնութես կարեաց՝ ոչ ողոր-
մեցայ. զփաբանութեն կապ՝ խզեցի. զդղեակ սրտիս՝
քանդեցի. ընդ կամացս որսոյ՝ իբր ընդ դարանակալի
մահու՝ կռուեցայ. զպահեստ անյայտից՝ արտաքս
հանի. զմթերից գանձ՝ մեծին գուշակեցի. զդա-
տախազն՝ դատաւորին հանդէպ կացուցի. զապա-
ներացն զփորձ՝ այժմէն իսկ գտի. զդաշն կործանո-
ղին՝ կտրեցի. զուխտն խաբողին՝ ցրուեցի. զկատա-
րած մարտին յաղթութեան՝ ՚ի քեզ Տր յա՝ ապա-
տա

տանեցի . զպատերազմին խումբ՝ դրդուեցի . զդիմա
դրութին դիմեցմանն՝ բանիւդ աստուծոյ յուսացոյ .
զխաւարասիրացն փաղանգ՝ լուսեղինացն զինուց
սադրեցի .

2 Այլ արդ՝ ստեղծիչդ ամ̃ եղելոց ք̃ս որդի բարձ
րելդ̃ոյ , զատեան դատաւորելս յոյսախնեաց բա
նից , և զհարուածելս յոյզքանեաց դանից՝ մի կշռամ
բեսցես կրկնակի դատել ՚ի մեծի աւուրն : Ահա
հզօր անքննին անձառ բարերար Թագաւոր անմահ ,
առ այս կերպ պատկառանաց՝ ինքնապարսաւս խոնար
հութն , որ ինձէն զանձն՝ մեծաւ ձաղանօք յոդի
դատեցի , լի՛ց նուաղօք այսր մատենի՝ անարդանօք
ամօթոյ՝ զդէմն սատանայի . և զերեսս կերպի պատ
կառեցելոյս՝ նշանաւ խաչիդ զօրացո : Մխացի՛ կը
նիքդ լուսոյ՝ ՚ի գեղ տեսակիս . ամրութեդ նշան հաս
տատեսցի՛ ՚ի տիպ դիտակիս . երևակ կենացդ փայտի
ձևասցի՛ ՚ի պատկեր այտիս . արուեստ հրաշից՝ ՚ի
ճակատիս շուք նշանակեսցի : Մի՛ այլայլեսցի յինէն՝
դրոշմդ լուսապաճոյճ . մի՛ բարձցի ՚ի տեսանելեացս
բբաց՝ ճաճանչդ օրհնութն . մի՛ մերժեսցի ՚ի գլխոյս՝
առ հաւատչեայդ վստահութեան . մի՛ սասանեսցի ՚ի
բերանոյս ամրութն սեմոց՝ փակք աննադրութեդ :
Պահպանակդ երկրպագելի՛ ՚ի զգայարան սրտիս միաս
ցի՛ . չորիցս նիւթոց խմոյս գոյութն , քառաթևիդ
նշոյլ աղդեսցէ՛ . ձեռինս կարկառման , փրկչիդ իշ
խանութ օժանդակեսցէ՛ . մատուցման հաստուածոյ
մատինս , խորհրդարանդ համարձակութն բարեգոր
ծեսցէ՛ : ՚Ի մեկնելս խմուժ , մի՛ հեռասցի սրբու
Թիւնդ . մի՛ լքցի պատիւս՝ ՚ի պատիլն պարտաւորիս .


մի՛

մի՛ մերժեսցի ՚ի յոգւոյս՝ անդաւաճանելիդ փրկու-
թիւն. մի՛ ջնջեսցին գիծք կենդանատուիդ՝ ՚ի քո՛
գրեցելոյս շնչոյ. մի՛ եղծցի նկարումն արեան զօրու-
թե՛՝ ՚ի տխրատիպ խորանէս. ընդ իս բնակեսցէ յի-
մում դերեզմանին. ՚ի ծորել մարմնոյս թշուառի, օ-
ծումն շնորհիդ առ իս պահեսցի՛. ՚ի նորոգութեանն
աւուր, սովաւ հանդիպեցայց փառաց փեսայիդ. ՚ի
քոյոց ոստի ծանուցայց, քոյովքդ վաստակօք պըճ-
նեցայց, երախտեօք մեծիդ յորդեցայց, աւազանին
զգեստիւ պերճացայց՝ քաւեալ ողորմութե. Ա՛ստ
բարեգութ, զվերարկուդ անապականութեան՝ տա-
ժանեցելոյս մեղօք մարմնոյս. մի՛ յարիցէ ընդ քոյս՝
բանսարկուին. հնացուցիչ հոգւոյս՝ վտարեսցի՛. խա-
ւարաբնակացն պատիրք՝ մի՛ ընդ իս վերերեւեսցին.
Օրհնեսցի՛ անուանդ քո գթած՝ վերին իմ հանգըս-
տեան. ողորմութե քո լցցի՛ գուբն իմ գերութե.
ընդարձակեսցի՛ քեւ ինձ՝ տեղին թշուառութեան.
անդորր եղիցի խը՛նամօքդ՝ ինձ բանտն բարկութե.
սնուսցէ զիս առ յածումն՝ արգանդն մթութեան.
յուսովդ քո շտեմարանեսցէ զիս՝ յարկն այն անձկութե.
ձեռամբ քո պահեսցայց՝ ՚ի խշտին տարաժամութեան.
թեւօք քո ընկալայց՝ ՚ի տունն տագնապի. դու դը-
վեալ ե՛ս իմ՝ ՚ի սենեակն վտանգի. Հա՛նգիս ինձ առ-
տանօր՝ ՚ի թիւս հազարաց, զի երբեմն էի վերնային,
և այժմ անդնդային. երբեմն տօնելի, և այժմ
աշխարելի.

3 Ա՛յլ և արդ՝ կրկին դու օրհնեա՛լ ՚ի բոլորից գոյից՝
յերկնայնոց և ՚ի ստորնայնոց՝ և ՚ի սանդարամետա-
կանաց մեռելոց՝ անպարտականդ այս տարագրութե.

Ես վրիպեցայ. ես օտարացայ. ես յիմարեցայ, պար-
տեցայ, և խոտան գտայ. ես լքայ, կասեցայ, և կոր-
ծանեցայ. ես մոլորեցայ. ես մատնեցայ. ես մերժե-
ցայ. ես խորթացայ, գերեցայ, և գայթագղեցայ. ես
նզովեցայ. ես թշուառացայ, արբեցայ, և վատթարա-
ցայ. ես ընկլուզայ. ես խաբեցայ. ես անօրինեցայ.
ես ապականեցայ, մահացայ, և իսպառ եղծայ. չի՛ք
քո առ այս՝ ինչ մասն չարի, որ ես միայն անփոփոխ
բարի. Տրդ՝ կամք քո յիս, և խաւարն ինձ ձա-
ռագայթ. Ճրագ յուսոյ քո անդ, և գիշերն վաղոր-
դայն. մարմնոյ քոյ հաղորդեալ, և յամօթոյն կոր-
ծեաց ապրեալ: Իսկ ես ոչ գրեմ զանձն իմ կեն-
դանի՝ վս անփախչելի վախճանին. դարձեալ զիս ոչ
վարկանիմ կորուսեալ՝ վս աներկեան նորոգմանն:
Որ և փակեալ համարիմ ինձ զելս կենացդ՝ վս ան-
քակելեացն պարտեաց. դարձեալ՝ բացեալ ինձ ըղ-
դրախտն՝ վս փրկութեանն աւետեաց. քանզի ոչ
այնքան վհատութեն գոյժ տագնապէ՝ որչափ փըր-
կութեանդ քաջալերեալ ձեռն կարկառէ. Տրդ՝
տո՛ւր տէ՛ր՝ տո՛ւր ողորմութի, առ ոմ ձայն գոհա-
բանեալ, օրհնեալ յաւիտեանս.

ամէն:



Տրդ

†Ա Երրորդն յաւելուած հրհին հեծութե՝ նորին հաւաքէ, առ նոյն աղերս մաղթանաց բանի. ՚Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ.

## ※ Բան . Կ.Օ.

1 Արդ՝ որ ոք և առցէ զայս գեղ մաղթանաց այսր մատենի պարկեշտակինի պաղատել սովաւ, եթէ ՚ի մեղաւորաց իցէ մատուցեալն, եղիցի և ես խմոյս բանիւ կցորդեալ նմա. իսկ եթէ յարդարոց գուցէ յառաջեալն, գտցի և ես սովիմբ՝ ընդ նմին ողորմեալ նովաւ։ Այլ թէ երջանկացի այնպիսին ինքեամբ՝ ինձ միայնոյ գրել զեղկութիւնն, և ես ինձէն վկայեմ այսմիկ։ Բայց յիշեսցէ նա զաղօթսն և զբանս նր զհոգեշունչս, թէ մի ոք վստահասցի սիրտ ոք ունել, և կամ մի պարծեսցի մաքուր լինել ՚ի մեղաց. և զի ոչ յարեւմուտ երկրածին ազատեալ ՚ի պատասխանեաց. և ոչ ընտիր ինքնարշաւ վազելովքն, և ոչ՝ թէ և ՚ի թուիցս ամբարձման թևոց բերիցի. առ որ զգոյշ լինիցի կըրկին երկուցեալ ՚ի վերջին իսկ հաստատութեան ուսեալ ՚ի պօղոսէ, գուցէ անկեալ ՚ի յերկիր՝ սահմանոցն այսմ կանոնի երաւադատի՝ կշռեալ նմանեսցի։ Այլ առցէ զայս կշտամբութի մաքուրն՝ նիւթ պըսակաց, առ ՚ի չնջանել անընտրողաբար յանձեռնհասն բարձրութէ. և պատժապարտն՝ առիթ աղատուէ, որով ամբարձեալ ՚ի կործանմանէ հոգևորական մահուն՝ ապրեսցի յուսով։ Իսկ ինձ եղիցի՝ պատգամս այս բանի՝ արձան փորագրեալ՝ ամենևին անեղծանելի, որ փոխանակ իմոյ եղկելւոյս անձին մահաց ուի՝ անդադար ձնչմամբ հեծութեան լալոյ՝ առանց



լռե

լուելոյ միշտ աղաղակէ . լիցի՛ և ոսկերացս քակտեցե-
լոց 'ի հողապատեան շիրիմ վերարկուին՝ անմռունչ
ձայնիւ զայս խոստովանել . հասցէ՛ և մարմնոյս 'ի հող
լուծելոյ՝ բարբառով իմն անազդելեաւ՝ ծածկատե-
սիդ զայն պաղատել .

2 Ո՛ գթութեց , աղբի՛ւր ողորմութեց , պարգևա՛ց
բարութեց , որդի՛ բարձրելոյ տ̃ր յ̃ս ք̃ս , ողոր-
մեա՛ , խնայեա՛ , մարդասիրեա՛ . նայեա՛ 'ի վտանգս .
ակնարկեա՛ 'ի բեկութիս . խոնարհեա՛ց 'ի թշուառու-
թիւնս . տես 'ի տարակոյս անձեռնհաս տագնապիս .
հասի՛ր հաղորդել կորստականս կարեաց ։ Շօշա-
փեա՛ բժշկապէս՝ զամենաթշուառ ախտաւորութիս .
ունկն մատուսցես քաղցրութ՝ ողորմածին հեծու-
թեանս . լո՛ւր 'ի խորոցն անդնդոց մահուն գերեզ-
մանի՝ անմռնչելի հառաչմանս . մօտեցի՛ յականջս ամե-
նալսուր լսելեացդ՝ ձայն պաղատանաց վտանգեալ ան-
դամոցս ։ Նուէր զի գրաւական կենդանութեան ա-
նապական է , անփոփոխ լիցի և սիրոյդ քո գթութ .
կցորդ լեր հեզութ՝ տաժանաւորս տկարութե ։
Մեռեալ պատկերիս՝ մի՛ ոխս պահեսցես . ընդ ան-
շունչ կերպարանիս՝ մի՛ 'ի դատ քննութե մտցես .
մահու տանջեցելոյս՝ մի՛ հարուածս յաւելցես . ընդ
բեկեալ խեցեղէն անօթոյս՝ մի՛ ուժգնութ մար-
տիցես . վճռեալ կոշկոճելոյս՝ մի՛ բարկութիւն կրկ-
նեսցես . կործանեալ շինուածոյս՝ մի՛ պատուհաս մա-
տուսցես . շանս սպանելոյ՝ մի՛ քարինս արձակեսցես .
լուոյս ջախջախելոյ՝ մի՛ սաստիկս որոտասցես . հողոյս
անպատուելոյ՝ մի՛ իբր ամբարհաւաճի ուժգինս մր-
ռնչեսցես ։ Ո մոխիրս մերժելի՝ մի՛ 'ի դատ ընդ-



րու-

րութն կոչեսցես. զփոշիս ցնդելի՝ մի՛ իբր զքո դի-
մամարտ գտցես. զտիղմս տաղտկալի՝ մի՛ իբր զոսոխ
վարկանիցիս. զգարշութիս անդոսնելի՝ մի՛ իբր ըղ-
բռնամարտիկ վանեսցես. զխէթս 'ի բաց ընկենլի՝ մի՛
նիւթ դեհենին պահեսցես. զայսքանեաց բազմա
պատիկ բանից կշտամբելոյ՝ մի՛ վերստին յանդի-
մանեսցես :

3 Այս ամենաթշուառ եւ խաւարարդել չերմին են
ահա սրտաբեկ եւ յոքնաթախիծ արդահատու-
թիւնք. հաստատեսցէ՛ օրհնեալդ քո բան՝ անփոփո-
խական լինել, ըստ սրտի արդահատելոյս. քանզի եւ
այժմ մինչ կենդանեօքս խօսիմ, մեռեալ եմ անհա-
սիդ. ով 'ի կորուստ մահուն սատակման՝ ամենազօ-
րիդ հրամանի՝ անեղծ եմ հաւատովքս. Արդ՝ ա-
ղաչեմ զքեզ՝ տէր յս̃ քս̃, հայեաց յիս ողորմութբ̃,
եւ մի՛ թողացուսցես լինել տնակից ինձ բելիարայ. եւ
զմահաղեկոյց տապանին ազդումն անկենդանաւորն
թնդման՝ թշուառն թաղման՝ աղաղակ ձայնի հա-
ռաչման լսելեաց՝ քեզ հաշտեցուցչայ՝ յարդեսցես լը-
սել՝ միայն բարեգործ, հոգեսէր, հզօր, մարդասէր.
եւ հոգիդ քո բարի բնակեսցէ ընդ իս՝ լոյս առնե-
լով ինձ 'ի խաւարին : Մնասցեն ընդ իս կենարար
քո կրից պաշտեցէլ մասունք, զի իբր զաւանդ գան-
ձու զիս պահեալ 'ի քեզ, կենաց նորոգման ընծայե-
ցուսցեն. օձաւք անվանելի զինուց ինձ պատկա-
նեսցին, ընդ իս յարակայեալ քարինք պարսից՝ հո-
գեւոր հնարից՝ զչարին հալածել զդունդ. Մարտն
որ առիւծ՝ քեւ տ՛ր վանեսցի. զի եթէ յարիցէ 'ի վ՛ր
իմ պատերազմել, տեսեալ զքաղաքն ունոյն 'ի զօրաց՝
եւ

և զազդողականացն գործի ապաձայն, զքեզ տէ՛ր ու֊
նիմ մշտնջենաւոր և աննիրհելի պահապան ։
4. Որ եթէ այժմիսկ կամիս արագեալ յառաջ
քան զօրն կատարածի, և անշաւիղ արգելան ինձ
պատրաստեսցէ, առաքեմ զաղօթսն տէրունականն՝
նմին գան մահու․ եթէ 'ի վայր զիս ճնարի կործա֊
նել, զծնրադրութի՛ արարչին․ եթէ 'ի մխիր երկրի
թաւալել ձեռն բերիցէ, երեսացն տ̃յ 'ի նոյն մա֊
ծուցումն՝ զնա հեղքեսցէ․ եթէ վտանգս ինչ ցա֊
ւոց նիւթեսցէ, քրտունքն յուռթի արեամբն զան֊
գեալ փրկչին աշխարհի՝ զնա խունեսցէ․ եթէ յըն֊
թացից բարեաց զշունչս իմ պատանդեսցէ, կապանք
ամենաստեղծին՝ զիս արձակեսցէ․ եթէ յուրացու֊
պարգևաց լուսոյն բռնադատեսցէ, հայհոյութեանն
համբերութի՛ յածամորտին՝ զնոսին ընդ նոյն կար֊
կեսցէ․ եթէ հարուածս նետից զաղտնաձիգ զինուց՝
ինձ արձակեսցէ, կարթ ճնարից աղեղան փառաց հօրն
կապարճից՝ նմին պատահեսցէ ։ Եթէ քօղով լու֊
սոյ խաւարականի՝ մտանել ընդ աչս անամօթեսցի,
կափուցմն գլխոյն ձորձով պատեցեալ լոմանն ամե֊
նից՝ զնա տանջեսցէ․ եթէ մոլեսցի զվստահութիւն
ձեռինս կապել, եղէգն մտուցեալ 'ի յոջ գոյա֊
ցուցչին՝ զնա չարչարեալ ըմբերանեսցէ․ եթէ ձա֊
ղանօք այպանման՝ զիս կատակեսցէ, տանելն ծաղու
ամենազօրին՝ զնա հեղգնեսցէ ։ Եթէ բժժանօք ինչ
յուռթից՝ կախարդել խորամանկեսցէ, ապտակն դի֊
մաց հզօրին տ̃յ՝ զնա սաստկապէս ամաչեցուսցէ ․
եթէ 'ի մուսս գիշերոյին մթութե՛ խաւարա խա֊
բէութե՛ լինեալ մարտիցէ, 'ի ձառագայթից լուսոյ


երև

երեւման քո՝ տէր, խոստովանեցի. եթէ 'ի միջօ-
րէական տապոյ փորձութեանցն՝ արեգակնակէզ վառ-
նէչ խորշակին՝ զիս 'ի յարմարոց խախտել կարծիցէ,
'ի զօրութէ նշանին լուսոյ խլեալ դօսացի: Եթէ
'ի փչմանն շնորհէ ունոյն զիս առնել ծարաւորեա-
ցի, թուքն զոր ընկալաւ տէրն քրովբէից ընդ մէ-
զաւորիս, զնա պատկառեցուսցէ: Եթէ ժանիք խա-
ծօղք ինձ ցուցանիցէ, լռութի երկնաւորին բերա-
նոյ՝ զնա պապանձեցուսցէ, եթէ խածմունս աղուե-
կանս հոգւոյս ազդեսցէ, բեւեռացն հարմունք հա-
տոյն բնաւից՝ զնա կսկծեցուսցէ: Եթէ յընթացս
անխրատութեց խորհրդոց զիս մոլորեցուսցէ, սեւեռք
ոտից անհասանելոյն՝ զնա կապեսցէ. եթէ հրա-
պոյրս ինձ դժնեայս արբուսցէ, քացախն ընդ լե-
ղւոյն խառնել 'ի յարբումն բարերարին՝ զնա դառ-
նացուսցէ: Եթէ առաջին ճաշակմամբ փայտին զիս
գտցէ, սակայն խորհրդով խաչին ըմբռնեալ՝ ի-
սպառ պարտաւորեսցի. եթէ ընդվզել ընդդէմ ճա-
զանդութե տն հրամանի զանձն իմ ուսուսցէ, բե-
րումն պարանոցի անսահմանելոյն՝ զնա կործանես-
ցէ. եթէ 'ի մահ սատակման զիս վանեալ վիրաւո-
րեսցէ, սուսար տէգ զինու մխելոյն 'ի կող՝ ստեղծ-
չին ադամայ՝ զնա հերձեսցէ. եթէ երկամբք վիմաց
դժոխականաց զիս պարփակեսցէ, պատանացն կտաւ-
էից ունողին՝ զնա ըմբռնեսցէ. եթէ յատակս մա-
հու հոյել զիս խարդախեսցէ, բնակել կենդանւոյն
'ի վէմն մահու՝ զնա մեռուսցէ. եթէ խնդասցէ ընդ
մարդկօրէնս իմ գայթագղութիւն, կրկին կորացի
կարկամեալ կամաւ, յորժամ անմահն տծ յարուցեալ
փա

փառօք՝ ընդ իւր նորոգեաց զբնաւ մահացեալս։
Եթէ ընդ լուծանել ի քո կապանաց հազարամէից՝ բերկրեսցի, դողասցի կրկնել վերստին խոկոյն ընդ վերջին շղթայս անզերծ տագնապին ըմբռնմուն՝ սաստ կադունի յանկախձան տանջանարանին։ Եթէ ընդ առաջին հարուածն դժուարեսցի, գոյժ կորստեան յետնում սաստկմանն անշէջ դեհենին՝ որ պատրաստեալն է նո և նորին հրեշտակաց՝ նմա պատմեսցի,

որ յաւուրն մեծի՝ մեծին ատենի։

5 Իսկ ինձ ապաւինելոյս ՚ի քեզ՝ տ՛ր յ՛ս, միայն թագաւոր ինքնակալ զօրեղ՝ արարիչ երկնի և երկրի՝ և ա՛մ զարդուն որ ՚ի նմա, որ գալստեանդ քոյ ակն ունիմ, և ողորմութե՛ փրկչիդ սպասեալ յուսամ. ՚ի յոտս քո անկանիմ, և զգարշապարիդ հետս համբուրեմ. զպարտութիւնս խոստովանիմ, և զմեղանս հրապարակեմ. կշտամբանաց քարամբք կոծիմ, և հառաչանօք սրտիս տապանեմ. ՚ի խէթ խղճիս խոցոտիմ, և բոցով շնչոյս ձենձերիմ. աղի ցօղով արտասուացս ոյլիմ, և երիկամանցս ազդմամբ կիզանիմ. յուսակտուր օդով ցամաքիմ, և դառնաշունչ հողմով շիջանիմ. թախանձանաց բանիւս երերիմ, և կողկողագին հեծութե՛ դողամ. տաժանելի կրիւք տուայտիմ, և տագնապաւ հոգւոյս տատանիմ. ՚ի կոծ մըրրկաց ծփիմ, և ՚ի բախմանէ ալեաց սասանիմ. ՚ի լըրութենէ համբաւոյն սարսեմ, և յէշատակաւ ահին կորնչիմ. կերպարանօք ատենին հալիմ՝ և սպառնալեօք մեծիդ մեռանիմ, լուր՝ բազմագութ, քաւիչ մարդասէր և երկայնամիտ. քաղցրութիւն անձառ, որ բարի և տիր՛ տենչալի. Քանզի կարօղ ես յա-

մենոյնի և առ երս շնչոյս իմոյ՝ փրկութեան մեծի ։ Եւ
քեզ ընդ Հօր հոգւովդ սրբով փառք՝ յաւիտեանս ։
ամէն ։

† Մ ճերմակէն յաւելուած չքչէն հեծութեան՝ նորէն հոնողէ, ա-
նոյն աղերս մաղթանաց բանի ։ ՚Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ ։

## ❊ Բան ․ ԿԱ ։

1 Բայց քանզի յայտ արդար է բան իրաւանցն
քո այ առ իս՝ քան առ սկզբնահայրն չա-
րեաց սատանայ ։ Ո ի վս նր՝ յոյն սակս
յայտնեցաւ, զի լուծցէ զգործս նորին ․ և վս իմ՝
զի զջնջեցեալ պատկերս նորոգեսցէ, առեալ զկեր-
պարանս բոլոր էութ՝ կերպին խոկուն մեծին այ՝
միացոյց ինքեան անշուշտ խառնութբ ․ Նորա ոչ են
շնորհեալ ՚ի բազմացն, և ինձ զբովանդակն եհեղ ու-
ռատութբ ․ վս որ ոչ երբէք չարչարեալ, և վս իմ
հանապազ պատարագի ․ Նա անհաղորդ է կենացն, և
ես միշտ վայելեմ ՚ի փրկութեն ․ Նա վանեալ է խա-
չին, և ես զօրացեալ նշանաւն ։ Նա հերքեալ ՚ի
լուսոյն, և ես միացեալ ընդ փառացն ․ Որ ոչ խոս-
տացաւ հանդիսա և յերկրի, և ինձ զերկինս սեպ-
հականեց ․ զնորայն կորեաց զառհաւատչեայ, և զիմն՝
առանց խզելոյ յարակայեաց ․ զնա յերամակս խոզիցն
արգել, և յիս ինքն զօրացաւ ․ զնա կարծաց օրինա-
կեաց, և զիս ձառագայթ նշանակեաց ․ զնա սողնոց
նմանեցոյց, և զիս իւրովն անուամբ կնքեաց ։
2 Նաև ես զերախտիս այ լքի՝ զայսքանեաց բարեաց
արարողի, և չարին զկնի մտեցոյ՝ հայել ընդ
նը

նմին յատակս դժոխոց՝ ահա անարժանս բարեաց. ան-
ձիրս երախտեաց. անընդունակս սիրոյ. տուամբք մե-
ղաց ձգեալս. յերիկամունս խորոց խոցեալս. քան-
ցեալ ծառս արմատենւոյ. գինիս յեղաշրջեալ. ցո-
րեանս հեղեղեալ. մուրհակս ջրեալ. վճիռս պատ-
ռեալ. կնիքս այլակերպեալ. նմանութիւս փոխեալ.
արկանելիքս կիզեալ. ըմպանակս կորուսեալ. նաւս
ընկղմեալ. մարգարիտս մանրեալ. ակնս պատուական
սուղեալ. տունկս գօսացեալ. նեցուկս խորտակեալ.
փայտս ամենեւին փտեալ. մանրագորս աղաւաղեալ.
յարկս տապալեալ. խորանս խարխալեալ. բոյս ար-
մատաքի խլեալ. ձէթս հեղեալ 'ի գուբինս աղբեաց.
կաթնս հոսեալ 'ի կոյտս մոխրոց. այրս մահու 'ի յա-
րեանց գնդից։ Քանզի միշտ խրատեալ ընդ երու-
սաղէմ՝ առակաւ բաբելոնի՝ 'ի մարգարէից ձայնից
անձն իմ ողբալի, և ոչ ինչ խրատեցեալ. որ աստէն
անդունեալ եմ, և անդէն խոյտառակեալ. աստ դը-
րուեալ, և անդ կշտամբեալ. աստ ձաղեալ, և անդ
նախատեալ. աստ թշնամանեալ, և անդ յանդիմա-
նեալ. աստուստ ապշեալ, և անդանօր լքեալ։ Աստ
հեծումն, և անդ հառաչանք. աստ կարծիս, և անդ
կատարած. աստ խէթ, և անդ հատուցումն. աստ
արկածք, և անդ հանդէպք դատաստանի, ուր ոչ է
բան իրաւանց, և ոչ ձայն պաղատանաց. ոչ թիւք ա-
ւուրց, և ոչ ելք ժամանակաց. ոչ ուղք յուսոյ, և
ոչ դրունք ողորմութեանց. ոչ աջ պաշտպանութեան,
և ոչ ձեռն այցելութեան։

3 Արդ դու ապաւինութիւն. դու ինքն փրկութիւն.
դու այցելութիւն, դու և քաւութիւն. դու երանութիւն.



քեւ

քեւ բժշկութի · քո ողորմութի, միայն հզօր՝ կեն-դանի՝ անճառ որ յս քս բարերար ած · օրհնեալ, օրհնեալ, եւ գովաբանեալ օրհնեալ, ընդ հոգւոյդ քո սբյ յաւէտ բարձրացեալ՝ ի փառս հայրենի խնամութեան մեծին՝ յաւիտեանս յաւիտենից · ամէն։

---

†Ա ճրագէն ցաւելուած ներքին հեծութեան՝ նորին հոնչողէ, առ-նոյն աղերս մաղթանաց բանի։ Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ։

## *Բան · ԿԲ։

1 Եւ արդ՝ ի յիշատակ անհարկութեան վերայ գրեցելոցդ՝ որք յածուստ են սպառնալիք ինձ ժամանեցեալք, զխորդ դադարեցայց ի նորոց ողբերգութեց, եւ կամ որպէս զցամաքումն առցէ հեղեղք արտասուացս։ Օ՜ ի եթէ զչորեքվ-տակէն առաջս դետոցդ յորդահոսան ծաւալմանցդ, որ զեդեմ եւ զերկիր առ հասարակ ոռոգանեն՝ լիապէս բաւականութբ բաշխեալ ածի, եւ զըղխումն էլից խուրեանց՝ առ այս իմ եդեալ, զանձինս մեղաց սաստկութե զոց զովացուցանել՝ ոչ բաւականացին։ Նաւ կամ մարգարէին այ ըղձականութի՝ կրկին ինձ լցցի գլուխս ջուրց բազմութի, եւ ծիրադարան տեսութեց կերպիս՝ աղբերց կոյականունք, զեկման ոգւոցս չափել զվտանգ՝ ոչ ձեռնարկեսցեն. եւ ոչ եղերականք ջուլից համօրէն բանահիւսից կանանց լալականաց՝ ի սիրտ եւ յոգի վերաւորելոց, զաղէտ վտանգիս՝ ի յերգ արկանել, եւ կամ ի նուագս ձայնից բերել։

2 Ն՛մէ օրն լինելութե նզովեալ, եւ ոչ յոբայ՝ կամ

Երե

երեմիայ . քանզի տօնելի է օրն նց՜՝ զորոց մի ՚ի նո-
ցանէ ոչ արժէ աշխարհ՝ և ոչ տարադրելի . ապաու-
րեմն զիս նկատ եղեալ զոչ արժանիս լուսոյ՝ և կամ
միոյ մասնաւոր բարւոյ, զհանդիպումն աւուրն անի-
ծին՝ յորում ես գտայ կորստեան որդիս և մահու-
դրացիս . մշակս մեղաց և արբանեակս անօրէնու-
թեանց . Որ ոչ կացի յուխտին կենաց՝ զոր դու-
սահմանեցեր՝ տ՜ծ բարերար . ոչ դնացի ՚ի քո պատ-
ուիրանն կենդանական անմահացուցիչ . ոչ վաստա-
կեցի ՚ի հունձս արմտեացն, որով ՚ի մուտս ձմեանն՝
աւուրցն խաղաղութե՝ կերակրել պատրաստեցայց .
ոչ կառուցի ամրութի՜ որմոց՝ և ոչ ձեղուն յարկաց
ձգեցի, որով ՚ի շնչմանէ մրրկաց օդոց պահեցայց .
ոչ համբարեցի նշխարս պաշարաց ՚ի յուղին անեզրա-
կանն, որով զտագնապ սովոյն իմ բժշկեցից . ոչ հան-
դերձաւորեցի քեզ աղերս աղօթից, որով առաջի քո
կալ համարձակեցայց . ոչ կազմեցի թոշակ փրկութե՝
վարուց մաքրութե, որ զնորոգութի ինձ երաշխա-
ւորէ . ոչ ետու զընտրութե հաշիւն ՚ի կենցաղոյս
ճանապարհի՝ իմոյ մատնչին, զի ՚ի դատաւորին ձե-
ռանէ՝ ստոյգն իսկ փրծայց . ոչ լռուե՜ ձեռին օրհ-
նութե մատեայ յանդիման, որով օրէնսդրին մա-
նակից գտայց արբեցեալ . Ո՛չ դիմաց ետու զգու-
շութի, և ոչ թիկանց պատսպարուի, ոչ աջոյս իմ
զննուորութի, և ոչ ահեկիս պարածածկուի, որով
՚ի պատերազմիս վտանգէ զերծայց . զերկվարս ոչ ըղ-
դեցուցի զրահիւք, և ոչ զմարմինս՝ սպառազինու-
թե, որով զճակատն յարդարեցից . Ո կանուխն ոչ
կապտեցի պտուղ, և անագանին ոչ ժամանեցի, և

ահա տարակուսիմ ունայն 'ի բարեաց. մաքրութեան
ծաղիկ ոչ ունիմ, և ոչ իւղ ողորմութե, և գիշերոյն
մառայլ աննշոյլ. 'ի նիրհումն մահու ննջեալ եմ, և
տագնապ կոչողին փողոյ սոսկայ. զզարդ հարսանեցն
կրկին մերկացայ, և զձէթ վառուցն վերստին լքի,
և դուռն մտին հարսանեաց առաւօտիկ փակի:

3 Եւ արդ՝ զիա՞րդ առից մխիթարութի այսքանեաց
վշտաց, և կամ ընդ ո՞րքանեաց տարակուսանաց
խաւարի՝ լուսաւորութի յուսոյ կենաց խառնեցից.
և կամ ո՞ւր արդեօք զդարշապարս ոտին կառուցից.
և կամ յո՞ր վստահութի զաչս իմ յառեցից. և զի՞նչ
անդորրութի ծփանացս նկատեցից. և կամ յո՞ր ըղձա
կան դիւրութի ձեռն համբարձից. Զի եթէ 'ի
ձեղուն բարձրութե երկնի, անտի անձրևեաց հուրն
սոդոմայ,ոց ասացեալ է. իսկ եթէ յատակ խորութե
երկրի, սա եբաց զկոկորդն ըմբռնողական՝ և եկուլ
զդադան բանակօքն աբիրոնի. Եթէ յանդգնեցայց
փախչել յունողէն, գուցէ կալցի զիս վիշապն ա
հագին: Եթէ ընդ գազանս ինչ թափառեցայց,
արագունք են խնդրել զվրէժ ստացողին առաւել
առի՝ քան երբեմն զեղիսէին՝ առ մատաղ մանկունս
բեթելացիսն քրմորդիս. Եթէ յամենատարած օդոյս
պարզութի, այն եղև եգիպտացւոցն՝ խաւար շօշա
փելի: Եթէ 'ի թռչունս բարձանց, նոքա են կու
չեցեալք 'ի սպանդն զոհին՝ բասորոյ դիականցն.
Եթէ 'ի տկարսն խեղախեցից, վտանգիմ 'ի պիծակացն,
և զի՞ պիտոյ են ինձ առիւծունք. Եթէ յարջոցն
պատառողաց ապրեցայց, մժիխքն արեան ծարաւիք
ինձ պատահեսցեն. Եթէ յանհոգս ուրեք նստիցիմ,

մժղուկըն անարգադոյնք՝ իբր ցնցուղս հրոյ եռաց_
ման՝ զինև մաղեսցին ։ Եթէ յեղջերէ միեղջերւոյ
փախնուցում զերծեալ, նկուն ճիրանք աղկաղկաց
մնոցն մորմոքողաց՝ զիս կեղեքեսցեն ։ Եթէ 'ի սէ_
նեակս շտեմարանաց խորշից զօղեալ ամփոփիցիմ,
տաղտկատեսակ դարշութիւն գործոցն մեղաց օրի
նակըն՝ զիս զազրացուսցեն ։ Եթէ 'ի վայրս խնչան
գաստանաց կացեալ զետեղեցայց, շարք շանաճանճոցն
տարմից՝ զինև պատեսցեն ։ Թողում ասել զխառ_
նիճն և զջորեակն զզօրն զօրաւոր՝ ընդ թոնաւորն
թրթուր, և ընդ անկենդանական երևին, հանդերձ
ջրակարծ կարկտիւն, և ապականագործ եղեմամբն․
որ առաջաց տեսիլ՝ ապաղէնք և նուաստադոյնք,
բայց 'ի յակնարկելն ա՛յ՝ յաւէտ գոռոզաբար ուժգ_
նութե՛ հարին՝ հանին՝ վանեցին զհպարտն ամբար
հաւանութի՛ փարաւոնի բռնութե՛ն բուռն գաւա
ռանին՝ յաղթօղ վիճակաւ ․ որ են կերպարանք թա_
քուցելոցն կրից ըմկողաց՝ անձնականացն աներևու_
թից՝ եգիպտացւոցն անօրէնութե՛ց՝ յոգի և 'ի մահ
տանջողաց՝ գաղանի վնասողաց ։

4 Արդ դու ամենազօր արարիչ բնաւից տէրդ բո_
լորից, 'ի յատելեան հանդիսացիր հերքել զնո՛․
և ինձ ողորմեա՛ կրկին գթութ՛՝ ձեռն մատուցեալ
փրկութե՛՝ տարակուսեցեալ կոչկոճեալ վարանեալ
'ի մահ պարտելոյս ։ Զի դու միայն ճանաչիս ա՛ծ
փառաւորեալ միշտ ընդ հօր հոգւովդ սրբով
յաւիտեանս յաւիտենից ․
ամէն ․

+Ս էրատին յաւելուած նըկին հեծութեն՝ նորին հոնոցէ, առ-
նոյն աղէրս մաղթանաց բանէ։ 'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ։

## ※ Բան. ԿԹ.

1 Եւ արդ՝ մի՞ զի 'ի ձեռն մեծիդ եւ ամենա-
հընար արուեստաւորիդ իմս եղանութե-
ան եւ այ՝ իբր 'ի քրոյս ընտրութե փութոյ
քոյ սիրոյ՝ հանապազ եռամ՝ եւ ոչ երբէք պարզիմ,
միշտ խառնիմ զուգիլ՝ եւ ոչ եւս միանամ, այժմ զուր՝
արծաթագործդ երկնաւոր՝ իմ ճարտարապետ, 'ի սր
նոտիս վառատկեալ առ իս աշխատիս, ըստ մարգարէին
յայտնի առակի, եւ չարութիս իմ ոչ հալեցաւ. զոր
ինձէն մոլեալ չարաչար՝ իբր զխելադար դիմաբախ
իմն ողորմելի՝ յանդգնել անկարգս խօսիմ՝ զիմս ըզ-
պարտիսս աճեցուցանել, քան հաշտութե հնարս ինձ
այսու կազմել։ Եւ զի մի՛ անընդել դիպուած՝ եւ
անկիրթ պատահումն՝ եւ անհաւասար հանդիպումն՝
պատրաստուիք հանդերձելոց տանջանարանացն ինձ
երեւեսցին, ամենեւին անմոռաց պահեաց աստատին
'ի յիմում մարմնի՝ նշխար մնացուածոց նախնումն ա-
նիծիցն. զոր 'ի փոքու տարրէ անարգէ՝ զմեծն է
ուսանել։

2 Քանզի խաղաղն ինքնաբերականն դիւտք որովայնի՝
բոտոտք ճապուկք շարժողականք, եւ ազգի ազգիք.
որդունք աղեաց գաղտնակուրք. խաղաւարտք հրա-
կայծակք. եւ բիծք բոցակիծք. եւ անիծք անկերպա-
ւորք. եւ երամակք ոմանք քրտնածինք զազրաթոր-
միք կսկծեցուցիչք եւ մարմաջողականք։ Տապատակք
այլոց վայրենեաց, ըստ նմանութեան դիւաց դիշե-

 րա

րամարտից՝ և մեկնաղէն բարբարոս գնդից խառա-
րախրաց, և գազանութե՛ քանասար գայլոց արաբա-
ցւոց՝ կորակոր գնացիւքն, արջնաթոյր գունովն, կրկ-
նապարոյր կռածագ կտցաւն, որ զօրէն ունի խոյ-
թոյաց կարճի, իբր դժնիկ փշովք՝ խոցոտեալ ծը-
ծեն, ձգեն զարեանն խնաւութիւն, և յանկողինս
մահճաց հանգստեանն՝ վաստակս կրից ցուցանեն։
Եւ կարկառեալ ուրուք ձեռն՝ հատուցանել զհա-
տուցումն նո՛ցին, վաղվաղակի զգան զվնաս վտան-
գին՝ զոր ազդէն մարմնոյն, և անդէն խոկոյն լերկա-
մարմին փոքր հատակաւն՝ իբր թևօք իմն թռիչս ար-
ձակեն, և ըստ մարախի ձևոյ ոստոստէլ՝ այսր անդր
տարաբերին. և ըստ բազմապատիր նենգութե բա-
րոյից դաւօղ աղուեսուց՝ խորամանկեալ խուսափեն
՚ի պատուհածս բազում ելից, զի յերկիւղէ մահուն
ապրեսցին։ Եւ այնքան չքոտի և անքատ անձամբքն՝
ոչ միայն զուամիկսն և զխառնիճաղանճս, այլ և զթա-
գաւորս հզօրս և ահագինս՝ փախուցանեն հանեն
տարագրեն ՚ի դստիկոն յարկի ապարանիցն բարձրու-
թե, և կամ ՚ի բացի բնակեցուցանեն. քաջք արանց
արեաց, որք իշխեցին ամբոխից, և տիրեցին ժողովը-
դոց, և առին զքաղաքս ազգաց, զպարտուն իւրեանց
զօրաւոր ձեռինն՝ ինքեանք վկայեն, թէ քանզի ոչ
կարացաք ՚ի դիմի հարկանել վեհիցն բռնութեան,
վ՛ա այնորիկ խոյս տուեալ հասաք յոյս տեղի։
3 Եւ զի՞նչ է ինձ փոքունց և զանկածից ծաղրա-
կանաց ոմանց գոյութեանց ՚ի կիր արկանել, որք
զօրեղ և անհերքելի ջատագովք են ա՛ծութե՛ն՝ յի-
շատակել ինձ զհանդերձեալսն, որք ՚ի մարմնոյս անօ-


րի

ըմպելոյ՝ ընծայելն պտուղք դառնութե՛. Ընդ որս և
եկամուտ սատակչականացն ախտից գնացք, և կերչացն
կոյտք անողոքելիք. յորոց չէ զերծանել, քան թէ հար
կաւ մարմնոյն վտանգի՝ զապագայիցն ուքօք խմա-
տանիրել. և ոչ տեղի է գտանել ապաստանի՝ փախըս-
տեամբ անկանել առ նա. այլ առանց կամաց քումդ
ակնարկութե՛, և մարդկային կարք և ճնարք վրիպե-
ցան. Իսկ դու բարերար՝ զա՛մ ունիս բաւական-
պէս զկենացն ճնար՝ եթէ կամեսցիս փրկել, նորո-
գել, քաւել, բժշկել և կենագործել. և քեզ փառք
յամի՝ յաւիտեանս յաւիտենից. ամէն.

---

† Ս էրոտին յաւելուած իրքին հեծութե՛՝ Նորին հաւրոզէ, ա-
նոյն ազէրս մաղբանոյ բանի. 'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա՛յ.

## * Բան. Հ.

1 Եւ քանզի համբարձեալ զընթացս բանիս 'ի
փոքունց ստի երկրայնոց՝ չհամարելոց ը՛
գոյս՝ եղելոց 'ի մեծագունիցն տեսակս,
ասացից զտօնելի հանդէս իրաւանց ահաւորին անա-
ճառութեան. Որ զի թէ մերձաւորագոյնք իցեն ա՛յ՝
իբրև զնախածանօթ հոյրապետութիւն, և կամ մաք-
րագոյնք՝ ո՛չ մարգարէսն, կամ անբծագոյնք՝ իբրև
զառաքեալսն, կամ ընտրելագոյնք՝ ո՛չ մարտիրոսսն,
եթէ ոչ դու մարդասիրեսցես աննմանաւ բարիդ և
անփոփոխ խնամակալութի՛դ և անպակաս ողորմութի՛դ,
ընդունայն է ինձ փրկութի՛ն առ'ի նոցանէ.
2 Ո՛ւ եթէ առ նոյն ինքն աբրահամ ձայն արձա-
կիցեմ, իբր ողորմագին առակ ընչեղին ինձ

վարդապետէ, 'ի տապոյ անտի պապակեալ, կաթիլ միոյ ջրոյ ո՛չ բաւականանայ. քանզի և նա փակեալ է ընդ կարեօք հասարակաց անձնարութեան։ Իսկ եթէ առ մովսէս, և նա գտեալ է տկարութե՛, որ ո՛չ զօրեաց առնն փրկութեան, որ զհոյթոյթանաց կրկուսն՝ 'ի պահպանութե՛ն աւուր ժողովէր։ Իսկ եթէ առ ահարոն, և նա ինքնին իսկ կարօտացաւ մաղթողի։ Իսկ եթէ առ դաւիթ, 'ի մէջ բարեացն առաւելութե՛՝ սոդոմեալ է և նա։ Իսկ եթէ առ նոյ՝ և յոբ՝ և դանիէլ, զոյս եզեկիէլ մարգարէ մեկնեաց՝ յանուանէ իսկ յիշատակեալ զնոսա, և զայն ընդ նոսին իբր 'ի դիմաց ա՛յ ազդեալ, կենդանի՛ եմ ես՝ ասէ տ՛ր, թէ ո՛չ ապրեցուսցեն զուստերս և զդստերս իւրե՛նց 'ի բարկութե՛ն որ հասանիցէ, բայց եթէ ինքեանք միայն ապրեսցին։ Իսկ եթէ առ պետրոս վէմն հաւատոյ, 'ի քուեմն խնամոց խուռն մի խիթացե՛լ՝ և նա ե՛ կրկւք իմն դրաւեցաւ. Թողում ասել զբազմացն դումարութե՛՝ խոնարհեալ առ կարիս կարիս, թէև յաւէտ երջանիկք իցեն. Ընդ որս և յոլասու ումն միջորդէի՛՝ 'ի մէջ ածառայքն սպասաւորութե՛՝ մարդկօրէնն գոյթադրութի՛՝ հոյ յոլովից անթարգմանելի, թէև 'ի դէմս իմն մեկնութե՛ ձևակերպեսցի.

3 Նա քանզի չափեալ սահմանեցաւ զօրութի փրկութե՛ մարդկան, և ցուցան նոքա ողորմեալք բարերարիւ՝ և զօրացեալք ամենակալիւ. կոչեցեալք պաշտպանողիւ՝ և քաւեցեալք ձնարաւորիւ. շնորհեալք ազատեցուցչիւ՝ և բժշկեալք անախտականիւ. կենդանացեալք անապականիւ՝ և լուսաւորեալք նորոգողիւ, մյսուհետև գիտացեալ զսակն որքա-

նութեանց հողածին բնութեա՛ս, որք մխիթա՛ր են օրի
նակաւն նմանաբար հարազատապէս վհատութե՛ յու
սահատելոց, աչս առ քեզ դիմեցից՝ որդի տէ՛ր կեն_
դանւոյ քո՛ օրհնեալ յա՛մի։ Մանաւանդ զառակն
ազգակից այսմ մաղթանաց տատանօր յիշեալ, զվե_
րադրելոցդ բան վերատին արդարացուցանէ․ բարի է,
ըստ իմաստնոյ ումեմն երջանկի, անկանել ՚ի ձեռս
տն, և մի՛ ՚ի ձեռս մարդկան․ զի ոչ մեծութի նր,
և ողորմութի նորին․ Նաև այս բան՝ թէև զգա_
թին իմն գծագրէր ; որ զերեքմասնեան հարուա՛ծն
ածեան առաջի եդեալ՝ ընտրեաց ինքնին կամաւո_
րաբար զգատակնիք մահուն տատանման՝ իբր զկեն_
դանի քո՛ հաւատոցն յաձախութե՛, քան զերկուսն
ևս այլ փոքրկունս՝ որք տանջենն և ոչ ողորմին, սա_
կայն և իմս օրինակութի բանիս պատկերի ձարա_
կեցելոյ ճնարս կենաց կորուսեալս անձին՝ ոչ է այ_
լայլեալ յարմարութէ․ զի ոչ եթէ զփրկեալսն նր
հաստատուցանեմ ՚ի մատենի այսր ողբերգութեան,
առանց որոց ոչ է մատչել առ տր, այլ զփրկողին ա_
նուն պսակեմ, և զշնորհ նորին՝ առ ամենեսին բա_
րեհաչակեմ․ և զընաւին բարձունան ՚ի թուիչս վա_
րուց՝ խոստովանիմ բանիս պայմանաւ, յաւէտ կա_
րօտեալ ողորմութեն դեղոյ․

4 Այս դու կեանք, դու փրկութի, դու բժշկութի,
դու անմահութի, դու երանութի, դու լուսաւորութի,
արա ինձ անդորր ՚ի մեղաց աշխատութեց, զի և քեզ
լեցի հանգիստ ՚ի մշտադամաս հեծութեց՝ ձանձրացու_
ցիչս թախանձանաց․ որ ոչ այլ իւիք, քան թէ փրկութ
մարդկան պարարիս, օրհնեալ յաւիտեանս․ ամէն․



Նաւ

† Ս. Հերոփէին յաւելուած ի գրքին հեծութեն՝ նորին հոգւոյն, առ նոյն աղերս մաղթանաց բանի. Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ.

## * Բան. ՀԸ:

1 Եւ քանզի երջանիկքն և փառաւորեալք սրբոցն
պարք, յորոց ոմանք դոյզն ինչ գթեցին, և
յաձախագոյնս հաստատեցան. փոքունս սասանեցան,
և մեծագոյն վաղվաղակի նշուլից հոգւոյն մաքրութե
լուսաւորեցան։ Յորոց միոյն՝ զանկուածոյն յայտ
նէ զհաստատակատեղծն ակարութիւն, իսկ միւսն՝
զգերազանցն քան զբնութեն օրէնս՝ վարս և առաքի
նութիս հրեշտակակինս. Նաւ արդ՝ նոքա որ օրհնեալքն
են յամենիշխան բերանոյ Ածութե հօրն քո, ընտ
րեալքն, տօնեալքն, կնքեալքն և բարեբանեալքն,
իբրև զանդամսքո պաշտեցեալք, և իբրև զօթեվանս
հոգւոյն սբյ յարդարեալք. յորս չիք ինչ նշմարանք
և կամ գիւտք խաւարի, այլ ամենևին անկեղծութե՝
և լուսաւոր արդարութե. և որքին մարթ է՝ զմարդն
Այ՝ Այ նմանեցուցանել. Նորեալք պարգևք և անպատ
կառելիք. կրօնք բարձունք և անխոնարհելիք. կեանք
զգաստք և անստգտանելիք. պաշտօն առ Ած՝ կարծր
և անփոխարկելի. ընթացք արիականք և անկասելիք.
Ճշմարտութե միատարր և անցնդելի. դիմադրաւութի
զօրեղ և անհերքելի. տեսաւորութիւն պայծառ և
անապշելի. իմաստասիրութիւն վերինական և անկո
խելի. պատկեր մաքուր և անաղարտելի. Զորոց
կերպարանս և զյիշատակս անուանցն աղաչել՝ Ած
իսկ վարդապետեաց, և նոքօք հաձութիւն ի մէջ
խռովութեան՝ արարչին բան լուսաւորեաց.



Ա.ՃԼ

2 Ամլ ես անպիտանս յամի, և որքան բան զօրէ՝
պարսաւելոյ. որ մինչդեռ արթուն եմ, նիր
հեմ. մինչդեռ զգաստ երևիմ՝ թմբրիմ. 'ի բարե_
պաշտելս իմում՝ գայթագղիմ. մինչդեռ աղօթեմն՝
և վրիպիմ. 'ի յընթանալս իմում՝ և կասիմ. յարդա_
րանալս իմ՝ և մեղանչեմ. 'ի խաղաղանալս իմում՝ ամ_
բոխիմ. մինչդեռ արշաւեմն՝ առ 'ի յետոյսն հակա_
միտեմ. 'ի չուելն իմում՝ ընդ կրունկն դառնամ.
Ընդ լուսոյն մասին՝ և խաւար յարեմ. ընդ քաղցրու
թեան ճաշակ՝ օշինդր խառնեմ. ընդ կուղս բարեացն՝
չարիս հիւսեմ. ընդ կանգնելն՝ և կրկին գլորիմ.
Ողջակիմ, և ոչ պտղաբերիմ. ասեմ, և ոչ առնեմ.
խոստանամ, և ոչ կատարեմ. ուխտեմ, և ոչ վճարեմ:
Կարկառեմ, և անդրէն ամփոփեմ. ցուցանեմ, և
ոչ ընծայեմ. մերձեցուցանեմ, և ոչ մատուցանեմ:
'Ի ճարակել խոցուածոյս՝ անդրէն վէրաւորիմ. 'ի
հաշտեցուցանելն՝ վերստին խռովեմ. զուր հանդի_
սանամ, և իրաւամբք պարտաւորիմ. գրիմ, և իսկոյն
եղծանիմ. նաւեմ, և 'ի գիծն թուլանամ. սկսանիմ,
և 'ի հանդիսոն ոչ ժամանեմ. Կարգիմ, և դարձեալ
սասանիմ. լնանիմ, և կրկին հեղում. շարունակիմ
աստ, և անդ 'ի ստորևս հոսիմ. բարդիմ, և անդէն
տոչորիմ. Հիմն արկանեմ, և ոչ գլխաւորեմ. սակաւ
վաստակիմ, և բիւրս վատնեմ. դոյզն գանձեմ, և ան
թիւս սպառեմ: Ո՜ այլս խրատեմ, և ես ինքն ան_
փորձ եմ. միշտ ուսանիմ, և երբէք 'ի ճշմարտութի
գիտութե ոչ հասանեմ: Ո՜ չինջեալ չարիսն՝ նոյնչափ
ար

արծարծեմ. սուղ ինչ քաջալերիմ, և առաւելապէս
լքանիմ. լարիմ, և խոկ և խոկ առ նմին մեղկիմ. զայս
կարկառեմ, և զայն պատառեմ. խլեմ զեղլիձն, և
տատասկ տնկեմ. Ընդ ամբառնալն՝ և այսրէն բե_
րիմ. մտեմ 'ի բոյնն աղաւնի, և անտուստ ագռաւ_
ելանեմ. գամ սակաւ մի այլխաղ, և սրանամ դառ_
նամ բնաւին մնացեալ. ասեմ զիս քեզ դաւանել,
և սպանողին նուէրիմ. ընդ յանդիման լինելն, և
թիկունս դարձուցանեմ. Աղբրիմ, և այլ մրճոտիմ.
լուանիմ, և նովին զաղրանամ. կերպարանիմ զդա_
թին, և գործք զաւուրայն կատարեմ. շրթամբք ճշ_
մարտեմ, և ստեմ երիկամամբք. աջովս մատակարա_
րեմ, և աՀեակ կողմամբս աւերեմ. Ընդ երկրագոր
ծութն ցորենոյն՝ որոմն սերմանեմ. 'ի բարձրագոյն
իմաստիցն՝ վայր իջեալ եմ ինքն գտանիմ. Հրեշտա_
կանամ յերեսս, և 'ի խորՀուրդս դիւանամ. 'ի յոյս
Հաստատիմ, և 'ի միտս տատանիմ. սուտ ձևանամ, և
իրօք խոտորիմ. կեղծաւորիմ արդար, և արդեամբք
ամբարշտեմ. Պասիմ 'ի պարս Հեզոց, և ընդ այսս
կաքաւեմ. 'ի մարդկանէ գովիմ, և 'ի տեսողէդ պար
սաւիմ. 'ի Հողածնելոցս երանիմ, և յորդւոցն լու_
սոյ աւաղիմ. Հաճոյանամ յետին ռամկին, և թագա_
ւորին մեծի յաչաց ելանեմ. Յատեանն դատաւո
րին թողեալ, խառնակրօնիցն աղերսեմ. Հեղգեալ
'ի վեՀիցն, տոսկականացն սպրդիմ. մարմնովս արտա_
քուստ պճնիմ, և անձամբս երփնիւ ճոյլին ճանա_
չիմ. Հպաւորիմ դաշն Հաստատել, և ուխտակորոյս
արտաքս մերժիմ. Այսօր մաքուր Հոգեկիր, և վա
ղիւ մոլի խելագար. զտ՟րունի պատուէրն լքեալ,


թե

թելադրութեն օձին հետևեիմ․ արխանամ զօրապէս,
և փաթարագոյնս ընկրկիմ․ զծանրութի աւուրն
բառնամ, և 'ի ժամ փարձուն անմասն եղանեմ․ 'ի բա-
ցուստ ձայնմն խօսիմ, և 'ի պատասխանատուութեն
պահու պապանձեալ կարկիմ․ 'ի յելս արևուն հա-
րուստ երևիմ, և ընդ երեկս ունայն դեգերիմ․
'Ի յաթոռս ծերոց բազմեալ, և խեղյեղից կցոր-
դիմ․ ննջեմ խեթին, և արհաւրօք զարհուրել զարթ-
նում․ Ո՛ անդաստանս կամացս՝ չարաչարս հերկեմ,
փոյթ խնամով 'ի չարիս․ միշտ անաւակ որդիս․ ան-
դարձ տարագրեալս․ անզղջական զառածեալս․ ան-
մխիթար տրտմեալս․ ինքնադրաւ դերեալս․ մահու
և ապականութե ծառայեալս․ անողոքելի տանջեալս․
անփրկելի մատնեցեալս․ անպատուաստելի հատուա-
ծեալս․ անարծարծելի շիջուցեալս․ անկազդուրելի
խորտակեալս․ անհանդերձելի կործանեալս․ Եւ եթէ
պարտ է զաստիկն աստանօր ասել անօրինեալս ան-
ձին նախատինս, ահա գրեմ, գրեմ և ոչ անխնայեմ
'ի խուփս նիւթել գեհենին․ Յաւելուածս նախան-
ձու նորոյս ադամայ երկնայնոյ, ում և կայենն աստ-
ջին՝ ճնոյն և հողեղենին․ որ ունիմ զընաւն աստուստ
'ի յանձին զնշանակ ամբաստանութեանս, ոչ զընչոյս
տուրևառուն, այլ զբանիցս կշտամբուն․

3 Եւ արդ՝ ո՞ր իցեն փրկութիւնքն, ուր սկզբնա-
հայրն հաւատոյ՝ 'ի յուսահատութեանն վայրի՝
զանդթութեն իմ չարիս կրկնէ․ մեծն մարգարէից՝
քարամբք բանից կոչկոճէ․ արին բարեփառ՝ աշտէին
նիզակաւ՝ 'ի մահ սաստիկ․ պատկեր ճշմարտին՝ ընդ
աքարու համոյնին ջնջէ․ ածարեալն վեհից՝ յարա-
գո

գողացն վրիժուց մատնէ. մարգարէածին տեսանօղն՝ ընդ ամաղէկացւոյն առաջի ո՜ն սպանանէ. նախանձաւորն ո՜յ՝ երկնատեղաց բոցովն վատնէ. սուրերին լրումն՝ և նորոյս սկիզբն՝ հեծանոցին ընտրութե՟ն մէհուսէ. պետն առաքելոցն՝ ընդ սափիրոյի 'ի կենաց զրաւէ. զարմանալին քննութ՟ե հոգւոյն՝ բուրումն ինձ մահու՝ ը՟ կենացն քարոզ խառնէ: Արդ՝ անաչառք և ինձ կաձառք երջանկացն, և ուժգնութե հրամանի վերնոյն՝ արի սպառաղէնք. ընդ հրեշտակացն՝ և մարդիկ. ընդ տիեզերաց երկրի՝ և տարերք. ընդ անզգայիցն՝ և շարժողականք. որովք դատել միշտ լինիմ տուժիւք լլկանաց՝ յօրինակ և յիշատակ սոսկալեացն ապագայից, իբր հողմով փոթորկի ալեաց յաւէտ մրրկեալ կենացս վատահութիւն՝ մնոյ անկայուն 'ի հաստատութենց. Զոր եթէ ոք իմաստուե՟ 'ի քննին առեալ խուզեսցէ զլուղակացն բաղմատեսիլ զանազանութի, զմանուկս փոքունս ընդ մեծամեծացն դասեալ, որ առանց թուոյ և քանակութե համարոյ՝ թինդս առեալ անբաւ երամոց, եւան զեռան սղանան 'ի մարմնիս ծովու, վկայեսցէ և հաստատեսցէ ճշմարիտ լինել զասացելոցս բանադրութիւն:

4 Արդ դու ինքն օրհնաբանեալ անմահ թագաւոր՝ բարի երկնաւոր մարդասէր ք՟ս, ո՜յ կենդանւոյ միածին որդի, հզօր, բարձրեալ, անքննին, անձառ, քաւիչ, ահաւոր, սաստեա 'ի ձմեռն ամբոխեալ ալեաց ոգւոյս ծփանաց. արձանացո զծարաւս մոլեդին շարժման սրտիս խռովութե. ընդոտնեա 'ի սանձս կապոյ երասանաց ըմբռնման՝ զցնդեալ մտացս վայ-

րոգութիւն։ Լուղեցի՛ խաղաղութի հրամանաւ մե_
ծիդ՝ ամենավարան բոցոյս սասանման. սատակեա՛ խա
փանեա՛ զբազմադլխեան անդամս ուրուականս գաղտ_
նեաց ամօթոյս՝ երկրակենցաղս հինից։ Գործեսցես
աղօթս մտամատոյցս զոյս նորընծոյ տառ ողորմու_
ղերս թախծագին ձայնի ողբերգակութեան այսր
մատենի։ Զա՛ն 'ի խորոց մահու անդնդոց՝ չքնաղ
ապրեցելոյ, ընդ մարգարէին փրկելոյ. ընկա՛լ զխոս_
տովանութի անձնադատ բանիս 'ի հոտ անուշից, շնոր
հեա՛ մխիթար դառնութե վշտաց ուժգին հեծու_
թեան յուսահատելոյս։ Նա՛ քեզ ընդ հօր հոգւով_
սրբով փառք պատիւ և իշխանութի՝ յաւիտեանս.
ամէն։

---

+Ս Էջմիածին յաւելուած չէին հեծութեն՝ Նորին հոգւովն, ա_
նոյն աղերս մաղթանաց բանի։ 'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ։

## *Բան. ՂԲ.

Ահա ձե՛զ ասեմ ո՛վ եկեղեցիք միանձանց՝
և աշակերտութիք կրօնաւորանաց, որք մեր
կամաւորին մատանցդ ձեռօք՝ առ այն
կոչութիւն յուսոյն պարգևաց բարեացն անբաւից
տն զինուորեալք, որոց զոյս սեղան հանդերձանաց
խորտկաց բանից ընծայեցուցի, ընկալարուք զոյս ա_
ւանդութի խոստովանութե՝ 'ի շինուած փրկութե
հոգւոց։ Ծաներուք սովիմբ զմարմնոյս պարտութի.
յիշեցէք զմարգարէականն՝ ընդ առաքելականին ա_
ռեալ մեզ 'ի խրատ, զի մի՛ պարծեսցի ամ մարմին ա_
ռաջի այ, և զի՛ չիք որ է արդարն և ոչ մի։ Ո՛ որու_
նա

նախանձն մի՛ մտանիցէ, 'ի կատարածն խակ պտտու–
րանին գոդջի՛ք զձեզ ծառայս անպիտանս. մի՛ եղիցի
լինել ձեզ որպէս խաբողին. զգուշացարո՛ւք և գրոյն,
թէ կերակուրք նր̄՝ ըմպելիքն։ Քանզի և ես խակ,
որ զայս նմանութի̄ մանաւոր պտղոյ ձեզ ջամբե–
ցուցի, վկայեալ զանձնէ կամաւորական սողտանք
բիւր բամբասանաց՝ անբժշկական մեղանաց, 'ի սկզբ–
նահոյրն սկսեալ մինչև 'ի պատուումն ծննդոց նորա՝
կամացականն յանձնառութե̄ հասանեցի եդի զիս ա–
մենայնիւ պարտական չարեաց։

շ Ո՛չ յումեմնէ ոչ պարտաւորէ, և ո՛չ հաձե–
ցոյ, 'ի յասելն նր̄ անպարմարապէս առ այն, որոյ
առաջի ո՛չ է արդարանալ մարմնոյ երկրածնի, թէ ո՛չ
երբէք չնացայ, ո՛չ պոռնկեցայ, և ո՛չ զաշխարհիս ինչ
համբուրեցի ձաշակս մահու։ Ո՛վ ո՛չ ընդ հատ ինչ
յանօրէնութէ. թողցէ նմա տր̄ ած զայսոսիկ, թէև
ճշմարտի̄ խակ գրեցաւ, ո՛չ ընթացաւ, որքան թէ
գթեաց, 'ի յասել զանպարմարսն 'ի դիմաց ժողովը–
դեանն խորհէլի՝ բանի̄ զաքարիոյ, օրհնեալ տր̄, և
մեծացաք. որ է փարիսեցւոյն ձայնի կերպարան։
Բայց ես քանզի գիտողին տ̄յ մատնեալ եմ դատաս–
տանի, որ զկիրս աներևութիցն մոաց 'ի կշիռս ե–
դեալ համարի դատել զիս նոքօք ամենիւ հա–
տուցմամբք, ո՛չ կերպարանեցոյց տեսողին. ո՛չ կեղ–
ծաւորեցոյց քննողին. ո՛չ սաեցից զոչ գործեցեալն
նկատողին. ո՛չ խաբէութե̄ ընդ միտ ինչ մտից մե–
ծին. ո՛չ 'ի տեսիլ բարւոյ՝ ցոփուն զչարս քողարկե–
ցից. ո՛չ 'ի պատկեր ընտանի՝ զապիկարս երբէք յար–
դեցից. ո՛չ խենեշեցոյց 'ի զարդ օտարոտի. ո՛չ պղծ̄



նե

նեցայց սիրով պայծառուԹե. ո՛չ պաճուճանս յօրինա-
րեցից աղեղուԹեանս գեղոյ։ Ո՛չ որք մեղուաոր ի բերա-
զի. ո՛չ որք անօրէն. ո՛չ որք ամբարիշտ. ո՛չ որք անիրաւ.
ո՛չ որք չարագործ. ո՛չ որք վրիպեալ. ո՛չ որք սխալեալ.
ո՛չ որք մոլեգնեալ. ո՛չ որք խարԹափեալ. ո՛չ որք շաղա-
խեալ. ո՛չ որք ամաչեցեալ. ո՛չ որք դատապարտեալ. ես
միայն եմ, և այլ ո՛չ որք. ես ամենայնն, և յիս ամենայն։
Ո՛չ հեԹանոսք, զի ո՛չ գիտէին. ո՛չ հրէայք, քանզի
կուրացան. ո՛չ աղէոք և խառնիճաղանճք, քանզի
յիմարք էին իմաստից։ Պետ վարժից կոչեցայ՝ յան-
ձինս դատախազ. ռաբբի ռաբբի անուանեցայ, և ըղ-
գովեստն առ ա̃ծ՝ եղծի. բարի ասացայ՝ առ եղկու-
Թեանն ժառանգուԹի. մ̃ք վկայեցայ 'ի մարդկանէ,
որ եմ անմաքուր առաջի ա̃յ. արդար դաւանեցայ՝ ա̃մ
իրօք ամբարիշտս. հեղգացայ 'ի գովեստ մարդկան, զի
ծաղր եղէց յատենին քո. յաւագանէ կոչեցայ ար-
Թուն, և ես 'ի քուն մահու ննջեցի. 'ի փրկուԹեն
աւուր հսկօղ յորջորջեցայ, բայց զզգաստուԹեանն
աչս կափուցի։ Ահա դատաստան. ահա յանդիմա-
նուԹի. ահա նոր կշտամբանք, և հին դատապարտու-
Թիւն. ահա ամօԹ դիմաց, և տագնապ հոգւոյ. ահա
խնդիրք փոքունց, և կշիռք մեծամեծաց։
3 Արդ ա՛ւ միայն՝ տէ՛ր ա̃ծ մարդասէր, անոխակալ
և երկայնամիտ, համարեա՛ց մեղապարտս անձին՝
ընդ վերջին պարտաւորուԹեան աւուրն ահաւորի՝
զայս կսկծեցուցանօղ ինքնաբանական նախատինս։
Մի՛ լո՛ւայց 'ի քէն զայսպիսի՝ գ̃Թած, փոխանակ զի
ես ինձէն անձինս գրեցի։ Արդ՝ բարձցես և վե-
րացուցես զպահ պարտաւորուԹե̃ն կանոնիս՝ ընդ քեզ
կա

կապելոյս տենչանօք հոգւոյս։ Հա՛ն զնախատինս
պատկառանաց խոյտառակութեա․ ծածկեա՛ աջովդ
ներողութե զօդեղ տեսակ մարմնոյս մերկութեան․
Մատո՛ հանդստեան զթօպեալս ուժգին մեղացս բե-
ռամբք․ կարդեա՛ ինձ սահման հետոց բարութեան՝
առ երս կենացդ․ պահեա՛ յիշատակ ինձ ողորմութե՝
և զկնի մահու՝ կեա՛նք ամենեւին, օրհնեալ յերկինս,
և գովեալ յերկրի․ բարեբանեալ միշտ յամ՝ յաւի-
տեանս յաւիտենից․ ամէն․

---

† Ա չէրատէն ցատէլուած նրնէն հէծաարէ՝ նարէն հօնօղէ, ատ-
նոյն ողէրո մողբանաց բանէ։ 'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ած։

## ✻Բան․ ՀԳ․

1 Թագաւո՛ր բարձրեալ հզօր ահաւոր՝ օրհ-
նեալդ միայն Տր յաւէտ, քո՛ է փոխարկել
յանայլնկալս կենաց յուսահատութեան՝
զպատակեր անէծս՝ առ կեցուցանօղ օրհնութիւս․ ըղ
պարսաւանս վհատութե՝ առ զո՛հարթացուցիչ գո-
վութի․ ընդ ամօթոյն՝ համարձակութի․ ընդ պատ-
կառանացն՝ պատիւ․ ընդ տարադրութեն՝ յոյս բա-
րութե․ ընդ բաժանմանն՝ ակնկալութիւն միութե․
ընդ սպառնականացն բանից՝ ողոքական սփոփանս․
ընդ միանգամ դատապարտութեանն՝ կրկին ազա-
տութիւն։

2 Ողորմեա՛ տէ՛ր՝ մահու մեղապարտիս յաւուր ար-
ձակման շնչոյս կենդանութե, մինչ աչացս ողոր-
մագին հայեցուածս 'ի բարձունս կողկողեցի՝ զբաղ
մարկածեան ուղղոյն զանզերծ ընթացիցն զանփախ-

չէրին ճանապարհ յաչս բերելով՝ մնացս տեսանմէ
ամի՛ն վտանկեալ. և 'ի յերդ բնակութեան յարկիս նը
կասեալ յերկիցն շաւիղ, թշնամաւացեալ կիսամեռու-
թեամբ, դիմօք տխրութեան, տատանմամբ մտաւնոցս,
կարկամ հառաչմամբ, նուաղ հեծութե՛՝ նրբական
ձայնիւ, յոդի թախծութե յոգնամասնեայ տարակու-
սանաց՝ 'ի խորոցս աներևութից զգործեցելոցս ող-
բալով հառաչեմ։ Կարօղ ես բարեգութ՝ և անդ-
հրաշագործել յաւէտ զօրեղութե՛՝ ասելով, թէ որչ
եղիջիր յոգւոյդ խորտակմանէ. և կամ թողեալ լի-
ցին քեղ մեղանք քո. կամ թէ երթ 'ի խաղաղութի
սրբեալ 'ի մեղաց։ Նաև զոր յայնմ ժամու ոչ ժամա
նեցից պաղատել, այսօր ընկալցիս մարդասիրապէս,
ով երկայնամիտ բազմաշնորհ ամենակեցոյց։ Յորժամ՝
որ այժմս բանապաձայն խոխտաձայն սիգացող բարձ-
րապարանոց՝ անկեալ դնիմ դի անկենդան. կարկեալ
'ի խօսից. կաշկանդեալ ձեռօք. լքեալ անդամօք.
խփեալ շրթամբք. կափուցեալ աչօք։ Տախտակ ան-
շարժուն. կոճղ կիսայրեաց. արձան անզգայ. պատ-
կեր անբարբառ. դոյութի անշունչ. ողորմելի տե-
սիլ. աշխարհելի կերպարան. ողբալի օրինակ. եղկելի
դէմք. արտասուելի նմանութիւն. լռեցեալ լե-
զու. ցամաքեալ խօս. թօթափեալ ծաղիկ. ծորեալ
դեղ. շիջեալ ղամբար. դատարկ կոկորդ. խոպանա-
ցեալ սիրտ. աղխեալ աղբարան. սպառեալ աղբիւր.
թալկացեալ մարմին. ժողվեալ որովայն. քակտեալ
տաղաւար. կոտորեալ ոտք. բաժանեալ յօդք. հա-
տեալ ծառ. սղոցեալ արմատ. թողեալ տուն. ջնջեալ
արտ. սարսափուզեալ բոյս. օտարացեալ բարեկամ.

մոռացեալ պահեստ․ թաղեալ գարշութի․ մերժեալ
աւելի․ բարձեալ խէթ․ անարգեալ կմախք, և իբր
զանպիտան առ ոտն կոխեալ։ Կարօտեալ այլոց մաղ
թանաց, որք զհաւատոյ՝ թշուառախս ձայնիւ նուա
գեալ աղերս հառաչման, ցօղով արտասուաց՝ բա
րերարիդ գթութեան ՚ի բարձունս տարածանեն։
Ո՜ ուրեք դարձն յեղանակեն յարդահատելով, զոր
օրհնեմ․ զնշան խաչիդ փրկութե, զոր երկրպագեմ․
զյարութեն ճշմարտութի, որում հաւատամ․ զխա
ռացդ քո յոյսութի, զոր փառաւորեմ․ զդատաս
տանիդ ահաւորութի, զոր խոստովանիմ․ զբանիցդ
յանդիմանութի, յորմէ զարհուրիմ․ զհոգւոյդ սբյ
ինձ ուղեկցութի, զոր պաշտեմ․ զօծմանդ տեառնա
գրութիւն, զոր և համբուրեմ․ զթագաւորելն ընդ
քեզ՝ տէր յս, որում պաղատիմ։ Մարդ լքեալ՝ մեր
ժեցաւ՝ բարձաւ՝ տրոհեցաւ՝ փախեաւ՝ սրացաւ՝ տե
ղի ետ կցորդութի զուգութե կենդանոյս կենդա
նութե․ և յուսոյդ որ ՚ի քէն պարգևե՝ մնացական և
անջնջական յիշատակարան պահեցաւ․

3 Տես ողորմութեամբ ՚ի տարակուսանս վտանգելոյս՝
միայն բարեգութ փառաւորեալ որդի այ, քա
ւել, բժշկել՝ կենագործել՝ պաշտպանել՝ նորոգել՝
նկարել՝ կանգնել՝ հաստատել՝ վերստին ստեղծագոր
ծել յերջանիկն անարատութի․ քո է կարողութի,
քո է փրկութի, քո ողորմութի․ չի՛ք քո անկարութի,
այլ ամենևին զօրութի, բարձրութի, իշխանութի,
անվախճան թագաւորութի, իսկութի, ինքնութի,
ամենատեղի բացարձակութի, բարերարութի, լու
սաւորութիւն․ փառաւորեալ տիրապէս, անպակաս

և անյաւերլուած , խնկեալ խորհրդով անթարգմա-
նելեաւ յերրորդութեդ սրբում գոհաբանեալ յա-
ւէտ . և ևս առ ամեն 'ի նոյն պաշտօն հաւասարուե
միապատիւ զուգականութե , երէկ և այսօր՝ և յա-
ւիտենից յաւիտեանս . ամէն ։

---

† Ա Կիրակէին ցաւելուած կրկին հեծուրըն՝ նորին հօնոշէ, առ-
նոյն ողէրը ձողըմանոց բանի . 'ի խորոց սրտից խօսք՝ ընդ ոգ ։

## * Ձայն . ՀԳ .

1 Ա՛րքայ երկնաւոր՝ տէր բոլորեցուն , առ ամ
բան՝ յամէ միշտ երկայնամիտ , ոյ կենդա-
նւոյ անքննելին որդի . Ո՜հա ո՞ւր է
ողորմելն խնկապէս , յորում հաստատ ակնկալութիւն
վաստակոյն . ո՞ւր է բարեգործելն , յորում տեսութի
իմաստիցն խափանեցաւ . յո՞յնմ ժամու է մարդասի-
րելն , յորում տկարութեն վտանգ պաշարեալ տի-
րեաց ներքոյ և արտաքոյ ։ Ո՞ւրանօր է բժշկութի
ածոյին քոյ ձեռինդ , յորժամ բնաւ անդամոցն տե-
ղի եա կենդանութիւնն . ո՞ւր վայր է այցելութե ,
յորում ելք ճարից ո՛չ գոյ ։ Ո՞ւր է քո մեծութի ,
յորժամ զյուսահատութեան վէրն ողջացուցանես .
ո՞ւր է հարազատ քումդ ազգակցութե , եթէ յանա
կընկալն ժամու արամեստաւորեսցես փրկութիւն ։
Ո՞ւր է հանդիսարան քում յաղթանակի , եթէ ըղ-
փակեն մուտս կենաց 'ի սպառումն շնչոյս՝ բացցես .
ո՞ւր են քո շնորհք վայելչականք , եթէ զչարեացս ի-
մոց մոռացեալ՝ զբարեացդ քո յիշեսցես ։ Յա՛յսմ ես
անոխակալդ եթէ ապախտաւորիս՝ ընդ երախտաւորացն


խը

խնամարկեսցես ․ ՚ի սուրբն ծանեալ գիտացից, եթէ
նայեցար ՚ի նուէր բանիս՝ նախնի գթութեամբդ, եթէ
զմոլորութիւն չարեացս բարձցես ։

2 Յաղագս այսորիկ հիւսին բանք, և եղանակին նը-
ւագերգութիւնք, յորժամ տէրն բարի՝ չորն ծա-
ռայի՝ զբարեգործացն պարգևեսցէ, որ մինչ իրա-
ւամբք մնացէ բանոյ, նա յարքայական ապարանս
զնա հանգուսցէ ․ մինչ հրաւիրեալ է ՚ի գուբ տղմոյ,
նա ՚ի բազմականս ամենապատիկս գահուց գրգեցու-
ցանիցէ ․ մինչ բրելոյ ղոչան դիտեսցէ, նա ՚ի բարձ-
րութիւն բերկրութեան հայեցուցանիցէ ․ մինչ ծայրա-
տութեան մասանցն սպասէ, նա մասանի համարձա-
կութեան մասուցանիցէ ․ մինչ հոյի հարուածոց գա-
նից, նա գթոյ գիրկս արկանիցէ ․ մինչ պատրաստել
յուսոյ կորստեան, նա երևելի տեսողաց բազմաց առ-
նիցէ ․ մինչ ակն ունի սաստկման մահու, նա ընդ կե-
նացն և փառս ընծայեցուսցէ ․ մինչ հատման գլխոյն
նայեսցի, նա զնոյն պսակաւ պայծառացուցանիցէ ․
Ա՛յս պտուղք օրհնութեան՝ գրեթած, սքանչելարմատ
քում շառաւիղաց ․ այս արդասիք կենաց՝ արարչա-
կանդ քո հրամանաց ․ այս իղձք խորհրդոց՝ խոստո-
վանեալդ քո տենչանաց ․ այս նշոյլք լուսոյ՝ ամենա-
բուխիդ ճառագայթից ․ այս ախորժութիւն ճաշակաց՝
բարեբանեալդ քո քաղցրութեան ։

3 Ի՞ մոյնոյ են այսոքիկ՝ տէր, ՚ի քէն ազդեցու-
գրել ինձ զսոսին ․ ահա՛ զքոյդ յատուկ աղերս
աղաչեմ՝ օրհնեալ, ՚ի քոյոց այսոր պարգևեալ շնոր-
հեա ․ բայց տէր զգանձս քո բարիս, ըստ աղերսանաց
առակին ․ Մի՛ խառնեսցես ՚ի համբարս բարեացդ քոց՝



՚ի

'ի չարեացն իմոց. մի՛ շտեմարանեսցես զատելիսն քո՝
որ են ոխութիւնք և ցասմունք, ընդ սիրելիսն քո՝
որ են գթութիւնք և ողորմութիւնք. մի՛ պահեսցես 'ի
ստացուածս քո պաշտելիս՝ զանախորժելիսն քո՝ որ
են մթութիւնք և դաժանութիւնք, և զիմ փափաքելիքն՝
որ են մեղք և թշուառութիւնք. Մի՛ գրեսցես աջովդ
օրհնութեան 'ի մատենիդ կենաց՝ զմուրհակ պարտուց
իմոցս անիծից. այլ զանջնջարաւորսն ինձ համարեալս՝
մեծացուսցես կրկին առաւել զանուն քո տէր՝ 'ի
նոսին, ցուցանել զդոյն ինձ դիւրինս և հեշտակա֊
նագոյնս: Շա՛տ են իմ պարտիքս և անդր քան ըզ֊
թիւ, այլ ո՛չ այնքան հրաշալիք իբրև զքո զողորմու֊
թիւնդ. բազո՛ւմ են մեղանքս, այլ յաւէտ են նը֊
ուազեալ առաջի քոյդ ներողութեան. յաճախ են չա֊
րութիւնքս, այլ յաղթակա՛ն են համայնից՝ հըզօր ա֊
մենակալ, քոյդ մարդասիրութիւն. ինձ են անհամար՝
իմոյս անձին բիծք, այլ քեզ՝ յոյժ դրաւեալ են ը֊
սահմանաւ: Ո՛չ են այնքան զօրաւորք առ կենդա֊
նութիւն զէնք մեղանաց պատկառեցելոյս պտղաբե֊
րութեան, որքան յիշատակ մահու կենդանւոյդ՝ ա֊
վանումն կործանողին բանուն: Ո՛ ինչ ազդեսցէ
փոքր խմուր՝ ասուրդ մի. զխմորդ բաւեսցէ դոյզն
ինչ աղջամուղջ մեծիդ ճառագայթից. զխմորդ համ֊
բարձցի կշռեսցի ընդ խաչի քո կրից՝ խակուն հեշ֊
տութեան մարմնոյս տկարութեան: Ո՛ ինչ երևեսցի
յաչս ամենակալիդ քոյ առատութեան կայլք մեղանաց
ամ տիեզերաց. ահա կոշտ մի՛ հողոյ դիւրափխրելի՝
'ի կարծրութեան բախման փանեցեալ, իբր զպղպջակ
անձրևոյ բազմադեղ հոսմամբ քո կամացդ՝ չքացեալ

պայծեալ անդաստին։ Ո՜ ինչ պիտոյ են քում զօրութեանդ ամենաձեռնարդ կարողութեան ժամանակաց տեւելութի՝ առ յանցուածոց ինչ քաւութիւն. ոչ ընթեթել մի ական. ոչ խուն մի տեսութի ածանցական. ոչ սակաւ մի նուազեցուած փայլական. ոչ կիսամասնեայ յամրութի. ոչ փութացելոյ ոտից յեղեղուածս. ոչ յելից բարձրութենէ միոյ կանգնոյ կանթի ակնունելոյ. ոչ գիծ մի չափոյ՝ մատց հեռանելոյ. ոչ նշուղից արագութի. ոչ շնչոյ տուրեւառութի. ոչ ինչ յայսմ յանդգոյ և յանտպաւորական նմանութէ անձև օրինակաց յաւէտ անկայից՝ այնքան առ ժամայնք, կամ հարեւանցինք, որքան եղծմունք, ցընդմունք և հալմունք մեղացս սառնամանեաց պաշհեատի՝ քումդ զօրութեան ա՛ծ ամի որ յո՛ ք՛ որդի անքննին կենդանւոյդ այ։ Որ տաս պարգեւս արեքաղցրութեան՝ չարաց ընդ բարիս. և անձրեւես երկաքանչիւրոցն անաչառապէս։ Աշուես սահմանես խրատմունք՝ և զխտանգս կրիցն հաւասարաբար. որոց մեծ է հանդիսան առ ակնկալու պարգեւին, փոքր խնթանաւ փորձութեան՝ զատակսուի պարտուցն ատէն վճարես. իսկ որ զերկիր ընտրեցին, ներես ողորմութե, տալով և սոցա դարման ընդ նոցա՝ միշտ առքեղ դարձին սպասես։ Նուքեղ փառք ամենազօրիդ՝ առ ամ հրաշագործութի բարեխնամօղ երկոյնմտու, օրհնեալ յաւիտեանս. ամէն։

ԶԱ Երգոյն ջաւելուածն հրչին հեծութե՝ նորին հոգւոյն, ա-
նոյն աղերսի մաղթանաց բանի. 'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ.

## *Բան. ՀԱ.

1 Եւ արդ՝ ընկղմեալ զմոյլն և խսպառ ծած
կեալ 'ի յանձառութէ աւաւելուն՝ բազ
մամանեայ յաձախութեան մեծիդ երախ
տեաց, որ ամենասաստ լռմամբ անհունազելեաւ՝ յաջմէ
և յահեկէ՝ 'ի դիմաց և 'ի թիկանց համբարեալ կան
անքաւութիւնք.

Դարձեալ առ նմին հրչնապատէչ երչրորդութե՝ ածային հո-
գւոյն աղերսեալ, որ ինչ յառաջելոյն ասհմանեցաւ աանդո-
թեան՝ առ ամ լուսաւորութե եկեղեցւոյ դաւանութե՝ մեծա-
պէս ետեալ առանօր. Նա որ առ անշնչականս նեւթեղէն՝
ցուցանէ երանաւոր չերպդրութե անձառելի.

2 Մատուցանեմ ընծայեմ դարձեալ աստանօր
աւանդ գովեստի դաւանման ճշմարտականի.
Զի որ երբեմն հերձուածականին չարափառութե՝
ամենապատիրն խաբէութե՝ նենգողին կարթին
հատուածեալ 'ի բաց հերքեցայ՝ եղեալ 'ի դրախտէն,
արդ միաւորականաւս այսու ուղիղ ամբծութե՝ 'ի
յաւանդ խնկապէս շնորհի անդրէն միւսանգամ
համբարձեալ սովիմբ՝ 'ի թռիչս թեւոց լուսոյ, ահա
յերկինս ժամանեցից հետեւեալ.

3 Եւ քանզի յարգանդէն յորում յղացայ հոգւոր
երկամբք ծնիցեալ, զմեծ և զերջանիկ դշխոյ ա-
նարատ՝ ամենից կուսից խնկուհի՝ զպանծալի մայրն
իմ գովելի՝ պարտ է կանոնաւ սահմանի բանի ար-
ձա

ձանադրել յոյսմ մատենի. զի ծանիցի ցուցցի՝ և
այլոց ևս ապագայից ազգաց պատմեսցի ողբանուն
փառաց խնկելոյն՝ արժանաւորապէս պաշտաման պատ-
ուեալ, երբ մաքուր մարմին՝ ընդ գլխոյ մարդեղու-
թեան բանին այ, 'ի յիշատակ ճուխս հաւատոյ՝ եր-
րորդութեան դաւանութե. Իսկ արդ՝ 'ի յայս օրի-
նակ հոգենկար պատկերի բանի, որ զխորանէս լու-
սոյ յարմարի, ընկա՛լ զիս՝ գթած օրհնեալ, քաւե-
ցեալ և սրբեալ 'ի սմին. Ջա՛ն սովա 'ի հոգւոյս ըղ-
նախատելիս մեղաց. անմեղս և անբիծս ընդ հովա-
նեաւ սուրբն բազմեցո. յաւե՛լ զտկարս 'ի տունն դա-
թի, և անստուեր փոխեալ 'ի տունդ այ, ըստ մարգա-
րէին ձայնի՝ որ 'ի քեզ՝ յմ ակնարկի. Մի՛ սուտ ըղ-
ձալիցն, և մի՛ անօգուտ զելլիցն հետևութի՝ արա-
ցես. մի՛ զհաւատոյս ջերմուն՝ ցուրտ համարեսցես,
և մի՛ զհամբոյր ողջունիս՝ անկարգ ինչ վարկանիցես.
մի՛ զպաշտօնն՝ ապաշնորհ դրեսցես, և մի՛ զերկրպա-
գութիւն՝ անխորհուրդ լիցես. մի՛ անպտուղ լիցի
տեսականութի պատկերին, և մի՛ աննշոյլ՝ կերպարա-
նին սքանչելութի. մի՛ անհուր ողջակիզին սպանդ-
մեռցի, և մի՛ պատարագ ուխտի այս ճաշի՝ արտա-
քոյ ցրեսցի. մի՛ ճաշակդ լուսոյ՝ ինձ մահու լիցի,
և մի՛ բաժակ քո կողիցդ արեան՝ 'ի դատապարտու-
թիւն եղիցի.

4 Աղաչեմ զքեզ՝ տէ՛ր յմ միդ յէութեդ, որով
զդխութի հօր քոյ և հոգւոյդ ոքէ ճաշակեալ
ծանեաք. քանզի 'ի քէն իսկ վարդապետեալ զամե-
նապարգև կարգս եկեղեցւոյ, և 'ի սմին աղօթանը
ուէր լուսաւորան կենաց փրկութե բարեաց, տարածեալ


ըղ

զսիրտս՝ ձեռաց համբարձմամբ՝ զայս կնդրուկ բանի ընտրողիդ 'ի սմա՝ տիրողիդ ընաւից երեքսրբենիդ մատուցեալ, յաւէժ ընծայեցուցանեմք այսու բար բառով բարեշնորհութեան.

Յաղագս 'ի նկիհայն սահմանեցաւ բան, այլ եւս խորհրդածութ ածային աստուածութե.

5 Փառաւորեմք վերամբարձեալ նուագօք օրհնութե երգոց՝ 'ի հաւատ պաշտաման բանի՝ զբարեհրաման պատճառն եղելոց՝ զերրորդութիւն անսկզբեան՝ անհամեմատ բարձրութբ՝ անհասական խորհրդոց եւ անըմբռնելի իմաստից, անզննելի ըզգոյութեց եւ աներեւելի եղելոց. քանակութի վերնականն երկնի, եւ անսահման ներքնոյին խորոց. լըրութիւն սպառմանց, եւ նախադրութի սկզբանց. մի՝ յերից անշփոթ կերպից. եւ երիս՝ միոյ անհատուծելի խնկութեց. 'ի վեր քան զմտաց անարգելութի՝ յարաձգեալ ամ ուրեք բովանդակ։ Անփոփոխ բարի. անսասանելի ուղղութի. անխառն կերպարան սիրոյ. մեծութի անյաղթորդ. բարձրութի անխոնարհելի. անվատնելի տեսականութի. բարերարութի աննուաղելի. կամք կայուն. հրաման կենդանի. ակնարկութի փըրկչական. երանութի ճշմարիտ. ակնկալութի հաւատի. խոստումն անստելի. աւանդ արդասաւոր. ստոյգ աւետիս. վերամբարձութի անձեռնարկելի.

6 Աի հօր՝ միայնոյ որդւոյ՝ միակն հոգւոյն պաշտեալ. ամենահարուստ բարութբ՝ ամենեւին ունայն 'ի չարէ. օրհնաձայն գոհաբանութբ՝ անքննին ներբողիւ գովեալ։



Ան

7 Մ՝ին բարձրեալ աչաւոր անուն՝ համապատիւն
կցորդութեանց, անպատումն ազգականութեց,
եռալուսեանն զուգակցութեց, անյաւերժածն լրա
կանութեց, ինքնիշխան կամաւորութբ պատուաս
րեալ առ հայրն համագունատիպ՝ գործակցութեամբ
հոգւոյն սրբութե՝ խոնարհեալ իջեալ ՚ի յերկնից,
աննուաղ գոլով յընտանի փառացն, հաճեցաւ մնա_
նել յարգանդ մայրենի ածածին կուսին մաքրու_
թեան. յորում աճեցոյց զբոյսն օրհնութե՝ ՚ի լուսա_
սահման անդաստանին անարատութե, ընդ ամենա_
կատարն էութե համասնեալ յանանջրպետ միակա_
նութի՝ թափանցական խառնութբ յածուէն ոգի՝
բաղկացոյց զգոյութի չնչոյս հրաշապէս. Որով ան
ստամբակելի երասանաւ սանձաց կրթութե՝ զստա_
հակութիս իմ հանդարտեցոյց. և կամաւ ընծայեալ
խաչին՝ ամբարձաւ ծաղիկն պտղոյն կենաց՝ ՚ի ծայրս
լրութե անմահականն անկոյ, ՚ի մահ վերաւորեցաւ,
ածութեն անընդմիջելի ՚ի մերասերն մարմնոյ, որով
կենսացոյց զգործին պարտեաց, արարչութեն խա_
կութեան՝ ՚ի նմին յաւէտ անբաժանօրէն ընդ նիւ_
թական մարմնոյն վճռացեալ. Իջեալ ՚ի վայրս խաւա
րոյին դժոխոց, եհան զկապուտն իւրաստեղծ ՚ի կա
պանաց օձատեղին. և իբր ՚ի նիրհմանէ քնոյ զարթու_
ցեալ, յինքն նհանջեալ զդիմեցուածն մահու, կանգնե
ցաւ կենդանացաւ ածապէս՝ ելեալ ՚ի յերկրէ հացն
կենաց և հոյլին հօտից բանաւորականաց. Հաւա_
տարիմ եղև յաշխարհի. և երևեցեալ նոյնութբ՝ ա_
մենևին աննուաղելի, ո՛չ եկն համոյն, և համբար_
ձաւ բովանդակ. բազմեցաւ նստաւ ՚ի գերունակն



դա

դաՀոյ՝ նախնականին պարզութե՛ն՝ արարչական փա-
ռաւորութե՛ն։ Զ որ խոստովանիմք ա՛ծ բարերար և
տ՛ր բոլորից. որ դատի զա՛մ երկիր արդար ընտրութ՛ն
յաւուրն մեծի. որ ինքն է սկիզբն՝ և ինքն կատա-
րած. նոյն առաջին՝ և նոյն առյաւիտենականս բո-
վանդակութ՛ե թագաւորեալ ՚ի լոյս անմատոյց։

8 ՕրՀնաբանեմք ընդ Հօր և որդւոյ՝ և զանբաժա-
նելի բղխումն՝ նոցին փառակից Հոգւոյն սրբու-
թեան։ Որ ստեղծ զբնաւս և կենդանածնէ զամե-
նայն. որ անդստին իսկ ՚ի բնէ Համապարփակ մթու-
թե՛ն աշխարՀականն միգի՝ շրջէր նկարէր և կերպա-
րանէր ամենունակ ջուրցն անբաւութե՛ն երկրատա-
րածն ծովու՝ ՚ի կատարումն արդեան խորՀրդոյս՝ ըղ-
տ՛ը աւազանն լուսոյ։ Նախ արար, և այժմ գործէ.
գոյացոյց, և միշտ կատարէ՝ արուեստս, սքանչելիս.
նախատեսութիւնս սրբանելոց. ազդմունս ա՛ծօրէնս.
զօրութիւնս զարմանաւորս. մարգարէս, առաքեալս,
վարդապետս՝ վարժօղս կրթութեան Հանճարոյ։
Զ սրբարարն մատուցման արեանն ք՛ի յորդորեց.
քաւութիւնս անձանց՝ առողջութիւնս մարմնոց՝ ըստ
նմանութե՛ն ք՛ի ողորմութ՛ե Հրամայեաց. Սկրտեաց
և դեր քան զջուր, ինքեան միայն բաւականութե՛ն
նորոգեաց լուսաւորեաց. Համապատ նովին բարե-
գործութե՛ն զօրանայ։ Սկոյեաց միածնին ա՛ծու-
թե՛ն՝ ՚ի Հոսանսն յորդանանու. օրինակաւ տեառն
անդր՝ ցուցաւ ձայնիւ Հօր ՚ի լերինն թափօրական։
՚Ի նոյն աւուր նմանութեան՝ Հովանի եղև յակոբեան
տոՀմին՝ ՚ի յելսն եգիպտոսի. յաղէգնացութե զօ-
րավարութե՛ն մովսիսի՝ Հողմով սաստկութ՛ե զփարաւոն


ըն

ընկղմեալս։ ՙՔահանայս կատարագործէ. իմաստունս կազմէ. թագաւորս զօրացուցանէ. քաջութիւն ըն_ձեռէ. կեանս շնորհէ մահացելոց՝ 'ի նորոգութիւն յարութեան։ ՙԱյն ինքն է օծումն մարդացելոյն այ. միանջենաւոր հաւասարութբ ընդ հօր երկրպագեալ՝ 'ի պատիւ մեծութե որդւոյ. անսահման փառաւորութբ օրհնեալ յաւիտեանս. ամէն։

ՙՆորին ասացեալ 'ի Խորհուրդ սբյ եկեղեցւոյ. ընդդէմ պիղծ աղանդաւորացն Թոնդրակեցւոց, նոր Մանիքեցւոց։

9 Դաւանեմք 'ի հաւատ ուղիղ և անխոտորնակ ամբծութեան՝ համբուրին շրթանց ողջանեալ, զկառուցեալս խորան յանշնչական արձանաց՝ ածոյին բնակութե եկեղեցւոյս շինուածոյ. Որ գերազանց գոլով և երկնի ամենազարդ բարձրութե. որ 'ի նոյին իսկ յառաջելականայն դասուց հիմնեցաւ, յաշակերտաց վերնոյն խնկեցաւ, 'ի սպասաւորաց բանին պաշտեցաւ։ Սկիզբն առեալ կենացս այս գանձու՝ 'ի վերնայարկն սրահէ, խորհրդակատարն վայրէ, զոր հոգին այ լցոյց, փայլեցուցեալ 'ի նմա զօրութիւն՝ յաւուր մեծի պենտակոստէին. Նախ զատունն բարեաւետին՝ յօրինակ սրբութե կատարման շնորհի այսր եկեղեցւոյ կանխամեծար առաւելութե, յորում ապա և 'ի նմին բնակչացն՝ արժան լուսանորոգ բարեփառութի։ Աստի արիւն հզօրին այ բաշխեալ մատուցանի՝ յաւէտ քան զհաբելին մհու՝ գուժարկու, մեծաւ բարբառով ձայնի բերկրութե՝ կենդանութի անմահութեան 'ի սմա ապրելով. ՙՔանզի ոչ է կար զօրութե ուրուք ընդ_

երկնաւ յանդիման արեգական՝ ՚ի սպասաւորութի՟
խորհրդոյ որոյ ահաւորութե՟ ձեռնարկել, եթէ ոչ
ընդ թեւօք սորին պահեսցի. Նա զի ոչ երկնիւք բա՟
ւականայ այս նուէր ո՟րունի մարմնոյ, եթէ ոչ
զայս ձեղուն օրհնութե՟ ծածկոյթ ունիցի. Վասն զի
մահու անիծիւք հեղքի այր ըստ օրինին, որ արտա
քոյ խորանի այս վկայութե՟ զա՟ծոյին պատարագն
մատուցանէ. մանաւանդ զի պարտաւոր արեան կը՟
չեսցի, որ ոչ զանձինն օրինակ արեան՝ յոյս նուէ՟
րան ընծայեցուսցէ։ Ս՚ի ՚ի սմա լուացումն ՚ի մահն
քի, զի մի՛ յանդէտս անարդեալ՝ ա՟ծութին, ՚ի ծա՟
նուցելումն զնախնին կրեսցէ։ Ս՚ի ձեռնադրութի
՚ի պատիւ՟ օծութե՟ լուսոյն, զի մի՛ յանբծութիւնն՝
խաբէութի խառնեսցի։ Ս՚ի և շնորհօք, քան թէ
ապաշխարութեամբ՝ քաւու՟ի, զի մի՛ ճշմարտութին
կերպարանօք խորամանկեսցի։ Ս՚ի յընտրութին՝ ա՟
պանի հաւատ, զի մի՛ սպառնալեօք հաստացմանն՝ զը
րոյց ինչ օտար համբաւոյ դրեսցի։ Ս՚ի երկաքան՟
չիւրոց դոյու՟եց մերոց իրաւամբ կշտամբու՟ի, զի մի՛
կխտամանեայ առ մարդն ներքին և առ արտաքին՝ չա
րի և կամ բարւոյ փոխատրութին՝ կարծիցի յանմահ
զօրութի արքայական որդեգրութեն, զի ընդելու՟
երկրոյնովս՝ առաւելութի վերնումն թագաւորու
թեան՝ յայտնապէս ճշմարտեսցի։ Ս՚ի յայս կենդա
նութե առ անեղծութին ո՟եց, զի աներկեւանութի
խոստացելոցն՝ ՚ի մուտ ունկնդրացն ծանուցեալ
հաւատասցի։

10 Յայս դշխոյ պաշտելի՝ անշնչական եկեղեցի՝ տայ
կեանս, և մահու խլէ. ը՟ օրինակի ադամեան



պտղ

պտղոյն յարմարապէս ճաշակելի. գերազանց քան ըզ
բանականս՝ յանշնչութեանն հրաշագործէ. մինչ զի
կատարումն ընձեռէ և նորոգ հաստատէ, վերստին
նկարել 'ի մեզ զվերպարանն փառաց լուսոյ. Պարեալ
ևս է տեսակ մեծութե վերնումն կամարին՝ սկըզբ
նաւոր յառաջակառոյց քան զընակիչս հողեղինացն
'ի նմա գործութենց. Նոր իմն ընծայէ թուիչս մարմ
նոց՝ ընդ թեթևութիս հոգւոց, պատուականին հա
րըստութե՝ զանարգն յարգաւորեալ. Ո՛չ ինքնակեր
մեղօք զաղրանոյ, եթէ ո՛չ 'ի մարդոց չարաց, և կամ
անհաւատից կոխիցի. Տիպ իմն է զարմանաւոր՝ յաղ
թօղ խմատից մերս տեսութենց. անբանն 'ի բանա
ւորէն կառուցեալ, նմին օժանդակեալ՝ իբր վեհա
գոյնն յաւէտ նուաստի. Մեծ է քան զմարդ, որքան
ընտրեցելոյն մխլխին՝ ցուպն յաղթողական. առաւել
քան զբանաւոր, որքան զահարոնին՝ գաւազանն խոր
հրդական ծաղկեցեալ. գերազանց քան զմտաւոր,
որչափ քան զեղիա և զեղիսէոս՝ գետահերձ մաշ
կեակն սքանչելահրաշ՝ փոյլեալ արուեստի. Օգ
նութի պարգևէ կրկին ամենակատար սրբասնեալ
ձեռաց՝ մաքրաբար, քան թէ զինապէս, մարմին նի
թական՝ քարի և հողոյ գոյակից, հարազատ զգոյա
կանաց և սրբոց. Իբր զվէմն անմահ կենդանի՝ 'ի
կործանումն է և 'ի կանգնումն. ոմ զգաստաւորն ա
մենից հոգւոց՝ հանդիսանոյ հրաշապէս ազդմամբ՝
յանէծս և յօրհնութիս. իբրև տեսօղ աներևութից՝
զոմն հրապարակէ, և զոմն տածէ. առ ինքն կոչէ դը
րեալ յանուանէ՝ իբր զոխրօղ հրամանատար էից.
Իբր զեառն յաւիտենական՝ անհարուածելի է 'ի


դի

դիմամարտից. ըմբռնէ զհոգևորս՝ իբր զնաւավա
րութեան մեծին արուեստի. անմեղս և անվրիպութիւնս՝
ըստ քի հետոցն ընթանայ. բարձր ձողուն անպատ
կառաբար համարձակապէս՝ զօրէն գոռելոյ գլուխ
ամբառնայ.

11 Ո՛րքան մեծ ունի սրբութի, մինչ զի զօրս ըստ
պատկերի այ եղեն, կանոնաւ խորհէ. Յետոյ
դունց ընտրութեց փորձից՝ թե համարձակեսցի մարդ
դք սխալեալ՝ ՚ի գաւիթս նորին մտանել՝ ոչ պղծի,
այլ ընդ անպատրաստից թերութեանց դժուարի.
ոչ նզովի, այլ տեղի տայ ոչ գիտողացն զշնորհին ըղ
ձալի. ոչ լքանի ինքեամբ՝ պարտաւոր իւրոյն գը
տեալ, այլ ՚ի մերոց գործոց խրթնանայ. ոչ թողացու
ցանէ երկիւղս մտանել յըմբռնումն ոտիցն կենդա
նատուացն, ըստ տիրական անձառ խորհրդոյն, ոչ կըր
կին յաւուր՝ զնոյն ցուցանէ, զի մի՛ անընտրաբար՝ նը
ւիրանին խայտառակեսցի. Աշտակցէ կարեաց զօ
րապէս՝ իբր անախտակիր ապականութեց՝ որ ՚ի մեղ
շարժմանց. առանց բարբառոյ տիրապէս հրամա
նաւ դատի.

12 Նաւի և տապան իմն է մաքրական, կրկին երջան
կական, ՚ի հեղձմանէ կենցաղոյս ալեաց պահա
պան. Ոչ բազմօք անբանիւք գազանաց դասուք՝
և սակաւ մարդկամբ, այլ ընդ երկրայնոցս և զվե
րինսն յինքն հաւաքէ. ոչ յալիս խռովութե բերի,
այլ ՚ի բարձրութին երկնի համբառնայ. Իբր զա
շակերտ հրահանգեալ հոգւոյն այ՝ փախչի ՚ի նեն
գութե. ոչ ՚ի բորբոք մահու՝ մարմնոյ հարուածոց,
այլ ՚ի կենացն աւետիս՝ ըմբռնեալ ածէ. ոչ նոյն

ձեռնարկել գործի, այլ հաստատելն հրամանաւ չինի· ոչ մովսէս ընդ բեսելիէլ, այլ միածինն ա̅յ՝ հոգւովն սրբով զատ հանդերձէ · ոչ յարաշարժ հանապազա_ փոխ, այլ մշտակայուց հիմամբ անսասանելեաւ զատ հաստատէ · Պարծել իբր զտապանակն անխօս փայ_ տեղէն մածեալ տախտակօք առանց զգայութե՛ անէ_ սողականաց մեզ առաջնորդէ · ոչ կերպարան անքա նակ էին յառաջ հեռեալ՝ 'ի հանդերձանս լուսոյն կենաց՝ տեղի պատրաստէ · Ընդ ողիելի անտառ սատակէ, եթէ ոչ խաչաղէս յոդի բերիցի · սպանա նէ վառնեալ փողփողակի առժամայն, եթէ անաս_ նոյինն լծակցու՛ք երկրասիրաբար գետնակոխ սոյ_ լիւք՝ իբր զանօթ ինչ ձեռնազինին բարձեալ տա_ նիցի · Ոչ լեղոճաւ մարդոյ, այլ բանիւ հրեշտա կաց խօսի · ոչ ունկան դոյականութի, և արագապէս մտաւեալ լսէ · ոչ ձայն կերպաւորական բարբառոյ, և զպատգամս գործոցն յի՛ համօրէն ազանց պատ մեալ հաչակէ · ոչ խաղալեաց շարժականութի, և ա̅ծ-այնով իմն կենդանութեան հադագաւ ազդէ · Ոչ ոսկերաց և ջլաց յօդուած, և երկուք հազարօք կանդնօք լայնու՛ք իբր զդունդն անհամար՝ բարձ րեալն ա̅յ, զկենդանական զօրուն գումարտակ՝ հեբ րայական վառեալ ամբոխին, և այժմ ընդ նոսին՝ իբր զանմաքուրս 'ի սրբութե զոմանս ախտիւ մեղանաց ջեռեալս՝ հատուածեալ յինքեանէ հեռի ուղեկցէ, ապրեցելոցն 'ի տաժանաւոր աղիւսարկութեանցն · Նոյն իսկ էութին ա̅յ մարմին եղելոյ՝ անուամբ այս վիմի նշանակեցաւ · պատուամամբ կողին զընտւս ար բուցեալ · Ոչ արեան երակաց ընթացք, այլ լուսոյ

վերնոյն շառաւիղք, թափանցանց մթութ զոյն կեն-
դանացուցեալ նորոգ պաշտպանէ. ոչ սողոմօն կամ
զօրաբաբէլ մահկանացուաց ոստիկանութի, այլ ամե-
նից ունողին իմաստ զսա գծագրէ. ոչ աննուիրա-
կան հասարակաճաշակ իւղով առ՚ի յակոբայ պարարի,
այլ ահաւորին արեամբ՝ և փառօք մեծին օծանի։
Աշտուն երկրային նիւթոյ՝ քան թէ մարմին երկ-
նային լուսոյ այ՝ զորդին որդւս կնքեալ ձեռնադրէ.
ոչ կենցաղոյս յերկրէ յղացմունս, այլ արքայութեն
երկնից ժառանգս կրթէ. զ՚ի ծոց իւր գրգեալսն՝
գոգոյն աբրահամու ընծայեցուցանէ։ Փեսայ հարս-
նութե սորա՝ որդին այ կենդանւոյ. օրիորդք իւրն
ձայից սորին՝ հայրապետացն գումարք։ Այն ինքն
մոռացումն առնէ այսակիր բարձանցն կռամոլութե,
զի զերկնոյնոյն այ ունի զծանօթութի. օտարու-
թիւն է ամի դիցն դրօշելոց, զի ՚ի համօրէն քա-
րինս սորա՝ քս երկրպագի. քակտումն է յայտնապէս
ուրուական ըղձիցն անտառաց, զի ՚ի բնաւից մայրից
աշխարհի՝ նմանութե կենացն փայտի՝ ՚ի սմա տէրն
նուիրի. խորտակումն է համայն դիւապատիր յու-
թիցն արձանաց, զի քարն գովեալ կարկեհան ակամբք
և վիմօք կենդանեօք՝ այսրէն հաստատի։

:3 Ո՛յս յարկ չքնաղ և ածընկալ՝ ազատ է միանգա-
մայն ՚ի յամենայն ծառայութէ. ոչ օրինակ
վերնոյն սիօնի, քան թէ ճշմարտութի նմին ճանաչի.
ոչ կռապաշտութեն կապաւ՝ բազին, և կամ լծով
օրինին՝ տեղի պարտաւորութե, այլ տրուանի բարե-
րարութեն պարգեւարան ՚ի մէնջ համբուրի։ Աշ սկսա-
նի երբէք՝ յայլ իմն կերպարան ձեւոյ փոխարկեալ,

այլ 'ի ձայն շունչ փառաց մեծապէս ընդարձակի • այն
ինքն և երկին երկնի՝ յերկրի լուսապայծառ կեր_
պիւ հաշակի։ Որպէս չէ առանց հօրն քո, և ոչ ա_
ռանց այսր մօր արդանդի՝ յոդի կատարիլ։ Նոյն
շրջի անբովանդակելին, եթէ ոչ 'ի սմին տան տապա_
ւարեսցի • ոչ ունի տեղի գլխոյն հանգստեան՝ որն
բոլորից, եթէ ոչ 'ի յոյս կոյսական կենաց մնալ ա_
գանեցի։ Քան 'ի կամար վերնայինն երկնի՝ 'ի յոյս
հիւթաւոր բնակութի առաւել պարծի • անբաւութի
ծեան լուսոյն, որոց զդէմս մարգարէին՝ և զօրի
նակս սորին ծածկեցին, ո̄ց փախեան 'ի փառաց է_
րեսաց նորին, և նմանութեան սորուն՝ որ 'ի տաճա_
րին՝ ոչ հանդարտեցին, 'ի տօն հանդիսի մեծի գո_
վեստի, և 'ի բանականացս դասուց խմբեալ նուագի։

Ըստ օրինի կրկին բաղձանօք, քան 'ի դրախտն
վայելչական։

14 Այս մայր հօդւոր՝ երկնաւոր՝ լուսաւոր, քան_
թէ երկրաւոր՝ շնչաւոր՝ մարմնաւոր, զիս գրգ_
ռեաց որդի • կաթն սնեանց սորա՝ արիւնն քո։
Եթէ ծածանեին խոկ պատկեր զայն ոք գրեսցէ,
ոչ անօրինի։ Իբր զնշան խաչին փրկութե՝ զօրու_
թիս զարմանազանս՝ և արուեստս բազմօրինակս կա_
տարեալ հրաշագործէ • բեմ ահաւորին տեառն՝ 'ի
սմա հաստատեալ տեսանի • սովաւ խորհրդաբարոյից
հերձուածողաց՝ մոլեգնաճառ բերանք կարկին։
Ունի և քարինս իմն իմանալիս և բանաւորականս,
որով զգազանամիտս անմաքուրս՝ բացուստ 'ի բաց որ_
րոհեալ տարագրէ։ Նշանի և ծծս ոմանս եղակինս՝
պատկերս մաքուրս՝ միայն այ քո։ Ունի և զդէրն իւր



ընդ-

ընդ արևելս՝ 'ի տեղի խոստման բնակութեան մերոյ
առաջնոյ. ձեռամբ իմն ցուցանէ յայտնապէս՝ զդա
լուսեանն ոչ շաւիղ. զխորհրդականն առակ տիրականն՝
'ի դէմս բերելով մեզ վարդապետէ. զփրկութիւնն
'ի յելից անուն ծագման արուսեկին՝ քննեան երե-
մանն 'ի վերջնում աւուրն, արարածոց երկրի Թարգ-
մանէ. Ցաւս հալածէ. ախտաժէտս բժշկէ. դի-
ւաց բռնութեանց զօրէ. Արգանդ որովայնի սորին՝
աւազանն կենդանարար. 'ի պար հարսանեաց սորա՝
դասք առաքելոցն. Այնքան ճոխացաւ բարգաւա-
ճեալ երանութեամբ, մինչ զի նոյն ինքն փրկչին ան-
ուամբ՝ վայելչապէս յորջորջեցաւ. տիրամօրն լուսոյ
կոչմամբ՝ 'ի մերձաւորաց միածնին ձայնեալ կնքե-
ցաւ. Ծփելոց մեղաւորաց՝ նաւահանգիստ հան-
գստութեան. խորախճանարան՝ վերնոցն դասուց.
բժշկարան անախտաբերելի՝ տարակուսեալ պարտաւորաց.
Երրորդութիւնն անպատում՝ 'ի սմա փառաւորի՝
օրհնեալ յաւէ.

15 Իսկ եթէ ոք ձեռն չարութեան՝ 'ի վերինն ար-
քայութի̃ յանդգնաբար համբառնայցէ, և գիւտ
ինչ մարմնաւոր, և կամ հնարք մարդկային, և կամ
արուեստ երկրակենցաղ՝ զահմանեալ աւանդութիս
առ ձեռակերտս եկեղեցի վարկանիցի, և ոչ պարգև
առաւել կենաց, և ակնկալութիւն ա̃ծային, և հո-
գւոյն ս̃բյ յայտնեալ՝ լուսաւորող նախագրութի̃,
և երախտեաց բարձրելոյն՝ ամենատուր լիականու-
թի̃, և կամաց արարողին՝ խնկաւորեալ խորհրդարան,
և առաքելոց ձեռինն աջոյ՝ բարեհանճար հիմնար-
կութիւն, և միանգամայն ասել՝ դուռն երկնից, և

 քա

քաղաք այ կենդանւոյ, և մայր կենդանեաց՝ ազատ
'ի պարտեաց, և ճշգրիտ տեսակ կերպի երևակիս բա
նականի, իմանալին՝ խորհրդոյ հոգւոյս, և շօշափե
լին՝ պատկեր մարմնոյս, և սրբութեցն անդանձառելից՝
գերազանցեալ նոր սրբութիւն, և քննեալն նշանաւ՝
պայծառապարծ պսակեցեալ, զայնպիսի ոչ խոստո
վանօղսն՝ մերժէ յերեսաց իւրոց հայրն ամենակալ՝
'ի ձեռն բանին իւրոյ էակցի, բարձեալ 'ի նմանէ և
զաւանդ շնորհի հոգւոյն փառակցի. փակեսցէ ըղ
դուռն կենացս այս առագաստի յանդիման նորին.
Իսկ մեք զորս գրեցաք՝ ամէն և վկայեմք, հաւաստա
ցեալ որում կարդեցաքս. յանուն և 'ի փառս ամե
նակալ երրորդութեան և միում աստուածութեան, յաւիտեանս
յաւիտենից. ամէն.

Ըստ իմ համառօտ ջերմեռանդութեանն. և այս 'ի հայրն իմ լուսա_
ւորն՝ խոստովանեալ դաւանութեան։

---

† Մատենին յաւելուած կցկին հեծութեան՝ նորին հանգոյն, առ_
նոյն ողբերգու մաղթանաց բանի. 'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ։

## *Բան. ՂԲ.

1 Ողորմած, բազմագութ, հզօր, ահաւոր,
մարդասէր, օրհնեալ, կենդանի, անձառ.
որ ոչ ելանէ երբէք ըստ բանից իւր ան
ձեռնարկելի, որ և մնացէ անհնարաւոր. Քո՛ է
հատուցանել պտուղ քաղցրութեան՝ ընդ փշոց խստու
թեան, սկզբնահայրդ այսմ նորոգ և զարմանաւոր
կանոնաց կենաց. քանզի բարի առնել ատելւոյն, և



ա_

աղօթս 'ի վր̅ հալածչին, և փրկութի̅ հայցել խոցո_
ղին, և սպանողին ներումն խնդրել՝ 'ի քէն ընծայե_
ցաւ պտուղս այս հրաշից. որպ(է)ս քաղցրութիւն անճառ է
քան զօրինակ, և բարեբանեալ կամաց քոց ախորժե_
լիք, և գովեալ շրթանց քոց ճաշակելիք. հոգի ե_
րեսաց՝ և զօրութի դեղոյ մերոյ՝ տէր քս̅ օրհնեալ
'ի բարձունս: Ա՛յլ մարդք երկրածինք և ամենավը_
րէպք, և բարեմասնոյց ձեռաց՝ չարիս դարձուցին.
իսկ դու լոյս և տուիչ լուսոյ՝ ոչ լսես անէծս. ոչ
ախորժես չար. ոչ կամիս կորուստ. ոչ ըղձանաս մահ.
ոչ յուզիս 'ի խռովութենէ. ոչ տխրիս 'ի ցասմանէ.
ոչ հարկիս 'ի բարկութէ. ոչ մթանաս 'ի սիրոյ. ոչ
այլայլիս 'ի գթութենէ. ոչ փոփոխիս 'ի բարութէ.
ոչ թիկանց շրջումն, և ոչ երեսաց անդրադարձու_
թիւն, այլ ամենևին լուսաւորութի՝ և նկատումն
փրկութեան:

2 Եթէ քաւեսցես, կարօղ ես. եթէ բժշկես, զօ_
րաւոր ես. եթէ կենդանացուցանես, բաւական
ես. եթէ շնորհես, առատ ես. եթէ ողջացուցանես,
հնարաւոր ես. եթէ պարգևես, ամենալի ես. եթէ
արդարացուցանես, ամենարուեստ ես. եթէ մխիթա_
րես, ամենիշխան ես. եթէ նորոգես, ամենակալ ես.
եթէ հրաշագործեսցես, ամենաթագաւոր ես. եթէ
վերստին հաստատես, արարիչ ես. եթէ կրկին գոյա_
ցուցանես, ա̅ծ ես. եթէ հոգաս ընդ մեր, ամենա_
տէր ես. եթէ կորզես 'ի մեղաց, այցելու ես. եթէ
չարժանեացս ընձեռես, օրհնեալ ես. եթէ յորսողէն
զերծուսցես, փրկիչ ես. եթէ զեղցես 'ի քոյոց 'ի
մեզ, հարուստ ես. եթէ նախքան 'ի մէնջ խնդրելն՝

դու կարկառեսցես, անկարօտ ես. եթէ լուծանես նե-ղութս, անդորրիչ ես. եթէ զվերջացեալս կոչես, խը-նամակալ ես. եթէ զսասանեալս հաստատես, վէմ ես. Թէ պապակելոյս արբուցանիցես, աղբիւր ես. թէ զծածկեալսն երեւեցուցանես, լոյս ես. թէ զօգտա-կարսն խմծանուցանես, բարի ես. թէ զըղծանս ան-տես առնիցես, երկայնամիտ ես. թէ ընդ փոքու 'ի դատ ոչ մտանիցես, բարձրեալ ես. թէ ծոյլս ձեռն մատուսցես, ստացօղ ես. թէ աշխարհ քո պաշտպա-նեսցես, յանձանձիչ ես. թէ վհատեալս դարման մա-տուսցես, կերակրիչ ես. թէ զանդէտս պարապես-ցես, վարդապետ ես. թէ զդիմեալս առ քեզ ըն-կալցիս, ապաւէն ես.

3 Եւ արդ՝ քո են այսոքիկ՝ տէր ողորմութեան. ոչ միայն գրեալ, այլ կատարեալ և գլխաւորեալ նախնւոյ նահապետիդ համբերութեան վկայից. որ վասն իմոյ փրկութեան հանդիսացար զօրապէս յասպարիսի ճակատուն, զի կակղեսցես զկարծր բնութի մարմ-նոյս գոռոզութեան՝ վարժմամբ կրթութեան չարչարա-նացն վտանգի. և յանպարտակիրդ մարմին՝ չափեալ զընութիւնս մերում զաժանականն տագնապ տուժի, զի զգթութիւնդ որ առ մեզ՝ արդեամբք ցուցցես 'ի քեզ օրինակեալ. օրհնեալ յաւիտեանս.

ամէն.

+ Ա Երրորդն յաւելուած հրեղէն հեծութեան նորին հոգւոյ, առ-
նոյն աղերս մաղթանաց բանի. 'Ի խորոց սրտից խօսք ընդ Ած.

# *Բան. ՀԲ.

1 Եւ քանզի օր է օրհնաբանեալ և լուսանո-
րոգ՝ կշռութեան երկուց ընտրութեանց արա-
րածոցս տասանութեանց՝ յեղանակելոյ յոյժ իմն
էութեան երկնակենցաղ անփոխադրելի, ամբարձելոցն
խոնարհութեան, և կործանելոցս վերբերութեան, տարա-
փելի ուրբաթու մեծի պասեքիս, յորում եկն ե-
հաս ժամ բարեպատեհ դրել ինձ զայս նուագ ձայնի
հեծութեան՝ զուարճախառն երկիւղին, ահա ըղձալի
համարիմ ասել սաղմոս 'ի քոյոց այսմ՝ զոր ընդ իմ
կրեցեր՝ Ա՛ծ բոլորից.

2 Կոչեցեր յատենի քում ստեղծուածոյն իմոյս կեր-
պին. ոչ խօսեցար՝ տուժիչ բանի. ոչ բարբա-
ռեցար՝ հատիչ լեզուի. ոչ ձայն արձակեցեր՝ սա-
սանիչ երկրի. ոչ մնչեցեր՝ ամենազդեցիկ փողդ
մեծութեան. ոչ երախտեօքն քո յանդիմանեցեր, և
ոչ չարեօք նոցին ըմբերանեցեր. ոչ մատնեցեր ամօ-
թոյ՝ զմատնիչսն զքեզ տանջանաց մահու. ոչ 'ի կա-
պելն զքեզ դիմադարձեցեր, և ոչ յապտակելն դըժ-
ուարեցար. ոչ 'ի թքնելն թշնամանեցեր, և ոչ ընդ
կռփելն երբէք խռովեցար. ոչ ընդ կատակելն սըրտ-
մտեցար, և ոչ ընդ խաղ արկանելն երեսս փոխե-
ցեր. Մերկացուցին զզգեստ պատմուճանին իբրև
'ի տկարէ, և դարձեալ ագուցին իբր անփրկանաւոր
ըմբռնեցելոյ. Եթէ ոչ էր արբեալ կրկնակի քա-
ցախ զանդեալ ընդ լեղւոյ, ոչ էր հեղեալ մաղձն իմ
մը

մխթերեալ նախնի դառնութեն . Ճաշակեաց զհատու-
թեամբ, և արգել անդէն տարակուսանօք . առին մի-
լեղնաքար, և դարձեալ մատուցին անպատկառաղէս:
Գանիբն հարուածոց յետին անարգութեան 'ի մէջ
խառնիճաղանջն ամբոխի դատապարտեցին . ծունր
կրկնեցին նախատանաց , և պսակ եդին արհամար-
հութեան ։

3 Ո՛չ եառուն հանդիստ կենդանարարին , եթէ ո՛չ
զգործի մահուն կրել .քեղ պատրաստեցին . ըն-
կալար իբր երկրյնամիտ . առեր իբրև զհեղ . բար-
ձեր ո՛չ համբերող , ըստանձնեալ իբր զպարտական՝
զփոյթն մխաց . Որո՜ց զծաղիկ շուշանաց հովտաց՝
ուսով բերեալ զղէնն կենաց , զի յարհաւրաց դիւե-
րոյնոց՝ զնուրակերտս գահաւորակս մարմնեղէն գոյու-
թեանս՝ պահպանեսցէ 'ի դատապարտութեն վայրի՝
իբր 'ի խրախճան խնճոյից . Հանէին արտաքս իբր զող
ջահէզ . կախեցին իբր զխոյն սաբեկայ՝ ձգեալ զեղ-
ջերացն . տարածեցին 'ի սեղան խաչին իբր զպատա-
րագ . բևեռեցին ո՛չ չարագործ . պնդեցին իբր զա-
պըստամբ . զխաղաղութիդ երկնաւոր՝ իբր զաւազակ .
զանկապուտ մեծութիդ՝ իբրև զտառապեալ . զառ 'ի
քրովբէից պաշտեցելդ՝ իբր զքամահեալ . զահա-
մանդ կենաց՝ իբր զարժանաւոր սատակման մահու .
զաւետարանիս նկարիչ՝ իբր զհայհոյիչ օրինին . զմեր
և զկատարումն մարգարէից՝ իբր զհամառօտիչ գրե-
ցելոցն . զճառագայթդ փառաց՝ և զնկիք անքննին
խորհրդոցդ հօր՝ իբր զներհակ ծնողին կամաց . զօրհ-
նեալդ խնկաղէս՝ իբր զտարադրեալ . զկատդ օրինին
լուծիչդ՝ իբր զայր 'ի նզովս դրեալ . զհարդ ծախիչ՝



իբր

իբր զհեղձեալ իմն կալանաւոր · զահաւորդ երկնի և
երկրի՝ իբր զհաւատոյ պատժաւոր · զ՚ի լոյս անմա
տոյց ծածկեալդ՝ իբր զհողածին ըմբռնեալ ։
4 Ո՛վ քաղցրութեդ և երկայնամիտ բարերարութեդ
ողորմածիդ գթութե, որ վն ապախտաւոր և
անօրինեալ ծառայիս, որդ բոլորից՝ զայս ամ կամա
ւորապէս և հաւանողական հաճութեամբ տարեալ՝
մարմնոյդ միութե ՚ի քեզ ընկալար · և մինչև ՚ի քնա
րան չերմին տապանի՝ անպակաս ՚ի լրութե ամբողջ
նոյնութեան ամ անքննին՝ զնոյն կրեալ նախատինս
անճառ համբերութե, յարեար կենդանի ինքնիշխան
բարձրութե լուսոյ՝ աննուաղ մարմնով, և անեղերի
ամութե · Օրհնեալ փառօք, գովեալ գթութե,
բարեբանեալ միշտ ողորմութե, յաւիտեանս յաւի
տենից · ամէն ·

---

† Սէրափին յաւելուած կրկին հեծութե՝ նորին հոգւոյն, տա-
նոյն աղերս մաղթանաց բանի ։ ՚Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ ։

## ※ Բան · ՀԲ ·

1 Տէր՝ անկեալ յերեսս հողանիւթ կեր
պիւս, ՚ի վայր խոնարհեալ ծնրադրական
երկրպագութե՝ զբարեգործիդ ողորմա
ծութե՝ զկենդանարար ոտս համբուրեմ, զայս օրի
նակ մաղթանաց մեծիդ ընծայեցուցեալ ։
2 Աղաչեմ զքեզ միայն խնամակալ, մարդասէր, գը
թած, կեցուցիչ, հզօր, ամենակալ, պաշտպան, մի՛
ունայնացի վաստակն աշխատութե փրկականդ կրից
մարդացելոյդ վն իմ՝ այ · մի՛ սոսկ եղիցի քրտանցն
կաթ

կաթուած խառնեցեալ արեամբ՝ 'ի մանկութենն ա-
ւուր գիշերին. մի՛ լիցի սառնեցուցեալ լուսոյդ է-
րախոսիս, զոր ձրի և առանց փրկանաց թշուառացե-
լումս ինձ պարգևեցեր. մի՛ ջնջեսցին շնորհացդ ա-
ւետիս, զոր կողից քոց կայլակք նորոգեցին. մի՛ ան-
շահ եղիցին կրիցդ պտուղք, զոր կարօտութեանս
խմբում մատուցեր։ Մի՛ պարծեսցի բանսարկուն վա-
նեալ՝ զքո ստացեալս իւրացուցանել. ահա յաղթեսցես
կամօք քո՝ ըղձից չարին. վերստին աղչեսցի՛ միան-
գամ զարհուրեալն. կրկին պարտեսցի՛ խայտառ դա-
տեցեալն։ Մի՛ անխայեր զազատարարդ քո բան, որ
զստեղծեալս քո քեզ ընծայեալ՝ վերստին առ քեզ
դարձուցանէ. զանճառն արարեր բարերարութիւն՝
յանակնկալ ժամուն յուսահատութեան. յորժամ բ-
նաւ իսկ կորեալ և օտարացեալ էր կենդանութենն
շարժողութի, մեռեալ անմահդ՝ և զմահացեալս նո-
րոգեցեր. եթէ զկանոն համաձայնութեան օրինին փո-
խեցեր, արդ զդիւրինն և զհեշտականն և զես հը-
նարաւորն մի՛ արգելցես՝ ըսկզբնաձիր ողորմածութե
բարեգութ օրհնեալ և երկայնամիտ Թագաւոր։
Ազդեա՛ բանիւդ ամենազօրաւ՝ որ զգոյութի լու-
սոյն ստեղծեր 'ի նախնումն աւուր, և վաղվաղակի
փոփոխեալ գտոյց 'ի լաւ անդր. և փոխանակ զի ես
ոչ խնդրեցի հետևել լուսոյդ, դու եկեսցես ինձ յոյց՝
Ճառագայթ ծագման հայրենի կերպիդ, և կոչեցոյց
առաջի քոյ ծառայս վեհապարտ՝ ողորմեալ շնորհել
առ'ի քէն. ոչ է ժամանակ յերկարաձգութեան առ'ի
զպարտսն հատուցանել, ահա շնորհեա՛ ինձ տառապե-
լոյս զերես քո՝ լոյսդ 'ի խաւարի սրտից վհատելոց։



Ար

Արդէ՛լ և կնքեա՛ զընթացմունս ելիցն, որ միշտ զեղուն բարիքն հոսեալ 'ի յուշոյս իմ տեսութէ. պահեա՛ ինձ զշնորհ ամենապայծառ գանձուցդ մնացականացդ, որով պատուական գտեալ՝ քո անուանեցայց, պաշտպանեալ 'ի քէն՝ անսահմանն բարի։

3 Ահա՛ ողորմեա՛ ինձ՝ գթած, աղաչեմ զքեզ ողորմեա՛ ինձ հզօր, կրկին ողորմեա՛։ Մի՛ փոխարկեր երկունս ցաւոց՝ ընդ չարեաց իմոց բարիդ ամենեքին. մի՛ բառնար 'ի վտանգելոյս՝ զառ 'ի քէն պարգևեալդ շնորհ. մի՛ կապտեր զփշուռն ամէնօրհնեալդ հոգւոյ. մի՛ լուծաներ զխնկեալ զկնիք արքունական պատկերիդ։ Մի՛ յօյանեսցին փուշք մեղանացս՝ 'ի սրբութիս մտացս. մի՛ խզեր զկապ միութեան՝ զընդ քեզ սիրոյն պնդութե. մի՛ մերժեսցես զարուեստ զօրութե՛ լեզուոյս յարմարութե. մի՛ պակասեցուցաներ զաջողուած աջոյս՝ առ 'ի զլուսոյդ մասունս բաշխել։ Մի՛ գրեր 'ի դպրութեան կենաց մատենիդ՝ զմահուն պարտիս. մի՛ պահեր. մի՛ ինձ համարիր. մի՛ յիշեցուցաներ. մի՛ ամաչեցուցաներ. մի՛ նախատեր. մի՛ ուռն հարկաներ. մի՛ արձանացուցաներ զմեղկութեցն. մի՛ ամբարեր զկորստեանցն. մի՛ իբր ստգտեալ իմն ամբաստաներ։ Մի՛ յարուսցես ընդ իս զծառն անիծից. մի՛ արձակեր 'ի յիս զսաղարթ վնասուցն. մի՛ ընծիւղեր զծաղիկ մեղացս. մի՛ բերցես ընդ առաջ զնամակ պարտուցս. մի՛ արտաբերեր զէութի պտղոյն։ Մի՛ թուեսցես 'ի ձիւղս երկրաստեղծ մատանցդ՝ զդիւաս գործոցս. մի՛ մատուցես բան ընդդէմ ահեղ՝ զանօրէնութիս իմ յիշատակել. մի՛ մատնեսցես իմոցս կամաց զաւանդս հոգւոյս՝



վա

վարել 'ի գերութեան. մի՛ ատէն զիս փառաւորել՝
զի անտանոր դատապարտեսցես. մի՛ նուաղութե այսր
անցաւորի՝ զյաւիտենական բարիսն տուժեր. մի՛ 'ի
սակաւուոմ այսմ ժամանակի՝ զանվախճանելի զփառսն
չափեր. մի՛ ընդ հոլովս վշտաց հեծութե՝ զանախ-
տական զկեանսդ գրաւեր. մի՛ ընդ ստուերի այսր
մթութե՝ զանձառելիդ լոյս փոխանակեր. մի՛ զերաստ-
նակ մտացս լքցես՝ ըստ արտաքի հետս հետևել. մի՛
զկամուրջ կենցաղոյս դրեսցես՝ ինձ հանգստեան բա-
ւականութիւն. մի՛ զհովիւ հանձարոյս ստուերական
պահեր՝ 'ի հանդերձեալսն ինձ հրապարակել. Եթէ
ամբարես զաւանց համարոյ գործոյս իմ չարիս, մե-
ռայց կենդանւոյն. եթէ շտեմարանես 'ի սրտի, առ-
տըստին կիզեալ անբոց այրեցայց. եթէ քննեսցես
զանօրէնութիւնս, առանց յանդիման քեզ լինելոյ
խապառ հալեցայց. եթէ անկալից ինձ թողցես ըղ-
մեղսն, 'ի նոյն վատնեալ մաշեցայց.

4 Երկնաւոր մի՛շտ զօրեղ ամենակարող՝ փախնուլ
չարութեցս որ յիս, զի բարիդ քո եկեալ փը-
խանորդեսցէ. հրամայեա գթած, խնամակալ, գը-
վեալ, լոյս անշիջանելի, զօրութեդ անսահմանելեաւ,
զի նոր հաստատեսցի գոյութի բնութես մարմնե-
ղէն յարկի անդամոցս, յորում հանգուցեալ անկքա-
նելի՝ բնակեսցես բազմեալ ախորժ տենչանօք՝ միու-
թեամբ հոգւոյս իմ ընդ քեզ. զապականութի մե-
ղացս մերժեալ խաչաւ՝ յանարատուի զիս պատրաս-
տեսցես՝ ամենակեցոյց թագաւոր անմահ՝ որ յաւ՝,
օրհնեալ յաւիտեանս. ամէն.

+Ա Ճրագին յաւելուած նշխին հեծաւրէ՝ նորին հոխողէ, ա-
նոյն աղէրս մաղթանաց բանէ. 'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ.

## *Բան. ՀԹ.

1 Յիշեա՛ տէր, տէր գթութեանց, սիրող երա-
ւանց ա՛ճ ճշմարիտ. Նայեա՛ վերստին 'ի բը-
նութենս կերպարան միշտ սխալական. զննեա՛
ինձ դարձեալ զամէնընթաց տարածմունս՝ ելից ա-
րեանս շարժողութե. բժշկապէս մատիր տեսանել,
զի մարդ եմ հաստատեալ մօք խակութեան թերի
խորհրդոց՝ յոյն ինչ զոր դու իսկ վկայեցեր տեսող-
ոչ էից՝ միայն դու անման ստութեան խաւարի.
Ապա իրաւունս է գրել ինձ ը մեղուցեալսն մարդ-
կորէն վրիպանաց սխալմամբ, պարտեալ կրկին՝ երբ
զերկրածին մահացու մարմին, քան բանիւ դքումս սուտ
երեւել. քանզի արդարև գիտակ իսկ ես, թէ չար է
արարն՝ և ընդաբոյս չարութին մեր, և ոչ փոփոխին
խորհուրդք մեր յաւիտեան, ըստ հոգեհանճար
իմաստնոյն կանխագէկոյց առակի:

2 Թեթևացո՛ զապստամբութի տանջանացն, որ պա-
րաստեալ և մնայ ինձ՝ արկանել զորդիս գեհե-
նին՝ զարդ մահուն յաւիտենականի. բարձ զամօթոյս
պարտիս, որ պահեալ է յայտնել թշուառականիս յե-
տին ատենին յանդիմանութե: Խրատ խաղաղութե՝
յառաջապարգև ողորմութե քո ընծայեսցո՛, զի մի՛ ան-
տանելիքն ահաւորութե՝ 'ի ցոյց ինձ եկեալ կեր-
պարանեսցին՝ անյոյս ապշութի ընդ կենաց զղջման
առաջի կարգել, դատաստանին ահաւոր. անկաշառ և
անխաբելի դատաւորին. ամօթն սոսկալի. կշտամբանքն


սաս

սարսափելի․ յանդիմանութիւն անփախչելի․ տագնապն անձողոպրելի․ պակուցումն անխրախուսելի․ դողումն անվճարելի․ լալումն անսփոփելի․ կրճումն ատամանցն անբժշկելի․ ապականութիւն անողջանալի․ անէծքն սարսափելի՝ ամենայնիւքս բանիւ․ փակումն գթոյն, և արդելումն ողորմութեան․ Որ ընդ գալարելն երկնի՝ և ընդ երկրի դղրդելն ընդ կարծրութիւն յատակիս, ըստ կուտակելոյ կոհակաց խռովութ ծովու իբր փախստեան կերպ ցուցանելով, մի զմիոյ հետս խափանեն կասեալ յերկոցունց․ և տատանեալ սասանեալ լայնատարած գետնոյս թանձրութեան 'ի հիմանց անտի, ընդ ուժգնակի բախման թնդելոյ ներքնոյին խորոց՝ հարթէ զլերինս, և հալեալ հրը դեհրին բնութիւք վիմաց և ամ տարերաց գոյից․ այլայլին երկինք՝ յանեղծ փոփոխումն, և յեղանակին արարածք տարերօք իւրովք՝ 'ի նորոգ նմանութիւն։ Ծածկութիւք գործոցս հրապարակին, և աներևոյթք կրից մերոյ յայտնին, վարք կրօնից ներգործեցելոյ՝ 'ի մարմինս մեր նկարին։ Թագաւորն երկնից՝ յատենի նստի, վճիռ հատուցմանն 'ի ձեռին իւրում։ Ահա վայ ինձ եօթնիցս անգամ կրկին եղկուէ, ըստ չափոյ կշռութեան այսր համարու, որ զամբաւութիւնս թռուոց պարտադրէ․ Զի՜նչ գործեցից ողբալիս հադի՝ յայնմ մեծի աւուր վտանգի․ քանզի սաստիկ է յիշատակն իսկ յառաջեալ քան զյանդիպումն․ զոր ումն մարգարէ՝ զօրինակին նմանութի 'ի դէմս բերելով, զձեզ տագնապի անզերծ փախստեանն նըշանակէ ասելովն․ զօրօրինակ եթէ փախնուցու ոք 'ի ձեռաց առիւծու, և պատահեսցէ նմա արջ․ և



փախ

փախնուցու յերեսաց արջոյն, և մտանիցէ 'ի տուն, և յեցուսցէ զձեռն իւր 'ի յորմ, և խածանիցէ զնա օձ. և դարձեալ կրկին սաստկացուցանէ առ նոյն կերպարան իւր՝ զտեսիլն քամնելի. ոչ ապաքէն՝ ասէ, խաւար է օր տն՟, օր խաւարոյ և մթոյ, օր ամպոյ և մառախղոյ:

3 Յորժամ հրեշտակն պահպանողական կենակից, հզօր ոստիկան՝ իրաւամբք ամբաստանեսցէ. և հաւատացանողն ահաւոր՝ արդարութ՟ յանդիմանեսցէ: Սպասաւորք թագաւորին առանց խնայելոյ խուձապեն, զոմանս 'ի կեանս հրաւիրեն, և զոմանս յամօթն դատապարտեն. կեսոց՝ դէմս լցեալս ծաղուցուցանեն, և ինձ՝ ահարկուս և քամնելիս երևեցուցանեն. ոմանց՝ պսակս լուսապաճոյճս մատուցանեն, և այլոց՝ կորուստ մահու բողոքեն. արդարոցն ձայն աւետեաց, և ինձ գոյժ անվախճան վշտաց. Յորժամ առ բարիսն՝ մահու յաղթութիւն իսպառ մեռանի, և ինձ չարագործիս կրկին յարակայի. ուր դրանն բաղխել՝ ոչ ինչ ազդիցէ, վճար եղեալ դըթութեանն առիս: Յորժամ դպրութիւք հրաշիցն զարմանալեաց, որ են ծածկեալքն յայժմուցս հասարակաց վարուցն տեսակք՝ մարդկային բնութ՟ս գործոց, յաղագս որոյ եղեն գոյութիւնք ամ՟ էից յիւրաքանչիւր մարմինս անպակաս դրութ՟ իւրոյն երևին. և խորութիւք անձառելին կնքեցելոց յիմատից ասսեացս, առաջի աչաց մերոց կերպարանին: Ուր այժմ շահավաճառութիւք ողբոց և արտասուաց զերկինս դրաւեն, և անդ իբր զապաժամին ընդունայնութիւք՝ արհամարհեալք լքանին. հաւաչմունք

հե

հեծութեան՝ ոչ կանխաւ ատոր առաքեալ, չէ՛ եր-
բէք դտանել անդէն . ողորմութիւք ճշդով սերմա-
նեալ, ոչ պայծառ վառմամբ գնան առաջի։ Ուր
տապանն նախայանցիցն, և կատակարանն տիրանար-
դիցն, և նշանն ահաւոր այժմուցս՝ յանդիման եղեալ
մեծաձայնս դատախազեն. յորում սակաւ վայրի՝ ամն
զուխան կցորդութե՛ն հայրենի, և ամն զխորանն վը-
կայութեան անտեսիցն, և ամն զարիւն մեծին ո՜յ՝
ամբաստան իմն իրաւացի առաջի իմ տարածանեն.
Զտանջանարանս բազմապատիկս՝ անձամբ անձին
ատէն իսկ պատրաստեցի, զիարդ մխիթարեցայց հա-
մառօտեալս յուսոյ. զի եթէ զօրքն լուսոյ՝ դասուք
արդարոցն, որ փառաւորեալքն են երանուքէ, սար-
սեն դողալով, ոչ բաւեն բերել զահաւոր տեսիլ ե-
րեսաց մեծ դատաստանին, ես եղկելիս՝ տւանդակի
րոյս սատակման որդիս՝ ո՞ր երևեցայց. որ ոչ միայն
չեմ պսակելոց, այլ և պատուհասն իմ անտանելի՝ և
կորուստն անսպառելի։

4 Այլ արադեա՛ ամենապարգև՝ զօրութի՛ անճառ-
ձեռն փրկութե՛ն 'ի կորուստ դերելոյս, զի օգ-
նեալ 'ի քէն՝ դարձայց միւսանգամ 'ի դրանց դժո-
խոց, ամենապատրաստ հանդերձեալ ամենևին ան-
վրդանգելի՝ պրծեալ 'ի պատժոց. աստանօր տեսեալ
մտացս իմաստի՛ զապագայիցն դիպուածս, բաւա-
կանացել 'ի լուր երկիւղին 'ի տագնապէ տանջանաց՝
ահին համբաւով, կամօք քո բարեաց զերծեալ ապ-
րեցայց. և մի՛ մատնեցայց կորեանցն առիւծուց. որք
խնդրեն 'ի քէն զիս 'ի կերակուր՝ ծախել ատամամբքն
գազանութե՛, զի զորովայն մի՛ նու լցուցեալ՝ զաստուա

պարարեալս՝ անդ ձգեալ հալեն, ուր անսպառ պա֊
հի մնացուած մթերիցն՝ 'ի ծախուածն յաւիտենից ։
Զի դու միայն բաւես կորզել 'ի ժանեաց սատակ֊
մանն՝ 'ի կեանս և յերանութիւն, ընաւ լից ապաւէն
Թագաւոր լուսոյ՝ տէր յս̃ քս̃, օրհնեալ յաւիտեանս․
ամէն ։

---

† Ս. Երրորդին յաւելուած կրկին հեծութբ̃՝ նորին հոգւոյ, ա֊
ռաջին երանութեան՝ աղերս նախաբանոյ բանի․ 'Ի խորոց սրտից
խօսք՝ ընդ տիրուհւոյն ։

## ✻ Բան․ Ձ․

I Եւ արդ՝ 'ի վե̃ր այսքանեաց յուսահատութեանց
և ահարկու սրտաբեկութեանց, պակուցանո֊
ղական սաստկութեանց ա̃ծային բարկութեանց,
տագնապեալ ոգւով թախծութբ̃ խռպառ, աղաչեմ
զքեզ սուրբ ա̃ծածին ։ Հրեշտակ 'ի մարդկանէ ․
մարմնատեսիլ քերովբէ ․ երկնաւոր արքայուհի ․ ան֊
խառն իբրև զօդ ․ մաքուր ո̃պ լոյս ․ անշաղախ ըստ
նմանութեան պատկերի արուսեկին բարձրութ̃ ․
դերազանց քան զընակութ̃ի անկոխելին սրբութ̃ց ․
երանաւոր խոստմանն տեղի ․ եդեմ շնչական ․ ծառ
կենացն անմահից բոցեղէն սրոյն պարունակեալ 'ի
բարձրեալն հօրէ զօրացեալ և հովանացեալ, հան֊
դստեամբ հոգւոյն հանդերձեալ և մաքրագործեալ
բնակութ̃բ որդւոյն յարդարեալ և տաղաւարեալ ։
Միածինն հօր՝ և քեզ անդրանիկ ․ որդի քո ծնըն֊
դեամբ՝ և տ̃ր արարչութբ̃ ։ Ընդ անաղտ մաքրու֊
թեանդ՝ և անբիծ բարի ․ ընդ անարատ սրբութեանդ՝
և

և խնամակալ բարեխօս ․ ընկա՛լ զմաղթանս այսր ա–
ղերսանաց՝ քում դաւանողիս, և մատո՛ ընծայեա՛ Յ̃Ի
սմին խառնեալ զբանն իմ նախնի՝ մեծիդ ներբողի՝
՚ի քոյդ պաղատանս ․ Հիւսեա՛ միացո՛ զմեղուցելոյս
դառն հեծութի՝ ընդ քումդ երջանիկ և խնկաւո–
րեալ հոյցո՛ւածոյ՝ տունկդ կենաց պտղոյն օրհնու–
թեան ․ զի ՚ի քէն միշտ օգնեալ և բարեգործեալ,
և ՚ի մաքրական քո ծնելութիդ ապաւինեալ և լու–
սաւորեալ, կեցից քե՛ որդւոյ քոյ և Ա̃Ծ․

2 Օժանդակեա՛ թևոցդ աղօթիւք՝ խոստովանեալ
մոյրդ կենդանեաց և ելեցն իմ յերկրէս հովտէ,
առանց լլկանաց հետևել ՚ի կեանս օթևանացդ պատ–
րաստութեան, զի թեթևացի կապարածն իմ ինձ՝
ծանրացելոյս անօրէնութ̃ ․ Արասցես տօն ինձ բերկ–
րութե՛՝ զօրն իմ տագնապի՝ ողջացուցիչ երկանցն
և ոգի ․ բարեխօսեա՛ խնդրեա՛ աղաչեա՛, զի լոյս ան–
ճառելի մաքրութեանդ և ահա զբանիդ հաւատամ
զընդունելութի ․ Արտասուօք օգնեա վտանգեցե–
լոյս՝ գովեալդ ՚ի կանայս ․ ծո՛ւնր խոնարհեցո առ իմ
հաշտու՛ի՝ ծընողդ Ա̃Յ ․ ընդ իմում թշուառիս հոգւո՛
խո՛րան բարձրելոյն ․ ձեռն տուր անկելոյս՝ տաճար
երկնային ․ փառաւորեա՛ զորդիդ քո ՚ի քեզ՝ Ա̃Ծ օրէն
ինձ հրաշագործել քաւութի և ողորմութի՝ ա՛ղա–
խին Ա̃Յ և մայր ․ բարձրասցի՛ պատի՛ւ քո ինև, և
ցուցցի՛ փրկութի իմ քև ․

3 Եթէ զիս գոցես՝ տիրամայր ․ թէ ինձ ողորմեսցիս՝
սրբուհի ․ թէ զկորուսեալս շահեսցիս՝ անարատ ․
թէ զհարթուցեալս յանձանձեսցես՝ երջանիկ ․
թէ զմաչեցեալս յառաջմատուսցես՝ բարեշնորհ ․

Թէ յուսահատելոյս ինձ միջնորդեցեր՝ միշտ տր կոյս·
Թէ զմերժեալս ընտանեցուցեր՝ մեծարելով այ·
Թէ յիս ցուցցես զգթածութի՝ լուծիչդ անիծից·
Թէ զծփեալս հաստատեցեր՝ հանդիստ· Թէ ՚ի խոր
ռովութեցս յուղմանց փոխեցեր զիս՝ խաղաղարար·
Թէ վրիպելոյս ինձ ճարաւորեցեր՝ գովեալ ·
Թէ վասն իմ մնացեր ՚ի հանդէս՝ մահու նահանջից·
Թէ զդառնութիս իմ անուշեցեր՝ քաղցրութիւն·
Թէ զբաժանմանն իմ խորոց քակտեցեր՝ հաշտութի·
Թէ զանմաքրութիս իմ բարձեր՝ եղծման ընդոտնիչ·
Թէ զմատնեալս մահու փրկեցեր՝ կենդանի լոյս·
Թէ զլալեացս ձայն հատցեր՝ բերկրութիւն ·
Թէ զխորտակեալս կազդուրեցեր՝ դեղ կենաց ·
Թէ ՚ի կործանեալս յիս ակնարկեցեր՝ հոգելից ·
Թէ ողորմութբ ինձ պատահեցեր՝ կրտակ նուի_
րեալ, օրհնեալդ միայն ՚ի շրթունս անբիծս լեզուաց
երջանկաց, ահա կաթիլ մի կաթին՝ քումդ կուսու_
թե՛ յանձն իմ անձրեւեալ՝ կենաց ինձ զօրէ, մայրդ
բարձրելոյ տն յի արարչին երկնի և ընաւին երկրի·
Ո՛ որ անճառապէս ծնար բովանդակ մարմնով և
համայն ածութբն, որ փառաւորեալն է ընդ հօր և
հոգւոյն որդւյ էութեամբ, և անքննութբ մերոյին
բնութբս միացելով, ամ՝ և յամենայնում, մի յեր_
րորդութէն· նմա փառք յաւիտենից յաւիտեանս·
ամէն·



Ընդ

† Ս Կիրակէն յաւելուած հրէին հեծութեան՝ նորին հոգւոյն, առ-
նոյն աշէրս մաղթանաց բանի։ 'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այս։

## *Բան. ՁԱ.

1 Ընդ ածածնին մաղթանաց՝ ահա և զվերնոցն անմահ հրեշտակացն լուսակերպից զաղերս հոյցուածոց, որ վս իմ գոչեն առանց լըռելոյ հանապազորդեան սրբասացութե մաքուր բերանով՝ ընկալ բարեգութ. Որք են բարիք բարեգործեալք 'ի բարերարէդ՝ անկիրթք չարեաց, հաստեալք յամենիշխան հրամանաց էիդ. զօրութիւնք հզօրք՝ ակնարկութն բարձրելոյդ. ոգիք, մաքուրք, անարատք, օրհնեալք, վայելչականք, յաղթօղք և անպարտելիք. և ըստ ընթացից տեսութեան մտաց՝ արագունք.

2 Որք և պտղակորոյս տնկոյ թզենոյն եռամեանն դատարկութե, որ զընաւ յաւիտեանս պարանակէ ժամանակն, զանցեալն ընդ ներկայիս և ընդ ապառնոյն՝ յամօյր յամրութեն յերկարաձգելոյ՝ յոյգի աշխարհիս արմատացելոյ, սին սաղարթիւն պաճուճելոյ՝ զրկեալ 'ի պտղոց, որ է ճշգրիտ պատկեր թշուառ մարդկութեա, սոքա բարեխօսք՝ հանդերձիւքդ՝ այլև խնամակալք. որ դեդերին հանապազ առ մեզ՝ ընդ մերում կրիցս կարեկցելով, բարեմանութեն մեր սպասեն. և յաւիտենականն կենդանութեամբ փրկութեանն մեր աղօթեն՝ զայս բան ասելով, զգործս ձեռաց քոց մի անտես առներ։ Քանզի արդարև մեր են այս աղաչանք 'ի բարերարէդ այ վս մեր կարգեալ առնս. զի նոքա բանիւ



են

են ստեղծեալ , և մեք ձեռօք ներգործեալ ։ Որք
և գալոց են ընդ միածնիդ՝ վկայք սոսկալի դատաս-
տանին հատուցման , ճշմարտաբան դատախազք յան-
ցաւորութե երկրայնոցս , յահաւորին ատենի՝ յայտ-
նիչք իրաւամբք զմտակարաբութին՝ որ առ մեզ ․
որ և անտանօր կարեկցեն ազդեալ հառաչմամբ ըղ-
ձտանունէքն նուաղ ձայնի , ողորմեա՜ դու ստեղ-
ծեր մի՛ կորուսաներ ։
3 Արդ՝ ընդ գոհաբանութե ձայնիցն խնդրուածոց՝
անմահականացն վեհից՝ և՛ի մեր հեծութիս հա-
տուեսցիս՝ բնաւից արարիչ , որ յաղթես գթութեդ
քո վերնոցն և ստորնայնոցս ․ քանզի քո՛ է բարերա-
րելդ առ մեզ և առ նոսին ։ Արդ՝ վն բարեզարդու-
թեան անախտականացն , հրաշատեսիլ հրակերպիցն ,
անշաղախ մաքրոցն , անմեղիցն , բոցանիւթիցն , հո-
գեղինայն , և անվանելեացն ․ ամենաձեցուն առա-
ւելութե ՚ի բարձրն ընտրականութի գերափայլ յա-
ճախ գիտութե՝ անցուրտ ջերմութե ջեռուցանօղք՝
ինքնաբուն տապովն ածսիրութե ըստ ինքեանց ըղ-
մերս սառնասեր սրտիցս անբորբոք չիջումն , այրել
անաղօտ ՚ի մեծախորհուրդ սրբում սեղանիս՝ որ ՚ի
խորանիս , առանց նիրհելոյ և դանդաղանաց սպա-
սել հրամանաց երանականաց կեցուցիչ կամաց ամե-
նաստեղծիդ ․ քրովբէօրէն առաքինութեամբ յած-
միացեալք անբաժանելի․ Որք երկնաւոր պետութիք
են մեծքս և զինուորութիք անբիծք ահաւորք , երկ-
նաւորիդ այ՝ ազատազնեայ պաշտօնեայք , ՚ի յամպոյդ
լուսոյ՝ ցոլք նշուլից ․
4 Որովք և ինձ մեղաւորիս հողեղէնի մարդաս-

րեսցես ողորմել՝ յի՛ սուս, աղաչանօք խնդրեմ հրեշտա-
կի, դարձուցանելով զիս՝ տէր, 'ի բարիդ քո հեռա-
լուսոյ. զի զաւանդ հոգւոյս իմ պաշտպանութեան,
զոր հաւատացեր նմին տեսչութե, զընկալեալն 'ի քէն
'ի կենցաղ աստեացս՝ ուրախութբ սրտիւ յիս բերկ-
րեալ, անմեղադրելի առ 'ի քէն օրհնեալ՝ խնդալից
դիմաց զուարճութբ՝ քեզ արքայ բարձրութե փա-
ռաց անհասից՝ 'ի խորախձանս կենդանախումբս բերկ-
րեցելոցն պարուց մատուցեալ ընծայեցուսցէ՝ դը-
մեալ ողորմած. Ու քեզ անքննին ը հօր անհասի՝
թուակցութբ հոգւոյդ անձառի՝ վայելէ փառք պա-
տիւ և երկրպագութի, յաւիտեանս յաւիտենից.
ամէն.

---

+Ս ջերմին ցաւելուած հրչին հեծութբ՝ նորին հաչողէ, ա-
նոյն աղէգո մաղթանաց բանի. 'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ.

## *Բան. ՂԲ.

1 Ա՛ծ բարերար բազմապարգև Թագաւոր,
կենաց պատսպարան, լուսոյ կերպարան,
լայնատարր հանգստարան. որ յաղագս մե-
ղուցելոյս եկեալ մարմնացար. գործեցեր զանպա-
տումն և հանդերձեցեր զհրաշալիսն, մինչև կատա-
րեցեր զառեցեալն ընդ ամենայնիւ Ա՛ծութեդ.
2 Արդ՝ վս առաքելոցն որց յերկնաստեղծ քո ձե-
ռացդ ձեռնադրելոց, և հոգւովդ սրբով օծե-
լոց, զորոց զգովեստն արժանաւորութե ըստ իմում
կարի՝ առ 'ի փառս քո՝ տէր Ա՛ծ, յոլովում բանի պաշ-
տեցի, և ի՛նձ ողորմեսցիս յիշատակաւ սիրոյ նոցին



ընտ

ընտրութե՛ն։ Շաւիղ ինձ եղիցի նոքօք՝ և համդեր
ձեցեն յերանութին փափաքելի. ձայն բարի հովուու-
թեան նոցին՝ ՚ի յողջոյն ինձ կենաց քաղցր լուիցի։
Սոսն կալայց ՚ի յանեղծութե՛ն փրկութե՛ն տօնեցեալ
յուսոյն՝ ընդ առաջնորդացն կենաց, սկզբնաշնոր-
հիցն պատուոյս, փառաւորեալն դասուց, գետոցն
բանականաց, աւետարանչացն բարձանց, իշխանացն
պանծալեաց, լուսապայծառ թագին պճնելոցն, ՚ի
զարդ անկապուտ զօրութեան շնորհին պայծառա-
ցելոց, իւրովն զօրութեան տիրական լուսոյն
կատարելոց։

3 Ընդ աշակերտաց մեծին հրամանի բարձրեալդ այ
քի՝ և մարտիրոսացն ընտրելոց նահատակութ՛բ,
որք մահացու և վշտաչարչարն մարմնով, վտանգաւոր
և ամենակիրն անդամօք, երկրաւորական և հողա-
զանգուածն բնութ՛բ՝ մարտուցեալ ընդ տարր գոյից
ամ նիւթից՝ պսակեցան բարձրացան և կենդանա-
ցան հոգեպէս. արիաբար ելեալք ՚ի յերկրէ, ըստ
մարգարէին, վկայք ճշմարիտք ամենափորձն մահու.
իմանալեացն անտեսիցն և ծածկելոց՝ աներկբայ բա-
րեացն՝ յուսով տեսելոցն ասաէն նկատիչք. աշա-
կերտք առաքելոցն և չարչարակիցք նոցին. որ հա-
ւասարեալ գործովք ընդ նոսին, կատարեալ լմամբ
անպակասելեաւ՝ պարեն ՚ի խրախճանս անկէտն ե-
րանութե. որոց հաճոյական և ընդունական մաղթա-
նօք, արիւնըմբոյ վաստականօքեր քրանակնդրուկ
աղերսիցն յարդմամբ՝ ընկալ զիս նորոգ ըստ նոցին
մասին անեղծ փրկութ՛բ՝ ՚ի քեզ արձանացեալ։

4 Ընդ խաղացեալսն հուրբ և սուսերբ՝ արեամբ
ներ

ներկելոցն, և ճգնաւորացն ո̃ւց հարցն միանձանց՝ և քեզ հետևելոցն՝ որդի ա̃յ, անպարտելի քաջութ̃ե և անպատիր զգաստութ̃ե, ընդ դժնեայ գոռոզի մարմնոյս բռնութե՝ արիապէս մարտուցեալ, սովիմբ վանեցին զանմարմինն բելիար. և մշտամարտ հանդիսին յապարխի կենցաղոյս՝ առանց զղջմանց ծանրաբեռնութե՝ ՚ի լայնածաւալ ծփանաց աշխարհիս ծովու՝ տապանակաւ մարմնոյս թանձրութե՝ զթեթևութի հոգւոյն թռուցեալ՝ ՚ի նաւահանգիստն կենաց հասին. և իբր սիրողք վերնում վիճակին՝ առանց յետնոցն մտածութեան, զթագն յաղթութե համարձակապէս՝ պայծառ ճոխութե պճնեալ իսկապէս՝ ՚ի գլուխ կապեցին. վ̃ն նոցին արժանաւոր մաղթանաց և նուիրական հայցուածոց՝ և զիս զմեղաւորս ՚ի պատժականաց՝ ընկալ ընդ նոսին.

5 Եւ ահա խառնեալ զանմաքուրս բան՝ ընդ նախադրեալ երջանկացն փառաւորական աղերսարկութիւն, որ վ̃ն իմ գոչեն քեզ ՚ի հաճութի, և ես ընդ նոսին՝ իբր դառնութի եդեալ ընդ քաղցու, կամ տատասկ ընդ ողորկութե. տգեղութիւն ընդ վայելչութե, և տիղմ ընդ գեղեցկութե մարգարտի, կամ հող ընդ յստակութի ոսկւոյ, և կամ քարինս անարգս ընդ պայծառութե արծաթոյ. բացասութի ընդ ճշմարտութե, կամ աւազ ինչ ստամբառու ընդ կակղութեան զանդուածոյ հացի. արդ լուր՝ հզօր հնարաւոր գովեալ, զնոցայն վ̃ն իմ, և զիմս ընդ նոսին՝ ՚ի նոցին գովեստ, ՚ի փրկութիւն իմ և ՚ի փառս քո՝ ամենադութ, բարերար, օրհնեալ, երկայնամիտ, կարող, անքննին, անճառ, աներդ և անստեղծ.

Քո

Քո՛ են պարգեւք, քո՛ են շնորհք. դու՛ սկիզբն և պատճառ բարեաց ամի։ Ո՛չ ես դատապարտիչ, այլ ազատիչ. ո՛չ ես կորուսիչ, այլ գտիչ. ո՛չ ես մահացուցիչ, այլ կեցուցիչ. ո՛չ ես տարագրիչ, այլ ժողովիչ. ո՛չ ես մատնիչ, այլ ապրեցուցիչ. ո՛չ ես ընկղմիչ, այլ վերածիչ. ո՛չ ես գլորիչ, այլ կանգնիչ. ո՛չ ես անիծիչ, այլ օրհնիչ. ո՛չ ես վրիժառու, այլ շնորհիչ. ո՛չ ես թշնամացուցիչ, այլ մխիթարիչ. Ո՛չ եղծանես, այլ գրես. ո՛չ սասանես, այլ հաստատես. ո՛չ ոտն հարկանես, այլ սփոփես. ո՛չ պատճառս յօդես մահու, այլ ճնարս խնդրես կենաց. ո՛չ ես 'ի կամս շարժեալ սատակման, այլ 'ի փրկութի ողորմութեան։ Ո՛չ մոռանաս զայցելութի. ո՛չ լքանես զբարի. ո՛չ արգելուս զգթութի. ո՛չ բերես վճիռ կորստեան, այլ կոչակ ազատութե։ Ո՛չ թշնամանիս յառաստուէց. ո՛չ բամբասիս 'ի շնորհաց. ո՛չ հայհոյիս 'ի պարգեւաց. ո՛չ նախատիս 'ի ձրի ձրից. ո՛չ անգոսնիս յերկայնմտութեց. ո՛չ եպերիս 'ի ներութեց. ո՛չ բանսարկիս 'ի բարութեց. ո՛չ անպատուիս 'ի քաղցրութեց. ո՛չ քամահիս 'ի հեզութեց. ո՛չ առաքին այսոցիկ տրտունջ մունք, այլ անլուելի գոհաբանութիք։ Բա՛րձ զմեղս իմ՝ հզօր. լո՛յծ զանէծս իմ՝ օրհնե՛լ. քաւեա՛ զպարտիս իմ՝ ողորմած. ջնջեա՛ զյանցանս իմ՝ գը՛թած. մատո՛ մատն այցելութե, և անդստին իսկ կատարեցոյց. զի՛ նչ քեզ՝ տէր, քան զասելն դիւրագոյն, և կամ զի՛ նչ ինձ պարտաւորիս կարեւորագոյն։ Նա՛յ կենդանագրեա՛ բարեխնամ՝ քոյինաստեղծ պատկերիս՝ փչումն կրկին 'ի շունչ նորոգման լուսաւորութե մաքրական շնորհի՝ զամենամեղս ոգի պաշտպանեալ։



Ա՛ր

6 Մի՛ ածեր ողորմած՝ ինձ օր տարաժամ 'ի համա
ռօտս երբէք՝ անթոշակ ապաշխարանութեամբ՝ ընդ
անկատար ուղղին հետևել. մի՛ մատուցաներ բաժակ
դառնութեն՝ 'ի ժամ ծարաւու. մի՛ փակեր գը՛թած՝
իմ հանդէպ՝ զյաջողուած հոգևոր օգտիս, և մի՛
իբր յանկարծադէպ հինից ասպատակ՝ գիշեր մահուն
ինձ պատահեսցէ. մի՛ տար տօթոյն յանպատրաստ պա
հուն՝ զարմատս հատեալ ցամաքեցուսցէ, և մի՛ լուս
նական դիպուածք հասեալ գաղտնեօք ճնմեսցեն.
մի՛ պահեսցի ինձ սառն մեղացս, և մի՛ հոսանք ուղ
խից կենցաղոյս զիս ողողեսցեն. Մի՛ հնդխտն մահ
բերիցէ, և մի՛ ննջումն 'ի սատակումն յառաջեսցէ.
մի՛ քունն ինձ կորուստ լիցի, և մի՛ նիրհումն ապա
կանութի գործեսցէ. մի՛ վախճանն անյարմար՝ 'ի վր
իմ արշաւեսցէ, և մի՛ չնչոյս վերարձակութի ըմբռ
նեալ՝ 'ի խոնարհ լքցի.

7 Դու ես տր. դու գթած. դու բարերար. դու
երկայնամիտ. դու ամենակարօղ. առ ամ բան
անհասութե անճառ զօրաւոր, քաւել՝ փրկել՝ կե
նագործել, լուսաւորել, վերստին հաստատել, 'ի ժա
նեաց կերչաց գազանաց՝ և կամ յատամանց վիշապաց
'ի կեանս կորզել, 'ի խորոց անդնդոց 'ի լոյս բերկրու
թեան ածել, և 'ի հեղձմանէ ծփանաց մեղաց՝ ընդ
արդարս երջանկաց՝ փառօք բազմեցուցանել. Մի՛
նոյն ոգի քեզ ակնկալեալ յուսով սպասէ, կարօ
տեալ քումդ շնորհաց. եթէ երկնայինք, և եթէ երկ
րաւորք. եթէ անկածն մեղօք, և եթէ ամբարձեալն
արդարութե. եթէ տէր, և եթէ ծառայ. եթէ ա
կին, և եթէ աղախին. և 'ի ձեռին քո է շունչ կեն


դա

դանական բոլորեցունն։ Եւ քեզ ընդ հօր եւ հո-
գւոյդ միշտ փառք՝ յաւիտեանս յաւիտենից. ամէն.

---

+Ա յերրորդն յաւելուած նշխին հեծութեան՝ նորին հանգոյն, առ-
նոյն ողբերգ մաղթանաց բանի. ՚ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ.

## *Բան. ՂԳ.

1 Բարձրեալ անքննելի. զօրութիւն անհաս. տէր
արարածոց. թագաւոր երկնի. ստեղծիչ
հրեշտակաց. գոյարան մտաց. հաստիչ հը-
րեղինաց. պետ բարի հոգւոց. աջապաւինութիւն.
անդորրութիւն հանգստեան. տեսարան լուսաւորութեան.
պայծառութիւն բերկրութեան. ճանապարհ երանութեան.
պատճառ կենդանութեան. առիթ բանաւորութեան.
փրկութիւն առանց չարութեան. առաջնորդ խաղաղութեան.
պարիսպ ամրութեան. պատուար պահպանութեան.
ցանկ բոցոյ մեծի օրհնութեան. սահման անոխակալութեան,
յիշեա՛ յոյժ ողբերգութեան մատենի բանիս խոստո-
վանութեան՝ եւ զոր ՚ի մարդկային ազգէ թշնամիս մեր՝
՚ի բարի, եւ արա՛ կատարեալ նոցին քաւութիւն եւ ողոր-
մութիւն։ Մի՛ բարկանայցես նոցա վասն իմ՝ տէր, իբրեւ
զանձս բամբասողաց՝ առ յաճախ սիրոյդ որ յիս, այլ
որոց զչարս կշտամբողաց եւ իրաւամբք նախատողաց՝
ներեա՛ յանցանաց նոցա։ Նա եւ արդ մատուցեալ երկո-
քանչիւրոցս առաջի քոյ՝ արդարադատ, ոմանք առ մեզ
մեղսակիրագոյնք՝ սակաւուք թերեւս՝ եւ յիրաւի բամ-
բասելոցս, եւ ես առ քեզ՝ ամենապարտս, անթի՛ւս
եւ անկշռելիս բազմօրինակ ուխտազանցութիւս.
2 Արդ՝ յիշեա՛ զքո մեծութիւնդ՝ տէր, նայեցեալ
՚ի

'ի յիմս անարգութիւն. և ընդ խնդրելս իմ 'ի քէն բարի իմոյն ատելեաց, և դու առ քոյդ՝ ըստ քում մեծութեանդ՝ անճառելիս հրաշագործեցես։ Մի՛ սատակեսցես զիմն խածանօզսն, այլ փոփոխեսցես. խլեալ զխոտանս բարս երկրաւորս՝ զբարին սերմն տացուսցես, և յիս և 'ի նոսին։ Մանաւանդ զի դու լոյս ես և յոյս, և ես խաւար և յիմար. դու խնկոյ թէ բարի գովելի, և ես համայնիւն չար ապիկար. դու տէր ստորնից և երկնից, և ես անիշխան ընչոյս և ոգւոյս. դու բարձրեալ 'ի կարեաց զատեալ, և ես տաժանաւոր և վտանգաւոր. դու 'ի վեր քան ըզ կիրս երկրիս, և ես կաւ անարգութե գարշութե. դու՝ ըստ մրտէրէին, մնաս յաւիտեան յանբաւ բարձրութեան, և ես միշտ կործնիմ՝ ըստ նորին բանին. 'ի քեզ ոչ է մթութիւն կամ նենգութի, և ես բովանդակն ի՛սկ եմ՝ որ զաւանդն իմ ոչ պահեցի. Դա՛ն զիս 'ի բանտէս. արձակեա՛ 'ի կապանացս. զերծո՛ 'ի շղթայիցս. փրկեա՛ 'ի խեղդմանէս. ազատեա՛ 'ի տագնապէս. քակեա՛ 'ի յերկիւթիցս. լո՛յծ 'ի պաշարմանցս. արտաքսեա՛ յերկմտութեանցս. սփոփեա՛ 'ի տխրութեանցս. հանգո՛ 'ի նեղութեանցս. փարատեա՛ 'ի վշտացս. հանդարտեա՛ 'ի խռովութեանցս. ապաքինեա՛ 'ի լալոյս. մերժեա՛ 'ի հեծութեանցս. հեռացո՛ 'ի յողբոցս. կազդուրեա՛ 'ի կականմանցս։ Մ՚ծ ողորմութե և պարգևատու քաղցրութե, մի՛ զդրաւեալս արհամե հզօրիդ՝ անտես արարեալ ընդ վայր կորուսաներ. կանգնեա՛ զհասեալս յափն մահու՝ 'ի բազմավտանգ հիւանդութենէս։

3 Մ. հա՛ բարդեցան կուտեցան շրջանակք ամացս ըն

ծր  դու

դունոյնութեան, յորմէ հետէ յայտնեցեալ ցուցայ
յոչ պէտս երևեալ, 'ի յանդաստանէ մօրն իմոյ սե-
նեկէ՝ փուշս դժնիկէ՝ մեղաց շառաւիղի. մի՛ լինիր ինձ
խայթոց խոցոտիչ՝ ո՜վ անդ տոհմին յուդայի, և կամ
զաւակին եփրեմի: Եւ քանզի բուսուցեալ տնկեցի
յոդիս՝ փոխանակ ցորենոյն բարեսերմնութե՛ն խառս
խայթողականս ինքնաթոյնս ընդարմացուցիչս, ըստ
գրոյն բանի՝ որ էրէցն է քան զաւետիսն, զիա՞րդ ո՛չ
կոչեցից զանձն իմ՝ գարշելի անդաստան անխծաբեր
փշովք մեղաց հեղձեալ: Ո՛չ սերմանեցի արդարու-
թիւն, ըստ բանին յովսեայ, և զիա՞րդ հնձեցից և ժո
ղովեցից զկենաց պտուղն: Անկաւ ստինք կուսութե՛ն
անձինս մաքրութե՛ն, ըստ մարգարէին բանի՝ որ առ
խորոյէր կարօղ ես՝ տէր, 'ի նոյնն հաստատել: Լայ-
նեցի ընդարձակեցի, ըստ մոլեկան բարուցն յուդայի,
զանկողին կամացս՝ դիւացն հոմանեաց, 'ի ձեռաքս է
ամփոփել դարձեալ՝ 'ի նոյն զգաստութիւն: Եթէ
մարմնապէսն կցորդուի՝ ընդ տեսանողին, անարատ
գործեաց զպոռնիկն, իսկ դու փրկութի՛ հոգեպէս
միացեալ 'ի յիս՝ կրկին մաքրեսցես. եթէ արեգակնս
ոյս անկենդան՝ ստեղծեալ առ 'ի քէն երկրիս մա-
տակարար, և զկարակումն մօրից ցամաքէ, և զոհաս
պտուղս հասուցանէ, իսկ ստացօղդ ամենից՝ հոգիդ
այ՝ ո՛րքան զօրեսցես զտիղմ չորեաց աղտոյ՝ և զթա-
րախ պղծութե՛ն մեղաց մթերից՝ իսկոյն սպառել:
Վասն որոյ կանխաւ իսկ ժամանեցի հայցել առ 'ի
քէն բարի՝ ատելեացն իմոց 'ի կարգ ոյս բանի, զի
զհերքեալ ճասակարս պարտուց մահու, յամենախը-
նամ աչաց հզօրիդ մի՛ մերժեսցես՝ օրհնեալ գթուի.



արդ՝

արդ՝ կենագործեա զիս զամենամեղս անդամօք մարմնոյս՝ ընդ բնութեն հոգւոյս խորհել միշտ զքոյդ ։ Իսկ բարեգործացն խնդրել բարիս, բնութեան են օրէնք՝ անբռնադատ կրիցն յարակցապէս առ սոյն բերումն ։ Քանզի արդարև՛ առ մեզ այդ պատուէր՝ ամենայն հասակ զօրանայ . իսկ միւսոյդ երկրորդի՝ առաջնովդ խնամով հանդիպել, ծածկանիդ է նմանութի . յաղագս այսր իրի՝ նախնի դասեցի զթշնամեացն իմոց՝ աղերսանս, քան զերախտաւորացն

բարիս .

4 Նաև արդ՝ յիշեա զնոսա կրկին ընդ միոյ, որ 'ի քո անուն բարձրացեալ՝ զանարժանս զիս ընկալան. և տուր նոցա՝ տէր ամենառատ բարերար և անոխակալ, վարձս արդարոյ և մարգարէի, Թէ և ես յաւէտ Թափուր իցեմ յարժանեացդ, ըստ հաւատոց նց և առ յոյս նոցին ակնկալութեն, որ առ պարտաւոր դերիս՝ ողջամիտ կամօք ակնարկեն, ոչ Թէ 'ի մասանցդ քո կեցուցչաց՝ 'ի պահպանարան հոգւոյս ծածկութի լնով ունիցիմ . Նաև զպատժաւորս՝ անամփոփելի 'ի քոց տեսութեց, և անխափելի 'ի յուղիղ կշռութեց՝ քաղցր գԹութեամբդ անսահմանելեաւ մերձեցեալ առ իս՝ մաքուր արասցես, անխայտառակելի պահելով 'ի տիեզերական յանդիմանութեն ։ Նաև ոչ շուք իմն վայելչական դնել ախորժեն ինձ անարժանիս՝ սիրելեքն քո՝ վասն քոյ, նոյեցեալ 'ի կրօնս զգեստու բարեկերպութե, չգիտելով զբիծս գաղտնեացն՝ երջանիկ կարդան եղկելոյս, և դու ճնորաւոր ամենապարգև օրհնեալ մարդասէր՝ առ բնաւս ողորմած, վն ամենաԹշուառիս հեծութե հաշտեաց ընդ նս



ըստ

ըստ հաւատոց նոցա . ընծայեալ նոցին մատո՛ պար-
գեւեա՛ զանեղծ մեծութի՛դ՝ և զանթառամելի ըղ-
ձակդ՝ յահաւոր աւուրն յետնում հատուցմանն
ամենափորձ ընտրութեն .

5 Ո՛վ դու ես գրաւ փրկութեն մեծութեն անվատ-
նելի և անծախ գանձուց ստրկիս և սովեցե-
լոյս, 'ի վաճառ վերնային շահու օգտութեն՝ բանի՛դ
որ 'ի քէն՝ յարդեալ ձոխանամք։ Կառ՛ ինձ սահման՝
ջրոյ հանգստեան . արձանացո՛ ա՛նփոփոխ՝ պատրաս-
տական վստահութի՛ . կարգեա՛ օրհնաբանեալ՝ անկե-
ղակարծ յուսոյ ամրութի՛ . տո՛ւր ամենախնամ դու,
անաչառ պաշտպանութիւն . սասանեցելոյս՝ բարեաց
անդորրութի՛ . տարակուսելոյս՝ լուսոյ ապաւինութի՛ .
աշխարելոյս՝ մեծ երջանկութի՛ . վհատելոյս՝ կենաց
օգնութի՛ . լքելոյս՝ անգայթագղելի օժանդակութի՛ .
նահանջելոյս՝ անսայթաք վերընթացութիւն։ Ո՛վ
քո՛ է բնաւդ, և 'ի քէն է ամենայնդ, և 'ի ձեռն քո
բաշխին հաստատութիւք պիտանացուաց համօրէնից կե-
նաց . և քեզ վայելէ փառք՝ յաւիտեանս յաւի-
տենից . ամէն .

---

† Ս՝ էրաւէն յաւելուած իրիէն հեծուբէ՝ նորին հոյոզէ, տա-
նոյն աշէրս մաշըթանոյ բանի։ 'ի խորոյ սրտից խօսի՝ ընդ այ ։

### * Բան . ՂԳ .

: Արքայ երկնաւոր . թագաւոր բարձրեալ . տէր
բոլորից . ամենից ակնկալութի՛ . ստեղծօղ
տեսականաց . հաստիչ իմանալեաց . պատ-
ճառ եղանութեանց . կազմիչ հանդերձելոց . տուիչ



լու

լուսոյ. աւիթ առաւօտու. պատրաստիչ վաղորդայնի. երեւեցուցիչ երեկորի. տարրիչ խաւարի. արուեստաւոր բարեհնար. իմաստութեան գործօնեայ. բաւարան օրհնեալ. հալիչ մեղանաց. հալածիչ ցաւոց. քակտիչ դառնութեց. պահպանարան հանգստեան. ճնարք նիրհման. յարմարիչ քնոյ. պարգեւիչ ննջման. շնչոյ յարակայութի. զգայութե տեւողութի. ցրիչ ցնորից. յեղանակիչ անրջոց. փոխարկութի զարհուրմանց. այլայլութի տխրութեց. խափանիչ խիթմանց. ընդարձակիչ կարծեաց. համադրութիւն ծփմանց. անհաղնութի խարդախմանց. հարուածիչ դիւաց. փախուցիչ ախտից. ընկլմիչ գայթագղութեց։

2 Պաշտպանեա երկնաւորդ ձեռամբդ. զօրացո բարձրացեալ քո աջովդ. ամփոփեա ամենակալդ թեւօք. ծածկեա ածեան խնամօքդ. ամրացո վերակացութեամբ վերնայնոցդ. շուրջանակի պարսպեա՛ գումարտակօքդ անմահից. 'ի յամենուստ պարփակեա՛ կցորդութբ հրեշտակացդ. վանեա զընդդէմ մամարտն իմ՝ զինուորութբ զօարթնոցդ. պատսպարեա զսասանեալս՝ ածածնիդ մաղթանօք. զբանակս անդրանկացդ՝ բարեկարգեա ինձ պահապան։ Եւ ոց է աչացս դիմաց՝ և զմտացս իմ տեսանելիս. զգաստ արա ընդ ոգւոցս՝ և զծանրաբեռն կրիցս դանդաղութիւն. վերացո տէր 'ի զգայութեցս՝ զմածեալս յիմարութի. բարձ միայն բարեգործ՝ զպատրուակիս թանձրութի։ Ընդ սկզբան բերմանս լուսոյ՝ զողորմութի քո ծագեա. ընդ ելից արեւուն՝ արդարութե արեգակնդ 'ի յանձկութի սրտիս մտցէ. Ճառագայթ քո փառացդ՝ 'ի յիմաստից խորհրդանոց ջոհեսցի.

խաչիդ տեառնագրութիւն ընդ շունչս և ընդ մար-
մինս համօրէն տարածեսցի։ Յանձն առնեմ քեզ
յաւուրս՝ զքո յարմարեալ տպաւորս պահպանաւ ըզ-
գոյշ՝ որ 'ի սմին։ Զի դու ես ած անքննին, առ
ամենեսին բաւական, և յամենայնում բովանդակ,
օրհնեալ յաւիտեանս. ամէն։

---

† Աղօթքն ցանկալած հոգին հեծութեն նորին հանդէպ, առ
նոյն աղէրս նաղբանոց բանի. 'ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ։

## *Բան. ՁԸ.

1 Իսկ արդ՝ ո՛վ զի արթնականն մեր զուարթու-
թիւն՝ քեզ ննջումն իմն է համարեալ, իսկ
'ի խոր թմբրութիւն լռելն՝ ո՛վ ուղիղ հաւա-
տոյն 'ի քեզ՝ անթարթափ բացութիւ աչաց, ուղղեա՛
հոգւոյդ քո իմաստութեամբ զյաջողուած ձեռինս գոր-
ծոյ՝ ընդ հեծութեան ձայնիս մաղթանաց։ Զօրացո՛
տէր՝ 'ի հանդէս բարի ճգնաւորական արի փառա-
կոյ. կցորդ լեր կարեացս տկարութեան. թեթևա՛ կացո
զաշխատութեանս այս ակիզբն. արագեա՛ միշտ կարօղ՝
զյառաջադրեալ ձեռակերտս. դիւրաւորս ընթացո
'ի յաւարտումն լրմանն։ Ի փախձան իրին՝ բերկրու-
թեա՛ զիս հաստա՛. ժամանն կացուսցես՝ 'ի հանդիպումն
յուսոյն. կցորդ լեր ուղւոյն՝ ճանապարհիս ընթա-
ցից. 'ի թուիչս ամբարձման՝ փութացուսցես յօդոսա-
կարն. ընդ աջմէ իմ լիցիս՝ 'ի վտանգի ծանրութեան.
զձայն քո լուր՝ 'ի յանձկութեան պահու. ձեռամբ քո
կեցո՛ 'ի կորստեանն ժամու. մատամբ քո ազդեա՛ 'ի
սահմանին անձկութե. հարթեա՛ զխորոց՝ ամենաչար

խափանմանն. հոգեղէնին առաքմամբ, ըստ ամբակու-
մայ, ինձ հնարեմ. բան ինձ շնորհեա՛ 'ի յատենի բաղ-
մութեանն. իմաստութ՟ յիս անկեա՛ 'ի հանդիպման
քննութե. Ամպով կամացքոց հովանացի՛ր հրաշապէս.
հանդարտեցո փայտիւդ կենաց՝ զծովըս մրրկի. սան-
ձեա՛ զատեաց կենցաղոյս պատկեր՝ քոյին հրաման
նաւդ. քանզի թէ աստ ողորմութ՟ քո տէր՝ կամեսցի,
այս լուծում կոհակաց կարծր է քան զվէմ. և թէ 'ի
ցամաքի անտես առնիցես, իբր զանկայուն՝ պնդութ՟
յատակիս 'ի ներքոյ ատոր հասեալ սասանի.

2 Որդ ընկա՛լ յի՛սուս՝ զպաղատանացս ձեռնարկու-
թիւն՝ քեզ 'ի հաճութ՟, և արա՛ ինձ զամենա
կարծն դոյթադրութ՟ մեծ վստահութ՟. Որպէս
'ի Ջրահեղձոյց ամենակործանն դարու, որք 'ի հարթ-
տարածման դետնի առանց երկիւղի յանհոգս կէին,
յողորմութենէդ ամոյի Փացեալ՝ կորուսան. իսկ ընդ
հովանաւոր մածուածով լաստիւն յողնատատան հի
մանն հոյթոյթանօք՝ յանուն գթածիդ յեցեալ պա-
հեցան, ընդ որս՝ և զաղաչօղս մշտատատան՝ 'ի նաւա-
հանդիստն խաղաղութե՝ մարդասիրապէս պրծեալ
ապրեցո. վարձս 'ի քոյոցդ ընդ իս բերելով հոգևոր
շահից, զատորաբերս այս սատարութիւն պարտուցս
լքեալ բանիդ առակաւ, 'ի քեզ տէր անկայց միացեալ
սպառ անբաժանելի՝ օրհնեալ յաւէտ. Նաև կցոր-
դելով պսակմաղթանաց հոգեղէնքն ամենամաքուրք՝
Ը հողեղինացն մարտիրոսաց, որք Ջրով և հրով փոր-
ձեցան, և յելից զերծմանն ընդ մեր խնդրեցին, և
մեզ յիշատակ թողին օդնութե, ասասցեն ընդ մեզ
համաբանաբար զուդամանութե՝ եղիցի՛ եղիցի՛.


Ընդ

† Սքրոսին յաւելուած կրկին հեծութեան նորին հոգւոյն, առ նոյն աղերս մաղթանաց բանի ։ 'ի խորոց սրտից խօսս՝ ընդ Ած ։

## * Բան . ՁԸ .

1 Ընդ այսր հառաչանաց թախծութեան ողբոց՝ 'ի բազմաց կերպից շարակարգելոց, եւ ամենից հոգւոց ողորմեա՛ գովեալ եւ երկայնամիտ Թագաւոր ։ Նաեւ այնոցիկ առաւել՝ որոց հասեալ է ակնկալութի փրկութեան կենաց . որք նուաճեցին անպատրաստաբար՝ չիջեալ լապտերօք իւղոյն պակասութեն ։ Ահա յիշեա՛ տէր իմ գթութե , եւ 'ի յոյս եւս պատճառ իրաւունս ինձ գրեա՛ ։ Քանզի թէեւ 'ի փառս ահաւորութե սքանչելեաց մեծիդ՝ հակառակօքն հանդերձեցեր զկազմած մարդոյս , զոմն ծանր՝ եւ զոմն թեթեւ . զմին զօդ՝ եւ զմիւսն հրոյին . զի դիմադրութիւն 'ի հակառակացն հարթ պահեցեալ՝ արդար կոչեսցուք հաւատարիմ հաւասարութեն , եւ 'ի յայսմ դարման առաքինութե վերաբերեալ ընդ ամբարձելոյն զխոնարհութիւնն առ կաւն դիմման անմռաց պահեալ՝ պսակ ընկալցուք ճգնաւորական ։ Այլ քանզի յայսմ կանոնէ ուխտի վրիպեցաք , եւ անսանաբար սահեցմամբ ըստ հողոյն զիջման՝ ընդ երկիր մածաք , այլ ոմն ախտիւ՝ եւ այլ ոմն անդթութե . միւսման մոլութե ամենաբաղձ կերակրոց՝ իբր գաղան մշտաբոյծ՝ յարակից կապեալ ընդ բնութեա ։ Իսկ 'ի քաւիչս՝ ոմն անըմբռնելի եւ անողոքելի սլացմամբ 'ի բաց ստացեալ՝ վայրենաբար ամբարտաւանէ . եթէ ջեռնումք տապով սիրոյն որ 'ի քեզ՝ նշխարաւ բոցոյն որ 'ի մեզ , ցուրտն առընթեր կենակից նմին

զնոյն կասեցուցեալ բարւոյն ընդ միջէ. եթէ օգա
կանաւն հրեշտակայնովն յաւիցիմք 'ի քեզ, ծանրու
թիւն թանձրու անդրանիկ նխւթոյս այս հողոյ՝ 'ի
ստորև քարշեալ խափանէ:

2 Եւ արդ՝ յամենուստ պարտեալ և իսպառ լքեալ՝
իբր զապիկար հաշմեալ հերքեցայ կորեալ մա
նեցայ. վատնեալ 'ի բազմաց՝ 'ի մահ դրուեցայ. մի՛
'ի պարգևականէն զրկեցեալ՝ յողորմութեանն կողմ
նայիմ. և պատկառեալ դիմօք համայնից ունողս՝ ըղ
բնաւից աղերսաբանեմ զմեռելոցն քեզ՝ կենդանեաց.
քանզի կարօղ ես յաւէտ ճշմարիտ և կորստականացն
ըստ իս մեռելոցն. ամ ինչ քեզ զօրելի է. նա զի՛ և
ընդ անտկար կարելոյդ՝ և կամելդ է ախորժելի.

3 Արդ՝ այսց երկուց բարդուած շնորհաց նորոգ
հաց՝ առ միմեանս եկեալ՝ կարելն ընդ կամելն,
բարձեալ եղիցի և յուսահատութեն վհատութիւն
ազգաց մեղաւորաց. և ժամանել հասցէ աւետեացդ
լոյս՝ հոգւոց բժշկութե քումդ հրամանի՛ տէր ամ,
օրհնեալ յաւիտեանս. ամէն:

---

† Ս. Ներսէսին յաւելուած կցկէն հեծութեան նորին հոլովէ, առ
նոյն աղերս հազարանոց բանի. 'ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ.

## * Բան. ՂԱ.



1 Եւ արդ՝ քանզի 'ի գլուխ կատարման հա
սեալ սակաւամասնեայ կտակի այսր ողբեր
գութե, որում տէր՝ վախճան դադարման
առնուլ ընդ այսց բանից մաղթանաց՝ ինքնանախատս
կշտամբութեան՝ և որ յիս կրին չար սովորութք.



Որ

Որ․քեզէն կարգեցեր սահման աւետեաց ակնկալուէ
դատապարտելոյս՝ ասելով, ոչ են կամք առաջի հօր
իմոյ՝ եթէ կորնչիցի մի ոք ՚ի փոքրկանցս․ և դարձեալ
այս են կամք հօր իմոյ՝ զի զամենեսին ինձ յանձնեա
բարեալսն ոչ կորուսից ։

2 Լ․հա օրհնեալ ես ՚ի գթութե․ բարերարեալ միշտ
՚ի քաղցրութե․ խոստովանեալ յերկայնմտութե․
ծանուցեալ ՚ի յայցելութե․ քարոզեալ տէր ՚ի փր֊
կութեան․ ներբողեալ դու յառատութե․ պատուե֊
ցեալ ՚ի պաշտպանութե․ փառաւորեալ ես ՚ի փրկութե․
երկրպագեալ յանբաւ բարձրութե․ պաշտեցեալ ՚ի
յանքննութե․ գովեցեալ միայն ՚ի յաղթութե․ մե֊
րաձայնեալ ՚ի մեծ զօրութե․ խնկաւորեալ յողոր
մածութե․ համբուրեցեալ յանճառ հեզութեան․
Ճաշակեցեալ ՚ի խոնարհութե։ Ընդ քեզ և ծնօղդ
քո երկնաւոր ա՟ծդ բոլորից մխիթարութե․ ընդ ո֊
րում հոգւդ քո ս՟բ բարութե, որ զանկեալ զգրաստ
թշնամւոյն՝ և զգայթագղեալ մարդն անբանութե՝
կանոնեցեր ոչ անտես առնել։ Որոյ երախտիս հ֊
զօրէդ ՚ի յիս, և առաքինութի մեծիդ ՚ի բարձունս
տօնեալ անդադար յանվախճան փառաբանողաց․ ո֊
րովք զայս ձայն աղերսական յարդէլ ընկալցիս՝ մար
տիրոսացն պաղատանօք ՚ի հոտ հաճութե բուրման
անուշից։ Եւ այսու փրկանօք հաշտարար բանի՝ ըղ֊
նախնեացն պորտս և զաներևոյթ վէրս՝ միջնովքն և
վերջնովքն մահացուցանողօքն զանձն և զմարմին բը֊
ժշկեա՝ ամենակարօղ․ զներքինս և զարտաքինս ․
զոխսքն և զդիծքն, և զխարանս հարուածոցն․ բար
ձեալ և մաքրեալ դեղովք ողորմութեանդ զկանեալ

խածուածս բազմադունիս, որք գարշելիս ընդ ախոր

ժելեացն քեզ ցուցանեն զէութ բնութեան։

3 Եւ եթէ հասից յամս ծերութեան քո առաջնոր
դեալ՝ արժանիս մահու, մի՛ թողցես զտկարութիւնս.
մի՛ անարգեր զալիսն. մի՛ կորացուսցես զկործանեալն.
մի՛ զիջուսցես զվերեալն. մի՛ վայրաբերիր զխոնար
հեալն. մի՛ շնչմամբ հողմոյ մատներ զաւկայծեալն. մի՛
ընդ պահէկեսցես զդեդեւեալն. մի՛ անմերարկու առ
ներ զտառուցեալն. մի՛ անդարման լեցի տառապեալն։
Մի՛ առանց տածելոյ՝ յարկին խարխալեալ. մի՛ անպա
տիւ՝ պատկերն ճնացեալ. մի՛ պարարտութիւն անհա
մեալ. մի՛ շուք շնորհին անարգեալ. մի՛ ճոխութիւն քա
մահեալ. մի՛ նաւ հոգւոյս ալէկոծեալ. մի՛ երկարութ
լուսոյն կարճեցեալ. մի՛ լար շաւիղին խզեալ. մի՛ ուշ
իմաստին բարձեալ. մի՛ գոյին կազմած զեղծեալ. մի՛
ամբարձմանն թեւք փետտեալ. մի՛ զուարթութիւն գե
ղոյն աղտեղեալ. մի՛ ճաճանչ նշուլին քաղեալ. մի՛ պա
տուհանք աչացս փակեալ. մի՛ լուսաւորութ նորին
խափանեալ. մի՛ պատկերն խօսուն անկեալ։ Հա
ղաչեմ զքեզ՝ բարեգութ, ա̄ծ որբոց պաղատիմ,
լուր սոցին ինձ կանխաւ, զի զանագանն մի՛ մոռաս
ցիս։ Դու առաջնորդեցեր ինձ, ըստ սաղմոսողին, եւ
ապրեցուցեր, հանէր՝ ընդ երգողին՝ եւ՛ի կարծեցն
կասկածանաց, յորմէ երկնչիմ։ Իսկ ես չեմ արժանի
՚ի քէն՝ եւ ոչ հասարակական կերակրոյն վարձու, այլ
դու կարօղ ես սովորաբար՝ եւ առ զլլացօղս բարե
գործել։ Ո՛ր են զարմանալիք անճառելի բարեաց՝
միայն հրաշագործ առ ա̄ծ երկրպագութ, ընդ հօր եւ
հոգւոյդ սրբոյ օրհնեալ հանապազ՝ յաւիտեանս յաւիտենից. ամէն։



Եւ

†Ո՛վ Երանին յաւերժական ճշմին հեծութե՝ նորին հաճոյէ, առ նոյն աղերս մաղթանաց բանի։ ՚Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ։

## ✻ Բան. ՂԲ.

1 Եւ արդ՝ ջուր կամաց և կաթ արտասուաց՝
բեկութե հոգւոյս՝ մնացի լքմամբ՝ խոր_
տակմամբ սրտիս հեղեալ առաջի՝ զմարդա
բեկն յիշեցուցանեմ զարամաթացւոյն սամուէլի, զոր
առեալ էհեղ ՚ի սկաւառակէ յանդիման քո՝ ամենա
տես, առ ժողովրդեանն օրինակութի զանձն արկա
նելոյ՝ խոստովանութե և հնազանդութե կենդա
նարարդ դարշապարաց.
2 Եւ արդ՝ ընկա՛լ զայս հիւսուած բանի աղերսողորմ
հեծեծմանց, և հաստատեսցես յայս նուէր բանի՝
անարիւն զոհի՝ թագաւոր երկնի. և օրհնեալ սրբեա՛
զսա մատենի այսր ողբերգութեան. և գրեալ դը
րոշմեսցես յարձան յաւիտեան՝ ընդ հաճոյականացն
սպասաւորութիս։ Կացցէ առաջի քո մշտնջենաւոր,
և յիշատակեսցի ՚ի լսելիս քո հանապազ. բարբա_
ռեսցի շրթամբք ընթերցողաց քոց, և խօսեսցի բերա_
նովք հրեշտակաց քոց. տարածեսցի հանդէպ աթո_
ռոյ քոյ, և ընծայեսցի ՚ի սրահ սրբութե քոյ. խըն
կեսցի ՚ի տաճար անուան քոյ, և բուրեսցի ՚ի սեղան
փառաց քոց. պահեսցի ՚ի գանձարանի քում, և համ_
բարեսցի ՚ի ստացուածս քո։ Պատմեսցի ՚ի յականջս
ազգաց, և քարոզեսցի ՚ի լսու ժողովրդոց. նկարեսցի
՚ի դրունս իմաստից, և տպաւորեսցի ՚ի սեամս զգայու
թեանց. իբր կենդանեօք՝ զի՛մ պատմեսցէ խոստո
վանեալ զանօրէնութի, և թէպէտ վախճան ընկալայց
իբր

իբր զմահացու , որ յարակայութէ բանի սուր սո-
փերի՝ գրեցոյց կենդանի ։ Մնասցէ՛ սա անեղծ
՚ի կամսքս տէր՝ ինձ պատժապարտիս համբարձեալ
միշտ՝ անդուլ դատից ։ անաչառ կշտամբից ։ անպատ
կառ յանդիմանից ։ անխնայելի զարմից ։ անողո-
քելի պարսաւից ։ անհամբոյր ծանակից ։ անմարդա
սիրելի մատնից ։ անփրկելի տանջից ։ անկաշառ կա-
ռափից ։ անխնամելի յոյժից ։ ապառում հրապարա
կից ։ աշխարհալուր բողոքից ։ Փողով մեծութեան
ազդման՝ առանց լռութե և կամ դադարման՝ զխոցս
պարտեացս խոստովանեսցի ։

3 Նոյն գիր՝ իմոյս ձայնիս՝ իբր զիս ընդ իմ աղա-
ղակեսցէ , տարածեսցէ զծածկեալսն ։ հռչա
կեսցէ զդաղտնիսն ։ կականեսցէ զկատարածն ։ հըն
չեսցէ զմոռացեալսն ։ յայտնեսցէ զաներեւոյթսն ։ բար
բառեսցէ զբարուրսն ։ քարոզեսցէ զխորոցն ։ պատ-
մեսցէ զմեղացն ։ մերկացուսցէ զանտեսիցն ։ ցուցցէ
զկերպարանս թաքուցելոցն ։ Շօշափեսցին սովա-
որքն ։ դացին գայթագղութիւնքն ։ յանդիմանեսցին
անձառք ։ քամեսցին չարեացն մնացուածքն ։ Եւ թա
գաւորեսցեն կեանքդ շնորհաց ողորմութե քո՝ Ք՞ս,
՚ի գանձս պահեստի ոսկերացն ցամաքելոց ։ որով՚ի
ժամանակս կենդանականս սկզբնաւոր լուսոյ մտի
գարնայնոյն՝ նորոգման աւուրն պայծառութեան՝
քոյով ցօղով յոդի անձեցեալ ոյսու փրկութե ան-
մահականաւ և անցամաքելի վերամբարձութե շառա
ւիղս ձգեալ խմանալեացն բարեաց՝ դարձեալ դա-
լարացոյց և կրկին ծաղկեցոյց , ըստ քոյինաշունչ
գրոյն յաւստարութեան ։ Նաւ քեզ միայնոյ փրկողի՝

և հոգւոյդ քում հօր խնկակցի՝ միասնական տէրու-
թեանդ և անճառ երրորդութեանդ՝ խորհրդական գո-
վեստիւ փառք և երկրպագութիւն յաւիտեանս ·
ամէն ։

---

+ Ս էրկրորդին յաւելուած չքնին հեծութեան՝ նորին հանճարոյ, առ-
նոյն ասելոց մաղթանաց բանի ։ Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ ։

## ✻ Բան · ՁԹ ·

I Աւ ՏՐ · կենաց և արարիչ · ողորմած ·
գթած · լոյս · երկայնամիտ · անոխակալ ·
մարդասէր · ամենագութ · պարգևատու ·
փրկիչ · օրհնեալ · գովեալ · բարեբանեալ ։ Պարան
ամրութե · պատսպարան վստահութե · առանց նեն-
գութեան բարի · առանց խաւարի ճառագայթ · քա-
ւիչ մեղաց · ողջացուցիչ վիրաց · անհասանելեաց հը-
նարք · անմատչելեաց հպաւոր · անյուսութեան ելք ·
անուն քո խոստովանեալ՝ Այ որդի · և հօր քո ընդ-
քեզ հզօրի և ահաւորի , և հոգւոյդ ամենակալի՝ և
ընդ քեզ երկրպագելւոյ փառք և պաշտօն գոհու-
թեան՝ յաւիտեանս ·
ամէն ։



Բա

† Մ Յերրորդին ցուցեալ ներքին հեծութեն՝ նորին հայցողի, առ-
նոյն աղէտս ձաղկանաց բանի. ՚ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ:

## * Բան. Գ.

1 Բարեբանեալ ես երկնաւոր ; միայն արա-
րիչ, որ ամենակալ. մեծութիւն ահեղ.
գթութի օրհնաբանելի. ողորմութի խոս-
տովանելի. բարերարութի երկրպագելի. խնամակա-
լութի պաշտելի. մարդասիրութի տօնելի. պահպա-
նութիւն խնկելի. բարձրեալ անքննելին. մերձաւոր
կամարար. ապաւէն անկասկածելի. մխիթար սրտից.
փարատիչ վշտաց. ապաքինիչ ցաւոց. սպառումն վե-
հատութեց. բարձումն պարտեաց. փոխարկիչ կա-
րեաց. կարգաւորիչ կրից. յարմարիչ բանից. սանձ-
արկու լեզուի. շրջադրութի շնչոյ. կացուցիչ հա-
գագի. ամփոփիչ խորհրդոց. կրթարան կամաց. առ-
ձանացուցիչ յուզմանց. հանդարտութիւն մրրկաց.
խաղաղութի ծփանաց, որ ունիս զթևոց ամենայն-
թաց իշխանականիս, և իմաստութբ նուաճեալ առ
քեզ դարձուցանես:

2 Գոհաբանեալ միշտ երախտաւոր, որ հեզութբ ան-
հպարտութե երկրպագեալ հանգչիս. տեսչա-
նօք անձառ հրաշիւք՝ յանձինս սրբոց: Թագաւոր
էից համայնից, ամբ ծանուցեալ գթած. սկզբնա-
հայր և նախաշաւիղ սիրոյն ընթացից. Ճանապարհ
կենաց, որ առաջնորդես քաղցրութբ՝ դիմելոյս ՚ի
լոյս վերին: Զեռանկալու մեծ վստահութե, որ ոչ
թողացուցանես գայթագղելոյս ՚ի վայր կործանել.
յուսոյ կերպարան, ճշմարիտ առ հաւատչէին՝ աղա-



չ

չողաց մտանցյոյսնի երևեալ․ ապաւինու̃ն հան-
գըստեան, որ ոչ երբէք մտանես վտանգի դատա-
պարտութե̃։ Աղաւու̃ն շնորհաձիր, որ տաս լիապէս
առանց փոխատրութե̃ փրկանաց․ առատու̃ն աննա
խանձելի, որ քոյին փառաւորութե̃՝ զանարգ նիւթ
հողոյս ճոխացուցանես։ Պայծառու̃ն անստուեր,
որ ճառագայթիւք ահեղ բարձրութե̃ պարածած
կեալ զթշուառս՝ կրկին բարգաւաճ առնես։ Քա-
ւիչ մեղանաց բազմաց, որ զհերքեալս 'ի փրկութե̃
առաջնոյն պայծառու̃ նորոգեալ՝ վերստին վայել
չացուցանես։ Հնարաւոր դիւրահաս առ ա̃մ ան-
բաւ դերամբարձութի յաւէտ յառաջեալ․ ելք վս
տահութե̃ առ խոստացելոցն վայելս․ երանութիւն
անձկալի, յոր զկենդանու̃ն հնչոյս լքանելն է ախոր
ժելի, զի զքեզ գտից՝ կենդանի․ Կամք անփոխա
դրելի՝ առ'ի քաւու̃թի դերոյս զօրացեալ ամենազօ
րելի․ անսխալելի դեղ կենաց, որ և մեռելոց՝ բնա
ւին եղծելոց առնես զսքանչելիս։ Ամենաստեղծ
աներկբայելի, որ զհուրբ կկզեալն, և զհողմով հո-
սեալն, և զժանեօք գազանաց ծախեալն, 'ի քթթել
ական նովին հիւթականութե̃ անպական յարուցա
նես։ Անհաւասար համարձակու̃ն, յորում ա̃ծօրէն
պանծանօք պարծելն է իրաւացի։
3 Հայեաց տէր՝ յերկնից զուարթ քաղցրութեամբ՝
յամենակործան վտանգ նեղելոյս, և արա ան-
դորր հանգստական դիւրաւոր՝ 'ի բազմատագնապս
հեծու̃է․ Եւ զյարուցեալ զումբս սատակչացն,
եթէ սպառազինք ոյսական դժնեայ հնարաւորու-
թե̃ բուռն մարտակցաց պատկանեալ զինուք, եթէ
մե

մեղաց տղեղ՝ և քո առելի կերպարանք, եթէ ցաւոց
և ախտից վասնից և կորստական նշմարանք, մերժես
ցես հանցես հատցես խափանեսցես և հալածեսցես՝
հեռի սահմանաւ խաղաղ տարադրեալ անդարձ ո
րոշմամբ վերստին կորստեանն. և կառուսցես կա
ցուսցես նպաստակ կենաց և ամուր մահարձան՝ ըղ
նշան խաչիդ՝ ապաւինելոյս ՚ի քեզ՝ փրկութիւն։
Այո յոյժ անպարտ և անպատիր և անխաբելի սր
ուեստից ահաւորիդ մեծութ. լուծցին որոգայթքն
դաղմանածածուկ սատանայականք. կապտեսցին մե
քենայքն. վատնեսցին դայթակղութիւնքն. խոյտառա
կեսցին հաղբից դրութիւք. յայտնեսցին երևոյթք
որսոյն. գասցին նենգողին ծուղակք. վերասցին վար
մին վերարկուք. առչորեսցին ոստմանցն բոյսք. նզո
վեսցին բռնաւորին չարաբանութիւք. կորեսցին լար
խաբէութեն ՚ի մահ որսողին. պարտեսցին պատրողին
բանսարկութիւք. պակասեսցին զէնք զրպարտողին.
անկցին սուսերք մահաբերին. սուզեսցին սադրո
ղին պատրաստութիւք. արձակեսցին տուրնք տագ
նապողին։ Մայլեսցին սուտ կերպարանք կեղծա
ւորին. սատակեսցին խոռխատինացն խիստ յարձակ
մունք. ցրուեսցին կցորդութիւնք կերչացն. բա
ժանեսցին ազինք աւազակացն. քայքայեսցին բոյլք
բարբառոսացն. քանդեսցին ամրոցք ապստամբողացն.
արգելցին ամպրոպք յանդգնելոցն. փարատեսցին
փորձողին անձրևք. հալեսցին և ցամաքեսցին եղեամն
աղանդաւորին։ Խորտակեսցին եղջիւր գոռոզին.
մանրեսցին ամբառնալիք դրօշիցն կերպարանաց. փըշ
րեսցին ամբարհաւաճութիւնք հպարտացելոցն. նա

հանջեցի՛ն դիմեցմունք ճակատելոյն. քակտեցի՛ն
միաբանութի՛ք զօրացն բեկեալոյ, թէ անմարմինք և
եթէ մարմնաւորք, փախիցե՛ն ընդ նոյն ճանապարհ
՚ի մի շաւղաց հետոց՝ յեօթն տարակոյս, ՚ի դուբն ինձ
փորեալ՝ ինքեանք ընկճեսցին։ Յեղանակեսցի՛ն ձը
մերունք ձանձրացուցչին. հատցի՛ կապն կցորդութե՛
մշտաջան աւազակին. նողկասցի՛ մասն կոյից՝ համ_
բոյր շողոքորթին. ընդմիջեալ մեկնեսցի՛ն՝ նետաձը
գութի՛ք նեղչին. կասցի՛ ՚ի սասանման՝ նաւ խար_
դախողին. խլեսցի՛ն յարմատոց անտի՛ ատամունք խա
ծանողին։

4 Ո՜ փոյթիդ օրհնութե կենաց, յորում պրկեցար
ա̄ծդ անքննելի. յիշատակաւ բեւեռացդ, որով
՚ի գործի մահուն մածուցար՝ արարիչդ երկնի և երկ
րի. արեամբդ տ̄րունականաւ, որով զվիշապն մեծ
կարթիւ ածեալ որսացար. լեղւոյն դառնութե, զոր
արբեալ՝ զդեղատուութե կորուսչին արտաքս հեղեր.
պատմաբանութե ըղձական ճաշակ կրիցն սարսա
փելեաց, որով զլրբութի հակառակողին ըմբերա
նեալ ամաչեցուցեր. անունամբդ անհասականաւ ա_
մենոյնիւ անթարգմանելւոյդ, յորմէ դողան և դա
տապարտին սոսկացեալ սաստիկ սարսափմամբ՝ բնու
թիւնք ա̄մ երեւութից և աներեւութից, եղիցի՛ն այս
ա̄մ պարգեւք շնորհաց՝ խոստովանելոյս ՚ի պաշտպա
նութիւն, ՚ի բժշկութի և ՚ի քաւութի։ Նու մահա
բեր դառնաթոյն օձին, և որ ՚ի նմա ազդեաց տիե
զերադաւ չարութի՛ն, ՚ի սատակումն եղիցի նորին.
նոյն ինքն ՚ի կորուստ և յանբժշկական հարուած տան
ջանացն՝ սովու մատնեսցի՛, կապեսցի՛ և ըմբռնեսցի՛.

Նղե

Նշղեցի՛ ողորմութե՛ն ստեղծողիդ ընդ իս, և շունչ
ոգւոյս ի՛մ ընդ քեզ անբաժանօրէն կապա մի-
ցեալ 'ի մի.

5 Նւ որ ոք ընթերցցի զայս աղերս ձայնի՛ մաղթա-
նաց գոչման՝ աղօթից հայցման, ծերոյ և տը-
ղայոյ, կուսի և երիտասարդի, և եթէ յաղախնաց ոք
պաղատեսցի ա՟ծ սիրաբար, հաւասարապէս անաչա-
ռութեամբ ընկալցի՛ն 'ի քէն մասն երանութե՛ զար-
տուց ազատութե՛, հաստեալ վերստին յանարատու-
թիւն նորոգ մաքրութե՛, նկարեալ դարձեալ զքոյդ
կերպարան անփոփոխելի։ Նա տիրապէս՝ հզօրա-
բաւոր զօրեղ անպատում անհաս անքննալի, տես-
ցես ատանօր 'ի հառաչանս կողկողանաց այսր հե-
ծութեան, որ 'ի բոլորից շրթանց ընծայեալ քեզ
մատուցանի, վ՟ն հօրքոյ երկնաւորի և բարերարի,
և հոգւոյդ ս՟բոյ փառակցի և կենդանատու՛ի. ատ-
ո՛ւածածնիդ բարեխօսութեամբ, և խնդրո՛ւածովք
ամենայն ս՟րբց։ Զ՛ի դու ստեղծեր զա՟մ. և 'ի քէն
եղեն ամենայնք. և դու տիրես ամենայնի. և քեզ
փառք յամենեցունց՝ միդ յիսկութենէ անժամանակ
երրորդութե՛դ, զուգակցապէս փառաւորեալ յան-
բաւս, և յաւիտենից յաւիտեանս.
ամէն.

+Ս Էրամին ցաւելուհած հրէին հեծութեէ՝ նորին հոնուշի, աս-
նոյն ողերգս համլրանոց բանի։ Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Ա̃յ։

## *Բան. ՂԲ.

1 Տէր գթութեանց եւ ա̃ծ ողորմութեանց.
անուն մեծութեան. ձայն ահաւորութեան.
կոչումն սաստկութեան. լոյս անհասութեան.
բարբառ զօրութեան. ճիչումն հիացման. յուսադրու
թիւն բարերարութեան ամենողորմ քաղցրութեան։
Յորմէ երկուցեալ սասանին ա̃մ բնութիւք եղելոց.
'ի քո սպառնալեաց ահիդ պակուցման՝ սաւառնին
սերովբէք. ամփոփին քերովբէք. պարուրին պարք լու
սակերպից. երկնչին հիացմամբ բոլոր պետութիւք
վերնոցն. նոյնք ցնծան զօրութ̃ մեծաւ 'ի մի նո
ւակատիս բերկրութ̃. զարհուրին դեւք. ընկրկին
չարութեանցն գունդք. պակասին խաւարասիրացն հո
գիք. անդնդոց մատնին հրեշտակք օտարին։ Կա
պին նշանաւ խաչին՝ յարձակմունք դիմամարտին.
փակին 'ի ստորին բանտի՝ քինաւոր ամաղեկացիքն.
անխղճելի հանդուցիչք պաշարին՝ խումբք հակառա
կորդին. արգելլին անզերծ ընդանաւ՝ մահաղէնացն
կաճառք. պնդին 'ի մետաղս ահեղ հրամանիդ՝ այսա
կանացն գումարք. պապանձին կարկեալ՝ ընդդիմա
բանիցն դատակցութիւք. պարաւանդին հիւծմամբ
կորստեան՝ աներեւութիցն ժողովք. անլոյծ շղթայիւք
նեղին՝ առաքելութիւք դերաքրիստոսին։
2 Ահա կարկառեմ մատամբք ձեռին՝ զտեառնադը
րութ̃ նշանիդ 'ի ժամ դիշերիս, որ ոչ մթանա
խա

խաւարաւ անդխոութե՛ ամենեւի՛ն տեսականու՛ի,
քան թէ 'ի լոյս անմատոյց հանգուցեալ բնակես ։
Ընկա՛լ զաղաչօղս վտանգաւոր դոհաբան՝ ընդ պահ
պանութե՛ թեւոց հզօրիդ ․ փրկեա՛ 'ի ցնորից՝ եկս
մուտ պղտորութե՛ց ․ սուրբ արա զզգայարան հայե
լեաց՝ սրտիս նկատմանց ․ ամրացո՛ գօտիւ՛դ կենաց՝
'ի տխրական անրջոց ․ արեամբ քո սրսկեա՛ զշրջար
կութիւնս կոյիցս ․ զհետս ելումնից՝ կաթուածով
կենարար կողիդ զծագրեա՛ ․ երգոցն պահպանարան՝
քառակերպիդ ձեւակերպութիւն եղիցի՛ ․ հանդէպ
տեսութե՛ աչացս ամբարձման՝ փրկականդ քո կրից
խորհուրդ առդիցի՛ ․ ընդ բարաւոր յօրկիս՝ չորչա
րանաց քոց գործի հաստիցի՛ ․ զծառայդ օրհնութե՛
հաւատքյուսոյ իմոյ կախեսցի՛ ։ Որդեւ տէր՝ սովա
զսատակիչն հոգւոց ․ մոյէ՛ անխափան՝ պաշտպանն
լուսոյ ․ և ընդ սաստիկ ծանրուե ցաւոցս՝ և զբեռն
պարտեացս թեթեւացո՛, զոր 'ի լուարանի մոացս ամ
փոփման մահձացս անկողնի՛ ուշաբերեալ զյուսա
հատութե՛ցն դառն պտղոցն՝ խոստովանիմ ամենա
գիտիդ զանհամար մասունս գործոց չարաչար ա
նօրէնութեանցս ։

3 Տանգո՛ զվստահեալս 'ի բազմածուփս աշխատու
թենէ ․ բարձ՛ զտագնապ տարակուսանաց ոգւոյս
կործանման, զդառնութի՛ն ընդ վշտացն ․ զհեծութի՛ն
ընդ կարեացն ․ զանձկութի՛ն ընդ թշուառութե՛ցն ․
ըզհառաչմունսն ընդ խորտակմանցն ․ զբեկութիւնս
ընդ աղշութե՛ցն ․ զթմբրութի՛ն ընդ շլտմանցն ․ զար
բեցութիւնն ընդ յիմարութե՛ցն ․ զթերամտութի՛ն
ընդ խեղադարութե՛ցն ․ զատուցմն սիրոյն, և զհրոյն

ջերմութի աղուական ախտին ։ Օժանդա՛կ լեր որ
կարութե բազմատխուրս տարտամութե, բարեգործ
աջովդ շնորհի · ձեռամբդ նորոգողի · մատամբդ կեն-
սաբաշխի · փառօքդ մշտափայլի · յարակայութեամբդ
անեղծի · երեսօքդ զուարթականի · խնկութբ էիդ-
պաշտելի · բարձրութբդ երկրպագելի ։ Հատո՛ զչարա-
չար հեծութի՝ կորստականս խեղդման, զնոր գիւտ-
չարին զհին խարդախութի բանսարկուին · զօտար
աղտեղմունս՝ 'ի մահ կրթողին · զանյարմարական ե-
րևոյթս՝ հինապաշտօրդեան եղեռնագործին · զառ աչս
ճնարադրութին դժնդակ դիւին · զողոքական բոցա-
շնչութիւն ձգօղ կախարդին ։ Պահեա՛ 'ի տեղւոջ
հանգստեան մեռօրինակ այսր դադարման, յանե-
րևոյթ մտածութեանց · 'ի մանկաւոր սխալութեց ·
'ի մեծագոյն գայթագղութեց · 'ի փոքրագոյն սանա-
ւութեց · 'ի խաբեբայ չար ձանձրութեց ։ Հեռացո՛
զանհանդէպ մտածութիւն 'ի զգայութեց ծառայիս
յանցաւորի, զկիրս բարկելիս · զվարս թշնամանելիս ·
զդիպուածս պատկառելիս · զհետս վրիպելիս · զպա-
տիրս ձաղելիս · զխորհուրդս անդոսնելիս · զաւելորդ
բանութիւնս նշկահելիս ։ Անխայլ հոգւով և անշշուկ
մարմնով զապաւինեալս 'ի քեզ հանդերձեա՛ ,
'ի շնչմանէ հողմոց · 'ի զարկմանէ բռնութեց · 'ի բախ-
մանէ փոթորկաց · 'ի յոստմանէ մրրկաց · 'ի յարձակ-
մանէ գազանաց ։ Ի կափման աչացս՝ հայեցուած սր-
տիս մի՛ ստուերասցի, այլ՝ զուարթասցի՛ պայծառա-
սցի՛ վայելչասցի՝ ընդ քեզ փայլեսցի՝ տէր յս քս ,
լուսաւոր վառմամբ անշիջանելեաւ ։ Բանիւքս սրբ-
բեա՛ զպատսպարանս բազմականիս, 'ի խորամանկութեց ·

Ի



'ի

՚ի զբաղմանց · ՚ի քո անձին յիշատակաց · ՚ի վերնա-
մարտ մտածմանց · ՚ի քրէական մորսութեանց · ՚ի տէ-
րանենդ անշնորհութեանց · յաստուածընդդէմ հերձ-
ուածութեանց : Պնդիւք վերնայնոցդ վերակացու-
թեան լիցիս , պետութեամբք · իշխանութեամբք · զօրա-
ւորօքն անյաղթականաց՝ մաքուր մատակարարաց՝ մե-
ածութեանդ · առաքելոցն՝ աւետեաց աւետարա-
նաւն · մարգարէքն՝ կանխարանօքն · մաղթանք եր-
ջանկացն՝ ՚ի կատարածի աւուրն ընծայեալ : Քնով
նիրհեցից երկիւղիւ ըստ քեզ՝ տրտմութեան , և զար-
թեայց շնորհօք քո՝ կրկին ուրախութեամբ · եթէ
վհատութեան ննջեցից , յարեայց դարձեալ հոգևո-
րական բերկրութեամբ · եթէ ընկողմնեցայց մեղանօք ,
կանգնեցայց վերստին զատեալ ՚ի խղճէ անաղտ ամ-
բծութեամբ :

4 Ով խնդրուածոց ամենահաւաչ ձայնիս հե-
ծութեան՝ միայն բազմագութ , բարեխօսութեամբ
սբյ ածածնիդ , և ամենայն արդարոց , և նահատա-
կաց ընտրելոց : Եւ քեզ փառք յամենեցունց՝ խմոկս
գոչմամբ վերառաքեցեալ սրբովք զուարթնոցն ան-
մահականաց դասուց՝ ՚ի գովեստ հօր քոյ այ մերոյ ,
և հոգւոյդ սբյ բնաւից հաստողի և նորոգողի ,
յաւիտեանս յաւիտենից ·
ամէն :

† 'Ի փոյթն երջանիկ բարեբանութեան՝ ժամահարին խորհըր- դածութեան · ողաչանս եդեալ ըստ հերգաւոսս նուագմանութեան :

# Բան · Գ.Ի. :

1 Զոհանամ զքէն բարերարութ՝ միայն մարդա- սէր, արարիչ երկնի և երկրի, որդի ա՛յ կեն- դանւոյ, այն ինչ զարթուցեալ՝ անձկութբ սիրոյ քոյ յիշատակի՝ 'ի լռութե ննջման՝ փութիւ հը- րաւիրման : Որով բախեալ զձայնարձակութեանցն զաղօթարանս, թափեցաք կանգնեցաք, 'ի վեր յարու- ցեալ 'ի մեռօրինակս թմբրմանէ · ուստի իբր կոչ- մամբ սփոփանաց բանի՝ բերել ձգեցաք 'ի ժամ պաշ- տաման օրհնաբանութն, յանդիման լինել քեզ ու- րախութբ՝ հանդէպ հատուցմանս բեմի :

2 Ահա փա՛ռք քեզ՝ անսահման անուն՝ և անքնին դակելի զօրութի, որ այսքանեօք ննարաւորու- թեամբք՝ ընդ փրկութն խմուս հողացար · զոհա բանեալ աներբ խնկութի, որ կերպարանեցեր հրա- շիւք սատաւրին զհանդերձելոցն նմանութի, հան- դարտ գործեաւ վայելչականաւ փայտի անօթոյ՝ առ- քունս անպարիր՝ սաստիկս որոտացեր : Որպէս թէ ընդ- ծուլութեանս դանդաղութի՝ զյանդիմանութի խրա- տուդ խառնեցեր · 'ի հայրենի սիրոյդ հեզութեան՝ զուժգնութի ձայթմանն յարեցեր · յընդոստ զարկ- ուած երկուց միջնորդաց՝ մարդասիրաբ քաղցր անձ- րևեցեր · ոչ մեղմութբ մեղմական վանգիւ նիրհ- մամբ ընկղմեցեր, և ոչ անխնամաբար ահաւորութբ՝ զառաւապեալ հոգիս զարհուրեցուցեր : Ծննդոցա կան երկրպագութի սաեղծելոց բոլորից, որ այժմէն



ցու-

ցուցեր համայն յոյժնապէս՝ զօրինակահեղ բարբա
ռոյն՝ մեծի աւուրն յարութեան. կենդանացուցեր
'ի դադարմանէ դժոխական անքանութէ. 'ի խնդիր
ելեալ կոչեցեր զպակասամիտս՝ 'ի գիտելիդ ուրախու
թեան. արարեր զնոյն՝ լինել հանդերձից անապատ
հարսինն՝ առ սէր փեսայիդ. երկուցեր փոքր ոյս իր
թանաւ՝ զապարասանին զլլիթխարուի. լուծ սատ՜ար
կրթութե՛ սատմբալլին ուսոյ՝ զայս իր գործեցեր.
վարապան վանիչ՝ չարախօսին կղակաց եղեալ կաղ
մեցեր։ Փառաւորեալ յաւէտ անբաւ բարձրուի
մեծիդ ո՛յ, որ փոխարկեցեր զփոյթին պարտիս՝ յա
զատութի շնորհիդ կենաց. իմաստնացուցեր վերըս
տին դարձեալ՝ զանմարս ցնդեալ՝ հոգեւորական հան
ճարովդ. կարկառ կուձամբ՝ զանբժշկուի հարու՜ա
ծոց օձին՝ առանց մոռացման միշտ թարգմանեցեր.
ընդ երրորդութեդ գծագրութ՝ զկայն երեքկին՝ իմ
մտաւորին 'ի կատարածին սովիմբ կրկնեցեր։
3 Պաղեստ ներբողիս՝ բուրմամբ խնկոց վերատա
քեմ քեզ՝ ամենախնամ, զի 'ի ստապատիր կոյն
բազմատոր՜ածութենէ՝ առաւել յաձախագունիւք
որսացար զանձն իմ պարտաւոր՝ 'ի քո երկրպագու
խորոխտ եւ աչորկու նու՜իրեալ փոյթի՜ս՝ զճշմարտու
թիւնն քարոզեցեր. մեծացուցեր ոյսր պատճառաւ
պատշաճականաւ՝ զնոր աւետարանութեդ պատի՜.
Այն ի՜քն աղաղակ բարձրութ գոչման սպառազէն
նութեանդ. քո՝ ո՜րքոյ պետութեց կոյսերաց երկրի
ո՜ր. քո՝. նշան խրախուե աւարտման հանդիսի մարտի
քոյ՝ յիսուս, յորում իմանալին փարաւոն կապեալ
ըմբռնեցաւ. կափիչ հանապազորդեան՝ դլխոյ դա

գալթան հպարտացեալ չարագործին՝ շերտս այս տա_
շեցեալ․ Սովաւ գումարին 'ի պատերազմի որդւք
սիօնի՝ ընդդէմ աշխարհակալին խաւարի․ տօն իմն
ծնաւանդ կրթութեան կարգեալ 'ի հեռուստ՝ այս
դրօշմեալ իւղեալ՝ առանց ջնջանելոյ և կամ խափան
ման․ նշանակիչ ժամանակի ապագայիցն հատուցման՝
'ի քացուստ անդր ծանուցմամբն․ ազգակից հանդու
նանման կենացն փայտի՝ որ 'ի դրախտին այ․ կոչա_
րան բարւոք հաւաքման փոյթ ընթացիւք՝ 'ի յարկն
օրհնութե․ պատկեր տեսակի տնկոյն գիտութեան՝
'ի կարգ ընտրութե բարւոյն և չարի․ յիշատակ մեծ
տեառնագրութե յերեսս կերպիս հոգւովդ սրբով՝
զնշան խաչին․ նախազեկոյց աւետամատոյց փառաց
գալստեան՝ 'ի դշխոյն պահեալ ոք Թագաւորին․
յորդորիչ քաջալերական՝ մաքրապարիցն խրախճա_
նութեան․ անախտական սիրարկու՝ անձնահամբոյրն
կցորդութե․ շքեղաշուք քողընծոյ՝ ամենածին կուսի
Թագուհւոյ․ յարդարիչ ծածուկ պճնութե, որ 'ի
հոգին է վայելչութի․ նմանութի պատգամին սինայ,
որ 'ի տէրունեացն արտաքս առաքիւր․ միշտ օրիորդ
պանծալի անշաղախ որդւոց մայր անարատից՝ սովաւ
փառազարդէր ։

4 Պերադոյն․ քան զերկքովին փողն եղջերեայ՝ ըղ_
բունին բելիարայ՝ սովաւ հարթեալ տապալե_
ցեր․ քարինս արձակեցեր պարսիւս այսու փայտեայ՝
ընդդէմ գողիադու․ գոյխոն Նորոգ կառուցեր՝ վր_
կոյ ահարկու՝ կործանմանն սատանայի․ զ'ի խոր անձե
ցեալ արմատս մեղացն՝ մեքենայիւս այսու խլեցեր․
զմնացեալ գործոցս իմ պարտիս՝ այսր երախտաւոք
ի


ընդ

ընդ իս կապեցեր։ Ո՞ր եթէ այլ ինձ ձայն բանից
ից անուանեմ նախապատուամ եկաւորութեան՝ ոչ սխա
լեմ, քան թէ ճշմարտեմ. 'ի տկար ամանս այս նիւ-
թոյ հոգեկրի՝ մեծութ գործոցդ քո՝ առաւելապէս
պատմեալ հռչակի. բիւրաւոր օգնականութիս վեր-
նապարգեւս եւ քոյինատուրս՝ 'ի յայսմ անպատապար
ապաւինութ՟ երկրականաց զարմանադրեցեր։

5 Աստուածանէլ անուանդ անքննին՝ մարդասիրիդ բա
րեխնամութեան, խնկեալ խորհրդով սրբանմա
նուէն՝ անդծագրելի կերպարան լուսոյ. որ կրկնա
ձիր նշանաւս այսու՝ նետս արձակեցեր հեռաձիգս
ձայնատրականս՝ օդաչուս եւ յարմարաթռիչս՝ ունօղս
յինքեան հոգի կենդանի. որով անսխալ հանդիպ-
մամբ զնպատակն խաւարային աղեղնաւորին գաղտ-
նութե՟՝ յաւէտ կործանմամբ՝ 'ի յետս ընկճեցեր.
Իբր զպատնէշս ամրաբերձ բերդամարտութ՟ կանգ-
նաւորս անվայրարկելիս՝ աստուստ անտանօր զկտեալ
դիպուածս այս փոյթի զարկման՝ հրեշտակ կամա
րար՝ թշնամւոյն ներհակ վերյուղարկեցեր։ Բանիւ
հրամանի մեծիդ ակնարկութե՟՝ ծութէ՟ շնորհիդ
արեամբ քո խառնեալ՝ զայս եղջիւր խեթկէ՝ մոլի
դոռոզին, իբր զխաչիդ փրկանակ յեսանեալ սրեցեր։
'Ի մեծ աղդմանէ այսր աղաղակի դերքան 'ի վեր-
նոցն՝ քանդեալ վերացաւ դրանդն ամրութ՟ կամաց՝
անվայելուչ եւ ամենքրկշոտ խենեշութեան, կարծա
մոլին, ընդ հրէական սրտին իմաստից՝ եւ ստուերա
կան տանն կործանութե՟.

6 Փառաբանութ քեզ վերընծայեմ՝ անմահ Թագա
ւոր. զոր արարեր եւ հաստատեցեր աջովդ քո հզօր՝



աղա

աղաչեմ զքեզ՝ կրկին ներգործեա։ Անցուցեր սո_
վու հերքեալ առ'ի մէնջ՝ զխէթ դժնդակ խորաման
կութե բանսարկուին․ զտաժանական տապ մեղաց․
զհողմն դառնութե շնչման խաբողին․ զտարր արկա
ծից մահու երկիւղի․ զառ'ի յօդից ցնդմանէ վնասա
կար բերմունս տխրեցուցիչս․ զայլախառն հեծեծու_
թիս թալկացուցիչս։ Յորմէ վերստին քոյինազէն
հեծանաւս՝ օժանդակեալ թեւօք նշանիդ՝ զամպս հր_
րածինս․ զորոտմունս կարկտաբերս․ զցաւագին ցոլ_
մունս հրախառար կեղծաւորութե փչման՝ բազմո
տանի վիշապին․ զսուր սատակման, զճակատամարտ
դիմեցման, զյարուցելոցն 'ի վր վայրենական խոր_
հրդոց, զդիւացն կպքաւս։ Յորմէ զարհուրին յայսմ
իրէ փրկուէ՝ տեղի տուեալ մեծաւ դողու, կկրթ
իմ ծանօթութե յայտնի գիտացեալ, թէ յայս ազգ_
ձայնի յառնէ տր 'ի դատաստան․ Նու խրախուսին
յոդի արութե՝ զրահեալ պնդապէս սուսերաւ հո_
գւոյն՝ ածարեալ մարտիկք ամենայն՝ 'ի ձեռ կանոնի
այսր յիշատակի, որ զամենափորձ հրոյն ընտրութե՝
դոչմամբ անկերպադրելեաւ՝ համօրէն աղանց քա_
րոզէ 'ի յօրինաւոր ապարէզ՝ երջանկաբար նահա
տակութեան ։

7 Հարաւ ահմ փող աւադափող, համբարձաւ սո_
վու ած օրհնութե․ պատմեցաւ սովիմբ ամենայն
երկրի․ հնչեաց 'ի լսելիս բաժանման հեթանոսաց․
ձայն պահապանաց մեծին զօրացաւ, ըստ բանին ե_
սայեայ, եւ 'ի նոյն բարբառ առ հասարակ ցնծացուք․
Յնդեցան ջրոյն առակաւ՝ 'ի ձեռն սորին՝ թշնա_
միք խաչին․ անպատուեցաւ ճաշակն պտղոյ առաջին

փայտին. տօնեցաւ նիւթս այս խորհրդական՝ կենաց
անուանեալ. անարգեցաւ երկաթ՝ առ՚ի պէտս պա_
տերազմի. իբր զբեւեռն Տն՝ ՚ի սանձս երիվարին մե_
ծին նշանի՝ այս փայտ կենաձայն յարմարագրեցաւ.
ամփոփեցաւ օծելս ցպսակ հովուէին երկնային՝ սուր
իշխանուե մարդկային ձեռին. Մ՛է գծեաց ՚ի քար
սաճարին՝ մուրճ ինչ գործողի, իսկ յա̄ծակերտս խո_
րան՝ փայտս այս նուիրեալ ընդ խաչին Թեւոց սրբա_
ցեալ զօրէ. Մ՛է ՚ի գլուխս ամաց, և կամ յեօթ_
նիցս եօթներորդս յոբելինիցն՝ յանկեան ուրեք խա_
փանման փողէ, այլ ընդ ծագս տիեզերաց՝ և ընդ
ծիրս եզերաց՝ ՚ի ծոցս ջուրց բազմուե ծովուց և
կղզեաց նոցա՝ յաճախ սասանութբ՝ անարգել ձայթ_
մամբ իմն ա̄ծայնով հնչեցեալ աւետարանէ. Կոտո_
րեցան սուսերք սատակողին՝ այս փայտի ցուցմամբ,
յանօգտակարէ անտի մեզ փոխաձեւեալ՝ ՚ի խոփս և
՚ի մանկաղս.

8 Մ՛է արձագանք արձանաց ՚ի խորոց ինչ գանձուե՝
խիստ առաքեցեալ, և ոչ դժնդակապէս, ըստ
իմաստակլի ումեմն օտարի, զոր վերաւորեալ. ոչ անա_
խորժ սրուե ընդ ունկն մտեալ, և ոչ զաման ուղղոյն
անկամակուե չար Թնդեցուցեալ. ոչ ոսկերցն փուշ_
խրտուցման՝ յանձն բուսուցեալ, և ոչ մնացն այլայլ_
ապշուե առաջի արկեալ. ոչ զանգակ նիւթոյ պղնձոյ
դանդաչեցուցել, և ոչ քար ընդ վերդս սալի՝ առանց
քաղցրութե առ նոյն զարկուցեալ. Պարփակարան
անխորտակելի նորոյս սիոնի. մի սա ՚ի սպասուցն կազ_
մուածոց արարչաւանդիցն գլխաւորաց, զոր եկեղե_
ցականքս քրիստոնէից՝ ընդ ղեւտականացն՝ զգուշա_


ւո

ւորպէս բարձեալ յանձանձէն. օրինակ ձայնի հրեշ-
տակին, զոր առակողին բան՝ հաւուն կոչմամբ ոյսու-
տեսակաւ զայն տպաւորեաց. նոր գործի շնորհի նո-
ւագարանաց աւետարանին՝ զարթուցիչ հոգւոյն ո̃յ
առ մեղս. քան առ օրհնաբանութի սաղմոսարանին՝ 'ի վե̃ր
եղխսէին : Սկզբնապար նախընթացուն աղէյարմար
ջութակաց՝ բարետաւիղ ողբերգարկութեց՝ բարացու-
ցական բամբռան բառացի բարառնութեց՝ սրինկ նո-
րոդ այլ իմն տեսակաւ առեալ մեզ՝ ընդ ծնոյն փոխա-
նորդութ̃է. ոչ հեթանոսորէն ուրուաձայն ծնչման,
և կամ հրէաբար խակախորհութե, զոր մարգարէն
ւերամբ ազդեցոյց՝ 'ի բաց արա յինէն, այլ զսա սի-
րեաց և կրկին պատուեաց մաքրական տածմամբ՝ ա-
հարկու դիւաց և ա̃մ չար պատահարաց :

9 Նաւ արդ ընկալ օրհնութե̃ յարդեալ գովեստի-
զայս տուր սրբութե̃ ինձ պահպանութի և քո
փառաւորութի. քո պաշտօն՝ և իմ գոհութի. անազանդ-
արուեստ բարձրութ̃՝ արարչական փառաւորութեդ :
Առցէ ձայնդ այդ ա̃ծարեալ՝ ե̃ պատուաստ յօդից-
շաղկապութե, հանել 'ի հոգւոյս զպատիրս դիւաց՝
և զմուտս անիծից՝ և մեղաց ապականութե : Լրաս-
ցես լինել զայս իր՝ նշանակիչ ջնար ջահաւորական՝
անջրելի նամակ՝ ջատագով անխափանական տրու-
նական տնօրինականաց : Լհա պարգևեա սովա՝
բարեդութ, աղաչեմ հզօր՝ կրկին մեզ շնորհեա
պահպանութի 'ի դիմամարտից՝ յաներևոյթ և յերևելի :
Ընձեռեա մեզ ձեռն ամենայի, որ բանիս և մատու-
ցանես պատրաստաբար բաշխմամբ 'ի մասունս բաղ-
մապիսիս, օդոց քաղցրութի. անձրևաց շահեկանութի.
պա

պակասեցի՛ն քոյով հրամանաւ ոյսու բարբառով՝
հողմ տապախառն, շնչումն ցաւաբեր, յարձակմունք
հի՛նից չար խարդախունեց. սովաւ խափանեցի՛ն ամ
դիմամարտութի՛ք զինու՛որութեց՝ դժնեայ մատնչին.
հալեցի՛ն հատցի՛ն և մեռցի՛ն յերջանիկ ձոյնէ՝ օ
ծեալս այս փոյտէ՝ որդն և ուտիչն, և ամ նմանք սո
ցին, որ 'ի մերոց մեղաց զօրացեալ՝ ընդ մեզ պատե
րազմին: Արմատացն մեզ սովաւ տունկ երանու՛ն՝
զյուսոյդ 'ի քեզ մեծ պաշտպանու՛ն՝ սանըղծիչ բոլո
րից տէր արարածոց, զայս ծառ սաբեկայ, որ ունի
կախեալ 'ի դիտակ ոստոցն՝ զաւանդ մե նորոդ՝ այժ
մու փրկութեա ծաղկեալ քև՝ քրի՛ստոս, 'ի պտուղ
կենաց անմահականաց: Փախիցեն յանհուն հեռաս
տան խորին խաւարի՝ այսր փոյտի փառաւորելոյ բա
րեզեկայց ձայնարձակութե՝ նէսարք ներհակք ստա
պատիրն սոորնականաց՝ բազմաձեռնեան խարդաւա
նողաց: Մերժեսցի՛ն սովաւ 'ի յանդոց՝ պտղատոհ
մական արօրադրութեանց մերոց սահմանաց՝ և 'ի քո
մշակեալ կենդանի երկրէ՝ վէրք վատնիչք, և հոյլք
մորմիքեցուցիչք. կորեսցի՛ն սովաւ՝ յաւելու՛ածք կրկ
նատեղ և անվայելուչ պատահմանց՝ 'ի հնարից չա
րին 'ի մեզ յոյոնելոց. խոկապէս վանեսցի սովաւ,
որք յերկպաքանչիւրոց բնութեցս մերոց վերերևին
ինքնասատեղծու՛ք՝ մերձաւոր դաւաճանողաց, յու
մեմն օտարին վրիպակ մտածմունս, և յոյլումն գարշ
դոյութիւնք՝ անմաքուր զեռնոցն ապականողաց:
Փրկեա տէր յն աղաչեմ զքեզ, փրկեա բարերար.
կարկառեա առ իս զաջդ ամենազօրդ, և օգնեալ ինձ
սովաւ՝ զերծո զիս յամենեցունց ընդդիմացողաց:



Խառ

10 Հաւանեցի՛ միացի՛ հրամանքո ՚ի սոյն՝ առ՚ի փոխարկել զանդամանդեայ սիրտս յիմարեալ՝ ՚ի քոյին բանիդ արդիւնաւորութիւն. հարցես մխեցես զայս նեցուկ հրաշից քումդ սքանչելեաց՝ ՚ի սիրտս ծորեալս և յոդիս լքեալս, և հաստատեսցես կազմեալ պնդապէս՝ ՚ի կոյումն ուղիղ անսասանելի. իսկ զանբըն-դատն կակղացուսցես զարթնուլ և զգաստ լինել յոդի հեղութեան՝ ածաւանդ քո պատուիրանիդ, ոչ զպօղոսն և զմատթէոսն. Յիշեցո մարդասէր պատուեալս այս փայտին՝ զերախտիս խաչիդ, որով զանձառն ներգործեցեր. բարձ յինէն՝ կեցուցիչ, ըղվտանդ պարտեացս՝ պանծալի լծակօք ամբառնալեաց նոր տապանակիդ. Բացցի՛ն կամօք քո՝ հզօր, ՚ի յայս ձայն կենաց՝ լսելիք սրտից յամառեցելոց. լուիցեն յայս մեծի բարութեան քումդ ակնարկութեան՝ ականջք խլից. պարզեսցին ՚ի ձեռն սորին՝ լեզուք համրացելոց. լուսաւորեսցին ՚ի սոյն՝ տեսարանք աչաց, հայել մաքրապէս ՚ի քեզ պշուցանել անայլայլաբար. զղջասցին դարձցին կազդուրեալ՝ կամք յափրացելոց. ընձեռնել տացես տէր՝ տաղնապելոյս՝ անձրև արտասուաց.
Լուիցի՛ քև սա մեզ՝ լուր ցնծութեան. ձայն ուրախութեան. բարբառ բերկրութեան. նուագ հանգստեան. նիւթ երանութեան. պատճառ փրկութեան. առիթ քաւութեան. մերժումն վշտաց. խզումն խեղդմանց. ընդարձակութիւն նեղութեանց. համառօտումն խեթմանց. հալածումն հեծութեանց. թեթևութիւն թառաչմանց. յապահովութիւն կարեաց. կարգադրութիւն կրից. սփոփութիւն վհատմանց. բժշկութիւն ցաւոց. տեսկանութիւն հեղգութեանց. ուշադրութիւն անտեսիցն.
՚ի

11 'Ի յոյս կամուրջ ցանկալի անխոտոր և անխոտորնակ, և 'ի վերնաշաւիղ բարձրաբերձ սրբասեա սանդուղ երկնաչու, առ հայրքո օրհնաբան ահաւոր անուն՝ ձգեալ մատուցեմ՝ բարեբար, հոգւոյդ առաջնորդութե՜ միանալ 'ի քեզ անընդմիջելի. որով և ընդ մի՛յ՝ միոյնոյ և միասնական ա̄ծութեանդ 'և անեղծ արարչութե՜դ՝ 'ի կենդանեաց և յանշնչականաց հաստելոց՝ վայելչական գոհութե՜ փառք և իշխանութի յաւիտեանս յաւիտենից. ամէն.

---

† Ս ժէրագին յաւելուած յիշեն հեծութե՜՝ նորին հոյակապի, առ նոյն աղէրս մաղթանաց բանի. 'ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա̄յ.

## * Բան. ԳԳ.

Աղօթք բարեխօսութե՜ ա̄ծ սրբազնոյ եկեղեցւոյն Քրիստոսի.

I Սու՛րբ ահաւոր անուն՝ բարձրեալ անպատում. անձկութե՜ փափագ յարախորժելի. 'ի սրբերգենիցն փառատրողաց միշտ սրբաբանեալ՝ բնակեալդ 'ի սրբում. լի և ամենալզեղուն բարութե՜ առատաձեռն աններհանելի. լոյս բարի, և ծագումն գովելի. երկրպագեալ փառաւորելի, ահեղ և անզննելի. ամէն և յամենայնում: Այսու բանիւ դաշամբք յուսոյ՝ ուխտ ընդ քեզ միութե՜ հըզօր, այո՛, ամէն, ալէլուիայ. գովեալ թագաւոր հանուրց. ա̄ծ բոլորից. ստեղծիչ գոյից, և տ̄ր կամարար. միայն առիթ պատճառաւորաց. փրկիչ և օծեալ մշտապաշտելի:

2 Սուրբ մեկնապէս թարգմանել 'ի մեզ զայս գանձ անլռմանս՝ և հարստութի անփոխադրելի՝ յո՞ քո՞ արքայ երկնաւոր. որում գոլութե՞ մեծաւ սպասեն անմահականացն ոհեղից լուսաբերան բազաշնչութիք, կրկնեալ քեզ յօժարութ 'ի հաճութեանէ անխոտոր մտաց՝ ծանր գոհութե. ստեղծող էութեց, որ են 'ի տեսման և 'ի ծածկութե : Որ եսդ և էիր միայն բովանդակ՝ ամենեքին անպակասելի. առեր զմեղս խակապէս հանդոյն, զի 'ի լրութէ քումմէ լցուցես. օրհնեալ և բարեբանեալ՝ ծանուցեալ յաւէտ միշտ անքննութեամբ ողորմութե մեզ 'ի փրկութիւն, 'ի փառս և 'ի գովեստ անճառ բարձրութե՝ ահաւորին բարերարութե, սկզբնածին օծմանս շնորհի՝ մեծա խորհուրդ հրաշազարդութե. Քանզի լոյս քո մեզ ծանուցեալ՝ ճառագայթ անհաս. ծագումն անսահման. արեգակն անաչառասփիւռ. աստղ սահմանից՝ երկակղեա տարրութեանց. ճրագ ոտից՝ և լոյս հետևմանց, որով 'ի ցոյցս իմաստից եկեալ տեսութե՝ բանիս այս յարմարութե, տօնեմք պարերգութե հրեշտակօրէն յստակամտաբար՝ փրկչավայելուչ կնդրկախնկեալ զպարգևաբաշխ առատատրութի ամենիմաստից՝ յիւղ զուարթ անբիծ դաւանման. Քանզի 'ի սկզբան անդ՝ կապտեցելոյ ողորմելի տխրականութեամբ՝ 'ի փչմանէ բարձրագոյն շնորհին՝ հոգւն իմ սկզբնատեղծ՝ և ծնացեալ յաւէտ մեղայն գերմամբ, 'ի մահ գրաւեցաւ. կապեալ ընդ եղծման ապականութե անզերծ հանդուցին, 'ի ծառայն պատճառաւորեալ՝ յանկումն անյարիր ամենակործան գըլորման, հերքեալ 'ի լուսոյ՝ այսր խաւարին վայրի
մատ

մատնեցաւ . իսկ դու գթած ո՛ր ողորմութեան ,
քանզի յաւէտ քան զնոյն ծանեար զոր ստեղծեր ,
և զի չէիցն ակնկալութեամբ՝ չեկաց յոր ինչ էրն ,
որով անկարողանայր խնկապէս տեսանել 'ի լոյսն վե
րին անմատոյց գերակայութե անսահմանելույդ, ո՛չ
մշտափայլ յարակայ վառմամբ անաղօտելի տարածա
նեցեր , այլ գիշերայնոյն ստնալպիրծ մթին արհաւ
րաց՝ ձեռնկալութի ձիթոյ՝ շարամանութբ նիւթոյ
պատրուկի ընդ նոյն զանգելոյ՝ յօրինակ.քո անախտ
միութբ ընդ մեզ խառնելոյ՝ մարդասիրապէս հիւ
սեալ կազմեցեր . զի որ 'ի սուրբերս մահու տարա
գրըրեալ գտայք՝ կանխակորուստ տնկոյն պարտեաց ,
'ի պատճառ իւրին՝ ազդակցաւ պտղոյն ջահաւորեցել
հաւատոյն վառմամբ՝ 'ի նոյնն դարձցուք խնկաւորու
թիւն . ուր և փայտիւն մահու՝ մածմամբ.քո 'ի նա՝
ածեալ մածուցեր զմեզ, առակաւ մեծի խորհրդոյն՝
միաւորեալ 'ի փայտն կենաց :

3 Նաւ արդ՝ որպ ո՛չ է որ լոմամբ՝ առանց գիշերոյ ,
և ո՛չ տնօրէնութի յարկի՝ առանց ձիթոյ պի
տոյից խնդրոյ . քանզի իբր օրինակն հասարակային
ոչ նուիրաւոր՝ զմարմնաւոր աչաց տեսութի լուսա
ւոր առնէ , նոյնպէս և մաքրեալն քոյինաշունչ շը
նորհին՝ ընտրութեամբ անխմանալեաւ՝ զաներևոյթ
հոգիս միութբ 'ի մեզ անտեսիդ՝ հրաշափառապէս
պայծառացուցանէ : Ո՛ է որպ յիջուածն լուսարանի
ոք տաղանդին՝ լուացմամբ մարմնոյն՝ զանձին հա
ւատամք առնուլ սրբութիւն , սոյնպէս 'ի յօծումն
իւղոյն պարարեալ յուսով՝ զհոգւոյն զօրութի սը
վիմբ և 'ի սոյն՝ համարիմք ունել ո՛մն անեղկմանելի :


Նաւ

Եւ ոչ հրամանդ տրունական օրհնաբանելի՝ զքա-
ւութի մեղաց ախտացելոցն նախամեծարէիր. իսկ ոչ
հաւատ ունողացն առ այն բժշկութիւնն հրաշալի՝
յանդիմանակաց անտուստ առ նմին մարմնոյն տե-
սակի՝ հաւատարիմ վկայ անդարձելին հաստատէիր,
այնպէս իւղս այս փրկութեան լուսով կատարեալ՝
հեղեալ ՚ի մեզ օծանէ զարտաքին խորանս. իսկ ըզ-
ներքին մարդս աներեւակ՝ ծածկապէս մտեալ նոր
կենդանածնէ.

4 Պատկեր պանծալի այս զանդունած նիւթոյ՝ ա-
րարչեր երկնի. քանզի որք զնոյն կրեցին օգտութի
որ յողորմութէն շնորհընծայուի, եւ դու ՚ի գովեստ
քեզ զայս բան սահմանեալ, թէ ողորմած եմ ես Տր.
քանզի ոչ սիրոյն անուան կցորդիս Ած, նոյնպէս ՚ի
մասնէ եւ այսու զիջեալ դծաղրիս՝ ըստ տնտեսութեն
որ առ մեզ: Վեհագոյն մեծութե խորհրդոյ յարմա-
րաւոր դիմակերպութի՝ այս ճարպ պարարտութե՝ երկրի
թանձրութե՝ հողանիւթ գոյականութե. զի ոչ սոյն
մասն ՚ի կենդանեայն՝ ոչ ՚ի կերակուր հրամայիւր անդ՝
ըստ օրինին, այլ արարչութեանդ բոլորովին պտուղ
որոշիւր, նոյն նմանութե եւս եւ աստանօր՝ իբր ըզ-
զօրութի տն մատչելի յոյս աւանդ՝ հաճու էիդ
Այ վայելչապէս տուեալ նուէրի, հոգւոյս հարազատ
զուգաճանապարհ, արարողին պահեալ եւ ուխտեալ.
քանզի ոչ շունչ արեան՝ եւ ոչ ձենձեր ինչ զուար-
թութե՝ օրինակ հոգւոյս իմոյ եւ կարոյս՝ ընդ ան-
դամաթիւս մնոյն ծախի, այլ արգոյութեդ վերնում
վիճակի՝ տրունական բազմականին ձօնեցեալ ճաշակ՝
այս նիւթ ջահաւորական մշտաբորբոք անաղօտելի.

5 Ո՛չէր մատչելի 'ի նախադահութի՟ արու անդրա-
նիկն՝ դատիչ քննողաց, եթէ ոչ օծմամբ ինչ
նշանակէր. ոչ քահանայութի՟ 'ի յանկոխելին տեղի
ձեռնարկէր, եթէ ոչ յուսու կատարեալ լինէր.
Յակոբ զքարն պատկեր վիմին՝ 'ի խորհուրդ երկար՝
լորանին ընտրութե՟ օծմամբն տպաւորեալ կերպա-
ցոյց. առ որ զիջումն անձառ բարձրելոյդ՝ տեսութե՟
սանդղոցն յարմարութեան, և զելս 'ի վեր տանելոյն
անդ ուղեկցութե՟ն, զարձանն իւղեալ կառոյց նպա-
տակ՝ 'ի ցոյցս ապառնեացն յիշատակի։ Ահարոնեան
քահանայութե՟ն պաշտաւութի՝ հրամանաւ մեծին
այ՟՝ օծմամբն ճոխանայր. որով 'ի գլխոյ անտի 'ի մօ-
րուսն զեղեալ՝ գերափառ իւղոյն՝ զարմանագան կեն-
դանագրու՟ի, ըստ սաղմոսողին, զփառաց նախնւոյն
առակէր զանդրադարձութիւն, և զշնորհիդ կենաց
սրբութե՟ ընդ մեզ խառնութի. Թագաւորու՟ի
ոչ էր պանծալի անդանոր պատկերաւն ստեղծագոր-
ծիդ, եթէ ոչ եղջերբ իւղոյն օրհնութե՟ ձեռնադր-
եալ՝ պսակաւ պճնութե՟ թագին՝ յանուն քո քս՟
գլուխ ամբառնայր։ Նու զխորհրդ զնախնին վեհից մա-
ռացոյ՝ զծառայն մեծիդ՝ և զկերպարանն անպարա-
գրելւոյդ. ոչ ահա մելքիսեդեկ՝ յօրինակ ճշմար-
տիդ ահաւորութե՟՝ 'ի ձիթաստանեաց լերինն, ուր
յետոյ ոտք մարմնացելոյդ այ՟ զետեղեալ կացին, 'ի
վերնոց անտի հրեշտակաց՝ 'ի պտղոց տեղւոյն իւղե-
ցաւ. ուստի շիրմի սկզբնահօրն պաշտպան՝ եպիսկո-
պոսական արքայապատիւ ճոխու՟ի՝ 'ի քէն հանդեր-
ձեալ նստաւ, մինչև յայտնեցար երևեալ լրմամբ՝ հա-
մայն խնկութի ադամայինն կենդանագործութե՟դ։

6 Եւ արդ՝ քանզի քո են շնորհք, և քեզ վայելեն
գոհաբանութիւնք՝ օրհնաբանեալ որդի Այ, դու
ինքն յարմարեա՛ բարեհնչմար տպաւորութբ զաղաչանս
իւղաւորականս՝ խնկապատարս՝ զմռսալիս՝ պատճառ
քեզ փառաց, և ինձ մեղապարտիս առիթ բժշկութն.
Մատո՛ տէր յո՛վիրացս աներևութից՝ զայս ձէթ լու
սանութ. և արկ 'ի սոյն խարանս խոցոյ մահացուի՝
զկաթուած օրհնութն իւղոյդ փրկութն՝ անապակ
գինեաւ սիրոյդ, միութբ արարչականաւ պատսպա
րեալ պատանօք խնամոց. զի յիշատակարանս Թարգ
մանօրէնս բանիս մաղթանաց՝ վայելչական իմն յար_
մարութեամբ՝ 'ի Թևս հոգւոյդ զկարգ իւր գտցէ.
'Ի վր դաւթի հոգի քո բարձրեալ՝ յայնմ օրէ խա
ղաց, յորմէ օծութբն նուիրեցաւ. Սաւուղ յայր
յայլ և 'ի մարգարէս ոմանս անտուստ իսկ գրեցաւ,
յորժամ օծումն ժամանեցաւ գագաթան նորին.
Արքայութին ասորեստանեայց՝ օծմամբն գրաւեալ՝
մատուցաւ 'ի կցորդութի տանն իսրայէլի. Կայսերս
ոմանս նշանաւորս վեհս և երևելիս՝ 'ի խժականաց
բարբարոս ազգաց՝ իւղս այս կենսացնցուղ ցօղով
անձրևեալ՝ իբր կարթիւ որսացաւ 'ի յընտանութի
հպատակութեան մեծիդ Այ. Բանն որ առ կիւրոս
երկնաւորին պատուասիրութն՝ զօծեալն ձայն՝ նմին
մեծ վարկաւ. Զայն սաղմոսողին՝ դեր քան զմար
դարէութի՝ զօծեալն անուն նախայարմարեաց, կա_
նոնափակ ընդմիջարկութբ պատուէր աւանդեալ,
մի՛ մերձենայք և մի՛ մեղանչէք. Որ հեղիաս առա_
քելութիւն՝ ածայինն հրամանատրութեն, նշանակ իմն
հանելոյ 'ի պաշտամանէ անտի բահաղու, զօծելութին
ԻԱ. 'ի

'ի Քորէբ ազդեաց յեուայ և ազայէլի ։ Իւղ թա_
փեալ անուն փեսայիդ՝ 'ի հոգելից բանից իմաստնոյն
վերաձայնեալ՝ կանխաւ խոկ գրեցաւ. որով զի հոգի
ա̃յ յաւէտ պատկեր և նշանակիչ, զի փ. քուս զմեծդ
կերպարանուն. քեւ նկարագրեալ՝ ընդ քեզ միացուք
առմամբ քո շնորհիդ ։

7 Նա զի՞ես երկար՝ պատուածորէն՝ բացակա
նագոյն՝ դծագրականս և առակաւորս շարա
գրեցից առաջի վերնոյդ և ահաւորիդ մաղթողական
բանաստեղծութիս. տէրդ և կենդանարարդ՝ արա_
րիչդ երկնի և երկրի՝ 'ի յօծմանէ անտի սկսար քա_
րոզել զաւետարանն արքայութե. վկայեալ անտուստ
'ի յոհաննէ՝ օծեալ և դառն ա̃յ՝ բարձող մեղաց աշ_
խարհի ։ Զի թէպէտ ընդ օծմանն օրհնութեան՝
հոգւոյն էր քեզ խնկաբար լռմամբ, և ածուածն իսա
նուն բովանդակապէս, այլ անուանն պաշտի խորհրդ
դեամբ շնորհին հրաշափառապէս ազդելոյ 'ի մեզ,
զի զարկուն ադամեան մարմնոյն մեծանալ յաւէտ
ոյսու յորջորջմամբ պատրաստ արասցես ։ Բացեալ
զառածս մարգարէութն եսայեայ՝ դու նիքն ածու_
թին մարդացեալ՝ ընթերցար, հաւատարիմ առնել
զբան ծառայից քոց՝ տէր. և իբրև ծանուցեալ ե_
ղեր օծութէն 'ի կարդ անդ բանին, թէ հոգի ա̃ն
'ի վերայ իմ՝ որով և օծ իսկ զիս, ապա փակեցեր 'ի
հանդիսատիպան օծելութէ՝ զոչքանուն երկաքան
չիւրոյն յոյս արարեալ խորոցաւ սահմանի՝ ընդար
ձակ հեռաւորութե մեծաւ կնքեցեր, զմերս՝ կաթ_
ուածով քնչ շնորհազարդեալ, և զքոյդ՝ խոկութե
ընդ հօր՝ և ս̃բ հոգւոյդ հաւասարութե թարգմանեալ ։


Ի

'Ի նախածանօթ մերակերպութեանն՝ պանծալի իմն գովեստիւ օծեալն կոչմամբ՝ 'ի հրեշտակացդ փա-ռատրողաց՝ արարածոց երկրի ծանուցար. Ո՛ որ մարգարէն կանխաւ գուշակեաց զ'ի յորդանան, և յընտ-րեալն լեառն Թաբօրական՝ հայրենի ձայնիւդ եկա-ւորութի, թէ որ պատմէ 'ի մէջ մարդկան զօծեալ իւր. Ո՛ որ սաղմոսին ձայն կանխաւ պատմէ՝ հը-զօրիդ փառաց զայս պատիւ՝ առ 'ի զատեալդ ձեռ-նադրելոյ, օծ զքեզ ած՝ ած քո իւղով ուրա-խութեան.

8 Հոգի երեսաց մերոց տր քս. որ է օծեալ անունդ-իակոյն, որով զփչումն կենդանութե 'ի դէմս մե-րոյս՝ բարերարութեդ քո աղդեցեր. իմաստութե ու-մեմն երջանկի մարդասիրութի խոստովանելի, ասէ-լով առ ոմն, թէ եդ վկայութի առաջի տն օծելոյն. զնոր աւետեացս վկայելով, թէ կօշիկս անդամ ոչ առի յամ մեծղեաց. Երգոցն երգ՝ իւղեփեցական գինի՝ զատտուծով ծանուցեալ զխորհուրդն 'ի գո-վեստ հարսին տր եկեղեցւոյս՝ զմուռս առաքինու-թեան հանդերձ ամ առաջին իւղովն. և ես զմուռս և կնդրուկ մաքրութե վարուց ամ փոխեաց անուշից՝ իւղովքն զանդեալ՝ անդստին և այսր յառաջաբե-րեաց. Դանիէլ զկենսատու մահու քո՝ քս թա-գաւոր երկնի, 'ի վեր քան զօրինակ կոչումն ձայնի՝ զայս անուանադրեալ վկայեաց յայտնի, թէ զկնի վախճանն և ինն եօթներորդացն՝ սպանցի օծեալն, և օծեալ առաջնորդ զքեզ յորջորջեաց. Ճրագակիր աշտանակն զաքարիայ ադդուէլոյ՝ որ 'ի բարեբերոյ՝ իւ-ղոյն բարեբաշխ բացատրութե՝ 'ի մաստունս եօթանց

առա

տռաջադրութեց գնդիցն վառելոց՝ 'ի ջահէ անմի
զօրութե անեկամտաբար վիճակաւորեալ, զ'ի քաղ
ցրութէ 'ի մեզ փրկութի և օծելուն գերաբնապէս
նախագծեկուցեր : Ո՜ որ ըստ օրինին անտուստ դա-
շակմամբ 'ի խորանին որ 'ի տաճարին՝ ամէնընդեղ իմն
կրթութե սովորաբար մատուցեալ լինէր, պանք,
բաղարջընծայք, և նաշիհք՝ իւղովք խառնեցեալք,
և զոհարտկք եղանց իւղարկեալք, և տերական ան-
ուամբ ձօյնեցեալք, և հաւուց ոմանց թաթաւմամբ
յաղդակից ճարպին 'ի յարեան, այսր խորհրդոյ առ-
ձեռն տեսակք և նշանակիչք յարմարանք քեզ՝ մեծ-
ծին ծնունդ օրհնաբանեալ մեծիդ հայ. միայն դու
օծեալ նորոգ և զարմանալի՝ ինքնութեամբ համայն
էութ՝ իսկապէս լրմամբ Ամե անպակասելի :

9 Եւ զի՞ ես իցէ բազմապատիկս նշանակել առ այս
մեծ խորհուրդ անհասանելի, և ո՛չ ճաշակել
զքեզ՝ քաղցրութ. իմանալ քև զայս՝ թէ զի՞նչ իցէ
իւղն, եթէ ո՛չ զոխրութին 'ի փայտն պարտեաց՝ սը-
վիմբ բժշկեալ, ըստ սաղմոսողին, զուարթ գործես
ցես : Եւ զի՞նչ պարարտութին, եթէ ո՛չ զկերա
կուրն մահու՝ սովա մոռասցուք լցեալ 'ի սմանէ :
Եւ զի՞նչ օծութիւնն, եթէ ո՛չ զմխրոյն թշուառ
տեսութին՝ 'ի ձեռն սորին փոխարկեսցուք 'ի պայծա
ռութին յաւէժ ուրախութ. անուամբ քո փրկեալ
յոգի զօրութե՝ հօր անուանեսցուք : Եւ զի՞նչ
արդեօք մարգարէին հոգևոր ըղձականութի ամե-
նատենչ բաղձանացն իցէ իմանալ, որոյ ծերութին
առակի 'ի ձէթ պարարտութեան, և կամ օծանելն
իւղով զգլխոյն վերամբարձութիւն, եթէ ո՛չ զհին


խար

խարդախութի ազոյն սասանութե ՚ի մահ կործան
մանն՝ կենագործեալ դեղովս այս կենաց՝ պատսպա
րեալ օժանդակեսցես ։ Եւ զինչ ճրագին լուսա
ւորելոյ շնորհակալութի, եթէ ոչ՝ ՚ի մէջ իմն անյու
սութե մեղացն միգի և կռապաշտութեն խաւարի՝
կերպակցապէս միութ ՚ի յիս Էմմանուէլ ։ Եւ կամ
զինչ մարգարէն ածաբանեալ ՚ի սփոփանս զուար
թարարս օրհնութեան՝ նշանակ յայտնի վայելչապէս
ոմանց աւետէ, օծցին իւղով ՚ի մրրոյ պարզելոյ ։ և
կամ իմաստունն՝ ՚ի դիմաց հարսինն՝ ասէ օրիորդացն,
հաստատեցէ՛ք զիս իւղով, և գեղեցկազարդ խնծո
րով յարկեալ ծածկեցէ՛ք, և ՚ի պարտէզ իւղենեաց
տածեալ դրդեցէ՛ք, եթէ ոչ՝ այսր ահա ընտրական
նիւթին՝ հոտուտ քո լցեալ՝ ՚ի սոյն լոյս տեսցուք
զանիմանալիդ ՚ի մեզ բարձրութիւն՝ գովեալ ։
Եւ արդ քեզ միայն՝ խնամակալ, պատճառ բարի բը
նաւից եղելոց, ձեռն համբառնամ տարածմամբ բազ
կացս՝ երկկամանցս գործակցութ՝ սրտիս հեծութ՝
լեզուիս և շրթանցս ձայնարկութե, լուր ողորմու
թեամբ՝ տէր, պաղատանացս խնդրուածոց առ քեզ
կարդալոյս ։ շնորհաւորեալ այսու պարգևօք՝ գոհա
բանութի քեզ վերընծայեմ՝ հզօր ահաւոր բարձ
րեալ անքննին, անփակ փափաքմամբ միշտ համբու
րեցեալ, սուրբ սուրբ և միայն միշտ սուրբ, որհ
նեալ հանապազ յաւէժ անդադար երգաձայնութ ։
Ընձեռեա առաւել բարերարութ խաղաղ վրիպե
լոյս ։ տուր յոյս քաղցրութե՝ ոչ մասին միոյ մասու
ման լուսոյ՝ արժանաւոր ինչ հանդիպելոյս, լայնել
քև բարի զնորբութ ծածուկ խորհրդոյս՝ դրդութ
իմ  խառ

խառնեալ ընդ աղերս՝ ասել ընդ դաւթի, ընկալուք
տ՛ծ զողորմութիւն քո, և զծածուկս գաղտնեացդ ան-
տեսից՝ իմաստութ՟ քով յայտնի արարեր.
10 Եւ արդ՝ մեծութիւն քեզ՝ ամենակալ առատա-
ձեռն աննուաղելի՝ ամենափոյթ առ ՚ի գթութ՟ի՝
մշտայօժար ՚ի բժշկութիւն, զի միացուցեր խառնեցեր
ընդ մերձաւոր դիւրագիւտ ընտանի նիւթոյս՝ ըզ-
հրաշս անճառս քումդ սքանչելեաց ահաւորութե.
Քանզի զոր երկինն տ՛մ բարձանց՝ երկրիս լայնութ՟՝
և անդնդոց ներքնոց խորութ՟՝ ծովուց բազմութ՟՝
ոչ զօրէ տանել, այլ իբր զդոյզն ՚ի մեծէ բերի, ՚ի
փոքր դոյս տեսականեցեր զօրութ՟՝ սահմանեալ
ճշմարտապէս անհրապուրելի. զի մ՛ նորոգ իմն ե-
րևելով յայլ էութե՝ առ աչս հարևանցի երևակա-
նութի ինչ վարկանիցի՝ վիրաւորել, քան թէ բժշ-
կել անընտրաբար զկարծիս մեաց. Քանզի ոչ մար-
մին՝ քեզ հաւաստապէս՝ օրհնաբանեալ որդի ա՛յ, խը-
կութի և ոչ օրինակ՝ ՚ի յարդեանցն ցորենոյ ալար-
չապէս միշտ հանդերձեցեր, և կայլակ կողիդ՝ զա-
րեան խաղողոյ, և արդանդ կենաց հոգևոր ծնըն-
դեանն՝ զառատութի ջուրց յոլովութե, նոյնպէս
հոգի անմահիդ փչմանն՝ սովա և ՚ի սոյն արդիւնա-
ւորեցեր երկունս կենաց, որոյ կերպարան՝ յառաջ ե-
կեղոյն, և ոչ հեթանոսութ՟ է փոխարկութի. որպէս
ոչ տեառնագրութե խաչական փայտի ինչ երկրոր-
դութի՝ նստելոցս յերկրի խաւարի՝ ըստ նմանութե
քո տ՛ր ծառայեցեր. Քանզի յայս կերպարին շնորհի՝
զանպակաս լրութ՟ անհասից յայտնեալ աշխարհի լու-
սաւորեցեր, զի մ՛ տնանկն կարօտասցի՝ և մ՛ ընչեղն



բարձ

բարձրամոնեացն, ըստ օդոյ հաւասար բաշխման, և լուսոյ արեգական տարածման, և ջրական վտակաց զեղման. զի հաւասարապէս բաշխիւր երկրածնաց մանանային զուգամասնութբ՝ փոքունցն առաւել, քան մեծամեծացն:

11 Իսկ այս նիւթոյ տեսաւորութ՟ խորին խորհրդոյ՝ և՚ի բնուստ անտուստ հրաշապէս ունի զթարգմանութի. որպ՟ զի ոչ երկմիտ ինչ շութափութեամբ անհաստատապէս զտեղի փոխէ, և ոչ նենգողաբար զբնակութիւն ինքեան լքանէ. քանզի ոչ վերջնականոք անձառուք հերքի, և ոչ յընդդիմակցէ ումեքէ ողողեալ արտաքս ելանէ: Ս՟ զի որպ՟ պատահումն դունոյ յէութիւն մարմնոյ՝ անփոփոխ իմն և անհրաժեշտ, որ գոլովն գոյացուցանէ՝ և ոչ գոլովն ապականէ, այսպիսեաւ իմն յարմարութեամբ՝ իւղոյս զօրութ՟ անդստին 'ի յիւրոց անտի կերպարան զառեալն ունողի՝ միասնական զուգութեամբ ընդ մեզ իսկ կցորդեցեր՝ տէր յս՟ քս՟, ընդ իւրին գոյի՝ և զօրինակն լըծակցելով. քանզի զանիմանալին տեսութեան աչաց և մտաց ըղձից՝ 'ի դէմս բերեալ կերպաւորեցեր. 'ի պտղոց երկրի ձնշեալ մզելով՝ զարմանալեօք հրաշագործութեամբ մատակարարիլ մեզ պատրաստեցեր. Մանաւանդ զի ոչ յոլովից խառնից 'ի մի եկելոց իմն բաղկցութէ զանազան ծաղկանց, ըստ ինոյն և սոսնե-րին բազմաբուրեան այլայլութէ, զայս իւղ օծութեան հրամանատրեցեր, այլ իբր զօրինակ փոխեալ զայն առ այս՝ դու ինքն խառնեցար 'ի սոյն մաքրութիւն վերնալոյս ձիթոյ: Որ թէպէտ անձառ են համեղութիւք քումդ անուշութէ, և ընդ օրինակաց իւրք



ոչ

ոչ համեմատի, այլ ծաղիկ դաշտի՝ և շուշան հովտաց՝ և նարդոս ընտիր՝ և եղեգնախառնիկ խառնեալ հալուէիւ՝ յարմարուք հոտոյ քրքմոյ՝ փթթեալ ողկուզոյ և ազնիւ գինւոյ, ոչ սոսկ՝ քան թէ իւղոյ մասթեամբ պատշաճապէս օրինակեցար. փառաւորեալ անուանդ անքննին, որ զամ լնուս, և յիրի իմիքէ ամենևին ոչ կարօտանաս. Վասն ոչ շփոթելովք ՚ի հակառակաց բնադատութեանց՝ բաժանեալ կամաց՝ մեկին առակի, այլ ՚ի սիրոյ հաւանութեն մեծապէս ՚ի մէնջ պարարիս, վն մեր ըստ մեզ՝ առ ամ վայելչական նմանութեն օրինակեցեալ. առ որս լոյս բարի՝ և հուր ջեռուցիչ, տապ սիրոյ առանց մասին ինչ շնչման անդթական սառնացրտութե՝ այս զանգուածնիւթոյ՝ կաթուածոյ ձիթոյ՝ մաքուր մտաց տեսեալ իմանի, որով յիրաւի սուրբ ՚ի յած է միանալ.

Ընդ սողոմոնի օծելոյ որդեգրեցելոյ այ՝ երգեմ բերանով հարսինն՝ երկնաւոր փեսայիդ բարեբան գոհաբանութի, համբուրեալ ՚ի յիղձս մտաց՝ զհոտ իւղոյ քոյ քան զամ խունկս. և իբր զբանս կենաց յաւիտենականաց ունողի, ըստ հոգելից բանի իմաստնոյն՝ և ածաբան աւետարանչին, զհետ քո ՚ի հոտ իւղոյ քոյ ընթացուք. լուացեալ զերեսս ջուրբք կենաց, որ ՚ի վեր է քան զերկին օդոյս այսորիկ, և օծեալ զգլուխս անախտական իւղովդ երկնային՝ յանդիման եղեց քեզ ուրախութե, զուարթապէս՝ և ոչ տխրաբար.

12 Այս իւղ խնկելի՝ պաշտելի և երանելի, ոչ սոսկ օծումն ուղղոյս սեննեկի. և կամ հերաց վարսից գագաթան նպաստ ինչ մատուցանի, եթէ ոչ տրու-



նա

նակման կենսատու խաչին դ՛ ճնադրեսցի։ Այն եւ զ
զարմանահրաշ օրհնութեն լուսոյ՝ զհրէոյն եւ զխուժն՝
զհնդիկն եւ զբարբարոսն՝ զսկիւթացին եւ զելլենա-
ցին՝ զդուժն դժնէաբար՝ եւ զարհօրատեսակ շանա-
գլուխն սոսկալիթխար, զտէրն ազատ՝ եւ զստրուկն
ծառայածին՝ քրիստոնեան արարել անուանեմք. քո կրն-
քէ, եւ հոգւոյդ մեյ ընծայէ, եւ հօրդ երկնաւորի՝
հարազատ որդի հաստատէ։ Բազմօրինակ են սովա-
րուեստից տեսմունք յարմարեցելոց, նախ նիւ-
թոյն՝ ապա զօրութեն։ Քանզի եթէ անօթ փայտէ-
ղէն մինչեւ օծեալ իցէ՝ դիւրաբար հերձի եւ անօ-
գուտ եղեալ անպատուի, նոյնպէս եւ մարդ՝ ոչ իւ-
ղեալ սովա՝ հեշտեաւ խորտակի, եւ մեկուսի եղեալ
առ՚ի քէն՝ ոչ լուսաւորի։ Այսոն սա քո՝ յիսուս,
որով զհրաշալիսն զարմանադրես. քանզի եթէ անդր
ծելի կազմութ կարծր պահպանակաւ՝ ամենապատ-
րասն շրջարկութբ պաշտպանեալ՝ ծածկէ յոյլա
գունակ խրթնի եկամուց. մինչ զի այսու մաքրութ
թալթաւեալն ՚ի ամա՝ ոչ ներկի արեամբ, եւ ոչ տըխ-
րատեսակ երփնիւ այլայլի։ Նա զի եւ թափանցանց
իմն խառնութբ հողեղէս՝ ընդ թանձրուի մերոյս
գոյութեան մնեալ անցանէ. զի թէ անէծք սաղմ
սաղին՝ ձիթոյ առաւիւ՝ ընդ ոսկերս չարին համոյ-
նիւ բաշխի, ոչ չափ եւս հոգիդ սոյն ձարպով լուսոյ՝
զանէրեւոյթ ներքնոյն տեսակս կենադործեալ ողջա-
ցուցանէ, ազդումն տուեալ ՚ի խորոց անտի շնչման
հադադին՝ մինչեւ ՚ի սպառուած ծայրիցն եզերաց՝
զընաւն ընկղմէ զախշատակ մարմնոյ մահուն արկա-
ծից. քանզի կենդանական զօրութ քո միշտ ահաւոր՝
տէր

տէր յիսուս քրիստոս՝ 'ի նմին խառնեցաւ՝ ընդ սոյն
իսկ բնակէ .

13 Այս օծումն բարետեսիլ, և առ բռնամարտիկ մերկամրցանակ ըմբիշս՝ իբր զօրաւոր հնարից կերպարան ճգնաւորական՝ անըմբռնելի ձեռաց ներհակին՝ օրինօք պաշտի , դիւաց և ախտից հզօր ահարկու . Քանզի յոքնապաճոյճ պճնութի բանին եզեկիէլի առ իմանալին փարաւօն , հեգնաւոր առակագրութ՝ ողբականօք շարայարմարեալ , յորժամ եղեր՝ ասէ , և հանդերձեալ ընդ օծելոյ քերովբէին , ուր արձանքն հրեղէնք հաստատեալ կառացան : Օրհնաբանեալ ահաւորութի ամենավայր ձեռնկալութն , որ միշտ անճառ ես բանից՝ և գերազանցեալ քննութեց . որ աւետարանաւն կենաց խըն կիս յարակոյ՝ իբր նորածին օծեալ 'ի քաղաքի դաւթի . և 'ի քահանայապետին հարցմանէ , դու ես օծեալն որդի օրհնելոյն . և յերանաւորն դաւանութէ պետրոսի՝ օծեալ միայն որդի այ կենդանւոյ . և յապահաւատ քննողացն , եթէ դու ես օծեալն՝ ասեն, ասա մեզ համարձակ . և 'ի կանոնականացն քոյ՝ հաւատամք յօծեալդ ուսուցիչ և տր տմի . և հերովդէս յառաջ քան զսոյն՝ զօծեալդ անուն յայտնապէս հարցեալ . և զխնդիր դրեն՝ դու իսկ ասացեր , զօծեալն այ զոհէրն դաւթի՝ զանսկիզբն որդի՝ ժամանակաորդի . Քանզի այսպէս ընկալաք վայելչաբար զայս թարգմանեցեալ , որ 'ի մեզ բերի ծայրն կատարման խորհրդական կոչմանն՝ վիճակ քրիստոնէից նախա
պատուութեան .

14 Այնքան ունի ահաւորութիւն՝ միանդամայն և


սըր

սրբութիւն՝ իւղաւորական խնկաւորութ՟ սոսկալի
անուանս օծութե՟, մինչ զի՝ որպ՟ ոչ է համարձակել
ուրուք յերկրայնոցս ած՟ անուանել՝ այլ ածային,
նոյնպէս ոչ բերել մարմին՝ զքրիստոսդ անուան ան_
ձին համարել, այլ զքրիստոնէայն. անուանելի նախ_
նւոյն մեծութե՟ մկրտչին՝ ջուրբ զհոգին հրաւի_
րաղին, քանզի չեմ ես ասէ՝ օծեալն, այլ առաքեալ
առաջի նր. Ողխա շրջէին՝ որպ՟ բանն ազդէ աւե_
տարանչին մարկոսի, առաքելականացն լծակցութիւք,
իբր աղաւնից հարազատ ձեռինդ ա՟յ՝ այսու վարե_
ցեալք. քանզի իւղով օծանէին՝ և առանց մարդ_
կային ճնարից՝ անուամբ քո բժշկէին. Ա՟յ զի որպ՟
խաւար ՚ի լուսոյ՝ և ցաւ յառողջութենէ, գիշեր ՚ի
տուընջենէ՝ և մահ ՚ի կենաց, այսպէս և՚ի սոյն իրէ.
տիրապարգեւէ՝ ած՟ չարին երեւոյթք մերժին խափա
նին և բնաւին ամփոփին. Քանզի որպ՟ ձանձք զա_
զիրք՝ և փոքր զեռունք սողից և ունկնամուից՝ իբր
՚ի դեղոց մահու՝ յոյս նիւթոյ սպառեալ պակասին,
սոյնպէս լուութ՟ շնորհի օրհնութե՟ սոյն իւղ զօրա_
ցեալ՝ և զայսս վանէ, և զմուրհակս չարեաց ջրէ,
և զվճիռ մահու պատառէ. Ո՛չ է աւազան կատա_
րեալ՝ առանց օծման օժանդակութե՟. Եթէ աւա_
զակացն մահու խոցման զմարդն առաջին, այս դեղ
փրկութ՟ մատուցեալ տուաւ. եթէ անձարակ վիրացն
յակոբայ և իսրայէլի, սոյն իր պատուական յիշատա_
կեցաւ. այս իւղոյ փափաքեալ դաւիթ՝ իբր ձիթենի
պտղալից ՚ի տանն ա՟յ՝ յուսով յարակայի, լքեալ ըղ
թլփատութիւն անդստին՝ զմկրտութե՟ս շնորհ գո_
շակէ. Նու զի՞ է ինձ զայսմանէ ճառել, և համայնին
կար

կարծել հասանել, որք ոչ վերինքն զօրէն ձեռնար
կութք ինչ բանի՝ զայն խորհուրդ 'ի մանաւորէ
ինչ ձառելով նշանակել, թողում ասել՝ թէ յիս_
կութենէ ։
15 Փառք քեզ միշտ և յամի անմահ Թագաւոր՝ 'ի
յայժմու երգեցեալ օրհնաբանութեա, զոր արա_
րեր և կատարեցեր առ իս՝ բարեխնամ գթած և եր
կայնամիտ, հարուստ և առատ ամենայաղթող ։ ան_
դրատին 'ի հարցն գծագրելով զօրինակն՝ մինչև 'ի
լրումն ածեր զխնկութին ճշմարտապէս ։ Դու լոյս
իսկ ընութք և արեգակն մշտապայծառ՝ և զաշակեր_
տացն դաս՝ լոյս անուանեցեր, որով զարարածս ամ
երկրի՝ ճառագայթիւք երջանիկ շնորհի նոցին լցու_
ցեր ։ Ընկալար զխուղն անուշութեան յումեմնէ՝ 'ի
յոտս, յօրինակ ընդունելութե մաղթանաց առ քեզ ։
և 'ի միւսմէ պոռնկէ՝ 'ի գլուխ, նշանակ սիրոյ գթու_
թեանդ առ մեզ ։ մշտափափաք բաղձանօք անսահմա_
նելիդ 'ի սոյն հաստատեալ, մինչ զի ուխտին անխը_
խադրելեաւ՝ օրէնս յարակայս օրհնաբանելիս՝ քոյին_
նահրաման պատուէրս կենաց՝ ընդ համօրէն աշխարհ
քարոզել զաւակաւանեան իւղոյն յարգաւորութիւն,
զարմանս հրաշից լողացն՝ առ ապառնեացն յուսա_
դրութի ։ Դու օծութի ունիք զմէյն՝ ասաց եր_
ջանիկն առաքելութեց, մեկնեալ զխորհուրդն որ 'ի
մեզ զեղեալ՝ յառաւելու կենդանարարիդ անպա_
կաս բովանդակութե ։ Աւասի յաւէտ իմն յարմա_
րաւոր և հանդունատիպ՝ առ 'ի մասնաւորն նմանութի
լուսոյդ և հոգւոյդ մեր՝ այս կաթուած օրհնու 'ի
վերնոյդ բարեբաստութեց՝ անապառաբիր սրսկեցեալ

՚ի մեզ, և աւր լոյս, երբ զնախաթիւ գոլ ստեղծուա-
ծոց՝ և արարչութեամբ պատկերակից, որով զխաւար
մթութեան մեղաց հալածես. իսկ հուր, զի յամ տարր
արարածոց հաւասարապէս ունի զգոյութիւն՝ ըստ էա-
կանին կշիռ բաշխումն, ծածուկ և յայտնի, լուեալ
և ծանուցեալ. և եթէ ոչ ընդհարցի ՚ի հակառակէն,
ոչ յինքնաստատ յօժարութեամբ բաղձոյ բորբոքիլ:
Դարձեալ և օծումն, զի արքայաբար որդեգրեալ՝
ընդ քեզ ՚ի ժառանգութիւն հօրդ մատուցես՝ ողոր-
մութեամբ ազգակցաւ նկարեալ ՚ի մեզ՝ անեղծանելի ՚ի
հանդերձեալ վառաւն փայլեսցուք. դարձեալ և հոգի,
զի մաքրեալ զարկածս խաբէութեան՝ որ ՚ի բանսարկ-
ուին ներգործութեան նորոգ փոփոխմամբ հոգւով և
ճշմարտութեամբ՝ հօրդ երկնաւորի երկրպագեսցուք,
բևեռեալ ընդ քեզ յուսոյն հաւատովք՝ ամենա-
պարգև.

16 Իհա արդարև յաւէտ խնկապէս՝ իւղ ոյս լու-
սապատար խնկալիր՝ վերնականիդ սիրոյ տեսութեան.
Ա՜ որոյ և պօղոս խնկ պատշաճ վարկաւ ՚ի ճառ գո-
հաբանութեան՝ ասելով յայտնի, որ օծ զմեզ ձեօք
հանդերձ ՚ի քս յս՝ ած է, որ և կնքեաց զմեզ՝ և ետ
զառ հաւատչեայ հոգւոյն ՚ի սիրտս մեր. և դարձեալ
մի՞ ասէ, տրտմեցուցանէք զհոգին սբ այ, որով կն-
քեցարուք յաւուրն փրկութեան. Պատկառելի և ան-
վանելի օծութեան յորջորջութեան իբր ՚ի նորումս. յաւէտ
քան ՚ի հնումն. քանզի բանն դաւթեան սաղմոսին՝
զտիրական տնօրինակացդ սկզբնաւոր կրիցդ խոր-
հուրդ՝ ճշմարտաբար վերաստահմանէ, ժողովեցան կու-
տեցան իշխանք ժողովրդոց՝ վն տն և վն օծելոյ նր.

Ա՛ր

Մարգարէութիւն մեծ տպաւորեալ զանսրբելի ա-
րեանդ պարոյս՝ հրէականումբ չար մոլեգնութեն՝ որ
'ի տէրդ յանդգնութ, մինչ է որ ձգեցէ զձեռն իւր յօ-
ծեալն տն՝ և քաւեսցի · քանզի թէև յաղագայնոյն
սպանաւ սաւուղ, այլ ոչ իսպառ մերժեցան յամօթ
և 'ի նախատինս ազգաց օտարաց, մինչև արեանդ տյ
հաղորդեալ գտան ։ Գուրաւական մեծ յիշատակի ա-
պադոյեյն ժառանգու Դն՝ աղօթանուէր աղերսար-
կուի առնել սաղմոսին, մն դաւթի ասելով քոյ՝ մի
դարձուցաներ զերեսս քո յօծելոյ քումմէ · և դար-
ձեալ, նայեա և տես յերեսս օծելոյ քոյ, և արա
ողորմութի ընդ օծելոյ քոյ։

17 Զեռանդ քո՝ քրիստոս, երկրպագեալ պարգևա-
տրութի՝ այս հիւթ լուսակիր · քանզի ոչ այլ մեծ
բարձրութի յաղքոյութեն ճոխութ՝ ասէ մարգարէն 'ի
դիմաց քո տէր, քան թէ՝ գտի զդաւիթ ծառայ իմ,
և իւղով սրբով իմով օծի զնա ։ Սստի կիրթ իմն
յիշատակաւ՝ զքոյդ համբուրեալ լուսոյ օծութի՝
տէր յս քս, ծանիցուք զքեզ անփոփոխ մշտնջենա-
ւորութի, թէ դու ես այն՝ և յամի միայն թագաւոր
թագաւորութեց · և ճշմարիտ օծեալ իւղելոց, փառա-
բանեալ երկրպագութե, երէկ և այսօր ։ Քանզի
զոր օրինակ պատրոյկ թացեալ 'ի ճարպում՝ ոչ երևե-
ցուցանէ ինչ նշոյլ՝ մինչև հուրբ լուցեալ վառեսցի,
սոյնպէս և այս օծութի լուսոյ առ 'ի մեզ հեղեալ՝
'ի հանդերձեալսն ջահաւորի ։ Այսէ կերպարանին
մեկնաւոր բացերևութի, 'ի նախնեացն և այսր բե-
րեալ բարենշան իմն յարմարութե՝ հրաշապայծառ
երանդաւ դունեալ։



Արդ

18 Որդ՝ այսոցիկ պատճառ վերադոյն մասանց կե-
ցուցչայ ամենակալիդ՝ արարչութեդ հարազատաց,
առանց որոյ ոչ է գրել քննեան, և ոչ նուաղվրեցի ան-
ուանիլ, և ոչ յիշատակիլ յորդէս յուդայի, և կամ
խորախոյս բառնալ յանուն ամ յակոբայ։ Այս հե-
թականութե օրհնութե ձիթոյս, յորում մը երրորդութեդ
խառնեցեալ միաւորի, ճառագայթ շնորհաց․ շուք մե-
րոյ դիմաց․ նկարագրութի երեսաց․ բարեձևութի պա-
տուհմանց․ լուսաւորութի աչաց․ ամնադրութի բերաց․
փայլելութի այտից․ զարդ կերպարանաց․ պահպանարան
շրթանց․ հանդերձիչ կրօնից․ յարմարիչ վարուց․ շաղ-
կապ հաւաքմանց․ զօրութի անձանց․ ուժգնութի դի-
մեցմանց․ խափանիչ յուռթից․ քակտիչ հմայեկաց․
նահանջիչ ձեռնածուաց․ խայտառակիչ կախարդաց․
դաւիչ աղանդից․ բռնախոյեան դիւաց․ փարատիչ ցա-
ւոց․ կատարիչ կնքեցելոց․ տենչանք երախայից․ ան-
զրնելին արտաքնոց․ հիացումն հեթանոսաց․ նախանձ-
արկու անհաւատից․ մերկացուցիչ գաղտնեաց․ յար-
գանք յեանոց․ փառք սրբոց․ պճնումն կանանց․ ա-
ճեցումն տղայոց․ հրճուանք ծերոց․ ձեռնադրիչ ն-
ուիրելոց․ զգուշութի մաքրոց․ պսակ թագաւորաց․ ճո-
խութի աղքատից․ յառաջադրութի կուսանաց։ Քանզի
զոր օրինակ աման ինչ կնքեալ՝ նշանակիչ իմն է ներք
նոյնոցն մեծագնութե, նոյնպէս բարձրութի շնորհին
՚ի մեզ սովու ծածկեցել յանունքն՝ ամ մր յոքն,
փայլեցական իմն տեսակաւ ծանուցեալ նշանակի իսկ
անուանն խոկոյն անդստին ՚ի նոյն յորջորջեալ կոչ-
մամբ, ըստ հոգելից արանց իմաստնոց՝ որ յեդիպտա-
ցւոց անտի սկսեալ, ՚ի դէմս ածելով զէրին կերպա-
րան՝ ահաւոր խորհրդոյ պատկեր։

Սոյն արբանեկոյս Իւղոյն Տաճէ.

19 Քանզի մեռոնս այս օրհնաբանեալ, զոր մար-
դարէն կանխաւ լոյս աչաց՝ գրեթէ ըղ-
սոյն աղերսեալ խնդրէր, ըստ քերթուէն
բառի, որ ըստ խորութեն հոմերոնի՝ թարգմանեալ
իմանի, Ենձ մայր. այսինքն է՝ առ՚ի յինքն ձգօղ ըղ-
մերս բնութի զօրապէս, և կայուն հաստատել չքնաղ
փոփոխմամբ զՋրուրց լուծականութի՝ առ աւազանին
լուսաւորութի. և իբրև զդեղ՝ մածուցիչ կաթին՝ ՚ի
նոյն ինքն յեղանակել զցնդեալս իմ վայրագութի, և
զաղբերց հեղեղեալ մշտահոսութի. Իսկ մառանամուտ՝
որ և այս միւռոն, ըստ այլում բառի ցուցանի. այսինքն է
մԹրին, որ և խաւարչուտ գոլ և ծածկեցեալ՝ կամ ան-
տեսական. որ և սոյն կոչումն դիմառուէ՝ չէ օտա-
րացեալ, քանզի արդարև յիրէ անտի անունն նշանակի.
վն զի անքննին է այս խորութի յաւէտ՝ քան զամ սըր-
բութի սրբց. Զի ոչ եթէ ջրոյ օրինակաւ զաղտ ինչ
լուանայ, և կամ հացի բնութբ զսիրտն հաստատէ,
այլ նորոգ իմն յարմարութբ ՚ի մասունս ազդողակա-
նացն անօրինապէս տնադրի. սակայն անհասութբն
վերնականաւ՝ և զանունն ունի անքննին. Քանզի
որպ ած իսկ և իսկ ՚ի լոյս անմատոյց ասի, իսկ ան-
սահման փառաւորութբն՝ յեղանակաւ իմն անբաւութ՝
՚ի խաւար անզննին ծածկել իմանի, փակեալ արտա-
քուստ ՚ի ձեռնարկութեց մերոց իմաստից, նոյնպէս և
այս ծորումն լուսոյ՝ ՚ի լեզուաց ոմանց ճարտարաց՚ի
ճահ ճեմութեց՝ դրականապէս անուանադրութբ՝ միայ-
առ ձայնի՝ վն ոչ զօրելոյ երկրածին բնութե զիսկն
գիտելոյ. Իսկ զերկաքանչիւրս ածականացն՝ անդըս-
տին յինքեան հարստաբար տիրապէս ունի. քանզի

'ի կոչումն անուան բարձրելոյն նմանակերպեալ՝ կըր
կին մեծանոյ իւղս այս նուիրեալ ամենաբուրեան
ազնիւ կնդրկաւ. վ՞ զի ա՞ծ մեր՝ հուր ծախիչ է,
ըստ մովսէսի. և դարձեալ՝ լոյս է, ըստ յովհաննու.
ուստի և եսայի ճշմարտապէս զայն ակնարկէ, ե_
ղիցի՝ ասէ, լոյսն իսրայէլի 'ի հուր։
20 Դարձել՝ այլ իմն կերպացուցանելով զբանս՝ առ
'ի նոյն պատկեր յայտնութ իրի. վ՞ զի ոչ մոռանամ
զի՛մն նողկութի՝ որ 'ի գթութ մեծիդ քաղցրացաւ՝
վերստին գովեստի օրհնել. քանզի՝ մեռայ, որ է դառ
նութի, այսինքն՝ նշանակ իմն յարմարական չարչարաւոր
կրից տաժանմանց, որ և միւռոն ստուգաբանեալ մեկ
նապէս ըստ մեզ՝ մեռելոյ ազգականութ։ Քանզի
այսու օծմամբ հոգևորականաւ՝ խղեալ կամ հատեալ
'ի անտոխսակէր մահակերպարան տաղտկաղեղրակն հեշ
տութեց հակառակողին, որ օդախոնաւ մեղկութեամբ
զքնարս ձայնատրական՝ և կամ զարկուած վերածած
կուէ մինարհեստ ուժգնաբարբառ խորխտահնչական
կազմուածոյ թմբկիս գործականութե՝ ջրացիր իմն
գինջուք՝ անվայելուչ թուլաթաշնակեալ՝ 'ի ստորև կո
րստեան քարշէ զօրինակ մերս գոյութ, կապիմք յուսով
վերստին դարձել ը անձառ խորհրդոյ խաչի. քո՝ ք՞ս,
մկրտեալք 'ի մահ կենդանւոյդ՝ անվախճան կենացդ
սովաւ հաղորդիմք, 'ի քեզ ի՛սկ ա՞ծ համայնիւ խրա
խուսեալ՝ խապառ ամենևին անհատուածելի։
21 Ե.յս ի՞ւղ՝ դրօշեալն քառակուսեան յանուն քո
յ՞ո՝ նշանի բարձրելոյդ հաւասար հաստէ. հնարհ
ընձեռեալ զուգափառ և նմանատիպ արեան կեցուց
չիդ՝ նոյն անվանելի փառօք պսակել մեծացուցանէ։
Փոյթ անուանի իւղոյ օրհնութե, ըստ մարգարէին
կանխաձայնութ, զի հասարակաց կազմեցեալ բուսոց

անտառաց զօրապէս ուղղեալ՝ 'ի խակուէ չարին որ
կածից և օտար կարծեաց՝ 'ի ստեղծօղդ վերաբերել
առ նոյն նիւթս կենաց՝ հասուն ներգործէ։ Օ ի
և որ 'ի մեզ մնիցն պատուհանաց մշտաբացիկ թափան
ցանցութիւք՝ յանուն մեծուն ահաւորիդ զօրուն՝ 'ի
խոհական իմն համեստութի քև ընդդրեցեալ առ 'ի
յըղձակերտ օթեվան հոգւոյդ՝ անաղտելի պատրա
նաց չարին՝ խաւարահողմ խարդախողին՝ այսու լու
սով զապեալ ամփոփիմք 'ի նուաղ գոհութե երեկո
րեան պաշտաման՝ ընդ երկնայնոցն զամբարաց․ առ օ
րինակ վառման շնորհիդ՝ որ 'ի մեզ, 'ի սոյն յիշատակ
փրկութե բարեացն՝ սովու ոնկեցեալ ծագի, և ծագ
կաւէտ եղեալ պաղածնի․ 'ի սպաս ընթրեցն պատրաս
տութե յեռանում գիշերի՝ 'ի մեծիդ գալստեան, ահա
զայս լոյս ճրագի համարեալ 'ի կիր արկանեմք։

22 Դարձեալ՝ ըստ գծագրացն գումարուէ՝ քան և
չորիցն շարադրուէ որ յալփափետաց անտի վե
րաթուէի մինչև 'ի քսաներորդ երկրորդն կարդի, յու
րում զայս խորհուրդ խորուէ անուսա թարգմա
նեալ՝ ճաշակ հեշտալի որոց հաղորդին՝ ջամբել պատ
րաստեմք ամենակազմ յարմարութ․ քանզի յութանե
րորդէ անտի գրոյ՝ 'ի չորեքհարիւրն փոխաբերեալ՝
ստուգաբանօրէն քննութե ընդ ձիթոյն անուան՝
նիւթ ճշմարտագրի․ որ է կերպարան արդեան խմո
րոյ՝ յիկքն բերողի զզանգուածն զօրեղապէս․ որ ոչ
սակաւն 'ի յոլովէն պարապոյի, քան թէ 'ի նոյն իրն
դարձուցեալ, ըստ աւետարանական առակին, զամ
առ ինքն վերաբերեալ անձեցուն առնէ։

23 Այն իւղ հեղուէ՝ միշտ համբարձման և խոնար
հուէ, օրինակ և նմանուի, առ ոմն կակուղ պա
տուաւ մատուցեալ ջամբի, հարթակչիռ և բարե
յար

յարմար բանի կերպարան. իսկ համայնիցս լուծակա
նաց՝ հոսանուտ և սորածորելի նիւթից՝ դերափառ
մարաշրջական հրաշափառ խորհրդոյ պատկեր. քանզի
և յաման ինչ մարթոյ արկեալ՝ ոչ ըստ դինւոյ ձևոյ
և կամ Ջրոյ թացուն՝ մեղկէ, այլ ՚ի սահման պատշա
ճին պահէ։ Նայպէս ընկալեալ զբոյոցդ բարեաց
անհաստատ առաւելութի՝ որդի ա͞յ կենդանւոյ,
զորբանուէր այս ծնելութի՝ ՚ի ճակատ դիմացս ա_
րեամբ քո գրեմք. և ՚ի ընութի շնչոյս՝ հոգւով քո
տպաւորեմք, հաստատեալ խորհրդով մտացս, եթէ
յաւէտ յայտնեսցի նորոգ փայլեցել բազմաճաճանչ
ծայրարձակուք՝ ՚ի տարածումն յոդնատեսիլ զարմա
նահրաշ ընդարձակուն՝ պատուղ խաղոյ ընծայեալ զլոյս՝
՚ի փառս ապառնեացն հանդերձելոցն։ Այս ճարպ
հոգևոր երջանիկ և վերնանշոյլ՝ ՚ի դէմս երեսաց իմս
պատկերի՝ քում նշանաւ ջահաւորեսցի։
24 Բայց քանզի իբր անհաս ոչ ըմբռնական այս մեծ
զօրութի՝ արագ սլացմամբ ՚ի թևս թեթևս մր
տաց սլացմանի, անդր քան զկարծիս ուշոյ իմաստից՝
անհուն հեռաւորման անհետ փախստեան՝ լայն իմն մի_
ջոցաւ խապառ որոշեալ, փակեցաւ յինէն, ոչ օրինա
կեցաւ կցորդաւ, ոչ նմանեցաւ զուգամասնութբ.
ոչ սահմանեցաւ ձևակերպութբ. ոչ կշռեցաւ ընկե
րին չափովն այլ ահա ընդ ա͞ծեան խաչիդ նշանի՝ հա_
ւաստարութբ արեան կեցուցչիդ՝ հոդխաղէս գերազան
ցեցաւ։ Բայց արդ՝ օրհնեա՛ զմեզ Տ͞ր սովաւ և ՚ի սմին.
և ս և անուանդ քո ահաւոր, լուսաւոր, երկնաւոր և
զարմանաւոր, ՚ի գովեստ փառաց անճառից մեծըրս
կրօնից՝ բուրվառաւ խնկեալ, սուրբ՝ Տ͞ր, անքննին,
անպատում, բարձրեալ, ողորմած, վեր երգեալ՝ ճշմա
րիտ, բարերար և Տ͞ր, արս սովաւ փրկուի. ուժր և
քա

քաւութիւն · պարգևեա՛ բժշկութիւն · հանդերձաւորեա՛ շնորհ · առատաձեռնեա՛ երանութիւն ։ Յօժարեա՛ այս ձիթոյ՝ երկնանձրև լուսոյ՝ անարատ գտոյց · յիւղելս այս թեզան բանաւորական՝ մի՛ մտցէ և մի՛ գրաւեսցէ տխրականութի աղտոց մեղանաց՝ շաղախել երբէք զու-դուոյս կերպարան ։ Եղիցի՛ սոյն իւղն որոց մատչին օծանիլ սովաւ՝ հարսնապաճոյճ պանծանօք պճնել դեղոյօրէն ո՛ր վայելչութ՝ երջանկապէս յոգի զարդարեալ ։ Եղիցի՛ հուրս այս լուսափառ և ածաձիր՝ մերձեցելոցն ՚ի սոյն ընտրութի՛ մուխ կրկնեռաց և բարեփափաք ջերմութ՝ այլ յօրինուածոյ, որով ամենապատրաստ պնդութ՝ ՚ի կարծրականութ անսասան վիմդ յարակայեցել միշտ արձանացոյց՝ ՚ի քեզ հաստատեալ աներկմտելի ։ Եղիցի՛ նշանակ վերնամբրցանակ այսր պարգևի սովաւ վառելոցն, ո՛չ ողողել ջուրբ · ո՛չ այրել հուրբ · ո՛չ ցրտանալ ՚ի սառնութէ · ո՛չ վնասակար հողմով շիջանիլ · ո՛չ աղտեղել յուրուական ինչ պղծութէ · ո՛չ զպահեալսն չարին մատնել, և ո՛չ ՚ի սորևելեցն զմթերս գանձուն կենաց՝ յիմարաբար արտաքս հանել · ո՛չ անպատսպար մնալ ՚ի թևոց քոց օգնականութէ, և ո՛չ զէացեալն ՚ի մեղ օծութի՛ անմաքրապէս ՚ի բաց մերկանալ · Այլ եղիցի՛ք քև ՚ի սոյն հրացեալ · սովիմբ պարարեալ · սովաւ լուսաւորեալ · այսու արդարացեալ ազատացեալ պսակեալ և թագաւորեալ ։ Ընդ քեզ միայնոյ միոյն օծելոյ՝ յամենեցունց օրհնութք երգոց, աւելուք լեզուաց, հնչմունք ձայնից, յաղթանակութք գովեստից, բարեբանութք շնորհաց, սրբաբանութք սաղմոսաց, ընդ հօր և հոգւոյդ սբյ՝ յաւիտեանս յաւիտենից · ամէն ·

Այս էր յետ նաւակատութեան ՚ի սրբութեան, և այս արձանագրութիւն ՚ի սրբութեանց սրբութի ·

+Ս չրաւին ցաւելուած կրկին մեծութեան՝ նորին հոգւոյն, ա-
նոյն աղերս մաղթանաց բանի: ՚Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ:

## ＊Բան. ՂԳ.

1 Տէր յաւիտենական. բարերար և ամենակալ. ստեղծիչ լուսոյ, և յօրինիչ գիշերոյ. կեանք ՚ի մահու, և լոյս ՚ի խաւարի. յոյս ակն ունողաց, և երկայնմտութիւն տարակուսելոց, որ ամենարուեստ իմաստութեամբ քո՝ դարձուցանես յոյգ զստուերս մահու, աննուա՛զ ծագումն և անմուտ արեգակն, քանզի ո՛չ զօրէ ծածկել զփառս լուսոյ քո՝ խաւար գիշերոյ: Որում կրկնի ծունր երկրպագութեան ամենեցուն՝ երկնաւորաց և երկրաւորաց, և սանդարամետականաց. որ լսես զհեծութիւն կապելոց, և հայցս յաղօթս խոնարհաց, և ընդունիս զխնդրուածս նց. աստուա՛ծ իմ և թագաւոր իմ. կեա՛նք իմ և ապաւէն իմ. յո՛յս իմ և վստահութի իմ. յիսո՛ւս քս ած ամի. սո՛ւրբդ հանգուցեալ ՚ի հոգիս սրբոց, մխիթարութիւն վշտաց՝ և քաւարան մեղուցելոց, որ գիտես զամ յառաջ քան զլինել նց. առաքեա՛ զպահպանողական զօրութիւն աջոյ քո, և փրկեա՛ զիս յերկիւղէ գիշերի և ՚ի դիւէ չարէ: Ո՛վ զի զյիշատակ սոսկալի և մեծ քո անուանդ՝ միշտ համբուրեալ շրթամբք հոգւոյ՝ ըղձութեան շնչոյ, կեցից պահպանեալ ընդ այնոսիկ՝ որ կարդան զքեզ ՚ի բոլոր սրտէ.

2 Եւ ՚ի դրոշմ խաչի քոյոյ նշանիդ, զոր ածային արեամբ քո ներկեալ նորոգեցեր, և ՚ի նոյն շնորհս որդեգրութեան զմեզ մկրտեցեր, և ՚ի փառս պատկերի

քո նկարեալ յօրինեցեր այսու պարգևօք ածակա-
նօք, ամաչեսցէ՛ սատանայ. քակտեսցին մեքենայքն.
բարձցին որոգայթքն. պատռեսցին մարտուցեալքն.
պակասեսցին զէնքն սայրասուրք. մերժեսցի մեղն.
փարատեսցի խաւարն. մեկնեսցի մառախուղն։ Բա-
զուկ քո հովանասցի՛, և աջ քո կնքեսցէ. զի դու գը-
թած ես և ողորմած, և անուն քո կոչեցեալ է 'ի վր
ծառայից քոց։ Եւ քեզ ընդ Հօր՝ Հոգւոյդ սրբոյ՝
փառք և իշխանութիւն յաւիտեանս յաւիտենից.
ամէն։

---

† Ս Հրաշին շարադրած կրկին հեծեծանքն՝ նորին հայրենի, ա-
նոյն ողբերս մաղթանաց բանի. 'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ։

*Բան . ՂԸ .

Արեգական արդար. ճառագայթ օրհնեալ. լոյս կերպարան. փափագ անձկութե. բարձրեալ անքննին. զօրեղ անպատում. բարւոյ բերկրութի. յուսոյ տեսութի. գովեալ երկնաւոր. թագաւոր փառաց. քո արարիչ. խոստովանեալ կեանք։ Եւ արդ՝ զթերութի վրիպանաց բազմաց խաղ ձայնի եղկելոյս՝ ամենազօրդ բանիւ լցեալ մատուսցես յաղերս հաճութե Հօր քում բարձրելոյ։ Որ վասն իմ 'ի փորձ եկիր անիծից, կերպարանեալ զիմ նմանութիւն՝ ամենայն կենաց օրհնութիւն, վերնոց և ներքնոց բարեխնամող տեսուչ համայնից։ Զի թէ յանձն առեր մեռանիլ վասն իմ՝ Ած և մրդ բոլորեցուն, որչափ հաճեսցիս առաւել և այժմ վտանգաւորս կրից կարեկցել, ընդ իմ պարտաւորիս



միշտ

միշտ աղօթելով աղաչակցաւ մրմնոյդ առելոյ 'ի մէնջ՝
առ համապատւի՟դ քո հայր ։

2 Լուսո՟վ արեանդ պատուականի միշտ մատուցելոյ
'ի հաճոյն կամաց առաքչիդ՝ բարձցին վտանգք
մեղուցեալ դատապարտելոյս ։ Թողցին պարտիքն ։
ապաքինեսցի՛ ամօթն ։ մոռասցին պատկառանքն ։ բա
րեգործեսցի՛ն դատակնիքն ։ սատակեսցի՛ն որդունքն ։
վերասցի՛ լալն ։ հանդարտեսցէ կրճուամն ատամանցն ։
սպառեսցի՛ն ողբքն ։ հատցի՛ն արտասուքն ։ մերժեսցի՛
սուգն ։ հալածեսցի՛ խաւարն ։ վատնեսցի՛ հուրն սաստ
կութե ։ հերքեսցի՛ն տանջանարանքն բազմօրինակք ։
3 Լուսեսցեն դթութիք կամողիդ և պարգևողիդ կե
նաց ամենից ։ ծագեսցի՛ լոյսդ ։ արագեսցէ՛ փր
կութիդ ։ հասցէ օգնութիդ ։ ժամանեսցէ այցելութիդ ։
կանխեսցէ ցօղդ ողորմութե , յառաջեսցէ արբուսցէ
զանդաստանս պապքեալ՝ անկեալ ոսկերացս Թշուա
ռութե 'ի վիհն մահու ։ ծաղկեցուսցէ պտղաբերեսցէ
բաժակդ երկնաւոր արեան կենարարիդ՝ զերկիրս իմ
նամեալ աւուրն լուսոյ , որ անծախապէս միշտ պա
տարագի յիշատակ կենաց փրկութե հոգւոց ննջեցելոց ։
Ո՜վ է ամի՟ մահացեալ հոգիս մարմնովս մեղաց՝ շը
նորհօք քո՛ գըթած , 'ի քեզ զօրացեալ քև նորոգե
ցայց , զատեալ 'ի մեղաց անմահ կենդանութե 'ի յա
րութեն արդարոց , հօր քում օրհնեցեալ ։ Ընդ որում
քեզ փառք , և հոգւոյդ ո՟գոյ բարեբանութի՟ վայելչա
կան գոհութե , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ։
ամէն ։

## ՄԱՐԽՃԱՆ ։



Բա

## ※ Յիշատակարան Մատենիս Գրաբեան.

Ըստ հոլովման ընթացից ամենակաց յաւէժ շարժուէն,
որ ըստ լուսատարն նշուլագեղն արփիածածանչ լու-
սակերն օրակշիւն մղտափարման անհնարին՝ ակամն
արեւու՝ սաեղծակամն արուսեկի, որ համբարէ հոլո-
վէ կուտէ ամաց յոլովութի ՚ի չափս դարուց՝ չնչասպառ եւ
կենդանանորոգ տաւուղեկան յաւիտենիս ՚ի յաւարտումն կա-
տարման եններեակ յոբելինին՚ ի սկիզբն պատկերաց մտի տասնե-
կին՝ Յաբեթական տոհմիս տումարի. յետ երից ամաց անցե-
լոց՝ որ զնի դալատեան՝ ՚ի կայս եւ ՚ի կայս կողմանց հիւսիսոյ
դիմաց արեւելից՝ յաղթող եւ մեծ կայսերն հռոմոց Նիկոլի,
յորժամ ընդարձակ եւ մակադաւիթ կամնաւ ըսփիւռ տարա-
ծեր՝ լիասահման եւ անխառոց ՚ի սառնարակարկատ կոթողս
կարծր արձանաց՝ ՚ի ձգումն ձեռին՝ եւ յանխզելի լարս պարա-
նաց երկարադունից՝ անթարթափ ՚ի նոյն վերապատցեալ ՚ի յաջ
եւ յահեակ՝ սեպհականել յաւելուլ բաժինս մասանց վիճա-
կաց՝ խմբից աշխարհաց ՚ի ծոց իւր.

Արդ՝ ՚ի յայնմ անդորրուէ միջոցի, յորում եղեւ ընդ ամե-
նայն թշնամիք եկեղեցւոյ, սատացեալ հիմնեցի, կառուցի, կար-
գեցի, կուտեցի, արձանացուցի, դիզի, բարդեցի, կացուցի,
ցուցի, հաստատելով ՚ի հրաշակերտութի միադոյ իրի՝ զբաղ-
մատեսնեան գրոնագս գրուէ այսմ սաիերի արգասաւորի,
ես Գրիգոր կրօնաւոր քահանայ, յետին բանահիւսացս եւ կրտ-
սեր վարժապետացս, գործակցութ եղբօր իմոյ ընտրելոյ՝ Յով-
հաննէս կոչեցելոյ՝ նարեկայ մեծափառ եւ բարձրապատիւ
ուխտի վանականի. որք իբրեւ զմի մարմին բանական՝ ՚ի յեր-
կուց առ մի կերպարան չինելոյ դիմաց կենցաղավարելով. ոչ
միայն հարազատք, այլեւ միաշունչք միակրօնք համապատիւք
զուգահաւանքս՝ ՚ի քուեից աչաց՝ առ մի եւ նոյն շաւիղ խորհր-
դոյ տեսեալք. Արդ՝ հայցեմք ՚ի ճաշակողացդ յայսմ սե-
ղանոյ՝ յոյնօրէն եւ անխորժահամ հանդերձելոյ՝ յիշատակել
զմեզ ՚ի մաղթանս ուղղոյս եւ ՚ի պատկանաւոր խնդրուածս,
սեան սիրով ՚ի միտս բարիս. որով եւ դուք եղիջիք գրեալ ՚ի
մատեանս կենաց վերին դպրութեն.

*Յիշատակ վարուց հոգեւոր հայրապետի տեառն Գրիգորի։



Ամենափայլ նշողիւք ճառագայթից շնորհաց հոգւոյն Սրբոյ լուսապատար պայծառազարդեալ՝ Հռչակն 'ի մարմնի տէրն Գրիգոր՝ էր յանձնացեաց գաւառէ Վասպուրական Հինէորդի տն Խոսրովու անձեացեաց եպիսկոպոսի. 'ի ժամանակս կայսերութե յունաց Վասիլի եւ Կոստանդեայ. յաւուրս Սենեքերիմայ հայոց արքայի. եւ 'ի հայրապետութե տն Սահակայ կթղկսի։ Որ սնեալ 'ի կարգ կրօնաւորութե 'ի Վանս Նարեկայ, որում եւ եղեւ առաջնորդ, ուստի եւ հռչակեցաւ Նարեկացի։ Այն սա երկնահանճար վարդապետութե գերափայլեալ՝ մեկնեաց զերգն երգոց Սողոմոնի. Գովեղեաց զԽաչն, եւ զներբողեանս 'ի տէր Սրբ Ծածկին, 'ի համօրէն գունդս առաքելոց, եւ 'ի տէրն Յակոբ Մծբնայ. եւ զքարոզս գանձից։ Սա բանապանծոյն պերճաբանութե գրեաց զայս զՂԵ բանս աղօթից 'ի խնդրոյ հայցման հարց միանձանց, զոր թողեալ մեզ վերջին ժառանգութի անապականթերից՝ փոխեցաւ յաստի կենաց՝ վախճանեալ յերիտասարդական հասակի, 'ի թվին հայոց՝ ՆԾԲ. եւ ամփոփեցաւ 'ի նոյն վանս Նարեկայ։ Իսկ յորժամ Սենեքերիմ արքայ փոխեաց զերկիրն 'ի փոքրն հայաստան, ապա եւ միաբանքն Նարեկայ դիմեալ մերձ 'ի կողմանս քաղաքին Ակնայ եւ Տիւրիկեայ, շինեցին վանս յանուն Նարեկայ, ուր բերեալ հանգուցին զՍբ պատուական մարմինն, թէեւ այժմ է աւերակ, եւ կոչի ուխտ Սրակայ, յորում լինին նշանք բժշկութե 'ի փառս Ս.Ա։ Որոյ Սբ աղօթից մաղթանաց օժանդակութե արժանացուք զմիւսականն տեսութե Ս.Ա. որում պատիւ փառաց ծնրադրական երկրպագութե յաւիտեանս. ամէն։

Նշանաւորներուն խորին բառից ինչ նշանակէ ։

Ադդովլ · Զաքարիայ մարգարէի պապուն անունն է ․ ղգ · 8 ։

Ադոնայի · տէր, որ աստուծոյ կըսուի, թանգրը · լէ · 8 ։

Ազատագնեայ · պատուական սօյ, քիշիզատէ · ձա · 3 ։

Ազդարան · խապար տրուած տեղ, սըր եէրի, խապերկեաց · ծթ · 2 · կամ խապար տուօղ գործիք, որ է՝ բերան, կամ լեզու · հգ · 2 ։

Ալէլուք · օրհնութիւնք, գովասանք, մեծաց · դէ · 24 ։

Ալէտանջ հողմ · տաւրա հանօղ հով · ծէ · 3 ։

Ալփափետք · այբբենին շարքը · դէ · 22 ։

Ախտարծարծ · ախտը շարժօղ, մարդ թեփրետօղ · կ · 4 ։

Ածանցական · անցաւոր, թեզմը անցնօղ · հէ · 3 ։

Ակատ · նաւու թեքնէ · կամ փիլիատէ խայէխ · կէ · 2 ։

Ակնայայրատ · աչքը ապականօղ՝ մոտաօղ · խը · 4 ։

Ակումբ · ծիւմհուռ, սեւրէ · իղ · 1 ։

Աղարտեալ · աւրած, խարապ եղած · ճ · 1 ։ և իէ · 2 ։

Աղաւաղել · աւրել, փճացնել, թափթփել, եօխ ընել · բ · 3 · և կէ · 2 ։

Աղէյարմար · քիրիշով տիւղէնլէնմիշ եղած · դէ · 8 ։

Աղւսարկուն · քերփիճձիուն, թօղլաձիուն · հէ · 12 ։

Աղխեալ ազդարան · կղպած գոցուած բերան, կամ լեզու · հգ · 2 ։

Աղօր ըմբոշխնելի · տէյիրմէն՝ եզմիշ ընելու, որ է ծամելու ակռաներ · կգ · 2 ։

Աղու աղաւնի · մազլըմ եավաշ կէօվէրձին · բ · 1 ։

Աղուական · անուշիկ, մըլայիմ · կգ · 4 ։

Աղուական ախտ · թամթլը մարազըոր է ցանկութին · ղա · 3 ։

※ Աղջութիւն · մթութիւն, քարա տուման · դ · 3 ։

Աղտաղտին · աղի լեղի, ածը զեհիր · լթ · 2 ։

Աղօթկեր · աղօթօղ, աղօթաւոր · ծա · 5 ։

Աղօտանալ · մթննալ, 'ի լուսոյ պակասիլ · է · 3 ։

Աճառ · սապօն · դէ · 11 ։

Աճիւն · մոխիր , քիւլ · Ի · 1 · և ԻԴ · 2 ·
Ամանակ · ժամանակ , առէն , վագթ · 'ի չէլեպիականն ·
Ամբարձուղէշ · բարձր ձուղ ունօղ · խաձէ տալը · Թ · 2 ·
Ամենագրաւ · ամենը զարդ ընօղ · Ը · 2 · կամ խիստ սաստիկ զափթ ընօղ · Ը · 1 ·
Ամենատկար · խիստ տկար , զայիֆ · ԼԸ · 2 ·
Ամլրալ · կխրիւլթիւ , վէլվէլէ · Զ · 3 · և ՂԶ · 3 ·
Այտ · ծնօտ , երես , եանագ , եուզ · ԿԴ · 2 ·
Անագան · կէձուէն կէձ · ԼԹ · 3 · կմ վէրջինը , սօղրայրի · ԿԸ · 2 ·
Անախտակիր ※ այլոց ցաւակից չըլօղ · Ծ · 1 · և ԾԶ · 2 · կմ խարէգ չիպաչօղ · Ը · 2 ·
Անաղելի խախակութ · չխաղուած նոր ծնած բիձ · ԾԴ · 2 ·
Անարծարծելի · ան չի վառուելու · Է · 3 · և ՀԱ · 2 · կամ ան չի շիջուելու · Ի · 2 ·
Անբոյժ · չի բժշկուելու · օնղուլմազ · ԾԸ · 2 ·
※Անդաձմունք · խորունկ մտմտուք · պարսկերէն՝ էնտիշէ · ԽԵ · 3 · ըստայնմ 'ի պատմագիրն եղիշէի , 'ի երեսն 83 , Յորժամ ածաւ անդաձէլ , և փնճէալ զիմ և այլն ·
Անդամանդեայ · էլմասիպէս պինտ · ՂԸ · 10 ·
※Անդանձառք · անդ , յոր 'ի հնումն անձառելիք · որպիսի էր 'ի հին օրէնս՝ սրբութի սրբութեանցն , որ անձառելի և անմատչելի էր նց · վոյ ասացուածս՝ Արքունեց անդանձառուեց , իմացեալ լինի՝ Արքունեան սրբութեանցն · ՀԵ · 15 ·
Անդասելի · կարգէ դուրս , նիզամ չի մնած · ԼԺ · 7 ·
Անդուլ · խժիր , տայմայ · ՃԸ · 2 ·
※Անդուղեկցութիւն · այն տեղը երթալու ճամբորդութի և եօլտաշութի · ԳԴ · 5 ·
Աներևակի · աներևոյթ , կէօրինմէզ · ԽԴ · 3 · և ԾԵ · 3 ·
Աներկեան · աներկբայ , ստոյգ , ճշմարիտ , շիւպհէսիզ · Դ · 1 · և ԿԵ · 3 ·
Անընդել գազան · եպանի եաւուզ ճանավար · Թ · 3 ·
Անկանել · կցելով գործել , տօգումագ · ԿԴ · 2 ·
Անկեղակարծ · անկասկած , շիւպհէսիզ · ՃԴ · 5 ·

Անկաբնչ · չունչը կտրած, նէ ֆէսի քէսիլմիշ · Ժ՟Բ · 2 ·
Անհագագ · շունչ չունեցող, հոգի չունեցող, ճանսըզ · Լ՟Է · 7 ·
Անհամբույր · թէրպիյէյի չէկօղ, հէրկէլէ · Ի՟Բ · 2 · կամ չի գոցուօղ, շատախօս · Ի՟Է · 2 · կամ գարշելի, պէթ · Ծ՟Գ · 2 · կամ խաթր կէօնիւլ չինայօղ · Ձ՟Ը · 2 ·
Անհամոզելի · խօսքի մտիկ չընող, ինատճի · Ծ՟Գ · 2 ·
Անհատուածելի · անբաժանելի, չի պատուելու · Հ՟Ե · 5 ·
Անհրաժեշտ · անդառնալի, մուհքէմ · Կ՟Ա · 2 · կմ անխախտ, անդատելի · Ղ՟Է · 11 ·
Անձաւ · մաղարայ · Խ · 2 ·
Անձնամատն · ինք իր անձը մատնող · Խ՟Ը · 2 ·
Անձուկ · նեղկուկ · Ա՟Ա · 2 · և Կ՟Է · 2 · կամ քչիկ մը, պիր ազաճըք · Ժ՟Է · 2 ·
Անյարիր ջատուկ · վեր չելլելու նենգաւոր և ցաւագար · Ծ՟Ը · 2 ·
Անշամանդաղ · չի մթնալու պայծառ, տումանըզ · Փ · 1 ·
Անշուշտ · անփոփոխ, անխառնակ · Կ՟Ե · 1 ·
Անոպայ · էյլիկ պիլմէզ, նախս · Խ՟Ը · 4 ·
Անպատուար · պատ չունեցող, հիսարսըզ · Լ՟Թ · 2 ·
Անջրպետ · բաժանօղ, զատօղ, պէօլմէ · Ի՟Ե · 2 ·
Անսպուժելի · յետ չի ձգուելու, էհմալ չըլլըուելու · Լ՟Թ · 2 ·
Անստգիւտ · անպակաս, էքսիքսիզ, մահանաըզ · Ի՟Ը · 3 ·
Անվթար · անսխալ, քուսուրսուզ · Ժ · 2 ·
Անտարրափակ · տարերքի տակ չընկնող, նիւթեղէն բանէ րէն դուրս · Ժ՟Գ · 1 · և Լ՟Է · 3 ·
Անքատ ※ տկար, փոքրիկ, զայիֆ · Կ՟Թ · 2 ·
Աշխար, ողբ, լաց, սուգ · Ի՟Ե · 3 · Լ՟Թ · 3 · Ի՟Ը · 2 · Ծ՟Գ · 2 · և Ն ·
Աշտանակ · շամտան · Խ՟Գ · 2 ·
Աշտէ · խոշտ, մըզրագ · Հ՟Ա · 3 ·
Ապարան · անդորր, պատպանծած, անձըրկած · Խ՟Է · 3 ·
Ապազէն · զէնք չունեցող, սիլահսըզ · Է · 1 · և Կ՟Ը · 3 ·
Ապաթոյն · թոյն չունեցող, զէհիրսիզ · Կ՟Է · 1 ·
Ապախտաւոր · անշահ, էյլիկ պիլմէզ · Գ · 2 · և Հ՟Է · 1 ·

Սպահար · ամառկան հայրը բռնած · Ի · 2 ։
Սպաձեռն · օգնական չուհող, խեղձ · ԻԴ · 3 ։ և ԼԵ · 3 ։
Սպաշուք · անպատիւ, էքրամսըզ · ԼԴ · 7 ։
Սպաջանք · ջանք չըհող, խայրէթսիզ · Ք · 2 ։
Սպառում · լիրբ, առսըզ · ԺԱ · 3 ։ և ԻԱ · 2 ։ և ԿԴ · 2 ։
կամ խաթըր կէօնիւլ չինայօղ, անգութ · ՁԸ · 2 ։
Սպարանջան · ապրձան, պիլէզիկ · ԼԴ · 1 ։
Սպաւանդակ · չուան նաւու, բալամար · ԻԵ · 2 ։
Սպաւինութեն խարսխի · նաւուն մեծ երկաթը, ձան գուր-
թարան · ԻԵ · 2 ։
Սպրքինել · փարատել, դադրեցնել, կամ բոնտցընել · ՁԴ · 2 ։ և ՂԵ · 2 ։
Սպէնկաղ · անկարօտ, պակասաւոր չուհող, մուհտաճ չըլլող · ԾԹ · 2 ։
Սպիկար · ակար, խատիր չըլլող · Ժ · 1 ։ և ԻՂ · 2 ։
※ Սռակայք · առաջնակայք · առջևը, կամ մօտը եղածները, կամ քիչ մի եռև ըլլալքնելը · ԺԴ · 3 ։
Սռանցեալ · դադարել 'ի ծնելոյ, վախտն անցած · ԼԱ · 1 ։
Սռիգած · գողնող, փէշտիմալ · Ի · 2 ։
Սռկայծեալ · ճրագն որ մարելու մօտեցած, վերջին կայծակը հասած · ՁԵ · 3 ։
Սռհաւատչեայ · չէշնի, նումունէ, կեմփէյ · ԻԵ · 4 ։ ԿԵ · 2 ։ և ԿԵ · 1 ։
Սռուղեկան յաւիտեան · անցաւոր ժամանակ · 'Ի ձէլուս" ։
※ Սռօրինակեալ · բաղդատեալ, նմանեցուցեալ · Ա · 2 ։
Սռւի · բրդեղէն, չուխայ՝ և այլք նմանք · ԻԱ · 3 ։
Սպակմնտապաս · շան կերակրի խումբ ըռող · ԼԵ · 3 ։
Սպատակ · քէլէփիրձի, փուսու խըլըսըզը · ԿԹ · 2 ։
Սպարէս, կամ Սպարէզ · մեծ մէյտան, ալթ մէյտանը · Ա · 2 ։ և ԽԸ · 4 ։ դարձեալ երկրի չափ է, որ է մէկ միլ տեղին՝ ութը փային մէկն · Թ · 1 ։
Ստարտէ · կնկան կերպարանքով կուռքի մի անուն է · Կ · 4 ։
Ստփկեցի · աթենացի, որ 'ի հնումն այս քաղաքացւոց լեզու
մարդն՝

մարդն՝ խիստ նամառը, և ղվատն՝ խիստ պէլթնամ համա րէին · կե · 1 ։

Ռահետ · լաւ ճանբայ, քէօու եօլու · թ · 2 · կամ շիտակ ճամբայ, ճատէ · խղ · 3 ։

*Ռամաթացի · Ռիմաթացի, ուստի էր Սամուէլ մարգա րէն · ճը · 1 ։

*Ռբուն · կատարեալ հասակ, քեամիլլէք չաղը · դ · 2 ։

Ռգահատել · ցաւակցելով մխիթարել, սիրտ տալ · ժը, 1 ։ կամ աղաչել, րէճա ընել · ժե · 1 ։ և ծե · 2 ։

Ռգաստուոր · արդիւնաւոր, մէյվէտար · ծէլատ″ ։

Ռդարալուկ · հախ տեղը տանջուօղ · իթ · 2 ։

Ռդեան · հիմիկուան, շիմտիքի · հէ · 8 ։

*Ռդվատնական · հիմիկուց թէլէֆ եղած · իը · 2 ։

Ռկածք · փորձանք, պէլայ · գ · 3 ։ և կ · 2 ։ և կէ · 2 ։

Ռձագանք · յետ դարձօղ ձայն, որ մաղարաներուն մէջ, կամ խորունկ տեղուանք՝ կանչօղն ինչ որ կանչէ, զայն կու լսէ · ղէ · 8 ։

Ռուարձան · քարէ փորած երիկ մարդու պատկերը, կուռք · կ · 4 ։

Ռութիւն · արխութի, կորիճութի · իթ · 3 ։

Ռուսեակ · սապահ երլտըղը, ղէօհլէ · կմ արեգակն · կմ սադայէլ · լգ · 2 ։

Ռջնաթայր · սև գոյն ունօղ · կթ · 2 ։

Ռջնատես · սիեահ կեօրիւնիւշլիւ · լա · 3 ։

Ռտալած · ճամբէ դուրս ելած, եօլուզ պէլթնամ · կամ սիւրկիւն եղած · ծգ · 2 ։

Ռտաքնայարդար · դրսի դիւյէն թէմիզ · իէ · 3 ։

Ռտուղի · ճամբէն դուրս, ծուռ, եանղլըշ · հը · 3 ։

Ռփիացնցուղ · լոյս տարածօղ, շաւիս ծագօղ · դ · 1 ։

Ռոտ · արծուելու տեղ, չայըրլըխ · իե · 3 ։ կ · 2 ։

Ռոր · չիֆթ քշելու գործիք, սապան · ծդ · 2 ։

Ռաղական · ափսոսական, ողբալու · իղ · 1 ։

Ռանդ · էմանէթ · դ · 1 · կամ տուրք, վէրկի · թ · 2 · կամ թէմայիհ,

Թէմպիս, վասիէթ · Իէ · 4:

※ Աւողական · բեռի ալըշմիշ չեղած, աճամի, հերկելէ · Իը · 2:

Աքար · պատժուած մարդու մը անունն է · Յեսուայ · 7 · 1 · || Իէ · 2 · և Հա · 3 ·

Աքիա սիլոնացի · մարգարէի մը անունն է, որ 'ի սելով քաղաքեն էր · Գ Թագա'' · Ժա · 29 · || Խը · 4 ·

Բաբելոն, կամ բաբելոն · պաղտատ քաղաքն է · Ա · 1 : և Կէ · 2 :

Բագին · կուռքի սեղան, կուռք · Իէ · 3 · և Հէ · 13 :

Բաղանիկ ※ բաղնելու տեղ, մաքրան · Կ · 3 :

Բազմական · մեծերու նստող · Խը · 1 : և Ղդ · 4 · կամ բազմելու, նստելու տեղ · Ղա · 3 :

Բազմաձեռնեան խարդաւանօղք · շատուոր հիլլէպազներ · կամ ֆէնտերով խաբօղներ · Ղէ · 9 :

Բազմայածեան · ամեն անդին ընկնօղ շրջօղ, բարբառական պըտըտօղ · Կ · 3 :

Բազմաստեղնեան · շատ ճիւղ ունօղ, տալլը պուտախլը · Խն · 2 : և ձէշըա'' :

※ Բազմորկածեան · շատ փորձանքոտ, Թէհլիքէլի · Հդ · 2 :

Բահաղ · կուռքի անունն է · Կդ · 2 : և Ղդ · 6 :

Բամբիռն, չալփարայ, զիլ · Ղէ · 8 :

Բանդագուշեալ · խելացնոր, չըլղըն, Թիմըրխանայի խենթ · Ժը · 2 :

Բանին սերմնականութիւն · խօսքին էօզը զայ ընելը, խենթ ու մէնթ եօլսուզ խօսիլը · Խն · 2 :

Բառաչ · ոչխարներուն և նմանեաց պօռալը · Ժէ · 2 :

Բառացի · փառաւոր, չէօհրէթլի · Ղէ · 8 :

Բասիլ · Ա Վասիլ, էր կայսր յունաց · ձէշըա'' :

Բարեկլի · մեղադրելի, այըպլանմաղա լայըգ · Ղա · 3 :

Բարբանջումն · խօսիլ չի կըցողի բերնով խօսիլ · Ղէ · 8 :

Բարացուցական · բանքը ցըցընօղ, Թասվիրը յայտնօղ · Ղէ · 8 :

Բարբաւոր · դրան վերի շեմը · Ղա · 2 :

Բարե

Բարետաւիղ · անուշիկ խայտէլի, տիւզէնլի · ղը · 8 ։
Բարեքիմ · զաքարեայ մր̃գրէի հօրն անունն է · ղդ · 8 ։
Բարունակ մանհողկուզեան · ասմայի ճուղ՝ որ վէհֆրլի սալ
խըմ ունի · է · 2 ։
✳ Բաւանդակապէս · բովանդակապէս · կամ բաւականա
պէս · ղ · 4 ։
Բաւիղ · սաչախ, որ մազարայի, կմ̃ դրան վ̃ր լինի · խ · 2 ։
Բժժանք · պիւյիւճիլի, կմ̃ պախըճիլի չըխըն · կղ · 4 ։
Բիծք բոցակիծք · կրակիպէս կծուած ուռեցներ, ինչպէս՝
թախտապիթիէն · կմ̃ սիվըի սինէկէն խածուած տեղուան
քըն · կթ · 2 ։
Բոլորապատուղ · ողջակէզ, թամամ փիշկէշ · ա̃ · 1 ։
Բոսորայ դիտակունք · կարմրագոյն արիւնաթաթախ լէշէր ·
կը · 3 ։
Բոսորայեն · կարմրագոյն, կարմրած, քըզըլ · կդ · 1 ։
Բուեալ · սըվալած, կամ պատառեալ եղած · իէ · 3 ։
✳ Բունախոյեան · դէմէլլօղ կարիճ ճէնկճի · ղդ · 18 ։
Բունամարտիկ · կարիճ ճէնկ ընօղ · կղ · 2 ։ կամ ուժով կիւ
լէշմիշ ըլլօղ · ղդ · 13 ։
Գահաւորակ · թահտրավան, քեօշկ · իե · 2 ։
Գաղձնաւոր · զարալը խոտերով, կամ ոջըլը խոտով
լցուած · ծղ · 2 ։
Գաղտնակուր · գաղտնի ուտօղ, ինչպս՝ պաղըրսախից մէջի
որդերը · կթ · 2 ։
Գայիսոն · երկան մըզրախ · ղը · 4 ։
Գանչուլթի · հնչումն, կանչուածք · ղը · 8 ։
Գարնանազայր գետ · գարնան ատենը աղմիշ ըլլօղ չայ,
թաշխըն ըրմախ · ծդ · 3 ։
Գեղայօրէն · գեղեցիկ յօրինած, հիւսիւնլիւ · ղդ · 24 ։
Գեղմն · ձերմակ բուրդ, եափաղը · ծը · 1 ։
Գերաբնապէս · բնուն աւելթէն վեր, հրաշապէս · ղդ · 8 ։
Գերանակիր · տիրեկ կրօղ, կամ տիրեկ ունօղ · իէ · 3 ։
Գերաշխարան · խիստ ապաշխարօղ, շատ լացօղ ողբացօղ ·
խը · 5 ։

Գերաշխարհիկ · ամենէն պատուաւոր, խիստ իթիպարլը · Դ · 3

Գերունակ · ամեն գերազանցութիւն և կատարելութիւն ունօղ · ԽԷ · 2 ։ և ՀԵ · 7 ։ կամ ամենէն էվէլ ունօղ · ԽԹ · 2 ։

Գթել · գըլթիլ, սխալիլ, չի գտնալով պակասութիւն ընել ընկնիլ · ԼԱ · 2 ։ ԾԵ · 4 ։ ԾԷ · 3 ։ և ՀԲ · 2 ։

Գժդմնութիւն · սրդողելով երեսը ծռելը, իղզապ · ԽԵ · 2 ։

Գժտութիւն · կռիւ, նիզա · ԽԵ · 2 ։

Գինդ, գնդէ · օղ, քիւփէ · ԼԴ · 1 ։

Գիշերավար · սատանայ, շէյթան · ԼԷ · 1 ։

Գլխաշուք կատու · գլուխը ծածկօղ՝ զարդարօղ լաչակ · ԼԴ · 1

Գլխաւորել · գլուխ հանել լըմնցնել · ՀԱ · 2 ։

Գոդջի՛ք · ասացէք · ՀԲ · 1 ։

Գողտրական · կակուղիկ, փափուկ, նազիք · ԽԳ · 2 ։

Գոմոր · սոդոմայ մէկ քաղաքն է · ԾԴ · 2 ։

Գոյարան · գոյացնօղ, ստեղծօղ, վար էտիճի · ՃԴ · 1 ։

Գործականութիւն · գործելը, իճրա ընելը · ՂԴ · 20 ։

Գործնականաց գործի · գործելու ալէթ, որ է՝ ձեռքն · ԽԴ · 2

Գործօնեայ · գործօղ, փէյտահ ընօղ · ՃԴ · 1 ։

Գումարտակ · գումարեալ բազմութիւն, ճէմիէէթ, ճիւմհուր Գ · 3 ։ ԽԴ · 1 ։ ԼԷ, 1 ։ և ՀԵ · 12 ։

Գունել · գոյն տալ, ներկել · ԼԳ · 2 ։ և ՂԴ · 17 ։

Գուպար · պատերազմի զօրք, ճէնկ ասքէրի · Կ · 4 ։

※ Գուիհ · գուեհ, սօխախ · ԿԷ · 2 ։

Գրաբանական · գրով խօսուած՝ ղըուցած · ԼԴ · 1 ։

Գրաւական · չէշնի, նումունէ · Ժ · 2 ։ և ՂԴ · 16 ։

Գրգեալ · գէվգի սէֆայի մէջ ըլլօղ · ԽԸ · 2 ։

Գրկանք · սիրով և գթով գրկելը, գուճմագ · ԽԷ · 2 ։

Գրուան · շինիկ, ցորենի էօլչէկ · ԼԵ · 3 ։

Գօշել · կսկծցնել, խըշխըշցնել, սիրտը ցաւցընել · ԺԷ · 1 ։

Դաթան, Աբիրօն · երկու եղբարք էին, որ մովսէսի դէմ կեցան ու գետինը անցան · Թւ․ 16 · 1 ։ ‖ ՂԸ · 4 ։

Դանդաչել · գուրգուրալ, քէօրլիւպէս շարժիլ · ԺԹ · 3 ։

Դանդաչեցուցանել • երերցնելով չինկըր չինկըր ձայնը հանել • ՂԲ • 8 •
Դասակ • սիւրիւ, պեօլիւկ • ԿԴ • 2 •
Դաստակներ • վձիռ, սինձիլ • Դ • 1 • և ԺԷ • 3 •
Դարաստան • դրախտ, պախչա • ԽԴ • 3 •
Դեգերեալ ողբայ • աղլայըպ եաթըրեօր • ԻՆ • 2 •
յորդք Դեգերիլ • գերեկնալ, ըրէձաւեա մէշղուլ օլմաղ • ԺԲ • 1 •
Դերուքն • նեւն, թէձձալ • ՂԹ • 1 •
Դժնիկ • փուշ, քարա չալը • ՂԹ • 2 •
Դժուարամբերելի • դժար անուշնալու, ղէհիր դապիէթլի • ԻԸ • 3 •
Դժրել • խօսքէն դառնալ, խաւլը աւրել • ԾԵ • 4 •
* Դիղ • ո՞ դիղեցի, եըղմիշ ըրի • ԻԵ • 3 • կա՛մ նիզամը շարեցի • 'Ի ծէշտաշխարհն •
Դիմագրաւութիւն • գլուխը օրթան դնելով սերպէստութիւն, սերտէն կեցողութիւն • Կ • 4 • և ՀԱ • 1 •
Դիմակ • դէմք, կերպարանք, քիափէթ • Դ • 1 •
Դիմակերպութիւն • ույղունութիւն, մինասիպէթ • ՂԴ • 4 •
Դիմակս դիմակս • թիւրլիւ թիւրլիւ • ԼԹ • 3 •
Դիտակ • տեսնելու բարձր տեղ, ինչպէս՝ կէմիին չանտըլը • ԻԵ • 2 • կամ տեսնելու տեղ, ինչպ՝ մարդոյ երեսը • ԿԵ • 2 •
Դիտակ ոստոց • ծառի ճուղերուն ծայրը • ՂԵ • 9 •
Դիւաճինձեր ղոհարան • սեղանայի համար ղուրպան եփելու տեղ • ԾԱ • 4 •
Դիւրափոփելի • խօլայ փչրուելու, փառելու • ՀԴ • 3 •
Դուժ • եապանի միլլէթ, խօրեաթ • ՂԴ • 12 •
Դստիկոն • տանը խաթը, կամ վերի խաթը • ՂԹ • 2 •
Դսրովել • քամաչրել, սիթէմ տալ • Ղ • 3 •
Դրականապէս անուանագրութիւն • ույղունձա լաղապ դնելը • ՂԴ • 19 •
Դրանդ • դրան վերի շէմը • ՂԲ • 5 •
Դրօշակ, կամ Դրօշմ • դրօշած, օրհնած շինուած • ԼԴ • 8 • և ծէշտա" •


Դրօշ

Դրօշ · թուղ, սանճախ, խաչալէմ · ԼԷ · 1 ։
Դրօշեալ · փորուած կուռքի պատկերք · Է · 1 ։ և ՃԷ · 12 ։
Եդովմայեցիք · Եսաւայ այալէթին բնակիչները · Ա · 2 ։
Եզօղ · եզ վարօղ, չիֆթ քըշօղ · ԾԴ · 2 ։
Եթովպացի · արապխաանցի, արապ · ԾԴ · 2 ։
*Ելլենացի · Հելլենացի, հոռոմ · ՂԴ · 12 ։
Եղեամն · խըրաղը, որ ձիւնի պէս կու գայ · ԿԸ · 3 ։ և Դ · 3 ։
Եղեանագործ · չարագործ, ղնեամքեար · Դ · 3 ։ և ՂԱ · 3 ։
Եղերական ջայլ · լալկաններու թախըմին լացը · ԿԸ · 1 ։
Եղեւին · բարձր սերվին, կամ չամի ծառ · ԿԱ · 3 ։
Եղեգնախունկ · պուհուր գամըշը · ՂԴ · 11 ։
Եղեգնախաւ · խամըշի կոտրուք՝ եօնկա · Է · 3 ։
Եղիճ · ըլըկան օթլուղու · ՀԱ · 2 ։
Եմակ · ձոր, տէրէ · Խ · 2 ։
Եպերել · քամահրել, խաթիրըքալ օլմազ · ՃԷ · 5 ։
Երախայրի · առաջին պտուղ, թուրֆանդայ · ԼԱ · 2 ։
Երախան · լալկաններու սիւրիւ · ԻԴ · 1 ։
Երամակ · սիւրիւ, սիւրէկ · ԽԴ · 1 ։
Երասանակալ · ախզկինը բռնօղ, զապթ ընօղ · ԼԵ · 2 ։
Երբեք, *Երբեմն · ժամանակ, զամանն · ԼԴ · 3 ։
Երգիծանուն · սիրտ կսկծցնելու խօսք, սիթէմ · ԽԸ · 2 ։
*Երևականուն · երևոյթ, խէյալ կէօրինիւշ · ՂԴ · 10 ։
Երեւիլ · ծառոց և խոտոց կիւվէնն է · ԿԸ · 3 ։
*Երիզապնդեայ · երկան կտաւով սըխը փաթթած · ԾԸ · 3 ։
Երիթացեալ · ցամքած, չորցած · ԻԹ · 2 ։
Երինջ · մատղաշ կով, կէնճ ինէք · ԽԵ · 2 ։
Երէքով · որ երուսաղէմի աէմ'թը քաղաքի մի անունն է ·
ԿԴ · 1 ։ և ՂԵ · 4 ։
Երկակշիռ տարրուն · երկու ներհակ բան, ինչպէս՝ տաքն ու պաղն, ցուրէկն ու գիշերն · ՂԴ · 2 ։
Երկեւանութիւն · կասկած, շիւպհէ · ԺԱ · 1 ։
Երկնաձեմ · երկինքը հանօղ, կէօյէ չքարան · ԼԵ · 2 ։
Երկնել · տղայբերքի ցաւ քաշել · Ա · 2 ։ և ԼԵ · 2 ։



Երկուո

Երկուորեակք · լուծք եզանց, որով չիֆթ կու քշէն · ծդ · 2 ·
Երկրակենցաղ հենք · երկրիս վր կեցած մախլուքութիւններ, աշխարքիս միւլթալիֆ խալքութիք · հա · 4 ·
Երկրորդութիւն · կրկնումն, թէքրարլամիշ ընելը · հե · 1 ·
և ղէ · 10 ·
Երփն · գոյն, ռէնկ · հա · 2 ·
Երկք · աշխատանք, զահմէթ, մեշաքքէթ · է · 1 ·
※Եւղընծիւղ փայտ · եղ տուող ծառ, ինչպէս ձիթենի · լթ · 2 ·
Զակատիլ · քէօրլիւպէս՝ շաշխընիպէս ռուէպին ըլլալ · ի · 2 ·
Զանգուած, կամ Զանկուած · քանի մի բաներէ խառնուած՝ մէկ խմոր եղած, ինչպէս՝ միրգոյ մարմինը · իդ · 2 · և հա · 1
Զառածեալ · մոլորած, ճամբէն ելած · ը · 1 · և կդ · 2 ·
Զարհօրատեսակ · զարհուրելի տեսք ունող, աչքին չէհարելի · ղդ · 12 ·
Զարմանութիւն · զարմանալիք, թաաճիւպ ընելու · խթ · 1 ·
Զեղծանիլ · սրտիլ, խօսքը փուճ ըլլալ · ծե · 1 ·
Զըլացող · երախտամոռաց, հախը ինքեար ընող · ձէ · 3 ·
Զըմբաղ · ուրախութիւն, զէվք՝ սէֆա · ծե · 3 ·
Զընդամզընդանաց · չարչարուելով զընտանով · ժդ · 1 ·
Զկծեցուցիչ · սիրտ կսկծցնող, աղէքը կտրող · լթ · 3 ·
Զկծիլ · հազմ չընելով սիրտը երիլ, իթ · 2 · և կդ · 2 ·
Զմուսալիր · քաղցրահոտ անուշհոտով լցուած · ղդ · 6 ·
Զոփանալ · ցրտէն դողալ, թիթրեմէք · իթ · 2 ·
Զռահետական · պօշ պարապ, անպտուղ մէյվէսիզ · խե · 2 ·
Զօրէն · նման, այնի · Զօրէն խայթոցաց կարճաց · այնի ախրէպներու խույրուխիցպէս · կթ · 2 ·
Ըղձութիւն · իղձ, փափաք, աշգ · ղդ · 1 ·
Ըմբերանեալ · ափլբերան եղած, հախ չունելով պապրնծած · ը · 1 ·
Ըմբոշխնել · ծամել, չէյնէմէք · ե · 2 ·
Ըմպահկանք · արհամարհանք, բեզարլէթ, մեզադ · խը · 4 ·
※Ընդլուղեալ · ջուր մէջ պաթմիշ եղած · դ · 3 ·


Ընդակից

Ընդակից · հետը ուղղուն, այախտաշ · կա · 1 ·
Ընդարմացուցիչ · թմրեցնող, սերսեմցնող · ձգ · 3 ·
Ընդգոգեալ · գոգին մէջ ժողուած պահած · ծա · 4 ·
Ընդերք · փորոտիք, փորու միջի աղիք, պաղըրսախ · լգ · 2 ·
Ընդ կրունկն դառնալ · յետ յետ գնալ, կերի կերի կիթ-մեք · հա · 2 ·
Ընդհատ · պակաս, հեռու, ֆարգլը · հբ · 2 ·
Ընդմիջարկուն · օրթայէն խբրու պատ քաշելը, մեօհքեմ թենպիհ · ղգ · 6 ·
Ընդմիջել · միերան քաշել լէ · 3 · կամ էնկել ըլլալ՝ ղա-տել · ձղ · 1 ·
Ընդոստնուլ · վեր ցաթկել ելլել, սըչը րամագ · ե · 3 ·
Ընդունայնաթող քիրտն · սըխըլէթ տուող պօշ քրտինք, որ է ասել՝ նաֆիլէ ղահմէթ · խբ · 4 ·
Ընդպահկել · երեսէ ձգել, ձեռքէ թող տալ · ձէ · 3 ·
Ընկճիլ · սըմքիլ, տակ ընկնիլ, սինմէք · ճ · 3 ·
Ընկրկիլ · յետ ընկնիլ, յետ փախչիլ, կերիյէ գափանմագ · ղա · 1 ·
Ըստանձնել · շալակն առած, իւքլէնմիշ · ծե · 3 · և հէ · 3 ·
Ըստ բան քո · քու խօսքէդ դուրս, սէնին սեօզինտէն տը-շարը · հզ · 1 ·
Թաւանչ · հառաչանք, կեօյիւս կեչիրմէք · խբ · 2 · ճ · 1 · և խբ · 2 ·
Թառ · մէյտան օյունու, չէնկի օյունու · լա · 2 ·
Թարահատ · կուռքի անուն է, զոր Թարա հայրն Աբրահա-մու շիներ էր · կ · 4 ·
Թարթափուլն · աչք գոցել բանալը · լէ · 3 ·
Թարմատար · փուճ, պօշ, բանմը չարժող · ծգ · 2 · և կ · 4 ·
Թափանցանց · մտնող անցնող, թէշէսիր ընող · ղբ · 12 ·
Թեղան · մնած, երկան թել · ղբ · 24 ·
Թելադիր · յորդորող, թահրիք էտիճի · խբ · 2 ·
Թերափ · կռապաշտից գործիք, համայիլ · խբ · 3 ·
Թէ ինդս առնուլ · ցաթկել, լողալ · հա · 3 ·

Թխատիպ · սեւագոյն, մութ գոյն, զիֆիրի · Ճ · 3 ·
Թշուառաբերան թշնամի · մեհունան քրտնելով վաստակ,
մէջագզեթլի իլլաթ · Խե · 3 ·
Թոթափեալ · չարչարուած, պերպատ եղած · Հբ · 3 ·
※Թուլաթաշնակեալ · թեւերը թուլցած, թեւերը առ-
րած · ՂԴ · 20 ·
Ժայթքել · փսխել, գուսմաք · ԿԵ · 1 ·
Ժանիք · գազանի ակռաներ · Դ · 1 · ՃԶ · 4 · և ՃԹ · 4 ·
Ժխտօղ · ինքեար ըսօղ, հերքէ ըսօղ · Է · 1 ·
Ժողովեալ · մարդիկներով լցուած, հաւաքած, լեցուած · ՀԴ · 2
Ի գինն թուլանալ · շիտակ ձամբան չի կրնալ երթալ,
թուլնալ ու ձամբան մնալ · ՀԾ · 2 ·
Ի ձիւղս մտանից թռչել · մտքներուն վերայ մէկիկ մէկիկ
համբել · ՃԸ · 3 ·
Իններեակ յոբելինի · ինն անգամ յիսուն, որ է չորս հա-
րիւր յիսուն · Ճշտաա ·
※Ինքնաբուղխ բարձրաւոր · ինք զինք յարգօղ մեծարօղ հը-
պարտ · Դ · 2 ·
Ինքնագոր · ինք իր հետ կռուօղ, ձենիկ ըսօղ · ԾԹ · 1 ·
Ինքնօրէն · ինքիրմէ, կենտի քէյֆինէ · ԿԾ · 1 ·
Ի շանդամ · իշու անդամիպէս ամօթ ունօղ · Ղ · 4 ·
Իւր անունն ※ իսկոյն · բուն իսկական անունն իսկու-
թեանն, զաթինին իսմի զաթի · ՂԴ · 18 ·
Իրաւամերժ · իրաւունքով մերժուած, միւսթահախը գը-
տած · ԻԹ · 2 ·
Լայնատարր հերք · լան հարձակ ճամբայ, էնլի եօլ · Ն · 3 ·
Լանջք · կուրծք, կէօքիւս · ԼԴ · 1 ·
Լաստ · նաւուն տախն, կէմիի թեքնէ · ԻԵ · 2 · և ՁԵ · 2 ·
Լաստին դադարք · կէմին հանգչելու տեղը, լիմանն ·
ԻԴ · 2 ·
Լափլիզօղ · լափելով լիզօղ, արունը ծըծօղ · Ծ · 1 ·
Լինիլ · անամօթ լինիլ, էտէպսիզ օլմագ · ՂԶ · 4 ·
Լուծ · թէրազիի թաթ, աչք · Թ · 1 · կամ պօյունտուրուխ ·
Խե · 2 ·

Լուծք տուարք ամոլից · կեմփի կեօվերլթէլն հասար գօ-
տիները · իե · 2 ։
Լուղակ · լօղացօղ, ինչպէս՝ ձկները · հա · 3 ։
※Լուռ · լսեցէ, էշիթմտիր · ձէ · 1 ։
Լուսանցոյց երդ · երդիկէն լոյս մտնելու տեղ, պանճա ·
ժը · 3 ։
Լուսնական դիպուած · լուսունկայէն զուհր եղած խույ,
թուլթարրլս · ձը · 6 ։
Լուտացօղ · քամահրօղ, պէթ սեօյլէյիճի · ժա · 3 ։
Լպրշեալ · անամօթ՝ էտէպսիզ եղած · ծզ · 2 ։
Լքնացեալ · ձերմըկած, ինչպէս՝ լուացած եարայլն տեղը ·
իդ · 2 ։
Լօդատար · լըման լեցուն, միւնէվվէր · ժէշտար″ ։
Լրթադոյն · մրթնադոյն, մէջ գարամթը · լ · 2 ։
Լքանել · դուրս ձգել, ըէտտ էթմէք · ը · 3 ։ և իէ · 2 ։
Խալթուրեալ · աւրած, խարապ եղած, փճացած · իէ · 3 ։
Խակախորհուրդ · խամ խմացմունք, ճահիլլութ · ղը · 8 ։
Խաղաւարտ հրակայծակ · կծած ուռեցք՝ կըվկըմլը երօղ
կսկծցնօղ · կթ · 2 ։
※Խաղը · իբրև թէ՝ Խիղը, որ է՝ կապ, կամ կապանք ·
ըստ այլոց՝ Խաղը, որ է՝ որոգայթ · լը · 3 ։
Խայլեք · պառուղներ, մէյվէլեր · լդ · 1 ։
Խառնիճ, կամ Գ որեակ · խառնասարդ չէքիրկէ · կը · 3 ։
Խարան · եարա տաղլամիշ ընելու երկաթ · գ · 1 ։ կամ
տաղլանմիշ եղած խոց · ձէ · 2 ։ և ղդ · 6 ։
Խարդաւանք · խաբեբայութիւնք, ֆէնտ · կ · 2 ։
Խարխափանք · քէօռի քալուածք, գուրփուրալ · ժէ · 2 ։
Խափուցանել · խափանել, մէն ըթմէք · կդ · 2 ։
Խեւք · նաւու խռչ ։ Խեւք շըթանց · խըշխն թարաֆի
քիւփեշտէներ · իե · 2 ։
Խենեշանալ · էտէպսիզճէ հագուիլ կապուիլ · հը · 2 ։
Խժական բարբարոս · կոպիտ, խորեաթ եարամազ · ղդ · 6 ։
Խիզախել · համարձակիլ, ճիւրահաթ ընել · կը · 3 ։

Խիթ

Խիթ • խստուկ , սանձը • Գ • 1 • և Իդ • 3 •
Խլրտումն • տեղացը ժաժիլ , թէփրէնմէք • Գ • 3 • և Է • 1 •
Խծբիծ • խառնելը փնտըռելը , տրաշտըրմայը • Խը • 4 •
*Խխայթ • խղխայթ , պէօճէկ , թըռթըռ • Է • 1 •
*Խնծիղք • խնտում , զէվկ , շադլըք • Ժ • 1 •
Խնկաւորութի • օրհնէնք , գովասանք , մէտհ • ԴԺ • 14 •
Խոհեր • գարշելի գործք , մուրտառ բան • Խե • 2 •
Խոպանացեալ • չորցած , աւրած , խարապ եղած • ՀԺ • 2 •
Խորշակ • տաք հով , սամ եէլի • Կդ • 4 •
Խուել • չարչարել , էզիէէթ էթմէք • Կդ • 4 •
Խուզել • որոնել , փնտըռել • Թ • 2 • և Ծե • 4 •
Խուժադուժ • եապանի , ապուռճուպուռ • Կ • 4 •
Խուճապել • խիստ աճելէով սխլէթ ընել • Ձթ • 3 •
Խուն • սակաւիկ , ազանճըք • ԿԺ • 2 • Ձ , 2 • և ՁԺ • 3 •
Խուփ • հարօրի երկաթ , սապան տէմիրի • ԴԵ • 7 •
Խտրոց • զատող մէջոց , պէօլիւճիւ սընըռ • Ե • 1 • և ԴԵ • 7 •
Խրթնանալ • խուժուիլ , մթննալ՝ զզուիլ • ՀԵ • 11 •
Խրթնի • սեցած , աղտոտ , չիրքին • ԴԿ • 12 •
Խօլական ցնորք • խէնթ ու մէնթ երազներ • ԺԵ • 3 •
Խօսնականաց շարժողական գործի • լեզու , տիլ • ԼԵ • 3 •
Ծայրակոտոր • ծայրադոյն կտտրօղ , խիստ չարդօղ •
Իը • 1 •
Ծերպ • քարերու և ծառերու ծակ , գօվուք • Խ • 2 •
Ծնդեցեալ • հալած մաշած , խիստ վատուժ • Ծը • 2 •
Ծորիլ • մաշիլ , եօխ ըլլալ • ԿԵ • 2 • ՀԺ , 2 • և ԴԵ • 10 •
Ծործոր • լեռներու մէջ տէրէ , ձոր • Խ • 2 •
Ծորումն • կաթելը , վազելը , բըխալը • ԼԵ • 1 • և ԴԴ • 19 •
Ծուէնք • պատառտուք , պէզ ըռթըլարը • ԽԵ • 2 •
Ծուղակ • որոգայթ , տուզախ , խափանճա • Խդ • 3 •
Ծուր և Ծայթան • էն քաղաքք փիւնիկեցւոց • Եզէկ՞ •
• 28 • ‖ Ե • 1 •
Ծրգեալ • աղտեղեալ , պըը չկած՝ մրտուած , մուտտարլան
մըշ • Ե • 1 •

Կազդուրել • նորոգել, բժշկել և խալըսել • Ճ • 3 • և ձգ • 2 •
Կականիլ • հեկեկալով ողբալով լալ, էզիլիւր էզիլիւր աղլամագ • ժբ • 1 •
Կաղակարծ, կամ Կեղակարծ • շիւպհէլի • Ղ • 2 • և խը • 2 •
Կաղկանձողական • ճնկճնկալով, եալթախլանմիշ ըլլալով • լե • 3 •
Կայթ • ցաթկտելով խաղ, պար • իա • 2 • և լա • 2 •
Կայտառ • ճստակալ կենդանի, պէօճէկ • խե • 3 •
Կայմ • նաւուն ելքեն բանալու սէրէն տիրէկլի • իե • 2 •
Կապարան ձգողական • ջուա՛ն՝ քաշելու, իպլար • խե • 2 •
Կապտրանք ղլասի • նաւու թէքնէի երկու կողմի կապերը, խապուրղաները • իե • 2 •
Կապարճ • նետ դնելու աման, թէրքէշ • կղ • 4 •
Կապուտ • եաղմա եղած ապրանք, թալան, քէլէփիր, փիրէզա • ժզ • 1 • և հե • 7 •
Կառափիճ • գլուխ կտրող, սպանող, ճէլլատ • ճը • 2 •
Կարակումմօր • մուրտար չամուռ, պալչըխ • ձգ • 3 •
Կարեկցել • ցաւակից ըլլալ, հալտաշ ըլլալով օգնել • ղե • 1 •
Կարթ • որոգայթ, քէմէնտ, օլթա • խզ • 3 • և կզ • 4 •
Կարծրերախ • տխկլինի չէկող, ղայթ չըլլըւող, ինչպէս՝ գլուխը սէրթ ձին • իը • 2 •
Կարկառ • քարերու եղըն, թաշլըխ • կէ • 1 •
Կարկառել • մատուցանել, երկնցնել, սունմագ • ժը • 2 • լէ • 2 • և ղէ • 9 •
Կարկառ կուծուծ • վեր վերցնելով զարնելը • ղը • 2 •
Կարկեհան • ճէվահիր քար, որ գիշերը լոյս կու տայ, չամչըրագ • հե • 12 •
*Կարութիւն • կարողութիւն, քատըրլըք • ժթ • 4 •
Կափառնայում • յորդանան գետի բերանը մեծ քաղաք մի է • է • 1 •
Կաքաւ • ձաթկտելով խաղալը • լա • 2 • և ղէ • 6 •
Կեղեքել • պատառտել, բըզըքտել • ժէ • 1 • և կը • 3 •


Կենդա

Կենդանախարոյկ կայծակն · երելով մաքրօղ՝ ողջունօղ կրակ · ԼԴ · 5 ։
Կենսախօրախոյս · կեանքի ուժուտ տուօղ · ԽԴ · 2 ։
Կիսայար · կիսկատար տոյանմիչ եղած՝ կանգնած · ԼԷ · 2 ։
Կիտի կորիւն · մեծ ձուկի եավրու · ԽԵ · 1 ։
Կիւրոս · Պարսից թագրի մի անուն է · Եսա″ · 45 · 1 ։ || ԴԴ · 6 ։
Կմախք · մեռելի ոսկորներ · ՀԴ · 2 ։
Կնդրուկ · անուշիկ հոտով ծխանելի պուհուր · Ի · 2 ։ ՀԵ · 4 ։ ՂԴ · 8 ։ և 19 ։
Կնիւն · սաղ, որ ջրոտ կեօլ տեղ կը բուսնի · ԼԹ · 2 ։
Կշտամբեալ · յանդիմանած, չեխուած · Է · 1 ։
Կուփող · խումբուխով գլխու զարնօղ՝ ծեծօղ · ԼԴ · 2 ։
Կոթող · բարձր տնկած քար, տիքելի տաշ · ԼԵ · 2 ։ և Յես″ ։
Կոհակ · ալիք ծովու, տէնիզ տալկասը · ԽԵ · 2 ։ և ՁԵ · 1 ։
Կողկողանք · խղճալի կերպիւ լալը՝ աղաչելը · ԻԴ · 1 ։
Կոշկոճել · խիստ չարչարել՝ տանջել · ՀԶ · 3 ։
Կոշտ · պինտ հողի կտոր, խումբու հող · ՀԴ · 3 ։
Կորակոր գնացք · ծռմռկելով քալուածք · ինչպէս՝ փիրէյին գողնալէս սինմիշ ըլլալով քալելը · ՂԹ · 2 ։
Կռեալ · զարնուած՝ եարալանմիշ եղած · ՁԷ · 2 ։
Կտեալ դիպուած · զարնելու դպչելը, փուրուձու տօքա նըշ · ԴԷ · 5 ։
Կրթականութիւն · թալիմլի մարիֆէթ, հիւնէր · ԽԴ · 1 ։
Կրկնադատ անթափելի · թէքրար սիձիլ եղած՝ որ ալ չի ազատուիր · ԻԴ · 2 ։
Կրկնակապէն · երկու անգամ տրուած կաշառք, որ անգամ մի յուզայն տրուեցաւ, անգամ մի ալ գլխուորներուն, ԼԴ · 2 ։
Կրկնապարոյր կուածագ · չէնիքէլիպէս ծառը ծուռ, ինչպէս փիրէյին կտուցն է, ՂԹ · 2 ։
Կքուած · սրմքիլը, երկու խաթ ըլլալը, խասխաթի մընալը · ԺԸ · 2 ։
Հագագ · ձայն, շունչ, սէտա, նէֆէս, ԽԴ · 2 ։ ԽԵ · 2 ։ Ղ · 1 ։ և ՂԴ · 12 ։

Հալուէ · անուշահոտ եղ մի է, կամ հօտ ալաձին հօղը ,
ՂԳ · 11 ·
Հաղբ · որոգայթ, թուղախ · Գ · 1 · ԾԳ · 1 · և ԾՆ · 2 ·
Համբանաբար զուգամանութը · միաբերան ամէնը մէ_կէն , ՁՆ · 2 ·
Համաձևութեն օրէնք ✳) բռածը գտնելու օրէնք, գրասա գրոտ չէրտհաթը · ինչպէս մովսիսական օրէնքն էր՝ ...
ընդ·ալան, և այլն · ՀԲ · 2 ·
Համառօտ էրբ · կարճ ժամանակ, քըսա վագթ · ՃԲ · 6 ·
Համանեալ յանանջըղեա միականութիւն ·) միաւորեալ անբաժանելի միաւորութը · ՀԵ · 7 ·
Համասփիւռ · ամէն կողմ եայըլմիշ եղած · ԼԳ · 1 ·
Համբարտակ վստահուն · սըղլըմիշ ըլլալու խուլէ · Գ · 4 ·
Հայթայթանաց կրկուտ · կէշինմէյի համար չալը չըռփը, եօնղա , Հ · 2 ·
Հայթայթումն · ասոլին անդին ընկնիլը՝ ճար ընելը · ԺԳ · 2 · և ՁԵ · 2 ·
Հանգիստափառ · նման փայէ ուՆօղ , ազրան · ՂԳ · 7 ·
Հանգոյց · կապունք, քըյսուպէնտ · ԾԲ · 3 · և ՂՈ · 1 ·
Հանդերձանք · յարմար խառնուածք շինուածք · ԽԳ · 2 · կամ սալթանաթ , թախըմ , ԿԲ · 2 ·
Հանդերձաւորիլ · զարդարուիլ, պատրաստուիլ · Գ · 2 ·
Հանի · մամ, մեծ նէնէ · Հանի մովաբու ·) Մովաբին մեծ մայրը , որ է Պոլտա կինն , ԼԴ · 2 ·
Հաշմեալ · սախատ , խասխաթի եղած · ՃԴ · 2 ·
Հասկ · ցորենի՝ կամ գարիի գլուխ · ԼԲ · 4 ·
Հաստարան · հաստատուելու կանգնելու տեղ , դաւա_ղան , տէյնէկ , Գ · 4 ·
Հաստուածք · հաստատուածք , վինձու , կէօվտէ · Ղ · 3 ·
Հատուածեալ · կտրուած , զատուած · Ը · 2 · և ՀԵ · 2 ·
Հարևանցի երևականուն · ասլը չեղած երևոյթ , խէյա_լէթ , ՂԳ · 10 ·
Հարևանցիկք · երևցող ու թէզմը անցնող · ՀԳ · 3 ·

Հար

Հարթուցիլ · լեզուով ծեծած, թաղիր եղած · ԺԷ · 1 և Ճ · 3 ·
Հեծան · բիր, սօփայ · Ժ, 2 · և ԺԸ, 1 · կամ նը խաչին պղնձա փայտն, որ է քնի զէնքը · ՂԸ, 6 ·
Հեծանոց · հարմանձիններուն մառ մառ քիւրէկն, որով յարդը՝ ցորենէն կը զատեն, եափա · ՀԱ · 3 ·
Հեղեղատ կեդրոնի · Եէձի սէմթ գետ մի է · Ճ, 2 ·
Հեղեղավայր · ջուր կոխած տեղ, կէօլ · ԼԹ · 2 ·
Հեղիաս · Եղիա մարգարէն · ՂԶ · 6 ·
Հեղոյս · բեւեռ, էքսէր, չիվի · ԻՆ · 2 · և ԻԸ · 6 ·
Հենգնել · ծաղր ընել, մէզաք էթմէք · Կ · 4 · և ԿՂ · 4 ·
Հենուլ · հինել, հիւսել, ԿԶ · 2 ·
Հեստեալ · օրէնքէ դուրս ելլող՝ դէմ կեցող · ԼԶ · 4 ·
Հերապանծ տունկ · տերեւներով ճիւղերով զարդարուած ծառ, Թ · 2 ·
Հէն · չէթէճի, խուրսանա, ԴԸ · 9 ·
Հիւղ · մանրիկ փողի, հիւղէ, ԽԷ · 2 ·
Հմայեկ · համայիլ, ԴԶ · 18 ·
Հմայք · պախըձիութիւն, տանէթ · ԽԸ · 3 ·
Հնարադիր · տուզախ խուռմիշ ընող · ԾԵ · 3 ·
Հոգենկար · հոգւով դրվ րեսմ եղած · կամ հոգւոր գրուած, ՀԵ · 3 ·
Հոմանի · պոռնիկի սիրահար · ՃԶ · 3 ·
* Հոմերոն · Հոմերոս, բանաստեղծ մարդոյ մի անունն է, ՂԶ · 19 ·
Հովիտ · ձոր, տէրէ · Ճ · 2 · Խ · 2 · և ՂԶ · 11 ·
Հրաշակերտութիւն · գեղեցիկ և զարմանալի շինուածք, 'ի չէլլաթխարանն ·
Հրաշէկ · կրակի պէս կարմրած · Է · 2 ·
Հրապոյր արկուցանել · թմրեցնող ու խելացնող դեղ խմցնել, ԿԴ · 4 ·
Հրատապ · կրակի պէս տաքցնող · Խ · 3 ·
Հօրան ուլուց · սիւրիւ՝ այծու ձագերու, օղլագլար սիւրիւսիւ · ԽԸ · 1 ·

Ջեղուն · տանը ծածքը, առիք · նը · 2 ։
Ջեռնացնին · ձեռքով բռնուելու · հե · 12 ։
Ջեռներեց լինել · յանդգնութե՛ ձեռք ձգել, եօն այագ-օլմագ, ծը · 2 ։
Ջուլածոյ · տէօրմէ կուռքի պատկերը · խը · 3 ։
Ջօղել · պահուիլ, կիրլենմէք, սագլանմագ, դ, 1 ։
Ռակատիլ, սրտատրաղմիլ, ձէնկ ընել, կ · 4 ։
Ռայ · ճայեկ, սեւագոյն թռչուն մի է, հա · 2 ։
Ռայթումն · սաստիկ հնչումն, չաթլըտը · դը · 2 ։ և 7 ։
Ռապուկ բռոտ · կակուղիկ բարակուկ՝ փորու սողուլձան, կթ · 2 ։
Ռարպ · փորու եղ, իչ եաղը · ա · 1 ։ դդ · 8 · 17 ։ և 23 ։
Ռենձեր · քէպապին փրփուրը՝ քէֆը · ա, 1 ։
Ռիրան · սուր ըղունկով ճանկ, փէնչէ · գ · 3 ։ և նը, 3 ։
Ռնչեալ մղել · սխմելով քամել · դդ · 11 ։
Ռշդով · էշկեարէ այըրտ ընելով · խե · 1 ։ կամ նէրեսու-թիւնով, ժթ · 3 ։
Սագնեստիս վէմ · մըխլատըղ թաշը · խե · 1 ։
Սածուծած լոյծ · ջրեղէն երկինքն է · լդ · 4 ։
Սածուծած լատի · կեմիի թէքնէ · ձե · 2 ։
Սակագուիթ · լան ձարձակ տեղ · ծէշտս″ ։
*Սամուրմատ · բոլոր քէօքէն մամուռտ, գորտընբրդոտ, եօսունլու ։ ծդ · 3 ։
*Սանկաղ · մանգաղ, օրագ, թափան · լե · 3 ։ և դը · 7 ։
Սաւնամուտ · մութ տուամանով ծածկած, չի տեսնուելու, դդ · 19 ։
Սարդելոյզ · շողոքորդ, միատահանէ ըսող · կ · 4 ։
Սարմանջումն · հեշտուն, ցանկուն հարագէթ · խե · 2 ։
*Սեծագիտակէն · մեծապ գիտցող, իֆրաթ վուխուֆ, դ · 2 ։
Սեկնաղէն · չէթէձի, փուսու խըրսըզը · կթ · 2 ։
Սեկին · յայտնի, էշկեարէ դդ · 11 ։
Սեղկել · թուլցնել, կեվշէթմէք · դդ · 23 ։
Սեղսամնկարդ · մեղքով պըլ շկած · ծե · 3 ։



Սեղ

Մ՝եղքոմ․ կուռքի անուն է․ Գ Թագ․ 11․ 5։‖ Կ․ 4։
Մ՝եռայ․ դառնութիւն, լեղութին․ և է անուն տեղւոյ, Ելից, 15 ․ 23։‖ ԿԴ․ 1․ և ՂԴ․ 20։
Մ՝երասէր․ մեր, ո՛ մարդոյ սոյէ ծնած․ ԼԳ․ 9․ և ՀԵ․ 7։
Մ՝երկամբցանակ․ չպլախ ձէնկ ընող՝ կիւլէշ բռնող․ ՂԴ․ 13։
Մ՝երկապարանոց․ յայտնի, էշկէարէ, պէյտա․ Ը․ 1։
Մ՝էքենայ․ խափանձա, տուզախ․ ԾԵ․ 2․ Գ․ 3․ և ՂԴ․ 2։
Մ՝զարհեստ․ կաշիի զարիպես բարակ կազմած․ ՂԴ․ 20։
Մ՝թեր․ գանձարան, խազինա․ Դ․ 1։
Մ՝ժխս․ մնծակ, սիվրիսինէկ․ ԿԸ․ 3։
Մ՝ժղուկ․ գէնիի, կամ ձիպրէի մանրիկ ճանճ․ ԿԸ․ 3։
Մ՝խադայիր․ շատ մասունքէ ձէմ եղած մէկ բան․ ՚է ջէլդ″։
Մ՝խատար․ զուտ, սաֆ, զանթը, էօզ․ ՀԱ․ 1։
Մ՝խեղջերու․ ճակատը մէկ պոյնուզ ունող քաջ կենդանի մի է, քէձկէրտան, ԿԸ․ 2։
Մ՝ղձկիլ․ հերսէն խեղդուիլ, եօքքէէն լալ, ճաթիլ․ Խ, 3․ և ԿԷ․ 2։
Մ՝ղտափարատ․ մութը հալածող՝ տէփ ընող․ ջէլդ սա″։
Մ՝ողոք․ կուռքի անուն է․ Ամովս 5․ 26։‖ Ի․ 2։
Մ՝ոմոքեցուցիչ․ սիրտ կսկծցնող, խշխշցնող․ ՂԷ․ 9։
Մ՝ուխ․ ջուր տուող, պաղլամիշ ընող․ ՂԴ․ 24։
Մ՝ուրհակ․ վճռոյ գիր, իլամ․ ԽԸ․ 2։
Մ՝ուրճ․ թաշճիի չէքիչ, քիւլիւնկ․ ՂԷ․ 7։
*Մ՝տել․ մտանել, մանել, կիրմէք ՀԱ․ 2։
Մ՝րմնջել․ թրմնջալով և էղկիով լալ՝ ողբալ․ ԼԹ․ 3։
Մ՝րցանակ․ կորիճուն ձէնկ․ Ժ․ 2․ կամ կորիճուն համար պախշիշ, չէլէնկ․ ԿԱ․ 2։
Յաբեթական տոհմ․ Նոյ նահապետի որդւոյն սենիլէն է, որ է ազգն մեր՝ հայոց․ ջէլդ սա″։
Յամայր յամրուն․ շատ ժամանակ ուշանալը․ ՃԱ․ 2։
Յամրայլն․ ուշ մնացող, օյալանմիշ ըլլող․ ԽԸ․ 2։
Յայրատ․ անամօթ, առսըզ, էտէպսիզ․ ԼԴ․ 1։
*Յայրատատես․ էտէպսիզձէ նայող՝ տեսնող․ ԾԳ․ 2։

Յանգաւորութիւն · լմննալը , թամամլըք · ժ · 3 ·
Յանգիլ · վերջը հասնիլ , լմննալ · կա · 1 ·
Յանկաւոր · ուղղուն , ծախը չըխլը · ծդ · 2 ·
Յանձանձել · պէտ ընել , թիմար ընել · խթ · 2 · և ձ · 3 ·
Յառաջատեալ · առաջ ընկնող , իլերի սէրփէն · ծդ · 1 ·
Յարագօղ · արևին դէմ կախող՝ մեռցնող · հա · 3 ·
Յարգահատել · ցաւակցելով աղաչել , եալվարնալ · հդ · 2 ·
Յարկել · օտայիպէս տեղ չինել՝ մէջը պահել · ղդ · 9 ·
Յաւակնիլ · աներեսութե լըբուի ընել · լդ · 7 ·
✳ Յաւնական · Յօնական · ամբարտաւանական , էտէպսիզ ախուզէնլի · կ · 4 ·
Յափրացեալ · տաղտկացեալ , պըխմիշ եղած · ղէ · 10 ·
Յեղուղակ · աւազակ , հարամի , գափուսուզ · ղ · 3 ·
Յեղանակել · դարձընել , պաշխայ կերպ ընել · է · 3 · կդ , 1 · և ղդ · 19 · կամ երգել · հդ · 3 ·
Յեղյեղել · փոխարկել , թէպտիլ ընել · ժ · 2 · կամ շատ կրկնել՝ քիշել · կա · 2 ·
Յեսանել · սրել , պիլէյիլէմիշ ընել · ղէ · 5 ·
Յերիւրումն · զարդարելը՝ ծախը չըլս բերելը · խ · 3 ·
Յէու և Ազայէլ · երկու թագաւորաց անուանք են · դ Թագա" 19 · 15 · || ղդ · 6 ·
Յղփացեալ · խիստ կշտացած , իփրաթ տօյմուշ · ծթ · 2 ·
Յոբելեան · յիսներորդ տարի , թողուն տարի · Ղևտ" , 25 · 8 · || ղէ · 7 ·
Յոլովամեղ ծուխ · շատ խուրում փէյդահ ընող ծուխ , խալի թիւթիւն · խը · 4 ·
Յոզ մնաց · մնմնուք , մորի ալավէրա · ժ · 3 ·
Յովանակ · աւանակ , էշու քուռակ , սըփա · իէ · 2 ·
Յորջորջումն · կոչումն , անուանը տալը · լդ · 3 · և ղդ · 7 ·
Յորսայսել · կռնըկին վրայ գետինը ձգել · լգ · 2 ·
Յուռթի քրտունք · առատ քրտինք , գան թէր · կլ · 4 ·
Յուռութ · համայիլ , կամ կռապաշտական ճմալը · կղ · 4 · և հէ · 12 ·



Յուսայ

Յուսոյ ձգարան • յոյսին թելը, ունեւորին չուանը • Գ • 4 :
Յօնիցն յաւակնուն • ընքուիներուն հպարտութիւնը՝ լրբութիւնը մեղրուրլուք հակառակիլ կռիլ • ԽԵ • 2 :
Նախայանցք • առաջուց մեղանչողք, ջրհեղեղին ժամանակի մեղաւորներ • ՀԹ • 3 :
* Նախայլք • առաջին այլք, էվէլքիլէր • Գ • 4 :
Նահանգ • մէմլէքէթ, այալէթ • ԼԷ • 1 :
* Նահանջեր • նահանջեցեր, արգիլեցիր, խափանեցիր ըրիր, ԿԳ • 1 :
Նաշիհ • չարմաղուն՝ խիստ բարակ ալուր • ՂԳ • 8 :
Նարդոս • անուշահոտ ծաղիկ է, նօնօֆար • ՂԴ • 11 :
Նարեկ • ) էր վանք կրօնաւորաց՝ ՚ի գաւառին անձևացեաց, ուր վանահայր էր վէհափառ այս մեր Գրիգոր Նարեկացի • Յիշատակարանն :
Նաւակատիք • տօն, ուրախութի, տօնանմայ • ՂՌ • 1 :
Ներգևեալ • խեղճ՝ սէֆիլ եղած, տէրտիմէնտ • ԻՌ • 2 :
* Ներուն • ներողուն, սուչը սախլըլը, աֆֆ • ԺԸ • 1 : և ԱԸ • 5 :
Նեցուկ • յենարան, տայախ • ԿԵ • 2 : և ՂԸ • 10 :
Նշար • այս պիղծ, չար դև, սատանայ, ճին • ՂԸ • 9 :
Նժար • թէրազիյի թաս, թաթ • Թ • 1 :
Նկատեղանիլ • նկատել, տեսնող ըլլալ • ԿԸ • 2 :
* Նկարագրեր • նկարագրեցեր, միւսէվէտէն գրեցիր, իմացուցիր • ԾԸ • 1 :
Նհանջել, կամ Նահանջել • արգիլել, յետ դարձնել • Ը • 3 : և ԽՌ • 1 :
Նշաւակել • ցոյց տալ, խայրէթ էթմէք • Գ • 2 :
Նշկահեալ • անարգուած, մէղատ եղած • ԽԸ • 1 :
Նողկալ • գարշելի զզուելի ըլլալ • Ղ • 3 :
Նուիրան • նուէրարան, փէշքէշ ընծայելոյ տեղ • ՀԵ • 9 :
Նպատակ • նշան առնուած տեղ, նշանկեաւ • ՂԸ • 5 :
Շաղակրատ • ապուշնութիւն խօսօղ, լաֆազան, պօշ պօղազ • ՇԴ • 2 :

Ռամբ · անտառ եղեգանց, գամբշուրդ · Թ · 1 :
Ռամբին · սամարիա, որ ԵՏմի մօտ գաւառ մի է · Յովէլ", 16 · 46 · ‖ Ծղ · 2 :
Ռանդ · կայծակ, երկորորմ · Դ · 3 :
Ռերտ · փայտ, սօփա, օտուն եառմասը · ԴԺ · 3 :
Ռշուկ · սատանայական աղմուկ՝ վեկվեկէ · Ի · 3 :
Ռուայսուլթի · ցանկական ձիւնունուի · ԽԶ · 3 :
Ռուլթափուլի · խիստ արտորալը, ածեկէ · ԴԴ · 11 :
Ռուշան · ծաղիկ է, զամպախ · Կ · 1 · և ԴԴ · 11 :
Ռուք · պատիւ, փառք, իզզէթ · ՃԴ · 4 · և ԴԴ · 18 :
Ռտեմարան · ներսէ ներս օտայ, սըր օտասը · Ի · 2 :
Ռըջագրուի · էթրաֆը տօնաթմիշ ընելը, կամ պաշպանելը · ԿԶ · 1 · և Դ · 1 :
Ռրտուսմն · շրմարուսմն, անձրկիլը, շաշմիշ ըլալ մնալը · ԴԾ · 3 :
Սգոփիլ · կուռիլ, ձէնկ ընել · Թ · 3 :
Սզիէլ · մարդոյ անունն է · Ա Թագ". 6 · 7 · ‖ ՀԵ · 12 :
Սընափայտ · նաւուն գլխէն մինչև ՚ի խըշըն՝ տակի երկան տիրէկն է, որոյ վր կողերն շարած է · ԻԵ · 2 :
Սողիլ · լռեցուցիլ, անձրելով ցօղուըլիլ · ԴԴ · 11 · և 24 :
*Սողակ մթայլին ոչ ընդելական · լողացող քեօռ անձամի · ԾԵ · 2 :
Սոդայ, Սգիրայ · էին անուանք երկուց թագաւորուէյն Սամարիոյ և ԵՏմի · զորս եդ մրջրեն Յովէլ", 23 · 4 · ‖ ԾԴ · 2 :
Սուզել · ջրել, ինչպէս՝ պախձան, ծառը · ԼԵ · 2 :
Ստայնս կկել · կտաւ, կամ եօրխամ ձէկ գործել · Է · 3 :
Ստիկան · վերակացու, քեհեայ · Ծգ · 2 · և Հթ · 3 :
Սրոջ · գառն, գուզու, ԼԾ · 3 :
Սուղերձեալ · ծլած ծաղկած, ֆիլիզլէնմիշ եղած · ԺԵ · 4 · և ԽԹ · 2 :
Սուղեշ · ծառի ձիւղ, տալ պուտագ · ԽԴ · 2 · և ԿԾ · 3 :
Սունելիք · կրակի մաշա, խըսաձ, ԼԴ · 5 :
Սունկ, ունկն · յերդի մանրուք, սամսն թօզու · Իղ · 2 :

Ունկնախից · ականջը լըցած՝ գոցած, խուլ · Ճ · 4:
Ուշ · մուք, փէքիր, փիքրաւէթ · Իզ · 3: ԼԴ · 2: Ճթ · 1: Հը · 2: և ՂԴ · 24:
Ուտիչ · ցեց, կիւվէ, ՂԷ · 9:
Ուտնահար · ցեցէն կերուած, փտտած · ՃԶ · 2:
Ուրոյնուն էլ · զատուն ըլլալ, զատ զատ ըլլալ · ԼԴ · 7:
Ուրուական · գայրշելի, փուճ, դիւական · ՀԱ · 4: ՀԵ · 12: և ՂԴ · 24:
Չարաշուք · չարուն երեւցնող, զզուելի, պէթ · ՃԵ · 2: և ՃԸ · 2
Չորեքվտակեան տուն · չորս մեծ գետ ունող ըամուխ, որ էր յեդեմայ բղխած գետն · Ծն՛՛ 2 · 10: || ԿԸ · 1:
Չու · քալուածք, յառաջ քալել գընալը · Է · 2: և ԻԵ · 2:
Չքնաղ · խիստ աղէկ գեղեցիկ · ԺԱ · 1: և ՀԵ · 13: կամ փառաւոր, հրաշալի · ՀԱ · 4: և ՂԴ · 19:
Չքոտի · նուաստ, փոքրիկ, փուճ, խեղճ, զայիֆ · ԿԹ · 2:
Պակուցեալ · սրտաբեկեալ, խիստ վախեցած, սիրտը վըր թած · Ճ · 2:
Պահակ · անկարիւյի բռնուած, որ էր սիմոն կիւրենացին · Մտ՛՛ 27 · 32: || ՃԸ · 3:
Պահպանակ · պահօղ, պահպանող · Դ · 3: և ԿԵ · 2: կամ զըրխ · ՂԿ · 12:
Պաղպաջունք · գեղեցիկ պայծառ քէօշկ · ԻԵ · 2:
Պաճար · նախիր, կովու սիւրիւ · ՃԵ · 3:
Պայթիլ · փաթլամիշ ըլլալ, ճաթիլ · ՀԴ · 3:
Պայման · չափ, սինօռ · Բ · 3: Իզ · 2: և ՂԳ · 24: կամ ուխտ, խաւլ · ՃԴ · 5:
Պան · հաց, սօմուն, էքմէք · ՂԿ · 8:
Պաշտօնեայ · պաշտօղ, խըզմէթ ընօղ · Իա · 2: Իը · 2: և ՃԳ · 4:
※ Պաշտօնատեղ · աղօթքի տեղ, կռատուն · ՃԱ · 4:
Պատանդիչ ցանցարկ · խավուամիշ ընօղ զամթ ընօղ՝ խուռուըմիշ եղած տուղախ · ՃԵ · 2:
Պատարուն · լեցուն, սիլմէ՝ տօլու · ԽԸ · 3: և ԿԳ · 2:
Պատգամ · խապար, խօսք, քէլամ · ՂԷ · 3:

Պատ

Պատնէշ · թապյէ, պէտէն, մէթէրիզ · Ի · 2 · և ՂԲ · 5 ·
Պատուաւորէն · պլորտորեք՝ նէզաքէթլի · ՂԴ · 7 ·
Պատուաստուած · կցուիլը, էքլէնմիշ ըլլալը · Լ · 4 ·
Պատսպարան · սըղընմիշ ըլլալու տեղ, սիփեր · Խ · 2 · ՃԲ, 1 · ՃԹ · 1 · և ՂԸ · 3 · կամ տայախ, իբր՝ թէմէլ, ԽԵ · 2 ·
Պատրոյկ · ճրագի ֆիթիլ · ՂԴ · 2 ·
Պարս · սափան, որով քար կընետեն · ԼԴ · 7 · և ՂԵ · 4 ·
Պարսել · իբր սափանով քարոտել, տանջել, Է · 2 · կամ հալածել, դուրս ընել, ԼԵ · 3 · և Ղ · 3 ·
Պիծակ · իշմեղու, եշէկ առըսը, աթ առըսը · ԿԲ · 3 ·
Պիտակ · լոկ, սալթ, սատէ, ԽԲ · 6 ·
Պղպջակ · ուռեցք, որ ջրին երեսը բուշտ բուշտ կու լինի, ու գապարճըղը, ՀԴ · 3 ·
Պղտորաբերան · գարշելի՝ պուլանըխ խըմելը · ԾԴ · 3 ·
Պճնելի · զարդարելու, սազելու · Բ · 2 ·
Պնդիլ · ետեւէն ընկնիլ՝ վազել · Բ · 2 ·
Պոէտիկոս · բանաստեղծ, շայիր, աշըգ · ԽԲ · 6 ·
Պուրակ · օրման, կամ ծառերու երլըն, տէմէթ · Թ · 1 ·
Պչրութիւն · էտէպսիզ սազուիլը, ինչպէս՝ լկտի կանանց տիւզէնը, ԽԲ · 4 ·
✻ Ջախել · ջախջախել, ջարդել, կոտրտել · ԽԲ · 2 ·
Ջահաւորիլ · մաշալայիպէս վառիլ, փայլիլ, ՂԴ · 17 · և 23 ·
Ջահել · ծագել, լուսաւորել, ՃԴ · 2 ·
Ջամբել · կերցնել, տալ · ԺԴ · 3 · և ՂԴ · 22 · և 23 ·
Ջնար · սանթուռ, որ փայտեղէն չալղը մի է · ՂԲ · 9 ·
Ջնել · զարնել, ծեծել, Ի · 2 ·
Ջութակ · սանթուռ, կամ քէման · ՂԲ · 8 ·
Ջրակարծ · ջրէն կարծրացած՝ սառած, ինչպէս՝ կարկուտը, ԿԲ · 3 ·
Ջրել · ջնջել, աւրել, պօզմագ, ԼԲ · 3 · ԽԲ · 1 · ԿԵ · 2 · և ՂԵ · 14 ·
Ջրողող · ջրհեղեղով ապականած՝ թելէֆ եղած · Ի · 5 ·


Ռ·է

Սեռմն · Թիրէմէնթին որ եարայի դեղ՝ մէլհէմ լինի · կէ · 1 ·
Սաբէկ · է անուն ծառոյն, յորմէ կախեալ տեսաւ Աբրահամ՝ զխոյն · Ծնն՛ 22 · 13 · || ղբ · 9 ·
Սագրել · մանանել, խառնել, ելէ վէրմէք · կն · 1 · կամ ջուր փիթ տալ · Ղ · 3 ·
Սակ · հարկ, վէրկի, խարած · խն · 1 · կամ չափ, հիսապ · ժէ · 3 · խէ · 2 · և ճ · 3 ·
Սակուածեռն · ակար, զայիֆ, նուաղ, գ · 3 · և ղգ · 15 ·
Սահանք ծովու · ծովու ափընթը, զոր իբր գերարեալ պարիսպ դարձոյց ած, ընդ որ էանց իսէլ · Ելից · 14 · 22 · || կգ · 1 ·
Սահանք յորձանաց · տէրէ, սէլ տէրէսի · ճս · 2 ·
Սաղարթ սնունճ վարսից · տէրև՝ և եափրախներուն, որ է տաել, և մորուք · կզ · 2 ·
Սամի · ախումէնը դարձնող փայտ, եէքէ · իէ · 2 ·
*Սառնասեր · պուղի սօյ, պուղիպես փատցած · ձա · 3 ·
Սատեր · սիկղ, զօլոթա, որոյ գինն էր 88 ստակ · Ստ՛ 17 · 26 · || խէ · 1 ·
Սարդ · մամուկ, էօրիւմճէկի պէօճէկ · ղգ · 14 ·
Սարտուցեալ · բաժանուած, երեսէ ձգած · խը · 2 · ծէ · 2 · և կէ · 3 ·
Սաւառնիլ · թռչտելով խանատները վրայ բերել՝ ծածկուիլ · ղա · 1 ·
Սափիրա · պատմել կնկան մի անուն է · Գործ · 5 · 9 · || հա · 3 ·
Սելով · խաշաղա-ըէ-ն, քաղաք մի է · ա · 1 ·
Սեղանանենգ · սեղանը, կամ տաճարը թալլող, խը · 2 ·
Սեպուհ · պէյզատէ, քիշիզատէ · գ · 2 ·
Սեռն · մաքուր, ուղիղ, հիյլէսիզ · ժ · 2 · և յէշայա՛ ·
Սևեռք · գամուածք, մխլանմիշ ըլլալը · նզ · 4 ·
Սթափիլ · այլխնալ, խելքը գլուխը գալ, արթննալ, գ · 3 · և ղբ · 1 ·
Սիգացող · փոտուլուբ ուռեցող, սալնմիշ ըլլող · հգ · 2 ·
Սիգոնացիք · սայտացիք, որք նամաստ կուռք մի ունէին,

զոր պատուիրեաց Սողոմոն · Գ Թագ" 11 · 5 ։ || ԽԸ · 3 ։
Սիկ · անուշիկ հով, խօշ րուզկեար · ԼԸ · 3 ։
Սին · դատարկ, պօշ, փուճ · ԽԵ · 3 ։ և ՃԺ · 2 ։
Սլաք · օք տէմրի, խըշտ · ԽԴ · 3 ։
Սկախառն · մուրատու պուլանըխ, չիրքէֆ · ԾԳ · 3 ։
Սկաւառակ · քեասէ, Թաս, ամանն · Լ · 2 ։ և ԶԸ · 1 ։
Սկիւթացի · թաթարաց ազգն է · ՂԳ · 12 ։
Սնոտիապատուաստ · անշահ շինուած, նիզամըզ տեւղէն միշ եղած, Գ · 1 ։
Սնոտիասէր · պօշ՝ փուճ սէր ունող · ՂԳ · 20 ։
Սոսկական · եայան · Գ · 3 ։ կամ ռամիկ, փախիր · ՀԱ · 2 ։
Սոսկամիթխար · աշարկու լէնտուհա, պէտտավլի · ՂԳ · 12 ։
Սոր · խորուկ տեղի ձամբայ, տէրէ, Խ · 2 ։
Սուզել · տակը իջեցնել, պաթըրմագ, ԼԴ · 2 ։
Սուրհանդակ · սայի, մէնզիլ, ԾԴ · 2 ։
Սփիւռ · մատեան, գիրք, քիթապ · ՃԸ · 2 ։ և ցիշա" ։
Սպանդ · ջոհ, ղուրպան, ԽԳ · 2 ։
Սպանդարան · ղուրպան մորթելոյ տեղ · ԽԵ · 3 ։
Սպառազէն · սիլահլը, փիւր սիլահ · ԾԴ · 2 ։
Սպեղանի · դեղ, մէլհեմ · Է · 3 ։ և ԽԸ · 1 ։
Ստամբակ · նախս, զալըմ, եարամազ · ԽԸ · 3 ։ և ՂԸ · 2 ։
Ստգտանք · մեղադրանք, սիթեմ, Թ · 3 ։
*Ստորներք · վարէն վեր ելլող, կամ ելած · ՂԳ · 24 ։
Ստուար · թանձր, հաստ, ԽԴ · 2 ։ և ԿԴ · 4 ։
Ստուարաստեղն · ձուղը հաստ, գալըն տալլը պուտագլը, Թ · 2 ։
Ստուգաբանել · ուղղուն գալով խապաթ եղած · ՂԳ · 20 ։
Ստրուկ · խեղճ՝ ծառայ, րայէ · Գ · 3 ։ ՂԳ · 12 ։ և 18 ։
Ստրջանալ · ափսոսալ, զղջալ, փիւշման ըլլալ · ԽԹ · 2 ։
Սրահի տուագաստ · բակի փէշտաէն, որ է՝ դուռն · ԽԸ · 1 ։
Սրանալ · թուչել, փախչիլ · Ի · 2 ։ Լ · 4 ։ ԽԸ · 3 ։ ՀԱ · 2 ։
և ՀԳ · 2 ։ կամ սիվրիլմիշ եղած քեսկինցած · ԻԸ · 3 ։
Սրացեալ վարտիկան · փախչող հեռացող, տէտիրլիկն · ԺԱ · 3 ։

Սրբերգեան. Սբ̃ Սբ̃ երգող, ինչպ̃ Սերովբէքն. ղդ̃. 1.
*Սրինկ. սրինգ, նեղգուհուր չաւղը, նէյ. ղէ̃. 8.
Սրսկումն. ցրցըւնելը, սերսմիշ ընելը. ծա̃. 4.
Սփոփանք. սփոփումն, մխիթարանք, թեսելլի. դ̃. 1. ըդ̃. 3. և ղդ̃. 9.
Սքանչելահրաշ. հրաշալի, մուճիզաթլը. հե̃. 10.
Սքանչելատես. զարմանալի գեղեցիկ տեսիլ ունող. ծա̃. 4.
Սքանչելարմատ. զարմանալի գերազանց քեօք ունող. հդ̃. 2
Վայրագասուն. լեռը սնած մեծցած, լեռընցի, եապանի. խզ. 1.
Վայրագութիւն. եապանի կոպտութիւն, եաւուզլուք. ժա̃. 3. ը. 4. հա̃. 4. և ղդ̃. 19.
Վանդակապատ. պարմաքլըխ շարած գեղեցիկ քեօշկ. իէ̃. 2.
Վանիչ. զայ ընող, թելէֆ ընող. իդ. 2. կամ փախցնող, չխըրխըթմիշ ընող, ղէ̃. 9.
Վարակեալ. պաշարեալ, մուհասերէ եղած. լա̃. 3.
Վարանիլ. վախուն թասայիլ, անձկիլ. իգ. 3. և իը. 2.
Վարապան. կեմ, հալքա, որ գազանի բերան կը կապեն, ղէ̃. 2.
Վարատիլ. զատուիլ, տէտիրկին ըլլալ. իէ. 3.
Վարմ. տուզախ, խափանձա, խ. 3.
Վարք. մազերոր թէ մարդոյ իցէ՝ փերչեմն է. կդ̃. 2. և ղդ̃ 12. և եթէ ծառոյ իցէ՝ եափրախներն է, թ. 2.
*Վերակացումն. զապխտութ̃ ձեռք վերցնելը. ա̃. 2.
Վերակենդացաղել. կրկին ողջնալ, յարութ առնել. ըդ̃. 5.
*Վերանորկել. վեր նայիլ, դէպ 'ի վեր ումուտ ընել, իգ. 3.
Վերնամբարութիւն. վերինին հետ ձենկ, որ է ոլ̃ դէմ դնելը, ծա̃. 4.
Վերնամրցանակ. երկնքէն տրուած յաղթութեան համար՝ վարձք, չէլէնկ, ղդ̃. 24.
Վերջին դատակնիք. 'ի կորուստն յաւիտենական վճռել, որք են դատապարտելոցն դասք, իէ̃. 2.
Վերջնա

Վերջնական · յետքինը · կամ խիստ պէտերը · Ծ · 3 ·
Վերջնական անձառ · քէսկին լէքէ սապօնու · Ղփ · 11 ·
Վէս · հպարտ, ինքնահաւան · ղուրպխուխ նախատէ մարգարէն Եսայի, 65, 5 · ‖ Ծ · 2 ·
Վիժած անգրելի կոչման · անցուցած տղայ, որ մարդ չի կոչուիր, Ի · 2 ·
Վիհ վհից · խորունկներուն խորունկը · Խ · 2 ·
Վիրգ մաշու · մեռցնող ձէնկի քար · կիւլլէ · Կ · 2 ·
Վիրգ սալի ✻ տեօշեմէյէ քար, գայկան · Ղբ · 8 ·
Վտակ · ախընտը, կամ սել, ըռմախ · Ծփ · 3 · և Ղբ · 10 ·
Վատել · վատուժցնել, չիրքինցնել · Ի · 2 ·
Վրժակ · վճիռ, իլամ, սինճիլ, ԻԵ · 2 ·
Վրպակ · մոլար, ծուռ · ԺԸ · 2 · ԽԸ · 4 · և ՂԲ · 9 ·
Վնջողական · բղջախոհ ցանկութ՟ կատղիլը, աղմիշ ըլլալը · ԽԵ · 2 ·
Տակաւ տակաւ · կամացուկ կամացուկ, քըչիկ քըչիկ · ՖԸ · 3
Տաղանդ, կամ քանքար · քէսէ մի լտրալ, Բ·իւր քանքար, ժռ քէսէ լտրալ, կամ այլ աւելի · ԻՂ · 2 ·
Տաղաւարեալ · բնակուելու տեղ ըլլալ · Ձ · 1 ·
Տաղաւարիլ · օթեւանիլ, գօնագ էլթմէք · ՀԵ · 13 ·
Տաղտկաղաղական · կքրահ ընելու մուրատու · Ղփ · 20 ·
Տաշտ · քէսսէ, թաս, Լ · 2 ·
Տաստանելի · տրտմելի, խասավէթ ընելու · Լա · 2 ·
Տարազ · կերպ, թարզ · ԺԸ · 2 · և Ծփ · 5 ·
Տարացոյց · նման էօրնէկ, ուլղուն · ԺԵ · 2 · և ԽԵ · 3 ·
Տարժանելի, կամ Տաժանելի · խիստ աշխատելի, մէշագգէթլի · Ը · 1 · ԿՂ · 5 ·
Տարմ · խանասլըներու քիւմէ՝ երղընախ · ԿԸ · 3 ·
Տարր · բոլոր նիւթաւոր մարմիններուն թէմէլը, և է չորս · Հուր · Օդ · Ջուր · Հող · ՀԲ · 3 · և ՂՓ · 15 · և ղայս բառս՝ պէս պէս նշանակութ՟ գործածէ ծըս · զոր օրինակ · 'ի Տարր գայի · տարբերքէ եղածներուն մէջ, կամ կայ եղածներուն էօզլին մէջ · ԽԱ · 2 ·



Տարր

Տարր ժամանակի · ժամանակին կայութիւնը, կամ չափը որ հիչի մօտ՝ քիչ է · ծե · 3 ·
Տարր ժամանակաց · չորս եղանակն է · Գարուն · Ամառն · Աշուն · Ձմեռն · որք իրր տարիին տարերքն են · խղ · 2 ·
Տարր մահու · մահուան քերքը՝ սեպեպը · ղբ · 6 ·
Տարերս սասանել · բոլոր Ձս շարժել՝ դողցնել · լգ · 2 ·
Տարր փոքր · փոքրիկ ոչինչ իր, չէյմինղէզ · կթ · 1 ·
Տնագրել · կնքել, խաչակնքել · ժը · 3 · և ղդ · 12 ·
Տենդ · ջերմ, սըթմա · կը · 5 ·
Տեսական · տեսանող, կեօրիւճիւ · լդ · 5 · կամ երևելի կեօզէ կեօրիւնէն · լդ · 3 · և ձդ · 1 ·
Տեսականել · սալը եօզը խլխով մը մէյտան հանել · զդ · 10 ·
Տեգ · մըզրախ, խըշտ · խե · 3 ·
Տիրագաւ · իր տէրը խաբօղ՝ մատնօղ · ծզ · 2 ·
Տիրադրուժ պաշտօնեայ · իր տէրը փէնտով խաբօղ խըղ մէթքեար, · ե · 2 ·
Տիւրոս · կամ Ծուրը, քաղաք մի է սայտայի սէմթ · Եսայ 23 · 15 · || լթ · 3 ·
Տխրատեսակ հուբ, կամ էրֆն · մութ գոյն, սև ըռէնկ, լդ · 8 · և ղզ · 12 ·
Տղմասէգ գուբ · չամուռով լեցուն հոր · ժզ · 1 ·
Տնտեսել · պէտ ընել, քերէմ էթմէք · ժե · 2 · կամ յայտնել, ցուցանել, խը · 6 ·
Տոժ տանջանաց, կամ ըլկանաց · մէաս պատժը, գաղէպ ճէրիմէսի, սիասէթ · ե · 2 · և հա · 3 ·
Տուն · չուանէ կապ, իւլար · իը · 1 ·
Տուայտիլ · չարչարուիլ, ձէֆայէն մաշիլ · կզ · 5 ·
Տպաւորագոյն · էշկեարէ ույղուն, թըպգը · ժթ · 3 ·
Տրոհել · որոշել, բաժանել, զատել, այըրմագ · խը · 1 · և կէ · 2 ·
Ցանց · սինձիմով հուսուած թօռ, աղ, տուզախ · խ · 3 ·
Ցիռ · վայրի էշ, եապան էշէկի · խզ · 2 ·
Ցնորից ցրիչ · խէնթ ու մէնթ երազները տաղըթիչ ընօղ · ձդ · 1 ·

Ցնցուղ · ցաթկոտուք, սերփինթի ջրոյ կամ հրոյ · ղ · 3 · և ճը · 3 ·

*Ցոլք նշուլից · շողշողումն ճառագայթից, շառաւղն փայլելով ձաթելը · ձա · 3 ·

Ցփուն · անառակուն, աներեսուն, էտէպսիզլէր · հէ · 2 ·

*Փագոլը · Բէլփէգոլը · կուռքի անունն է · Թւոց · 25 · 3 · ‖ խը · 3 ·

Փաղանգ · ճիւմհիւռ, Թապուռ, օռտու · կե · 1 ·

Փաղաքշել · երեսպաշտուն ընել, խօշամէտի խօսիլ · ժ · 1 ·

Փապար · ծակ, խօվուխ, չուխուր · ճի · 2 ·

Փարաքուամն · բղջախոհ ցանկուն, էտէպսիզուն · խե · 2 ·

Փթթեալ · ֆիլխալէնմիշ եղած, ծաղկած · ղդ · 11 ·

Փղշտացիք · բարբարոսաց և ամ այլազգաց կըսուի · ա · 2 ·

Փոկ · կաշիէ կապ · խե · 2 ·

Փրկանակ · փրկուե տեղ · իզ · 2 · կամ ուժուտ թէլը · ծա · 4 · կամ ազատելոյ գործիք · կդ · 3 · և ղը · 5 ·

Քաղցկեղ · մարմինը չէւրիւթմիշ ընօղ եարա մի է · կեր-ցաւ, չէրիփէնչէ · ժը · 3 ·

Քամոս · կուռքի անունն է · դ Թագ՝ · 11 · 7 · ‖ կ · 4 ·

Քայլ · կէրտանլըք, կամ լէօփ · լդ · 1 ·

Քանան · Նոյ նահապետի թոռն է, Քամայ որդին · ը · 1 ·

Քանանուհի · կին մի էր քանանացի, որոյ աղջիկն քս բժշկեաց · Մտթ՝ 15 · 22 · ‖ լէ · 3 ·

Քանասար · կատաղի, եավուզ, զալըմ · ճթ · 2 ·

Քանցել · ճուղերը կտրտելով փրցնել · իդ · 1 · և կէ · 2 ·

*Քառադիմակի · է մեկնուն բառին Քեւանայ, որ երեւելեալ ՚ի յունէին բառէն քէվէ, որ թարգմանի քառակուսի · ուստի Քեւան՝ քառադիմակի պատկեր,) ասել է՝ չորս երեսով, կմ չորս թարափլը կուռք · զորպիսի շինեաց Մնասէ · դ Թագ՝ 21 · 5 · ‖ ծա · 4 ·

Քաւարան · քաւօղ, մեղքը թօղօղ · ղդ · 1 ·

Քեղի · օրթա տիրէկ, թէմէլ տիրէկի · լէ · 3 ·

Քիմք · տամախ, կէյիղ · իդ · 2 ·

Քինա

Քինաւոր · քէն ունօղ, ղարէզ ունօղ · ղա · 1 ·
Քղանց · հանդերձի փէշ, էթէկ · ժը · 2 ·
* Քոյինանիւթ · քու նիւթըդ · Քոյինանիւթ ղանդուած) քու նիւթիդ խմորը, որ է իսկ մարմինն խորհրդոյ · Ծ Գ · 4 ·
Քորեբ · արապխստան լեռն է, ուր խօսեցաւ Ս.Ծ եղիայի հետ · Գ թագ" 19 · 8 · ‖ ԼԳ · 9 · և ԴԳ · 6 ·
Քստմնափուշ · վախցնօղ՝ մարմինը փուշ փուշ ընօղ · Իը · 6 ·
Քստմնելի · զարհուրելի, խիստ վախցնօղ · ը · 1 · ժը · 2 · Իը · 2 · Խը · 4 · և ՀԹ · 3 ·
Քուրայ · խալճիի օճախ · ԺԹ · 1 · Իզ · 3 · և ՂԹ · 1 ·
Քրէական · խիստ մեծ մեղք, որ է Այ դէմ · ԾԾ · 4 · և ՂԾ · 3 ·
Քրձազգած լինիլ · չուլ հագնիլ · ԻԹ · 2 ·
Քրքում · զաֆրան չիչէկի, որ է անուշահոտ ծաղիկ մի, կամ զաֆրան · ԴԳ · 11 ·
Օդք, օդից · ոտից աման, այսոք գապը, ինչպէս՝ չիզմէ, փապուճ · ԽԷ · 3 ·
Օթոց · հանդերձ, էապապ · Է · 1 ·
Օժանդակել · եարտըմ ընել, ուժ տալ · Ե · 1 · Ժ · 2 · ԺԱ · 1 · ԼԳ · 6 · Ձ · 2 · և ԴԳ · 9 ·
Օձառ · ձէնկի թախըմ, սիլահ · Կզ · 3 ·
Օն և օն · սանկ ու նանկ, շէօյլէ պէօյլէ · ԻԹ · 3 ·
Օշինդր · լեղի խոտ մի է, փէլին · Զ · 3 ·
Օստացի · Յոբ երանելին է, զի էր յօստեր գաւառէ, որ է 'ի կողմն արապխստանու · Խը · 6 ·
Օտարայն · օտար ազգէ, այլազգի · Կք · 1 ·
Օտարոտի · աննըմանութ, մինասիպէթսիզլիք · Հէ · 12 ·
Օրակշիռ · օր չափօղ, որ է արեգակն · 'ի ցերեկահովարանն ·
Օր 'ի յօր յերկարաձգել · օրէ օր ձգել · Ծը · 3 ·
Օրհներգ · երգօղ օրհնութ, կամ, օրհնութ · Կա · 2 · գովութ, բարեբանութ, որ միայն Ս.Ծ վայելէ, որ է անըսկըզբնաբար սկիզբն ամ սկսելոց, և անսկզբական վախճան ։

Յիշատակարան Տպագրողին Գրքոյս.

Փառք և գոհութիւն անլռելի ձայնիւ Ամենասրբոյ երրորդութեանն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. Որոյ ամենառատ շնորհօքն և ողորմութեամբն, և օգնականութեամբ հոգեկիր հռետորի Սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ հրեշտակակրօն վարդապետի, վերստին 'ի լրումն եկեալ կատարեցաւ տպեցումն ախտաբոյժ Գրքոյս նորին Աղօթից՝ որ կոչի Նարեկ.

Արդ՝ որք վայելէք զսա, Նախապէս տուք փառս Աստուծոյ յաջողողին և անօրինողին ամենայնի.

Եւ ապա յիշեսջիք զպատրաստական ծառայ ձեր զՏպագրիչ չնչին Տիրացու Պօղոս Յօհաննիսեան. և զաշխատաւոր զորդեակն իմ զծառայս ձեր՝ զդեռափթիթ զԱծատուրն և զԳէորգն, ընդ նմին և զփեսայն իմ զտիրացու Յօհաննէսն. որք առաւել քան զկարն աշխատեցան 'ի շարելն և 'ի ցրուելն զկապարեայսն.

Յիշեսջի՛ք և զաշխատաւոր մշակն Տպարանիս՝ զ'ի բալոռայ գեղջէն զխումար զատէ հանգուցեալ Յօհաննէսի որդի զտիրացու Մարտիրոսն. և զընկերն իւր 'ի նոյն գիւղէն զՏէր Ստեփանի որդի Յարութին.

Եւ զձեզ զամենեսեանդ՝ բարեգութ և արդար դատաւոր Տէրն մեր Յիսուս Քրիստոս յիշեսցէ 'ի սոսկալի և ահաւոր միւսանգամ Գալստեանն, և ընդ Սրբս իւր դասեալ՝ երանաւէտ Ձայնին, և իւր անճառելի Արքայութեանն և Աստուածային տեսութեանն արժանացուսցէ.

Ամէն.